Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Սիրով նվիրում եմ
դուստրերիս՝ Անահիտ և
Հասմիկ Համբարյաններին

Ա. Ս. Համբարյան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 1856-1914 թթ.

«ՊԱՐԳԵՎ ՈՍԿԱՆՅԱՆ»
ԱՐՄԱՎԻՐ
2003

ՀՏԴ 947(479,25)
ԳՄԴ 63,3(2Հ)
Հ 205

Հ 205 **Համբարյան Ա. Ս.**
Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ.- Արմավիր: Պարգև Ոսկանյան, 2003.- 336 էջ

Համաշխարհային տնտեսական զարգացման գործընթացների համայնապատկերի վրա հեղինակը մեծագույն բարեխղճությամբ հետազոտում է թուրքական ծանր տիրապետության տակ եղած Արևմտյան Հայաստանի տնտեսությունը:

Հեղինակը մենագրության նյութերը քաղել է ժամանակի մամուլի էջերում տպագրված տնտեսական, քաղաքական, իրավական, ազգագրական բովանդակությամբ հոդվածներից և հաղորդագրություններից, ժամանակակից օտարերկրյա դիվանագետների պաշտոնական զեկուցագրերից, տեղեկագրերից և վիճակագրական տվյալներից, հայ և օտարազգի ճանապարհորդների ուղեգրություններից: Հեղինակը գիտականորեն հերքում է թուրքական պաշտոնական վիճակագրական տվյալները՝ բացահայտելով դրանց կեղծ լինելը և քաղաքական շահեր հետապնդելը:

Ա. Համբարյանի այս մենագրությունը ծանրակշիռ և հավաստի պատասխան-հակահարված է բոլոր ժամանակների թուրքական կառավարող շրջաններին և ապացուցում է հայ ժողովրդի՝ պատմականորեն բնիկ լինելը Հայկական լեռնաշխարհում, և որ իր պատմական հայրենիքում հայերի հանդեպ Օսմանյան Թուրքիան ցեղասպանություն է իրականացրել ոչ միայն 1915-23 թթ., այլև Փոքր Ասիայի և Հայաստանի տարածքի վրա պետականություն հիմնելու օրվանից:

Գիրքն օժտված է հուզական հզոր լիցքով և ընթերցվում է մեկ շնչով:

Մենագրությունը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

Մ. Բարսեղյան

Հ $\frac{0503020913}{0056(07)2003}$ 2003 ԳՄԴ 63,3(2Հ)

ISBN

© Ա. Ս. Համբարյան
© «Պարգև Ոսկանյան» ՍՊԸ հրատարակչություն

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ պատմաբաններն ու տնտեսագետները բավականին հանգամանորեն ուսումնասիրել են Արևելյան Հայաստանի տնտեսության պատմությունը, մինչդեռ Արևմտյան Հայաստանի տնտեսության պատմությունը մինչև այժմ անբավարար է ուսումնասիրված: Ներկա աշխատությունը նպատակ ունի մասամբ լրացնելու այդ բացը, քանի որ այն նվիրված է XIX դ. 50-ական թթ. մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանին:

Արևմտյան Հայաստանի այդ ժամանակաշրջանի տնտեսության հարցերի ուսումնասիրության կարևորությունը միանգամայն ակներև է, քանի որ առանց դրա գիտական լուսաբանության անհնարին է ճիշտ վերլուծել արևմտահայ ազգային-ազատագրական և հասարակական-քաղաքական շարժումները:

Ելնելով այն փաստից, որ Թուրքիայում, ըստ այդմ՝ նաև Արևմտյան Հայաստանում, սույն ժամանակաշրջանում չի եղել գիտական հիմունքներով կազմված վիճակագրություն, իսկ պաշտոնական «սալնամեների» տվյալները եղել են միտումնավոր խեղաթյուրված և, հետևաբար, անարժանահավատ, ուստի անհրաժեշտ համարեցինք մեր առջև դրված խնդիրները լուծել՝ օգտագործելով ականատեսների և ժամանակակիցների հաղորդած տեղեկությունները, որոնք հրատարակված են զանազան լրագրերում, ամսագրերում, հուշագրություններում և առանձին մենագրություններում կամ ձեռագիր վիճակով պահվում են Ռուսաստանի արտաքին քաղաքականության, Լենինգրադի, Թբիլիսիի և Երևանի պետական պատմական արխիվներում:

Չնայած այդ տեղեկությունները չեն պատասխանում մեզ հետաքրքրող բոլոր հարցերին, սակայն հնարավորություն են ընձեռում պատկերելու Արևմտյան Հայաստանի տնտեսությունը և բնութագրելու դրանում տեղի ունեցած տեղաշարժերը XIX դ. երկրորդ կեսերին և XX դ. սկզբներին: Մենք միայն մասնակիորեն ենք անդրադառնում Արևմտյան Հայաստանի կիսավաչկատուն ու վաչկատուն ցեղերի տնտեսությանը, համարելով, որ այն հատուկ ուսումնասիրության առարկա է: Արևմտյան Հայաստանի տնտեսության պատմության որոշ հարցեր լուսաբանել ենք մեր «Ագրարային հարաբերություններն Արևմտյան Հայաստանում»

աշխատության մեջ: Ներկա գրքում լուսաբանվում են Արևմտյան Հայաստանի տնտեսության պատմության բոլոր հարցերը՝ XIX դ. երկրորդ կեսերին և XX դ. սկզբներին:

Մասնագետներին և ընթերցողներին օգնելու նպատակով, հարկ համարեցինք աշխատության վերջում տալ հավելված՝ Արևմտյան Հայաստանում այն ժամանակ գործող չափերի ու կշիռների, ինչպես նաև դրամական միավորների ու սոցիալական բառեզրերի մասին: Գյուղատնտեսական ռեֆորմի հարցերը սույն գրքում անտեսվում են, քանի որ դրանք հանգամանորեն լուսաբանվել են մեր «Ագրարային հարաբերություններն Արևմտյան Հայաստանում 1856-1914 թթ.» ուսումնասիրության մեջ:

Գլուխ Առաջին

ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

XIX դ. երկրորդ կեսերին և XX դ. սկզբներին Թուրքիան բռնապետական երկիր էր: Պետության գլուխ կանգնած էր սուլթանը, որը երկիրը կառավարում էր մեծ վեզիրի, շեյխ-ուլ-իսլամի և պետական խորհրդի միջոցով: Մեծ վեզիրը կառավարում էր աշխարհիկ, իսկ շեյխ-ուլ-իսլամը՝ հոգևոր գործերը: Պետական խորհուրդը, որ բաղկացած էր գերազանցապես մինիստրներից, գործում էր սուլթանի նախագահությամբ և քննում էր երկրի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին դրության վերաբերյալ հարցերը:

Սուլթանը երկիրը բաժանել էր վիլայեթների, վիլայեթները՝ սանջակների, սանջակները՝ կազաների, իսկ կազաները՝ նահիեների: Նա վարչական յուրաքանչյուր միավորի կառավարման համար նշանակել էր հատուկ պաշտոնյաներ, որոնք կրում էին տարբեր անուններ: Վիլայեթի կառավարիչը կոչվում էր վալի, սանջակի կառավարիչը՝ մութասարիֆ, կազայի կառավարիչը՝ կայմակամ, նահիեի կառավարիչը՝ մյուդիր, իսկ գյուղի կառավարիչը՝ մուխտար կամ ռես:

Սուլթանն Արևմտյան Հայաստանը (որը սկսած XVII դ. (1639 թ.) ընկած էր Թուրքիայի տիրապետության տակ) 1860-ական թթ. բաժանել էր Էրզրումի, Դիարբեքիրի և Սվազի վիլայեթների: 1876թ. նա դրանք վերաբաժանել էր վեց վիլայեթի՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի և Սվազի (հայկական աղբյուրներում և գրականության մեջ այդ վիլայեթները հիշատակվում են նաև իրենց հին, պատմական անուններով, օրինակ՝ Էրզրումի վիլայեթը հիշատակվում է Կարինի, Բիթլիսի վիլայեթը՝ Բաղեշի, Դիարբեքիրի վիլայեթը՝ Տիգրանակերտի, Սվազի վիլայեթը՝ Սեբաստիայի և այլն): Արևմտյան Հայաստանի վարչատարածքային այդ բաժանումը ռուս-թուրքական պատերազմից հետո ենթարկվում է որոշ փոփոխությունների (մի վիլայեթից անջատվում էր որևէ շրջան և միացվում մյուսին), բայց սկսած 1890-ական թթ. վիլայեթների այդ քանակն ու անունները մնացին անփոփոխ ընդհուպ մինչև 1917-1918 թթ.:

Սուլթանը համարյա բոլոր պաշտոններում նշանակում էր

մահմեդականներին, իսկ քրիստոնյաներին, լավագույն դեպքում այդ պաշտոնյաների տեղակալներ կամ նրանց կից գործող խորհուրդների անդամներ, այն էլ ոչ թե ըստ արժանիքների, այլ՝ անձնական նվիրվածության ու նման հատկանիշների: Կառլայլ Մակ Կոանը գրում էր, որ Թուրքիայում, «սկսած գեներալ նահանգապետից մինչև ցածրագույն պաշտոնյան կամ մուխտարը՝ բոլորը ներառյալ, իրենց պաշտոններով պարտական են ոչ թե իրենց անձնական արժանիքներին, այլ ինտրիգներին և կաշառքներին: Վալին, որ բարձրանում է սովորաբար սառաֆի փողի օգնությամբ... մեծ մասամբ իր նշանակման համար պարտական է պալատական որևէ ֆավորիտի կամ Բարձրագույն Դռան մի այլ հովանավորողի: Կայմակամը... տեղ է ստանում որևէ աստիճանավորի ծառային կաշառելով: Նմանապես նաև մուխասաբաջին, մեկտաբաջին, մոավին և մնացած բարձր աստիճանավորները իրենց տեղերն ստանում են հենց նույն եղանակով»[1]:

Սակայն բոլոր պաշտոնյաները, անկախ նշանակման եղանակներից ու անձնական հատկություններից, իրենց կառավարման ընթացքում պաշտպանում էին տիրապետող հասարակարգի՝ ավատատիրության շահերն ընդդեմ աշխատավոր գյուղացիության:

Արևմտյան Հայաստանի բնակիչները հնում գերազանցապես հայեր էին, բայց մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հայերից բացի, կային նաև թուրքեր, քրդեր, ասորիներ, չեչեններ, չերքեզներ, հույներ, պարսիկներ, հրեաներ և այլոք: Թուրքերը հաստատվել են XI-XIV դդ., քրդերը՝ գերազանցապես XV-XIX դդ., հատկապես XIX դ. երկրորդ կեսին, չեչենները և չերքեզները՝ Ղրիմի պատերազմից հետո, իսկ ասորիներն ու պարսիկները, հույներն ու հրեաները՝ անհայտ ժամանակներից:

Քանակական տեսակետից հայերը կազմում էին բնակչության հարաբերական մեծամասնությունը, նրանցից հետո զգալի թիվ էին կազմում քրդերը, այնուհետև՝ թուրքերը, իսկ մնացած ժողովուրդները՝ չնչին փոքրամասնությունը: Երկրի բնակիչներն ապրում էին քաղաքներում և գյուղերում, ճնշող մեծամասնությունը (մոտ 90%-ը)՝ գյուղում, մնացածը (մոտ 10%-ը)՝ քաղաքում:

[1] Карлайл Мак Коан. Наш новый протекторат. Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии/ Перевод с английского.- Москва, 1884, էջ 172:

Գյուղական բնակչության մեծ մասը զբաղվում էր երկրագործությամբ, փոքր մասը, գերազանցապես քրդերը՝ կիսավաչկատուն և վաչկատուն անասնապահությամբ[2]:

Արևմտյան Հայաստանի բնակչությունը բաժանվում էր երկու հիմնական դասակարգի՝ ավատատերերի և նրանց կողմից շահագործվող ու հարստահարվող գյուղացիների: Ավատատերերը, որոնց ձեռքում էր երկրի պիտանի հողերի մեծ մասը, հիմնականում քրդեր էին, թուրքեր, հույներ, ասորիներ, չեչեններ և չերքեզներ: Նրանց մեջ մեծամասնություն էին կազմում քրդերը, հետո՝ թուրքերը, այնուհետև հայերն ու մյուսները: Թուրք բռնակալները տակավին միջնադարում բնաջնջել էին հայ ավատատերերին, իսկ խնդրո առարկա ժամանակաշրջանում եղածներն առաջացել էին առևտրա-վաշխառուական ճանապարհով: Ռաֆֆին գրում էր. «Մենք ազնվապետական դաս չունենք, մենք ունենք վաճառականներ ու եկեղեցիներ»[3]:

Ավատատերերը կրում էին փաշա, աղա, բեկ, բեյ, դերեբեյ (ծորապետ), շեյխ, էլաղասի կոչումները և ապրում էին ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում: Նրանք զարգացման տարբեր աստիճանի վրա էին. ոմանք վաչկատուն կամ կիսավաչկատուն անասնապահներ էին, մյուսները՝ վաշխառուներ կամ առևտրականներ, երրորդները՝ պաշտոնյաներ:

Քուրդ ավատատերերը իրենց հպատակների հետ կապված էին արյունակցական-ազգակցական կապերով: Նրանցից շատերը ցեղապետեր էին, որոնց հպատակության տակ եղած ցեղերը բաժանվում էին առանձին համայնքների, համայնքները՝ տոհմերի, իսկ տոհմերը՝ ընտանիքների: Օրինակ՝ Վասպուրականում Հայդարանցիների ցեղը բաղկացած էր Զարովանլի և Ադիմանլի համայնքներից, իսկ այդ համայնքները՝ Սուքայլի, Շամսիքանլի, Կասկանլի, Բադոյանլի, Համդիկանլի և Բաժիմանլի տոհմերից, իսկ այդ տոհմերը՝ բազմաթիվ ընտանիքներից[4]:

[2] Այստեղ հարկ չենք համարում երկար կանգ առնել ազգաբանկչության խնդրի վրա, քանի որ այդ մասին հանգամանորեն խոսել ենք մեր «Ագրարային հարաբերություններն Արևմտյան Հայաստանում (1858-1915)» աշխատության մեջ (հետագայում՝ Ա. Ս. Համբարյան...):

[3] Ռաֆֆի, Երկեր, հ. 4, Երևան, 1963, էջ 487:

[4] Տե՛ս М. Лихутин. Русские в Азиатской Турции в 1854-1855 годах.- СПб, 1863.- էջ 147-148 (հետագայում վկայակոչումը՝ Մ. Լիխուտին):

Սասունում Պալակցիների ցեղը բաղկացած էր երկու համայնքներից՝ Պարցի կամ Պալակցի և «Շեկոյի տուն»: Նրանցից առաջինը բաղկացած էր Ղասմկա, Բաբիր, Նասրիկ, Չխլո, Բլալ, Յախուբ և Զէմո, իսկ երկրորդը՝ Հաբշո, Խբիլա, Բաքոյի, Չաղան, Բրահիմ, Արամբո և այլ տներից կամ տոհմերից[5]:

Ցեղի մեջ մտած յուրաքանչյուր միավորն ուներ իր ղեկավարը. նրանք համախմբվում էին ցեղապետի շուրջը և կազմում ավագների խորհուրդը: Ցեղապետը խորհրդակցում էր ինչպես նրանց, այնպես էլ փորձված ու հմուտ ծերերի հետ:

Ցեղապետի իշխանությունը չափազանց ուժեղ էր: Նրա հրամաններն ու կարգադրությունները պետք է կատարվեին ամենայն արագությամբ և ճշտությամբ: Եթե որևէ մեկը չկատարեր այդ հրամանը, ապա, ինչպես նշվում է մի հաղորդման մեջ, «կը խոշտանգվի, չարաչար կվնասվի, նույնիսկ մահով կպատժվի»[6]: Առանձնապես ուժեղ էր քրդական այն ցեղապետերի իշխանությունը, որոնք մարմնավորում էին իրենց մեջ թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր առաջնորդի իրավասությունները: Նրանք հպատակների մեջ ստեղծել էին իրենց անձի պաշտամունքը, այդ բառի իսկական իմաստով: Օրինակ՝ Խիզանում Շեյխ Զալալեդդինի որդի Սեիդ-Ալին, որը իր ցեղի հոգևոր և աշխարհիկ առաջնորդն էր, Տ. Փիրումյանի վկայությամբ, ստեղծել էր այնպիսի հեղինակություն, որ նրա «ամեն մի խոսքը օրենք է, ամեն մի ցանկություն՝ աստվածային ներշնչում: Նրան չէ կարելի բամբասել, քննել և հակառակել», ցավագարները դիմում են շեյխի օգնությանը, որը «բուժում է իր թքով, երեսի, ձեռքի, ոտքի ու շորի լվացքաջրով...»[7]:

1905 թ. Կարսեցին հաղորդում էր, որ Շամդինանում շեյխ Սահմադ-Սըդըխի «ձեռքը դիպած ամեն մի առարկա, ամեն մի իր նվիրական է քյուրդերի համար. նրա տան հացը ձեռք է բերվում և ուտացվում վախեցողին՝ որպես բուժիչ թալիսման, և տրվում ամուլ կնոջը, կամ նրա բարձի տակ դրվում, որպեսզի կարողանա ամլությունից ազատվել»[8]:

Արևմտյան Հայաստանի ավատատերերից շատերը և հատկապես քրդական ցեղապետերն ունեին իրենց ղուլամները (բառացի՝ ծառաները), այսինքն՝ ռազմիկները, զինվորները, որոնց օգտագործում էին ոչ միայն հպատակներին ոտնահարելու և հարևանների հարձակումներից պաշտպանվելու, այլ նաև նորանոր գյուղեր ու հողեր բռնագրավելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կենտրոնական իշխանությանը ծառայելու կամ նրան ընդդիմակայելու համար: Յուրաքանչյուր ավատատեր կամ ցեղապետ պահում էր այնքան ղուլամ, որքան կարող էր: Նրանց ղուլամների թիվը սովորաբար տատանվում էր մի քանի տասնյակից մինչև մի քանի հազարի սահմաններում: Ղուլամները սովորաբար չէին աշխատում: Նրանք խաղաղ ժամանակ մարզվում կամ մասնակցում էին թալանչիական արշավանքներին, իսկ պատերազմի ժամանակ՝ կռվում:

Պետք է նշել, որ ավատատերերը անհրաժեշտության դեպքում հավաքագրում էին նաև իրենց հպատակ-հավատացյալներին, որոնք, ներծծված լինելով մահմեդական թունոտ մոլեռանդությամբ, հաճախ գնում էին մեռնելու «իրենց տիրոջ» փառքի ու պատվի համար: Մի թղթակից գրում էր. «Քյուրդ ռայայի գործն է մշտընջենական օլամ, զինված ղուլամներ ձրի պահել և կերակրել, նույնպես նաև յուր աղայի դավար ու ոչխարները: Եվ հետո բուռն աշիրական կռիվներով իրանք ալ պարտավոր են երթալ և մեռնել ի հարկին»[9]:

Ավատատերերի հողային տիրույթները կարելի է բաժանել երկու մասի. կալվածատիրական և գյուղացիներին մշտական բաժնեհողի իրավունքով տրված տարածություններ: Կալվածատիրականները բաղկացած էին արոտավայրերից, վարելահողերից, մարգագետիններից, անտառներից, այգիներից և բանջարանոցներից: Եթե ավատատերը զբաղվում էր գերազանցապես անասնապահությամբ, ապա նրա հանդակների մեծ մասը բաղկացած էր արոտավայրերից ու մարգագետիններից, իսկ եթե նա զբաղվում էր երկրագործությամբ, ապա՝ վարելահողերից, այգիներից ու մարգագետիններից: Ելնելով այն իրական փաստից, որ ավատատերերի մեծ մասը քրդեր էին, որոնք զբաղվում էին առավելապես անասնապահությամբ, պետք է ենթադրել, որ նրանց կալվածքները բաղկացած էին մեծ մասամբ արոտավայրերից ու մարգագետիններից: Ինչ վերաբերում է

---

[5] Տե՛ս «Ազատամարտ», 1911, հունիսի 10, թիվ 610:

[6] Բյուզանդիոն, 1911, դեկտեմբերի 28:

[7] Մուրճ, 1891, թիվ 9, էջ 230:

[8] Մուրճ, 1905, թիվ 8, էջ 9:

[9] Բյուզանդիոն, 1910, դեկտեմբերի 30:

գյուղացիների հողերին, ապա դրանց մասին խոսք կլինի ստորև:

Ավատատերերը կառավարում էին իրենց տիրույթները ղուլամների կամ համայնքների ու տոհմերի ավագների միջոցով՝ տալով նրանց մի դեպքում յուրաքանչյուրին մեկ գյուղ, մի այլ դեպքում՝ մեկից ավելի, երրորդ դեպքում՝ մի քանի հոգուն՝ մեկ գյուղ և հանձնարարում էին նրանց հետևել սահմանված «կարգ ու կանոնին»: Օրինակ՝ Պտրցիների ցեղապետ Նադր աղան Սասունի Բռնաշեն գավառակում ուներ 11 գյուղ, իսկ «յուրաքանչյուր գյուղի մեջ՝ իր գործակատար փոքրիկ աղաները»[10]:

Շեյխ Սեիդ Ալին, որ տիրում էր բազմաթիվ գյուղերի, դրանցից յուրաքանչյուրում նշանակել էր «իր առանձին վամպիր, իր առանձին տզրուկ քուրդ աղան»[11]:

Բալուի 13 բեյերը «ունին իրենց իրավասության ներքև խումբ-խումբ քյուրտեր, որք կը բնակին Բալուա նահանգին շրջապատը երկու հարյուր տասն և յոթ գյուղերու մեջ»[12]:

Ռ. Բեկգուլյանցը հիշատակում էր, որ Վանի, Էրզրումի և Բիթլիսի վիլայեթների «խոշոր բեկերն ունեին իրենց ենթակա փոքր բեկեր, իսկ սրանք՝ ավելի փոքր բեկեր»[13]:

Ավատատերերն իրենց ստորադրյալների նկատմամբ սահմանել էին վասալական հարաբերություններ՝ պարտադրելով նրանց ստացած գյուղի կամ հողի դիմաց վճարել հարկեր ու տուրքեր և պատերազմների դեպքում ղուլամներ տրամադրել: Նրանք ցանկացած ժամանակ կարող էին իրենց ստորադրյալներից հետ վերցնել նվեր ստացած գյուղերն ու հողերը և վռնդել նրանց: Ավատատերերն իրենք էին նշանակում մուխտարին կամ ռեսին: Եթե գյուղացիներն ուզում էին փոխել իրենց մուխտարին, պարտավոր էին նախօրոք ավատատերերից թույլտվություն ստանալ: 1879 թ. անգլիացի հյուպատոս Քլեյտոնը նշում էր, որ Արևմտյան Հայաստանի գյուղերից մեկում ոմն «բռնակալ Սիրզա-

[10] Ազատամարտ, 1911, հունիսի 7, թիվ 607:

[11] Հորիզոն, 1912, նոյեմբերի 20, թիվ 257:

[12] Պողոս Նաթանյան, Արտոսր Հայաստանի կան Տեղեկագիր Բալուա, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի և Երզնկայի, Կ. Պոլիս, 1883, էջ 50 (հետագայում վկայակոչումը՝ Պ. Նաթանյան):

[13] Р. Бекгулянц, По Турецкой Армении. Впечатления от поездки летом в 1914 году.- Ростов-на-Дону, 1914.- էջ 75 (հետագայում վկայակոչումը՝ Ռ. Բեկգուլյանց):

բեյը հրամայեց ծեծել գյուղապետին, որովհետև նա ընտրվել էր առանց իր գիտության»[14]:

Ավատատերերը, ունենալով զորագնդեր, շատ հաճախ տարբեր առիթներով կռվում էին միմյանց դեմ: Դ. Թեյլորը հիշատակում էր, որ 1860-ական թվականներին Դերսի Օվաջիկ հովտում կզլբաշական երկու ցեղեր կռվում էին հողի համար: Կողմերից մեկը խնդրում է իրեն հաշտեցնել նրանց: Սակայն ինքը հրաժարվում է, պատճառաբանելով, թե արդեն այնքան արյուն է թափվել, որ տուժող կողմը հազիվ թե բավարարվի, նույնիսկ վիճելի հողամասը ստանալով[15]:

1908 թ. հոկտեմբերին «Բյուզանդիոնի» թղթակիցը հաղորդում էր, որ Բալույում «վեց օրէ ի վեր Սաքրատ գյուղի պէյերու և Թէվֆիգ պեյի միջև արյունալի կռիվ կը մղվի Կյուլիշկերի հողերուն համար. մինչև հիմա, մեր գիտցածը, սպանված են 2 զինվոր և 10 մարդ. հրացանաձգությունն երկուստեք անընդհատ կշարունակվի»[16]:

Միջցեղային կռիվները չափազանց ծանր էին անդրադառնում աշխատավոր գյուղացիության վրա: Հաղթողը, որպես կանոն, կողոպտում ու թալանում էր հակառակորդի հպատակներին, քանդում էր նրանց տունն ու տեղը, ավերում դաշտերը: Ռաֆֆին նշում էր, որ այդ կռիվների ժամանակ «ժողովուրդը թողնում է իր տունը, տեղը, մշակության դաշտերը. և միայն իր գլուխը ազատելու համար, պատսպարվում է լեռների անմատչելի տեղերում: Կռիվը տևում է երկար: Անասունները անտեր մնալով, թշնամին կողոպտում է. հունձքը, անխնամ մնալով, չորանում է, և կռիվներից հետո վրա է հասնում մի նոր ամենասարսափելի թշնամի-սովը... կռիվները, ժողովրդի անդադար անցնելը մեկ տիրապետողից դեպի մյուսը, սպառում էին բնակիչների կյանքը սրով, կրակով և սովով»[17]:

Միջցեղային կռիվների հետևանքով որոշ ավատատերեր ըն-

[14] М. Г. Роллен-Жекмен. Армения, армяне и трактаты.- Тифлис, 1896.- էջ 61 (հետագայում՝ Մ. Գ. Ռոլլեն-Ժեկմեն...):

[15] Տե՛ս Д. Тейлор. Дневник путешествий по Армении, Курдистану и Верхней Месопотамии в 1866 году/ Перевод Н. Астафьева.- Тифлис, 1893.- էջ 42 (հետագայում՝ Դ. Թեյլոր...):

[16] Բյուզանդիոն, 1908, դեկտեմբերի 14:

[17] Ռաֆֆի, հ. 4, էջ 377-378:

դարձակում էին իրենց հողային տիրույթները և բազմապատկում հոտերը:

Արևմտյան Հայաստանում կալվածատիրական հողատիրություն-յունից բացի կային նաև ավատատիրական հողատիրության այլ ձևեր. դրանք են՝ վակուֆային, վանական և պետական հողա-տիրությունները: Վակուֆային հողատիրությունը գոյություն ուներ գլխավորապես Սվազի և Դիարբեքիրի վիլայեթներում, իսկ հայ վանական հողատիրությունը՝ բոլոր վիլայեթներում: Օրինակ՝ Վանի վիլայեթում կար մոտ 70 վանք, որոնցից 30-ը, ըստ Ծերունկի վկայության, «Աչքի են ընկնում իրենց տնտեսական հարստությամբ և կալվածքներով: Այդ վանքերն ունեն անբավ հողային հարստություն՝ արտեր, անտառներ, վարելահողեր, ծա-ռաստաններ, մարգագետիններ և հասութաբեր շենքեր»[18]:

Բիթլիսի վիլայեթում եղած վանքերից հարուստ էր Ս. Առաքելոց վանքը, որի հողային տարածությունները շրջելու համար, ըստ Մ. Միրախորյանի վկայության, հարկավոր էր չորս ժամ՝ ձիու միջակ քայլերով[19]: Այդ վիլայեթում հարուստ էր նաև Ս. Կարապետի վանքը: Մի թղթակցի հաղորդմամբ՝ 1910 թ. նա ուներ «տասնյակ հազարավոր սաժեն վարելահող, շինության ու վառելափայտ հայթայթող ընդարձակ անտառներ և տասնյակ հազար անա-սունների բավականություն տվող արոտամարգեր»[20]:

Խարբերդի վիլայեթում Ս. Ս. Սորսուրա, Դատեմի, Զարդարիչ, Ղուլե և այլ վանքերն ունեին զանազան հանդակներ և անա-սունների հոտեր[21]:

Էրզրումի վիլայեթի վանքերը նույնպես ունեին հողային տիրութներ ու անասուններ: Ա-Դոն նշում է, որ Ս. Հովհաննեսի կամ Ուչքիլիսայի վանքն ուներ «ահագին քանակությամբ բերրի վարելահողեր և խոտհարքեր... չորս աչք ջրաղաց և բավակա-նաչափ կենդանիներ»[22]:

---

[18] Մուրճ, 1904, թիվ 4, էջ 33:

[19] Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գավառս Արևել-եան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1885, մ. Բ, էջ 84 (հետագայում՝ Մ. Միրախորյան):

[20] Հորիզոն, 1911, մայիսի 1, թիվ. 91:

[21] Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1884, մ. Բ, էջ 87-89, 90, 152:

[22] Ա.-Դոյը, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 209 (հետագայում՝ Ա-Դո):

Հայոց վանքերի ունեցվածքի մասին կարելի է հիշատակել նաև բազմաթիվ այլ տեղեկություններ: Սակայն բավարարվենք այսքանով:

Ինչ վերաբերում է պետական հողերին, ապա դրանք տարա-ծությամբ քիչ էին, իսկ որակով՝ ցածր: Ա. Մ. Կոլյուբակինը 1886 թվականին նշում էր, որ Խարբերդի կազայում պետական հողերը «բազմաթիվ ու ընդարձակ չեն»[23]: Իսկ 1899 թվականին Հ. Մուրադյանը արձանագրում էր, որ Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում, «պետական ազատ հողեր շատ քիչ կան, կարելի է ասել, թե բոլորովին չեն մնացել, որովհետև դրանց մեծ մասը օրինական, թե անօրինական ճանապարհով զա-նազան թուրք ու չերքեզ բեկերի ու աղաների ձեռքն են անցել, նրանց սեփականությունը դարձել»[24]:

* *
*

Արևմտյան Հայաստանի գյուղացիներն, ըստ իրենց սոցիա-լական դրության, բաժանվում էին տարբեր խմբերի. ազատների, կախյալների, ճորտերի, բատրակների ու ստրուկների:

Կախյալների շարքին պատկանում էին այն գյուղացիները, որոնք վճարում էին աղաներին ու բեյերին խաֆիրության տուրք և նրանց պահում էին իրենց գյուղերում, որպես ղշլաղներ: «Խա-ֆիր» արաբերեն բառ է, որ նշանակում է պահապան: Սրա իմաստն այն է, որ աղաները իրենց հայտարարում էին գյուղացի-ներին կողմնակի հարձակումներից «պաշտպանողներ» և այդ «պաշտպանության» համար ստիպում էին նրանց վճարել զանա-զան հարկեր ու տուրքեր: 1909 թ. Սասունի գյուղացիներից մեկն ասում էր. «Մեր գյուղը առաջ 30-40 ոսկի խաֆիրության տուրք կուտար Սասնո պէկերուն, որոնք օրերով հեռու մեզմէ՝ իբրև թե մեր կյանքը պիտի պաշտպանեին այդ տուրքին փոխարեն»[25]:

«Ղշլաղ» թուրքերեն բառ է, որ նշանակում է ձմեռանոց: Սրա

---

[23] А. М. Колюбакин. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции.- Тифлис, 1891.- Т. 3, ч. I, отд. II, էջ 382 (հետագայում՝ Ա. Մ. Կոլյու-բակին, հ. III, մաս I, բաժին II):

[24] Մուրճ, 1899, թիվ 10, էջ 1209:

[25] Ազատամարտ, 1909, դեկտեմբերի 6, թիվ 150:

իմաստն այն է, որ քրդական ցեղապետերից շատերը աշնանը իջնում էին սարերից և իրենց ղուլամների, ցեղակիցների ու անասունների հետ միասին ձմեռում էին գերազանցապես հայկական գյուղերում: Բնակիչները սպառնալիքի տակ հարկադրված էին կերակրել նրանց: 1862 թ. մի թղթակցության մեջ ասվում էր. «Վրանաբնակ քյուրդեր աշնան եղանակներ կուգան հայոց գեղերը ձմեռելու. և հայեր ամեն տարի իրենց տան ու անասնոց պետքերուն հետ կիոգան ու կպատրաստեն նոցա համար ևս ամեն կերպ պիտույքն ու կարիքը»[26]:

1909 թ. մի այլ թղթակցության մեջ նշվում էր, որ վրանաբնակ քրդերից «շատերը աշնան ատեն՝ իրենց վրաններով, ընտանիքով ու ծառաներով հայ գեղերը կխուժեն, հայոց տները կը տեղավորվին ու կը ձմեռեն: Այս բռնի և անտանելի բնակակցությունը գըշլաք կը կոչվեր»[27]:

Ղշլաղությունը ավատատիրական հարաբերությունների նախնական, պարզունակ ձևերից մեկն էր, իսկ խաֆիրությունը՝ արդի քիչ թե շատ զարգացած ձև էր: Առաջինի ժամանակ գյուղացիների անձնական կախվածությունը ավատատերերից ժամանակավոր էր, իսկ երկրորդի ժամանակ՝ մշտական: Ղշլաղությունը տարածված էր գերազանցապես Աղբակում, Մուշում, Վարդոյում, Խնուսում, Բուլանըխում, Մանազկերտում և Ախլաթում[28], իսկ խաֆիրությունը՝ Սասունում, Խութում, Մուշում, Խիզանում, Մոկսում, Շատախում, Բռնաշենում և այլ տեղերում[29]:

Կախյալ գյուղացիները ամրագրված չէին հողին: Նրանք կարող էին արտագաղթել կամ տեղափոխվել: Սակավահողությունն ու անձի պաշտպանվածության բացակայությունն էին ստիպում այդ գյուղացիներին դիմել աղաներին և ընկնել նրանց իշխանության տակ: Սուլթանական իշխանությունների և քուրդ աղաների ջարդերից ու թալաններից ազատվելու համար հայ գյուղացիներից շատերը դիմում էին այս կամ այն ազդեցիկ աղայի հովանավորությանը: Նրանցից ոմանք ընդառաջում էին գյուղացիներին, բայց ծառայեցնում էին իրենց շահերին՝ ձգտելով ճորտացնել

[26] Արծվի Վասպուրական, 1862-1863, թիվ 3, էջ 73:

[27] Ազատամարտ, 1909, օգոստոսի 4, թիվ 47:

[28] Ազատամարտ, 1909, օգոստոսի 4, թիվ 47:

[29] Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 156-157:

նրանց: 1913 թ. «Բյուզանդիոնի» թղթակիցը գրում էր, որ Շեմդինանում շեյխ Ուբեյդ-Ուլլայի որդի Մեհմեդ-Սըտըքը հայ վարպետներին աշխատեցնում էր իր շինությունների վրա «գրեթե ծրիաբար կամ կիսագին ու անկարելի դարձնելով անոնց մեկնումը կամ փախուստը»[30]:

Նույն թերթի մի այլ թղթակից հաղորդում էր, որ այդ տիրակալը երկու պալատներ կառուցեց Շեմդինանում ու Քաթինայում՝ հազարավոր հայ գործավորներ ու վարպետներ աշխատեցնելով դրանց վրա: «Համիդյան բռնակալության ատեն շեյխին բնակարանը մի կերպ ապաստանավայր էր, ուր կդիմեին հալածական հայեր, իսկ Շեյխ Մեհմեդ Սըտըքը կնդուներ թեև զանոնք, բայց անխնա կերպով կաշխատացներ իր տուներու շինության վրա, շատ անգամ անիկա խոստումներ շռայլերով վարպետներ կիրավիրեր Վանեն ու Սալմաստեն և տարիներով զանոնց գրեթե ծրիաբար կամ կիսագնով կաշխատեցներ, անկարելի դարձնելով անոնց մեկնումը կամ փախուստը»[31]:

Շատ տեղերում գյուղացիներին սակավահողությունն էր ստիպում հող վարձակալել աղաներից և կախման մեջ հայտնվել նրանցից: 1967 թ. գարնանը լինելով Գյումրիի շրջակայքի գյուղերում, որոնց բնակիչները եկել էին Արևմտյան Հայաստանի զանազան վայրերից, եղա նաև Ախուրյանի շրջանի Ախուրյան գյուղում, ուր ապրիլի 1-ին զրուցեցի Մշո դաշտի Հացիկ գյուղից եկած Մկրտիչ Մարտիրոսյանի հետ: Նա ծնվել է 1897թ. Հացիկում, ապրել է այդ գյուղում 18 տարի, ապա գաղթել է Արևելյան Հայաստան 1915 թ. և իր բախտակիցների հետ միասին հաստատվել Ախուրյանում: Մկրտիչ Մարտիրոսյանի ընտանիքը բաղկացած է եղել 8 հոգուց՝ հայրը, մայրը, եղբայրը և քույրերը: Հացիկում նրանց գյուղը աղայական չէր, բայց աղայի հետ բնակիչներն առնչություն ունեին: Այդ աղան բնակվում էր Մուշ քաղաքում, իսկ Հացիկում ուներ դղյակ և հողեր: Այդ հողերը նա գնել էր տեղի բնակիչներից և նրանց տալիս էր վարձակալությամբ:

Մարտիրոսյանը թեև Մշո դաշտի իրենց գյուղում ունեցել է հող, 4 եզ, 3-4 կով, 10-20 ոչխար, արոր ու գութան, բայց որովհետև ունեցած հողը քիչ է եղել, ուստի հարկադրված է եղել հող վարձակալել աղայից, որը տալիս էր նաև սերմացու և

[30] Բյուզանդիոն, 1913, դեկտեմբերի 7:

[31] Նույն տեղում, 1913, դեկտեմբերի 20:

վերցնում էր բերքի կեսը: Աղայական այդպիսի կախվածություն ունեին հացիկցիներից շատերը: Գյուղացիների կախվածության այդ ձևը շատ էր տարածված Արևմտյան Հայաստանում:

Կախյալ գյուղացիների թվին էին պատկանում նաև կիսարարները կամ մարաբաները, որոնք աղբյուրներում ու գրականության մեջ հիշատակված են մարապա, միրիբա, մրիպա, մերապա և նման անուններով: Հնչակյան որոշ գործիչներ նրանց անվանում էին գյուղական պրոլետարներ: Դա ճիշտ չէ: Մարաբաները կախյալ գյուղացիներ էին և կազմում էին ավատատիրական դարաշրջանի գյուղացիության որոշակի խումբ: Մեզ հայտնի չէ, թե երբ են առաջացել մարաբաները, հայտնի է, որ XIX դ. վերջին ու XX դ. սկզբին նրանք բաժանվում էին երկու կարգի: Մեկը, ըստ Ա-Դոյի, այն էր, որ հողը պատկանում է աղային, իսկ լծկանն ու գործիքները մարաբային...», իսկ մյուսն այն էր, որ մարաբան «զուրկ է ամեն ինչից՝ և՛ հողից, և՛ սերմից, և՛ լծկանից, և՛ գործիքներից»[32]:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարաբաների շարքում կային նաև այնպիսիք, որոնք ունեցել են հողակտոր: 1912 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ Չարսանճագում «Մեհմէտ ու իսմայիլիկցի աղա պեկերը իրենց հրամաններուն ու հրահանգներուն չանսացող միրապաներուն տուները կողոպտել կուտան, այգիներն ու պարտեզները բռնությամբ կը հափշտակեն և քուրտ ծառաների միջոցով սպառնալիքներ կընեն»[33]:

Նույն հաղորդման մեջ այնուհետև ասվում էր. «Օսման պէկ արդէն իսկ իր ձեռքին տակ գտնվող միրապաններուն այգիներն ու պարտեզները ամբողջությամբ ոչնչացուցեր լմնցուցեր է»[34]:

Մարաբաները վարձակալում էին աղաների հողերը կամ առանձին կամ ընտանիքներով կամ ամբողջ գյուղով: Նրանք վարձակալում էին տարբեր ժամանակով՝ մեկից մինչև մի քանի տարով և տարբեր պայմաններով. մի տեղում վճարում էին հողատերերին ստացած բերքի 1/10-ը, մյուսում՝ 1/7-ը, երրորդում՝1/4-ը և այլն: Այդ տարբերությունը պայմանավորված էր ոչ թե կալվածատիրոջ բարի կամ չար բնավորությամբ, ինչպես ասում էր Ա. Մ. Կոլյուբակինը[35], այլ հողատիրոջ և գյուղացու տրամադրած

[32] Ա-Դո, նշված աշխատություն, էջ 276:

[33] Ազատամարտ, 1912, ապրիլի 24, թիվ 878:

[34] Նույն տեղում:

[35] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշված աշխ., հ. III, մաս I, բաժ 2-րդ, էջ 134:

միջոցների քանակով, հողի պտղատվությամբ և ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացման մակարդակով:

Մարաբաները, վարձակալելով աղաների հողը, ընկնում էին նրանց իշխանության տակ:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին թուրքական կառավարության հայահալած քաղաքականության պայմաններում աղաներն ու բեգերը, գյուղացիների հողը բռնագրավելիս, նրանց մի մասին կոտորում էին: Օրինակ՝ 1879 թ. Աղբակում քրդական շեյխերը Նուրեդդիի գլխավորությամբ սպանում են մարաբաներից շատերին[36], 1894 թ. էյուբ փաշան Ալաշկերտում կոտորում է 3000 հոգու[37], 1894-1896 թթ. էմին փաշան Արճեշում բնաջնջում է ավելի քան 5000 հոգի[38]:

Աղաներն ու բեգերը գյուղացիների մյուս մասին արտաքսում են, որի հետևանքով մեծ չափերով աճում է հողազուրկների կամ մարաբաների թիվը: 1880-ական թվականներին Խարբերդի կազայում նրանք կազմում էին 40.000 հոգի[39]: Մուշի դաշտում՝ բոլոր գյուղացիների 80 %-ը, Բուլանըխում՝ 80-85 %-ը[40] և այլն: Ա-Դոն գրում էր. «Մարաբայությունը՝ որպես ինստիտուտ, թեև վաղուց գոյություն ունի Տաճկաստանում, բայց նա առանձին ուժ ստացավ վերջին երեք տասնյակ տարիների ընթացքում տեղի ունեցող հայկական ջարդերի շնորհիվ»[41]: «Մարաբայությունը մեզ հետաքրքրող երեք վիլայեթներում (Վանի, Բիթլիսի և Էրզրումի-Ա. Հ.) մեծ չափերի է հասել. ճիշտ է, նա ամեն տեղ համահավասար չափով չէ զարգացել, բայց ընդհանուր առմամբ ահագին է նրա ծավալը»[42]:

Աղաներն ու բեգերը գյուղացիների մնացած մասին օգտագործում էին մի տեղում իբրև մարաբա-կիսարարներ, իսկ մի այլ տեղում՝ իբրև մարաբա-ճորտեր: Անդրանիկը գրում էր. «Չարսանճագի 60 գյուղերը, որոնց մեջ հայ և քուրդ ազգաբնակ-

[36] Տե՛ս «Մասիս», 1879, մայիսի 20:

[37] Տե՛ս Ս. Ռոլեն Ժեկմեն, նշված աշխ., էջ 366:

[38] Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, փետրվարի 24:

[39] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշված աշխ., հ. III, մաս I, բաժ 2-րդ, էջ 364-365:

[40] Տե՛ս «Ազատամարտ», 1911, հունվարի 18, թիվ 491:

[41] Ա-Դո, նշված աշխ., էջ 275:

[42] Նույն տեղում, էջ 278:

չությունը խառն կբնակին՝ ընդհանրապես բոլորն էլ մարաբա (կիսնորդ) հողագործներ են, որ կվարեն ու կցանեն աղաներու ու պեկերու հողային կալվածները»[43]:

Ժամանակակիցներից մեկը պատմում էր, որ 1860-ական թվականներին Մուշի սանջակում Միրզա բեյը հարձակվում է Խարտոս գյուղի վրա և թալանում բնակիչներին: Վերջիններս իրենց կյանքը փրկելու համար փախչում և ապաստանում են ով որտեղ կարող է: Այնուհետև, ինչ-որ Հաջի բեյ խարտոսցիների հողը ձևակերպում է իր անունով: Երբ գյուղացիները վերադառնում են, Հաջի բեյը թույլատրում է նրանց բնակվել գյուղում այն պայմանով, որ իրեն ճանաչեն իբրև հողերի տեր, իսկ իրենք իրենց՝ որպես մարաբաներ և հոգուտ նրա ստանձնեն զանազան պարտավորություններ: Խարտոսցիները ստիպված համաձայնում ու հաստատվում են իրենց նախկին հողերի վրա, բայց արդեն «ոչ իբրև **տեր**, այլ իբրև **ծառա**, **մարաբա**»[44]: Մինչև 1909-1910 թթ. նրանք աղայի օգտին կատարում էին օլամ և անկարա, տալիս հավ, շաքար, ոչխար ու զանազան ապրանքներ, և եթե մեկը ցանկանում էր ամուսնացնել իր տղային կամ աղջկան, պարտավոր էր աղայից թույլտվություն վերցնել:

Ուշագրավ է, որ աստիճանաբար մարաբա-կիսարարությունից անցում էր կատարվում դեպի մարաբա-ճորտությունը: Դա տեղի էր ունենում այն բանի հետևանքով, որ աղաներն ու բեյերը պարտք էին տալիս իրենց մարաբա-կիսարարներին և չվերադարձնելու դեպքում արգելակում էին նրանց տեղափոխումներին: Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ Խարբերդի կազայի մարաբա-կիսարարը «ստանալով 40-50 դյոնում վարելահող վարձակալությամբ, պարտավոր է իսկույն ևեթ վճարել ամբողջ վարձակալական գումարը կամ ծայրահեղ դեպքում՝ նրա կեսը: Չունենալով փող, նա պարտք է վերցնում հենց այն կալվածատիրոջից կամ հայ վաշխառուից՝ հսկայական տոկոսներով... Այդպիսով, գյուղացին առաջին իսկ քայլից ընկնում է պարտքի տակ: Բայց դրանով չեն վերջանում նրա պարտավորությունները... գյուղացին սերմացու գնելու համար նորանոր պարտքեր է անում նույն կալվածատիրոջից կամ վաշխառու-քաղաքացուց: Այնուհետև պարտք է անում

[43] Անդրանիկ, Տերսիմ, Ճանապարհորդություն և տեղեկագրություն, Թիֆլիս, 1900, էջ 134 (հետագայում Անդրանիկ):

[44] Հորիզոն, 1910, մարտի 5, թիվ 49:

բանող անասուն վարձակալելու համար, քանի որ հողազուրկ գյուղացիների զգալի մասը բնավ բանող անասուն չունի»[45]: Ա. Մ. Կոլյուբակինն այնուհետև եզրափակում էր. «Ահա այսպիսով այդ մարդկանց մեծ խմբի կեսից ավելին հայտնվում է կալվածատերերի ու հարստահարողների մշտական, անվճարելի պարտքերի մեջ»[46]:

Գ. Երիցյանը նշում էր, որ Բասենում մարաբա-կիսարարը աղայից պարտք է վերցնում, «սակայն չկարենալով վճարել՝ կիյնա պարտքի տակ, որ տարվե տարի, տոկոսով միասին կմեծանա ու կը մեծանա... մարաբան երթալով կընկճվի ու վերջիվերջո հարկադրված կըլլա փոխադրվիլ աղայի մոտ և դառնալ անոր ստրուկը...»[47]:

Մարաբա-կիսարարությունից դեպի մարաբա-ճորտատիրությունը իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, քան հողային հարաբերությունների հետզարգացում, ճորտատիրության վերականգնում և ամրապնդում:

Արևմտյան Հայաստանի գյուղում ապրանքային տնտեսության թույլ զարգացման պայմաններում ստեղծվել էին մի կողմից հողատերեր, իսկ մյուս կողմից՝ հողազուրկ գյուղացիներ: Վ. Ի. Լենինը, քննադատելով նարոդնիկներին, որոնք կարծում էին, թե գյուղացիության հողազրկումը կնպաստի կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, գրում էր. «Իրականում գյուղացիների հողազրկումը 1861 թվականին մեծ մասամբ նշանակում էր ոչ թե ազատ բանվորի ստեղծում կապիտալիստական արտադրության մեջ, այլ **ստրկացած** (այսինքն փաստորեն կիսաճորտ կամ անգամ գրեթե ճորտ) վարձակալի ստեղծում այդ նույն «աղայական», կալվածատիրական հողի համար: Իրականում 1861 թվականի «հողաբաժինները» մեծ մասամբ նշանակում էին ոչ թե ազատ, ինքնուրույն հողագործի ստեղծում, այլ ստրկացած վարձակալի **ամրացումը հողին,** որը փաստորեն հարկադրված է կրել նույն այդ կոռը, իր ինվենտարով կալվածատիրոջ հողը մշակելով՝ արածատեղի համար, արոտատեղի համար, մարգագետնի համար անհրաժեշտ վարելահողի համար և այլն»[48]:

[45] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, հ. III, մաս I, բաժ 2-րդ, էջ 386:

[46] Նույն տեղում, էջ 134:

[47] Ազատամարտ, 1913, փետրվարի 23, թիվ 828:

[48] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 119:

Արևմտյան Հայաստանի գյուղացիների կախվածությունը աղաներից արտահայտվում էր նաև ճորտության ձևով: Ի տարբերություն կախյալների, ճորտ գյուղացիները զրկված էին ազատ տեղափոխման իրավունքից: Վ. Ի. Լենինը նշում է, որ «ճորտատիրական իրավունքի հիմնական հատկանիշն այն է, որ գյուղացիությունը... համարվում է հողին ամրացված»[49]: Սակայն, բացի դրանից, կան ճորտատիրությունը բնորոշող նաև այլ հատկանիշներ, ինչպես օրինակ, անձի անարգումը, ծաղր ու ծանակի ենթարկումը, վաճառումն ու գնումը, դաժան կեղեքումն ու հարստահարումը և այլն[50]:

1890 թ. Ալաշկերտի 14 գյուղերի բնակիչները՝ թվով 98 հոգի, երբ փորձում են փախչել Պարսկաստան, նրանց տերերը՝ Ահմեդ ու Մուհամեդ բեյերը, ռուսական հյուպատոսներից մեկի վկայությամբ, «ստիպում են նրանց վերադառնալ իրենց տեղերը»[51]:

1903 թ. Սասունի Պերմ գյուղի բնակիչները, երբ որոշում են «գաղթել տնով, տեղով, աղան, իմանալով պերմցոց այս խորհուրդը, անմիջապես քրդերը կը լեցնե գյուղը, կը պաշարե, ճամփաները կը փակե և չի թողուր, որ հեռանան»[52]: Նման փաստեր շատ կարելի է բերել:

Ճորտատիրությունը տարածված էր գլխավորապես Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի վիլայեթներում և մնացած վիլայեթների որոշ շրջաններում: Ճորտատիրության հարցին անդրադարձել են պատմաբանները դեռ անցյալում: Ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին իր «Դերեբեյները» հոդվածում գրում է. «դերեբեյները վերացան, բայց շահագործողական հարաբերությունները պահպանվեցին: Նրանց փոխարեն աճեցին աղալարները, հատկապես արևելյան վիլայեթներում, որ քրդական ցեղերի մեջ շարունակեցին պահպանել ճորտատիրական հարաբերություններ: Հատկապես Դիարբեքիրի վիլայեթի խորքերում, նույնիսկ առաջին համաշխարհային պատերազմից հետո ցեղապետի՝ աղայի ձեռքում պահպանվել էր անառարկելի իշխանություն բնակչության վրա: Առանց նրա թույլտվության ոչ ոք չէր կարող շարժվել տեղից-տեղ»[53]:

1934 թ. Լեոն գրում էր. «Մի շատ սխալ կարծիք կա տարածված, թե «Թուրքիայում... ճորտատիրություն գոյություն չի ունեցել... Մինչդեռ հայ գյուղացիությունը բացառապես քյուրդ ազնվականության ճորտն էր»[54]:

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանը 1955 թ. նշում էր. «Մի շարք գավառներում և մասնավորապես Մշո, Բիթլիսի ու Վանի գավառներում, գյուղացիությունը գտնվում էր բացահայտ ճորտական վիճակում: Այդ մասին մենք ունենք բազմաթիվ վկայություններ, որ թողել են մեզ ժամանակակիցներն ու ականատեսները»[55]:

1957 թ. Ե. Ղ. Սարգսյանը գրում էր. «թանգիմաթական բարենորոգումները 1839-1860-ական թթ. ոչ միայն չբարելավեցին հայերի դրությունը, չվերացրին հայ գյուղացիների ճորտական վիճակը, այլ ընդհակառակը, հայերի մեծամասնությանը, զրկելով հողից, դարձրին քուրդ ու թուրք աղաների և բեյերի ճորտերը»[56]:

Բայց 1972 թ. հրատարակված իր նոր աշխատության մեջ Ե. Ղ. Սարգսյանը ժխտում է գյուղացիության թե՛ ճորտական վիճակը և թե՛ ճորտության իրավական ձևակերպումն Արևմտյան Հայաստանում[57]: Իրավացի չի հեղինակը: Հանրահայտ է, որ ճորտատիրությունը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում փաստորեն գոյություն է ունեցել դեռևս միջնադարից մինչև 1920 թ., իսկ իրավապես ձևակերպվել էր XV-XVII դդ.[58]: Ի տարբերություն Եվրոպական մի շարք երկրների, որտեղ ճորտերը գրանցվում էին ճորտատերերի վրա, Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում ճորտերը ամրագրվում էին նրանց ապրած կամ բնակված

[49] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 592:

[50] Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները..., էջ 74:

[51] АВПР, Ф. Политархив, 1889-1894.- д. 1630.- р. 9:

[52] Դրոշակ, 1903, թիվ 2, էջ 22:

[53] В. А. Гордлевский. Избранные сочинения.- т.III.- Москва, 1964.- էջ 24:

[54] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսություն, Հ. II, Փարիզ, 1934, էջ 38:

[55] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 48:

[56] Е. К. Саркисян. Аграрная политика османского правительства в Западной Армении во второй половине XIX века.- Ереван, 1957.- էջ 5:

[57] Е. К. Саркисян. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX века и в начале XX века.- Ереван, 1972.- էջ 207-208:

[58] Տե՛ս «Аграрный строй Османской империи XV-XVII вв.» // Документы и материалы / Состовление, перевод и комментарии А. С. Тверитиновой.- Москва, 1963.- էջ 35:

վայրերին: Ե. Սարգսյանը ցույց է տալիս արևմտահայ գյուղացիության խիստ ծանր դրությունը, ապա, մոռանալով նախկինում իր գրածը և նկատի ունենալով մեզ, նշում է, որ սխալվում են որոշ հեղինակներ, երբ այդ գյուղացիներին անվանում են ճորտեր:

Մենք արևմտահայ ոչ բոլոր գյուղացիներին ենք համարում ճորտեր: Դրանց մի մասն է միայն ճորտ եղել, իսկ մյուսներին մենք տալիս ենք այլ բնութագիր: Ուրիշ ինչ պիտի անվանել այդ գյուղացիներին, եթե մեր ընդդիմախոսի բերած նյութերն անգամ հաստատում են մեր թեզը: Մ. Ս. Լազարևը 1964 թ. գրում էր, որ XIX դ. և XXդ. սկզբին Քրդստանում, այսինքն Արևմտյան Հայաստանում, «ծաղկում էր ճորտատիրական իրավունքը նրա ամենածանր միջնադարյան ձևերով»[59]:

Նույն բանն էր հաստատում նաև Յու. Պետրոսյանը, գրելով, որ «Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում գյուղացիությունը դեռ շարունակում էր ապրել իսկական ճորտության պայմաններում»[60]:

Որոշ հեղինակներ ժխտում են Արևմտյան Հայաստանում գյուղացիության ճորտական վիճակը և ավատատիրական այլ կախվածության ձևերը, հայտարարելով, որ դրանք վարկաբեկիչ են հայ ժողովրդի համար: Նրանց կարծիքով ավատատիրական կախվածության այդ ձևերը արգելակում են գյուղացիության արտագնացությունը դեպի արդյունաբերական կենտրոնները, մինչդեռ հայերը զանգվածաբար մեկնում էին դեպի Կ. Պոլիս, դեպի այլ արդյունաբերական կենտրոնները՝ երգելով պանդխտության «անտունիներ»:

Քաղաքական որոշ նկրտումներով Արևմտյան Հայաստանը դիվանագիտական ոլորտներում անվանում էին Քրդստան: Մինչդեռ Քրդստան, որպես վարչական միավոր կամ պետություն երբեք գոյություն չի ունեցել: Ավատատիրական կախվածության այդ ձևերը, մանավանդ միջնադարյան կարգերի քայքայման ժամանակաշրջանում, չէին խանգարում տարագնացության ծավալմանը. կալվածատերերն իրենք էին քշում իրենց ճորտերին ու կախյալ գյուղացիներին վաստակի դեպի քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները, որ իրենց համար փող բերեն:

[59] М. С. Лазарев. Курдистан и Курдская проблема.- Москва, 1964.- էջ 33:

[60] Ю. А. Петросян. Младотурецкое движение.- Москва, 1988.- էջ 138:

Հարցն ունի նաև իր մյուս կողմը. ժխտել Արևմտյան Հայաստանում եղած ավատատիրական կախվածության ձևերը, մանավանդ ճորտատիրությունը, նշանակում է դեմ գնալ պատմական իրականությանը և ջուր լցնել համիդյան պատմագրության ջրաղացին, ապացուցելով, որ հայ գյուղացիները այդ հրեշավոր բռնակալի տիրապետության օրոք ապրել են ազատ ու անկաշկանդ, իրենց ցանկությամբ տեղաշարժվել են կայսրության զանազան կողմերը:

Ավատատիրական կախյալ գյուղացիները արևմտահայ գյուղացիության մեծամասնությունն էին կազմում, իսկ ճորտերը՝ փոքրամասնությունը:

Հատկանշանական է, որ ճորտատիրությունը առկա էր նաև Արևմտյան Հայաստանում ապրող քրդերի մեջ, ուր աղաներից ոմանք օգտվում էին նույնիսկ առաջին գիշերվա իրավունքից[61]:

Արևմտյան Հայաստանի գյուղացիության մեջ զգալի թիվ էին կազմում նաև ազատ գյուղացիները: Նրանք ազատ էին այնքանով, որքանով հեռու էին կալվածատիրոջից ունեցած կախումից ու ճնշումից, բայց վճարում էին զանազան հարկեր ու տուրքեր կառավարությանը և կրոնական հաստատություններին: Ազատ գյուղացիներ ավելի կամ պակաս չափով կային երկրի համարյա բոլոր վիլայեթներում: Օրինակ՝ Երզնկայի դաշտում, որտեղ, ըստ մի հաղորդման, 1883 թ. կար 25 գյուղ՝ 1000 տնով և 1000 շնչով, «հարստահարիչ և զրկող ճանկեր շատ չկան, և չեն այնքան հանդուգն որպես այլ գավառ «Հայաստանի»[62]:

Արաբկիրում, ըստ մի այլ հաղորդման, «բոլոր հողերը սեպհական են գյուղացուց և ավատականությունն իսպառ անհետ եղած է»[63]:

Դերսիմում, Անդրանիկի վկայությամբ, Սիրագցիները «ինչ որ կսերմանեն՝ արդյունքն ամբողջովին իրենցն է, որովհետև կառավարություն չունին, որ տասանորդ առնե, հողապետ չունին, որ վաստակը կիսե, այլ ինչ որ է՝ իրենցն է»[64]:

Աբաղայի դաշտում, ըստ Ա-Դոյի, 77 գյուղերից 15-ը «ազատ

[61] Տե՛ս «Դրոշակ», 1902, թիվ 10, էջ 152:

[62] Մասիս, 1885, մարտի 3, էջ 656:

[63] Մասիս, 1885, փետրվարի 2, էջ 656

[64] Անդրանիկ, նշված աշխատություն, էջ 182:

են բեկական տիրապետությունից և գյուղացիներն ազատ հողատերեր են»[65]:

Ազատ գյուղացիների թիվը մեծացավ 1840-ական թվականներից հետո, երբ թուրքական կառավարությունը բնաջնջեց մի քանի քրդական խոշոր աղաների ու բեկերի: Սակայն հետագա տարիներին՝ հատկապես 90-ական թվականներին, հայկական ջարդերից հետո ազատ գյուղացիների թիվը արագորեն նվազեց:

Բատրակները կամ վարձու աշխատողները գյուղական պրոլետարներն էին, որոնք, չունենալով ապրուստի միջոց, ստիպված վաճառում էին իրենց աշխատուժը: Նրանց առկայության մասին վկայում են հետևյալ խոսքերը. 1864 թ. Մ. Միրախորյանը հիշատակում էր, որ Երզրումի վիլայեթի գյուղերում «բավական թվով հայեր սեփական հող չունենալով այս և այն գյուղի մեջ կաշխատին այլոց»[66]: Այնուհետև շարունակում էր, որ Խարբերդի կազայում «բոլոր խոշոր տնտեսությունների մեջ, իսկ դրանք այդ վայրում քիչ չեն, աշխատում են հողազուրկ հայերը՝ իրենց ընտանիքներով հանդերձ՝ «ամենաչնչին աշխատավարձով, որը հազիվ է բավարարում պարենամթերքներ գնելու և հարկերը վճարելու համար»[67]:

Արևմտյան Հայաստանում կային նաև ստրուկներ, որոնք թվով շատ քիչ էին: Նրանք պատկանում էին աղաներին ու բեկերին և աշխատում էին նրանց տնտեսության մեջ՝ գերազանցապես որպես տնային սպասավորներ[68]:

Այսպիսով, աղաներն ու բեկերը, տիրելով արտադրության գլխավոր միջոցին՝ հողին, գյուղացիներին դրել էին իրենցից անձնական զանազան կախվածությունների մեջ: Դժբախտաբար, չկան վիճակագրական տվյալներ այն մասին, թե հիշատակված կարգավիճակի գյուղացիներն առանձին-առանձին ամբողջ գյուղացիության ո՞ր տոկոսն էին կազմում, սակայն աղբյուրներին մոտիկից ծանոթ լինելը հիմք է տալիս ենթադրելու, որ ամենամեծ թիվը կազմում էին կախյալները, հետո՝ ճորտերը, ապա՝ ազատները, իսկ ամենաքիչը՝ բատրակներն ու ստրուկները:

[65] Ա-Դո, նշված աշխատություն, էջ 261:

[66] Մ. Գ. Միրախորյան, նշված աշխատություն, էջ 172:

[67] Ա. Մ. Կոյուբակին, նշված աշխատություն, էջ 141:

[68] Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները..., էջ 75-76:

* *
*

Պատմագրական գրականության մեջ նշվում է, որ 1909-1910 թթ. Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթներում գյուղացիական յուրաքանչյուր տնտեսության միջին հաշվով ունեցած վարելահողի չափը չէր անցնում 3,5 դեսյատինից. պատկերն այսպիսին է[69]:

			հեկտար վարելահող
Երզրումի	վիլայեթ	-	1,5
Խարբերդի	վիլայեթ	-	1,9
Սվազի	վիլայեթ	-	1,9
Վանի	վիլայեթ	-	1,9
Դիարբեքիրի	վիլայեթ	-	1,9
Բիթլիսի	վիլայեթ	-	1,9

Վ. Ի. Լենինը, խոսելով ռուսական գյուղացու հողային ապահովվածության մասին, նշում էր, որ 8 դեսյատինը «բավական չէ ընտանիք պահելու համար»[70] և ցույց էր տալիս, որ «ծայրը ծայրին հասցնելու համար հող ունեցող տնտեսությանը 15 դեսյատինից ոչ պակաս հող է հարկավոր»[71]:

Եթե Ռուսաստանում 8 դեսյատինը բավական չէր ընտանիք պահելու համար, ապա Արևմտյան Հայաստանում 3,5 դեսյատինը առավել ևս բավական չէր, մանավանդ, որ վերջինս լեռնային երկիր էր, որտեղ վարելահողերը հաճախ շերտընդմիջվում էին բազմաթիվ քարակույտերով ու ձորերով, իսկ երբեմն էլ՝ մացառուտներով ու ավազուտներով, որոնք պիտանի չէին հողագործության համար:

Հետևաբար, Արևմտյան Հայաստանում գյուղացին, անգամ պաշտոնական տվյալներով, եղել է սակավահող: Նրա սակավահողությունը պայմանավորված է եղել ոչ թե հողային ֆոնդի սահմանափակ լինելով, այլ կալվածատիրական հողատիրության առկայությամբ: Բեկերն ու աղաներն իրենց ձեռքն էին վերցրել պիտանի հողերի մեծ մասը և գերադասում էին իրենց վա-

[69] Տե՛ս А. Д. Новичев. Очерки экономики Турции до мировой войны.- Москва-Ленинград, 1937.- էջ 268 (հետագայում՝ Ա. Նովիչև):

[70] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 76:

[71] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 77:

ռելահողերը տրամադրել հոտերի բազմացմանը, այլ ոչ թե տալ գյուղացիներին՝ թեկուզ բաժնեհողի սկզբունքով:

1856 թ. ապրիլի 21-ի հողային օրենքի համաձայն՝ գյուղացիները կարող էին ձևակերպել իրենց հողակտորները իրենց անուններով և ստանալ թափու: Նրանք երկրի որոշ շրջաններում թեև ստացան թափու, բայց բազմաթիվ շրջաններում իշխանությունների և աղաների պատճառով չկարողացան ստանալ այն:

Ինչ վերաբերում է արոտավայրերին, ապա ամբողջ գյուղն էր օգտվում դրանցից՝ առանց տնտեսությունների միջև բաժանելու: Արտաքինից հավասար թվացող այդ սկզբունքը, ներքուստ բովանդակում էր մեծ անհավասարություն, քանի որ, ով անասուն շատ ուներ, նա էլ շատ էր օգտվում արոտավայրերից:

Արևմտյան Հայաստանի գյուղացիությունը բաղկացած էր հարուստ, միջակ և աղքատ խավերից: 1909-1910 թթ. այդ շերտավորումը, ըստ ունեցած վարելահողերի, ներկայացնում էր հետևյալ պատկերը[72].

Վիլայեթներ	Մինչև 1 հեկ. վարելահող ունեցող տնտեսություններ %	1-5 հեկ. վարելահող ունեցող տնտեսություններ %	5 հեկտարից ավելի վարելահող ունեցող տնտեսություններ %
Բիթլիս	21	41	38
Խարբերդ	27	45	28
Երզրում	45	40	15
Վան	36	37	27
Դիարբեքիր	17	36	47
Սվազ	32	46	22
Ընդամենը	30	41	29

Եթե մինչև 1 հեկտար վարելահող ունեցող տնտեսությունները համարենք չքավոր, 1-5 հեկտար վարելահող ունեցողներին՝ միջակներ և 5 հեկտարից ավելի վարելահող ունեցող տնտեսությունները՝ հարուստներ, ապա կտեսնենք, որ չքավորները կազմում էին երկրի ամբողջ գյուղացիության 30 %-ը, միջակները՝ 41%-ը, իսկ հարուստները 29 %-ը:

Արևմտյան Հայաստանի գյուղացիության սոցիալական շերտավորումը կարելի է ցույց տալ նաև լծկան անասունների գլխաքանակով: Այսպես, 1912 թ. Կարնո վիլայեթի Դերջան գավառի 21 գյուղերում՝ Դզնիկ (ըստ Ա-Դոյի Դըվնիկ), Վժան (ըստ Ա-Դոյի Վիժան), Խաչախան (ներքին) (ըստ Ա-Դոյի Խազախ), Խաչախա (վերին) (ըստ Ա-Դոյի Խազախ), Ֆիրիչ, Խնձոր (ըստ Ա-Դոյի Խընզըրի), Բագառիջ, Խնդրա- խոզախ, Չխընս (ըստ Ա-Դոյի Չընքլս), Խաչ, Բուլք, Գառնբերդակ (ըստ Ա-Դոյի Գառնաբերդակ), Էսպեքերա (ըստ Ա-Դոյի Էսպելերեք), Հերանի (ըստ Ա-Դոյի Հերունի), Յագրակ (ըստ Ա-Դոյի Ազարակ), Չամուռդերեկ (ըստ Ա-Դոյի Չամուր-դերեկ), Հողեք, Սարը-Գայկա (ըստ Ա-Դոյի Սարիղայա), Կորեր, Սպանք և Ծաղծարի (ըստ Ա-Դոյի Ծաղպարի) հաշվվել է 705 տնտեսություն, որոնք ունեցել են ընդհանուր հաշվով 2074 լծկան անասուն[73]: Այդ տնտեսություններից 261-ը չի ունեցել լծկան անասուն, 8-ը ունեցել է 1-ական գլուխ, 159-ը 2-ական, 136-ը 3-4-ական, 54-ը՝ 5-6-ական, 87-ը՝ 7-16-ական, 22-ը՝ 20-182 գլուխ անասուն: Եթե անասնազուրկ և 1 գլուխ բանող անասուն ունեցող գյուղացիներին համարել չքավոր, 2-4 գլուխ ունեցողներին՝ միջակ և 5-16 գլուխ ունեցողներին՝ հարուստ, ապա կտեսնենք, որ չքավորները կազմում էին նշված տնտեսությունների 38,1 %-ը, միջակները 41,9 %-ը, իսկ հարուստները՝ 20 տոկոսը: Գյուղացիների ընդհանուր թվի մեջ չենք մտցրել 22 տնտեսություն, որոնք ունեին 17 և ավելի գլուխ բանող անասուն, համարելով, որ դրանք ավելի ճիշտ կալվածատիրական տնտեսություններ էին:

Այսպիսով, գյուղացիների սոցիալական շերտավորումը, ըստ հողաբաժինների և բանող անասունների գլխաքանակի, համարյա համընկնում է:

Սակայն գյուղացիության այդ շերտավորումը ոչ այնքան դասակարգային էր, որքան ունեցվածքային: Թուրքական կառավարության վարած ազգային և հողային քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանի գյուղացիությունը ենթարկվում էր զանգվածային աղքատացման: Աղքատանում էին ոչ միայն միջակները, այլ նաև հարուստները:

Սուլթանի այս քաղաքականության հեռահար նպատակը XIXդ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանը հայերից

[72] Տե՛ս Ա. Նովիչև, նշված աշխատությունը, էջ 266: Աղյուսակը կազմված է մեր կողմից:

[73] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 733: Գյուղերի անունների ճշտումը Ա.-Դոյի աշխատության հետ համեմատելով, կատարված է մեր կողմից: Կարծում ենք, որ Ա.-Դոյի գրառումները ավելի ճիշտ են, քանի որ իր տվյալները նա վերցրել էր անմիջապես հոգևոր առաջնորդարանից:

դատարկելն էր: Այդ նպատակով նա պարբերաբար կազմակերպում էր հայերի զանգվածային կոտորածներ, խրախուսում էր մահմեդական բեկերին և հատկապես քուրդ ցեղապետերին բռնագրավել հայ գյուղացիների հողերը: Հայերին ենթարկում էր հարկային դաժան հարստահարման, անարգում էր նրանց մարդկային արժանապատվությունը և վիրավորում ազգային ու կրոնական զգացմունքները: Սուլթան Աբդուլ-Համիդը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի բազմաթիվ վայրերում ստեղծում է պահնորդական կետեր, իսկ 1891 թ.՝ «համիդեական գնդեր», որոնց վրա պարտականություն դրել հետապնդել հայերին և ճնշել նրանց ազգային- ազատագրական շարժումները: Սուլթանը «համիդեական գնդերում» ընդգրկում է աշիրեթական քրդերին՝ նպատակ ունենալով կազմակերպել հայերի բնաջնջումը քրդերի միջոցով:

Սուլթանի ձեռնարկած այդ և նման միջոցառումների հետևանքով ոչ միայն փոխվեց Արևմտյան Հայաստանի էթնիկական կազմը՝ հօգուտ մահմեդականների և ի վնաս հայերի, այլ նաև արտադրահարաբերությունների զարգացման ընթացքը: Հենվելով սուլթանի պաշտպանության վրա՝ աղաներն ու բեկերն ամենուրեք սկսեցին բռնագրավել հայ գյուղացիների հողակտորները և ընդարձակել իրենց տիրույթները: Ըստ Գեղամ Տեր-Կարապետյանի բերած ոչ լրիվ տվյալների՝ Արևմտյան Հայաստանում տարբեր ժամանակներում բռնագրավվել է[74]:

Վիլայեթներ	Բռնագրված հողեր	
	Օրավար	Հեկտար[75]
Էրզրում	100.000	72.000
Խարբերդ	200.000	144.000
Սեբաստիա (Սվազ)	80.000	57.000
Դիարբեքիր	200.000	144.000
Վան	100.000	72.000
Բիթլիս	350.000	252.000
Ընդամենը	1.030.000	741.000

[74] Տե՛ս «Ազատամարտ», 1911, հունվարի 15, թիվ 489:

[75] Օրավարի վերածումը հեկտարի կատարել է Ե. Սարգսյանը, ընդունելով 1 օրավարը՝ 2/3 դեսյատին, իսկ 1 դեսյատինը = 1,09 հեկտարի (տե՛ս Е. К. Саркисян. Аграрная политика османского правительства в Западной Армении.- Ереван, 1957.- էջ 68):

Այս տվյալները չափազանց խոսուն են: Աղաներն ու բեկերը, բացի գյուղացիական հողերից, բռնագրավում էին նաև հայոց վանքապատկան-եկեղեցապատկան հողերը: Նրանք այդ հողերի բռնագրավումը զանգվածաբար ծավալեցին հատկապես 90-ական թվականներից հետո: Վ. Փափազյանը, 1909 թ. թվարկելով աղաների կողմից բռնագրավված հայկական վանքերը, գրում է. «քանի-քանի վանքեր... իրենց հողերով... քյուրդ պեկերու... սեփականություն են դարձեր կամ դառնալու ճամբուն վրա են»[76]:

Մեր ձեռքի տակ եղած նյութերն ավելի կոնկրետ տեղեկություններ են պարունակում աղաների կողմից հայոց հողերի զավթումների մասին: Բերենք այդ նյութերից մի քանիսը: 1876 թ. «Մասիսը» գրում է, թե «Ալի աղան Չահրի գյուղը կը բնակի. սույն գյուղը բնակող 60 տուն երկրագործ քյուրտերը, 20 տուն հայք ու 20 տուն քաղդեացիք Ալի աղայի ամեն մի պիտույքը կը հոգան ու գրեթե անոր գերիներն են»[77]:

1881 թ. մի այլ հաղորդման մեջ նշվում էր, որ Մոտկանում քրդական ցեղապետերը մի շարք գյուղերից, որոնք 60-ական թվականներին ազատ էին որևէ հարկատերերից, սկսել են «**խաֆիրճա** անունով անձնական տուրք հավաքել»[78]:

Երբեմն ազատ գյուղացիներն, ավերիչ արշավանքներից ազատվելու համար, գերադասում էին անցնել որևէ զորեղ ավատատիրոջ իշխանության տակ և այդպիսով ընտրում չարիքի փոքրագույնը: Ռ. Բեկգուլյանցը հիշատակում է, որ էրզրումի վիլայեթի Հասան-Օվա գյուղի բնակիչները, տեսնելով, որ քրդերը մշտապես թալանում են իրենց, դիմում են ոմն Մահմուդ բեկի, խնդրելով նրան հաստատվել Հասան-Օվայում և պաշտպանել իրենց: Բեկը համաձայնում է այն պայմանով, սակայն, որ գյուղացիները «նրա համար տուն կառուցեն և վարելահող տան: Այնուհետև նա, ամրանալով գյուղում, բռնագրավում է բոլոր հողերը, բնակեցնում է իր կալվածքի տարբեր մասերում քրդերի 70 տնտեսություն, իսկ բնիկ Հասանօվացիներին դարձնում է միրիբաներ, այսինքն՝ ժամանակավոր պարտապաններ»[79]:

[76] «Ազատամարտ», 1909, նոյեմբերի 13, թիվ 132:

[77] Մասիս, 1876, նոյեմբերի 2:

[78] Դիվան հայոց պատմության, Հարստահարություններ Տաճկահայաստանում (վավերագրեր 1801-1888), Թիֆլիս, 1915, հ. 13, էջ 354 (հետագայում Դիվան...):

[79] Ռ. Բեկգուլյանց, նշված աշխատությունը, էջ 57:

Աղաներն ու բեկերը կախյալ գյուղացիներին դարձնում էին ճորտեր, վաճառում ու գնում էին և՛ հողով հանդերձ, և՛ առանց հողի, անարգում էին նրանց պատիվը և վիրավորում կրոնական զգացմունքները: Թեյլորը հիշատակում էր, որ Դիարբեքիրի վիլայեթի որոշ գյուղերում հայերը թալանչիական հարձակումներից պաշտպանվելու համար գերադասում էին ընդունել ցեղապետերի իշխանությունը և վճարել նրանց դրամական հարկ, որը կոչվում էր «արաբխուա»: Բայց ցեղապետերը կարճ ժամանակ հետո նրանց դարձնում էին իրենց ճորտերը, վաճառում ու գնում էին, անվանելով «զիռխուռլի», այսինքն՝ դեղինով՝ ոսկով գնվածներ[80]:

Մի հաղորդման մեջ ասվում էր, որ Սայիդ բեկը, երբ հաստատվում է Աշմուշատի Նաճարան գյուղում, «հանդիսավոր կերպով խոստացած էր նաճարացվոց սրբությամբ պահպանել անոնց ընտանեկան պատվի անձեռնմխելիությունը, սակայն շատ չանցած, նա սկսավ բացեիբաց առևանգել իր «հպատակ» հայուհիներին և անոնցով լեցնել իր հարեմը: Այլևս ո՛չ մի խնդիր, ո՛չ մի տրտունջ, ո՛չ մի արդար բողոք անզոր էր ազդելու անոր թմրած խղճին վրա: Միջնադարյան ճորտատերերեն անով միայն կը զանազանվեր, որ հպատակները վաճառքի չէր հաներ»[81]:

Այսպիսով, XIX դարի վերջին և XX դարի սկզբին թուրքական կառավարության վարած ազգային և հողային քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում ամրապնդվեցին ու աճեցին ավատատիրական-ճորտատիրական կարգերը: Աղաները բռնագրավել էին պիտանի հողերի մեծ մասը և տարածել իրենց իշխանությունը գյուղացիության ճնշող մեծամասնության վրա: 1860-ական թվականներին Ազգային ժողովի երեսփոխաններից մեկը՝ Յաղճյանը, իր ելույթներից մեկում մատնանշում էր, որ Շեյխ Հասանի ցեղապետերը տիրում են Երզնկա, Քեմախ, Գարաչայ, Արմտան, Ակն, Արաբկիր, Չմշկածագ և ընդհուպ մինչև Խարբերդ ընկած շրջաններին, Խուռանցի Թիմար աղայի և Գյուլաբի ցեղերի պետերը՝ Քղիի, Բալուի, Մեծկերտի և Չարսանճագի շրջաններին, իսկ Կարնո վիլայեթի հարավում

[80] Տե՛ս Материалы для географии Азиатской Турции // Приложение I к тому II "Известий кавказского отдела императорского русского географического общества".- Тифлис, 1873.- էջ 71-72 (հետագայում՝ МГАТ):

[81] Բյուզանդիոն, 1908, հոկտեմբերի 25:

ապրող ցեղապետերը՝ Խնուսի, Բուլանըխի, Մուշի, Մանազկերտի, Բաղեշի, Ալաշկերտի, Վանի և Հեքյարի շրջաններին[82]:

1913 թ. Հ. Ճանկուլյանը արձանագրում էր. «Հայաստանի մեջ չկա հայաբնակ գավառ մը, որ բացառություն կազմեր և քյուրտերու (իմա՝ քուրդ ցեղապետերի, աղաների ու բեյերի -Ա. Հ.) հարստահարությանց, ոճրագործությանց և բռնակալությանց ենթակա չըլլար»[83]:

Կալվածատիրական հողատիրության ընդարձակումը և ճորտատիրական կարգերի ամրապնդումը արագացրին նահապետական հարաբերությունների քայքայման գործընթացը: Դա մի կողմից արտահայտվեց այն բանով, որ ցեղապետերը բաժանեցին հողերն ու գյուղերը իրենց զինակիցների ու ազգակիցների միջև և ստեղծեցին վասալական հարաբերություններ: Օրինակ՝ Աղլջևազում Հուսեյին փաշան իր գրաված գյուղերից Զիրեքլուն տալիս է Իբրահիմ աղային, Նորշենը՝ աներոջը, Վերին Սեփոնը՝ Հասան աղային, Ներքին Սեփոնը՝ Նուքրե բեյին, Նորշենճագը՝ Հայդար աղային, Անուշ աղբյուրը՝ Սլոյին, Գարաքեշիշը՝ Յուսուֆին և այլն[84]:

Մյուս կողմից՝ նահապետական հարաբերությունների քայքայումը արտահայտվում էր նրանով, որ ցեղապետի ազգակիցները կամ զինակիցները, ձեռք բերելով տնտեսական որոշ հզորություն, այլևս չեն ճանաչում նրա իշխանությունը, դառնում են ինքնուրույն: Այդ տեսակետից բնորոշ է Հայդարանցի ցեղերի տրոհումը. XIX դ. վերջին և XX դ. սկզբին այն վերջնականապես բաժանվեց երեք մասի, որոնցից մեկը գլխավորում էր Հուսեյին փաշան, մյուսը՝ Էմին փաշան, իսկ երրորդը՝ Հաջի Թեմուրը: Հետաքրքիր է, որ նրանք թեև ազգակիցներ էին, բայց իրար դեմ մղում էին, ինչպես Պ. Ի. Ավերյանովն է նշում, «արյունալի կռիվներ»[85]:

Կալվածատիրական հողատիրության ընդարձակումը և միջնադարյան կարգերի ամրապնդումը կաշկանդել էին երկրի

[82] Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870», էջ 534:

[83] Բյուզանդիոն, 1913, հունվարի 14:

[84] Բյուզանդիոն, 1909, փետրվարի 24:

[85] П. И. Аверьянов. Курды в войнах России с Персией и Турция в течение XIX столетия.- Тифлис, 1900.- էջ 278:

արտադրողական ուժերի զարգացումը և, ինչպես ցույց կտրվի ստորև, քայքայել էին նրա տնտեսությունը: Մենք երբեք չենք ժխտում, որ խոշոր հողատիությունն ընդհանրապես առաջադիմական է: Բայց ոչ միշտ և ոչ ամենուրեք: Ավատատիրական խոշոր հողատիրությունը առաջադիմական էր տոհմատիրական կամ ստրկատիրական կարգերի քայքայման և ավատատիրության զարգացման ժամանակաշրջանում, բայց XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին, երբ Արևմտյան Հայաստանում սկսել էր զարգանալ ապրանքային տնտեսությունը և ստեղծվում էին կապիտալիստական արտադրության որոշ օջախներ, այն արդեն հանդիսանում էր հետադիմական ուժ և թուրքական բռնատիրության պատվար: Նշված ժամանակաշրջանում երկրի արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների զարգացման տեսակետից գերադասելին ոչ թե ավատատիրական խոշոր հողատիությունն էր, այլ գյուղացիական մանր հողատիրությունը. և հողատիրության այդ ձևերից երկրորդին առաջինը որքան արագ զիջեր, այնքան արագ կզարգանար երկրի տնտեսությունը, այնքան լայն կծավալվեին դասակարգային հակամարտությունները և այնքան բարձր կլիներ բնակչության նյութական ու կրթական-մշակութային մակարդակը:

* *
*

Այժմ անցնենք հարկերին ու տուրքերին: Արևմտյան Հայաստանում, ինչպես և ողջ Թուրքիայում, հողի գերագույն սեփականատերը պետությունն էր, իսկ փաստացի տերերը՝ աղաները: Ինչպես պետությունը, այնպես էլ ավատատերերն իրենց հողային սեփականությունն իրացնում էին ոչ այլ կերպ, քան անմիջական արտադրողներից հարկեր կամ կալվածատիրական ռենտա ստանալու ճանապարհով:

Թուրքական պետությունը Արևմտյան Հայաստանի գյուղացիներից վերցնում էր աշար՝ տասանորդ, սալյանե՝ վերգի, աղնամ՝ խամչուր, բեդելի-ասկերի կամ նուֆուս, շախսի-վեգիսի կամ գլխահարկ ուղղակի հարկերը, աղի, ծխախոտի, դրոշմատուրք, թասքեսիմ, ինթիկալ, օրման-ռեսմի անուղղակի հարկերը և ստիպում էր գյուղացիներին կատարել զանազան պարհակներ:

Աշարը հավաքվում էր գյուղացիների ստացած բերքից՝

ցորենից, գարուց, բրնձից, խաղողից ու մրգերից, բանջարեղենից, մշակաբույսերից, ինչպես նաև անասնակերից՝ խոտից, առվույտից ու հարդից՝ 1/10-ի չափով:

Սալյանեն հավաքվում էր գյուղացիների ունեցած հողից, արտ ու արոտից և տուն ու տեղից: 1872 թ. սալյանեն փոխարինվեց էմլաքով (կալվածական տուրք) և թեմեթուով (եկամտահարկ): Էմլաքը հավաքվում էր հետևյալ չափով. 1000 դուրուշ արժեք ունեցող վարելահողից՝ 4, արոտավայրից՝ 10, տնից՝ 5, խանութից՝ 10 դուրուշ: Թեմեթուն հավաքվում էր գյուղացիների ստացած կողմնակի եկամուտներից (եթե նրանք զբաղվում էին առևտրով, արհեստներով, տարագնացությամբ և այլն) ստացած եկամտի 3%-ը[86]:

Աղնամը կամ խամուրը հավաքվում էր գյուղացիների ոչխարների ու այծերի դիմաց, յուրաքանչյուր գլխից՝ 3 դուրուշ:

Բեդելի-ասկերին հավաքվում էր միայն քրիստոնյաներից՝ 14-60 տարեկան հասակ ունեցողներից՝ 20 դուրուշ:

Գլխահարկը նույնպես հավաքվում էր քրիստոնյաներից՝ յուրաքանչյուրից 1 դուրուշ[87]:

Նուֆուս-թեսքերեսին հավաքվում էր գյուղացիներից երեխա ունենալու ժամանակ՝ 1,5 դուրուշ:

Թասքեսիմը հավաքվում էր անձնագիր ստանալիս:

Ռեսմի-մյուսկիրատը հավաքվում էր օղի թորելու թույլտվություն ստանալիս:

Ինթիկալը հավաքվում էր ունեցվածքի ժառանգության կամ վաճառքի ձևակերպման ժամանակ՝ գանձելով արժեքի 10-15 %-ը:

Իխթիսաբը հավաքվում էր անասունների վաճառքի ժամանակ՝ 1000 դուրուշից՝ 25 դուրուշ հաշվարկով[88]:

Մենք հարկ չենք համարում թվարկել բոլոր հարկերն ու պարհակները, բայց անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կառավարության կողմից գրեթե բոլոր հարկերը բարձրացվել են: Այսպես, եթե մինչև 1865թ. աշարը վերցնում էր բերքի 10 %-ը, ապա սկսած 1866 թ.՝ 12,5 %-ը, իսկ հե-

[86] Տե՛ս АВПР, ф. "Главный архив V-A2", 1872.- Д. 1083.- թ. 20:

[87] Տե՛ս А. И. Гиппиус. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции. Вилает Сивас и сеть путей к западу от Эрзерума.- Тифлис, 1890.- Ч. I.- էջ 34 (հետագայում՝ А. И Гиппиус):

[88] Տե՛ս М. А. Пржевальский. Вилает Эрзерум.- Тифлис, 1904.- Ч. I.- էջ 31-37:

տագայում երկրի շատ շրջաններում՝ 1/8-ը, 1/7-ը և նույնիսկ 1/4-ը[89]:

Աշարի հետ աճեց նաև «սայլանեն»: Հատկապես այն բանից հետո, երբ սայլանեն փոխարինվեց էմլաքով և թեմեթուով, ըստ մի վկայության՝ «գյուղացու վճարած տուրքը կրկնապատկվեց և մինչև իսկ եռապատկվեց»[90]:

Եթե առաջ աղնամը հավաքվում էր յուրաքանչյուր ոչխարի համար 3 ղուրուշ, ապա ռուս-թուրքական պատերազմից հետո՝ 3,5 ղուրուշ: 1904 թ. կառավարությունը մանր եղջյուրավոր անասունների հետ հարկի տակ դրեց նաև խոշոր եղջյուրավոր անասուններին՝ յուրաքանչյուր գլխի դիմաց՝ 10 ղուրուշ[91]:

«Բեդելի-ասկերին», եթե նախկինում հավաքվում էր 14-60 տարեկաններից, ապա 1860-ական թվականներից հավաքվում էր նաև նորածիններից ու զառամյալ ծերերից: Մի հաղորդման մեջ ասվում էր, որ զինվորական տուրքը «սկսեց հավաքվել բոլոր փոքրահասակներից՝ երեք ամսական հասակից և, ըստ վերջին տեղեկությունների, հենց այդպես էլ հաստատվել է կայսերական հրովարտակով, բայց թուրքական իշխանությունները... հարկ են պահանջում նաև նորածիններից»[92]: Միայն հինգ տարվա ընթացքում (1866-1871) բեդելի-ասկերին 25,960 լիրից աճել է 30, 960 լիրի[93]:

Ուղղակի հարկերի հետ աճել են նաև անուղղակի հարկերը: Օրինակ՝ աղի համար հարկվող բաժը՝ ակցիզը, եղել է[94]՝:

1866-1867 թթ. - 19.800 լիր
1867-1868 թթ. - 15.400 լիր
1868-1869 թթ. - 20.020 լիր
1869-1870 թթ. - 19.140 լիր
1870-1871 թթ. - 25.300 լիր

1872 թ. ռուս հյուպատոսը էրզրումից գրում էր. «Գյուղացիները ամենուրեք գանգատվում են աղի թանկությունից»[95]:

[89] Տե՛ս АВПР, ф. "Главный архив V-A2", 1872.- д. 1083.- ЛЛ. 18-19; «Մշակ», 1895 հունվարի 1, թիվ 8, 1908 թ., փետրվարի 2, թիվ 27:

[90] Մասիս, 1883, մայիսի 16:

[91] Տես Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 521 թիվ 2, գ. 315, թ. 304:

[92] Турецкая империя // Военно-статистический сборник 1866 г.- Санкт Петербург, 1868.- էջ 295 (հետագայում՝ Турецкая империя...):

[93] АВПР, ф. "Главный архив V-A2", 1872.- д. № 1083.- р. 28:

[94] Նույն տեղում, р. 24:

[95] Նույն տեղում, р. 23:

Թուրքական կառավարությունը, չբավարարվելով եղած հարկերի տարեց-տարի բարձրացումով, բնակչության վրա դնում է նորանոր հարկեր. 1868 թ. նա սահմանում է մենաֆիի ումումիե սանդղ կամ, այսպես կոչված, փոխօգնության տուրքը, ըստ որի իշխանությունները պարտադրում էին գյուղացիներին տեղական պահեստներին հանձնել (մեկ զույգ եզ ունենալու դեպքում) մեկ փութ հացահատիկ այն հաշվով, որ աղքատության ժամանակ օգնություն ստանան: Թեև գյուղացիները փոխադարձաբար համարյա ոչինչ չէին ստանում, սակայն ամեն տարի պարտադիր կարգով այդ հարկերը վճարում էին: 1871 թ. նրանք գանգատվում էին, որ այդ տուրքը «երկու տարի է, որ կժողովվի... և երբեք հայ հողագործի մը նպաստ չէ տրված և չենք ալ գիտեր, թե ժողովածներն ուր են»[96]:

1877-1878 թթ. պատերազմից անմիջապես հետո կառավարությունը սահմանում է «յոլ-փարասի» կամ ճանապարհների կառուցման հարկ: Յուրաքանչյուր 20-25 տարեկան տղամարդ պետք է տարին 3-5 օր աշխատեր ճանապարհների կառուցման կամ վերանորոգման վրա, կամ դրա փոխարեն վճարեր 13 ղուրուշ:

Կառավարությունը պատերազմից հետո սահմանում է նաև «փասմանդ փարասը» կամ ապահովության հարկը՝ յուրաքանչյուր տնտեսությունից տարեկան 18-24 ղուրուշ, իբր թե բնակիչներին ավազակներից ու գողերից պաշտպանելու համար[97]: Բացի այդ հարկերից, կառավարությունը սահմանում է նաև մի շարք այլ հարկեր:

Պետական հարկերն ու տուրքերը բնակչության մեջ բաշխվում էին անհավասար: Աղաներն ու բեյերը, որպես կանոն, ազատ էին տուրքերից կամ վճարում էին չնչին չափով: Պ. Ավերյանովը արձանագրում էր, որ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի վիլայեթներում, ինչպես նաև Դերսիմի սանջակում քուրդ ցեղապետերը «ոչ մի հարկ չեն վճարում»[98]: Նույն բանն էր հաստատում նաև Դ. Պուտյատը[99]:

[96] Տե՛ս Ատենագրություն Ազգային ժողովո, 1871 թ., էջ 471:

[97] Տե՛ս «Մուրճ», 1899, թիվ 1, էջ 64:

[98] П. И. Аверьянов. Этнографический и военно-политический обзор азиатских владений Османской империи.- Санкт-Петербург, 1912.- էջ 14:

[99] Путят Д. В. Записка о Малой Азии // Сборник географических топографических и статистических материалов по Азии. Вып. LXVI.- Санкт-Петербург, 1896.- էջ 94 (հետագայում՝ Դ. Վ. Պուտյատ):

Մինչդեռ քրիստոնյաները՝ գլխավորապես հայերն, ավելի շատ էին վճարում պետական հարկեր ու տուրքեր, քան մահմեդականները:

Դ. Թեյլորը հիշատակում էր, որ Դիարբեքիրի վիլայեթում տարեկան վերցվում է մահմեդական ընտանիքից 147 ղուրուշ (8 ռուբ. արծաթով), իսկ քրիստոնյա ընտանիքներից՝ 188 ղուրուշ (10 ռուբ. արծաթով)[100]:

«Մշակի» թղթակիցը գրում էր. «Շատախի 37 հայ գյուղերը վճարում են տարեկան 398.900 ղուրուշ, Նորդուզի 14 հայ գյուղերը՝ 159.500 ղուրուշ, իսկ այդ երկու գավառի քյուրդ գյուղերը, որոնց թիվը 100-ից անցնում էր, վճարում են ընդհամենը 277.700 ղուրուշ, ուրեմն, միջին թվով, յուրաքանչյուր հայ գյուղ վճարում է տարեկան 10.900 ղուրուշ, իսկ քյուրդ գյուղ՝ 2.700 ղուրուշ»[101]:

Անհրաժեշտ է նշել, որ անգամ մահմեդական երկրագործներն (քրիստոնյաների՝ հատկապես հայերի տուրքերը գերազանցում էին բոլորին) ավելի շատ հարկեր ու տուրքեր էին վճարում, քան կիսավաչկատուն ու վաչկատուն անասնապահները: Թրոթթերը վկայում էր, որ երկրագործ քրդերը «բոլորովին հնազանդ են, ինչպես Տիգրանակերտի և Կարնո գյուղերեն շատերուն քուրդք բնակիչք. որք ըստ օրինի կուտան հարկ և զինվոր», մինչդեռ «թափառաշրջիկ քրդաց մեծ մասն ոչխարաց տուրքեն ուրիշ չեն վճարեր և գործնականապես ազատ են զինվորական ծառայությունե՝ պատերազմի ժամանակ իբրև անկանոն զորք ծառայելու պայմանով»[102]:

Ավելին. վաչկատուն և կիսավաչկատուն քրդերի մի մասը չէր վճարում պետական ոչ մի հարկ: Նրանք կալվածատիրական պարտավորություններ էին կատարում իրենց ցեղապետերի օգտին:

Վ. Փափազյանը գրում էր, որ քրդերի «մեծ մասը, թափառաշրջիկ լինելով, տերությանը հարկ չի տալիս բոլորովին, իսկ տվողներինը այսպես է. կա մի մաս, որ միայն ոչխարի տուրք է վճարում և մի ուրիշ մաս էլ, որ պատերազմի ժամանակ կամ զինվորով և կամ փողով օգնում է կառավարությանը»[103]:

[100] Տե՛ս ՄՐԱՏ...- էջ 81:

[101] Մշակ. 1895, մայիսի 11, թիվ 53:

[102] Մասիս, 1881, հոկտեմբերի 13:

[103] Վ. Փափազյան, Երկեր, Երևան, 1959, հ. 5, էջ 487:

Թուրքական կառավարությունը հարկեր էր դնում գյուղացիների վրա՝ առանց հաշվի առնելու նրանց տնտեսական հնարավորությունները: Նրա պահանջած հարկերը համարյա ամենուրեք գերազանցում էին գյուղացիների ստացած եկամուտներին: 1881 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ Էրզրումի վիլայեթի Նարվան կազայի բնակիչների վրա այնքան մեծ հարկեր են դրված, որ եթե «իրենց ասուն և անասուն բնակչովը և հողերովը ծախենք, բնավ այդչափ միլիոն ղուրուշ արժեք գտնելու չէ»[104]:

1892 թ. մի այլ հաղորդման մեջ ասվում էր, որ Արևմտյան Հայաստանում 7 հոգուց բաղկացած ընտանիքը տարեկան վճարում է 734 ղուրուշի տուրք. «դիտել պետք է... որ 734 ղուրուշ տուրք վճարած է մի ընտանիք, որի մշակության բերքը և անասունները հազիվ կրնան տան սպառման և պետքերին բավել», եթե նույնիսկ հաշվի չառնենք կողմնակի հարստահարությունները, «կտեսնենք, որ 734 ղուրուշ տուրքն ինքնին ծանր ու ծանր մի բեռ է երկրագործ մի ընտանիքի համար այնպիսի երկրի մեջ, ուր երկրագործական բերքերը աննշան արժեք ունին և որ բանվորի վարձը 1,5 ղուրուշ է»[105]:

Գյուղացիների հարկային հարստահարումներն ու ճնշումները սաստկանում էին նաև պետական պաշտոնյաների ու հարկահանների չարաշահումներից: Պաշտոնյաներն աշխատում էին գռփել գյուղացիներին որքան հնարավոր է շատ: 1876 թ. մի թղթակցության մեջ ասվում էր. «ժողովուրդը ստրուկ է դարձեր պաշտոնյաների ձեռքում: Մի նահապետ փաշա տարեկան մի հայտնի գումար հարկ պետք է տա տերությանը իր կառավարած փաշայությունից: Թե ինչպես է նա հավաքում այդ հարկը, ինչ միջոցներով, ինչ պաշտոնյաների ձեռքով, տերությանը փույթ չէ: Արդյո՞ք փաշան ուղիղ այդքան է հավաքում, որքան հասնում է տերությանը, թե՞ ավելի, և ավելորդը արդյո՞ք իր գրպանն է դնում, այդ մասին ոչ ոք չի հոգում: Ինչպես բարձր, կենտրոնական տերությունը չէ հսկում նահանգապետ փաշայի գործունեության վրա, միայն թե հասցնե իրան հարկի տարեկան հայտնի գումարը, այնպես էլ փաշան իր կողմից հոգ չէ տանում, թե իրան ստորադրյալ պաշտոնյաները ինչպես են հավաքում հարկերը ժողովրդից»[106]:

[104] Մասիս, 1881, ապրիլի 4:

[105] Արծագանք, 1892, հուլիսի 10, թիվ 80:

[106] Մշակ, 1876, հուլիսի 22, թիվ 27:

Պաշտոնյաները հարկահանելիս սովորաբար հաշվի չէին առնում գյուղացիների թվական նվազումը, անասունների գլխաքանակի կրճատումը, արժեքից բարձր էին գնահատում գյուղացիների ունեցվածքը կամ ստացած եկամուտը, վճարումների դիմաց անդորրագիր չէին տալիս նրանց, աշխատեցնում էին ավելի երկար, քան նախատեսված էր օրենքով, ամբողջ հարկահանության ժամանակ ապրում էին գյուղացիների հաշվին, արատավորում նրանց պատիվը և չարաշահումներ անում:

Հարկահավաք պաշտոնյաներից հետ չէին մնում, հաճախ նույնիսկ գերազանցում էին նրանց պետական հարկերի հավաքման իրավունքը աճուրդով վերցնող կապալառուները, որոնք կոչվում էին մյուլթեզիմներ: Սրանք սովորաբար աղաներ էին կամ քաղաքային հարուստ դրամատերեր: Վարձակալելով հարկահանության իրավունքը՝ նրանք իրենց հերթին հարկահանման իրավունքը տալիս էին ավելի փոքր կապալառուների, որոնք կոչվում էին շահնաներ: Մյուլթեզիմներն ու շահնաները մի խումբ զափթիեներով[107] շրջում էին գյուղերը և դաժան հարկահանությամբ հարստահարում էին գյուղացիներին. հափշտակում էին գյուղացիների շարժական, որոշ դեպքերում նույնիսկ անշարժ ունեցվածքը ու հանում էին վաճառքի, ծեծում էին նրանց՝ հարկը վճարել չկարողանալու համար, բերքը օրերով ու շաբաթներով թողնում էին բաց երկնքի տակ, որը հաճախ փչանում էր անձրևներից՝ պահանջելով անհապաղ տասանորդը վճարել կանխիկ դրամով և այլ, բռնություններ:

Ռաֆֆու «Խենթում» կապալառու Թոմաս էֆենդին հետևյալն էր պատմում իր ստոր արարքներից մեկի մասին. Ալաշկերտում «մի անգամ մի գյուղացի հունձը հնձել էր, կալը կալսել էր և ցորենի մաքուր շեղջը կիտել էր կալում. ինձ կանչեց, որ չափել տամ և տասանորդը վեր առնեմ. ես պահանջեցի, որ տասանորդի փոխարեն զուտ փող տա: Նա պատասխանեց, թե փող չի կարող տալ, և ավելացրեց, թե դուք ցորյան ստանալու իրավունք ունեք և ձեզ պատկանող ցորյանը ստացեք... Մտքումս ասացի, ես քո հերը կանիծեմ և քեզ ցույց կտամ, թե ինչ բան է **իրավունքը**: Կալի ցորենը չչափեցի և թողեցի այդպես մնաց: Անձրևները եկան և ցորենը խոնավությունից ծլեց, այրվեցավ, փտեց և ոչնչացավ: Այն ժամանակ գնացի ու ասացի, թե ես **իրավունքից** չեմ անց

[107] **Զափթիե**-ոստիկան

կենա, տուր ցորենը: Բայց որտեղից պիտի տար, ցորենը դարձել էր մի բորբոսնած մոխրի կույտ: Հիմա տասանորդի փոխարեն փող տուր,- ասացի նրան: Փող չուներ, մի լավ ծեծ տվեցի, հրամայեցի՝ եզները ծախեցին և փողը ստացա: Հիմա այն գյուղացին այնքան փափկացել է, որ ձիու բեռը կտանե և մի հատ էլ չի կոտրի»[108]:

1909 թ. Ա-Դոն գրում էր. «Մյուլթեզիմը ինքն ըստ ինքյան մի զապտիե է, մի կեղեքիչ, մի բռնավոր, մի հրեշ, որի ներկայությունը միմիայն խաղաղ ժողովրդի վրա սարսափ է ազդում. ահա այդ հրեշը իր ձեռքով չափում-վերցնում է տասանորդը, համրում է խոտը և նշանակում գին յուրաքանչյուր խուրձի համար կրկնակի չափով. գնահատում է բոստանը, այգին, պարտեզը ինչպես իր քեֆն ու խիղճն է թելադրում... Բողոքել դրա դեմ անմտություն է. մուլթեզիմը կը կնքի և կալում կը թողնի օրերով մաքրած ցորենը, թույլ չի տա տուն բերելու դաշտում թափած խոտը, կը կանգնեցնի այգու, պարտեզի և բոստանի բերքի հավաքումը և զրպարտելով բերքը գողանալու և թաքցնելու մեջ՝ այնպիսի տուգանքների ու ճնշումների կը ենթարկի, որ բողոքավորը հավիտյան չի մոռանա»[109]:

Ինչպես Թուրքիայի մյուս շրջաններում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում մյուլթեզիմներն ու շահնաները սերտորեն կապված էին պետական կամ նահանգական պաշտոնյաների հետ և գործարքի մեջ էին մտնում նրանց հետ՝ ի վնաս աշխատավոր գյուղացիության:

Գյուղացիներն ի վիճակի չէին վճարելու պետական հարկերն ու տուրքերը, որի հետևանքով տարեց-տարի նրանց վրա կուտակվում էր ապառք: 1873 թ. Վանի սանջակի Աղգա գյուղն ուներ 130.200, Շուշանց գյուղը՝ 130.400, Սխկները՝ 93.600[110], իսկ 1897 թ. Էրզրումի սանջակի բոլոր կազաները միասին վերցրած՝ 8.522.000 ղուրուշ պարտք[111]: Թուրքական կառավարությունը կիրառում էր ամենադաժան միջոցները գյուղացիներից այդ ապառքները հավաքելու համար: 1907 թ. Վանում Ռուսաստանի փոխհյուպատոս

[108] Ռաֆֆի, հ. 3, էջ 151:

[109] Ա-Դո, Նշված աշխատություն, էջ 296:

[110] Տե՛ս «Արծվի Վասպուրական», 1873, մարտի 17:

[111] Տե՛ս Ա. Ս. Պրժեվալսկի, Էրզրումի վիլայեթ, 1904, հ. 2, էջ 39:

Ռ. Տերմենը գրում էր. «Անցած տարիների ապառքների հավաքումը շարունակվում է աճող խստությամբ: Ապառքները հավաքվում են ոչ թե ըստ ընդունված օրենքի (չորս տարվա ապառքները պետք է հավաքվեին մեկ տարվա ընթացքում մի քանի եղանակներով), այլ պահանջում էին տասը տարվա ապառքները միանգամից... Շատ գյուղերից պահանջում են այն ապառքները, որոնք մնացել էին 1896 թվականից առաջ, բոլորովին հաշվի չառնելով այն հանգամանքը, որ մարդիկ կոտորածների ժամանակ սնանկացել էին տնտեսությունները քայքայվել են»[112]:

Գյուղացիները պաշտոնյաների ու մյուլթեզիմների բռնություններից ու հալածանքներից ազատվելու համար դիմում էին վաշխառուներին և նրանցից պարտք վերցնում: Սակայն վաշխառուները փողը տալիս էին մեծ տոկոսներով (Տարոնում՝ 30-50 %, Բասենում՝ 100-150 %, Վանի սանջակում՝ 80-200 %, և այլն): Մի հաղորդման մեջ նշվում էր. «30-40-100, նույնիսկ 300 առ հարյուրով չքավորներուն դրամ տալը... սովորական բան է գյուղերու մեջ»[113]: Եվ գյուղացիները, չկարողանալով վերադարձնել պարտքը, հարստահարվում և հալածվում էին նաև վաշխառուների կողմից:

Անշուշտ, Արևմտյան Հայաստանում արդեն հիմնադրվել էին վարկատու դրամարկղներ: Սակայն դրանց գործունեությունն, ըստ էության, ոչնչով չէր տարբերվում վաշխառուների գործունեությունից, քանի որ տրված պարտքի փոխարեն բռնագրավում էին գյուղացիների շարժական և անշարժ ունեցվածքը, իսկ դրամական միջոցները տրամադրվում էին գլխավորապես աղաներին ու բեյերին կամ վաճառականներին ու վաշխառուներին: Ասիրյանը գրում էր, որ հասարակության այդ խավերը դրամարկղից «առած դրամը տասնապատիկ տոկոսով փոխ տված են ուրիշներու, որոնց առջև երկրագործական պանքային դռները փակ մնացած էին»[114]

Արևմտյան Հայաստանի գյուղացիները, վճարելով պետական հարկերն ու տուրքերը, իրենց ուսերին տանում էին նաև աղաների ու բեյերի տնտեսական ծանր լուծը: Նրանք վարում էին աղայի հողը, հնձում ու հավաքում բերքը, կատարում տնային

[112] АВПР, ф. "Посольство в К-поле", 1907.- д. 1593.- р. 5:

[113] Ազատամարտ, 1911, մարտի 4, թիվ 529:

[114] Ազատամարտ, 194, հունիսի 14, թիվ 1538:

բազմաթիվ աշխատանքները, խնամում անասունները և այլն: Ականատեսներից մեկը պատմում էր, որ երբ ցեղապետը իր մարդկանցով և անասուններով մտնում է գյուղ՝ ծմեռելու, գյուղացիները «մոռացան մինչև անգամ իրենց գլուխը և եղան բոլորովին այն եկողներուն՝ աղաներու գերի, վեր կացին ծառայել, բարևել, նոցա կոշիկները հանել և սրբել, նոցա զգեստները թոթափել, պահել: Այն կողմ խեղճ կնիկ թոնիր կվառե, որպեսզի ղշլաղներ տաքանան, եթե կան աղջիկներ, հարսներ, նոքա էլ կերակուր կպատրաստեն, ջուր կբերեն. իսկ էրիկ մարդիկ ղշլաղներուն կայք ու ծանրությունները ներս կբերեն. ձիեր ու տավարներ կտեղավորեն... հաց (ուտելիս)... տան, աղջիկներ և հարսներ միայն հոտին կանգնած՝ կծառայեն նոցա... բարբարոսն անիրավաբար ընդունելություն և ծառայություն ստանալով, տակավին իբրև իշխան, իբրև պետ և իբրև յուր սեփականություն, այնպես կիշխե, այնպես կիրամայե և շատ անգամ կհարկահանե»[115]:

Մի այլ ականատես արձանագրում էր, որ Սասունում ցեղապետերը իրենց հպատակներին բաժանել էին հարուստ, միջակ և աղքատ տնտեսությունների: Նրանք հարուստ տնտեսություններից վերցնում էին 7 բեռ ցորեն, 5 ոչխար, 2 լիտր յուղ, 2 լիտր ծխախոտ, 1 լիտր չորթան, 4 լիտր աղ, 1 շալվար, 1 զույգ զանգապան, 1 զույգ գուլպա, 1 զույգ գոգնոցի ժապավեն, 2 ունկի վառոդ, 2 ունկի կապար, 2 ունկի[116] կանեփ, 5 ունկի ձեթ, 5 հատ պուտուկ, 2 շերեփ, 30 գդալ, 4 թի, 2 կողով, 6 ցախավել, 1 դահուկ, 4 հավ, 2 աքաղաղ, 10 սարակ, 6 արոր, 12 ղուրուշ և ոչխարի կաթ: Ցեղապետերը միջակ տնտեսություններից վերցնում էին այդ բոլորի 2/3-ը, իսկ աղքատ տնտեսություններից՝ 1/3-ը: Նրանք, բացի դրանից, պարտադրում էին գյուղացիներին վարել ու ցանել իրենց արտերը, հնձել ու կալսել բերքը, տեղափոխել ու ամբարել, նվերներ տալ զանազան առիթներով և այլն[117]:

«Բյուզանդիոնի» թղթակիցը գրում էր, որ Արճեշի գավառի Կտրած քար գյուղում Ալի աղան «տարեկան 20.000 խուրձ խոտ քաղել կուտա հայերուն, որոնք թե՛ նույն խոտերը, թե՛ վառելանյութը պարտավոր են լեռներեն ու դաշտերեն իրենց կռնակ-

[115] Արծվի Վասպուրական, 1862-1863, էջ 75-76:

[116] ունկի - դեղագործական չափ՝ 29.86 գր:

[117] Տե՛ս «Մասիս», 1872, մայիսի 18:

ներով բերել ու աղայի համար դիզել. այս և երկրագործական բոլոր աշխատանքները ձրի են: Ասկե զատ, երբ որ գյուղին մեջ ամուսնություն մը պատահի, կամ հարսնացու օրիորդ մը հարս տանեն ուրիշ գյուղ մը, պարտավոր են աղային տալ կամ 2-3 ոսկի նվեր, կամ նույնչափ արժողությամբ եզ մը, կարպետ մը կամ այլ ինչ, հակառակ պարագային, խոսյալ կույսը տունեն դուրս ելնելու, կամ ուրիշ գեղե մը նույն գյուղը բերելու կարգիլե: Այս կայե-աղաթ անվանված տուրքն ընդհանուր է: Քյուրդ աղան կը գանձե զայն ոչ միայն հայերեն, այլև քյուրդերեն»: Թղթակիցը նշում էր, որ աղան, բացի դրանից, «հայոց սայլերով ու կռնակով քար, հող, ջուր, փայտ փոխադրել տված և իրեն անձնական տուն, ախոռ, գոմ և այլն շինել տված է»[118]:

Խնդիրը միայն հարստահարումը չէր: Աղաներն ու բեյերը նաև անարգում էին գյուղացիների մարդկային և ազգային արժանապատվությունը և ծաղր ու ծանակի ենթարկում նրանց, վաճառում էին որպես անասուններ, ամուսնացնում էին՝ ըստ իրենց հայեցողության և օգտվում առաջին գիշերվա իրավունքից: Մի հաղորդման մեջ ասվում էր, որ «Սասունում հայք մեկ քրդեն մյուս քուրդին կվաճառվին»[119]:

Մի այլ հաղորդման մեջ նշվում էր, որ Բուլանըխի Յոնճալու գյուղում Բշար աղայի որդին «նորապսակ հարսի առագաստը ...կմտնե և ամենաչքնաղ կույսերին անմեղությունը... կառնկե»[120]:

Աղաներն ու բեյերը իրենց ճորտերին, սովորաբար հայերին, արհամարհաբար անվանում էին ֆլլա (արաբերեն ֆելլահ բառից, որ նշանակում է երկրագործ) կամ ռայա (ոչ միայն հայերին, այլ նաև քրդերին, թուրքերին, ասորիներին և ուրիշներին, որ նշանակում է հոտ, ստրուկ): Անհնազանդության դեպքում նրանք տանջում էին գյուղացիներին, ծեծում «խելագնաց ընելու չափ»[121], կտրում էին նրանց ականջները, պոկում եղունգները, հանում աչքերը, նստեցնում էին ցցին և ենթարկում այլ կտտանքների:

Բացի կառավարությունից և կալվածատերերից, Արևմտյան Հայաստանի գյուղացիներին շահագործում ու հարստահարում էին նաև կրոնական հաստատությունները: Հայոց վանքերն ու

[118] «Բյուզանդիոն», 1909, փետրվարի 23-ին:

[119] Մասիս, 1881, նոյեմբերի 10-ին:

[120] Մշակ, 1898, մայիսի 13-ին, թիվ 80:

[121] Դիվան հայոց պատմության, հ. 13, Թիֆլիս, 1915, էջ 107:

եկեղեցիները վերցնում էին բնակիչներից «զուպարա» և եկեղեցիները վերցնում էին բնակիչներից «զուպարա» և «պտղի», այսինքն՝ աշխատավճար և արդյունքավճար ռենտա: Յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր տարին մեկ օր վարել կամ ցանել վանքի ու եկեղեցու հողերը, մեկ օր հնձել նրանց արտերը, տալ իր ոչխարների մեկ օրվա կաթը, կամ այդ բոլորի փոխարեն վճարել դրամ, եթե գյուղը վանքից շատ հեռու էր: Բացի դրանից, յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր տալ պտղի՝ սահմանված քանակությամբ ցորեն, գարի, յուղ, պանիր, ձեթ, գառ, ծու և այլն[122]:

Դրանից բացի, քահանաներն ու հոգևորականները գյուղացիներից վերցնում էին մթերք կամ դրամ՝ յուրաքանչյուր ծնունդի ու կնունքի, տնօրհնեքի ու պսակադրության, հիվանդության ու թաղման, մի խոսքով՝ իրենց կատարած ամեն մի արարողության համար: Ռաֆֆին նկարագրում է գյուղական քահանայի ծոցատետրի բովանդակությունը. «Չոլախ Սկոյի աղջիկը կնքեցի, փողը մնաց 5 ղուրուշ, աղջիկը մեկ շաբթից հետո մեռավ, թաղեցի, փողը մնաց 7 ղուրուշ, Խլայի տղան պսակեցի, փողը մնաց 10 ղուրուշ, ստացա 30 խուրձ խոտ - փողը կանե 3 ղուրուշ: Փանոյի կնիկը հիվանդ էր, գնացի նրա տունը, երեք գլուխ բժշկական ավետարան կարդացի, փողը մնաց 3 ղուրուշ: Սագոյի տղան խաչը ջրից հանեց, Բարսոն 30 ղուրուշ էր տալիս, որ ինքը հանե. ես Սագոյին խաթր արեցի, 20 ղուրուշով բարիշեցա, փողը մնաց 20 ղուրուշ. ասաց կալի ժամանակ ցորեն կտամ, գնացի, ուզեցի, չտվեց, գզիրն էլ վկա է»[123]:

Այդ բոլորով, իհարկե, չէին վերջանում գյուղացիների վճարելիքները հայոց վանքերին ու եկեղեցիներին, քահանաներին և մնացած հոգևորականներին:

Արևմտյան Հայաստանի գյուղացիների վիճակը վատթարանում էր ոչ միայն պետական, կալվածատիրական և վանական հարստահարումներով, այլ նաև նրանով, որ Թուրքիայում ընդհանրապես և Արևմտյան Հայաստանում մասնավորապես չկար անձի և գույքի ապահովություն: Հայերին արգելված էր զենք կրել: Երկրում զենք կրելու իրավունք ուներին միայն մահմեդականները: Եվ աղաներն օգտվելով այդ հանգամանքից՝ իրենց ղուլամներով բարբարոսական արշավանքներ էին կազմակեր-

[122] Տե՛ս Մ. Միրախորյան, նշված աշխատության մ. գ. էջ 216-217:

[123] Ռաֆֆի, հ. 3, էջ 279:

պում, հարձակվում էին անզեն ու անպաշտպան գյուղացիների վրա և թալանում նրանց: Ահա մի քանի փաստեր. քուրդ ցեղապետերը և նրանց դուլամները, ըստ մի վկայության, 1864 թ. ապրիլի 8-ին Մշո դաշտի Վարդենիս գյուղում «կլոր Մուրատի տունը մտնելով, ցորեն, յուղ, բուրդ և բոլոր կահ ու կարասիք ամենքը մեկանց կը վերցունեն կը տանեն»[124]:

Նրանք ապրիլի 9-ին «Հովսեփի և Գասպարի տուներ բռնի կողոպտելով բավական ոչխար և կարի բավական ինչք կը տանեն», իսկ «մայիսի 20-ին Հակեցի տղա Արգոյի տունը մտնելով բոլոր ապրանքը տարին»[125]:

1876 թ. մի թղթակից Բաղեշից հաղորդում էր. «Հայ ժողովրդյան ընչից և կենաց ապահովություն չկա. գիշերները մինչ ի լույս ահ ու դողեն չեն քնանար և ցորեկն ի բուն հանուն քրիստոնեության կը նախատվին և կը հայհոյվին և քաղաքեն մեկ ու կես ժամ հեռու տեղ մը ճամբորդություն մեկը չի կրնար ընել, վասնզի ճամբայները ավազակաց խումբեր պաշարեր են, ինչպես որ թվականեն 8 օր առաջ բաղեշցի Ավետիս անուն անձը 2 ժամ հեռու տեղ մը կողոպտեցին և 3 տեղե ծանր կերպով վիրավորեցին և այսպիսի դեպքեր ամեն օր տեղի կունենան»[126]:

1890 թ. Անգլիայի հյուպատոս Կլիֆֆորդ Լլոյդը գրում էր. «ես ստացա տեղեկություններ, որ Բասենի դաշտում քրիստոնյա բոլոր գյուղերը կողոպտված են և հափշտակված է 2.282 ոչխար, 754 գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն, 20 ձի և 31 էշ»[127]: Նա այնուհետև շարունակում էր, որ «Հյուսեին փաշայի եղբայրն ու որդին իրենց զինակիցների հետ՝ թվով 100 ձիավոր, հարձակվեցին Այնթափի Նահիեի գյուղերի վրա և հափշտակեցին 300 ոչխար, 150 գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն, 5 ձի և բազմաթիվ կովեր»[128]:

Այդպիսի փաստեր կարելի է շատ բերել: Պարզ է. որ գյուղացիները նման պայմաններում չէին կարող բարելավել իրենց տնտեսությունը, մտածել հողի արդյունավետ օգտագործման

[124] Դիվան հայոց պատմության, հ. 13, էջ 60:

[125] Նույն տեղում:

[126] Մշակ, 1876, դեկտեմբերի 16, թիվ 48:

[127] Մ. Գ. Ռոլեն Ժեկմեն, նշված աշխատություն, էջ 160:

[128] Նույն տեղում, էջ 167:

մասին և կատարելագործել արտադրական գործիքները: Բնորոշ է մի փաստ ևս, որ ավարառությունների հետևանքով նույնիսկ հարուստ տնտեսությունները քայքայվում էին և ընկնում աղքատության մեջ:

Ֆ. Էնգելսը նշում է, որ «թուրքական, ինչպես և ասիական ցանկացած տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ: Ձեռք բերված հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից. գոյություն չունի բուրժուական ձեռնարկուական գործունեության առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու սեփականության ապահովությունը»[129]:

* *
*

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում կատարված իրադարձությունները ծանր հետևանքներ թողեցին արևմտահայության վրա: 1853-1856, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմները, 1870-1880-ական թվականների հայերի՝ պարբերաբար իրականացվող կոտորածները, 1890-ական թվականների հայերի զանգվածային ջարդերը, օսմանյան բռնապետության դեմ ծավալած նրանց ազատագրական ելույթների ճնշումը, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջմանը հետևած նոր կոտորածները պատճառ դարձան հայերի պարտադրված տեղահանության: Շատերը ստիպված եղան թողնել Հայրենիքը ու գաղթել կայսրության այլ վայրեր կամ արտասահման, շատերը ազգափոխ և դավանափոխ եղան՝ դառնալով թուրք ու քուրդ: Երկրի բազմաթիվ շրջաններ հայաթափվեցին, ամայացան, իսկ մնացողներն աղքատացան: Մի շարք վայրերում կանգ առավ բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացը, բազմաթիվ տեղերում վերացան այդ բնագավառում ձեռք բերված նվաճումները:

Բերենք փաստեր. 1910 թ. «Բյուզանդիոնը» գրում էր., թե Տարոնում «այսօր երկրագործ դասակարգին 100-ին 30-ը բնավ լուծք չունի, 100-ին 60-ը միրիպա է և 100-ին 10-ը միայն առանձին լուծք ունի»[130]: Եթե 100-ին 30-ը լուծք չունի, 100-ին 60-ն էլ մարաբա է,

[129] К. Маркс и Ф. Энгельс. Сочинения.- Т. 22.- էջ 33:

[130] Բյուզանդիոն, 1910, մայիսի 23, թիվ 127:

այսինքն՝ հողազուրկ է, նշանակում է գյուղացիության 90 %-ը զուրկ է արտադրության գլխավոր միջոցից: Այստեղ արդեն պիտի խոսել ոչ թե սոցիալական շերտավորման, այլ զանգվածային աղքատության մասին:

Վ. Փափազյանը նշում էր, որ 1908 թ. նախօրյակին «Շատ խեղճ կապրեր մեր ժողովուրդը լեռներու մեջ: Գյուղացիների ունեցածը քանի մը այծ էր կամ ոչխար: Քչեր կային, որ հարուստ կը համարվեին՝ 100-200 ոչխարի տեր»[131]:

Վարդան Մովսիսյանցը Հայոց Ձորում ուսուցիչ է եղել և 1909 թ. կազմել է 25 գյուղերի վիճակագրությունը: Ըստ նրա հաղորդած տեղեկությունների՝ Աթանայ գյուղը բաղկացած էր 65 տնտեսությունից կամ 365 անձից, որոնց «մեծ մասը անհող և ընչազուրկ էր»[132]: Սյուտակ վանքն ուներ 40 տնտեսություն կամ 297 բնակիչ, որոնք չունեն հող, գութան, հացահատիկ: «Բնակիչները ճորտեր են»[133]: Խարականց գյուղն ունի 35 տնտեսություն կամ 201 անձ, որոնց մեծ մասը «ապրում է ծայր աղքատության մեջ»[134]: Թյուրքաշանը ունի 17 տնտեսություն կամ 80 անձ, որոնք «խեղճ վիճակ մը ունին»[135]: Պլթինձը ունի 64 տնտեսություն կամ 380 անձ: Այդ տնտեսությունների միայն մի մասն է սակավահող, «մնացածը ընչազուրկ է»[136]: Անգղ գյուղն ունի 96 տնտեսություն կամ 495 անձ, որոնք «թշվառ պարտքերի և սալաֆների տակ ծանրաբեռնված են»[137]: Սուրբ Վարդան գյուղն ունի 42 տնտեսություն կամ 305 անձ, որոնք «սակավահող և թշվառ են»[138]: Ձեմն ունի 92 տնտեսություն կամ 560 անձ: Այս գյուղը «վերջնականապես քայքայվել և թալանվել է 96-ին»[139]: Հիրճ գյուղն ունի 70 տնտեսություն կամ 440 անձ, «բոլորն էլ անհող»[140]: Երետերու գյուղն ունի 85 տնտեսություն

[131] Վ. Փափազյան, Երկեր, հ. 1, էջ 560:

[132] Հորիզոն, 1913, հունվարի 17, թիվ 12:

[133] Նույն տեղում:

[134] Նույն տեղում:

[135] Նույն տեղում:

[136] Նույն տեղում:

[137] Նույն տեղում:

[138] Նույն տեղում:

[139] Հորիզոն, 1913, հունվարի 17, թիվ 12:

[140] Նույն տեղում:

կամ 431 անձ: Սրանց հողերը ճահճացել են, «որովհետև գյուղացիք դատապարտվել են վերին աստիճանի չքավորության»[141]: Ոչխարանց գյուղն ունի 14 տնտեսություն կամ 97 անձ: «Բոլորն էլ անհող են, վերին աստիճանի խեղճ»[142]:

Այսպիսով, Վ. Մովսիսյանցի ուսումնասիրած 25 գյուղերը՝ ընդհանուր առմամբ 1446 տնտեսությամբ կամ 8135 անձով, 11 գյուղը՝ 620 տնտեսությամբ կամ 3651 անձով, բոլորովին աղքատ էին, իսկ մնացածների ունեցվածքն այնքան չնչին էր, որ չէր կարելի դասել ունևորների շարքը: Նրանք պարզապես չքավորներ էին:

Զանգվածային աղքատություն կար նաև Դերջանի գավառի Դարաչուալախ գյուղում: 1912 թ. թղթակից Զնդին հաղորդում էր, որ այստեղ եղած 150 տնտեսություններից «երեքը միայն հարուստ են և շատ հարուստ, մնացյալներեն 50-ը բարեկեցիկ, իսկ 100-ը թշվառ են և հողազուրկ»[143]:

«Հորիզոնի» թղթակիցը 1911 թ. գրում էր, որ Տարոնում «գյուղացիների մեծամասնությունը անասունների կարիք ունի, «իսկ շատերն էլ բոլորովին զրկված են... լծկան անասուններից»[144]:

Նույն թերթի մի այլ թղթակից 1913 թ. հաղորդում էր «Տարոնի ժողովրդեն հարյուրեն քառասունը լուծք չունի»[145]:

Մալխասը 1908 թ. գրում էր, որ Արճակ ու Թիմար գավառներում ապրում էր 1526 տնտեսություն, որից 1480-ը հայ, իսկ 46-ը քուրդ: Մենք ավելորդ ենք համարում վերլուծել հայ ու քուրդ ժողովուրդների ունեցվածքն առանձին առանձին, քանի որ քրդերն այնքան քիչ են, որ կորչում են հայկական ծովի մեջ: Մալխասը բերում է առանձին տվյալներ բոլոր տնտեսությունների տարաբնույթ հողերի մասին և ցույց է տալիս, որ հարուստն ունի 22 չափ[146], միջակը՝ 13 չափ, իսկ աղքատը 4,5 չափ հող: Ապա բերում է տվյալներ վարելահողերի մասին, նշելով, որ հարուստն ունի 22 չափ, միջակը՝ 10 չափ, իսկ աղքատը՝ 3 չափ վարելահող:

[141] Նույն տեղում:

[142] Նույն տեղում:

[143] Ազատամարտ, 1912, օգոստոսի 16, թիվ 967:

[144] Հորիզոն, 1911, մայիսի 28, թիվ 113:

[145] Հորիզոն, 1913, օգոստոսի 14, թիվ 180:

[146] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերություններ, էջ 306:

Նա նշում է, որ այդ տարածություններն անբավարար են տնտեսություն վարելու համար, մանավանդ, որ 66 տնտեսություններն էլ հողազուրկ են: Մալխասն ապա անդրադառնում է քաշող ուժին ու գործիքներին և ցույց է տալիս, որ նշված տնտեսություններից 541-ը եզ չունի, 269-ը գութան չունի, 541-ը արոր և այլ գործիքներ չունի: Շարունակելով նկարագրել վերոհիշյալ երկու գավառների բնակչության վիճակը՝ Մալխասը նշում է, որ հիշատակված բոլոր տնտեսություններից վաճառքի համար հաց ունի միայն 72-ը, հաց գնելու կարիք ունի 1143-ը, բոլորովին սոված է 652-ը, սերմի կարիք ունի 728 ընտանիք, սելեֆ կամ դրամական պարտք ունի 888 ընտանիք:

Մալխասն այնուհետև շարունակում է, որ եթե վարելահողերը բաժանենք բոլոր տնտեսությունների վրա, հազիվ թե ամեն մի տնտեսությանը 8 չափ հասնի, եթե հաշվի առնենք, որ այդ հողակտորի մի մասը ամեն տարի հանգստանում է, կտեսնենք, որ ամեն մի ընտանիք կունենա հազիվ 5-6 չափ վարելահող, իսկ դա անբավարար է ընտանիք պահելու համար: Այդ հեղինակն ապա վերլուծում է, որ եղած հողերը կենտրոնացված են հարուստների ձեռքում: 20-30 չափ ունեցողները կազմում են փոքրամասնություն: Դրա կողքին «կա ստվարաթիվ հողազուրկ գյուղացիություն մը, որը հազիվ 3 չափ հող ունի, դեռ մեկդի ձգած անոնք, որ բոլորովին հող չունին»[147]:

Անգլիացի դիվանագիտական ծառայող Վ. Բ. Հերդը, ճանապարհորդելով Արևմտյան Հայաստանի վիլայեթներում, 1907 թ. նոյեմբերի 23-ին գրում էր, որ «երբ համեմատում ենք տարբեր վիլայեթներում մարդկանց դրությունը, տեսնում ենք, որ ամենածանրը, ամենաանտանելին Բիթլիսի վիլայեթի հայոց դրությունն է»[148]:

Անգլիացի դիվանագիտական մի այլ ծառայող՝ Արամ Սաֆրաստյանը, 1906 թ. գրում էր, որ Մուշի ու Բուլանըխի շատ գյուղերում «հավատացեք, առանց չափազանցության, հայաբնակ գյուղերի բնակչության 100-ի 90 տոկոսը բացարձակապես զուրկ է ապրուստի միջոցներից: Ամբողջ ընտանիքներ օրերով անոթի կմնան»: Նրանք «ցրտին ու բուքին քաղաք կուգան մուրալու: Խիզանեն, Պուլանըխեն, Ախլաթեն, Սասունեն և Մշո դաշտեն

[147] Մալխաս, Ներկա սովը և իր պատճառները, Տրապիզոն, 1909, էջ 108 (հետագայում՝ Մալխաս..):

[148] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 412, g.1, գ. 1979, թ. 17:

Պիտլիս կը լցվին... մուրալու, մուրալու և ապրելու»: Ա. Սաֆրաստյանն ապա շարունակում է, որ «Վանի, Բիթլիսի և Մուշի գավառներում համատարած սով է[149]: Տեսարանն իսկապես սրտակեղեք է. Կին, տղա, մարդ թափված են և կարածին անասունների պես[150]: Շատերը անծանոթ ու ծանոթ խոտեր են խաշում և ուտում առանց աղի»:

Հայաստանի Հանրապետության պետական արխիվում կան նաև այլ տեղեկություններ արևմտահայերի 90-ական թվականների ջարդերից հետո նրանց թշվառ դրության մասին: Ձեռագրերից մեկում, որի հեղինակն անհայտ է, բերվում են տվյալներ Սպարկերտի գավառի գյուղացիների մասին: Այստեղ նկարագրվում է, որ կոտորածներից առաջ նրանք ունևոր էին, բայց կոտորածներից հետո շատերը աղքատացել են կամ իսպառ բնաջնջվել են. ոմանք գաղթել են, ոմանք էլ թուրքացել կամ քրդացել, քչերն են մնացել. սրանք էլ ընկել են սուլթանական պաշտոնյաների ու քուրդ աղաների դաժան ճնշումների ու հարստահարումների տակ[151]:

Մի այլ անհայտ հեղինակի ձեռագրում, որը վերաբերում է 1907 թվականին, ասվում է, որ Բուլանըխում շատ հարուստ տներ կային, բայց 90-ական թվականների ջարդերից հետո նրանք սկսեցին հաց մուրալ: «Անոնք մեր երկրի հողի ու ջրի իսկական տերերն էին, բայց այսօր դռնեդուռ և երկրե երկիր ընկած մուրացիկ թափառականներ են»[152]:

Աղքատությունն ու թշվառությունը համատարած էին նաև Մամոտանէում, ուր, ըստ մի ականատեսի վկայության, «շատ մարդ տարիներով ոտնաման սոլ չի հագած, միս չի կերած, նոր գուլպա ոտքին չի եղած, կիները ... ծմեռվան բոբիկ ոտքով ջուր կը կրեն, գյուղե գյուղ կը գնան ձյունին ու անձրևին»[153]: Հեղինակն այդ ամենի պատճառը համարում էր աղայական հարստահարումները:

Արևմտյան Հայաստանում հայ բնակչության զանգվածային աղքատության մասին բազմաթիվ հոդվածներ են հրապարակել

[149] Նույն տեղում, գ. 603, թ. 14:

[150] Նույն տեղում, գ. 230, թ. 10:

[151] Նույն տեղում, գ. 1867, թ. 1-10:

[152] Նույն տեղում, գ. 1868, թ. 5:

[153] Նույն տեղում, գ. 1861, թ. 17:

հայկական թերթերն ու ամսագրերը: 1889 թ. «Մշակը» հաղորդում էր, որ էրզրումում չքավորությունը «կը ցուցնե իր դժոխային դեմքը: Հագուստի, ուտեստի, վառելանյութի և բնակարանի պետքերն այս պահուս առավելապես կշեշտվեն: Մուրացկաններ հոս ու հոն, շուկայի մեջ ու եկեղեցիների դուռը կը թափառին. տուներու դռները անդադար կը բախեն՝ ողորմություն խնդրելով»[154]: Թերթը ապա շարունակում է, որ Վանում «աղքատներն այն աստիճանի բազմացած են, որ այլևս չէ կարելի փողոցներից և կամ շուկաներից անց ու դարձ անել: Քաղաքացի հազարավոր ընտանիքներ էլ կան, որոնք մուրալ չկարողանալով, իրենց տուներու մեջ սովամահ կը լինին»[155]:

Ֆրանսիացի եպիսկոպոս Շարմընտան, ճանապարհորդելով Փոքր Ասիայում, գրում էր. «Վանը լցված է աղջիկներով, կանանցով և ծերերով, որոնք եկել են ուտելիք գտնելու հույսով: Փողոցները լիքն են զանազան հասակի կիսամերկ ու անտեր երեխաներով... ցնցոտիների մեջ փաթաթված 200-300 ջահել կանանց ամբոխը ներս խուժեց շուկա՝ հացի կտոր աղերսելով»[156]: Ապա եպիսկոպոսը եզրափակում է, որ նրանց տեսքը սարսափելի էր, դեմքերը՝ գունատ, աչքերը՝ փոսն ընկած»: 1906 թ. հունիսին Արամ Սաֆրաստյանը իր օրագրում գրում է, որ Բիթլիսի վիլայեթի Արտխոնի գյուղի հողերի մեծ մասն անցել է քրդերի ձեռքը. «Չքավորությունը և աղքատությունը ծայրագույն աստիճանի հասած են գյուղին մեջ»[157]: Գոմա գյուղում բնակիչները «ոչ միայն ցորեն չունեն, այլ նաև կըլկըլն[158] անգամ կը պակսի շատերում»[159]: Դատվանում 10 տուն անկախ են, 30-ը մարաբա, «մնացածները մուրացկանությամբ և օրերով անոթի կանցնեն»[160]: Կտակում առաջ 120 տուն էին, այժմ՝ 95: Սրանք էլ պատրաստվում են գաղթել[161]:

[154] Մշակ, 1899, հունվարի 5, թիվ 2:

[155] Մշակ, 1899, հունվարի 20, թիվ 10:

[156] Մշակ, 1899, հունվարի 29, թիվ 17:

[157] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 412, g 1, գ. 621, թ. 93:

[158] կրկլ -գըլգըլ-հացահատիկ

[159] Նույն տեղում, թ. 96:

[160] Նույն տեղում, թ. 112:

[161] Նույն տեղում, թ. 113:

Նույն հեղինակը, 1907 թ. հունիսին շրջելով Բիթլիսի վիլայեթում, գրում էր. «Մշո քաղաքի և դաշտի, Սասունի, Բուլանըխի, Բիթլիսի շրջակայքից, Խիզանի, Ախլաթի և այլ մասերու մեջ, առանց չափազանցության, 60.000 կարոտյալներ կան, որոնք այսօրվանե սկսյալ ապրուստի ոչ մի միջոց չունին, այլ միմիայն մուրացկանությամբ կապրին», կամ քրդերի ախոռներում կաշխատին, «առանց չափի և անասունի պես»[162]: Հեղինակն ապա շարունակում էր. «անտարակույս ամեն գյուղի մեջ կան ընտանիքներ, որոնք բավական առատ բերքեր ունեցան և լեցուցին իրենց հորերը, բայց անոնց թիվը, մանավանդ այս տարի, անչափ քիչ է, որ ասոնք կանհետանան թշվառության լայնատարած ծովուն մեջ»[163]: Այնուհետև նա նշում է, որ Ախլաթի Բրիխոս գյուղում զինվորները բռնությամբ ուզում էին տանել մի հայ գյուղացու երկու աղջիկներին այն բանի համար, որ հայրը պարտք ուներ: Լսելով այդ մասին՝ Սաֆրաստյանը իր ընկերոջ հետ միասին վճարում է պարտապանի պարտքը և ազատում աղջիկներին: Հետո նա ավելացնում է, որ նման դեպքեր շատ կան, բայց «մեր միջոցները չեն ներեր ամենքին հասնելու»:

Անշուշտ հիշատակված գյուղերում կային տնտեսություններ, որոնք ունեին չնչին քանակությամբ անասուններ, բայց դրանք այնքան սակավ էին, որ չէին կարող փոխել համատարած աղքատության պատկերը:

Բերելով այդ փաստերը՝ չպետք է կարծել, որ պատկերն այդպիսին էր Արևմտյան Հայաստանի նաև մյուս շրջաններում: Կային ոչ քիչ տարածքներ, որտեղ զանազան հանգամանքների բերումով, պահպանվել էր գյուղացիների թվաքանակը, ունեցվածքը, սոցիալական ու ազգային նախկին վիճակը: Ա-Դոն գրում էր. «...մեզ հետաքրքրող վիլայեթների բոլոր գավառներն իրենց տնտեսական դրությունով միանման չեն... Էրզրումի դաշտը և նրա հետ միասին մի երկու գավառներ բացառություն են կազմում (այսինքն լավ վիճակում են գտնվում -Ա. Հ.)»[164]: Մնացած մի շարք գավառներ, շարունակում է Ա-Դոն, ինչպես օրինակ Սասունը, Արճեշը և Նորդուզը տնտեսապես ավելի վատ վիճակում են գտնվում, քան այլ տեղերում: Մալխասը մատնա-

[162] ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 412, g 1, գ. 603, թ. 15:

[163] Նույն տեղում, թ. 20:

[164] Ա-Դո, նշված աշխատություն, էջ 344:

նշում է, որ հայերի կացությունը Ապաղայի դաշտում ավելի լավ էր, քան Վասպուրականի մի շարք այլ գավառներում: Նրա կարծիքով՝. «ընդհանրապես Ապաղայի հայությունն անհամեմատ ավելի բարեկեցիկ տնտեսական վիճակ ուներ, քան Վասպուրականի այլ շրջանների հայ գյուղացին»[165]: Դա բացատրվում էր նրանով, որ Ապաղայի դաշտում քրդերը խաշնարած էին: Բեգերը ձգտում էին բարելավել երկրագործ հայերի դրությունը, որ նրանք չհեռանային իրենց մոտից: Ապա Մալխասը շարունակում էր, որ այն ժամանակ, երբ այլ վայրերում հայ երկրագործները տառապում էին պետական հարկերի ծանրությունից, Ապաղայի դաշտում նրանք ազատ էին այդ հարկերից: Հայերի համար Ապաղայի դաշտում «ո՛չ տասանորդ կար, ո՛չ զինվորական տուրք և ոչ ալ ոչխարի տուրք... ռայա գյուղացին անմիջականորեն այդ գլխացավանքը չուներ»[166]: Պետական հարկերը պահանջվում էին բեգերից: Ամեն մի բեգ աշխատում էր, որ իր հայը շատ չնեղվի, դա ոչ թե հային սիրելու համար, այլ նրան պաշտպանելու մեջ «գտնելով իր անձնական շահի պաշտպանությունը»[167]: Շատ վայրերում հայ գյուղացիները, թալանվելով ավազակաբարո քրդերից, գերադասում էին անցնել նրանցից մեկի պաշտպանության տակ: Ապաղան մեկն էր այդ վայրերից:

Հայ ժողովուրդը աշխարհի կենսունակ ժողովուրդներից մեկն է: Պատմության ընթացքում նա հաճախ է կոտորվել ու թալանվել բարբարոսների արշավանքներից, բայց կարողացել է վերականգնել ու շարունակել իր կյանքը: 1890-ական թվականների կոտորածները մեծ աղետ եղան արևմտահայության համար: Այս կոտորածների ընթացքում սրի քաշվեց 300.000, իսկ այլ տվյալներով 500.000-600.000 հայ, որոնց մեծ մասն Արևմտյան Հայաստանում: Սակայն հայ ժողովուրդը կարողացավ ոտքի կանգնել ու առաջ ընթանալ՝ կուտակելով մի տեղում շատ, մյուսում քիչ հարստություն:

1890-ական թվականների կոտորածներից հետո գյուղացիներից շատերը կարողացան վերականգնել իրենց տնտեսությունները, իսկ ոմանց էլ հաջողվում է այնքան հարստանալ, որ

[165] Մալխաս, Ճամբուս վրա, հ. Ա, Նյու-Յորք, 1950, էջ 47:

[166] Նույն տեղում, էջ 48:

[167] Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 733:

իրենց ունեցվածքով հռչակվում են ոչ միայն գավառում, այլև նրա սահմաններից դուրս: Մեր ձեռքի տակ եղած նյութերը հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում հայ հարուստների և նրանց ունեցվածքի մասին: Ավելորդ չենք համարում բերել դրանցից մի քանիսը: Փաստաթղթերից մեկում կարդում ենք, որ Երզրումի վիլայեթի Խաչ գյուղում երկու տնտեսություն միասին վերցրած ունի 84 եզ, Չխնըսում 3 տնտեսություն՝ 90 եզ, Վժանում 2 տնտեսություն՝ 41 եզ, Ծաղծարում 1 տնտեսություն՝ 20 եզ, Ապրանքում 1 տնտեսություն՝ 25 եզ, Կոթեյում 3 տնտեսություն՝ 71 եզ, Սարը Գայկամում 7 տնտեսություն՝ 182 եզ, Հողեքում 3 տնտեսություն՝ 60 եզ և այլն»[168]:

Ա-Դոն գրում էր, որ Վանի վիլայեթի շատ գավառներ տառապում են չքավորության մեջ, բայց կան նաև ունևոր շրջաններ: Բերկրիի Խաչան գյուղում, օրինակ, կան հարուստ ընտանիքներ, որոնք «ունին 30-40 տավար և 100-150 ոչխար»[169]:

Գ. Երևանյանը հուշագրում էր, «Չարսանճագում 1908 թ. հեղաշրջումից առաջ թուրք ու քուրդ աղաները գյուղացիներից շատերի հողերը բռնագրավեցին և ունեզրկեցին նրանց: Բայց հեղաշրջումից հետո ոմանք գնացին Ամերիկա, փող վաստակեցին և վերադառնալով հայրենիք, ետ գնեցին իրենց հողերը: Իր հարստությամբ հռչակված էր Հովսեփյանը, որն ուներ կարասներով ոսկի, ընդարձակ հողեր, շքեղ տներ, բազմաթիվ տավարներ ու ոչխարներ, մեղվի փեթակներ և այլ կարողություն: Ընտանիքը բաղկացած էր 30 հոգուց, որը սրի քաշվեց Մեծ եղեռնի օրերին»[170]:

Գ. Երևանյանն ապա շարունակում էր. «Չարսանճագում մեծահարուստներ կհամարվեին Զաքարյանները, Ճերեմճյանները, Տեր-Մխոյանները, Մարդոյանները և ուրիշներ: Նրանք ապրում էին Խազին գյուղում և արտահանում էին ցորեն ու բամբակ: Խազին գյուղում իրենց հարստությամբ հռչակված էին Կաքավյաններն ու Մարդոյանները, իսկ Պալըշեր գյուղում՝ Մխիթարյանները»[171]:

[168] Ա-Դո, նշված աշխատություն, էջ 34:

[169] Տե՛ս Գ. Երևանյան, Պատմություն Չարսանճագի հայոց, էջ 185-187 (հետագայում Գ. Երևանյան):

[170] Նույն տեղում, էջ 192-199:

[171] Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 733:

Այդպիսի հարուստ գյուղացիներ կային երկրի նաև այլ շրջաններում, բայց դրանց թիվը քիչ էր: Ընդհանարպես, Արևմտյան Հայաստանի գյուղերում ունևոր տնտեսությունների թիվ քիչ էր, իսկ եղած յուրաքանչյուր տնտեսության բանող անասունների գլխաքանակը չէր անցնում 5-16-ը[172]:

1890-ական թվականների հայկական կոտորածներից հետո հայ գյուղացիությունը կտրուկ աղքատացավ: Շատերը ստիպված եղան բռնել արտագաղթի ճանապարհը՝ մեկնելով կայսրության արդյունաբերական կենտրոններ և արտասահման:

[172] Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 733:

Գլուխ Երկրորդ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտյան Հայաստանը լեռնոտ երկիր է: Նրա երկարությամբ՝ Արևելքից դեպի Արևմուտք, գրեթե իրար զուգահեռ ձգվում են երեք գլխավոր լեռնաշղթաները Պոնտական, Ներքին Տավրոսը և Հայկական կամ Արևելյան Տավրոսը: Այդ լեռնաշղթաներից ու դրանց ստորոտներից սկիզբ են առնում մի շարք գետեր, որոնք հոսում են տարբեր ուղղությամբ և թափվում Սև և Կասպից ծովերն ու Պարսից ծոցը:

Էրզրումի վիլայեթի Գյավուր լեռներից սկիզբ է առնում Ճորոխը (երկարությունը 360 կմ), և անցնելով Բաբերդի հարթավայրով, հոսում է Պոնտական լեռնաշղթայի երկայնքով և Բաթումի մոտ թափվում է Սև ծովը:

Սվազի վիլայեթի Կըզըլ-Դաղ լեռներից սկիզբ է առնում Ալիս գետը, (950 կմ), որն անցնելով Կեսարիայի հարթավայրով, թափվում է Սև ծովը: Էրզրումի վիլայեթի Ծաղկանց (Դիադինի) լեռներից սկիզբ է առնում Արևելյան Եփրատը (Արածանին կամ Մուրադը), որն անցնելով Ալաշկերտի, Մանազկերտի, Բուլանըխի, Մուշի և Խարբերդի դաշտավայրերով, Դերսիմի մոտ խառնվում է Արևմտյան Եփրատին:

Բյուրակն (Բին-Գյոլ) լեռնային զանգվածից սկիզբ է առնում Բյուրակն գետը (Բին-Գյոլ սու), որը, ողողելով բազմաթիվ արոտավայրեր, խառնվում է Արևելյան Եփրատին: Ծաղկավետ (Դումլու-դաղ) լեռների բարձունքներից սկիզբ է առնում Արևմտյան Եփրատը, որը, հոսելով Էրզրումի և Երզնկայի դաշտավայրերով, Դերսիմի մոտ իր մեջ է ընդունում Արևելյան Եփրատը և գոյացնում Եփրատ մեծ գետը (2800կմ): Եփրատն անցնում է Մալաթիայի դաշտավայրով, Դիարբեքիրի վիլայեթով և գնում թափվում է Պարսից ծոցը:

Հայկական Տավրոս լեռնապարից սկիզբ է առնում Տիգրիսը և, հոսելով Եփրատին համարյա զուգահեռ՝ նույնպես թափվում է Պարսից ծոցը: Այս գետի ամենամեծ վտակներն են Արևելյան Տիգրիսը, (Բոհտանը) և Մեծ Զաբը, որոնք սկիզբ են առնում Վանի վիլայեթի հարավ-արևելյան բարձունքներից:

Բյուրակն լեռներից սկիզբ է առնում Արաքսը կամ Երասխը,

որը, անցնելով Արևելյան Հայաստանով և Ադրբեջանով, թափվում է Կասպից ծովը:

Արևմտյան Հայաստանի լճերից նշանավոր է Վանա լիճը, որը գտնվում է ծովի մակերևույթից 1720 մետր բարձրության վրա և զբաղեցնում է 3690 քառ. կմ. տարածություն: Նրա երկարությունը 120 կմ. է, իսկ լայնությունը՝ (ամենալայն տեղը) 50 կմ.: Վանա լիճը շրջապատված է արևմուտքից՝ Նեբրովթ, արևելքից՝ Վարագա լեռներով, հյուսիսից՝ Նեխ-Մասի (Սիփան) գագաթով, իսկ հարավից՝ Հայկական Տավրոսով: Ռաֆֆին գրում էր. «Այդ ծվածն հայելին դրված էր հիանալի շրջանակի մեջ, որը բոլորում է նրա գեղագրական եզերքը մեղմ, ալիքավոր բարձրություններով. դրանք էին՝ Արտոս, Առնոս, Սիփան, Նեբրովթ և Գրգուռ լեռները, որոնց գոտիները չորեք կողմից սեղմել էին իրանց մեջ ջրի այդ մեծ ավազանը»[1]:

Բացի Վանա լճից կան նաև մի քանի փոքր լճեր, որոնցից են՝ Ծոփքը՝ (Գյոլջուկը) Խարբերդի վիլայեթում, Արճակը, Նազիկը՝ Վանի վիլայեթում, Գայլատու լիճը՝ Էրզրումի վիլայեթում, Զարիշատի լիճը՝ (Զըլդրը) Կարսի մարզում և այլն:

Արևմտյան Հայաստանի կլիման խիստ բարեխառն է: Տարվա միևնույն եղանակին միևնույն վիլայեթի մի վայրում համարյա վրա է հասնում ձմեռը, իսկ մյուսում դեռ շոգ ամառ է: Օրինակ՝ Սասունի Անտոք լեռները ամառ և ձմեռ պատած են հավերժական ձյունով, մինչդեռ նրանց ստորոտներում՝ Մուշի դաշտում աճում են խաղողն ու թուզը, խնձորն ու տանձը: Էրզրումի սանջակում ամառը հով է, հաճախ նույնիսկ ցուրտ է լինում, մինչդեռ Թորթումում լիարժեք շոգ էր լինում: Ա-Դոն գրում էր. «Ալադաղի լեռներով նույնիսկ հուլիս ամսի շոգին առանց տաք վերարկվի և կրկնակոշիկների չի կարելի գիշերով ճանապարհորդել, մինչդեռ այդ նույն լեռների հարավային հեռավոր փեշերի վրա փռված Վանա լճի հյուսիսային ափերը կազմող Արճեշի գավառն ունի տաք կլիմա և արտադրում է պտուղներ և խաղող»: Նա այնուհետև նշում էր, որ Արևմտյան Հայաստանի «շրջանները, գավառները և նույնիսկ գավառամասերը, առանձին առանձին վերցրած, կլիմայական տեսակետից այնպես են տարբերվում միմյանցից, որ մարդ մի կետում իրեն զգում է սիբիրյան ցուրտ երկրներում, իսկ դրանից ոչ հեռու մի այլ կետում, տապակվում ու

[1] Ռաֆֆի, հ. 5, էջ 70-71:

խաշվում է այրեցյալ գոտիներին հատուկ տապից»[2]:

Արևմտյան Հայաստանը հարուստ է արոտավայրերով, որոնք կերակրում ու կեր են մատակարարում միլիոնավոր անասունների: Դրանցից առանձնապես աչքի է ընկնում Բյուրակնը, որի մասին մի հաղորդման մեջ կարդում ենք. «Գարունն ու ամառը խիստ զվարճալի է Պին-Կեոլի դալարագեղ տեսքը: Նա բոլորովին ծածկված կերևի կանաչագեղ դալարեաց և երփներանգ բազմազգի անթիվ ծաղիկներու նկարեն գորգով, որոնք առույգ սնունդ մը կառնուն ոչ միայն վճիտ երկնից ցողովն և նրբին օդոց զովությամբ, այլև եղեմական հազարավոր աղբերաց ակնավճիտ կայլակներեն ըմպելով՝ կսքանչացնեն իրենց այցելուները, այնպես, որ կսկսին զանիկա երկրավոր դրախտ մի դավանել»[3]:

Արևմտյան Հայաստանի լեռների ու սարերի միջև ընկած են Էրզրումի, Երզնկայի, Բասենի, Ալաշկերտի, Աբաղայի, Մուշի, Բուլանըխի, Խարբերդի, Դիարբեքիրի և բազմաթիվ այլ ընդարձակ դաշտավայրեր, որոնց մասին ուղևորները թողել են հետաքրքիր նկարագրություններ: Մ. Միրախորյանը, օրինակ, նշում էր, որ Աբաղայի դաշտն այնպիսի հարթ մակերևույթ ունի, որ հեռվից ձվի չափ քարն անգամ կարելի է տեսնել: Դաշտը «ամեն տարի կտա անսպասելի մաքուր խոտ, որո բարձրության մեջ մարդս կթաղվի: Ունի սևագույն ընտիր հող՝ պարարտ ու բարերբեր, որ կրնա մեկին փոխարեն 10-40 տալ ամենապատվական ցորյան և մանավանդ գարի»[4]:

Ա-Դոն գրում էր, որ Մշո դաշտն ընկած է երեք հսկա լեռների մեջտեղը, որոնք «տալիս են նրան մի գեղեցիկ տեսք: Ընտրեցեք նրան շրջապատող լեռներից, որը կամենաք, բարձրացեք նրա վրա և այդտեղից դիտեք այդ օրիգինալ բնությունը: Հորիզոնը չորս կողմից ներկայացնում է կատարների մի բոլորակ շղթա. այս կատարները գլխիվայր իջնելով՝ գալիս օղակի պես բոլորում են սիրուն դաշտը. երկու գետեր՝ Եփրատն ու Մեղրագետը, ոլորապտույտ ակոսելով դաշտը, գալիս-խառնվում են իրար և, իբրև ժապավեն, բեկբեկուն գծում են հարթ մակարդակը, իսկ այդ բոլորին՝ իբրև մի նոր գեղեցկություն, կոկիկ հարթության

[2] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 4-5:

[3] Մասիս, 1882, մարտի 29:

[4] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ.Գ, էջ 19:

վրա օազիսի պես ընկած են Մշո դաշտի բազմաթիվ գյուղերը: Նայում եք բնության ստեղծած այդ գեղեցիկ տեսարանին, նրա հմայիչ պատկերներով հափշտակվում եք այնքան ժամանակ, մինչև որ այդ երկրում տիրող կարգերի տխուր հիշողությունները գալիս են ընդհատելու այդ հմայիչ տպավորությունները»[5]:

Արևմտյան Հայաստանի բնակլիմայական պայմանները հնարավորություն էին տալիս մշակելու ընդարձակ տարածություններ և աճեցնելու գյուղատնտեսական տարատեսակ մշակաբույսեր: Սակայն իշխող քաղաքական և տնտեսական կարգերի պատճառով մշակվում էր նրա հողային ամբողջ ֆոնդի փոքր մասը: 1865 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ երկրի արգավանդ հողերը մնացել են անմշակ, իսկ մշակված հողերից ստացած բերքը հազիվ է բավարարում գյուղացու ապրուստը[6]:

1879 թ. Յա. Դ. Մալաման արձանագրում էր. «Թեև ճչգրտորեն հնարավոր չէ որոշել ցանքերի, այգիների, մարգագետինների և այլ հողերի տոկոսը, բայց... պետք է ասել, որ ծայրերկրի (Էրզրումի վիլայեթի -Ա. Հ.) մեծ մասն արոտավայր է»[7]:

Երկրի պիտանի հողերի մեծ մասը մնում է անմշակ նաև հետագա տարիներին: 1881 թ. մի թղթակցության մեջ նշվում էր, որ Վանի վիլայեթի Չուխա-Կետինք լեռներից «մինչև Վարագա սարն ընկած տարածության մեջ ընդամենը երկու գյուղ կա, մնացյալ ամբողջ հովիտք, լերինք և դաշտերն, որ Վանա գավառեն շատ ավելի արգավանդ են, ամայի կեցեր են»[8]:

1880-ական թվականներին Գուգո Գրոտեն նշում էր, որ Բասենի սահմանակից շրջաններում «ներկայումս մշակված է պիտանի հողերի հազիվ մեկ տասներորդ մասը»[9]:

Գրեթե նույն բանն էր հաստատում նաև Ի. Գոլոբորոդկոն, որը

[5] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 98:

[6] Մասիս, 1865, հունվարի 23:

[7] Я. Д. Малама. Средства продовольственные, фуражные, перевозочные и денежные северновосточной части азиатских владений оттоманской империи.- Тифлис, 1876.- էջ 5 (Հետագայում՝ Я. Д. Малама. Средства...):

[8] Մասիս, 1881, սեպտեմբերի 22:

[9] По Азиатской и Европейской Турции / Перевод О. Романовой, под редакцией С. Григорьева.- Москва, 1904.- էջ 103: Հետագայում՝ По Азиатской и Европейской Турции...

1912 թ. հիշատակում էր. «Էրզրումի վիլայեթում մշակված է պիտանի հողերի հազիվ 1/10-ը, այն էլ շատ վատ»[10]:

Բնակիչները մշակվող հողերի վրա ցանում էին ցորեն, գարի, վարսակ, բրինձ, բամբակ, ոսպ, լոբի, սիսեռ ու բազմաթիվ այլ մշակաբույսեր և աճեցնում զանազան մրգեր ու հատապտուղներ: Ցավոք, մենք վիճակագրական տեղեկություններ չունենք նշված մշակաբույսերից յուրաքանչյուրի արտադրության շրջանի և քանակի վերաբերյալ: Այդ բանը մենք կփորձենք կատարել ժամանակակիցների և ականատեսների հաղորդած բազմաթիվ վկայությունների հիման վրա:

Սկսենք հացահատիկներից: Ըստ Յա. Դ. Մալամայի՝ հացահատիկի ցանքատարածություններով Էրզրումի վիլայեթում աչքի էին ընկնում Էրզրումի, Երզնկայի և Կարսի սանջակները[11]:

Ա-Դոն նշում էր, որ Էրզրումի վիլայեթում, բացի այդ շրջաններից, հացահատիկների ցանքատարածություններով աչքի են ընկնում նաև Բասենը, Ալաշկերտի հովիտը, Ղարաքիլիսեն և Դերջանի գետահովիտները: Նա գրում էր, որ Բասենը նշանավոր է իր հացահատիկների բերքով և «ժողովրդի հիմնական պարապմունքն էր հացահատիկի մշակությունը»[12]:

Ղարաքիլիսեն «հայտնի է իր բարեբեր հողերով, ուր մշակվում են գլխավորապես հացահատիկներ»[13]:

Դերջանի գետահովիտները «հանդիսանում են հացահատիկների մշակության համար բարեբեր վայրեր... մի քանի տեղերի ցորենը շատ հռչակված է շրջակա գավառներում և այդ պատճառով նա ունի լավ արտահանություն»[14]:

Բիթլիսի վիլայեթում հացահատիկի արտահանության շրջաններ էին համարվում Բիթլիսի սանջակի Ախլաթ և Մուշի սանջակի Բուլանըխ ու Մանազկերտ կազաները: 1884 թ. Մ. Միրախորյանը նշում էր, որ Մանազկերտում ցանում են գլխավորապես ցորեն[15],

[10] И. И. Голобородко. Турция.- М., 1912.- էջ 124:

[11] Я. Д. Малама. Средства ... էջ 6-10:

[12] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 175:

[13] Նույն տեղում, էջ 211:

[14] Նույն տեղում, էջ 186:

[15] Տե՛ս Մ. Միրախորյան, նշվ. աշխ., էջ 45:

իսկ Բուլանըխում պարծենում են «ցորենի կլոր հատիկներով»[16]:

1884 թ. Գ. Սրվանձտյանցը հիշատակում էր, որ Մանազկերտում և Բուլանըխում հողը սքանչելի է «արգասաբերությամբ ցորենվո, գարվո ու խոտի և աղեկ մշակված»[17]:

1889 թ. մի թղթակից գրում էր, որ Մուշի դաշտն ու Բուլանըխը հաց են մատակարարում վիլայեթի շատ քաղաքներին, իսկ մնացած շրջանները «շատ չնչին մասնակցություն են ունենում քաղաքներին հաց հայթայթելու գործում»[18]:

1909 թ. Ա-Դոն արձանագրում էր, որ Բուլանըխի գավառը «արտադրում է ընտիր հացահատիկներ, որոնք և կազմում են ժողովրդի գլխավոր զբաղմունքը»[19]:

Խլաթն «ունի սիրուն, բարեբեր դաշտեր, այդ դաշտերում մշակվում են ընտիր հացահատիկներ, որից բավականաչափ արտահանվում է Վան»[20]:

Վանի վիլայեթում հացահատիկների արտադրությամբ աչքի էին ընկնում Վանի սանջանի Գավաշ, Ալջավազ, Արճակ, Թիմար և Հայոց Ձոր կազաներն ու նահիեները: 1884թ. Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ «Ալջավազը տալիս է ընտիր ցորեն»[21]:

1891 թ. Տ. Փիրումյանը նշում էր, որ Գավաշն ու Կարճկանը «իրենց ընտիր ցորենով կերակրում են... լեռների համարյա թե բոլոր քյուրդ և հայ բնակիչներին»[22]:

1894 թ. մի թղթակից արձանագրում էր, որ Արճեշը «Վանա վիլայեթի շտեմարանն է»[23]:

1904 թ. Ծերուկը գրում էր, որ Վանի վիլայեթում «Առատ և

[16] Նույն տեղում, էջ 68:

[17] Գ. Սրվանձտյանց, Համով հոտով, Կ.Պոլիս, 1884 թ. էջ 100:

[18] Մշակ, 1889, հուլիսի 27, թիվ 83:

[19] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 144:

[20] Նույն տեղում, էջ 88:

[21] Գ. Սրվանձտյանց, Համով հոտով, էջ 96:

[22] Մուրճ, 1891, թիվ 2, էջ 217:

[23] Դրոշակ, 1894, թիվ 7, էջ 5, տե՛ս նաև «Արձագանք», 1894, սեպտեմբերի 28, թիվ 112:

ընտիր հացահատիկ արտադրող հողեր գտնվում են Ալջավազի, Արճեշի, Բերկրու, Խոշաբի, Գավաշի, Արճկանի, Թիմարի և Ձուլամերկի գավառներում ու գավառակներում»[24]: Նա հարկ էր համարում հատուկ նշել, որ Ալջավազը և Արճեշը Վանի նահանգի շտեմարաններ են համարվում: Այս երկու գավառները իրենց հացահատիկներով կարող են կերակրել ամբողջ Վանի նահանգը»[25]:

Վանի վիլայեթի այս շրջանների մասին համարյա համանման տեղեկություններ են հաղորդում մեզ նաև այլ հեղինակներ[26]:

Խարբերդի վիլայեթում հացահատիկների արտադրության գլխավոր կենտրոնը Խարբերդի կազան էր: Ա. Մ. Կոլյուբակինը 1880-ական թվականներին գրում էր, որ Խարբերդի կազայում «գլխավոր հարստությունը... ցորենն էր... գարու արտադրությունը նույպես բավականաչափ զգալի է՝ հատկապես լեռնային շրջաններում և կազմում է ցորենի արտադրության մոտ 1/8 մասը, այսինքն՝ 12 տոկոսը»[27]: Նա ընդգծում էր, որ Խարբերդի կազայում հացահատիկների արտադրությամբ աչքի էր ընկնում հատկապես Խարբերդի դաշտը, որը թեև կազմում էր կազայի ամբողջ տարածության 1/5 մասը, բայց տալիս էր նրա հացի արտադրության մոտ 74 տոկոսը[28]:

Դիարբեքիրի վիլայեթում հացահատիկների արտադրությունը համեմատաբար զարգացած էր Բալուի կազայում: Գ. Սրվանձտյանցը 1880-ական թվականներին հիշատակում էր, որ Բալուն համարվում է ցորենի արտադրության կարևոր կենտրոն[29]:

Գրեթե նույն բանն էր հաստատում նաև Ա. Մ. Կոլյուբակինը: Նա 80-ական թվականներին հիշատակում էր, որ Բալույում երկրագործության հիմնական մշակաբույսերն են ցորենն ու գարին, որ «մշակվող հողերի մոտ 65 տոկոսը օգտագործվում է

[24] Մուրճ, 1904, թիվ 3, էջ 37:

[25] Նույն տեղում, էջ 47:

[26] Տես «Հորիզոն», 1910, օգոստոսի 3, թիվ 168, Ա.-Դո, էջ 15-52:

[27] Ա. Ե. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 361:

[28] Նույն տեղում, էջ 432:

[29] Տես Սրվանձտյանց, Թորոս աղբար, Հայաստանի ճամփորդ, Կ. Պոլիս, 1879, մ. Բ, էջ 169:

ցորենի, իսկ 13 տոկոսը գարու ցանքսերի համար»[30]:

Սվազի վիլայեթում հացահատիկների արտադրությամբ աչքի էին ընկնում համարյա բոլոր լեռնային շրջանները, բայց ավելի շատ՝ Թոքատի սանջակի Զիլե և Նիքսար կազաները[31]:

Բրինձ ցանում էին Էրզրումի վիլայեթի Թորթումի նահիեում, Վանի վիլայեթի Զուլամերկ կազայի ցածրադիր շրջաններում, Դիրաբերքիրի, Մծբինի կամ Նիսիպին կազայում, Սվազի վիլայեթի Ամասիայի սանջակի դաշտավայրային մասերում, Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակում և, վերջապես, Խարբերդի վիլայեթի Խարբերդի դաշտում[32]: Բրնձի ցանքատարածությունները շատ սահմանափակ էին, դրանք կազմում էին երկրի մշակվող հողերի շատ աննշան մասը: Գյուղացիները իշխող սոցիալ-տնտեսական և քաղաքական կարգերի և բարքերի պատճառով խուսափում էին ընդարձակել դրա ցանքատարածությունները և բարձրացնել բերքատվությունը: Ա-Դոն նշում էր, որ չնայած բարենպաստ կլիմային, ջրի առատությանն ու հողի բարեբերությանը, բրնձի մշակումը «շատ աննշան չափով էր առաջ գնացել»[33]:

Արևմտյան Հայաստանում հացահատիկների մշակությունից հետո երկրագործության կարևոր ճյուղ էր այգեգործությունը: Երկրի տարբեր շրջաններում աճում էին հատապտուղներից՝ խաղողը, իսկ մրգերից՝ տանձը, խնձորը, սալորը, նուռը, սերկևիլը, կեռասը, ծիրանը, ընդեղենից՝ ընկույզը և այլն: Գյուղացիները խաղողին հատկացնում էին հատուկ տեղամաս, իսկ մրգատու այգիներին՝ հազվադեպ: Նրանք սովորաբար մրգատու ծառերը տնկում էին խաղողի այգիներում կամ այլ մշակաբույսերի դաշտերում:

Էրզրումի վիլայեթում այգեգործությամբ աչքի էին ընկնում Էրզրումի և մասամբ Երզնկայի և Խնուսի սանջակները: Էրզրումի սանջակում այգեգործությամբ զբաղվում էին Թորթումի, Իսպիրի և Կիսկիմի կազաներում: 1890-ական թվականներին Ֆ. Գրյազնովը հիշատակում էր. «Էրզրումի սանջակում խաղողի և ընդհանրապես մրգերի առատությամբ հայտնի են Իսպիրի կազան և Թորթում նահիեն»[34]:

1909 թ. Ա-Դոն գրում էր, որ Թորթումը «հարուստ է ծառապտուղներով, որոնցից աչքի են ընկնում ծիրանը, սալորը, թութը, ընկույզը, խաղողն իր տեսակներով... Եթե Բասենը Էրզրումի հացի շտեմարանն է, ապա Թորթումը մրգեղենի շտեմարանն է»[35]:

Նա այնուհետև շարունակում էր, որ Կիսկիմում կան գյուղեր (օրինակ՝ Կարմրուկը), որոնց բնակիչների համար խաղողի այգիներն ու պտղատու պարտեզները «նրանց ապրուստի գլխավոր աղբյուրներից մեկն են»[36]:

1882 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ Խնուսի բնակիչները «մի քանի տարե ի վեր բավական պտղատու ծառեր հասուցած են, ուր առաջ ուռենիք և բարդիք անգամ կըպակսեին»[37]:

1880 թ. մի այլ հաղորդման մեջ ասվում էր. «Եթե Կարնո լեռնադաշտը նպաստամատույց չի խաղողի մշակության, բայց քիչ մը անդին՝ Թորթում, Երզնկա և Մուշ գինելից գավառներ են»[38]:

Վանի վիլայեթում այգեգործությունը տարածված է Շատախում, Արճեշում, Ալջավազում, Զուլամերկում, Ոստանում և հատկապես Վան քաղաքում և Վանա լճի շրջակայքում: Գ. Սրվանձտյանցը հիշատակում էր, որ Վան քաղաքի Այգեստան թաղամասի այգիներում աճում են խնձորի ու տանձի ամենատարբեր տեսակները, ինչպիսիք են՝ վաղահաս, մեղրուկ, ճենճուկ, ղզղղեկ, պռկոշ, մարտիրոս, չալաբեկ, մոկաց, մալաչիկ, մերնիկ, նռնեկ, մալաչի և այլն: Նա գրում էր. «մալաչին պատիվ ունի անվանվիլ տանձից արքա, թե իր համեղությամբ և թե մեծությամբ», իսկ խնձորի տեսակներից դալարիկը «կրնա պարծիլ իբրև թագուհի բոլոր մրգեղինաց, որ իր վրա կգրե ամեն ազնվական հատկությունը. մեծ, կարմիր, նրբակեղև, անուշահոտ, սպիտակ և ախորժահամ»[39]:

---

[30] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 132:

[31] Տե՛ս А. И. Гиппиус. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции. Вилайет Сивас.- Тифлис, 1890.- т. 1, էջ 9:

[32] Տե՛ս Я. Д. Малама, Средства ... էջ 18:

[33] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 103:

[34] Ф. Грязнов. Военный обзор передового театра в Азиатской Турции.- Тифлис, 1897.- Часть 2.- էջ 150 (Հետագայում՝ Ֆ. Գրյազնով):

[35] Ա-Դո, էջ 200-201:

[36] Նույն տեղում, էջ 198:

[37] Մասիս, 1882, մարտի 6:

[38] Արևելք, 1890, հուլիսի 13:

[39] Գ. Սրվանձտյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 99-100:

Գր. Արծրունին նշում էր, որ Այգեստանի նուռը «իր պատվավոր տեղն էր բռնում սուլթանների սեղանի վրա, նույնպես և կան այդտեղ առանձին տեսակի մեծ խնձորներ (շահալմասի), որոնց կորիզները շարժվում են, երբ մարդը քիչ շարժելով միրգը՝ տանում է նրան իր ականջին»[40]:

Մ. Միրախորյանը գրում էր, որ Այգեստանում սև խաղողի տեսակներից հայտնի են խիզնան ու քիշմիշը, որին տեղացիները անվանում են նաև լորեկ, իսկ սպիտակ խաղողի տեսակներից՝ այծի պտուկը[41]:

Ինչ վերաբերում է վիլայեթի այգեգործական մյուս շրջաններին, ապա Գ. Սրվանձտյանցը հիշատակում էր, որ Վանի շրջակայքում գտնվող Արտամեդ, Շահբազ, Ավանց և Այլուր գյուղերը «զարդարված են այգեստաններով, որոնց թե՛ պտուղներ և թե՛ գինին առատ ու անվանի են»[42]:

Ֆ. Գրյազնովը նշում էր, որ «Վանա լճի ափերին աճում են խաղող և այլ մրգեր, հատկապես ծիրան, ինչպես և ծմերուկ և սեխ»[43]:

Ա-Դոն գրում էր, որ Ալջավազի «դաշտային մի քանի մասերում կլիմայի տաքության շնորհիվ աճում են խաղողի այգիներ և պտղատու պարտեզներ. պտուղներից նշանավոր են ծիրանը, խնձորը և ընկույզը»[44], իսկ «Շատախը հարուստ է... պտղատու ծառերով, մանավանդ ընկուզենիներով»[45]:

Նա այնուհետև շարունակում էր, որ Արճեշում, բացի հացահատիկներից կան նաև «խաղողի լավ տեսակներ, զանազան ծառապտուղներ և այլ տեսակի բերքեր»[46]:

Մի ճանապարհորդ արձանագրում էր, որ Զուլամերկում աճում են խաղող, տանձ, խնձոր, սերկևիլ, թուզ, կիտրոն, ընկույզ և այլ պտուղներ ու մրգեր[47]:

---

[40] Գ. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 14:

[41] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Բ., էջ 170:

[42] Գ. Սրվանձտյանց, Համով հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 80:

[43] Ֆ. Գրյազնով, Ф. Грязнов. Военный обзор передового театра в Азиатской Турции.- Тифлис, 1895-1897.- т 1, 2 (Հետագայում՝ նշվ. աշխ.):

[44] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 42:

[45] Նույն տեղում:

[46] Նույն տեղում, էջ 36

[47] Տե՛ս Известия Кавказского отдела императорского русского географического общества.- Тифлис, 1873-1874.- т. 2.- էջ 160:

Բիթլիսի վիլայեթում այգեգործությամբ զբաղվում էին Բիթլիսի, Մուշի, Սղերդի և Գենջի սանջակներում:

1880-ական թվականներին Մ. Միրախորյանը նշում էր, որ Սղերդի սանջակի Բերվարի, Խարզանի և Շիրվանի կազաներում աճում են փշատ, թութ, պուտուն[48] և խաղողի «այնպիսի խաղցր տեսակ, որ շաքարի պատվուն կրնա դիպչիլ»[49]:

1895 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ Մուշի սանջակի Սասունի գավառի Դալվարիկ, Խիանք և Փառգա գյուղերում աճում է այնպիսի մեծության խաղող, որի «մի ճութը մի մարդ դժվարությամբ էր ուտում»[50]:

1909 թ. Ա-Դոն հիշատակում էր, որ Սղերդ քաղաքը «նշանավոր է իր պտղաբերությամբ. նա արտադրում է խաղող, գինի և բազմաթիվ ծառապտուղներ», իսկ Խարզանի, Շիրվանի և Բարվարի կազաները խաղողից բացի նաև՝ բալ, նուռ, կեռաս և այլ մրգեր[51]: Նա այնուհետև նշում էր, որ Բիթլիսը «մի պտղաբեր քաղաք է, զարդարված է ուռենիների և կաղամախիների խիտ շարքերով. նա ճոխացած է խաղողի այգիներով ու պտղատու պարտեզներով. նա արտադրում է ընտիր խաղողի տեսակներ, տանձ, խնձոր, սալոր, ծիրան, սերկևիլ, թուզ, նուռ և այլ պտուղներ»[52], իսկ Սասունի Խուլփ և Խիանք գավառակները «Մուշին մրգեր մատակարարող շրջաններ են, թեև Մուշն էլ զուրկ չէ խաղողի այգիներից և ծառապտուղներից»[53]:

Բիթլիսի վիլայեթում՝ հատկապես Գենջի սանջակում այգեգործության առկայության մասին վկայում էր նաև Գրյազնովը[54]:

1909 թ. Ս. Շարիկյանը գրում էր, որ Մուշի դաշտի գյուղացին «մրգեղեն՝ բացառապես խաղողը կարտադրեր, վասն զի ուրիշ պտուղներ կամ պտղատու ծառեր չի կան, չհաշվելով մեկ քանի

---

[48] Մ. Միրախորյանը նշում էր, որ պուտումը «տեսակ մը վայրի պտուղ է լուբիայեն փոքր, ոսպածև, զորս կեփեն աղի ջրով և կուտեն կոտրելով զկեղևն» (տե՛ս նրա «նկարագրական ուղևորություն ի հայաբեկ գավառս Արևելյան Տաճկաստանի», Կ. Պոլիս, 1884թ. մ.ա. էջ 63):

[49] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Բ., էջ 63:

[51] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 153-154:

[52] Նույն տեղում, էջ 82:

[53] Նույն տեղում, էջ 5:

[54] Տե՛ս Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ 150:

տանձի ու խնձորի ծառերը»[55]:

Դիարբեքիրի վիլայեթում այգեգործությունը տարածված էր Արղան-մադենի սանջակում՝ հատկապես Բալու կազայում: Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ այդ սանջակում բնակիչներն աճեցնում են «ընտիր մրգեղեն... նուշ և նուռ: Իսկ խաղողը այնքան ազնիվ և այնքան շատ, որո նման հայաբնակ գավառաց մեջ չկա տեղ մը: Չգիտեմ ինչու Արղնո գավառ կոչած են և ոչ՝ խաղողն: Դեղին, սև, կարմիր, սպիտակ խաղողներ՝ խոշորահատ, անուշահամ, մեղրածորան, որ սոսինձի պես կը փակչի ուտողին մատները, նրբամորթ, սակավակուտ, մսոտ: Զատ է գինու խաղողն, որ նույնքան առատ է և պատվական յուր գույնն ու համը»[56]:

Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Բալուի կազայի Մազրատ, Կարաչար և Օխ նահիեներում խաղողի այգիներն ու բանջարանոցները գրավում են զգալի տարածություն: Երկրագործության այդ ճյուղը զարգացած է հատկապես Մազրատ նահիեում[57]:

Արղան-Մադեն սանջակում այգեգործության զարգացման մասին վկայում էր նաև «Բյուզանդիոնի» թղթակիցներից մեկը[58]:

Խարբերդի վիլայեթում այգեգործությամբ զբաղվում էին Խարբերդի և Մալաթիայի սանջակներում: Տակավին 1860-ական թվականներին Դ. Թեյլորը հիշատակում էր, որ Խարբերդի սանջակի Արաբկիր կազայում «տեղական գլխավոր արտադրությունը մրգերն են»[59]:

Հետագայում գրեթե նույն բանն էր հաստատում նաև Գ. Սրվանձտյանցը, որը գրում էր, թե Արաբկիրում աճում են «ընտիր և առատ մրգեր, խաղող...»[60]:

Այս նույն հեղինակն այնուհետև արձանագրում էր, որ Մալաթիայում կան «ընտիր մրգեր՝ թութ, մըշմըշ, որ փոքր, բայց համեղ ծիրան է, ցեղ-ցեղ տանձեր և խնձորներ, խոշորահատ խաղող և չամիչ... խայսի և սև սալոր և այլն, որոց չորցուցած չիրերը շատ

[55] Ազատամարտ, 1909, սեպտեմբերի 24, թիվ 89:

[56] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. բ., էջ 185:

[57] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ. էջ 138:

[58] Տե՛ս «Բյուզանդիոն», 1906, ապրիլի 17:

[59] Д. Тейлор. Дневник... էջ 293:

[60] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. ա., էջ 289:

երկրները ծանոթ են»[61]: Իսկ Խարբերդը ու նրա շրջակայքի «գեղերը և մեծավ մասամբ Ուլ-Ովան այգիներով լի են»[62]:

1899 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Այգեգործությունը լավ վիճակի մեջ է առավելապես Խարբերդում. անվանի են նրա խաղողն ու գինին»[63]:

Խարբերդի կազայում այգեգործության զարգացման մասին վկայում էր նաև Ա. Մ. Կոլյուբակինը: Նա գրում էր, որ մրգատու այգիները «կազայի բոլոր մասերում ընդարձակ են ու արտակարգ հարուստ՝ տարատեսակ մրգերի թե՛ քանակով, այնպես էլ որակով»[64]:

Սվազի վիլայեթում այգեգործությունը տարածված էր առավելապես Ամասիայի սանջակում, որը տարեկան 2-3 անգամ ավելի միրգ էր արտադրում, քան վիլայեթի մյուս սանջակները: Նրա խնձորն ու տանձը իրենց գեղեցկությամբ և քաղցր համով հռչակված էին Փոքր Հայքում:

Անհրաժեշտ է նշել, որ այգեգործությանը զուգընթաց համարյա ամենուրեք տարածված էր նաև բանջարաբուծությունը՝ ձմերուկի, սեխի, դդումի, կաղամբի, վարունգի, բադրիջանի, կարտոֆիլի, գազարի, բողկի, շաղգամի, սոխի, սխտորի, տաքտեղի, լոբու, ռեհանի, սիսեռի, ոսպի, համեմի, կոտեմի մշակումը: Դրանցից յուրաքանչյուրը համեմատաբար զարգացած էր նաև երկրի տարբեր շրջաններում: Դիարբեքիրի վիլայեթում հռչակված էին ձմերուկն ու սեխը: Գր. Արծրունին գրում էր. «Ասում են, որ եթե մի 8-10 տարեկան երեխա նստի ձմերուկի վրա, ոտքերը գետին չեն հասնում»[65]:

Այստեղի ձմերուկն ու դդումն ունենում են մինչև 25-30 կգ քաշ: Մուշի դաշտում՝ հատկապես Զրիկ գյուղում, ըստ մի ականատեսի վկայության՝ այնպիսի մեծության ու համով են լինում ձմերուկը, սեխը, վարունգը, կաղամբն ու կարտոֆիլը, որ «չեմ հանդիպած նույնիսկ Ռուսաստանում, ուր այնքան առաջ է գնացել դրանց մշակությունը»[66]:

[61] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. բ., էջ 323:

[62] Նույն տեղում, մ.բ., էջ 82:

[63] Մշակ, 1889, հուլիսի 27, թիվ 83:

[64] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 447:

[65] Գ. Արծրունի, նշվ. աշխ., էջ 16:

[66] Մշակ, 1886, հոկտեմբերի 16, թիվ 116:

Էրզրումի վիլայեթում հայտնի էին կաղամբը, բակլան, սիսեռը, սոխը, շուշման և այլն[67]:

Երկրի որոշ շրջաններում գյուղացիները հացահատիկներից ու բանջարեղենից զատ ցանում էին նաև յուղատու բույսեր՝ կտավատ, վուշ, պոտոմի, քունջութ և այլն: Նրանք այդ բույսերից հանում էին յուղ, որն օգտագործում էին ինչպես սննդի մեջ, այնպես էլ ճրագի մեջ վառելու համար: Մ. Միրախորյանը գրում էր, որ բնակիչները «սովորական արմատյաց հետ կը ցանեն... կտավատը, որմե ձեթ հանելով կը վառեն և երբեմն իսկ ուտելու կը գործածեն քաղցր տեսակն, ծիթայուղեն տասնապատիկ հարգի է յուրյանց մեջ»[68]:

Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության մեջ որոշ տեղ էր գրավում նաև մշակաբույսերի՝ բամբակենու, շերամի, ծխախոտի, հաշիշի և տորոնի մշակությունը:

Բիթլիսի վիլայեթում բամբակենին մշակում էին Մուշի սանջակի Բերդակ նահիեում, որտեղ 1860-ական թվականներին, ըստ Դ. Թեյլորի վկայության, տարեկան արտադրվում էր մոտ 10.000 բաթման բամբակ[69]:

Էրզրումի վիլայեթում այն մշակվում էր գերազանցապես Երզընկայի հարթավայրում, որտեղ, ըստ Յա. Դ. Մալամայի վկայության, «նրա բերքը տարեկան հասնում էր մինչև 5000-7000 փթի»[70]:

Սակայն բամբակենու մշակության գլխավոր կենտրոնները Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներն էին: Խարբերդի վիլայեթում այն մշակվում էր Խարբերդի դաշտում և Դերսիմի սանջակի Չարսանջակ կազայում: 1886 թ. Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ Խարբերդի կազայում՝ հատկապես Խարբերդի դաշտում, բամբակագործությունն «ունի մեծ նշանակություն... ընդգրկելով պիտանի հողերի 30%-90%»[71]: Նա այնուհետև նշում է, որ այն որոշ նշանակություն ունի նաև Չարսանճագի գյուղատնտեսության համար[72]:

[67] Տե՛ս. Я. Д. Малама. Средства... էջ 22-23:

[68] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Ա., էջ 25:

[69] Д. Тейлор. Дневник... էջ 60:

[70] Я. Д. Малама. Описание Эрзерумского вилайета.- СПб, 1874.- էջ 109:

[71] Ա. Մ. Կոլյուբակին. նշվ. աշխ., էջ 444:

[72] Նույն տեղում, էջ 221:

Դիրաբեքիրի վիլայեթում բամբակենին մշակվում էր գլխավորապես Բալու կազայում: Նույն հեղինակի վկայությամբ՝ 1880-ական թվականներին այստեղ բամբակենու ցանքատարածությունները գրավում էին բոլոր մշակելի հողերի մոտ 15%[73]: Բալու կազայում բամբակագործությունը զարգացած էր հատկապես Մազրատ նահիեում, որը տալիս էր ամբողջ արտադրանքի մոտ 70%[74]: Բալույում բամբակամշակությունը չի կորցնում իր նշանակությունը նաև հետագա տարիներին: Ա. Ղազարյանը 1910 թ. հիշատակում էր, որ այդ կազայի գյուղացիները «մեծ քանակությամբ կմշակեն բամբակ»[75]:

Բամբակի մշակությամբ «զբաղվում են գլխավորապես հայերը, անհամեմատ քիչ՝ թուրքերը և ավելի քիչ՝ քրդերը»[76]:

Շերամապահությունը՝ որպես գյուղատնտեսական մշակության ճև, հնուց անտի ծանոթ է եղել հայ գյուղացուն: Այն մասամբ տարածված էր Արևմտյան Հայաստանի Բիթլիսի վիլայեթում, հատկապես Սասունի կազայում: 1895 թ. մի հաղորդման մեջ ասվում է, որ այդ կազայի Խիանք և Ղուլփ գյուղերում «մարդ կա, որ մինչև 100 լիտր շերամ է դուրս բերում տարեկան»[77]:

Իսկ Ա-Դոն նշում էր, որ Սասունի Տալվորիկի ձորում «կան բավականաչափ երկհարկանի տներ, որոնց վերին հարկի սենյակները հատկացված են շերամապահության»[78]:

Սակայն շերամապահության գլխավոր կենտրոնները Խարբերդի, Սվազի և Դիարբեքիրի վիլայեթներն էին: Խարբերդի վիլայեթում շերամապահությամբ զբաղվում էին գերազանցապես Խարբերդի կազայում: Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ այն Խարբերդի դաշտում «միանգամայն նոր ճյուղ է»[79] և վերջին 10-20 տարում հասել է նշանակալից հաջողությունների, որը բացատրվում է ինչպես Մեզիե քաղաքում երկու մետաքսա-

[73] Նույն տեղում, էջ 138:

[74] Նույն տեղում, էջ 160:

[75] Ազատամարտ, 1910, օգոստոսի 13, թիվ 359:

[76] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 138:

[77] Մշակ, 1895, մարտի 16, թիվ 31:

[78] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 132-133:

[79] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 362:

գործական ֆաբրիկաների ստեղծումով, որոնք բարձրացրին բոժոժի գինը, այնպես էլ Դիրաբեքիր և Մալաթիա տանող հաղորդակցության միջոցների բարելավումը»[80]:

Սվազի վիլայեթում շերամապահության գլխավոր շրջանը Ամասիայի սանջակն էր: 1910 թ. Ս. Տ. Հ. ստորագրությամբ մի թղթակից հաղորդում էր. «Ամասիան... այսօր թե՛ շերամաբուծության և թե՛ մրգաստաններու առատության կողմե առաջնակարգ դիրք մը կը գրավե»[81]:

Դիարբեքիրի վիլայեթում շերամապահությունը տարածված էր Դիարբեքիր քաղաքում ու նրա շրջակայքում: 1870-ական թվականներին Գր. Արծրունին գրում էր. «Շերամապահության հայրենիքը Դիարբեքիրն է (Տիգրանակերտը)»[82]:

Հետագայում գյուղատնտեսության այդ ճյուղը որոշ տարածում է ստանում նաև Բալույում: Հարություն քահանա Սարգսյանը՝ (Ալևորը) իր հուշերում գրում էր, որ Բալույում «1895 թվականեն հետո գյուղացիները, հետևելով խարբերդցիներուն ու տիգրանակերտցիներուն, սկսան շերամաբուծության ալ պարապիլ», սակայն «շերամաբուծությունը Բալուի մեջ գլխավոր կամ անհրաժեշտ զբաղումներու կարգը չանցավ»[83]:

Էրզրումի վիլայեթում գյուղացիները շերամապահությամբ չէին զբաղվում, իսկ Վանի վիլայեթում նրանք այնքան քիչ էին զբաղվում, որ Ծերուկի խոսքերով ասած՝ «մինչև անգամ չարժե հիշել»[84]:

Ծխախոտի մշակության գլխավոր կենտրոններն էին՝ Բիթլիսի վիլայեթի Բիթլիս և Մուշ սանջակները, Վանի վիլայեթի Հեքեարի սանջակը՝ հատկապես Զուլամերկ ու Շամդինա կազաները և Էրզրումի վիլայեթի Էրզրում և Երզնկա սանջակները: Գ. Արծրունին գրում էր. «Բիթլիսը հայտնի էր ծխախոտով, բայց մանավանդ Մուշը, որի ծխախոտը պակաս չէ Սամսուն ասած տեսակից»[85]:

[80] Նույն տեղում, էջ 449:

[81] Ազատամարտ, 1910 թ., հուլիսի 17, թիվ 336:

[82] Գր. Արծրունի, նշված աշխատ., էջ 16:

[83] Հարություն քահանա Սարգսյան, Բալու- իր սովորությունները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Գահիրե, 1932, էջ 121-122:

[84] Մուրճ, 1904, թիվ 33, էջ 51:

[85] Գր. Արծրունի, նշվ. աշխ., էջ 51:

Վ. Տ. Մաևսկին նշում էր, որ Վանի վիլայեթում ծխախոտի արտադրությամբ հայտնի են հատկապես Զուլամերկն ու Շամդինան[86]:

Իսկ Ֆ. Գրյազնովն արձանագրում էր. «Ծխախոտի ամենաընդարձակ պլանտացիաներն էրզրումի և Երզնկայի սանջակներում են, ծխախոտի մշակությունը լայն չափերով տարածված է նաև Բիթլիսի վիլայեթի Բիթլիս և Մուշ սանջակներում, ինչպես և Վանի վիլայեթում, հատկապես Վան քաղաքի շրջակայքում և Շամդինա ու Գյավառ կազաներում»[87]:

Բացի նշված վայրերից, ծխախոտի մշակությունը որոշ չափով տարածված էր նաև Խարբերդի վիլայեթի Խարբերդ սանջակի Կապան-Մադեն կազայում, Դերսիմի սանջակում, Վանի վիլայեթի Ոստանա հովտում և Սվազի վիլայեթի Թոքատ և Ամասիա սանջակներում[88]:

Հաշիշը Արևմտյան Հայաստան մուտք գործեց XIX դ. երկրորդ կեսին. Վանում 1854 թ., Մալաթիայում՝ 1860 թ., Խարբերդում՝ 1876 թ., Երզնկայում՝ 1878 թ., և այլն[89]: Բայց դրա արտադրության գլխավոր կենտրոնները Խարբերդի վիլայեթի Խարբերդ և Մալաթիա սանջակներն էին: Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ Մալաթիան տալիս էր «աֆիոն՝ խիստ ընտիր տեսակի[90]», իսկ Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Խարբերդի կազայում հաշիշը կազմում է արտահանության խոշորագույն առարկաներից մեկը»[91]:

Արևմտյան Հայաստանի գյուղացիները երկրագործությանը զուգընթաց զբաղվում էին նաև անասնապահությամբ: Նրանք անասնապահությամբ զբաղվում էին երկրի գրեթե բոլոր շրջաններում՝ որոշ տեղերում մեծ, մյուսներում՝ քիչ չափերով:

Էրզրումի վիլայեթում անասնապահական գլխավոր շրջաններ

[86] Տե՛ս, В. Т. Маевский. Ванский вилайет, военно-статистическое описание.- Тифлис, 1901.- էջ 126-127 (Հետագայում՝ Վ. Տ. Մաևսկի):

[87] Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ 150:

[88] Տե՛ս նույն տեղում, Մ. Միրախորյան, մ. Ա. էջ 113, Я. Д. Малама. Описание... էջ 110:

[89] Տե՛ս «Մասիս» 1857, օգոստոսի 8-ին, 1880, նոյեմբերի 4-ին, 1881, մարտի 29:

[90] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Ա, էջ 323:

[91] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 406:

էին՝ Էրզրումի, Բայազետի և Խնուսի սանջակները: 1863 թ. գեներալ-մայոր Լիխուտինը գրում էր, որ Բայազետի սանջակում «անասունները շատ են, և դրանք ժողովրդի գլխավոր հարստությունն են»[92]:

1909 թ. Ա-Դոն գրում էր. «ոչ մի լեռնային շրջան չի կարող խաշնարածության համար այնպիսի հարմար վայր հանդիսանալ, ինչպիսին է Բինգյոլյան շրջանը: Դա մի մեծ լեռնադրախտ է՝ իր արոտներով ու հովասուն խոտատեղիներով: Ժողովրդի մեծագույն մասը, գլխավորապես քրդերը, պարապում էին խաշնարածությամբ»[93]: Նա այնուհետև նշում է, որ Էրզրումի սանջակի Քըղիի կազայում ոչխարների ու այծերի «կաթնեղենը, միսն ու ճարպը, բուրդն ու մազը կազմում են ժողովրդի ապրուստի գլխավոր միջոցը»[94]:

Վանի վիլայեթում անասնապահությունը համեմատաբար զարգացած էր Վանի սանջակի Նորդուզ, Խոշաբ, Աղբակ, Կավրկոն, Շատախ, Կարճկան, Մոկս և Արճեշ կազաներում և նահիեներում և Հեքեարի սանջակի Զուլամերկ կազայում: 1880-ական թվականների սկզբներին Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ Նորդուզի «յուղն ու պանիրը, կաթն ու մեղրը, ոչխարն ու կովը շատ անվանի են բոլոր այդ կողմերը (այսինքն Զուլամերկում, Խոշաբում և Շատախում - Ա. Հ.), որպես է Բինգյոլինը՝ Մշո և Կարնո կողմերը: Այդ համեղությունը և առատությունը կգոյանա շնորհիվ արոտին, օդին ու ջրին»[95]: Անուհետև շարունակում է, որ Խոշաբը «ունի գեղեցիկ և արոտալիր լեռներ... Հողը բերրի, ջրավետ, կը սնուցանե բազմաթիվ և ընտիր խաշինք ու ազնիվ նժույգներ»[96]:

Աղբակը «խոտավետ է, ջուրը առատ... օդը ցրտային, հողը բերրի, կը սնուցանե ընտիր ոչխար, կով, էշն ու գոմեշ»[97]:

Մոկսը, Շատախը և Կավրկանը ունեն արտակարգ բարեբեր արոտներ, «կը սնուցանեն ընտիր և բազմաթիվ ոչխար ու այծ,

[92] Մ. Լիխուտին, նշվ. աշխ., էջ 448:

[93] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 182:

[94] Նույն տեղում, էջ 188:

[95] Գ. Սրվանձտյանց, Համով- հոտով, Կ. Պոլիս, 1884թ., էջ 66-67:

[96] Նույն տեղում, էջ 83:

[97] Նույն տեղում, էջ 84:

մասնավորապես չուռ կամ ֆիլիկ, որմե կառնուն դիվթիկ... կը գործեն գույնզգույն և թանձր ու բարակ ազնիվ շալեր. քազախիկ, աբա և այլն»[98]:

1884 թ. Միրախորյանը հիշատակում էր, որ Կարճկանում կան «հարյուրավոր պարարտ ոչխարներ, մեծամեծ դմակներով ծանրացյալ: Յուրյանց հոտերու մեջ, զոր կտիր կանվանեն, կը գտնվին երբեմն այնպիսի ոչխարներ, որոնց յուրաքանչյուրի դմակը 10-15 օխայի կշիռ ունի, զոր ոչխարը շատ անգամ յուր ետևեն չկրնար քաշել, որո համար կգործածեն սայլակներ, որս դրած կը կապեն, որով այդ սուրբ կենդանին դյուրություն կունենա յուր քայլեր առաջ տանելու»[99]:

1904 թ. Ծերունը գրում էր, որ Վանի վիլայեթի ոչխարների «մեծ մասը կերակրվում էր հարավային մասերի՝ Գավաշի, Կարճկանի, Շատախի, Նորդուզի, Բեյր-յուլ-շիբաբի, Զուլամերկի արոտներով, ավելի փոքր մասը՝ Աբաղայի դաշտի խոտերով, իսկ նույնքանն էլ՝ հյուսիսում Զիլանա ծորի ու շրջակայքի մարգագետիններով»[100]:

1909 թ. Ա-Դոն նշում էր, Շատախում «երկրագործությունը շատ թույլ չափով է զարգացած. ժողովրդի գլխավոր պարապմունքն է խաշնարածությունը և դրա հետ միասին նաև շալագործությունը»[101]:

Մոկսը «հարուստ է արոտներով ու ծաղկավետ վայրերով, որոնց շնորհիվ այստեղ զարգացած է խաշնարածությունը և մեղվաբուծությունը»[102]:

Կարճկանում «զարգացած է անասնապահությունը և առանձնապես խաշնարածությունը, մեծադմակ և պարարտ ոչխարներով առանձին հռչակ է վայելում Կարճկանը»[103]:

Բիթլիսի վիլայեթում անասնապահության գլխավոր շրջաններն էին՝ Բիթլիսի սանջակի Խիզան կազան և Մուշի սանջակի Սասուն

[98] Նույն տեղում, էջ 88:

[99] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Ա., էջ 99:

[100] Մուրճ, 1904, նո 3, էջ 48:

[101] Ա-Դո, նշվ աշխ., էջ 62:

[102] Նույն տեղում, էջ 72:

[103] Նույն տեղում, էջ 59:

ու Բուլանըխ կազաների լեռնային շրջանները: 1880-ական թվականներին Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ Խիզանի կազայի Մամռտանք և Սպարկերտ նահիեներում գյուղացիները «կսնուցանեն ընտիր ոչխար ու չուռ այծ»[104]:

1895 թ. «Մշակը» հաղորդում է, որ Սասունի լեռնային շրջաններում անասնապահությունը ավելի մեծ տեղ էր բռնում, քան երկրագործությունը[105]:

1909 թ. Ա-Դոն գրում էր, որ Խիզանի Մամռտանք և Սպարկերտ նահիեներում «ժողովրդի գլխավոր պարապմունքն է խաշնարածությունն ու շալագործությունը»[106]:

Դիարբեքիրի վիլայեթում անասնապահությունը համեմատաբար զարգացած էր Մարդինի սանջակի Զեզիրե և Մծբին կազաներում: Դ. Թեյլորը հիշատակում է, որ անասնապահությունը «ծաղկում է առանձնապես Զեզիրեի շրջագայքում»[107]:

Խարբերդի վիլայեթում անասնապահության գլխավոր շրջան էր համարվում Դերսիմի սանջակը: Այստեղի բնակիչները, ըստ Գ. Երևանյանի վկայության, «ընդհանրապես խաշնարած են: Կը խնամեն ոչխար, այծ, եզ, կով, ձի, ջորի, էշ: Ամենեն շատ այծ կը պահեն»[108]:

Սվազի վիլայեթում անասնապահական հիմնական կենտրոնը Սվազի սանջակն էր: Օրինակ՝ Ա. Ի. Գիպպիուսը նշում էր, որ այդ սանջակում «շատ զարգացած է ոչխարաբուծությունը»[109], որ այնտեղ խոշոր եղջյուրավոր անասունների քանակն, ըստ երևույթին, նույնպես զգալի է»[110]:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում հացահատիկների ցանքատարածությունների գլխավոր շրջաններ էին՝ էրզրումի վիլայեթում՝ Երզնկայի սանջակը, էրզրումի սանջակի Բասեն և Դերջան կազաները և Բայազետի սանջակի Ղարաքիլիսե և

[104] Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, էջ 89:

[105] Տես «Մշակ», 1895, մարտի 16, թիվ 31, «Մշակ», 1889, Հուկիսի 27, թիվ 83:

[106] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 91:

[107] MGAT.- էջ 180:

[108] Գ. Երևանյան, Պատմության Չարսանճագի հայոց, Պեյրութ, 1956, էջ 86 (հետագայում՝ Գ. Երևանյան...):

[109] А. И. Гиппкус, նշվ. աշխ. էջ 29:

[110] Նույն տեղում, էջ 30:

Ալաշկերտ կազաները, Բիթլիսի վիլայեթում՝ Մուշի սանջակի Բուլանըխ և Մանազկերտ կազաները և Բիթլիսի սանջակի Ախլաթ կազան, Վանի վիլայեթում Վանի սանջակի Արճեշ, Կարճկան, Ալջավազ, Գավաշ, Թիմուր, Բերկրի, Խոշաբ և Հայոց Ձոր կազաներն ու նահիեները, Դիարբեքիրի վիլայեթում՝ Բալու կազան, իսկ Սվազի վիլայեթում՝ Թոքատի սանջակի Զիլե ու Նիքսար կազաները:

Բրնձի ցանքատարածություններով աչքի էին ընկնում. էրզրումի վիլայեթի Թորթում նահիեն, Վանի վիլայեթի Զուլամերկ կազայի ցածրադիր շրջանները, Դիրաբեքիրի վիլայեթի Մծբին կազան, Սվազի վիլայեթի Ամասիայի սանջակի դաշտավայրային մասերը, Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակը և Խարբերդի վիլայեթի Խարբերդի դաշտը:

Այգեգործության գլխավոր շրջաններն էին՝ էրզրումի վիլայեթում՝ էրզրումի և մասամբ Երզնկայի ու Խնուսի սանջակները, Վանի վիլայեթում՝ Նատախը, Արճեշը, Ալջավազը, Զուլամերկը, Ոստանը և հատկապես Վան քաղաքն իր շրջակայքով, Բիթլիսի վիլայեթում՝ Բիթլիսի, Մուշի, Սղերդի և Գենջի սանջակները, Դիարբեքիրի վիլայեթում Արղան-Մադենի սանջակի Բալու կազան, Խարբերդի վիլայեթում՝ Խարբերդի և Մալաթիայի սանջակները, Սվազի վիլայեթում՝ Ամասիայի սանջակը:

Բամբակենու գլխավոր շրջաններն էին՝ Բիթլիսի վիլայեթում՝ Մուշի սանջակի Բերդակ նահիեն, էրզրումի վիլայեթում՝ Երզնկայի հարթավայրը, Խարբերդի վիլայեթում՝ Խարբերդ և Չարսանճագ կազաները, Դիարբեքիրի վիլայեթում Բալու կազան, հատկապես նրա Մազրատ նահիեն:

Շերամապահությունը տարածված էր Խարբերդի վիլայեթում՝ Խարբերդի կազայում, Սվազի վիլայեթում՝ Ամասիայի սանջակում, Դիարբեքիրի վիլայեթում՝ Դիարբեքիր քաղաքում, նրա շրջակայքում և Բալույում:

Ծխախոտի մշակության գլխավոր շրջաններն էին՝ Բիթլիսի վիլայեթում՝ Բիթլիս և Մուշ սանջակները, Վանի վիլայեթում՝ Հեքեարի սանջակի Զուլամերկ ու Շամդինա կազաները, էրզրումի վիլայեթում՝ էրզրում և Երզնկա սանջակները:

Հաշիշի ցանքատարածությունները կենտրոնացված էին գլխավորապես Խարբեդի վիլայեթում՝ Խարբերդ և Մալաթիա սանջակներում:

Անասնապահության գլխավոր շրջաններն էին՝ էրզրումի

վիլայեթի Էրզրում, Բայազետ և Խնուս սանջակները, Վանի վիլայեթում՝ Հեքեարի սանջակի Զեուլամերկ կազան և Վանի սանջակի Նորդուզ, Խոշաբ, Աղբակ, Կավրկան, Շատախ, Կարճկան, Մոկս և Արճեշ կազաներն ու նահիեները, Բիթլիսի վիլայեթում՝ Բիթլիսի սանջակի Խիզան կազան և Մուշի սանջակի Սասուն ու Բուլանըխ կազաների լեռնային շրջանները, Դիարբեքիրի վիլայեթում՝ Մարդինի սանջակի Զեզիրե և Մծբին կազաները, իսկ Խարբերդի վիլայեթում՝ Դերսիմի սանջակը:

Գյուղատնտեսական արդյունքների արտադրության ուսումնասիրությանն անդրադառնալիս նախ և առաջ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում, չի տարվել այդ ուղղությամբ բավարար, գիտական սկզբունքներով մշակված վիճակագրություն: Ճիշտ է, պատմական աղբյուրներում և գրականության մեջ հաճախ հանդիպում ենք թուրքական «սալնամեներից» վերցրած անգամ զանգվածային բնույթի տվյալներ, սակայն դրանք արժանահավատ չեն, քանի որ իշխանությունները, գյուղացիներից շատ հարկեր գանձելու նպատակով, նրանց բերքը կամ անասունների գլխաքանակը եղածից շատ են ներկայացրել: Օրինակ՝ 1875թ. Էրզրումի սանջակում, ըստ պաշտոնական «սալնամեի», 36.622 գյուղացիական տնտեսություններն արտադրել են 5.702.166 փութ ցորեն[111]: Եթե ընդունենք, որ դրա կեսի չափ էլ նրանք արտադրել են գարի[112], ապա կստացվի մոտ 8,5 միլիոն փութ ցորեն ու գարի: Բաժանելով այդ գումարը տնտեսությունների վրա, կտեսնենք, որ յուրաքանչյուրին կհասնի ավելի քան 232 փութ, կամ յուրաքանչյուր անձին (ընդունելով, որ յուրաքանչյուր տնտեսություն բաղկացած է 7 շնչից[113])՝ 33.1 փութ: Մինչդեռ Եվրոպական Ռուսաստանի հացառատ շրջաններում, որտեղ գյուղացիներն ավելի շատ հող ունեին քան Էրզրումի սանջակում, ուզեին նաև նյութական շահագրգռվածություն, անձի և գույքի ապահովություն, ըստ Վ. Ի. Լենինի բերած տվյալների՝ այդ նույն ժամանակաշրջանում յուրաքանչյուր շնչին հասնում էր մոտ 20 փութ հացահա-

[111] Տե՛ս Я. Д. Малама. Средства ... էջ 10:

[112] Այդ ենթադրության համար հիմք կարող է ծառայել այն փաստը, որ 1871 թ. նույն սանջակում արտադրվել է 4.344.780 փութ ցորեն և 2.482.700 փութ գարի: Տե՛ս Я. Д. Малама, Описание... էջ 108-109:

[113] Տե՛ս Ա-Դո, նշվ. աշխ., էջ 235:

տիկ[114]: Այդպիսի տարբերությունը պարզապես անհավանական է:

Ռուսաստանի հյուպատոսների ու փոխ-հյուպատոսների(գեներալ Դեննետի, Ա. Մ. Կոլյուբակինի, Ֆ. Գրյազնովի և ուրիշների), ինչպես նաև ֆրանսիացի ուսումնասիրող Վիտալ Քինեյի բերած տվյալները նույնպես արժանահավատ չեն, քանի որ վերցված են մեծ մասամբ թուրքական պաշտոնական սալնամեներից[115] և հակասում են միմյանց: 1880-ական թվականներին ներքոհիշյալ սանջակներում յուրաքանչյուր շնչի միջին հաշվով արտադրվել է[116].

Սանջակներ	Ըստ Վ. Քինեի	Ըստ գեն. Դեննետի
Էրզրում	19,8 փութ	38,9 փութ
Երզնկա	26,1 փութ	41,8 փութ
Բայազետ	30, 2 փութ	74,2 փութ

Տարբերությունն ակնհայտ է: Այդ տարբերությունը մեծ է նաև նրանց՝ անասնապահությանը վերաբերող տվյալներում: Օրինակ՝ Բայազետի սանջակում, ըստ Վ. Քինեի, 1880-ական թվականներին յուրաքանչյուր 100 հոգուն հասնում էր միջին հաշվով 280 գլուխ, իսկ ըստ Ա. Մ. Կոլյուբակինի՝ 180,7 գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն[117]:

Սակայն ռուս հյուպատոսների և Վ. Քինեյի բերած տվյալները եթե նույնիսկ արժանահավատ լինեին, այնուամենայնիվ, հնարավորություն չեն տալիս ներկայացնելու Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսական արտադրությունը ամբողջ դինամիկայով, որովհետև վերաբերում են գերազանցապես 80-ական թվականներին: Իրերի նման վիճակը պարտադրում է մեզ խուսափել նրանց տվյալներից և դարձյալ վերցնել ժամանակա-

[114] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, 307 /ընդունելով՝ 1չետվ=8 փթի/:

[115] Ֆ. Գրյազնովը գրում էր. «Վ. Քինեյի երկերում բերված թվերը համարյա ճշգրիտ համընկնում են թուրքական սալնամեների տվյալներին. Էրզրումի վիլայեթի վերաբերյալ տվյալներն իրավունք են տալիս ենթադրելու, որ Վ. Քինեն մյուս վիլայեթների վերաբերյալ նույնպես օգտվել է թուրքական պաշտոնական աղբյուրներից: Այստեղից պարզ հետևում է, որ Վ. Քինեի՝ անասնապահության մասին տված հանրագումարները լրիվ չեն համապատասխանում իրականությանը, ընդ որում, եթե մի դեպքում դրանք չափազանցացնում են, մյուսում՝ ընդհակառակն, նվազեցնում են իրականությունը» (տե՛ս էջ 161-162):

[116] Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ 138-139:

[117] Նույն տեղում, էջ 155:

կիցների ու ականատեսների հաղորդած զանգվածային վկայությունները:

Ռուս-թուրքական պատերազմից և հատկապես 90-ական թվականների հայկական ջարդերից հետո հացահատիկների արտադրությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ակնհայտորեն կտրուկ կրճատվում է: 1890-ական թվականների վերջերին Վ. Տ. Մաևսկին նշում էր, որ Վանի վիլայեթում մեկ տարվա ընթացքում (1895-1896) ցորենի ու գարու ցանքատարածությունները կրճատվել են կիսով չափ[118]:

1904 թ. ռուսական սահմանամերձ զորքերի ջոկատներից մեկի հրամանատար Մինկևիչը հաղորդում էր, որ Էրզրումի վիլայեթի հյուսիսային մի շարք շրջաններում հացահատիկային բույսեր ցանվում են «չափազանց սահմանափակ քանակությամբ»[119]:

1907 թ. Էրզրումում ռուս գեներալ-հյուպատոսը գրում էր, որ հացահատիկների բերքը նախորդ տարիների համեմատությամբ քիչ է հավաքվել Բասենում 45%-ով, Թոփխանեում՝ 50%, Օվայի հովտում՝ 25%-ով, Բայբուրդում՝ 30%-ով, իսկ Խնուսում և Բուլանըխում դրանց ցանքատարածությունները կրճատվել են 20%-60%-ով[120]:

1908 թ. Վանում ռուսաստանի փոխհյուպատոս Ռ. Տերմենը նշում էր, որ Վանի վիլայեթում «հայ բնակչությունը, նեղություն կրելով քրդերի թալանից, առանձնապես հոգ չի տանում իր ցանքատարածությունների ընդարձակման ուղղությամբ»[121]: Իսկ մեկ տարի անց շարունակում էր. «Տեղի բնակչությունը չի մեծացնում իր ցանքատարածությունները, այլ սահմանափակվում է այնքանով, որ կբավարարի սեփական սպառման կարիքները»[122]:

1912 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ Վանի վիլայեթում՝ սկսած 1895 թ., «ցանքսերը պակսել են և հացի գինը բարձրացել

[118] Տե՛ս В. Т. Маевский. Ванский вилайет, военно-статистическое описание.- Тифлис, 1901.- էջ 115-116:

[119] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 310, թթ. 368-369:

[120] Տե՛ս АВПР, ф. "Посольство в К-поле", 1907.- д. N 2675а.- ЛЛ. 60-61:

[121] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 78, տե՛ս նաև АВПР, ф. "Посольство в К-поле", 1908.- Д. № 1595.- թ. 55:

[122] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 272:

է, ...երկրագործությունը չի ծաղկում քյուրտերի թալանների պատճառով»[123]:

Ամենայն հավանականությամբ, հացահատիկային ցանքսերն ու արտադրությունը կրճատվում էին ավել կամ պակաս չափերով նաև երկրի մնացած վիլայեթներում: Բացի հացահատիկներից, Արևմտյան Հայաստանում նվազում էր նաև այգեգործական մշակությունների, ինչպես նաև հատապտուղների ու մրգերի արտադրությունը: 1901 թ. Բաբկեն Վարդապետը գրում էր, որ Մուշի դաշտում մյուլթեզիմները «պարտեզներու, այգիներու բանջարեղեններեն ու պտուղներեն ծանր տուրք կը պահանջեն և գյուղացին այս պատճառով դադրեցուցած է ասոնց մշակությունը»[124]:

1904 թ. Ծերուկը նշում էր, որ Վանի վիլայեթում, այդ թվում նաև Վան քաղաքում ու նրա շրջակայքում այգեգործությունը «ետ է մնացել և խիստ աննշան վիճակի մեջ է»[125]:

1914 թ. Մ. Հարությունյանը հիշատակում էր, որ «այգեգործությունը չի զարգանում, որովհետև ազգաբնակչությունը ապահով չէ»[126]:

1909 թ. Ա-Դոն գրում էր, որ Մուշի դաշտում «հայը միանգամայն ձեռք է վերցրել բոստաններ ու այգիներ մշակելու զբաղմունքից. նրա վրա այնքան ապօրինի տուրքեր են բարդել, որ այգին ու բոստանը ոչ միայն օգուտ չեն բերի, այլև պատուհաս կդառնան տիրոջ գլխին»[127]:

Պակասում էին նաև յուղատու բույսերի ցանքատարածություններն ու, հետևաբար նաև, դրանց արտադրությունը: Այսպես, 1897 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ Վանում կա միայն 8-10 ձիթհանագործարան, «մինչ երբեմն քանի մը տասնյակներով կը հաշվվեին, բոլորը հսկա գործարանատերեր, և գնալով ալ այս արհեստավորներ միշտ պակսելու վրա են»[128]:

[123] Հորիզոն, 1912, դեկտեմբերի 28, թիվ 288:

[124] Դրոշակ, 1901, թիվ 1, 26:

[125] Մուրճ, 1904, թիվ 3, էջ 50:

[126] Հորիզոն, 1914, հոկտեմբերի 4, թիվ 219:

[127] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 102:

[128] Բյուզանդիոն, 1897, մարտի 17:

1906 թ. մի այլ հաղորդման մեջ նշվում էր, որ Խարբեդի վիլայեթում «տեղական ձեթի գործածությունը թեև գավառի շատ մը անկյուններուն մեջ տակավին մեծ տեղ կ'գրավե, սակայն Խարբերդեն կամաց-կամաց կ'հրաժարի, որով 5000 սնտուկ քարյուղ կ'ստանանք Կովկասեն 2500 ոսկի արժողությամբ»[129]:

Թուրքական կառավարությունը 1860-ական թվականներին ձեռնարկեց մի շարք միջոցառումներ բամբակի արտադրության զարգացման համար: 1862 թ. հրատարակվեց օրենք՝ բամբակագործներին աշարից ազատելու մասին, 1863 թ. թույլատրվեց ներմուծել առանց մաքսի բամբակազտիչ մեքենաներ, իսկ 1866 թ. գյուղացիներին ձրի բաժանվեց ամերիկյան բամբակի սերմ: Շնորհիվ այդ միջացառումների բամբակի արտադրությունը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում որոշ չափով աճեց: Սակայն, երբ Ամերիկայում դադարեցին քաղաքացիական կռիվները և ամերիկյան բամբակը նորից ողողեց եվրոպական շուկան, և Եվրոպայի տեքստիլ ապրանքները թափանցեցին Թուրքիա՝ ընդհուպ մինչև նրա Արևելյան տարածքները և շուկայից դուրս մղեցին տեղական տեքստիլ ապրանքները, բամբակի արտադրությունը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում անկում ապրեց: 1901 թ. մի թղթակից գրում էր, որ Թուրքիայում, ասել է թե նաև Արևմտյան Հայաստանում, բամբակի «արտածումը տարվե տարի կպակսի. 16 միլիոն քիլոկրամեն 9 միլիոն իջած է»[130]:

1904 թ. մի այլ թղթակից, խոսելով կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին շերամապահության զարգացման ուղղությամբ, գրում էր. «Նմանօրինակ միջոցներ նույնպիսի վերածնություն մը մի՞թե չեն կրնար պարգևել նաև մեր բամբակագործ ճարտարության»[131]:

Շերամապահությունը Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 50-ական թվականներին սկսեց որոշ չափով աշխուժանալ, որը կապված է վանեցի մի խումբ պանդուխտների գործունեության հետ: 1852 թ. այդ պանդուխտները, Կ. Պոլսից վերադառնալով հայրենիք, Ավանց գյուղում գնում են հողամաս, տնկում թթենիներ, փորձեր են կատարում շերամապահության զարգացման ուղղությամբ և զգալի հաջողությունների են հասնում[132]: Աղաներն ու բեյերը, տեսնելով նրանց հաջողությունը, սկսում են նույնպես զբաղվել շերամապահությամբ: Մի հաղորդման մեջ նշվում էր, որ շերամապահության շնորհիվ շեյխ Զալալեդդին իր ընտանիքի անդամներին ու դուլամներին «աշխատավոր մշակ էր արել»[133]: Շեյխը տարեկան վարձում էր 30 օրավարձու մշակ:

Սակայն 60-ական թվականներին տարածված շերամաորդի հիվանդությունների պատճառով շերամապահությունը ինչպես ասիական մի շարք երկրներում, այնպես և Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում արագորեն անկում է ապրում: 1864 թ. ականատեսներից մեկը գրում էր. «Ոմանք իրենց շերամները բոլորովին թափեցին, ոմանք ալ հազիվ 55 կամ 40% գոռ բոժոժ կրցան առնել, նույն ատեն անողոքելի աղքատության երկյուղն զմեզ պաշարեց, ըստ որում, գլխավորապես գյուղի բնակիչքն այնու ևեթ կարող կրնան ըլլալ ավուր պարեննին հոգալու»[134]: Շերամապահությունն Արևմտյան Հայաստանում չվերականգնվեց նաև հետագա երկու տասնամյակներում: 1881 թ. մի հաղորդման մեջ նշված էր. «Դիարբեքիրի նահանգում մի քանի տարի է, որ շերամների որդերը հիվանդություն են ստացել, որով շերամաբուծությունը և մետաքսագործությունը ընկել են՝ թողնելով նույն հայ ժողովուրդը վիատության մեջ»[135]:

Սակայն 1880-ական թվականներից մետաքսամշակության զարգացումը նոր զարկ տվեց Արևմտյան Հայաստանում շերամապահությանը: 1905 թ. մի թղթակից գրում է, որ Խարբերդի սանջակում խոզակի մշակմանը «հետևողներու թիվը օր ըստ օրե կավելանա... Հողատերերե շատերը մեկմեկու նայելով ջերմ փափաքով թթենի հասցնել կ'աշխատին. ամեն կողմ թթենիի մշակություն սկսած են»[136]:

1906 թ. մի այլ թղթակից հաղորդում էր, որ Արղանա-Մադեն սանջակի որոշ շրջաններում «վերջին տարիներս ձեռնարկված է

[129] Բյուզանդիոն, 1906, ապրիլի 27:

[130] Բյուզանդիոն, 1901, հունվարի 29:

[131] Բյուզանդիոն, 1904, ապրիլի 5:

[132] Տե՛ս «Արծվի Վասպուրական», 1858, էջ 65:

[133] Մշակ, 1883. օգոստոսի 25, թիվ 115:

[134] Մասիս, 1864, հուլիսի 2:

[135] Մասիս, 1881, մարտի 23:

[136] Բյուզանդիոն, 1905, հունիսի 17:

թթենի տնկվելու», իսկ Բալու կազայում «բավականին ընդարձակ թթաստաններ ալ կան ու շերամաբուծությունը հետզհետե առաջանալու վրա է, և առևտրական կերպով մյուս գավառներն ավելի առաջ զացած են»[137]:

1910 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ Ամասիայի սանջակում շերամի հումքն աճել էր հետևյալ տեմպերով.

1907 թ. – 130.200 կիլո
1908 թ. – 180.000 կիլո
1909 թ. – 210.000 կիլո
1910 թ. – 205.000 կիլո

Այլ կերպ ասած՝ միայն երեք տարվա մեջ շերամի հումքն աճել է 75 հազ. կիլոյով[138]:

1914 թ. մի այլ հաղորդման մեջ ասվում էր. «Ամասիո խոզակի արտադրությունը տարվե-տարի կը բազմապատկվի, այնպես որ 8-10 տարվա մեջ զգալապես բարձրացած է ...»[139]:

Շերամապահության զարգացման մասին իրենց հուշերում վկայում են նաև Հարություն քահանա Սարգսյանը, Գ. Երևանյանը, Վ. Հայկը և ուրիշները[140]:

Բացի շերամապահությունից, որոշ չափով աճում է նաև ծխախոտի արտադրությունը: Այն աճում է հատկապես Վանի վիլայեթում, որտեղ Շամդինայի շեյխ Ահմադ Սըդըխը, հաշվի չառնելով «Ռեժի» ընկերության մենաշնորհային կարգավիճակը, որի մասին կասվի ստորև, վաճառում է ոչ միայն սեփական, այլ նաև գյուղացիներից գնած ծխախոտը[141]: Սակայն երկրի մյուս շրջաններում ծխախոտի արտադրությունը կտրուկ նվազում է այդ ընկերության գործունեության հետևանքով: Ի. Գոլոբորոդկոն 1913 թ. գրում էր, որ Սասունում ծխախոտի մշակությանը մեծ վնաս հասցրեց «Regie ottomans des Tabacs» ընկերության

[137] Բյուզանդիոն, 1906, ապրիլի 18:

[138] Ազատամարտ, 1910, հուլիսի 17, թիվ 336:

[139] Ազատամարտ, 1914, հուլիսի 9, թիվ 1556:

[140] Տե՛ս Հարություն քահանա Սարգսյան, Բալու, իր սովորությունները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Գահիրե, 1932, էջ 121-122, Գ. Երևանյան, Պատմություն Չարսանջակի հայոց, էջ 237, Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղեն դաշտը, Նյու-Յորք, 1959, էջ 654:

[141] Տե՛ս Վ. Տ. Մանվի, նշվ. աշխ. էջ 126-127:

մենաշնորհը, որը սահմանված է 1883թ.՝ երեսուն տարի ժամանակով[142]:

Ինչ վերաբերում է հաշիշին, ապա դրա արտադրությունը մինչև 80-90-ական թվականները շարունակում էր զարգանալ: 1879 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ Խարբերդի սանջակում հաշիշը «նոր մուտ գտած է և հետզհետե ընդլայնելու վրա է, այժմ տարին 20 հազ. օխա, իսկ մի քանի տարի վերջը մինչև ի 100 հազ. օխա արտադրելու հույս կա»[143]:

1881 թ. մի այլ հաղորդման մեջ նշվում էր, որ «Մալաթիայում աֆիոնի մշակությունը, որ գրեթե 20 տարիե ի վեր... մուտ գործած է և անոր այդ բերքը եթե չասենք Հնդկաստանի. գոնե Օսմանյան պետության մեջ եղածներու բոլորը կը գերազանցե»[144]:

Սակայն հետագա տարիներին հաշիշի արտադրությունը, չկարողանալով դիմանալ եվրոպական շուկայի մրցմանը, սկսում է նկատելի տեմպերով ընկնել: Վահե Հայկն իր հուշերում գրում էր, որ Խարբերդի սանջակի Թլկատյին գյուղում «1880-1885-ի ատենները... արտերում գրեթե կիսուն մեջ խաշխաշ կը մշակվեր և անկե կարտադրվեր աֆիոն, որուն 1 օգգան (1/4 քիլոգրամ) կը վաճառվեր 4-են 5 հնչուն ոսկի... քանի մը տարիեն գիները շատ ինկան և գյուղացին ստիպված լքեց այդ գործը»[145]:

Անդրադառնալով անասունների գլխաքանակի աճին, պետք է նշենք, որ մեր ունացած տեղեկություններն այդ հարցի վերաբերյալ իրարամերժ են: Դրանց մի մասը հաստատում է անասունների գլխաքանակի աճը, իսկ մյուսը՝ ժխտում է այն: Անասունների գլխաքանակի աճի մասին վերը մենք բերեցինք տեղեկություններ, այժմ բերենք տեղեկություններ նրա նվազեցման վերաբերյալ: 1897թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ Վանի վիլայեթում «երբեմն կպատահի տուներ, մինչև իսկ գյուղեր կը դատարկվին իսպառ անասուններե»[146]:

1904 թ. մի այլ հաղորդման մեջ նշվում էր. «ամբողջ էրզրումի վիլայեթում խոշոր եղջյուրավոր անասունների՝ հատկապես

[142] Տե՛ս Ի. Ի. Գոլոբորոդկո, նշվ. աշխ. էջ 127:

[143] Մշակ, 1879, սեպտեմբերի 29, թիվ 166:

[144] Մասիս, 1881, մարտի 29:

[145] Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 798-799:

[146] Բյուզանդիոն, 1897, մարտի 15:

եզների ու կովերի գլխաքանակը զգալի չափով քչացել է»[147]:

Գյուղերը	գոմեշ		եզ		մատակ		կով	
	1894	1909	1894	1909	1894	1909	1894	1909
Հազարտ	200	15	400	50	300	35	500	150
Մանդան	68	13	480	42	20	6	520	60
Բողազքյասան	180	4	310	12	220	-	460	37
Հասպստան	50	10	150	90	60	25	260	140
Ընդամենը	498	42	1340	194	600	66	1740	387

1909 թ. Ա-Դոն արձանագրում էր, որ Արճակի գավառում խոշոր եղջյուրավոր անասունների գլխաքանակը պակասել է հետևյալ չափերով[148]:

	Գյուղերը	Տնտեսությունները		եզ		կով և տավար		ոչխար	
		1889	1909	1889	1909	1889	1909	1889	1909
1.	Յարտխոնք	30	22	70	6	200	25	100	-
2.	Ճողրկով	60	22	120	20	500	20	500	-
3.	Խորոնք	20	10	80	6	200	100	300	40
4.	Քարձոր	60	10	100	2	500	10	1000	-
5.	Սրնձնուտ	20	17	60	14	200	60	300	40
6.	Շեխալան	90	63	120	64	700	250	1500	400
7.	Ավվաղբյուր	28	21	60	8	350	70	400	70
8.	Ղզլբաշ	135	90	150	30	2000	250	-	-
9.	Քյուրդ-մեյդան	72	27	84	10	700	180	1200	70
	Ընդամենը	515	282	844	160	5350	965	5300	620

Ինչպես տեսնում ենք, 15 տարվա ընթացքում այդ անասունների գլխաքանակի նվազումը չափազանց մեծ էր: Այդ նվազումը մեծ չափերի էր հասնում նաև Մուշի դաշտում, որը երևում է հետևյալ աղյուսակից[149]:

Մենք չունենք վիճակագրական համապարփակ տեղեկություններ՝ պարզելու այն հարցը, թե հասարակության երկու հիմնական դասակարգերը՝ կալվածատերերն ու գյուղացիները որքան անասուն ունեին և որքան գյուղացիական մթերքներ էին արտադրում: Սակայն հետևյալ կցկտուր, բայց բնորոշ տվյալները կարող են որոշ լույս սփռել այդ հարցի վրա: Ա. Մ. Կոյլուբակինը նշում էր, որ Քըղիի կազայում, որն, ինչպես ասվեց, Էրզրումի վիլայեթի անասնապահական խոշոր շրջաններից մեկն էր, 1880-ական թվականներին կար 130.000 ոչխար, որոնք

[147] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521: Ջ, գ. 315, թ. 184:

[148] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 354:

[149] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 354:

պատկանում էին գերազանցապես կալվածատերերին[150]: Նա այնուհետև արձանագրում էր, որ Խարբերդի կազայում, որը գլխավորապես հացահատիկային շրջան էր, այդ նույն ժամանակաշրջանում արտադրվել է 4058482 փութ գարի ու ցորեն, որից 800546 փութը՝ կալվածատիրական, 2413068 փութը՝ սեփականատեր գյուղացիների և 844868 փութը՝ հողազուրկ գյուղացիների տնտեսություններում[151]: Այստեղից հետևություն՝ անասունների մեծ մասը կալվածատերերի ձեռքում էր, իսկ հացահատիկների արտադրության մեծ մասը՝ գյուղացիների ձեռքում: Կալվածատերերը, հենվելով իրենց տնտեսական ուժի և կառավարության կողմից ստացած պաշտպանության վրա, մեծացնում էին անասունների գլխաքանակը, իսկ գյուղացիները, որ չէին վայելում կառավարության հովանավորությունն ու օժանդակությունը, տառապում էին աղքատության ճիրաններում, ի վիճակի չէին ընդարձակել իրենց ցանքատարածություններն ու արտադրությունը: Ահա թե ինչու, անասունների գլխաքանակը ընդհանուր առմամբ աճում էր, իսկ հացահատիկի արտադրությունը՝ նվազում:

Մենք չունենք նաև թեկուզև կցկտուր տեղեկություններ գյուղատնտեսության մյուս ճյուղերի վերաբերյալ: Սակայն, ելնելով այն փաստից, որ դրանց արտադրությունը նույնպես պարբերաբար նվազում էր, կարելի է ենթադրել, որ գյուղացիական տնտեսություններն այդ բնագավառներում ևս գերիշխող դեր ունեին: Կալվածատերերը չէին կարող լցնել բնամթերքի արտադրության մեջ առաջացած բացը, քանի որ նրանց մեծ մասը ինքը չէր վարում սեփական տնտեսություն, այլ հողերը տալիս էր գյուղացիներին կիսարարությամբ:

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում որոշ փորձեր արվեցին գյուղատնտեսության վիճակը բարելավելու և առաջ մղելու ուղղությամբ: Այդ փորձերի նախաձեռնողներն ու կենսագործողները գերազանցապես հայ առևտրաարդյունաբերական բուրժուազիան էր կամ նրա շահերն արտահայտող մտավորականներն էին: Նրանք հիմնադրում էին զանազան ընկերություններ և ձգտում էին դրանց միջոցով պրոպագանդել հողի արդյունավետ օգտագործման, մշակման

[150] Տե՛ս Ա. Մ. Կոյլուբակին, նշվ. աշխ., էջ 63:

[151] Նույն տեղում, էջ 417-419:

եղանակները, նպաստել գյուղատնտեսական մթերքների որակի և քանակի աճին, կատարելագործել երկրագործական աշխատանքները և այլն: Օրինակ, 1853 թ. Վանում հիմնադրվում է մի ընկերություն, որի նպատակն էր ծաղկեցնել վիլայեթի երկրագործությունը[152]:

1862 թ. Կ. Պոլսում ստեղծվում է «Արամեան ընկերությունը», որն իր առջև խնդիր է դնում ամրապնդել Արևմտյան Հայաստանի տնտեսական կապերը եվրոպական արդյունաբերական կենտրոնների հետ[153]:

1877 թ. Վանում Մկրտիչ Փորթուգալյանի ջանքերով ստեղծվում է երկրագործական ընկերություն, որի նպատակն էր «Վանեն ուշիմ և հարմար պատանիներ առաքել Եվրոպայի երկրագործական վարժարանները և նոցա միջոցով երկրագործությունը ծաղկեցնել Վասպուրական աշխարհի մեջ. հողեր գնել և ընկերությամբ պաշտպանել երկրագործության առաջադիմությունը հարստահարիչներու և հափշտակիչներու դեմ»[154]:

1880 թ. հիմնադրվում է «Ավետարանասիրաց ընկերությունը», որը փորձում է ծավալել իր գործունեությունը Մուշի Ս. Առաքելոց վանքում[155]:

Այնուհետև գյուղատնտեսական զանազան ընկերություններ են ստեղծվում նաև Խարբերդում, Երզնկայում և այլ քաղաքներում[156]:

---

[152] Մասիս, 1855, թիվ 237:

[153] Մասիս, 1864, մարտի 21:

[154] Հանդես ամսօրյա, 1958, հունվար-ապրիլ, էջ 132:

[155] Տե՛ս «Մասիս», 1880, սեպտեմբերի 23:

[156] Ուշագրավ է, որ առանց այդ ընկերությունների և դպրոցների, գյուղացիների միջից դուրս էին գալիս առանձին ինքնուս գյուղատնտեսներ, որոնք հաջող փորձեր էին կատարում գյուղատնտեսության արդյունքների բերքատվությունը բարձրացնելու ուղղությամբ: Օրինակ՝ Վանի սանջակում XX դարի սկզբին հայտնի էր Զոնյան Մկրտիչը, որի մասին մի թղթակից գրում էր, թե նա «շատ փորձեր ու գյուտեր է արել ու անում է դեռ ցանելու, ջրելու, հերկելու և այլ դժվարություններ վերացնելու համար: Այդ մարդը մի ինքնուս, գործնական գյուղատնտես է, որ զբաղվում է միայն վար և ցանքով: Այս տարվա նրա փորձերը շլացնում և ապշեցնում էին ամենքին, ես էլ նույնպես զարմացա, տեսնելով նրա ցույց տված մի հատիկ ցորենի արմատի վրա 50-70 լիք հասկեր» («Հորիզոն», 1910, օգոստոսի 28-ին, թիվ 189):

Երբեմն որոշ տեղացիներ արժեքավոր նախագծեր էին ներկայացնում ոչ պի-

Այդ ընկերությունների ստեղծմանը զուգընթաց երկրում բացվում է նաև գյուղատնտեսական մի քանի դպրոց:

Սակայն, ինչպես ընկերությունները, անպես էլ դպրոցները չկարողացան որևէ բարելավում մտցնել գյուղատնտեսության մեջ՝ Թուրքիայում իշխող տնտեսական և քաղաքական պայմանների պատճառով:

Հետագայում՝ մասնավորապես XX դ. սկզբին, Արևմտյան Հայաստան սկսեցին մուտք գործել և որոշ չափով տարածվել գյուղատնտեսական՝ այն ժամանակվա համար կատարելագործված գործիքներ ու մեքենաներ: 1910 թ. Վանի ռուս փոխհյուպատոսը գրում էր. «Գյուղատնտեսական գործիքները, հատկապես հնձիչները, որոնք ներմուծվեցին Ռուսաստանից, առաջ բերեցին այստեղ հսկայական ֆուրոր: Մեքենաների նկատմամբ եղած պահանջարկը մեծացավ և նույնիսկ Շամդինայի շեյխը դիմեց ինձ՝ խնդրելով ներմուծել նրա համար հնձիչներ»[157]:

Նույն թվի մի հաղորդման մեջ ասվում էր. «Եվրոպական հողագործական գործիքներն այս տարի բավական մուտք գործեցին Վան: Առևտրականները, առաջին անգամ լինելով, բերին Կովկասից եվրոպական ձևի երկաթե կապույտ ներկված գութաններ և արոր ու ահագին հետաքրքրություն շարժած է դարձյալ Կովկասից բերված քաղի մեքենաները, որոնք հաջող կերպով կը գործեն»[158]:

տանի հողերը ոռոգելի և պիտանի դարձնելու ուղղությամբ: Օրինակ՝ Քզեցի Հարություն Ռեյիսյանը 1893թ. առաջարկեց ոռոգել Քզգիի Խուփս գյուղից դեպի հարավ ընկած տարածությունը, յուրացնել 10-15 հազ. օրավար հող, տալ այդ հողերը շրջապատի բնակիչներին և փոքր ծախսերով վերացնել նրանց սակավահողությունը: Նա 1908թ. հեղաշրջումից հետո կրկնեց իր առաջարկությունը: Սակայն, ինչպես համիդյան, նույնպես և «Երիտասարդ թուրքերի» իշխանությունները ընթացք չտվեցին նրա մտահղացմանը: (տես «Ազատամարտ», 1909, սեպտեմբերի 16-ին, թիվ 82):

[157] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ. 521 օպ. 2, 492, թ. 260:

[158] Հորիզոն, 1910թ. օգոստորի 3-ին, թիվ 168, բերենք ևս մի քանի փաստեր գյուղատնտեսական կատարելագործված գործիքների տարածման մասին. 1913 թ. Կովալևսկին հիշատակում էր, որ Սվազի վիլայեթում հայ երկրագործները օգտագործում են կատարելագործված գործիքներ և մեքենաներ, (տե՛ս Вестник Европы. Том 6, кн. 12, декабрь.- էջ 295-296):

Իսկ Ռ. Բեկգուլյանցը նշում էր, որ Վանի վիլայեթի Բերկրի գավառակում միայն երեք ամսվա ընթացքում «Աքսայ» ֆիրմայի միջոցով տարածվել է 500 ռուսականութան, իսկ գնողները եղել են համարյա բացառապես հայերը (տե՛ս Բեկգուլյանց, նշվ. աշխ, էջ 10):

1914 թ. Կերոնը գրում էր, որ Արճեշում «ուրախալի է տեսնել, որ փայտե ծանր

Ուշագրավ է, որ հայ արհեստավորներից ոմանք, տեսնելով կատարելագործված գործիքներն ու մեքենաները, պատրաստում էին այդպիսիք և վաճառում գյուղացիներին: Գ. Սրվանձտյանցն, օրինակ, գրում էր. «Գեղերը անենքն սկսած են եվրոպական մաղով զտել կալերու ցորենները, որ քաղաքիս մեջ կշինվի: Ճարտարագործներ կան, որ դյուրությամբ կշինեն եվրոպական զենքեր, մեքենաներ և նուրբ գործիքներ, որոնցմե առաջին կը համարվին Զաքար Ճիտեճյանը և Պետրոս Տեմիրճյանը»[159]:

Մ. Ճիզմեճյանը իր հուշերում պատմում է, որ Խարբերդի սանջակի Իջմե գյուղի արհեսավոր Նաճար Օհանը 1890-ական թվականներին, լինելով Եգիպտոսում, ծանոթանում է քամհարին և, վերադառնալով հայրենիք, շինում այդպիսին: Նրա պատրաստած քամհարը շուտով տարածվում է ոչ միայն հայրենի գյուղում, այլև շրջակա շատ գյուղերում[160]:

Որոշ հայ արհեստավորներ նաև կատարելագործված գործիքներ ու մեքենաներ էին պատրաստում, առանց արտասահմանյան նմուշները տեսնելու: Օրինակ՝ Գ. Արծրունին գրում էր. «Շատ ժամանակ չէ Էրզրումի վիլայեթի մի գյուղացի հայ, առանց երբեք տեսած լինելու եվրոպական կատարելագործված մեքենաներ, ինքն իր խելքով հնարել է մի հնձելու մեքենա: Բայց իհարկե այդ գյուտն անուշադիր է թողել թուրքական կառավարությունը[161]:

Սակայն Արևմտյան Հայաստանում տիրող քաղաքական և տնտեսական պայմաններում, բնականաբար, գյուղատնտեսական կատարելագործված գործիքներն ու մեքենաները, ինչպես նաև առանձին անհատների կողմից ցուցաբերած նախաձեռնություններ

գութանների մոտ, նմուշի համար այժմ երևում են մեկ-մեկ երկաթե սիրուն գութաններ: Տեխնիկական փոփոխության են ենթարկվում նաև մյուս գործիքները, օրինակ սայլը, որի կոպիտ ու հաստ անիվներն ու սռնին միասին են պտտվում, այժմ սռնին երկաթից է շինվում, որի շուրջը անիվներն են դառնում: Այսպիսով, անասունները դյուրին են քաշում: Երևում են նաև շառավիղավոր չորս անիվներով սայլեր, երկաթե եղան, երկմատ փոցխ և այլն» (տե՛ս Հորիզոն, 1914, հոկտեմբերի 23-ին, թիվ 235):

[159] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Ա, էջ 282:

[160] Մ. Ճիզմեճյան, Խարբերդը և իր զավակները, Ֆրեզնո, Քալիֆորնիա, 1955, էջ 83:

[161] Գ. Արծրունի, նշվ., էջ 20:

յունները լայն տարածում չստացան: Կատարելագործված գյուղատնտեսական գործիքները հիմնականում ձեռք էին բերում կալվածատերերը ու լավագույն դեպքում նաև հարուստ գյուղացիները, ունևորները, իսկ աշխատավոր գյուղացիները շարունակում էին աշխատել պապերից ժառանգած հնաոճ գործիքներով: Շատերը նույնիսկ այդ էլ չունեին: Օրինակ՝ Խարբերդի կազայում, որը, Ա. Մ. Կոյուբակինի վկայությամբ, համարվում էր Հայաստանի փոխադրական միջոցներով հարուստ շրջաններից մեկը, 1880-ական թվականներին կալվածատիրական յուրաքանչյուր տնտեսությանը ընկնում էր մեկ սայլ, իսկ գյուղացիական երկու տնտեսություններին միջին հաշվով նույնպես մեկ սայլ[162]:

Ֆ. Գրյազնովը նշում էր, որ Էրզրումի վիլայեթի ներքոհիշյալ կազաներում նույն ժամանակաշրջանում յուրաքանչյուր 100 գյուղացուն ընկնում էր միջին հաշվով հետևյալ քանակությամբ սայլ[163]:

Էրզրումի կազայում	- 3.8 սայլ
Բասենի	- 7.8
Թորթումի	- 6.5
Բայբուրդի	- 10.1
Սպերի	- 13.0
Երզնկայի	- 3.0

Ա-Դոն գրում էր, որ Մշո դաշտում «շատ գյուղեր սայլի փոխարեն գործ էին ածում պալխիր անունով մի գործիք, որը սահնակի մի պարզունակ ձևն է և որը կանաչի վրայով քարշ են տալիս երկու լղարիկ եզուկներ[164]»:

Իսկ Մոկսում գյուղացին «հեռավոր լեռների ու ձորերի լանջերում ընկած փոքրիկ արտերից ցորենն ու գարին... կրում է շալակով»[165]:

Գյուղացիները հողը վարում էին հնամյա արորով ու փայտե գութանով[166], իսկ շատերը չունեին վար ու ցանքի նույնիսկ այդ

[162] Տե՛ս Ա. Մ. Կոյուբակին, նշվ. աշխ., էջ 437-438:

[163] Տե՛ս Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ 163-164:

[164] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 72:

[165] Նույն տեղում, էջ 72:

[166] Ազատամարտ, 1909, սեպտեմբերի 11, էջ 79:

պարզունակ միջոցները: Նրանք հողը փորում էին բահով, ցանում էին ձեռքով, հնձում էին նույնպես ձեռքով՝ մանգաղով ու գերանդիով և կալսում կամով՝ անասունները փռած օրանի վրայով քշելով: Ա-Դոն գրում էր, որ Մուշի դաշտում գյուղացին, որ գուրկ էր արորից ու գութանից, «հազիվ-հազ ձեռք էր բերում մի քիչ կորեկ ու գլգիլ, մի կերպ փորփրում էր գյուղին մոտիկ ընկած մի արտի կտոր, ձգում է այնտեղ կորեկի ու գլգիլի սերմ ու դրա բերքով քարշ տալիս իր թշվառ գոյությունը»[167]:

Իսկ Մոկսում նրա օրանը ծեծվում է «վրան կենդանիներ պտտացնելով. կալսելու գործիքներ այստեղ գոյություն չունեին»[168]:

Անհրաժեշ է նշել, որ այդ պարզունակ գործիքներով և հնադարյան եղանակներով էին մշակվում ոչ միայն գյուղացիների, այլ նաև կալվածատերեի հողերը, քանի որ վերջիններիս մեծ մասը, ինչպես ասվեց, սեփական տնտեսությունն ինքը չէր վարում, այլ հողերը տալիս էր կիսարությամբ: Բ. Քեչյանը 1881 թ. գրում էր. «մեր ճանչցած կալվածատեր պետերն ու աղաներն... ագրարային բարվոքումներ մտածող և ի գործ դնող չեն: Անոնք միայն սերմանելիքը կուտան, տեղ-տեղ ան ալ չեն տար, և երբ հնձոց ժամանակը գա, պայմանյալ մասն, երբեմն անկե ավելի առնելով կերթան»[169]:

Գյուղացիների անձի և գույքի անապահովությունը, տնտեսապես քայքայված և քաղաքականապես իրավազուրկ լինելը հնարավորություն չէին տալիս փոխարինելու աշխատանքային հնամյա գործիքները նորերով և բարելավելու հողի մշակումը: Նրանց ճնշող մեծամասնությունը հողը չէր պարարտացնում, իսկ անասունների աղբը օգտագործում էր որպես վառելիք: Այդ պատճառով էլ հողի բերքատվությունը ցածր էր: Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը ամենահետամնաց վիճակում էր: Թղթակիցները հաղորդում էին, որ Էրզրումի սանջակում

1904 թ. Ա. Շարիկյանը գրում էր. «Մշո գյուղացիությունը դեռևս հողը կը վարե նահապետական արոր-գութանով և դանդաղաշարժ եզ ու գոմշուկով... Հայ գյուղացու տնտեսական գործիքները, մշակելու և կալսերու ձևերը կը հիշեցնեն ալևոր դարերու նախնական մարդու ողորմելի կյանքն ու ցանցառ գոյությունը»:

[167] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 102:

[168] Նույն տեղում, էջ 72:

[169] Մասիս, 1881, հոկտեմբերի 4:

«Երկրագործությունը դեռ օրորոցին մեջ է, և երեք հազար տարի առաջվա դրությամբ կը շարունակվի՝ առանց ամենափոքր առաջադիմության»[170]:

Երզնկայի սանջակում երկարգործությունը «իր նախնական վիճակի մեջ է»[171]:

Վանի նահանգում երկրագործությունը «բոլորովին անդրջրհեղեղային պայմաններով ի կիր կառնվի»[172]:

1912 թ. Ի. Գոլոբորոդկոն գրում էր, որ երկրագործությունը հայկական վիլայեթներում «զարգացման միանգամայն ցածր աստիճանի վրա է: Հողագործության եղանակները նույնն են, ինչ որ սրանից մի քանի հարյուրամյակ առաջ»[173]:

Այսպիսով, թուրքական բռնապետական կարգերի հետևանքով Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը դուրս էր մնացել զարգացման բնականոն ընթացքից ու քայքայվում էր: Կրճատվում էին հացահատիկների, բամբակի, ծխախոտի ու բազմաթիվ այլ մշակաբույսերի ցանքատարածությունները, նվազում էր դրանց արտադրությունը, գերակայում էին պապենական գործիքները, իսկ հողի մշակումը տարվում էր ամենապարզունակ եղանակներով:

Անասնապահությունը քիչ թե շատ զարգանում էր, սակայն դրա զարգացումն ուներ տարածուն բնույթ: Թուրքական կառավարության վարած ազգայնական քաղաքականության հետևանքով որքան արագ էր նվազում երկրագործ հայերի թիվը Արևմտյան Հայաստանում, այնքան արագ էր աճում վաչկատուն և կիսավաչկատուն քրդերի թիվը, հետևաբար, նույնքան շատ էր երկրագործությունն իր տեղը զիջում տարածուն անասնապահությանը, նույնքան հետ էր մնում գյուղատնտեսությունը բնականոն զարգացումից:

[170] Մասիս, 1865, հունվարի 23:

[171] Բյուզանդիոն, 1896, դեկտեմբերի 2:

[172] Բյուզանդիոն, 1897, մարտի 15:

[173] И. И. Голобородко. Турция.- էջ 124:

Գլուխ Երրորդ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը, չնայած ընդհանուր հետամնացությանը, այնուամենայնիվ ներգրավվել էր շուկայական հարաբերությունների մեջ և ընդունել էր ապրանքային բնույթ:

Երկրի հացահատիկային գլխավոր շրջանները ցորենն ու գարին արտահանում էին արդյունաբերական կենտրոններ ու անասնապահական վայրեր: Խարբերդի կազան իր հացահատիկը արտահանում էր գերազանցապես Արաբկիր, Չարսանճագը՝ Դերսիմ, Դերջանը՝ Քըղի, Ամասիան՝ Սասուն, Բաֆրա, Չարշամբա և սևծովյան նավահանգիստներ, Ալաշկերտը՝ Վանի և Բիթլիսի վիլայեթների անասնապահական շրջաններ և այլն[1]:

Նրանց արտահանած հացահատիկների քանակի մասին որոշ պատկերացում տալու համար բերենք հետևյալ տվյալները: Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Խարբերդի կազան միայն 1884 թ. արտահանել է Արաբկիր 130000 փութ ցորեն և 50000 փութ գարի[2], իսկ Դերջանը արտահանում էր Դերսիմ տարեկան ավելի քան 16000 փութ գարի ու ցորեն[3]:

Ս. Եփրիկյանի բերած տվյալներով՝ Ամասիան արտահանում էր տարեկան 150000 պարկ այլուր Սասուն, Բաֆրա, Չարշամբա և 30000 պարկ՝ սևծովյան նավահանգիստներ[4]:

Ուշագրավ է, որ Արևմտյան Հայաստանի հացահատիկը հաճախ արտահանվում էր նաև Անդրկովկաս, հատկապես այն շրջանները, որոնք, այլ ապրանքների արտադրության պատճառով, հացի կարիք ունեին: Մի հաղորդման մեջ նշվում էր, որ Էրզրումի վիլայեթից հացահատիկ է արտահանվում Թիֆլիս[5]:

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Թորոս Ազատյանի արխիվ, թ. 47, թ. 29, 59, թ. 7, 57, թ . 88, 53, թ. 6, 49, թ. 6, 38, թ. 6, «Բյուզանդիոն», 1898, նոյեմբերի 2:

[2] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 422:

[3] Նույն տեղում, էջ 219:

[4] Տե՛ս «Բազմավէպ», 1899, էջ 458:

[5] Տե՛ս Записки Кавказского общества сельского хозяйства.- 1862.- № 3-6, отдел 3.- էջ 7:

Ըստ Յա. Դ. Մալամայի բերած տվյալների՝ Կարսի սանջակը արտահանել է Անդրկովկաս 1873 թ.՝ 412654 փութ, 1874 թ.՝ 566189 փութ, իսկ Չլդրի սանջակը՝ 1873 թ.՝ 4423 փութ, 1874 թ.՝ 5009 փութ ցորեն ու գարի[6]:

Արևմտյան Հայաստանի հյուսիսային շրջաններից հացահատիկների արտահանումը Անդրկովկաս շարունակվում էր նաև հետագա տարիներին: Փոխգնդապետ Բիկովի տվյալներով՝ 1904 թ. արտահանվել է 39422 փութ, իսկ 1911 թ.՝ 99364 փութ հացահատիկ[7]:

Ապրանքային բնույթ էր ստացել նաև բրնձի արտադրությունը: Մի հաղորդման մեջ նշվում էր, որ բրինձը Զուլամերկից արտահանվում է Մոսուլ և վաճառվում բաթմանը 10-15 դուրուշով[8]: Իսկ Վանի ռուս փոխհյուպատոսը հաղորդում է, որ Դիարբեքիրի և Բիթլիսի վիլայեթներից ներմուծվել է Վանի վիլայեթ. 1908 թ.՝ 17 հազ., 1909 թ.՝ 36 հազ., 1911թ.՝ 42 հազ. ռուբլու արժողությամբ բրինձ[9]:

Բացի հացահատիկներից ու բրնձից, շուկայական հարաբերությունների մեջ էին ներգրավվել նաև այգեգործության արդյունքները՝ հատապտուղներն ու մրգերը, որոնք արտահանվում էին սովորաբար երկրի ոչ այգեգործական շրջաններ: Արաբկիրից արտահանվում էր գերազանցապես թութ, Խարբերդից՝ սերկևիլ ու նուշ, Էրզրումի վիլայեթի մրգատու շրջաններից՝ դեղձ, տանձ, բալ ու կեռաս, իսկ Արտամետից՝ խնձոր[10]: Մ. Միրախորյանը նշում էր, թե Արտամետում բարեբեր տարին այնքան շատ խնձոր է լինում, որ «Նավերն ծովով, հայ և քուրդ գյուղացոց հարյուրավոր կարավաններ ցամաքով կը տանին ու կը տանին և չեն կարող վերջ տալ»[11]:

[6] Տե՛ս Я. В. Малама, Средства ..., էջ 6:

[7] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 310, թ. 256, Ֆ. 378, ցուց. 1, գ. 13534, թ. 42:

[8] Известия Кавказского отдела императорского русского географического общества. Т.2.- Тифлис, 1894.- стр. 175.

[9] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թթ. 69, 81, 270, Ֆ. 71, գ. 76, թ. 138:

[10] Տե՛ս Д. Тейлор. Дневник... стр. 30; Я. Д. Малама. Средства... էջ 19: Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 448:

[11] Մ. Միրախորյան, մ. բ., նշվ. աշխ., էջ 238:

Ոստանա հովիտը արտահանում էր առավելապես ծիրան ու ընկույզ, իսկ Սղերդը և Քաջբերունյաց գավառը՝ խաղող: Ա-Դոն գրում էր, որ խաղողը «առատությունով ճոխացնում է Էրզրումի շուկաները»[12]: Իսկ մի թղթակից արձանագրում էր. «Սղերդի ընտիր խաղողը ծախվում է Բաղեշի մեջ և տարածվում է շրջակա լեռնային երկրները»[13]:

Մեր ունեցած տվյալներն այն մասին, թե հիշատակված շրջաններից որքան էր արտահանվում հատապտուղ կամ միրգ, շատ աղքատիկ են: Խարբերդի կազան արտահանել է 1884 թ.՝ 250 հազ. - 300 հազ. դուրուշի նուշ[14]: 1906 թ.՝ 30250 լիտր կամ 16100 ոսկու արժողությամբ նուշ ու կուտ և 40 հազ. լիտր կամ 12000 ոսկու արժողությամբ թութ[15]:

Բնակիչները հատապտուղներից ու մրգերից պատրաստում էին չիր և արտահանում նույնպես վաճառքի: Մալաթիան արտահանում էր սալորի չիր[16], իսկ Արղանա-Մադեն սանջակը՝ «մեծ քանակությամբ չամիչ, պաստեղ և կերպ-կերպ քաղցրավենիք այլուրով շաղված ռուբ (բեքմեզ)»[17]:

Բալուն Դերսիմ[18] էր արտահանում ծիրանի, դեղձի, տանձի, շլորի, խնձորի և այլ մրգերի չիր: Իսկ Դիարբեքիրն ու Սղերդը միասին Վանի վիլայեթ են արտահանել. 1908 թ. շուրջ 17 հազ., 1911 թ. 42 հազ. թարմ ու չորացրած մրգեր[19]:

Արևմտյան Հայաստանի մրգերն ու հատապտուղները արտահանվում էին նաև Անդրկովկաս: Ըստ ռուսական հյուպատոսության աշխատակիցների բերած տվյալների՝ 1860 թ. Ալեքսանդրապոլի վրայով Անդրկովկաս է արտահանվել 7261 փութ թարմ ու չորացրած միրգ՝ 7458 ռուբլու արժողությամբ, 188 փութ թուզ՝ 376

[12] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 5:

[13] Մշակ, 1889, հուլիսի 27, թիվ 83:

[14] Ա. Մ. Կոլյուբակինը, նշվ. աշխ., էջ 448:

[15] Տե՛ս «Բյուզանդիոն», 1906, ապրիլի 27:

[16] Գ. Արվաճտյանց, Թորոս աղբար, մ. բ., էջ 323-324:

[17] Գ. Արվաճտյանց, Թորոս աղբար, մ. բ., էջ 186:

[18] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 161-162:

[19] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 75, ֆ. 71, գ. 76, թ. 136:

ռուբլու արժողությամբ և այլն[20]: Իսկ Օլթիի վրայով 1904 թ. արտահանվել է ավելի քան 8000 փութ թարմ ու չորացրած միրգ[21]:

Ապրանքա-դրամային հարաբերությունների մեջ են ներգրավվում նաև բանջարաբոստանային արդյունքները: Էրզրումի, Երզնկայի և Վանի սանջակներում գյուղացիները վաճառում էին կաղամբ, շաղգամ, կարտոֆիլ, պոմիդոր, սոխ, գազար, ճակնդեղ, ծմերուկ, սեխ, լոբի, սիսեռ, ոսպ, ռեհան, նարգիզ, համեմ, սպանախ, դդում, վարունգ, բակլա և այլն[22]: 1890-ական թվականների վերջերին Վ. Տ. Մանսկին գրում էր, որ Վանի «շուկայում աշնանը հայտնվում են մեծ քանակությամբ կաղամբ, ճակնդեղ, գազար, պոմիդոր, բադրիջան, սոխ, կարտոֆիլ, վարունգ, ծմերուկ, սեխ և այլ բանջարեղեններ: Վերջիններս լինում են շատ բարձրորակ»[23]:

Նշված սանջակներից հետ չէին մնում Ալաշկերտի հովիտն ու Խարբերդի դաշտը: Ալաշկերտի հովտում բանջարա-բոստանային արդյունքների վաճառքով հռչակված էին Խաստուրա, Կարաքիլիսա և հատկապես Մոլլա-Սուլեյման գյուղերը, որոնք, ըստ Ս. Հայկունու վկայության, վաճառում էին «Ալաշկերտի ամբողջ գյուղացոց համար ամեն տեսակ բանջարեղեն՝ սոխ, սխտոր, կարմիր բազուկ, շաղգամ, լուբյա, սիսեռ, ծմերուկ, վարունգ, խրա (սեխի տեսակ), շամամ, դդում, գետնախնձոր»[24]:

Իսկ Խարբերդի դաշտում հայտնի է Քեսերիկ գյուղը, որի բնակիչներն իրենց բանջարեղեններով «չափազանց առատությամբ և անհավատալի էժանությամբ կլեցնեին Մեզիրեի, քաղաքի (Խարբերդի - Ա. Հ.), գյուղերուն և նույնիսկ շրջակա քաղաքներու հրապարակները: Կենդանիների համար ծախված խոտը ավելի սուղ էր Խարբերդում, քան քեսերիկցիներու բանջարեղենները: Անոնց արտադրած քաղցր կաղամբը մեծ համբավ կվայելեր»[25]:

[20] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 10, գ. 1985, թթ. 22-23:

[21] Նույն տեղում, Ֆ. 521, օպ. 2, գ. 310, թ. 256, 370:

[22] Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Մանանա, էջ 96: Я. Д. Малама. Описание... էջ 110:

[23] Վ. Տ. Մանսկի, նշվ. աշխ., էջ 125-126:

[24] Ա. Հայկունի, Բագրևանդ, Զրաբաշխ գավառ, Ս. Էջմիածին, 1894, մ. Ա., էջ 101:

[25] Մ. Ճիզմեճյան, Խարբերդը եւ իր գավակները, Կալիֆորնիա, 1955, էջ 93 (հետագայում՝ Մ. Ճիզմեճյան):

Մեր ձեռքի տակ կան որոշ թվական տվյալներ բանջարաբոստանային արդյունքների վաճառքի մասին: Ավելորդ չենք համարում բերել դրանցից մի քանիսը: 1860 թ. Էրզրումի վիլայեթից արտահանվել է Ռուսաստան, գերազանցապես Անդրկովկաս 1719 փութ, իսկ 1903 թ.՝ 2132 փութ բանջարեղեն: Միայն գխտոր արտահանվել է. 1871 թ.՝ 1000 ռուբլու, իսկ 1903 թ.՝ 1590 ռուբլու արժողությամբ[26]: Վանի ռուս փոխհյուպատոսը հաշվում էր, որ Վանի վիլայեթից Էրզրումի վիլայեթ է արտահանվել՝ 1909 թ. 5400 ռուբ., իսկ 1911 թ.՝ 17000 ռուբ. արժողությամբ սխտոր[27]: Զուլամերկից արտահանվել է Պարսկաստան և Մոսուլ 1873 թ. 3000 կանթար, իսկ 1909 թ.՝ 12250 ռուբ. առժողությամբ գխտոր[28]:

Ուշագրավ է, որ թեև երկրի որոշ տեղերում՝ հատկապես քաղաքամերձ շրջաններում ու առևտրա-արդյունաբերական կենտրոններում, բանջարա-բոստանային արտադարությունը ընդհանուր առմամբ նվազում էր, այնուամենայնիվ նկատվում էր մասնակի աճ՝ ընդգրկելով նորանոր վայրեր: 1882 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Քանի տարիներ առաջ Խնուս ձմերուկ ալ չէր հասցներ, բայց հիմա գրեթե Մշո հավասար ձմերուկ կը հասցնե թե մեծությամբ և թե քաղցրությամբ»[29]:

Վ. Տ. Մանսկին նշում էր, որ Վանի շրջակայքում «վերջին ժամանակներս գյուղական կենցաղում բանջարաբուծությունը սկսել է գրավել նշականալից տեղ»[30]:

Բանջարա-բոստանային արդյուքների արտադրությունն աճում էր նաև Խարբերդի կազայի Մուլ, Քարջունճ և Ծովք գյուղերում: Նրանց բնակիչները վաճառում էին իրենց սեխն ու ձմերուկը մոտիկ քաղաքներում ու ավաններում[31]:

Սակայն երկրի որոշ շրջաններում բանջարա-բոստանային արդյունքների արտադրությունն ուներ բացառապես բնափակ բնույթ: Այդ տեսակետից բնորոշ էր Բալուն: 1880-ական թվականներին Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ բնակչությունը այստեղ արտադրում է բանջարեղեն «համարյա բացառապես սեփական սպառման համար»[32]:

Արևմտյան Հայաստանում ապրանքային բնույթ ուներ նաև յուղատու բույսերի և դրանցից ստացված բուսական յուղի արտադրությունը: Բնակիչները, սեփական կարիքները բավարարելուց հետո, որոշ տեղերում վաճառքի էին արտահանում ինչպես յուղատու բույսերի սերմերը, այնպես էլ նրանցից ստացված ձեթը: 1860 թ. Էրզրումի վիլայեթից Ալեքսանդրոպոլի վրայով արտահանվել է Անդկովկաս 889 փութ կամ 448 ռուբլու արժողությամբ վուշի սերմ եւ 310 փութ կամ 1536 ռուբլու արժողությամբ յուղ[33]:

1866 թ. Դ. Թեյլորը հիշատակում էր, որ Դիարբեքիրի վիլայեթում արտադրվել է զգալի քանակությամբ զեյթունի ձեթ, որի մի մասը վաճառքի է արտահանվում նրա հյուսիսային շրջաններ[34]:

1872 թ. Ա. Երիցյանը նշում էր, որ Խնուսում առատորեն աճում է անիսոն, որի սերմերից պատրաստում են յուղ և ուղարկում վաճառքի դեպի Էրզրում և ավելի հեռու[35]: Իսկ Յա. Դ. Մալաման գրում էր, որ Էրզրումի վիլայեթում վուշի յուղը գերազանցապես օգտագործում են սեփական կարիքների համար և «մասամբ էլ արտահանում են Եվրոպա»[36]:

1909 թ. Վանի վիլայեթից արտահանվել է Բիթլիսի վիլայեթ 1800 ռուբլի արժողությամբ վուշի յուղ[37]:

Սակայն բուսական յուղի ապրանքայնությունն ընկնում է՝ ռուսական նավթի ներմուծման հետևանքով:

Բամբակի արտադրությունը ևս երկրի մի շարք շրջաններում ուներ բնափակ բնույթ: Բնակիչները բամբակենին ցանում էին գերազանցապես սեփական կարիքների համար: Բալուում, ըստ Ա. Ղազարյանի վկայության, գյուղացիների ցանած և հավաքած բամբակը, «լպուտները կը գզեն զայն, իրենք կը պատրաստեն

[26] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 10, գ. 1985, թ. 17, ֆ. 5, գ. 3079, թ. 5, ֆ. 521, ցուց. 2, գ. 310, թթ. 250, 259:

[27] Նույն տեղում, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 271, ֆ. 71, գ. 76, թ. 139:

[28] Նույն տեղում, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 271:

[29] Մասիս, 1882, մարտի 6:

[30] Վ. Տ. Մանսկի, նշվ. աշխ., էջ 125:

[31] Տե՛ս Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ., էջ 93:

[32] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 163:

[33] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ:

[34] Տե՛ս, МГАТ, էջ 80:

[35] Տե՛ս, А. Д. Ерицов. Список населеных пунктов бывшей Эрзрумской области, находившейся во временном управлении России.- Тифлис, 1883.- էջ 106:

[36] Տե՛ս, Я. Д. Малама, Средства... էջ 20:

[37] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 271:

մանածը, կը գործեն կտավը, զոր սովորաբար լեղակագույն ներկելէ վերջ՝ կը գործածեն իբրև հագուստ. բոլոր գյուղացիներու մեջ ընդհանրացած է այս տեղական ապրանքին գործածությունը. բոլորն ալ ատկե կը պատրաստեն իրենց հագուստները, թե՛ ծեր, թե՛ կին, թե՛ այր»[38]:

Իսկ Հարություն քահանա Սարգսյանը հանգամանորեն նկարագրում էր, թե ինչպես և ինչ գործիքներով էին Բալուի գյուղացիները մաքրում բամբակը սերմից և պատրաստում հագուստեղեն[39]:

Սակայն երկրի բամբակագործության գլխավոր շրջաններում բամբակի արտադրությունն արդեն դուրս էր եկել բնափակ շրջանակներից և ընդունել էր ապրանքային բնույթ: Խարբերդի դաշտում, ըստ մի հաղորդման, բամբակի բերքը «բավականեն ավելի լինելուն երկրեն դուրս կը խրկվի»[40]:

1886 թ. Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ Խարբերդի կազայում տարեկան արտադրվում է մինչև 20000 փութ բամբակ, որի մի մասը մշակվում է տեղում, իսկ մյուսը՝ արտահանվում է: Միայն 1885 թ. եղած 24000-25000 փութ բամբակից արտահանվել է Հալեպ 7000 փութ, իսկ Արաբկիր՝ 5000 փութ[41]:

Այս հեղինակի վկայությամբ, հայերը բամբակից պատրաստում էին բյազ և վաճառում կիսավաչկատուն ու վաչկատուն քրդերին և նստակյաց թուրք գյուղացիներին[42]:

1905 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ Խարբերդի կազան արտադրում է տարեկան 50000-60000 լիտր բամբակ, «որուն մեկ մասն հոս և մեծ մասը շրջակայքը կսպառի»[43]: Իսկ 1906 թ. մի այլ հաղորդման մեջ նշվում էր. «Խարբերդի բամբակը մեծ պատիվ կը վայելէ Սեբաստիայի, Կարինի, Տիարապեքիրի և Պիթլիսի հրապարակներուն վրա: Տարեկան 70000 լիտր կարտածե 18200 ոսկու արժողությամբ»[44]:

[38] Ազատամարտ, 1910, օգոստոսի 13, թիվ 359:

[39] Հարություն քահանա Սարգսյան, Բալու, էջ 48-52:

[40] Մշակ, 1879, սեպտեմբերի 29, թիվ 166:

[41] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 445:

[42] Նույն տեղում, էջ 446:

[43] Բյուզանդիոն, 1905, հունիսի 17:

[44] Բյուզանդիոն, 1906, ապրիլի 27:

Բացի Խարբերդի կազայից, բամբակագործությունը ապրանքային բնույթ ուներ նաև Մալաթիայի սանջակում և այլ շրջաններում: Ժամանակակիցներից մեկը գրում էր, թե Մալաթիան 1870-ական թվականների կեսերին տարեկան 10000 ոսկու արժողությամբ բամբակ է արտահանում Եվրոպա[45]:

Վանի ռուս փոխհյուպատոսը նշում էր, որ 1908 թ. Խարբերդի, Դիարբեքիրի և Բիթլիսի վիլայեթները միասին արտահանել են Վանի վիլայեթ՝ 34000 ռուբ., 1909 թ.՝ 27000 ռուբ., իսկ 1911 թ.՝ 45000 ռուբ. արժողությամբ բամբակ[46]:

Շերամապահությունը նույնպես ներգրավված էր ապրանքադրամային հարաբերությունների մեջ, որի մասին մենք իմանում ենք հետևյալ տեղեկություններից. 1866 թ. Դ. Թեյլորը հիշատակում էր, որ Արաբկիրից շերամի սերմը արտահանվում է Դիարբեքիր, Ամասիա և Կ. Պոլիս[47]:

1879 թ. մի թղթակից հաղորդում էր, որ Խարբերդի գավառում մետաքսի խոզակը ցորենի և բամբակի հետ հանդիսանում է «վաճառականության ոգին ու կենդանությունը»[48]: Վաճառականները արտահանում են խոզակը Կովկաս, Կ. Պոլիս և Եվրոպա:

1912 թ. մի այլ թղթակից նշում էր, որ Խարբերդի դաշտում «Այս տարի խոզակի բերքը նախորդեն 30 % պակաս է, սակայն խոզակի գները 25 % ավելին եղան, որովհետև տեղական ֆաբրիկատորները իրենց պետքը հոգալու համար սովորական գինեն ավելի տալով իրենց պետք եղած խոզակը ձեռք բերելու աշխատեցան. անցյալ տարի, որ խոզակը 12-20 ղուրուշ կծախվեր, այս տարի 15-25-ի ծախվեցավ. ընդհանուր բերքը 35000 քիլո հազիվ եղավ»[49]:

Ուշագրավ է, որ շերամի արտադրությունը ապրանքային բնույթ էր ստացել ոչ միայն շերամապահության գլխավոր շրջաններում, այլև այն վայրերում, որտեղ այն նոր էր մուտք գործել և կազմել էր գյուղատնտեսության երկրորդական, նույնիսկ տասնե-

[45] Տե՛ս Հայաստանի Հանրապետության արվեստի և գրականության թանգարան, Թորոս Ազատյանի արխիվ, 47, թ. 11:

[46] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521 , ցուց. 2, գ. 492, թ. 75, 270, ֆ. 71, գ. 76, թ. 138:

[47] Տե՛ս Д. Тейлор, Дневник... էջ 30:

[48] Մշակ, 1879, սեպտեմբերի 29, թիվ 166:

[49] Բյուզանդիոն, 1912, օգոստոսի 14:

որդական ճյուղերից մեկը: Վանի վիլայեթում թեև արտադրվում էր չափազանց աննշան քանակությամբ սերմ, բայց դրա մի մասը տակավին 60-ական թվականներին արտահանվում էր Կ. Պոլիս[50]:

Ծխախոտի արտադրությունն ընդհունել էր ապրանքային բնույթ հատկապես ծխախոտագործության գլխավոր շրջաններում: Նրա ապրանքայնությունը նկատելի թափով աճում էր տակավին 60-70-ական թվականներին: 1860 թ. արտահանվել է Անդրկովկաս 7089 ռուբլու, իսկ 1871 թ.՝ 43000 ռուբլու արժողությամբ ծխախոտ[51]:

Սակայն հետագայում՝ 1883 թ., երբ Ֆրանսիական «Ռեժի» ծխախոտի ընկերությունն իր ձեռքը վերցրեց ամբողջ Թուրքիայի, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի ծխախոտի առևտուրը, այդ ժամանակ ծխախոտի արտադրությունն ու ապրանքայնությունը սկսեցին նվազել: Բանն այն է, որ այդ ընկերությունը տեղական իշխանությունների միջոցով արգելում էր գյուղացիներին ծխախոտ ցանել առանց իր թույլատվության, սահմանում էր ծխախոտի ցանքատարածությունների չափը, դրոշում էր տեսակը, գինը և այլն: «Ռեժին» պարտավորեցնում էր գյուղացիներին ծխախոտը վաճառել սահմանված գներով և արտահանել իր մատնանշած վայրը: Եվ գյուղացիները «Ռեժիի» թույլտվությունն ստանալու համար հարկադրված էին ամիսներով գնալ-գալ, բախել նրա դռները՝ շատ անգամ չհասնելով շոշափելի արդյունքի: 1898 թ. մի թղթակից գրում էր. «Երկրագործն ըստ առաջնույն հեռավոր և մերձավոր վայրերե կսկսի վերստին դեգերիլ «Ռեժիի» դուռը»: «Այսօր գնա, վաղն եկուր. գալ շաբթու «եկուր»-ները կ'շարունակվին. 1-2 ամիս անցնելե վերջն (գյուղացին) օր մ՝ ալ կիմանա, թե աշխատությամբ և ծախքերով երևան բերած բերքին Ռեժիի կողմե 20 փր. կամ 1-2 ղուրուշ գին կտրվի»[52]:

1901թ. Մուշի հոգևոր առաջնորդ Բաբկեն վարդապետը գրում էր. «Ռեժին» ալ ուրիշ պատուհաս մը եղած է խեղճ գյուղացիներուն: Պաշտոնյաներն այժմ իսլամներն են. ասոնք մեծ քանակությամբ ծխախոտի ծառներ կը տանեն կը թողուն գյուղերը և փոխարեն դրամ կստանան: Ծխող և ոչ ծխող ամեն ոք պարտավոր է գնել և դրամը տալ. այս բռնությունը միայն հայ գյուղերու համար կլլա, և այսպես ամեն շաբաթ մեն մի գյուղե 50-150 և ավելի դրամ կը գանձեն»[53]:

Չնայած «Ռեժի» ընկերության և թուրք պաշտոնյաների հարուցած խոչընդոտներին՝ ծխախոտի առքը ու վաճառքն այնուամենայնիվ ավել կամ պակաս չափերով շարունակվում էր նաև 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Այդ տեսակատից աչքի էին ընկնում Վանի վիլայեթի Գավաշ, Զուլամերկ, Բեդելշաբաբ, Ոստան գյուղերը և բարձորակ ծխախոտ արտադրող այլ շրջանները: 1901 թ. Վ. Տ. Մանսկին գրում էր, որ 1890-ական թվականներին Վանի սանջակը յուրաքանչյուր տարի արտադրում էր շուրջ 200000 կգ., իսկ Հեքեարի սանջակը՝ 400000 կգ ծխախոտ[54]: Այդ վիլայեթում ծխախոտի արտադրությամբ ու արտահանությամբ հռչակված էր Շամդինան, որը միայն 1909 թ. արտահանել է մոտ 900000 ռուբլու ծխախոտ[55]:

Ուշագրավ է, որ շուկայի պահանջարկը նպաստում էր ոչ միայն բարձրորակ, այլ նաև ցածրորակ ծխախոտի վաճառքին: Ա. Շարիկյանը գրում էր. «ծխախոտի արդյունաբերության մասնագետ չլինելով՝ Մշեցին շատ վատ որակի ու գույնի ծխախոտ կարտադրե: Բայց և այնպես, այդ վատն ալ շատ կը ծախվի, որովհետև տեղին մեջ լավը չի կա»[56]:

Ծխախոտի լավ տեսակը, որը կոչվում էր «շաուր» և «կուրդա», վաճառվում էր 1 ֆունտը 50-70 կոպ., իսկ վատ տեսակը՝ 30 կոպեկով[57]:

Արևմտյան Հայաստանում, բացի գյուղատնտեսության նշված ճյուղերից, ապրանքադրամային հարաբերությունների մեջ են ներգրավվում նաև գյուղատնտեսական արդյունքները:

Հաշիշի վաճառքով աչքի էին ընկնում Խարբերդի և Մալաթիայի կազաները: Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ Խարբերդի կազայում հաշիշը «արտահանության խոշորագույն առարկաներից մեկն է. 1888 թ. Խարբերդից Ալեքսանդրետ է արտահանվել

[50] Տե՛ս «Մասիս», 1868, հունվարի 24:

[51] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 10, գ. 1985, թ. 22, ֆ. 5, գ. 3079, թ. 5:

[52] Բյուզանդիոն, 1898, ապրիլի 21:

[53] Դրոշակ, 1901, թիվ 1, էջ 26:

[54] Տե՛ս Վ. Տ. Մանսկի, նշվ. աշխ., էջ 126-127:

[55] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 271:

[56] Ազատամարտ, 1909, սպտեմբերի 24, թիվ 89:

[57] Տե՛ս Ի. Ի. Գուլոբորոդկո, նշվ. աշխ., էջ 127:

1500000 թուրքական ղուրուշի արժողությամբ հաշիշ»[58]: Սակայն հետագայում, հաշիշի արտադրության կրճատման հետ, կրճատվում է նաև դրա ապրանքայնությունը:

Անդրադառնալով անասնապահությանը՝ պետք է նշել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում շուկայական հարաբերությունների մեջ էին ներգրավված ոչ միայն բոլոր անասնատեսակները, այլ նաև անասնապահության բոլոր արդյունքները: Անասունների առքն ու վաճառքը համեմատաբար զարգացած էր Վանի, Բիթլիսի, Էրզրումի և մասամբ Դիարբեքիրի վիլայեթներում: Վանի վիլայեթում վաճառվում էին և՛ խոշոր, և՛ մանր, սակայն առավելապես մանր եղջյուրավոր անասուններ: Այդ բանում աչքի էր ընկնում հատկապես Զուլամերկը, որը տարեկան արտահանում էր մոտ 10000 գլուխ ոչխար[59]:

Զուլամերկից հետ չէին մնում նաև վիլայեթի մյուս շրջանները: Արճեշի բնակիչները մեծ քանակությամբ ոչխար ու գառ էին արտահանում երկրի զանազան վայրեր, իսկ Աղբակում նրանք, ըստ Մ. Միրախորյանի վկայության, «յուրաքանչյուր տարին հազարավոր ոչխարներ կը վաճառեն Տիգրանակերտի, Բաղդադա և այլ կողմերեն եկած թեճիրներուն»[60]:

Մի հաղորդման մեջ ասվում էր. «Ոչխարի առևտուրը այս տարի ավելի ընդարձակ չափերու հասավ: Հալեպեն, Շամեն և Սղերդեն եկող թեճիրներ, ինչպես նաև տեղացիներեն շատեր մոտ 50-55 սյուրյու ոչխար գնեցին (ամեն մեկ սյուրյուն 650–700 գլուխ), հատը 110-115 ղուրուշի: Այս գնումները հայթայթվեցան Արճեշի և Ապաղայյի շրջաներեն»[61]:

1904 թ. Ծերուկը գրում էր, որ Վանի վիլայեթից «ոչխար և այծ արտահանում էին բոլոր այն կետերից, որտեղ անասնապահությունը զարգացած է, այսինքն՝ գլխավոր նահանգի հարավային, արևելյան և հյուսիսային կողմերից, ուր քյուրդական բնակություններ կան հաստատված»[62]:

Բիթլիսի վիլայեթում անասունների վաճառքի մասին կարելի է

[58] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 448:

[59] Տե՛ս Известия Кавказского отдела императорского русского географического общества. Т. 2.- Тифлис, 1873-1874.- էջ 176:

[60] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Բ, էջ 55:

[61] Վան Տոսպ, 1913, օգոստոսի 10, մ. 345:

[62] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 20:

իմանալ հետևյալ տեղեկություններից. 1874 թ. Յա. Դ. Մալաման գրում էր, որ Մուշի և Վանի սանջակները տարեկան միջին հաշվով 70000- 80000 գլուխ միայն ոչխար են արտահանում Հալեպ, Դամասկոս, Ուրֆա, Երուսաղեմ և Կ. Պոլիս: «Ծախու անասունների ամենամեծ մասը դուրս էր գալիս Վանի ու Մուշի սանջակներից»[63]:

1895 թ. մի թղթակից հաղորդում էր, որ Սասունում «Ծախու ոչխարներից կազմվում են մեծ հոտեր, որ հետո տանում են վաճառելու Դիարբեքիր, Հալեպ և Շամ»[64]:

1890-ական թթ. վերջին Լինչը հիշատակում էր, որ Վարդո կազայի բնակիչներն իրենց անասունները վաճառում էին կամ տեղացիներին, կամ եկվոր վաճառականներին, որոնք անասունները տեղափոխում են են Դիարբեքիրի և Հալեպի տոնավաճառներ[65]:

Գրեթե նույն բանն էր հաստատում նաև Ա-Դոն, որը գրում էր, թե Վարդոյի կազայում «հոտերը պարարտացնելով՝ Զիբրանցին բուրդը քշում-տանում է մինչև Դիարբեքիր և դրա փոխարեն ոսկիներ բերում»[66]:

Էրզրումի վիլայեթը 1870-ական թվականներին, ըստ Յա. Դ. Մալամայի վկայության, տարեկան արտահանում էր միջին հաշվով 12000-15000 գլուխ կով ու եզ և 4000-5000 գլուխ գոմեշ: Բուն Էրզրումում տարեկան մորթվում էր 5000 գլուխ, իսկ Կարսում 1000 գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն[67]:

1886 թ. Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Էրզրումի վիլայեթի Քըղի կազայում «արտահանության գլխավոր առարկան ոչխարն ու բուրդն է»[68]:

1890-ական թթ. Լինչն արձանագրում էր, որ Էրզրումի վիլայեթում բավականաչափ տարածված է մանր եղջյուրավոր անասունների առևտուրը, որի կենտրոնը Խնուսն է: Այստեղ անասուն գնելու նպատակով գալիս են վաճառականներ Թուրքիայի ամենատարբեր քաղաքներից ու գյուղերից: Նրանք գնած անա-

[63] Я. Д. Малама, Описание..., էջ 115:

[64] Մշակ, 1895, մարտի16, թիվ 31:

[65] Տե՛ս, Х. Ф. Б. Линч. Армения, путевые очерки и этюды.- Тифлис, 1910.- с. 236 (հետագայում վկայակոչումը՝ Խ. Ն. Լինչ):

[66] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 151:

[67] Տե՛ս Я. Д. Малама, Средства... էջ 9, 116:

[68] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 66:

սուններից հոտեր են կազմում և տանում Դիարբեքիր ու Սիրիա[69]:

Նույնն էր հաստատում նաև Ա-Դոն: 1909 թ. նա գրում էր. «Էրզրումի շուկայի համար մսացու ընտիր ոչխարներ տալիս է Խնուսը: Դիարբեքիրից, Հալեպից և նույնիսկ Դամասկոսից գալիս են վաճառականներ հատկապես Խնուսի ոչխարի հոտերը գնելու և տանելու համար»[70]:

Դիարբեքիրի վիլայեթը տակավին 1860-ական թվականներին, ըստ Դ. Թեյլորի վկայության, մեծ քանակությամբ ոչխար էր ուղարկում վաճառքի Հալեպ, Դամասկոս ու Բեյրութ[71]: Իսկ 1880-ական թվականներին վիլայեթից արտահանվում էր տարեկան միջին հաշվով 33000 ոչխար ու այծ:

Սվազի և Խարբերդի վիլայեթներում անասունների վաճառքով զբաղվում էին համապատասխանաբար Սվազի և Դերսիմի սանջակները: Այդ վիլայեթների մնացած շրջանները ներմուծում էին: 1886 թ. Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ Խարբերդի կազայում անասնապահությունը վատ է զարգացած, որի հետևանքով անասունները ներմուծվում են Խարբերդ «հարևան շրջաններից»[72]:

1906 թ. մի թղթակից գրում էր, որ Խարբերդը տարեկան ներմուծում է՝ Կարինից 70000 գլուխ, իսկ Մուշից ու Մադենից՝ 32500 ոսկու արժողությամբ անասուն[73]:

Նույն բանն էր հաստատում նաև Մ. Ճիզմեճյանը, որն իր հուշերում գրում էր, թե Հունսիկ ավանի բնակիչները «ոչխարներն ու այծերը կը բերեին բարձր Հայքեն և Էրզրումի շրջաններեն և իրենց ընդարձակ մարգագետնին վրա արածել տալով ըստ պահանջին կը մորթեին»[74]:

Հատկանշական է, որ Արևմտյան Հայաստանից արտահանվող անասունների մեծ մասը առաքվում էր Եգիպտոս, Սիրիա, Լիբանան և Կ. Պոլիս, իսկ մնացածը՝ Ռուսաստան, գերազանցապես՝ Անդրկովկաս: Ըստ Վանի ռուս փոխհյուպատոսի բերած տվյալների՝ 1908 թ. Վանից արտահանվել է 908000 ռուբլու արժողությամբ

[69] Տե՛ս Խ. Ն. Բ. Լինչ, նշվ. աշխ., էջ 239-240:

[70] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 182:

[71] Տե՛ս MГAT, էջ 80:

[72] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 450:

[73] Տե՛ս «Բյուզանդիոն», 1906, ապրիլի 27:

[74] Տե՛ս Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ., էջ 72:

անասուն, որից 874600 ռուբլու արտահանվել է Սիրիա և Եգիպտոս, 4000 ռուբլու՝ Դիարբեքիր, 13000 ռուբ.՝ Էրզրում, 4000 ռուբլու՝ Բիթլիս և 13000 ռուբլու արժողությամբ՝ Ռուսաստան[75]:

Որպես անասնապահության արդյունք՝ վաճառքի էր հանվում խոշոր և մանր եղջյուրվոր անասունների մորթին. հատկապես առաջատար էին Էրզրումի և Վանի վիլայեթները: Ըստ ոչ լրիվ տվյալների՝ Վանի վիլայեթից 1908 թ. արտահավնել է 58072 ռուբլու արժողությամբ կաշի ու մորթի, որից 52972 ռուբլու՝ Ֆրանսիա, 5100 ռուբլու՝ Ռուսաստան»[76]:

Ուշագրավ է, որ բնակիչները բացի ընտանի կենդանիներից, վաճառքի էին հանում նաև վայրի կենդանիների մորթիները: Նրանցից ոմանք մասնագիտացել էին վայրի կենդանիների որսի և դրանց մորթիների վաճառքի մեջ: 1890 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ Վասպուրականի Զեռնակ և այլ գյուղերի բնակիչները որսում են գայլ, աղվես, վարազ և այլ կենդանիներ ու մորթին վաճառում են Վանում: «Մի ձմեռվա ընթացքում շուրջ 5000-6000 զանազան մորթիներ են մտնում Վան և Վանից էլ գնում այլ քաղաքներ»[77]:

1898 թ. մի այլ հաղորդման մեջ նշվում էր, որ Էրզրումի վիլայեթում «կես դար առաջ երեվայրիք բազում էին մեր լեռներուն մեջ, քան հիմա: Քանզի մուշտակի գործածությունը երթալով կառաջանա: Առաջ, եթե մեկ մարդ կհագներ, հիմա՝ հարյուր մեկ: Առաջ աղվեսի մորթը ճերմակ շան մորթեն շատ զանազանող չկար.., իսկ հիմա ճրագով կփնտրին. բազում որսորդք իրենց շնիկներն, բարուկներն հրացանի հետ մեկտեղ առած ընկած են աղվեսի, կուզի, կզաքիսի, ջրշան, գայլի, նապաստակի, քավթարի և այլոց ետևեն»[78]:

Էրզրումում կար առնվազն 4-5 մորթու վաճառական, որոնցից յուրաքանչյուրը տարեկան միջին հաշվով 50000 վայրի կենդանիների ու գազանների մորթի էր արտահանում Ռուսաստան Կարսի վրայով[79]:

[75] Ванский вилайет.- Москва, 1910.- էջ 4:

[76] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց., 2 գ., 492 թթ., 76, 77, 267, 271 ֆ., 10 գ., 1985 թ., 120 ֆ., 71 գ., 76թ, 139:

[77] Մշակ, 1890, ապրիլի 19, թիվ 43:

[78] Բյուզանդիոն, 1898, հունվարի 19:

[79] Բյուզանդիոն, 1898, հունվարի 19:

Որպես անասնապահության արդյունք՝ վաճառքի առարկա էին դարձել նաև ոչխարի բուրդն ու անկորյան այծի մազը: Այդ այծը, որն ուներ համեղ միս, բարձրորակ ու նուրբ մազ, տակավին միջնադարում Հայկական լեռնաշխարհից տարածվեց փոքր Ասիայի զանազան շրջաններ ու լայն զարգացում ստացավ Անկարայի մոտերքում, այդ պատճառով էլ կոչվեց անկորայի այծ: Նրա մազը և բուրդը լայն սպառում ունեին: 1863թ. Դ. Թեյլորը նշում էր, որ Դիարբեքիրի վիլայեթից արտահանվել է 70000 ֆունտ ստերլինգի բուրդ և 20000 ֆունտ ստերլինգի անկորյան այծի մազ[80]:

1880-ական թվականներին Ա. Թոխմախյանը նշում էր, որ Զուլամերկի «լեռներում արածում են ոչխարաց հոտեր և այծերի ընտիր տեսակ՝ չուռ անունով, որի մազը «կեաժ» վաճառվում է Եվրոպայում»[81]:

Ապրանքային բրդի ու մազի փոքր մասն էր մշակվում Արևմտյան Հայաստանի ներսում, մեծ մասն արտահանվում էր Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա և չնչին քանակությամբ Ռուսաստան: 1889 թ. մի հաղորդման մեջ նշվում էր. «բուրդը արտահանվում է մեծ մասամբ Եվրոպա, իսկ մի մասն էլ տեղում է մշակվում»[82]:

Որպես անասնապահության արդյունք՝ ներքին և արտաքին շուկայում լայն սպառում ուներ նաև կաթնեղենը՝ յուղն ու պանիրը: Նրանք նախ և առաջ վաճառվում էին երկրի ներսում: 1870-ական թվականներին, ըստ մի հաղորդման, Զուլամերկից «կովի և ոչխարի յուղը մեծ քանակությամբ արտահանվում է Մոսուլ ու Գյավեր և վաճառվում բաթմանը 35-40 ղուրուշով»[83]:

1884 թ. Միրախորյանը գրում էր, որ Կարճկանից «ի վաճառ կը տարվին ի Բաղեշ և ի Վան որոնց հետ են իրենց առևտրական հարաբերությունը պատվական յուղ, ոյր ազնվությունը վաճառողն գնորդի ցույց տալու համար «ջուրի պես խմե» կըսե, երբ յուղի համն նայելով գոհ չլինի»[84]:

Արևմտյան Հայաստանի յուղն ու պանիրը արտահանվում էր նաև Կ. Պոլիս, Թուրքիայի այլ քաղաքներ, ինչպես նաև արտա-

[80] Տե՛ս МГАТ, էջ 80:

[81] Ա. Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1884, էջ 33:

[82] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 267:

[83] Известия... Т.2.- էջ 176:

[84] Յ. Միրախորյան, նշվ. աշխ., էջ 100:

սահման: 1903 թ. արտահանվել է Ռուսաստան 582 փութ կարագ ու այլ կաթնեղեն՝ 4368 ռուբլու արժողությամբ[85]: Իսկ 1909 թ.՝ Վանի վիլայեթի Շատախ, Բաշկալի, Գավաշ կազաներից արտահանվել է Կ. Պոլիս 6300 ռուբլու արժողությամբ[86]:

Այդպիսով, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ապրանքա-դրամային հարաբերությունների մեջ ներգրավված էին Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության ոչ միայն գլխավոր ճյուղերը՝ հացահատիկային արտադրությունն ու անասնապահությունը, այլ նաև օժանդակ ճյուղերը՝ այգեգործությունը, բամբակագործությունը, շերամապահությունը և այլն:

Բնականաբար հարց է ծագում. ի՞նչ չափով էր դրանցից յուրաքանչյուրը ներգրավված ապրանքա-դրամային հարաբերություններում. այդ կարևոր հարցին պատասխանող զանգվածային վիճակագրական տվյալներ չկան: Սակայն կան անուղղակի և կցկտուր տեղեկություններ, որոնք կարող են որոշ լույս սփռել դրա վրա: Յա. Դ. Մալաման նշում էր, որ Արևմտյան Հայաստանի ներքոհիշյալ սանջակներում 1873 թ. ցորենի համախառն արտադրանքն ու դրա, այսպես կոչված, ավելցուկը արտահանվել է հետևյալ հարաբերությամբ՝ հազ. փթերով[87].

Սանջակները	ցորենի համախառն արտադրանքը	ավելցուկը
Էրզրում	5702	1313
Զեյդր	1757	266
Կարս	3041	1805
Բայազետ	453	45
Վան	4071	407
Մուշ	1819	181
Երզնկա	1423	142
Ընդամենը	18269	4162

[85] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 310, թթ. 259-260:

[86] Նույն տեղում, գ. 492, թ. 271:

[87] Տե՛ս Я. Д. Малама. Средства... էջ 18:

Աղյուսակը ցույց է տալիս, որ երկրի յոթ սանջակներում ցորենի «ավելցուկը» կազմում էր համախառն արտադրանքի 22,7%:

Յա. Դ. Մալամայի բերած այդ տվյալները հնարավորություն չեն տալիս որոշելու հացահատիկների արտադրության ապրանքայնությունը ոչ միայն այն պատճառով, որ դրանք վերցված են իրական փաստերը չափազանցնող թուրքական պաշտոնական «սալնամեներից», այլև այն պատճառով, որ չեն պատասխանում այն հարցին, թե ավելցուկի ո՞ր մասն էր արտահանվում վաճառքի:

Այլ են, սակայն, Ա. Մ. Կոլյուբակինի տվյալները, որը 1880-ական թվականների կեսերին անձամբ ուսումնասիրել է Խարբերդի կազայի հացահատիկային տնտեսությունը, համեմատական ճշտությամբ որոշել է ցորենի ու գարու տարվա միջին համախառն արտադրանքը, ավելցուկը և վաճառվող մասը: Հենց այդ տվյալների հիման վրա մենք կազմել ենք հետևյալ աղյուսակը՝ փթերով[88]:

հացահատիկների տեսակները	համախառն արտադրանքը	ավելցուկը	վաճառվող մասը
ցորեն	3536276	204716	200000
գարի	522206	119710	110000
ընդամենը	4058582	324426	310000

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ Խարբերդի կազայում ցորենի և գարու ավելցուկը կազմում էր դրանց համախառն արտադրանքի 7,9%, իսկ ապրանքային մասը՝ 7,5%: Ելնելով այն բանից, որ Խարբերդի կազան Արևմտյան Հայաստանի հացահատիկային գլխավոր շրջաններից մեկն էր, պետք է ենթադրել, որ ցորենի ու գարու ապրանքայնությունը գրեթե նույն թվերով էր արտահայտվում Խարբերդի նաև մյուս շրջաններում:

Անասնապահության ապրանքայնության վերաբերյալ մեր ձեռքի տակ կան հետևյալ տվյալները. 1908 թ. Վանի ռուս փոխհյուպատոսը նշում էր, որ Վանի վիլայեթում կա 2040000 գլուխ ոչխար ու այծ[89]: Իսկ 1910թ. մի թղթակից գրում էր, որ Վանի վիլայեթի Բերկրի, Սարա, Աղբակ, Նորդուզ, Շատախ, Մոկս,

[88] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, էջ 453-454:

[89] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2 գ. 492 թ.79:

Կարկառ և Կարճկան «գավառներից մոտ կես միլիոն ոչխար կարտահանվի Փոքր Ասիայի, Հալեպի, Ադանայի և ուրիշ վիլայեթների թեճիրներու ձեռքով»[90]: Հետևաբար, Վանի վիլայեթում, որն, ինչպես ասվեց, երկրի անասնապահական գլխավոր շրջաններից մեկն էր, մանր եղջյուրավոր անասունների ապրանքայնությունը կազմում էր դրանց ընդհանուր գլխաքանակի մոտ 25 տոկոսը: Հավանական է, որ այդ տոկոսը իրականում ավելի բարձր է եղել, քանի որ ռուս փոխհյուպատոսի բերած տվյալները վերաբերում են ամբողջ վիլայեթին, իսկ թղթակցի տվյալները՝ նրա մի քանի շրջաններին:

Բացի դրանից, առաջինի տվյալներն ընդգրկում են ոչխարների ու այծերի, իսկ երկրորդինը՝ միայն ոչխարների գլխաքանակը:

Անդրադառնալով անասնապահության արդյունքներին՝ պետք է նշել, որ դրանք 1872 թ., ըստ Յա. Դ. Մալամայի բերած տվյալների, Արևմտյան Հայաստանի ներքոհիշյալ շրջաններում արտադրվել են հետևյալ քանակությամբ (փթերով[91]):

Սանջակները	ոչխարի բուրդ	այծի մազ	ոչխարի մորթի	եզան ու գոմեշի կաշի
Էրզրում	6630	1327	26000	8684
Զլդր	502	3802	5100	2160
Կարս	843	61	31750	18610
Բայազետ	7393	1725	21100	19000
Վան	5666	2868	7092	10950
Մուշ	8137	1413	18000	5353
Երզնկա	5812	5925	3200	3300
Ընդամենը	34983	17121	204870	68057

Յա. Դ. Մալաման նշում էր, որ ստացված բրդի ու մազի մոտ 1/4-ը ծառայում էր բնակիչների անձնական կարիքներին, 3/4-ը արտահանվում է վաճառքի: Հատկապես շատ էր վաճառվում անկորային այծի մազը, որը «համարյա ամբողջովին գնում էր արտասահման»[92]:

Սակայն երկրի այլ շրջաններում, որտեղ տակավին գերիշխում

[90] Հորիզոն, 1910 օգոստոսի 3, թիվ 1968:

[91] Տե՛ս Я. Д. Малама. Средства... էջ 56:

[92] Я. Д. Малама. Средства... էջ 51:

էր բնափակ տնտեսությունը, բրդի ու այծի մազի մեծ մասը ծառայում էր բնակիչների անձնական սպառմանը: 1895 թ. մի հաղորդման մեջ նշվում էր. Սասունում «բուրդը մեծ մասամբ գնում է ընտանեկան պիտույքների համար: Բացի հագուստից, որի վրա գործածում են բուրդ, սասունցի կանայք պատրաստում են կարպետներ, փալասներ, թաղիքներ, չուալներ և երբեմն գորգեր: Այս վերջիններն ըստ մեծի մասի տարածվում են քյուրդերի մեջ»[93]:

Յա. Դ. Մալաման, դժբախտաբար, ուղղակի տեղեկություններ չի տալիս կաշվի ու մորթու ապրանքայնության մասին, սակայն հիմք ընդունելով նրա անուղղակի այն տեղեկությունները՝ ըստ որոնց էրզրումում ամեն տարի մշակվում էր 200000 ոչխարի ու այծի մորթի, որից արտահանվում էր շուրջ 100000-ը[94], կարելի է ենթադրել, որ և՛ արտադրությունը, և՛ արտահանումը զգալի են եղել:

Այգեգործության արդյունքներից ապրանքային բնույթ ուներ գերազանցապես խաղողը, իսկ մրգերը քիչ էին ներգրավված շուկայական հարաբերությունների մեջ: Վանի Այգեստան թաղամասում բնակիչները տարեկան ստանում էին 30000 լիտր խաղող, 20000 լիտր տանձ, 25000 լիտր խնձոր, 20000 լիտր ծիրան, 10000 լիտր սալոր, 200 լիտր դեղձ և այլն: Նրանք վաճառում էին միայն խաղողը, իսկ պտուղների կեսից ավելին ուտում են, մնացած փոքր մասը ծախում[95]:

Գրեթե այդպիսն էր վիճակը նաև Խարբերդի կազայում: Ըստ Ա. Մ. Կոլյուբակինի վկայության՝ այստեղ բնակիչները վաճառում էին խաղողը, որից գինի էին պատրաստում, իսկ մրգերը՝ «համեմատաբար ոչ մեծ քանակով, քանի որ հարևան շրջաններն ունեն իրենց մրգերը և հեռավոր արտահանության համար հարմար առարկա չեն: Մրգերի հսկայական մասը ուտվում է տեղում, իսկ դրանց որոշ մասը չորացվում՝ որպես պաշար»[96]:

Տեխնիկական մշակաբույսերից մեծ էր բամբակի ապրանքայնությունը: Խարբերդի կազայում, որը երկրի բամբակագործության գլխավոր շրջաններից մեկն էր, 1880-ական թվականների կեսերին արտադրվել է 20000 փութ բամբակ, որից

[93] Մշակ, 1895, մարտի 16, թիվ. 31:

[94] Տե՛ս Я. Д. Малама. Описание... էջ 115:

[95] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 35:

[96] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 448:

վաճառվել է 11000 փութ, կամ 55.0%-ը[97]: Ի դեպ՝ երկրի ոչ բամբակագործական շրջաններում բամբակի ապրանքայնությունը աննշան էր: Օրինակ՝ Երզնկայի սանջակում՝ ըստ Յա. Դ. Մալամայի վկայության, բամբակի «մեծ մասը գործածվում է տեղում»[98]:

Բայց տեխնիկական մշակաբույսերից ավելի մեծ էր շերամի ապրանքայնությունը: Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Խարբերդի կազայում, որտեղ շերամապահությունը հասել էր մեծ հաջողությունների, 1880-ական թվականներին բերքի 2/3–ը արտահանվում էր Դիարբերքիր, Մալաթիա և երկրի հարավային շրջաններ, իսկ 1/3-ը մշակվում տեղում՝ Մեզիրեի մետաքսագործական գործարաններում[99]:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության մյուս ճյուղերին, ապա դրանց ապրանքայնության մասին մենք չունենք քիչ թե շատ արժանահավատ տեղեկություններ: Ըստ երևույթին, դրանք ավելի շատ էին ներգրավված ապրանքա-դրամային հարաբերությունների մեջ, քան հացահատիկը, որն, ինչպես հայտնի է, իր նշանակությամբ «ամենուրեք և միշտ ամենից ուշ և ամենից դանդաղ է ներքաշվում ապրանքային շրջանառության մեջ»[100]:

Աճո՞ւմ էր արդյոք գյուղատնտեսական ապրանքների ապրանքայնությունը: Մեր ձեռքի տակ եղած տվյալները թույլ են տալիս ասելու, որ անասնապահության ապրանքայնությունն, իրոք, աճում էր: Դրա համար հիմք կարող են հանդիսանալ հետևյալ տվյալները: Վանի վիլայեթից արտահանվել է (ռուբլիներով[101]).

Արտահանության առարկաները	1909 թ.	1911 թ.
Ոչխար ու այծ	405000	590000
Եզ, կով ու գոմեշ	18000	65000
Ոչխարի ու այծի մորթի	50000	30000
Ոչխարի բուրդ և այծի մազ	40000	35000
Ընդամենը	513000	720000

[97] Նույն տեղում, էջ 453:

[98] Я. Д. Малама. Средства... էջ 20:

[99] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 449-450:

[100] Վ. Ի. Լենին, երկեր, Հ. 3, էջ 129:

[101] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521 ցուց., 2 գ., 492 թթ., 77, 271, ֆ.71, գ.76, թ, 139:

էրզրումի վիլայեթից արտահանվել է (ռուբլու[102]).

Արտահանության առարկաները	1911 թ.	1912 թ.
Եղջուրավոր անասուն	389500	475000
Ոչխար	1425000	1425000
Ձի ու ջորի	28500	95000
Կաշի ու մորթի	184300	210900
Ընդամենը	2027300	2205900

Այս աղյուսակները ցույց են տալիս, որ անասնապահական երկու գլխավոր վիլայեթներում անասունների ու դրանց արդյունքների արտահանությունը 2-3 տարվա ընթացքում, բացառությամբ մասնավոր դեպքերի, զգալի չափով աճել է:

Պետք է նշել, որ 1908 թ. այդ արտահանում Վանի վիլայեթում[103] ավելի մեծ էր: Սակայն 1908 թ. բարենպաստ տարի չի եղել, քանի որ աղաներից ու բեյերից շատերը, երկյուղ կրելով Թուրքիայում մոտալուտ հնարավոր հեղաշրջումից, հապճեպ վաճառում են իրենց անասունները և տեղափոխվում արտասահման: Ուշագրավ է, որ հայոց վանքերը նույնպես այդ երկյուղից վաճառում են իրենց անասունները: Աղթամարի աթոռի քարտուղար Հովսեփ Խլղաթյանը գրում էր, թե վանքի տնտեսությունից «անասուններ կը վաճառվին սովորաբար ամեն տարի, իսկ ամենախոշոր քանակությամբ վաճառված է 1908 թ. հուլիսին, երբ վանքերու հողերը տրվեցան իճարեյով և ավելորդ անասունները ծախեցան»[104]:

Շերամագործության զարգացմանը զուգահեռ աճում էր նաև շերամապահության ապրանքայնությունը: Ինչ վերաբերում է գյուղատնտեսության մյուս ճյուղերին, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց համախառն արտադրանքը նվազում էր, կարելի է ենթադրել, որ ապրանքայնությունը նույնպես նվազում էր: Մեր այս ենթադրությունն ավելի հավաստի փաստ կդառնա, եթե պարզենք, թե ովքեր էին վաճառում գյուղատնտեսական արդյունքները:

Արևմտյան Հայաստանում գյուղատնտեսական արդյունքները հիմնականում վաճառում էին կալվածատերերը: Նրանցից

[102] Տե՛ս «Հորիզոն», 1914, հունիսի 21, թիվ 133:

[103] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 77:

[104] Ազատամարտ, 1909, հոկտեմբերի 19, թիվ 110:

ոմանք վաճառում էին միայն հացահատիկ: Օրինակ՝ Խարբերդի վիլայեթում Խոշմատյանը տարեկան մոտ 500 սոմար ցորեն ու գարի էր արտահանում Գենջ, Ճապաղջուր և այլ շրջանները[105]: Էրզրումի վիլայեթում հացահատիկներ վաճառում էին Նազիմ Իբրահիմ Օղլին, Մամեդ Իբրահիմ բեկը, Սաֆիր Մուսթաֆա աղան, Ձիվեր Ալի Բեյը և ուրիշները[106], իսկ Վանի վիլայեթում Մուսեին փաշան, որը համարյա ողջ Պատնոսի տերն ու տնօրենն էր: Ականատեսներից մեկը նրա մասին գրում էր, թե Հուսեին փաշան «շատ հարուստ է, հացահատիկի մեծ առեւտուր է անում և ավելի շատ նման է վաճառականի, քան՝ մարտիկի»[107]:

Մյուս կալվածատերերը վաճառում էին և՛ ծխախոտ, և՛ բրինձ, և՛ բամբակ, և՛ գյուղատնտեսական այլ արդյունքներ[108]: 1912 թ. մի հաղորդման մեջ նշվում էր. «Պետք է նկատել, որ վերջին ժամանակներս շատ հողատերեր՝ միրեր, սկսեցին եռանդուն կերպով զբաղվել երկրագործությամբ, բամբակագործությամբ, ծխախոտագործությամբ և բրնձի մշակությամբ՝ աշխատեցնելով քրիստոնյա հայ-ռայաներին, քանի որ այդ զբաղմունքների համար քուրդ ռայան անընդունակ է»[109]:

Սակայն աղաների մեծ մասը հիմնականում զբաղվում էր անասունների վաճառքով: 1897թ. Վանի վիլայեթի քրդական ներքոհիշյալ ցեղերը տարեկան վաճառել են հետևյալ քանակությամբ ոչխար և գառ[110]:

Հայդարանցիք	45 000 գլուխ
Շավգվիք	5000 "
Մուկուրցիք	6100 "
Մըլանցիք	11000 "
Թակուրցիք	5500"
Շեմսկցիք	3400 "
Շիտանցիք	5000 "
Մեհմեդ Բիբանցիք	3500 "

Հավանական է, որ այդ անասունների զգալի մասը պատկանում էր ցեղապետերին և նրանց վասալներին, քանի որ նրանք ունեին մեծ հոտեր: Օրինակ՝ գրավցիների ցեղապետ Շաքիր աղան ուներ 5000 ոչխար, «որոնց մե մասը տարվե տարի

[105] Տե՛ս Ա. Մ. Կոլուբյակին, նշվ. աշխ., էջ 143 և 165:

[106] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 521, ցուց. 2, գ. 310, թ. 384:

[107] Г. И. Термен. Отчет о полевой поездке 1907 в Ванском, Битлисском и Диарберкирском вилайетах.- Тифлис, 1909.- էջ 43-44:

[108] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 71, գ. 76, թ. 71:

[109] Նույն տեղում, գ. 73 թ. 68:

[110] Տե՛ս Բյուզանդիոն, 1897, մարտի 14:

կծախեր»[111], ժամանակակիցներից մեկի խոսքերով ասած, նա «օրինապահ ու կանոնավոր մեծ վաճառական մըն է...»[112]: Գրավցիների ցեղապետից հետ չէին մնում նաև Մուքուրցիների, Մըլանցիների, Շիտանցիների և այլ ցեղապետերը:

Բացի աղաներից, գյուղատնտեսական արդյունքներ վաճառում էին նաև գյուղացիները: Մենք ավելորդ ենք համարում բերել փաստեր այդ մասին, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ աղաների ու գյուղացիների՝ հատկապես աշխատավոր գյուղացիների համար, գյուղատնտեսական արդյունքների վաճառումը թելադրվում էր տրամագծորեն հակառակ դիրքերից: Աղաները վաճառում էին իրենց տնտեսությունները ընդարձակելու, իսկ գյուղացիները՝ հարկերն ու տուրքերը վճարելու համար: Հարություն քահանա Սարգսյանը գրում էր, թե Բալույում «գյուղացիները միայն իրենց տունին համար բավելու չափ յուղը, պանիրը, թորախը, չորթանը, թոմատը կը պատրաստեն, անկե հետո եթե անոնց մե մասը մը ավելանալու ըլլա, կը ծախեն: **Ավելի ճիշտը՝ կը ծախեն եթե շատ ստիպված ըլլան»** (ընդգծումն իմն է - Ա. Հ.), իսկ վաճառքից «առաջ եկած արդյունքը կը հատկացնեն իրենց անհրաժեշտ պետքերուն»[113]:

Մենք, ցավոք, չունենք տվյալներ այն մասին, թե աղաներն ու գյուղացիները ինչ չափով էին մասնակցում գյուղատնտեսական արդյունքների վաճառքին, բայց ելնելով այն փաստից, որ աղաները տիրում էին անասունների մեծ մասին, իսկ գյուղացիները արտադրում գյուղատնտեսական արդյունքների մեծ մասը, կարելի է ենթադրել, որ նրացից առաջինները խաղում էին գլխավոր դեր անասունների և նրանց արդյունքների, իսկ երկրորդները՝ գյուղատնտեսական արդյունքների վաճառքի մեջ: Եվ քանի որ աղաները տնտեսապես հզորանում էին, իսկ գյուղացիները՝ աղքատանում ու քայքայվում, ուստի անասնապահության ապրանքայնությունը աճում էր, իսկ գյուղատնտեսական արդյունքների ապրանքայնությունը ընկնում:

Աղաներն ու գյուղացիները իրենց արդյունքը վաճառում էին ինչպես անմիջական սպառողներին, նույնպես և գնորդ առևտրա-

[110] Տե՛ս Բյուզանդիոն, 1897, մարտի 14:

[111] Տե՛ս Բյուզանդիոն, 1913, հոկտեմբերի 9:

[112] Տե՛ս Բյուզանդիոն, 1913, հունիսի 30:

[113] Հարություն քահանա Սարգսյան, Բալու, էջ 199:

կաններին: Վերջիններս էժան գներով ձեռք էին բերում հատկապես գյուղացիների արդյունքները և թանկ գներով վերավաճառում կամ երկրի ներսում, կամ նրա սահմաններից դուրս: Նրանք թափանցել էին գյուղատնտեսության համարյա բոլոր ճյուղերը, սակայն առավել՝ անասնապահության մեջ: Դա ոչ միայն այն պատճառով, որ անասնապահությունը գյուղատնտեսության մյուս գլխավոր ճյուղերի համեմատությամբ ավելի շատ էր ընդունել ապրանքային բնույթ, այլև այն, որ անասունների տեղափոխումը հաղորդակցության անբարեկարգ միջոցների առկայության պայմաններում շատ ավելի հեշտ էր:

Վաճառականները կամ տեղացիներ էին՝ հայեր, թուրքեր, քրդեր, կամ արտասահմանցիներ՝ ֆրանսիացիներ, անգլիացիներ, գերմանացիներ և այլն: 1904 թ. Ծերուկը գրում էր. «Օտար երկրացի վաճառականները (թեջիրները) մտնում են Վանի սահմանները, ուղղակի սակարկում ոչխարատերերի հետ, տասնյակ հազարներով այծ ու ոչխար գնում և փոխադրում վաճառատեղերն ու ծախում»[114]: Նա այնուհետև շարունակում էր, որ վիլայեթի ոչխարի ու այծի «մորթ, բուրդ, գեաժ, յուղ և այլն մեծ մասամբ արտահանվում են քաղաքացի վաճառականների ձեռքով»[115]:

Վաճառականներն ունեին իրենց գործակալները, որոնք շրջում էին Արևմտյան Հայաստանի գյուղերն ու յայլաները և կատարում նախատեսված գնումներ: Նրանք բազմաթիվ անասուններ էին գնում, բտում-գիրացնում էին երկրի արգավանդ արոտներում ու մարգագետիններում և այնուհետև քշում վաճառքի[116]: 1906 թ. Ճեմիլը գրում էր, որ յուրաքանչյուր վաճառական իր գործակալներով տարեկան գնում է «առնվազն 2-3 բեյուկ, ջոկ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 700-1000 գլուխեն, կան այնպիսիները, որոնք մինչև 50-60 բեյուկ կը գնեն»[117]:

Որոշ վաճառականներ երբեմն այնքան շատ անասուն էին գնում, որ քաղաքային բնակչությունը զրկվում էր մսից: Նույն հեղինակը նշում էր, թե 1900-ական թվականներին նրանց այդպիսի գործունեության հետևանքով «բանն այն աստիճանի էր հասել, որ, ինչպես Կարինի, այնպես և ուրիշ հարակից գավառ-

[114] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 20:

[115] Նույն տեղում:

[116] Տե՛ս «Արևելք», 1884, հուլիսի 4:

[117] Երկրի Ձայն, 1906, էջ 13, թիվ 9:

ներու բնակչությունը, պարտավորվեցավ բողոքել քաղաքային վարչության՝ մսի նվազության դեմ»[118]:

Մյուս վաճառականներն ամբարում էին մեծ քանակությամբ հացահատիկ ու անբերրիության կամ սովի տարիներին վաճառում էին բարձր գներով: Աշխատավոր ժողովուրդը երբեմն սաստիկ ընդվզում էր վաճառականների այդ գործողությունների դեմ և վնաս հասցնում նրանց ունեցվածքին, երբեմն կոտորում էր նրանց:

Գյուղատնտեսական արդյունքները երկրի տարբեր մասերում և տարբեր ժամանակներում վաճառվում էին տարբեր գներով: Այդ մասին որոշ պատկերացում կազմելու համար բերենք հետևյալ տվյալները. ցորենի մեկ փութը 1872-1874 թթ. վաճառվում էր Էրզրումի սանջակում՝ 60 կոպ., Կարսի սանջակում՝ 70 կոպ., Չլդրի սանջակում՝ 47 կոպ., իսկ 1904 թ. Վանում վաճառվում էր 60-75 կոպ.[119]:

Անասունները 1871–1873 թթ. վաճառվում էին հետևյալ գներով (ղուրուշներով)[120].

Անասնատեսակներ	Էրզրում			Կարս		
	1871	1872	1873	1871	1872	1873
ոչխար	85	87	94	76-80	82	88
այծ	33	38	45	28	31	35
եզ	390-420	390-420	430	-	350	400
կով	-	290	320-330	-	270	300
գոմեշ	-	-	530-560	-	520-540	550-480
ձի	590	60	650	540	550	580
էշ	130	150	170	110	130	140

Անասունների արդյունքներն այդ նույն ժամանակաշրջանում վաճառվում էր՝ Վանի վիլայեթում 1 լիտր յուղը 60 ղուրուշով, 1 լիտր պանիրը՝ 15 ղուրուշով[121], իսկ 1882 թ. ոչխարի մորթին վաճառվում էր 6 ղուրուշով, այծի մորթին՝ 10 ղուրուշով, խոշոր եղջյուրավոր անասունների կաշին՝ 50 ղուրուշով[122]:

[118] Երկրի Ձայն, 1906, էջ 13, թիվ 9:

[119] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 30:

[120] Я. Д. Малама. Средства... էջ 33-46: Ф. «Главный Архив V-А2», 1872, д. №. 1083 л. 21.

[121] Նույն տեղում:

[122] Մասիս, 1882, հուլիսի 10:

1904 թ. Վանում 1 ֆունտ ոչխարի միսը վաճառվում էր 4-5 կոպ., 1 ֆունտ կովի միսը՝ 5-6 կոպ., 1 ֆունտ յուղը՝ 20-22 կոպ., փութ պանիրը՝ 2-2,5 ռուբ.[123]:

Գների միջև եղած տարբերությունը պայմանավորված էր ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացման մակարդակով և շրջանների՝ երկրագործության ոլորտում մասնագիտացման բնույթով:

Անհրաժեշտ է նշել, որ առևտրի քիչ թե շատ զարգացած ձևերի կողքին գոյություն ուներ նաև նրա վաղնջական՝ ապրանքափոխանակային ձևը, որը պահպանվում էր գրեթե բոլոր շրջաններում, բայց ավելի շատ երկրի լեռնային բնակավայրերում: Խնուսում թաքմանցի քրդերն իրենց մթերքները բերում էին Խնուս և այստեղից «իրենց եզներով ցորեն, ալյուր, ձավար և պուլղուր կը տանեն»[124]:

Հայոց ձորում գյուղացիները փոխանակում էին ցորենը մրգի հետ, «2 ցորեն տալու և 1 միրգ առնելու»[125] պայմանով:

Ոստանում քրդերը «ի ձմերան մեծ քանակությամբ ընկույզ կը բերեն ի գյուղ օր այս և ցորենի հետ կը փոխանակեն, 1-ը տալով 2-3 առնելով»[126]:

Մի հաղորդման մեջ նշվում էր, որ երկրի շատ գավառներում գյուղացին յուր կյանքում փող, դրամ տեսած չէ: «Նա ամեն բան բնության արդյունքով է փոխանակում»[127]:

Համարյա նույն բանն է հաստատում նաև Ա-Դոն: Նա գրում էր, որ Արևմտյան Հայաստանի շատ վայրերում «դրամ չկա, առևտուրը կատարվում է մեծ մասամբ ապրանքների կամ բերքերի փոխանակության կարգով... Այդ երկրներում այնքան սակավ է դրամն ընդհանրապես, և մանր դրամն առանձնապես, որ առևտուրը միանգամայն կաշկանդված է: Կարող եք երևակայել, որ հաճախ կամ գնողն է հրաժարվում գնումից կամ խանութպանը՝ վաճառքից մի միայն այն պատճառով, որ գնողը մի ոսկին մանրացնելու համար մանր դրամ չի ճարում և այս տեղի է ունենում շատ անգամ»[128]:

[123] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 30:

[124] Մասիս, 1882, մարտի 23:

[125] Մասիս, 1883, սեպտեմբերի 14:

[126] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., էջ 204:

[127] Մշակ, 1876, հուլիս 22, թիվ 27:

[128] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 260-261:

Իրերի նման վիճակը, իհարկե, խանգարում էր ապրանքադրամային հարաբերությունների զարգացմանը:

Սակայն այդ հարաբերությունների զարգացմանը խոչընդոտում էին նաև մի շարք այլ հանգամանքներ, որոնցից մեկն էլ ավատատիրական մաքսային քաղաքականությունն էր: Թուրքական իշխանություններն ու աղաները գյուղացիներից հարկեր ու տուրքեր էին վերցնում նույնիսկ այն դեպքում, երբ նրանք անցնում էին տերության սահմաններից և տանում էին իրենց արդյունքները վաճառելու հարևան գավառները: Մի հաղորդման մեջ ասվում էր, որ Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում, «մաքսատներ են սահմանված, այնպես որ երկրի բերքը մի գավառից մյուսը անցնելու համար պետք է վճարել յուրաքանչյուր դուրս տարվող ապրանքի գնից 1 տոկոս, իսկ ներս բերելու ապրանքի գնից՝ 8 տոկոս մաքս»[129]:

Ավատատիրական մաքսային հարստահարումը վերացավ 1874 թ. մարտին: Արևմտյան Հայաստանի ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացմանը խանգարում էր նաև հաղորդակցության անբարեկարգ վիճակը: Երկրում չկար երկաթուղի, իսկ խճուղային ճանապարհները նոր-նոր էին կառուցվում:

Բնակիչները բեռները տեղափոխում էին սայլերով, ուղտերով անբարեկարգ ճանապարհներով և գրաստային ուղիներով, որոնք տարվա որոշ եղանակներին խափանվում էին երկար ժամանակով: Երկրի շատ շրջաններ զուրկ էին նույնիսկ պարզունակ ճանապարհներից: Էրզրումի վիլայեթը՝ ըստ Յա. Դ. Մալամայի տեղեկության, «իր երկրագործության և անասնապահության արդյունքները արտահանելու համար սայլուղիների մեծ կարիք է զգում»[130]: Այս վիլայեթի Քըղի կազայում, ականատեսներից մեկի վկայությամբ, «չկա հատկապես շինված ճանապարհ մը, այլ ջրհեղեղեն ողողված ճանբաները կը գործածվին անասելի դժվարությամբ»[131]:

Վանի վիլայեթը «ճանապարհներ անգամ չունի, - գրում էր Ա. Թոխմախյանը,- կառավարությունը պարտք չի համարել այդ կարևոր կետի վրա մտածել, դրա համար էլ Վանի վիլայեթը բոլոր հաղորդակցությունից կտրված մի աշխարհ է: Կ. Պոլսից Վան

[129] Մշակ, 18774, փետրվարի 21, թիվ 7:

[130] Я. Д. Малама. Описание... էջ 124:

[131] Մասիս, 1883, օգոստոսի 11:

հեռագիրը ամսիներով է հասնում»[132]: Ռ. Ի. Տերմենը հիշատակում էր, որ այդ վիլայեթում «առևտուրը... չի կարող զարգանալ, քանի որ բացակայում են հաղորդակցության միջոցները: Ճանապարհները բացարձակապես գրաստային ուղիներ են»[133]:

Ըստ Հ. Սիմոնյանի վկայության՝ Խարբերդի վիլայեթի, հատկապես Գողաթի գավառի «ճամբաները խիստ անհարթ վիճակի մեջ են. հազիվ կարելի կըլլա ճամբորդել այս երկրները ջորիների միջոցով... ամբողջ սանջակի մեջ միայն ուղի մը կա, ընդ, որ կառքով կրնա ճամբորդվիլ, այն է՝ Խարբերդի ճամբան», սակայն այդ էլ տարվա մեջ համարյա 7 ամիս ծածկվում է անանցանելի ձյունով[134]:

Ա-Դոն նշում էր, որ երբ Կովկասից մտնում ենք Արևմտյան Հայաստան, զգում ենք, որ մթնոլորտը փոխվեց. «այդտեղ չեք լսում երկաթուղու սուլոցը, այդտեղ չկան կառքեր և կառապաններ, այդտեղ չեք գտնի նաև շատ ու քիչ տանելի ճանապարհներ ու կայարաններ: Շոգեմեքենային փոխարինում է ձին, կառքերին՝ ջորին, իսկ բեռնակիր ֆուրգոններին՝ էշերի ու ուղտերի քարավանները... Ետ ընկած գավառներն ու լեռնոտ շրջանները այդ հարմարություններից էլ զուրկ են»[135]:

Փոխադրական միջոցների ու ճանապարհների անբարեկարգ վիճակը հնարավորություն չէր տալիս տեղափոխելու բեռները էժան ու անվնաս: Հաճախ բեռների տեղափոխումը շատ ավելի թանկ արժեր, քան դրանց իրական գինն էր: Կառլայն Մակ Կոանը հիշատակում էր, որ էրզրումի վիլայեթում շինափայտը արժեր 4 ղուրուշ, իսկ նրա տեղափոխումը Տրապիզոն արժենում էր 20 ղուրուշ[136]:

Հաճախ էլ տեղափոխումն այնքան երկարատև էր լինում, որ ապրանքները փչանում էին՝ տեղ չհասած: Այդ կապակցությամբ Վ. Փափազյանը գրում էր. «Շատ լավ է Վանի գինին, սակայն տասներկու օր այստեղից մինչև էրզրում գնալուց հետո՝ ջուր է դառնում. շատ լավ է տանձը, խնձորը, սակայն մինչև տեղ հասնելը կեսը քուրդերի ձեռքն է ընկնում, կեսն էլ հոտում է, իսկ տանձը... մինչև տեղ հասնիլը ճխլվում է և ոչնչանում»[137]:

[132] Ա. Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 23:

[133] Ռ. Ի. Տերմեն, նշվ. աշխ., էջ 68:

[134] Մասիս, 1893, ապրիլի 24, էջ 253:

[135] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 256:

[136] Կառլայն Մակ Կոան, նշվ. աշխ., էջ 258:

[137] Վ. Փափազյան, հ. 5, էջ 408:

Պետք է ասել, որ ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացմանը խանգարում էին նաև աղաների ու բեյերի կազմակերպած թալանչիական արշավանքները: Նրանք թալանում էին ոչ միայն գյուղացիներին, այլ նաև վաճառականներին: 1891 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ երեք հայ վաճառականներ Բաղեշից Վան գնալիս ճանապարհին ենթարկվում են ավազակների հարձակմանը: Ավազակները պահանջում են նրանցից ապրանքն ու փողը, բայց մերժում ստանալով, երեքին էլ սպանում են և «բոլոր ապրանքը փախցնում»[138]:

1895 թ. մի այլ հաղորդման մեջ ասվում էր, որ Բաղեշի հայ վաճառականներից մեկը, երբ առևտուր էր անում Ղարաղը գյուղում, «Ձպրանցի Ֆեյլի աղայի որդի Սուլեյման աղան իր ծառաներով գյուղ մտնելով և տեսնելով վաճառականին, թալանեց խեղճին, խլելով նորա թե ապրանքը, թե ունեցած փողերը»[139]:

Ուշագրավ է, որ աղաներն ու բեյերը թալանում էին ոչ միայն հայ, այլ նաև թուրք ու քուրդ վաճառականներին: Նրանք, օրինակ, 1912 թ. օգոստոսի 5-ին հարձակվում են Կարինից Բիթլիս գնացող քարավանի վրա, որը պատկանում էր մեծ մասամբ մահմեդական վաճառականներին, «հրացանի կոթով կը ծեծեն ջորեպանները և քանի մը թուրք վաճառականներե մեկ-երկուք կը վիրավորեն գլուխեն, իսկ մյուսներուն աչքերը կապելով կը իջեցնեն ձորը: Հետո կը կողոպտեն վաճառականներուն դրամները և զանազան գույքերը, կը ճեղքեն հակերը և իրենց հավնած ապրանքները զատելով, 8 հակ կը շինեն ու կը բեռցնեն գրաստներեն չորսին վրա: Եվ անարգել կհեռանան»[140]:

Թեև վաճառականները բողոքում էին իշխանություններին[141], սակայն վերջիններս, սովորաբար, անպատասխան էին թողնում

[138] Դրոշակ 1891, թիվ 2, էջ 6:

[139] Դրոշակ 1895, թիվ 12, էջ 96:

[140] Ազատամարտ, 1912, օգոստոսի 16, թիվ 967-975:

[141] Օրինակ, 1901 թ. Էրզրումի ռուսական գեներալ-հյուպատոսը գրում էր. Կ. Պոլիս Ռուսաստանի դեսպանին. «Էրզրումի մահմեդական առևտրականները օրերս ուղարկեցին սուլթանին կոլեկտիվ հեռագիր, որի մեջ գանգատվում են քրդական ավազակությունների վրա, որոնք զարգացել են ամենուրեք և քայքայում են առևտրական հարաբերությունների ամեն մի հնարավորություն: Տեղափոխվող ապրանքների թալանն ու անասունների հափշտակումը տեղի են ունենում բոլոր երթևեկող ճանապարհներին և, կարելի ասել, ընդհուպ մինչև Էրզրումի պատերի տակ» (АВПР, ф. "Политархив", 1901, д. 1637, л. 84):

նրանց բողոքագրերը որովհետև կամ ընկերակցում էին ավազակներին, կամ վախենում էին նրանցից: Երբ 1913 թ. մի խումբ վաճառականներ գանգատվում են Սղերդի սանջակի Էրունի նահիեի մութասարիֆի տեղակալին, վերջինս պատասխանում է. «կուզե՞ք, որ հեղինակը հայտնեմ և կուրծքես գնդակ մը առնելով զոհվի՞մ... Ձեր գործին գնացե՛ք»[142]:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ վաճառականի անապահովությունը բացասաբար էր անդրադառնալու արդյունաբերական կապիտալի առաջացմանն ու զարգացմանը:

* *
*

Անդրադառնալով Արևմտյան Հայաստանի վանական տնտեսությանը, պիտի ասել, որ այն խիստ անբավարար էր ներքաշված շուկայական հարաբերությունների մեջ[143]: Բացառություն էր կազմում Վարագա վանքը, որը, Խրիմյան Հայրիկի եռանդուն գործունեության շնորհիվ, սկսած 1850-ական թվականներից՝ ապրեց աննախադեպ վերելք: Ըստ Վարագա վանքի մասին Ե. Ատվկանցի՝ 1873 թ. բերած տվյալների.

Վարագա վանքի եկամուտը			Նույն թվի այդ վանքի ծախսը	
1.	Ցորենի վաճառքից	5000 ղուրուշ	մաճկալներ	4375 ղուրուշ
2.	Նշանտվեքից	5000 - " -	հովիվներին, պահակներին, ծիապանին, պարտիզպանին	2750 -"-
3.	Ոչխարի ու գառների վաճառքից	3000 -"-	կաթնակիր, լվացարար կանանց	1630 -"-
4.	Պանրի վաճառքից	3000 -"-	հացագործին	450 -"-
5.	Յուղի վաճառքից	3000 -"-	գութանի հյուսնին	600 -"-
6.	Ուխտավորներից	3000 -"-	ջաղացպանին	300 -"-
7.	Թիֆլիսի խանութներից	2500 -"-	ջրկառքին	2040 -"-
8.	Գութանի վարից	2500 -"-	մեղվանոցի ու ծխախոտի դարմանապահին	600 -"-
9.	Խոտի վաճառքից	1500 -"-	տպագրապետին	1200 -"-
10.	Բրդի վաճառքից	1000 -"-	խմբագիր	2400 -"-
11.	Ավանի այգուց	800 -"-	վերակացուին	800 -"-
Ընդամենը		30200 -"-	Ընդամենը	20765 -"-

[142] Բութանյա, 1913, հունվարի 3, թիվ 24:

[143] Այդ մասին հանգամանորեն տե՛ս «Արևմտահայ վանական տնտեսությունը XIX դարի երկրորդ կես - XX դարի սկիզբ» հոդվածը [Պատմաբանասիրական հանդես», 2000 թ., թիվ 2-րդ, էջ 29-39]:

Վարագա վանքի եկամուտները, ըստ էության շուրջ 10000 դուրուշով գերազանցում էին ծախսերին: Ատվկանցը 1873 թ. գրում էր, որ Խրիմյանը հատուկ կոնդակով վանահայրությանն անջատում է առաջնորդարանից և վերցնում իր ձեռքը: Դրանով նա ազատում է վանքը վանահիշխաններից և ստանում է ազատ գործունեության հնարավորություն: Թուրք իշխանավորները և թուրքամետ հայ գործիչները «սկսան թշնամությամբ վարվել վանահոր դեմ, զանազան տեսակ արգելքներ հարուցին Խրիմյանի դեմ, տպարանը գոցեցին, դպրոցին հակառակեցան, որպեսզի վանահայրն արտաքսելով կրկին առաջին դրության բերեին, սակայն յուրանց թե՛ հայտնի, թե՛ գաղտնի մեքանայությունք խորտակեցան Խրիմյանի խորախորհուրդ հեռատեսության և գործունեության առաջ: Դեռ մինչև ցայսօր կան իշխանոց մեջ,-որ եթե պատեհ առիթ ունենան վանքն առաջնորդության հետ միացնելով վանքի վրա ազդեցություն բանեցնել, բայց հույժ տկարացած են»[144]:

1890-ական թվականների հայկական կոտորածների տարիներին Վարագա վանքը գրեթե ամբողջովին ավերվեց: Թուրք ու քուրդ բարբարոսները թալանեցին նրա շարժական գույքը, զավթեցին հողերը, ջարդեցին ու ոչնչացրին մեքենաները: Սակայն հետագայում՝ հատկապես 1908 թ. հեղաշրջումից հետո, Վանի վանքերը կրկին ոտքի կանգնեցին ու առաջադիմեցին: 1903 թ. նրանց եկամուտները կազմում էին 1254, իսկ 1908 թ.՝ 104962 դուրուշ: Հովսեփ Խլղաթյանը նշում էր, որ Վանի վանքերը մեծ եկամուտներ էին ստանում ինչպես անասունների, այնպես էլ հացահատիկի վաճառքից: Մի շարք տեղերում աճում է վանքերի հին մշակաբույսերի արտադրությունը և արմատավորվում են նոր տեսակներ[145]:

Մեծ եղեռնի օրերին երիտթուրքական ոճրագործները հայ ժողովրդի բնաջնջման ու արտաքսման հետ միասին ոչնչացրին նաև նրա վանական հողատիրությունն ու վանքերի և եկեղեցիների մեծ մասը: Այժմ Թուրքիայի հայաբնակ վայրերում կանգնած են հայկական սոսկ առանձին վանքեր՝ որպես հայոց երբեմնի

[144] Ե. Ատվկանց, Ճանապարհորդությունը Բարձր Հայք և Վասպուրական, 1872-1873 թթ.: Ձեռագիրը պատրաստել և ծանոթագրել է Հ. Մ. Պողոսյանը, Երևան, 1991, էջ 271:

[145] Տե՛ս «Ազատամարտ», 1909, 17-ը հոկտեմբերի:

գոյության ու արարման լուռ վկաներ:

Մի քանի խոսք անտառների և ջրային պաշարների օգտագործման մասին: Արևմտյան Հայաստանն, ընդհանրապես, աղքատ էր անտառներից: Նրա անտառները կազմում էին Թուրքիայի ամբողջ անտառային տարածության հազիվ 1-2%-ը: Սակայն որոշ սանջակներ ու կազաներ բավականաչափ հարուստ էին դրանցով: Աչքի էին ընկնում հատկապես Էրզրումի, Երզնկայի, Սվազի և Ամասիայի սանջակները: Էրզրումի սանջակում անտառները կազմում էին 126950, Երզնկայի սանջակում՝ 300500, Սվազի սանջակում՝ 149500, իսկ Ամասիայի սանջակում՝ 152000 դեսյատին[146]: Բացի այդ վայրերից, անտառներ կային (մեծ կամ փոքր չափերի), նաև Շատախում, Մոկսում, Կարճկանում, Գավաշում, Հեքեարում և երկրի այլ շրջաններում[147]:

Ինչպես Թուրքիայի այլ վայրերում, այնպես էլ Արևտյան Հայաստանում անտառները պատկանում էին պետությանը, կրոնական հաստատություններին, աղաներին ու բեյերին կամ մասնավոր անձանց և, առանձին գյուղերի կամ գյուղական համայքների: Մենք չունենք վիճակագրական տվյալներ այն մասին, թե նրանցից որն ի՞նչ տարածության անտառներ ուներ, բայց հետազոտողներից մեկը 1870-ական թվականներին արձանագում էր. «անտառներից օգտվելու տիրապետող ձևը կրում է համայնական բնույթ»[148], իսկ մասնավոր տիրապետությունները «վերին աստիճանի սահմանափակ են»[149]: Եթե դա ճիշտ էր 1860-1870-ական թվականների համար, ապա ընդունելի չէր հետագա տարիների համար, քանի որ աղաներն ու բեյերը, ընդարձակելով իրենց կալվածքները, բռնագրավում և սեփականացնում էին նաև գյուղացիական անտառները:

Հաստատված էր անտառներից օգտվելու հետևյալ կարգը. կառավարությունը իրավապես թույլ էր տալիս գյուղացիներին անվճար օգտվել պետական անտառներից, եթե նրանք տուն էին կառուցում կամ գյուղատնտեսական գործիքներ պատրաստում, բայց եթե փայտ էին կտրում վաճառելու նպատակով, ապա

[146] Տե՛ս Т. М. Жуковский, Земледелие... М, 1933, էջ 749:

[147] Տե՛ս «Մշակ», 1890, օգոստոսի 4, թիվ 87:

[148] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 1087 ցուց 1, գ.1014, թ.15:

[149] Նույն տեղում, թ. 16:

պարտավոր էին կատարել որոշ պարհակներ: Իրականում պետությունը փաստորեն անտառը վաճառում էր կամ տալիս վարձակալության մասնավոր անձանց. որոնք հիմնականում վաճառականներ էին:

Գրեթե այդպես էր նաև կրոնական հաստատությունների կամ վակուֆային անտառներից օգտվելու կարգը:

Համայնական անտառներից, կամ ինչպես դրանք կոչվում էին բալթալթիկներից, կարող էին օգտվել միայն տվյալ համայնքի անդամները, բայց ոչ երբեք հարևան գյուղացիները կամ կողմնակի անձինք: Համայնքի անդամներն իրավունք ունեին անվճար օգտվել համայնական անտառներից ըստ իրենց կարիքների:

Ինչ վերաբերում է մասնատիրական անտառներին, ապա դրանց տերն ու տնօրենը աղաներն ու բեյերն էին, և գյուղացիներն առանց թույլտվության չէին կարող անգամ թռչուն որսալ այնտեղ:

Աղաներն ու վաճառականներն անտառի փայտը նույնպես արտահանում էին ինչպես երկրի ներսում՝ մեծ մասամբ քաղաքներ, նույնպես և դուրս՝ Անդրկովկաս և Եվրոպա: Նրանք Թորթումից փայտը արտահանում էին Էրզրում, Ալաշկերտ, Արճեշ և Վան, Սողանլուղից՝ Բայբուրթ, Երզնկա, Դերջան, Կապան, Մադենի պղնձածուլական ձեռնարկություններ, Ամասիայից՝ Թոքաթ, Կարա Հիսար, Զառա և այլուր[150]:

Յա. Դ. Մալաման նշում էր, որ Կովկասի հայերն ու ֆրանսիացիները գնում են կաղնի ու ընկուզենի և արտահանում Մարսել, Փարիզ, Լոնդոն և այլ քաղաքներ: Նրանք փայտանյութը ձեռք էին բերում Էրզրումի և Վանի վիլայեթներում[151]: Հռչակված էր հատկապես Վանի ընկուզենին, որից Եվրոպայում պատրաստում էին կահույք և վաճառում էին թանկ գներով:

Աղաներն ու վաճառականներն ընկնելով շահի հետևից՝ համարյա ամենուրեք գիշատիչ կերպով բնաջնջում էին անտառները: 1890 թ. մի թղթակից գրում էր. «այնչափ քիչ հոգ է տարվում... անտառների վրա. այնչափ անգութությամբ ոչնչացնում են ծառերը, որ գուցե մի քանի տարուց հետո փոքրիկ անտառներ

[150] Մշակ, 1890, օգոստոսի 4, թիվ 87 և А. И. Гиппиус, Статистические таблицы вилайетов Турецкой империи, ближайших к Закавказью.- Тифлис, 1889.- п. 10-11.

[151] Տե՛ս Я. Д. Малама. Описание... էջ 112:

ունեցող սանջակները զրկվեն բոլորովին անտառներից»[152]:

1896 թ. Ֆ. Գրյազնովն արձանագրում էր. «Խարբերդի վիլայեթը՝ երբեմնի առատ անտառներով, գիշատիչ բնաջնջման հետևանքով, որ արվում էր տեղական սպառման և Քեբան-Մադենի հանքերի համար, բոլորովին անտառազրկել է ոչ միայն Խարբերդի սանջակը, այլ նույն վիճակում են նաև հարևան վիլայեթների մերձակա կազաները[153], որոնք շարունակում են անտառազրկվել՝ հսկողության բացակայության և անտառների բարբարոս բնաջնջման հետևանքով»[154]:

Պետք է նշել, որ բացի աղաներից ու վաճառականներից, անտառները բնաջնջում էին նաև գյուղացիները՝ կամ իրենց ցանքատարածություններն ընդարձակելու, կամ շինանյութ ու վառելիք ձեռք բերելու նպատակներով: Ա-Դոն գրում էր, թե Շատախում «Ժողովրդի եկամտի աղբյուր են ծառայում նաև անտառները, որոնք մատակարարում են շինանյութի փայտ, վառելիք և ածուխ»[155]:

Բայց երկրի որոշ շրջաններում ճանապարհների բացակայության պատճառով անտառները մնում էին անձեռնմխելի, ինչպես, օրինակ Դերսիմում[156]:

Անտառների բնաջնջումը ոչ միայն աղքատացնում էր երկրի բնությունը, այլ նաև բացասաբար էր անդրադառնում նրա կլիմայի վրա. առաջ էր գալիս երաշտ, որը սովի և զանգվածային հիվանդությունների պատճառ էր դառնում:

Արևմտյան Հայաստանը հարուստ էր ջրերով: Սակայն թուրքական կառավարությունը չէր մտահոգվում դրանք արդյունավետ օգտագործել: Գետերի օգտագործումը մատնված էր ինքնահոսի, իսկ Վանա լճի նշանավոր տառեխի որսը տրվում էր վարձակալությամբ: Կառավարությունը վճռական քայլեր չէր անում լճով երթևեկությունը բարելավելու ուղղությամբ, որը զգալի չափով կնպաստեր ապրանքա-դրամային հարաբերությունների աշխուժացմանը: Բավական է նկատել այն հանգամանքը, որ լճի

[152] Մշակ, 1890, օգոստոսի 4, թիվ 87:

[153] Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ 128:

[154] Նույն տեղում, էջ 129:

[155] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 62:

[156] Տե՛ս, Я. Д. Малама. Описание... էջ 112:

մի ափից մյուսը գնալու համար ցամաքով հարկավոր էր 2-3 օր, այն դեպքում, երբ նավով՝ 10-12 ժամ, իսկ շոգենավով՝ ավելի քիչ:

Վաճառականները, վարձակալելով ձկնորսության իրավունքը, Վանա լճից զգալի քանակությամբ տառեխ էին որսում և վաճառում ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում Ռուսաստան և նույնիսկ Եվրոպա:

Վանա լճի ափերին ապրող բնակիչները լճի ջրից ստանում էին բորակ և օգտագործում կենցաղում: Սակայն ոմանք բորակը նույնպես արտահանում էին վաճառքի: Մ. Միրախորյանը նշում էր, որ բորակը[157] միլիոնավոր հոխաներով ուղարկվում է «ի Վան, ի Բաղեշ, ի Սղերդ և ի Պարսկաստան»[158]: Նրանք բորակը պատրաստում էին պարզունակ եղանակով. լճից 10-30 մետր հեռու փորում էին փոսեր և դրանք կապում լճի հետ նեղլիկ ջրանցքներով, հետո ամեն օր այդ փոսերը լցնում էին ջրով, որը արևի ջերմությունից գոլորշիանում էր՝ թողնելով հատակին նստվածք. չորս ամիս անց այդ նստվածքը կամ բորակը՝ 3-5 մատ հաստությամբ, քառակուսի կտորներով կտրատում և հանում էին:

Այսպիսով, XIX–րդ դարի երկրորդ կեսին և XX-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը գրեթե իր բոլոր ճյուղերով դուրս էր եկել բնափակ տնտեսության շրջանակներից և ընդունել ապրանքային բնույթ: Սակայն իշխող տնտեսական ու քաղաքական կարգերը, անձի և գույքի անապահովությունը, կանոնավոր ճանապարհների բացակայությունը և այլ հանգամանքներ խանգարում էին նրա առաջընթացին, որի հետևանքով գյուղում ապրանքային տնտեսությունը ընդհանրապես թույլ էր զարգացած, իսկ որոշ տեղերում տակավին գերիշխում էր բնափակ տնտեսությունը:

[157] Բորակը ծովի աղի տիղմի համասեռ մածուկ է, որ գործածվում էր կենցաղում՝ որպես լվացքի միջոց:

[158] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Բ, էջ 205:

Գլուխ Չորրորդ

ՏՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՀԵՍՏՆԵՐՆ ՈՒ ՄԱՆՐ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախքան արհեստների մասին խոսելը՝ անհրաժեշտ ենք համարում փոքր ինչ կանգ առնել տնային արդյունագործության վրա, որն արհեստների համար լավագույն նախադրյալն է եղել: Տնային արդյունագործության էությունն այն է, որ գյուղացին հումքը մշակում է սեփական տնտեսության մեջ և իր համար պատրաստում հագուստեղեն կամ աշխատանքի գործիքներ: Երբ գյուղացու տնտեսավարման մեջ գերակայում է տնային արդյունագործությունը, արդյունաբերությունը՝ որպես առանձին զբաղմունք, տակավին գոյություն չունի կամ հստակ չի սահմանազատվում և ամբողջովին միահյուսվում է նահապետական երկրագործության հետ: Ֆ. Էնգելսը գրում է. «Եթե համայնական հողը գյուղացու գոյության առաջին հիմնական պայմանն էր, ապա արդյունաբերական օժանդակ զբաղմունքը նրա գոյության երկրորդ պայմանն էր»[1]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տնային արդյունաբերությունը պահպանվել էր Արևմտյան Հայաստանի համարյա բոլոր շրջաններում: Երզրումի վիլայեթում գյուղացիները՝ ըստ Յա. Դ. Մալամայի վկայության, իրենց հագուստեղենն ու գործիքները պատրաստում են հենց իրենք[2]:

Վանի վիլայեթի Զուլամերկ կազայում բնակիչները բամբակից պատրաստում էին բյազ, իսկ բրդից՝ արխալուղ, շալվար ու այլ հագուստներ[3]:

Աղբակում գեղջկուհիները գործում էին «գորգեր՝ այլևայլ գույներով և ճարտարությամբ, ընտիր շալ, կտավ և քազախիկ (վրայեն հագնելի կարճիկ զգեստ մը) գեղացոց գործածելի»[4]:

Բիթլիսի վիլայեթի Սասուն կազայում գյուղացիները՝ ըստ մի վկայության, «հագուստի կտորները պատրաստ[illegible] են իրանք

[1] К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. т. XV.- ч. II.- էջ 444

[2] Տե՛ս Я.В.Малама, Средства... էջ 50:

[3] Տե՛ս Известия... էջ 176:

[4] Մ. Միրախորյան. նշվ. աշխ. մ. Բ, էջ 56:

իրանց ձեռքով ոչխարի և այծի բրդից: Իբրև գլխարկ դնում են մի տեսակ արախչին... Սասունցի կանայք... մեծ հմտությամբ գործում են այդ տեսակ գլխարկներ»[5]:

Մոկսում բրդից ու այծի մազից գործում էին զանազան շալեղեն և ռեպքեպ կոչված կոշիկներ: «Աշխատանքը» գրում էր, որ երկրի այս գավառում «միևնույն գյուղացին թե երկրագործ է, թե խաշնարած, թե բրուտ, թե միևնույն ատեն շալագործ կամ կտավագործ»[6]:

Գյուղացիները իրենք էին պատրաստում իրենց հագուստներն ու աշխատանքի գործիքները նաև երկրի մյուս վիլայեթներում ու սանջակներում: Գր. Արծրունին գրում է, որ Արևմտյան Հայաստանում «յուրաքանչյուր հայ ընտանիք հագնում է իր տան մեջ պատրաստած քաթանի, կտավի շապիկները և բուրդի հագուստեղենը»[7]:

Սակայն տնային արդյունագործության կողքին գյուղերում գոյություն ունեին նաև արհեստներ, որոնք, ինչպես հայտնի է, արդյունաբերության նախնական ձևեր են: Արհեստավորը տարբերվում էր և՛ նահապետական գյուղացուց՝ որպես առանձին զբաղմունք ունեցող, և՛ մանր ապրանք արտադրողից: Նա տարբերվում էր նրանով, որ համեմատաբար քիչ էր զբաղվում երկրագործությամբ: Նրա համար երկրագործությունն ուներ համարյա այնպիսի նշանակություն, ինչպիսի նշանակություն ուներ նահապետական գյուղացու համար տնային արդյունաբերությունը: Բայց արհեստավորը տարբերվում էր մանր ապրանք արտադրողից նրանով, որ ավելի ամուր էր կապված հողի հետ: Վ. Ի. Լենինը մատնանշում է. «Մանր ապրանքարտադրողների հետ համեմատած, արհեստավորներն աչքի են ընկնում հողի հետ ամենից ուժեղ կապվածությամբ»[8]:

Արևմտյան Հայաստանի գյուղերում կային դարբիններ, դերձակներ, կտավագործներ, կոշկակարներ, ծղոտագործներ, ատաղձագործներ, երկաթագործներ, պայտարներ, որմնադիրներ, քարտաշներ, ոսկերիչներ, արծաթագործներ, թիթեղագործներ և բազմաթիվ այլ արհեստավորներ: Գյուղական արհեստավորները սովորաբար աշխատում էին իրենց գյուղերում և բավարարում էին պատվիրատուների պահանջարկը, երբեմն շրջում էին գյուղից գյուղ, երբեմն էլ «ծառայության մեջ» էին մտնում կիսավաչկատուն ու վաչկատուն քրդերի մոտ: Նրանք թափառում էին տեղից տեղ, պատրաստում էին զենքեր, տնային կարասիներ և կենցաղային առարկաներ ու կատարած աշխատանքի դիմաց վարձատրվում էին սովորաբար յուղով, պանրով, բրդով, ոչխարով, գառներով, եզներով ու կովերով: «Քրդերը,- գրում է Ռաֆֆին,- վճարում էին մթերքներով, որոնք ստանում էին իրենց անասուններից»[9]:

Արհեստավորները հիմնականում կենտրոնացված էին քաղաքներում և մասամբ գյուղաքաղաքներում: Հայտնի է, որ արհեստը՝ որպես գյուղացիական տնտեսության օժանդակ զբաղմունք, «քաղաքային կենցաղի անհրաժեշտ բաղադրամասն է եղել»[10]:

Արհեստավորները ազգությամբ հիմնականում հայեր էին, կային նաև հույներ և թուրքեր[11]: Հիմք ընդունելով հետևյալ վկայությունները՝ կարելի է եզրակացնել, որ հայերը, հատկապես XIX դարի 50-70-ական թվականներին, համարյա ամենուրեք գերիշխում էին: Այսպես, Վանում՝ ըստ մի հաղորդման, «արհեստավորները բոլորը հայ են»[12]:

Դիարբեքիրում, ըստ Գ. Սրվանձտյանցի վկայության, «արհեստի և առևտուրի մեծա մասամբ քրիստոնեայք կընեն», որոնք «իբրև արվեստավոր՝ ճարտար են, իբրև վաստակավոր՝ ամեն գործք հետամուտ են»[13]:

Սվազի վիլայեթում՝ ըստ մի թղթակցի տվյալների, կար 3950 արհեստավոր, որից 3050 հայ էին, 650-ը՝ թուրք, իսկ 250-ը՝ հույն[14]:

---

[5] Մշակ, 1894, հոկտեմբերի 13, թիվ 118:

[6] Աշխատանք, 1913, թիվ 24-120, էջ 4:

[7] Գ. Արծրունի, նշվ. աշխ. էջ 17:

[8] Վ. Ի. Լենին, երկեր, հ. 3, էջ 417:

[9] Ռաֆֆի, հ. 4, էջ 241-242:

[10] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 415:

[11] Մշակ, 1883, օգոստոսի 25, թիվ 115:

[12] Արծվի Վասպուրական, 1858, էջ 182:

[13] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հ. Բ, էջ 211:

[14] Տե՛ս «Հորիզոն», 1913, հունիսի 6, թիվ 123:

Խարբերդում, Երզնկայում, Բալուում, Չարսանճագում, Ճապաղջրում և Քըղում՝ ըստ Պողոս Նաթանյանի տեղեկության, «ապրանքներեն ղրկող և բերել տվողներուն մեծ մասը հայք են»[15]: Ա. Մ. Կոյուբակինը նշում էր, որ Բալուի կազայում ամբողջ առևտուրը կենտրոնացված է 40 հոգու ձեռքում, որոնցից 34-ը հայ են, 6-ը՝ թուրք[16], իսկ Խարբերդում հայերը կազմում են բոլոր առևտրականների 80-90 տոկոսը, թուրքերը՝ 10-20 տոկոսը[17]:

Սվազի վիլայեթում կար 166 առևտրական կրպակ, որից 141-ը պատկանում էր հայերին, 13-ը՝ թուրքերին, իսկ 12-ը՝ հույներին:

Թոքատում և Ամասիայում 80 մանուֆակտուրային առևտրական տներից 65-ը հայերինն էին, 10-ը՝ հույներինը, 5-ը՝ թուրքերինը[18]:

Մուշում՝ ըստ Լինչի վկայության, «բոլոր կրպակ ունեցողները... պատկանում էին հայ ազգին»[19]:

Խնուսում՝ ըստ Ա-Դոյի, «առևտուրը մեծ մասամբ գտնվում է հայերի ձեռքում»[20]:

Ուշագրավ է, որ հայերը մեծամասնություն էին կազմում նույնիսկ մանրածախ առևտրի մեջ: 1912 թ. Սվազի վիլայեթում կար 2150 մանրավաճառ, որից 1650-ը՝ հայեր էին, 400-ը՝ թուրքեր, իսկ 100-ը՝ այլ ազգի ներկայացուցիչներ[21]:

Տրապիզոնում իտալյայի հյուպատոս Կ. Սոլանելին, 1881 թ. շրջելով Արևմտյան Հայաստանում, արձանագրում էր. «Գլխավոր վաճառականներն ու սեղանավորք՝ հայք են»[22]:

Արևմտյան Հայաստանի քաղաքներում ու գյուղաքաղաքներում տարածված էին արհեստի ամենաբազմազան տեսակները: Դրանց մասին որոշ պատկերացում կազմելու համար բերենք հետևյալ տեղեկությունները:

Երզրումում զարգացած էր դարբնությունը, կոշկակարությունը, ատաղձագործությունը, պղնձագործությունը, անագագործությունը, ոսկերչությունը, որմնադիրությունը և այլն[23]: 1889 թ. Վ. Փափազյանը գրում էր. «Երզրումի արհեստների մեջ նշանավոր են պղնձագործությունը, ծուլագործությունը (շինում են բրոնզյա գեղեցիկ իրեղեն) և կոշկակարությունը: Տաճկաստանի մեջ չկա մի այլ քաղաք, ուր կարողանան շինել այդպես լավ, թեթև և մաքուր պղնձեղեն, զարդարուն չամադաններ, թասեր և այլն, կարել ամենասիրուն ձևով ամուր, դիմացկուն և էժան կոշիկներ, մանավանդ կրկնակոշիկներ»[24]:

1909 թ. Ա-Դոն արձանագրում էր, որ Երզրումում «ավելի քան 1000 հոգի պարապում են արհեստներով, արհեստներ, որոնցից առանձնապես առաջ են գնացել դերձակությունը, կոշկակարությունը, ոսկերչությունը, դարբնությունը, պղնձագործությունը, հյուսնությունը, պայտարությունը, թիթեղագործությունը, ժամագործությունը, չիլինգարությունը, զինագործությունը և այլն: Ոսկերիչներն ունեն իրենց հատուկ շարքը, որտեղով անցնելիս մարդու ուշադրությունն են գրավում գեղեցիկ ձեռագործ զարդարանքները: Իսկ բոլորից ավելի առաջ է գնացել որմնադիրությունը, որով հաց են գտնում բազմաթիվ հայ ընտանիքներ ոչ միայն քաղաքում, այլև Երզրումի դաշտի շատ գյուղերում[25]:

Վիճակն, ըստ էության, այդպիսին էր նաև երկրի մնացած քաղաքներում: Գր. Արծրունին գրում էր. «Հայաստանի բոլոր վարպետները, բոլոր արհեստավորները հայեր են՝ հյուսներ, քարտաշներ, պղնձագործներ, երկաթագործներ, ոսկերիչներ, փորագրողներ, փայտի վրա նուրբ քանդակագործներ, արծաթագործներ, նկարիչներ, ճարտարապետներ. բոլորն էլ հայ են»[26]: Այդ են հաստատում նաև այլ հեղինակներ[27]:

Անհրաժեշտ է նշել, որ հայերը թվով գերակշռում էին նաև առևտրի ասպարեզում: Օրինակ, Բիթլիսում, ըստ մի վկայության, «տեղական բարձր վաճառականության մեծ գործիչները հայ են, առևտուրը գրեթե հայոց մենաշնորհն է, 40-ին 2-ը հազիվ թուրք են»[28]:

[15] Պ. Նաթանյան, նշվ. աշխ., էջ 58:

[16] Տե՛ս Ա. Մ. Կոյուբակին, նշվ. աշխ., էջ 164:

[17] Նույն տեղում, էջ 453:

[18] Տե՛ս «Հորիզոն» 1913, հունիսի 6, թիվ 123:

[19] Խ. Ֆ. Լինչ, նշվ. աշխ., էջ 221:

[20] Ա-Դո, նշվ. աշխ., էջ184:

[21] Տե՛ս «Արարատ», 1914, էջ 378:

[22] Բազմավեպ, 1882, էջ 296:

[23] Տե՛ս «Մասիս», 1868, մայիսի 13:

[24] Վ. Փափազյան, հ. 5, էջ 378:

[25] Ա.-Դո, նշվ. աշխ., էջ 163:

[26] Գր. Արծրունի, նշվ. աշխ., էջ 19:

[27] Մշակ, 1883, օգոստոսի 25, թիվ 115:

[28] Մասիս, 1881, հոկտեմբերի 17:

Վանում աչքի էին ընկնում ոսկերչությունը, արծաթագործությունը, կոշկակարությունը, դերձակությունը, ատաղձագործությունը, պղնձագործությունը, դարբնությունը, պայտարությունը, բամբակագործությունը, ժամագործությունը, որմնադիրությունը, թիթեղագործությունը և այլն[29]:

Մի թղթակից գրում էր. «Վանը վաղուց հռչակվում է իր արծաթյա շինվածքներով, որոնք բարձր են գնահատվում Կ. Պոլսում և Սիրիայում: Այստեղ կան մոտ 60 արհեստանոցներ, որտեղ պատրաստում են գլխավորապես ծխախոտի տուփեր, ձեռնափայտի և հովանոցի բռնակներ, դանակներ, պատառաքաղներ, գդալներ, բաժակներ և այլն»[30]:

Ըստ Ա-Դոյի բերած տվյալների՝ Վանում 1909 թ. կար 60 ոսկեգործ, 80 ատաղձագործ, 75 դերձակ, 100 կոշկակար, 200 երկաթագործ-դարբին և այլն[31]:

Բիթլիսում արհեստներից հայտնի էին ոսկերչությունը, կոշկակարությունը, զինագործությունը, հյուսնությունը, ժամագործությունը, դերձակությունը և պայտարությունը[32]: 1887 թ. ականատեսներից մեկը, նկատի ունենալով արհեստների այդ ճյուղերը, գրում էր. «Ուրիշ տասնյակ արհեստներ ալ կարելի է մեջտեղ բերել դեռ, որք թել ու ասեղ, մախաթ ու մատնոց անուններու սահմանի մեջ կը գտնվին, ու հաց կուտան այսօր մեր քաղաքացիներուն»[33]:

Մուշում գլխավոր արհեստներն էին դարբնությունը, ատաղձագործությունը, կոշկակարությունը, կոնդորաչությունը, դերձակությունը, ոսկերչությունը, երկաթագործությունը, պայտարությունը, ներկարարությունը, բայց ավելի շատ՝ բրուտագործությունը: Ա-Դոն նշում էր, թե բրուտագործությունը «այստեղ հասցրել են բավականին նրբության. Մուշի բրուտները հասարակ կավից շինում են նույնիսկ բաժակներ, որոնք գյուղերում փոխարինում են իսկական բաժակներին»[34]:

Դիարբեքիրում զարգացած էին առավելապես կտավագործությունն ու մետաքսագործությունը: Տակավին 1879 թ. Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ այդ քաղաքում «ծաղկյալ է արվեստ մանիսայի, կեզիի, սավանի և այլ տեսակ կերպասեղինաց, ասվեղինաց և բամբակեղինաց»[35]:

Խարբերդում կային կոշկակարության, երկաթագործության, ատաղձագործության, որմնադիրության, դերձակության, կահույքագործության, հյուսնության, ոսկերչության, փորագրության, պղնձագործության, մետաղագործության, զինագործության և արհեստի այլ ճյուղեր: Սակայն դրանցից առավել աչքի էր ընկնում կոշկակարությունը: Մ. Ճիզմեճյանը իր հուշերում գրում էր, որ Խարբերդում «հարյուրեն ավելի խանութներ չորս կամ հինգ գործավորներով կը կարեին ոտքի կոշիկ - փոստալ, որ կտարածվեր նաև շրջակաները մեծ քանակությամբ: Կային մի քանի կարմիր ու սև մուգ ճիզմե շինողներ: Հայրս ալ՝ Գասպար, որակավոր արհեստավոր, կը կարեր մոյկը, մասնավորապես կարմիրը. կպատրաստեր պեկերու, աղաներու զավակներուն համար. մասնավորապես Տերսիմի քուրդ աղաներուն և անոնց զավակներուն համար: Կային քանի մը արհեստավորներ ալ, որ կը կարեին դեղին չարըխ՝ գյուղացի հողագործներուն հատուկ: Նույնպես կային ուրիշներ, որ կը կարեին փապուճ՝ տուներուն մեջ գործածելու, կիներուն համար»[36]:

Երզնկայում հայտնի էին մանուսագործությունը, ներկարարությունը, ոսկերչությունը, կոշկակարությունը, պղնձագործությունը, դարբնությունը, ատաղձագործությունը, կտավագործությունը, զարդանկարչությունը և այլն[37]: Ա-Դոն, խոսելով այդ արհեստների մասին, նշում էր, որ դրանցից առանձնապես աչքի են ընկնում մանուսագործությունն ու մետաքսագործությունը, «որոնցով ապրուստ են հայթայթում հարյուրավոր ընտանիքներ»[38]:

Ամասիայի գլխավոր արհեստներից կարելի է հիշատակել երկաթագործությունը, ատաղձագործությունը, կոշկակարությունը, դերձակությունը, թիթեղագործությունը և այլն: Վ. Տոտոմյանցը և Ե. Թոփչյանցը հիշատակում էին, որ 90-ական թ. վերջերին

[29] Տե՛ս Մ. Միրախորյան, նշվ.աշխ. մ. Բ, էջ 145-146:

[30] «Армянский Вестник», 1916.- N 12-13.- էջ 13:

[31] Տե՛ս Ա.-Դո, նշվ. աշխ. էջ 18:

[32] Տե՛ս «Մասիս», 1881, հոկտեմբերի 17, «Արծագանք», 1882, էջ 57, թիվ 4:

[33] Մշակ, 1887, հուլիսի 28, թիվ. 83:

[34] Ա-Դո, նշվ. աշխ. էջ 111:

[35] Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար, մ. Բ, էջ 211:

[36] Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ., էջ 87:

[37] Տե՛ս «Մասիս», 1886, սեպտեմբերի 27, էջ 140:

[38] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 220:

այնտեղ կար 30 երկաթագործ, 10 ատաղձագործ, 50 կոշկակար, 20 դերձակ և 5 թիթեղագործ[39]:

Թոքատում արհեստներից տարածված էին պղնձագործությունը, ներկարարությունը, կտավագործությունը և հատկապես գոտեգործությունը, որն, ըստ մի վկայության, «վերջին տարիներս ծավալ գտած է»[40]:

Արաբկիրում զարգացած էր մանիսագործությունը, Սղերդում նաև կաշեգործությունը, զինագործությունը, դերձակությունը, որմնադիրությունը, ոսկերչությունը, ատաղձագործությունը, դարբնությունը, երկաթագործությունը և ներկարարությունը[41]:

Բայբուրթում հայտնի էին գորգագործությունը, մետաքսագործությունը, ոսկերչությունը և արծաթագործությունը, իսկ Բերրիում՝ երկաթագործությունը, դերձակությունը, բրուտագործությունը և հատկապես կոշկարարությունը: Գ. Երևանյանն իր հուշերում նշում էր, որ Բերրիի կոշկարարների մի մասը կարում էր տեղական, իսկ մյուսը՝ եվրոպական կոշիկներ: Առաջինները կարում էին հասարակ դասի՝ գլխավորապես գյուղացիների, իսկ երկրորդները՝ աղաների ու բեյերի համար: Բոլոր կոշկարարներն աշխատում էին իրենց հումքով՝ ըստ պատվիրատուների պահանջների. նրանց միջև չկար որևէ միջնորդ[42]:

Ականց գյուղաքաղաքում զարգացած էր կոշկակարությունը, դերձակությունը, դարբնությունը, ոսկերչությունը, զինագործությունը, պայտարությունը և սառաջությունը, Քըղում և Խնուսում՝ կաշեգործությունը, կոշկակարությունը, դերձակությունը, ոսկերչությունը, պղնձագործությունը, դարբնությունը, պայտարությունը և ատաղձագործությունը[43]:

Հայ վարպետները գրեթե ամենուրեք հռչակված էին իրենց արհեստով: Նրանց պատրաստած ոսկյա, արծաթյա, մետաղյա շինվածքները, փայտյա իրերն ու կարած հագուստեղենը մեծ համբավ էին վայելում ոչ միայն իրենց հայրենիքում, այլ նաև նրա

[39] Տե՛ս V.Totomjanz und E. Topschjan, Die Sozialekonomische Turkei, Berlin, 1901, seit 66-67:

[40] Բյուզանդիոն, 1897, օգոստոսի 14:

[41] Տե՛ս «Մասիս», 1885, փետրվարի 2, «Արծագանք», 1882, թիվ 9, էջ 136:

[42] Տե՛ս Գ. Երևանյան, նշվ. աշխ., էջ 228-231:

[43] Տե՛ս Ա-Դո, նշվ. աշխ., էջ 4.1, 190:

սահմաններից դուրս: 1889 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ Արևմտյան Հայաստանի քաղաքներում «կան շատ վարպետներ, որոնք շինում են արդի եվրոպական կատարելագործված արհեստի ամենանուրբ ու ամենաբարդ կազմության արտադրություններ: Եվ սրանով չեն բավականանում նրանք. աշխատում են իրանք ևս զարգացնել արհեստը ազգային ոգով: Այդ ձգտումը ընդհանուր է հայ արհեստավորների մեջ»[44]:

Արհեստավորները Էրզրումում պատրաստում էին հրաշալի կողպեքներ և ամենանուրբ կերպով փորագրում պողպատի վրա[45], իսկ Վանում շինում էին ոսկյա և արծաթյա այնպիսի իրեր, որոնք հիացմունք էին պատճառում ճանապարհորդներին և մեծ քանակությամբ արտահանվում էին Եվրոպա ու Ամերիկա[46]: Նրանք Մուշում պատրաստում էին կճուճներ, որոնք շատ դիմացկուն էին և զարդարված էին ոսկեզօծ թելիկներով և ջրամաններ, որոնք ջուրը միշտ սառն էին պահում և «մի տեսակ ֆիլտր են, մաքրում են ջրի անմաքրությունը»[47]:

Մետաղագործներից ու բրուտագործներից հետ չէին մնում նաև կտավագործները, մետաքսագործներն ու գորգագործները: Բիթլիսում այնպիսի կտավ էին պատրաստում, որը «յուր նմանն չունի և ոչ մեկ տեղ»[48], իսկ Խարբերդի սանջակում այնպիսի գորգեր էին գործում, որ ականատեսներից մեկի խոսքերով ասած՝ «մարդ կզարմանա, թե ինչպես կհաջողին այդչափ գեղեցիկ ու պատշաճավոր եղանակով իրարու հարմարեցնել բազմազան երանգներ, զորս իրենք կներկեն՝ գործածելով զուտ տեղական բույսեր և հանքեր»[49]:

Լինչը պատմում է, թե լինելով Վանում, ինքը անջրանցիկ վերարկուի կարիք է զգացել, և տվել է դերձակներին դրա օրինակը՝ պատրաստելու համար: Եվ դերձակները մահուդից պատրաստել են այնպիսի հրաշալի անջրանցիկ վերարկու, որ կարող էր զարմացնել անգամ արևմտահնդկական դերձակին: «Այդ ժամա-

[44] Մշակ, 1889, հուլիսի 9, թիվ 84:

[45] Գր. Արծրունի, նշվ. աշխ., էջ 19:

[46] Տե՛ս Армянский Вестник, 1916.- N 4.- էջ 14:

[47] Վ. Փափազյան, հ. 5, էջ 474:

[48] Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, էջ 106:

[49] Մասիս, 1893, ապրիլի 24, էջ 252-253:

նակվանից,- գրում էր նա,- Վանի այդ անջրանցիկ վերարկուն դարձավ իմ ուղեկիցը»[50]:

Հայ վարպետներն իրենց շինվածքներով ու գործվածքներով մասնակցում էին համաշխարհային կամ ծայրամասային ցուցահանդեսներին և շահում մրցանակ: 1867 թ. Փարիզում Սվազցի Ստեփան անունով մի արհեստավոր վիրաբուժական և գինեկոլոգիական նուրբ գործիքներ պատրաստելու համար արժանացել է պատվո վկայականի: Նրա շինած գործիքները «ամենակատարյալը դատվեցան»[51]:

1880 թ. Գյուրինում մի հայ ջուլհակուհի, որի անուն ազգանունը ցավոք մեզ չհաջողվեց պարզել, հնարել է մի սարքավորանք, որով բրդյա գործվածքների վրա արտատպում էր եվրոպական կերպասների զարդերն ու գույները, ձևերն ու ծաղիկները՝ դրանց բոլոր նրբություններով հանդերձ: Ջուլհակուհու համբավը շուտով տարածվում է ամենուրեք և նրա մոտ գալիս են սովորելու Մալաթիայից, Սեբաստիայից, Մարաշից, Կեսարիայից և այլ վայրերից: Իսկ քուրդ աղաներն ու բեյերը, նրա գյուտը սովորելու համար, սկսում են մեղմ վարվել հայ գյուղացիների հետ և նույնիսկ պատժել իրենց հովիվներին, եթե նրանք նեղություն էին պատճառում հայերին: Նրանք մեծացնում են իրենց ոչխարների հոտը, որովհետև համոզվում են, որ «իրանց ապրանքը և նորան պահելու ու պահպանելու աշխատությունը զուր չի կորչի»[52]:

1910 թ. թուրքական կառավարության կողմից կազմակերպված Վանի ցուցահանդեսին մրցանակ են շահում մի խումբ հայ արհեստավորներ, որոնցից պետք է հիշատակել Ն. Տ. Գրիգորյանին և Ն. Պ. Շատախցյաններին՝ իրենց պատրաստած սեղանների, ծաղկակալների, ափսեների ու բաժակների համար, Մ. Սանաթագործյանին՝ խոզանակների, Ռ. Մարտիրոսյանին՝ գործած շալի, Գ. Սարուխանյանին՝ քերենների, Ս. Գոնտակչյանին՝ գործած գորգի համար և ուրիշներին[53]: Առանձնապես հրաշալի է եղել ոսկերիչ Գ. Գույումճիպաշյանի պատրաստած երկրագունդն իր պատվանդանով, որն՝ ըստ ականատես Ա. Մենակի վկայության, «ինքն իրեն պտտելով ցույց կուտա ամիս, օր, ժամ և լուսինը»[54]:

Բերված այս փաստերը ցույց են տալիս, որ 1) արհեստի միևնույն ճյուղերը գոյություն ունեին տարբեր քաղաքներում և գյուղաքաղաքներում, որն աշխատանքի հասարակական թույլ բաժանման արդյունք էր: 2) Արհեստի որոշ ճյուղեր զարգացած էին մի քաղաքում, որոշ ճյուղեր՝ մի այլ քաղաքում. դա պայմանավորված էր գերազանցապես տեղական հումքի առկայությամբ (երկաթահանքերին ու պղնձահանքերին մերձակա շրջաններում զարգանում էին մետաղամշակությունն ու զինագործությունը, անասնապահական և տեխնիկական բույսերի շրջանում կտավագործությունն ու գորգագործությունը և այլն): 3) Չնայած տիրապետող քաղաքական և տնտեսական պայմաններին՝ վարպետները արհեստի առանձին ճյուղեր հասցրել էին կատարելության:

Սակայն արհեստներն իրենց բնույթով բացառում էին աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը և, հետևաբար, խոշոր արդյունաբերության զարգացումը: Կ. Մարքսը գրում է. «Թեև համքարային կազմակերպությունն առաջ էր բերում արհեստների առանձնացում, մեկուսացում ու զարգացում և դրանով մանուֆակտուրային ժամանակաշրջանի համար նյութական նախադրյալ էր ծառայում, այնուամենայնիվ ինքը՝ համքարային կազմակերպությունը, բացառում էր աշխատանքի մանուֆակտուրային բաժանման հնարավորությունները: Ընդհանուր առմամբ և ամբողջությամբ բանվորն այնքան էր սերտաճում իր արտադրամիջոցի հետ, որքան խխունջը խեցեպատյանի հետ»[55]:

Արևմտյան Հայաստանի քաղաքներում արհեստներին զուգահեռ զգալիորեն զարգացած էր նաև վաճառականությունը և ձևավորված էր վաճառականական խավը: Ամեն քաղաք ուներ առևտրականների իր դասը: Երզրումում հայտնի էին Հանեյանները, Պալաթյանները, Տեր-Ազարյանները, Սահրադյանները, Չիթողցյանները, Թրամբյանը, Խերբեկյանը, Ասլանյանը, Մանկասարյանը, Մանուկյանը, Սաբոնճյանը, Փամբաղջյանը, Տիգրանյանը և ուրիշներ[56]:

[50] Խ. Ֆ. Բ. Լինչ, նշվ. աշխ., էջ 115:

[51] Բազմավեպ, 1882, էջ 298:

[52] Մշակ, 1881, մայիսի 8, թիվ 82:

[53] Տե՛ս «Ազատամարտ», 1910, մարտի 17, թիվ 235:

[54] Նույն տեղում:

[55] Կ. Մարքս, Կապիտալ, Երևան, 1954 թ., հ.1, էջ 378:

[56] Տե՛ս «Մշակ», 1889, հոկտեմբերի 5, թիվ 113:

Վանում հայտնի էին Գափամաչյան, Ճիտեջյան, Երամյան, Թյությունջյան եղբայրները, Այվազյանները, Թերզիբաշյանները, Տպագյանները, Շահբազյան-Վարդապետյան և Վուվունեկյան-Կազոյան ընկերությունները[57]:

Բիթլիսում ճանաչված էին Գրիգորյան եղբայրները, Շողիկյանը, Խաչմանուկյանը, Մաթևոսյանը, Մոկլոզյանը, Անթոնյանը, Գորգմազյանը, Ասատրյանը, Խանամիրյանը, Քրմոյանը, Ախճյանը և ուրիշները:

Մուշում հայտնի էին Մովսիսյանները, Շարաֆյանները, Ասլանյանը, Քեշիշյանը, Սահակյանը, Միրջանյանը, Սիրունյանները, Սլկունիք, Փոթիկյանը, Բերյանները և այլոք:

Խարբերդում նշանավոր էին Գազանճյանը, Շաշալյանը, Համբարձումյանը, Թուֆենքճյանը, Տարագճյանը, Էքիզյանը, Պրազիլյանը, Խանիկյանը և մյուսները[58]:

Այդ առևտրականներից յուրաքանչյուրը մասնագիտացել էր գյուղատնտեսական և արդյունաբերական որոշակի ապրանքների առևտրի մեջ: Էրզրումում Թրմբյանը, Խերեբկյանը. Ասլանյանը, Մանկասարյանը և Սեֆերյանը զբաղվում էին բրդեղենի և բամբակեղենի, Սապոնճյան, Փամբաշճյան եղբայրները, Տիգրանյանը, Ղուկասյանը և Օվոյանը՝ ապակեղենի, Փիլիպոսյանը, Տեր-Պետրասյանը, Տեր-Ասատրյանը և Զաքարյանը՝ մետաքսեղենի, Հանեսյանը, Սահաթճյանը և Խուդավերդյանը՝ կաշվեղենի, Տելոզլյանն ու Նեմլի-Զադեն՝ երկաթեղենի առևտրով[59]:

Խարբերդում Գազանճյանը զբաղվում էր բամբակի, Շաջալյանը՝ մանուֆակտուրային ապրանքների, Համբարձումյանը՝ գործվածքների, Տարագճյանը՝ կերպասեղենի, Էքիզյանը՝ երկաթեղենի, Պրազիլյանը՝ շաքարի, Խանիկյանը՝ կաշվեղենի առևտրով:

Քաղաքներում առևտրական գործունեությունը տարբեր ժամանակներում է ձևավորվել. Վանում Ճիտեջյան եղբայրները սկսել են առևտուր անել 1876 թվից, Երամյան, Թյությունջյան, Այվազյան եղբայրներն ու ազգականները՝ 1876 թվից հետո,

[57] Տե՛ս «Մուրճ», 1904, թիվ 8, էջ 22-23:

[58] Տե՛ս Վահե Հայկ, Խարբերդը և նրա ոսկեղեն դաշտը: Հուշամատյան պատմական, մշակութային և ազգագրական, Նյու-Յորք, 1959, էջ 64 (հետագայում՝ նշվ. աշխ.):

[59] Տե՛ս նույն տեղում:

Գաբամաճյան ընկերությունը կազմավորվել է 1882 թ. և այլն[60]:

Նրանք, ըստ իրենց դրամական կարողության, բաժանվում էին խոշոր, միջին և մանր խմբերի, ընդ որում, քանակապես գերիշխողը մանր առևտրականներն էին: Վանում 1889 թ. կար 276 առևտրական, որոնցից 6-ը ուներ 5000-10000, 20-ը՝ 1000-2500, իսկ 250-ը՝ 200-1000 անգլիական ոսկի[61]: Բայց դրամապես գերիշխողը խոշոր առևտրականներն էին: Նույն թվին մի հաղորդման մեջ ասվում էր. «Վանի, Բաղեշի ու Կարինի դրամատերերից ամենանշանավորի կարողությունը 30000 ոսկուց ավելի չի անցնում. վերջին թիվը Տաճկահայաստանի հարստության «maximum»-ն է: 200 ոսկի ունեցողը լավ կարողության տեր է հաշվվում: Այդ նյութական կարողությունն էլ գտնվում է մի քանի անձանց ձեռքը»[62]:

Մանր ու միջին առևտրականները ծավալել էին իրենց գործունեությունը գերազանցապես Արևմտյան Հայաստանի քաղաքներում ու գյուղերում, իսկ խոշոր առևտրականները կապված էին ոչ միայն Թուրքիայի, այլ նաև Եվրոպայի ու Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների հետ: Նրանք եվրոպական արդյունաբերական կապիտալի գործակալներն էին և կազմում էին հայ մեծահարուստ միջնորդական (կոմպրադորական) բուրժուազիան:

Խոշոր առևտրականները Եվրոպայից ապրանքներ էին բերում և տալիս միջիններին, իսկ սրանք էլ՝ մանրերին և այդպիսով առաջանում էր անմիջական արտադրողի և սպառողի միջև միջնորդների աստիճանակարգ: Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ Բաղեշի վաճառականները «բուրդ, կաշի, խեժ, շրեշ, գղթոր, տորոն, մեղրամոմ, Հալեպի և Եվրոպայի ապրանքներ բերել տալով կը փոխադրեն զանազան գավառները. մեծ մասն մի ևս կա չարչի, որք Մշո դաշտ, Պուլանըխ, Խընուս, Ալաշկերտ, Վանա գավառներ ու գեղերը լեցուն են. ամեն տեսակ ապրանքներ կը տանին ի վաճառ»[63]:

Նույն բանն էր հաստատում նաև «Մասիսի» թղթակիցներից

[60] Տե՛ս «Մուրճ», 1904, թիվ. 8, էջ 22:

[61] Տե՛ս «Մշակ», 1889, հունիսի 17, թիվ 67:

[62] Մշակ, 1889, հուլիսի 29, թիվ 84:

[63] Գ. Սրվանձտյանց, Համով-Հոտով, էջ 107:

մեկը, որը 1881 թ. գրում էր. «Պոլիս, Տփխիս, Մոսկվա, Օդեսա, Նուխի, Եգիպտոս, Բերիա, Տիարպեքիր, Սղերդ, Կարին, Մուշ, Պուլանուխ, Խնուս, Մանազկերտ, Պարսկաստան բաղեշցոց առևտրական շահու աղբյուրներ են»[64]:

Ժողովրդի հետ ամենից շատ գործ ունեցողը մանր առևտրականը կամ չարչին էր, որը Արևմտյան Հայաստանում կոչվում էր փերեզակ: Նա լավ գիտեր, թե որ ապրանքը որտեղ, երբ, ում և ինչ գնով կարող էր վաճառել և, օգտվելով բնակիչների աղքատությունից ու թշվառությունից, խավարից ու տգիտությունից, գռփում էր նրանց: Շատ անգամ փերեզակը տալիս էր ապրանքը ապառիկ, բայց բերքահավաքին վերցնում էր ապրանքի գնի տասնապատիկը և այդ ու նման ճանապարհներով զրկում գյուղացիներին շարժական ու անշարժ գույքից: Գ. Սրվանձտյանցը նշում էր. «Ընդհանրապես չափազանցորեն հռչակված է բաղեշցի վաճառականաց և վաճառողաց շահասիրությունն մարդ խաբելու մեջ, և այդ քաղաքի շրջակա գյուղացոց ավերումն՝ այդպիսյաց անխղճութենեն է, որք արտեր կը գրավեն, ցորեններ և անասուններ կը տիրեն, դեռ տոկոսի տեղ չեն կրնար լցնել. և այդ կընեն առևտրական արդարության օրինաց համաձայն»[65]:

Վաճառականները հաճախ անցնում էին վաշխառուական գործունեության, որի հետևանքով առևտրա-վաշխառուական կապիտալները միահյուսվում էին: 1889 թ. «Մշակի» թղթակիցը գրում էր, որ Էրզրումի, Բիթլիսի և Վանի խոշոր վաճառականներից շատերը իրենց գումարները ծառայեցնում են վաշխառուական նպատակների և «դրամի ամենացածր շահի 5 տոկոս են ստանում»[66]:

1904 թ. Ծերուկը նշում էր, որ Վանում Ճիտեջյան եղբայրները զբաղվում են առևտրով «և մասնակցում են տեղական կառավարության կողմից եղած զանազան աճուրդների գործառնություններին (օր.՝ գնում են գյուղերի տասանորդական տուրքը և այլն)»[67]:

Այդպիսով, առևտրականները մի կողմից կեղեքում ու հարստահարում էին ժողովրդին՝ արհեստավորներին ու գյուղացիներին, իսկ մյուս կողմից նպաստում էին երկրի տարբեր շրջանների, քաղաքների ու գյուղերի միջև եղած տնտեսական կապերի առաջացմանն ու ամրապնդմանը և, հետևաբար, ներքին շուկայի ստեղծմանը: Նրանք նպաստում էին համաշխարհային շուկայի հետ Արևմտյան Հայաստանի տնտեսական կապերի առաջացմանն ու ստեղծմանը և, վերջին հաշվով, դրական դեր էին խաղում: «Վաճառականը,- գրում է Ֆ. Էնգելսը,- հեղափոխող տարրն է այն հասարակության մեջ, որտեղ առաջ ամեն ինչ անշարժ էր»[68]:

Արևմտյան Հայաստանի արհեստավորների և առևտրականների զգալի մասը համախմբված էր էսնաֆություններում[69], որոնք, ըստ էության, նույնն էին, ինչ համքարությունները Արևելյան Հայաստանում:

Էսնաֆությունների մեջ համախմբվում էին սովորաբար նույն արհեստի ներկայացուցիչները: Եթե արհեստավորների թիվը մեծ էր, ապա կառավարումն ու աշխատանքի կազմակերպումը հեշտացնելու նպատակով նրանք կազմում էին մի քանի էսնաֆություն, բայց մեկ ընդհանուր միավորման մեջ: Օրինակ՝ փայտ սղոցողներն իրենց բազմամարդ լինելու պատճառով կազմում էին 5 էսնաֆություն, քարտաշները՝ 6 էսնաֆություն, ատաղձագործները՝ 7 էսնաֆություն և այլն:

Սակայն էսնաֆությունների մեջ հաճախ միավորվում էին ոչ միայն նույն, այլև բնույթով մոտ ու փոքրաթիվ արհեստներով զբաղվողները: Օրինակ՝ Էրզրումում՝ ըստ Խ. Մառնակոզյանի վկայության, «կոշկակարները, չմշկակարները և այլոք կազմում էին մի էսնաֆ, որմնադիրները, քարտաշները՝ մի էսնաֆ, դարբինները, պղնձագործները՝ մի էսնաֆ և այլն»[70]:

Էսնաֆությունների մեջ կարող էին մտնել բոլորը, անկախ ազգությունից ու դավանանքից: Հաճախ միևնույն էսնաֆության մեջ կարելի էր հանդիպել ինչպես հայերի, այնպես և թուրքերի ու հույների, բայց հաճախ էսնաֆություններում արհեստավորներն ու առևտրականները համախմբվում էին ըստ ազգության: Օրինակ՝ Վանում գոյություն ունեին բեռնակիրների հայկական և թուրքական համայնքներ:

---

[64] Մասիս, 1881, հոկտեմբերի 17:

[65] Գ. Սրվանձտյանց, Համով-Հոտով, էջ 107:

[66] Մշակ, 1889, հուլիսի 29, թիվ 84:

[67] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 22:

[68] К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. т. XIX, Ч. II.- էջ 470:

[69] Էսնաֆ արաբերեն բառ է, որ նշանակում է արհեստավոր:

[70] Մշակ, 1888, նոյեմբերի 24, թիվ 134:

Քաղաքներում յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր որոշակի տեղը: Ս. Եղիազարովը նշում էր, որ Էրզրումում XIX դ. սկզբին դարբինների մի խումբ տեղավորված էր մաքսատան, մի այլ խումբ՝ վրացական դարպասների մոտերքում[71]: Իսկ նրանք, ովքեր իրենց զբաղմունքով կարող էին առաջացնել կեղտոտություն և ապականություն (կաշեգործները, օճառագործները և այլն), սովորաբար տեղավորված էին քաղաքից դուրս՝ գետի ափին[72]:

Յուրաքանչյուր արհեստանոցում կամ կրպակում՝ իբրև կանոն, աշխատում էին երեք հոգի՝ վարպետը կամ ուստան, ենթավարպետը կամ քարգահը և աշակերտը: Արհեստանոցն ու աշխատանքի գործիքները պատկանում էին վարպետին, իսկ ենթավարպետն ու աշակերտը սովորաբար զուրկ էին դրանցից: Հաճախ պատահում էր նաև, որ արհեստանոցում կամ կրպակում աշխատում էր միայն մեկ վարպետ,-կամ մեկ վարպետ և ենթավարպետ, կամ մեկ վարպետ և մեկ աշակերտ. նրանք բոլորն էլ մտնում էին մեկ էսնաֆության մեջ: Ս. Եղիազարովը գրում էր, որ Անդրկովկասի և Փոքր Ասիայի քաղաքներում «կային այնպիսի կորպորացիաներ, որտեղ վարպետը պահում էր ոչ ավել, քան մի ենթավարպետ և մի աշակերտ: Քիչ չէին նաև այն արհեստավորները, որոնք մենակ էին աշխատում՝ առանց աշակերտների, ենթավարպետների ու աշխատողների»[73]:

Էսնաֆություններից յուրաքանչյուրն ուներ իր ղեկավարը, որը կոչվում էր ուստաբաշի: Նա ուներ երկու կամ ավելի տեղակալ, որ կոչվում էին աղսախկալ: Բացի դրանցից, էսնաֆություններն ունեին նաև գանձապահ կամ խազնադար և ցրիչներ, որոնք կոչվում էին իգիդբաշիներ: Սրանք բոլորն ընտրվում էին վարպետների ընդհանուր ժողովում՝ 20 տարի ժամանակով: Ուստաբաշին և նրա տեղակալներն ընտրվում էին սովորաբար հարուստ և ազդեցիկ մարդկանցից, իսկ խազնադարն ու իգիդբաշիները՝ աշխատունակությունը կորցրած արհեստավորներից: Երբեմն էսնաֆությունները վարձում էին իգիդբաշիների՝ կողմնակի, իրենց մասնագիտության հետ բոլորովին կապ չունեցող մարդկանցից:

[71] Տե՛ս С. А. Егиазаров. Исследования по истории учреждений в Закавказье, часть II, городские цехи, организация и внутреннее управление закавказских амкарств.- Казань, 1891.- էջ 13 (հետագայում վկայակոչումը՝ Ս. Եղիազարով, նշվ. աշխ.):

[72] Ս. Ա. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 16-18:

[73] Նույն տեղում, էջ 90:

Յուրաքանչյուր էսնաֆություն, բացի ուստաբաշուց, ուներ նաև շեխուստասի, որը, ըստ Խ. Մառնակոզյանի վկայության, «մի աստիճան պաշտոնով բարձր էր ուստաբաշուց»[74]: Ուստաբաշիները սովորաբար լինում էին հայեր, իսկ շեյխուստաբիները՝ մահմեդականներ, գերազանցապես թուրքեր:

Քաղաքի բոլոր էսնաֆությունները, բացի մասնակի ղեկավարներից, ունեին նաև մեկ ընդհանուր ղեկավար, որը կոչվում էր շեխսահապի և պարտադիր կարգով լինում էր մահմեդական: Բայց փոքր քաղաքներում կամ գյուղաքաղաքներում, որտեղ արհեստավորների թիվը քիչ էր, բոլոր էսնաֆություններն ունեին մեկ ուստաբաշի կամ շեխուստասի: Իսկ այնտեղ, որտեղ միատեսակ արհեստավորների թիվը մեծ էր, և նրանք կազմում էին մի քանի էսնաֆություններ, այդ էսնաֆություններից յուրաքանչյուրն ընտրում էր մեկ աղսախկալ, իսկ բոլորը միասին՝ մեկ ուստաբաշի:

Էսնաֆության ղեկավարների գործառնությունները սահմանված էին ադաթով: Ուստաբաշին իր օգնականների՝ աղսակխալների հետ միասին իրենց իրավասության տակ գտնվող արհեստավորների համար հումք էին գնում, որոշում կամ սահմանում էին նրանց ապրանքների գները, վարձում արհեստանոցներ կամ կրպակներ, թույլ էին տալիս բացելու նոր արհեստանոցներ, սահմանում էին յուրաքանչյուր վարպետի ունեցած ենթավարպետների ու աշակերտների թիվը, բաժանում էին հարկերն ու տուրքը և հավաքում դրանք, հետևում էին արհեստավորների վարքին, կարգավորում նրանց դրամական միջոցները, հսկում ապրանքների որակի վրա, ընդունում էին քաղաքացիների ու արհեստավորների բողոքները, լուծում նրանց խնդիրները և այլն:

Գանձապահը պահում էր էսնաֆության դրամական միջոցները, արհեստավորներից անդամավճար էր հավաքում, հաշվետվություն էր տալիս ուստաբաշուն կամ էսնաֆության անդամներին և բաց էր թողնում նպաստներ, իսկ իգիդբաշիները կատարում էին ուստաբաշու և աղսախկալների բազմաթիվ հրամաններն ու կարգադրությունները:

Յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր դատարանը, որի մեջ մտնում էին ուստաբաշին և աղսախկալները: Ուստաբաշին ինքն էր վճռում ընթացիկ հարցերը, բայց բարդ և մեծ կարևորություն

[74] Մշակ, 1891, հունիսի 13, թիվ 65:

ունեցող խնդիրների լուծման համար հրավիրում էր դատական նիստ, որին մասնակցում էին փորձված և հմուտ վարպետները: Դատարանը քննում և լուծում էր արհեստավորների միջև եղած վեճերը, նրանց անձնական կամ ընտանեկան խնդիրները, դավանաբանական հարցերը և այլն[75]:

Դատարանից դժգոհ մնացողները կարող էին դիմել շեխուստասուն, շեխսահապին կամ քաղաքային պաշտոնական դատարանին, որոնց վճիռը համարվում էր վերջնական: Սակայն Խ. Մառնակոզյանը, Յու. Հախվերդովը և Ս. Եղիազարովը նշում էին, որ արհեստավորները հազվադեպ էին դիմում այդ պաշտոնյաներին: Նրանք, որպես կանոն, լուծում էին իրենց վեճերը ուստաբաշու կամ աղսախկալների միջոցով:

Պատժի ձևերը բազմազան էին. ուստաբաշին տուգանում էր մեղավորին, ստիպում էր նրան կազմակերպել խնջույք և մասնակից դարձնել բոլոր վարպետներին, մեխում էր վատորակ ապրանքները (օրինակ՝ կոշիկները) պատրաստողի արհեստանոցի դռանը, փակում էր նրա արհեստանոցը կամ կրպակը, զրկում էր աշակերտ կամ ենթավարպետ պահելու իրավունքից, ենթարկում էր մարմնական պատժի, արտաքսում էր էսնաֆությունից և այլն:

Ուստաբաշու ինչպես վարչական, այնպես էլ դատական գործունեությունը ենթակա էր էսնաֆության ընդհանուր ժողովի քննարկմանը և հաստատմանը: Բոլոր հարցերը լուծվում էին ձայների հասարակ մեծամասնությամբ: Ժողովները սովորաբար գումարվում էին կա՛մ որևէ ընդարձակ արհեստանոցում, կա՛մ որևէ վարպետի տանը, կա՛մ եկեղեցու բակում: Վճիռներն ի կատար էին ածում իգիդբաշիները՝ սովորաբար մեկ շաբաթվա ընթացքում: Եթե մեղավորը ընդդիմանում էր, ապա ուստաբաշու կարգադրությամբ իգիդբաշին փակում էր նրա արհեստանոցն ու կրպակը կամ ուղղակի ջարդ ու փշուր էր անում դրանք:

Էսնաֆությունները դասակարգային կազմակերպություններ էին, որտեղ շեխսահապին, շեխուստասին, աղսախկալը և հաճախ նաև վարպետը շահագործում էին ենթավարպետներին՝ նրանց սովորեցնելու և բարեկրթելու պատրվակով: Այսպես, արհեստավորները տոն օրերին պարտավոր էին նվերներ տալ ինչպես աղսախկալին ու ուստաբաշուն, այնպես էլ շեխուստասուն ու շեխսահապին: Յու. Հախվերդովը նշում էր, որ նրանք այդ

[75] Տե՛ս Ս. Ա. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 292:

նվերները հաճախ տալիս էին խնձորի մեջ 20, 40, 50 արծաթյա կոպեկանոցներ և նույնիսկ ռուբլիներ դնելով[76]: Իսկ Խ. Մառնակոզյանը գրում էր, որ երզրումում շեխուստասին և ուստաբաշին «ընծաներ էին ստանում նոր խալֆաներից, ուստաներից, մեղապարտներից. նմանապես և նշանավոր տոներին էսնաֆը շնորհավորության միջոցին դատարկաձեռն չէր ներկայանում նրանց»[77]:

Այն վարպետները, որոնք ունեին ենթավարպետներ ու աշակերտներ, իրենց հերթին նվերներ էին ստանում նրանցից տարբեր առիթներով՝ ենթավարպետ դառնալիս, արհեստանոց բացելիս և այլն: Վարպետները ենթավարպետներին դառն աշխատեցնելուց հետո վարձատրում էին չնչին գումարով՝ իրենց եկամտի 5 տոկոսի չափով:

Մեր ձեռքի տակ կան ուղղակի և անուղղակի տեղեկություններ ենթավարպետների կամ արհեստավորների ստացած աշխատավարձի վերաբերյալ: Բերենք դրանցից մի քանիսը: 1868 թ. Շավարշը գրում էր, որ երզրումում արհեստավորները «ամենայն ճիգ ի գործ դրած՝ հազիվ-հազ օրական պարեն մը կրնան հայթայթել»[78]:

1890-ական թթ. Լինչը հիշատակում էր, որ երզրումում հյուսնի և այլ արհեստավորների օրական աշխատավարձը լավագույն դեպքում կազմում է 8 դուրուշ[79]:

1911 թ. Ս. Զավարյանը գրում էր. «Մեր քաղաքացի էսնաֆները կը վաստակին օրական հազիվ տաս-տասնհինգ դուրուշ»[80], որը, իհարկե, չէր բավարարում նրա ընտանիքի կարիքները:

Արհեստավորների վիճակն ավելի վատ էր գյուղերում: Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ Գյումուշխանեից գաղթած և Երզնկայի սանջակի Չինդլիկ գյուղում հաստատված արհեստավորները, որ զբաղվում էին դարբնությամբ, դերձակությամբ և այլ արհեստներով, «ամենախղճուկ ստրուկներու վիճակ մը ունեին, որոնց կրածները, զորս կը պատմեին, եթե ստույգ է, չէր արժեր իրենց ապրիլն ու շահիլը»[81]:

[76] Տե՛ս Ю. Ахвердов. Тифлисские амкары.- Тифлис, 1883.- էջ 16-17:

[77] Մշակ, 1891, հունիսի 15, թիվ 66:

[78] Մասիս, 1868, մայիսի 13:

[79] Խ. Ֆ. Լինչ, նշվ. աշխ., էջ 278:

[80] Ազատամարտ, 1911, մայիսի 1, թիվ 576:

[81] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Բ., էջ 43:

Վարպետը շահագործում էր նաև աշակերտին: Նա աշակերտ ընդունելիս նախ փորձաշրջան էր անցկացնում, որը տևում էր վեց շաբաթից մինչև վեց ամիս: Այդ ժամանակաշրջանում աշակերտը պարտավոր էր և՛ ձրի ծառայել վարպետին, և՛ վճարել նրան 20 կոպեկից մինչև 2 ռուբլի: Եթե վարպետը հավանում էր աշակերտին, ապա պահում էր, եթե ոչ՝ արտաքսում էր: Ուսուցման ժամկետը շատ երկար էր տևում՝ մինչև 10 տարի: Ս. Եղիազարովը նշում էր, որ «անարդար է պահել երիտասարդին 7, 8 և նույնիսկ 10 տարի աշակերտի վիճակում»[82]: Յուրաքանչյուր վարպետ ձգտում էր երկարաձգել աշակերտների ուսուցման ժամկետը:

Ուսման ընթացքում աշակերտը պարտավոր էր տարբեր առիթներով նվերներ տալ վարպետին, որոնք դրամական զանազան վճարումների հետ կազմում էր զգալի ծախսեր և «ծանրաբեռնիչ էր աշակերտ-ասպիրանտների համար»[83]: Բացի դրանից, աշակերտը պարտավոր էր ծառայել նաև վարպետի տանը՝ կատարելով նրա համար զանազան գործեր: Օրինակ՝ Խ. Մառնակոզյանը նշում էր, որ էրզրումում «աշակետը իր ծառայության միջոցին, բացի խանութում ծառայելուց, ծառայում էր և վարպետի տանը. ջուր էր կրում, փայտ կոտրում և այլն»[84]:

Մի քանի տարի հետո վարպետն, իհարկե, վարձատրում էր աշակերտին, բայց այնքան չնչին էր լինում գումարը, որ չէր բավարարում անգամ նրա օրական ապրուստին: Նույն հեղինակը գրում էր, որ էրզրումում, «երբ աշակերտը այնքան բան էր սովորած, որ արժանի էր վարձի, ուստան հրավիրում էր աշակերտի հորը և մի երկու վարպետի և նրանց ներկայությամբ որոշում աշակերտին մի թեթև վարձ»[85]:

Ըստ Ս. Եղիազարովի տվյալների՝ վարպետը շաբաթական տալիս էր աշակերտին սկզբում 5, հետո՝ 10, իսկ այնուհետև 30-40 կոպեկ[86]: Աշակերտը, բացի վարպետից, փող ու նվերներ էր տալիս նաև աղսախկալին ու իգիդբաշուն. աղսախկալին՝ վարպետին տվածի կեսը, իսկ իգիդբաշուն՝ 10-20 կոպեկ[87]:

[82] Ս. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 237:

[83] Նույն տեղում, էջ 68:

[84] Մշակ, 1891, հունիսի 15, թիվ 66:

[85] Նույն տեղում:

[86] Ս. Ա. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 112:

Վարպետը, տնտեսական շահագործումից բացի, ենթավարպետին ու աշակերտին ենթարկում էր նաև քաղաքական իրավազրկման. նրանց չէր թույլատրվում մասնակցել ժողովներին, բողոքել պաշտոնյաներին կամ դատարաններին, ինքնուրույն գործարքի մեջ մտնել պատվիրատուների կամ գնորդների հետ: Ճիշտ է, ենթավարպետն իրավապես կարող էր տեղափոխվել մի այլ վարպետի մոտ, կամ համատեղության կարգով աշխատել այլ տեղում, բայց իր վարպետի նկատմամբ ունեցած մի շարք պարտավորությունները և աշխատանքային օրվա տևողությունը թույլ չէին տալիս նրան այդ անելու: Աշխատանքային օրը չէր սահմանափակված որևէ օրենսդրական ակտով. այն կախված էր ամբողջովին վարպետի կամքից, որը, ինչպես ենթավարպետին, այնպես էլ աշակերտին աշխատեցնում էր սովորաբար արևածագից մինչև մայրամուտ: Վարպետը, ձգտելով ավելի ուժեղացնել իր անձնական իշխանությունը ենթավարպետի և աշակերտի նկատմամբ, հաճախ թույլ չէր տալիս նրանց ունենալ աշխատանքի սեփական գործիքներ և անգամ բնակարան: Եվ ենթավարպետը՝ ըստ Ս. Եղիազարովի վկայության, շատ դեպքերում «ապրում էր հենց իր ուսուցչի մոտ և նրա ղեկավարության տակ կատարելագործվում էր արհեստի մեջ»[88]:

Վարպետը հաճախ ծեծում էր ենթավարպետին ու հատկապես աշակերտին ու վիրավորում նրանց մարդկային արժանապատվությունը: Խ. Մառնակոզյանը նշում էր, որ ուսուցումը ընդհանրապես ընթանում էր «խիստ ծեծով, կոպիտ բռնակալություններով»[89]:

Ենթավարպետների ու աշակերտների դրությունն ավելի էին վատթարացնում պետական հարկերն ու պարհակները: Թուրքական կառավարությունը հարկեր էր դնում ոչ միայն գյուղական, այլ նաև քաղաքային բնակչության վրա, հատկապես արհեստավորների: Պահանջում էին վճարել ծխահարկ, գլխահարկ, աշար՝ բերքի 1/10-ի և ավել չափով, եկամտահարկ, կալվածքի հարկ, ինչպես նաև կատարել զանազան պարհակներ (ճանապարհների ու կամուրջների կառուցում ու վերանորոգում, ջրանցքների

[87] Ս. Ա. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 68:

[88] Նույն տեղում, էջ 178:

[89] Մշակ, 1888, նոյեմբերի 29, թիվ 136:

բացում և այլն): Կառավարությունը որպես հարկ արհեստավորներին պարտադրում էր նաև բանակի համար պատրաստել հագուստ ու զենք: Արհեստավորներին տրվում էր միայն հումքը, իսկ արհեստավորները պատրաստում էին պատվերը իրենց աշխատանքով ու միջոցներով: Ս. Եղիազարովը գրում էր. «չկար արհեստ, որի ներկայացուցիչները չկատարեին պետության ղեկավարի օգտին այս կամ այն պարհակը»[90]:

Կառավարությունը հարկերը նշանակելիս որպես տնտեսավարող միավոր ճանաչում էր էսնաֆությունը, իսկ ուստաբաշին և նրա տեղակալները բաժանում էին հարկերն ու պարհակներն իրենց իրավասության տակ գտնվող վարպետների միջև: Վերջիններս էլ պետական պատվերների և պարհակների կատարումը հանձնարարում էին ենթավարպետներին ու աշակերտներին, իսկ դրամական հարկերը տալու համար կա՛մ կրճատում էին ենթավարպետի ու աշակերտի աշխատավարձը, կա՛մ երկարացնում նրանց աշխատանքային օրը:

Բացի կառավարությունից, ենթավարպետներին ու աշակերտներին հարստահարում էին նաև թուրքական պաշտոնյաները: Նրանք պահանջում էին արհեստավորից զանազան նվերներ՝ ամենատարբեր առիթներով: «Ամեն մի դաս,- նշում էր Ս. Եղիազարովը,- ամեն մի արհեստակցական կամ առևտրական միություն մասնակցում էր կամավոր, բայց էությամբ հարկադիր այդ նվիրատվություններին, որոնք ունեին տուրքերի բնույթ»[91]:

Թուրքական կառավարությունն ու պաշտոնյաները հանձինս շեխուստասու, ուստաբաշու կամ աղսախկալների, իրենց հուսալի և ամուր հենարանն էին տեսնում արհեստավորներից հարկերը հավաքելու, նրանց հնազանդության մեջ պահելու և ճնշելու գործում: Ահա թե ինչու, նրանք դարեր շարունակ ոչ միայն չէին ոչնչացնում Արևմտյան Հայաստանի էսնաֆական կարգերը, այլ նաև պահպանում և ամրապնդում էին դրանք:

Էսնաֆություններն ունեին մի շարք սկզբունքներ, որոնք խոչընդոտում էին կապիտալիստական հարաբերությունների առաջացմանն ու զարգացմանը երկրում: Օրինակ՝ արհեստավորներն իրավունք չունեին հումք գնել առանց ուստաբաշու գիտության և թույլտվության կամ զբաղվելու այնպիսի գործերով,

[90] Ս. Ա. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 251:

[91] Ս. Ա. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 249:

որոնք նրանց նեղ մասնագիտությունը չէին[92]: Իսկ վարպետներին ու վաճառականներին արգելում էին կենտրոնացնել նյութական հնարավորություններն իրենց ձեռքում: Եթե էսնաֆություններից որևէ մեկը բարձրացնում էր իր արտադրանքի գինը, ապա մյուս էսնաֆությունները խզում էին նրա հետ ունեցած գործնական կապերը և այդպիսով մեկուսացնում էին նրան, ենթարկում տնտեսական ու բարոյական ճնշման և ստիպում վերականգնել նախկին գները: Ընդհանրապես, էսնաֆությունները դեմ էին մրցակցությանը, օգնում էին միմյանց և ձգտում էին փոխադարձաբար դուրս բերել միմյանց աղքատությունից ու խեղճությունից:

Այդ առումով էսնաֆությունները ընդհանուր նմանություն ունեին եվրոպական համքարություններին, որոնց մասին Կ. Մարքսը գրում էր. «Համքարային օրենքները... խիստ սահմանափակելով այն ենթավարպետների թիվը, որոնց աշխատանք տալու իրավունք ուներ մեկ վարպետը, դրանով էլ հենց պլանաչափորեն արգելք էին լինում համքարային վարպետների կապիտալիստ դառնալուն: Նմանապես՝ վարպետը կարող էր ենթավարպետներ բանեցնել բացառապես միայն այն արհեստում, որի վարպետն էր ինքը: Համքարությունն իրեն եռանդագին պաշտպանում էր վաճառականական կապիտալի՝ համքարությունների դեմ կանգնած կապիտալի այդ միակ ազատ ձևի ամեն մի ոտնձգությունից: Վաճառականը կարող էր ամեն տեսակ ապրանք գնել, բայց ոչ աշխատանքը՝ որպես ապրանք: Նրան հանդուրժում էին լոկ իբրև արհեստի արդյունքների հավաքագնորդի... Թեև համքարային կազմակերպությունը առաջ էր բերում արհեստների առանձնացում, մեկուսացում ու զարգացում և դրանով մանուֆակտուրային ժամանակաշրջանի համար նյութական նախադրյալ էր ծառայում, այնուամենայնիվ, ինքը՝ համքարային կազմակերպությունը, բացառում էր աշխատանքի

[92] Խ. Մառնակոզյանը, հակադրելով էսնաֆական հին բարքերը նորերի հետ, գրում էր. «Այժմ երկաթագործ դարբինը շինում է ամեն տեսակ երկաթյա գործիքներ, հյուսնը շինում է ամեն տեսակ փայտյա առարկաներ, դերձակը կարում է ամեն տեսակ կար և այլն: Իսկ էսնաֆական կարգերի ժամանակ որևէ արհեստի ստորաբաժանումները խնամքով ջոկված էին միմյանցից, թեև շատ անգամ սակավաթիվ լինելու պատճառով այդ ճյուղավորությունները ունենում էին մի ընդհանուր ուստաբաշի: Խստիվ արգելված էր մեկին՝ մյուսի գործը կատարել. Կլեկչին չէր կարող նույնիսկ կարկատան ձգել պղնձե ամանի, իսկ պղնձագործը իրավունք չուներ մի աման կլեկել: Այդ կարգի դեմ զանցառու գտնվող վարպետը ենթարկվում էր պատժի» (Մշակ, 1891, հունիսի 13, թիվ 65):

մանուֆակտուրային բաժանման հնարավորությունները»[93]:

Սակայն էսնաֆական կազմակերպությունները, ի տարբերություն եվրոպական համքարությունների, թույլատրում էին վարպետին ունենալ մեկ աշակերտից ավելի: Յու. Հախվերդովը գրում էր. «այստեղ աշակերտների թիվը որոշված չէ. յուրաքանչյուր վարպետ կարող է ունենալ այնքան, որքան նրան պետք է՝ ըստ զբաղմունքի»[94]:

Էսնաֆությունները չէին արգելում արհեստավորին աշխատանքից հետո զբաղվել ապրանքների արտադրությամբ և դրանք արտահանել վաճառքի: Ս. Եղիազարովը նշում է. «Իհարկե, ոչ ոք չէր խանգարում արհեստավորին արհեստանոցում ցերեկվա աշխատանքից հետո իր զբաղմունքը շարունակելու տանը, իր ընտանիքի անդամների շրջանում, որոնք հնարավորության և կարողության չափով մասնակցում էին տնային սեփական արտադրությանը, որի արդյունքները ընտանիքի ղեկավարը վաճառում էր իր կրպակում այն շինվածքների հետ, որոնք պատրաստված էին շուկայի արհեստանոցում»[95]:

Էսնաֆությունները թույլ էին տալիս արհեստավորներին զբաղվելու միաժամանակ առևտրով, այսինքն՝ արտադրությունը առևտրի հետ միավորելու, իրենց ձեռքում պահելու եկամուտի այն մասը, որը, ըստ կանոնի, պետք է անցներ առևտրականին կամ վաճառականին: «Անդրկովկասում,- գրում էր Ս. Եղիազարովը,- առևտրական գործունեությունը տակավին վերջնականապես բաժանված չէ արհեստավորական գործունեությունից: Շատ դեպքերում արհեստավորը, զբաղվելով իր աշխատանքի արդյունքների վաճառքով, տնտեսական կյանքում և քաղաքացիական շրջանառության մեջ հանդես է գալիս որպես առևտրական»[96]:

Հավանական է, որ իրավիճակն այդպիսին էր նաև Արևմտյան Հայաստանում[97], քանի որ Անդրկովկասի՝ հատկապես Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Ախալքալաքի և Թիֆլիսի շատ արհեստավորներ եկել էին Էրզրումից, Վանից ու Բիթլիսից և բերել իրենց սովորությունները: Խ. Մառնակոզյանը նշում էր. «Թե՛ Կարսի, թե՛ Ախալցխայի և թե՛ Ախալքալաքի արհեստավորների էսնաֆական կարգերը հարկավ շատ միանման են միմյանց, որովհետև այդ տեղերի ամբողջ ժողովուրդը իր այդ սովորությունները առել է Էրզրումից: Վերջին երկու քաղաքների հայ բնակիչները գաղթել են հիշյալ քաղաքից 1828-1830 թվականներին»[98]:

Էսնաֆություններից մի քանիսը՝ շնորհիվ իրենց, համեմատաբար, վաղեմության և արտադրած կամ վաճառած արդյունքների կարողության, մյուսների նկատմամբ ունեին որոշ արտոնություններ, այն է՝ նրանք կամ քիչ էին վճարում կամ բոլորովին չէին վճարում հարկեր ու տուրքեր:

Էսնաֆությունները պայքարում էին, որպեսզի բոլոր առևտրականներն ու արհեստավորները մտնեին այս կամ այն միավորման մեջ: Չնայած դրան, կային զգալի թվով արհեստավորներ ու առևտրականներ, որոնք գործում էին էսնաֆություններից դուրս: Նրանք, չենթարկվելով էսնաֆական օրենքներին ու ավանդույթներին, իրենց շինվածքները վաճառում էին համեմատաբար շահութաբեր գներով և ազատ էին որոշ հարկերից ու տուրքերից:

Շնորհիվ այդ և նման հանգամանքների՝ արհեստավորների ու առևտրականների որոշ շերտեր կարողանում էին կուտակել նյութական հարստություն և հասարակության զարգացման որոշ փուլում արագացնել էսնաֆական կարգերի քայքայման գործընթացը:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի արհեստներն ու առևտուրը ենթարկվում էին հետևյալ մասնակի և ընդհանուր փոփոխությունների. որոշ քաղաքներում ու գյուղաքաղաքներում, անգամ գյուղերում, արհեստների որոշ ճյուղեր կատարելագործվում ու զարգանում էին: Օրինակ՝ Վանում զարգացավ ոսկերչությունը. հին ոսկերիչների կողքին առաջ եկան նորերը: Եթե հները պատրաստում էին հին ճաշակին համապատասխանող զարդեր՝ կոճակներ, գինդեր, ապարանջաններ, մատանիներ և այլն, ապա նորերը պատրաստում էին նոր ճաշակի առարկաներ՝ ծխատուփեր, բաժակներ, գդալներ, դանակներ, պատառաքաղներ և այլն: 1904 թ. հին ոճի ոսկերիչների թիվը 30 էր, իսկ նոր ոճինը՝ 50 մարդ:

[93] Կ. Մարքս, Կապիտալ, Երևան 1954, հ.1, էջ 378:

[94] Յու. Հախվերդով, նշվ. աշխ., էջ 21:

[95] Ս. Ա. Եղիազարով, նշվ. աշխ., էջ 183:

[96] Նույն տեղում:

[97] Խաչկունին 1907 թ. գրում էր, որ Վանում այն արհեստավորները, որոնք տնտեսապես քիչ թե շատ բարեկեցիկ են, «միաժամանակ վաճառականության ընելնին է պատճառը» (Մշակ, 1907, նոյեմբերի 3, թիվ 148):

[98] Մշակ, 1891, հունիսի 13, թիվ 65:

Վանում զարգացավ նաև կահույքագործությունը: Վարպետները տեղի ընտիր ընկուզենուց պատրաստում էին «ճաշակավոր և գեղեցիկ սեղաններ, աթոռներ, կանաֆեններ, թիկնաթոռներ, պահարաններ, արկղներ, մեծ ու փոքր տուփեր, պատկերների շրջանակներ և այլն»[99]: Այստեղ զարգացավ նաև դերձակությունը: Եթե առաջ վարպետները կարում էին ձեռքով, ապա 80-ական թվականներից Զինգեր կարի մեքենայով: Շնորհիվ այդ հանգամանքի՝ «դերձակությունը օրեցօր թև առավ և սկսեց առաջ վազել. տարեց տարի «ֆռանգ-թարզի»ների (այպես են կոչվում մեքենայով գործող վարպետները՝ հներից զանազանվելու համար) թիվը շատանում է, և հագուստի ձևի մեջ նորանոր մոդաներ են մտնում»[100]:

Վանում զարգանում է նաև կոշկակարությունը կամ մուճակագործությունը: Ծերուկը գրում էր. «15-20 տարի առաջ մատով էին ցույց տալիս պարզ մուճակ-կոնտուռա հագնողներին (այժմ այդ անճոռնի կոնտուռան քրդերի մեջ էլ մոդայից ընկած է), իսկ այժմ ընդհանուր կերպով Վանում գործածվում են զանազան տեսակ մուճակ, կամ, ինչպես իրենք են ասում, բոթիկներ»[101]:

Վանում հին արհեստների կողքին առաջ եկան նորերը. դրանցից էր ժամագործությունը:

Սակայն, ընդհանուր առմամբ, Արևմտյան Հայաստանում էսնաֆական կարգերի հետ քայքայվում էին նաև արհեստները: 1888 թ. Խ. Մառնակոզյանը գրում էր, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո «արհեստավորաց համայնական կազմակերպությունը սկսեց ավելի քայքայվել, լուծվել... այժմ հազվադեպ չէ տեսնել 4-5 տեսակ արհեստներ հմացող մի ուստայի, որ ձեռքը ծոցը դրած, շլինքը ծուռ, անհուսության կնիքը ճակատին, անգործ թափառում է փողոցում, կամ 40-50 ռուբլի վարձակ ծառա է մտած»[102]: 1891 թ. նա արձանագրում էր. «էսնաֆական նախկին կարգերից այժմ միայն թշվառ փշրանքներ են մնացել: Նահապետական պարզությունը վերանում է, բարքերը խանգարվում են, ամեն ինչ տակն ու վրա է եղել»[103]:

[99] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 30:

[100] Նույն տեղում:

[101] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 30:

[102] Մշակ, 1888, նոյեմբերի 29, թիվ 136:

[103] Մշակ, 1891, հունիսի 20, թիվ 68:

Թափանցելով երևույթների էության մեջ՝ Խ. Մառնակոզյանը, ինչպես և մի շարք այլ հեղինակներ, արհեստների ու էսնաֆական կարգերի քայքայումը բացատրում էին նրանց հետամնացությամբ կամ նոր արհեստավորների ցածր գիտելիքներով: Առևտրական ճանապարհով երկիր էին թափանցում կատարելագործված մեքենաներով արտադրված Եվրոպական բարձրորակ ապրանքներ, որոնք, բնականաբար, աշխույժ հետաքրքրություն էին առաջացնում գնորդների մոտ: Ավանդական արհեստների արտադրանքը չէր դիմանում այդ մրցակցությանը: Չի կարելի ժխտել, որ արհեստների բազմաթիվ ճյուղեր իրոք հետամնաց վիճակում էին, իսկ արհեստավորներից շատերի շինվածքները անճաշակ ու անհրապույր էին: Ա. Թոխմախյանը 1881 թ. գրում էր, թե Վանում «արհեստները նահապետական ժամանակից սկսածի շարունակությունն են»[104]:

Մ. Միրախորյանը նշում էր, որ Ոստանա գավառի արհեստավորների պատրաստած ամանները «ճաշակավոր ձև չունեին»[105]:

Շավարշը տակավին 1869 թ. Էրզրումի արհեստավորների մասին գրում էր. «Ո՛ւր էր թե ասոնք ալ իրենց արհեստից մեջ առաջադեմ անձինք ըլլային. երկաթագործ կամ դարբինը նույն ուռը նույն սալին վրա նույն կերպով կը ծեծե, ինչպես Խորենացի ալեզարդ պատմաբանին ականջը, ո՛վ գիտե՝ ո՞րչափ միջոցի հեռավորությամբ հասած այն պառավական առասպելը մեր Արտավազդ թագավորին վրա պատմված, թե մինչև նույն օրերը դարբիններն ուռը ի սալի կզարնեն եղեր, որպեսզի Արտավազդա շղթաները կռանահարից ծայներեն ամրապնդին, դեռ նույն ուռը և նույն սալը է և թերևս արհեստն ալ այն ժամանակի հասակին մեջ՝ ոչ մեծացած և ոչ ալ պզտիկցած, ամեն ոք իր վարպետեն ինչպես որ սորված է՝ զնույնը ի գործ կդնե. այդտեղի մյուս բոլոր արհեստավորներն ալ բացի մեկ երկուքեն՝ եթե պյսպես ես ըսելու ըլլամ՝ չեմ սխալիր. Ադամա թոռանց հնարած ջուլիակությունն է, որ ցարդ տեղերս ի գործ կը դրվի»[106]:

Սակայն արհեստների քայքայման պատճառն Արևմտյան Հայաստանում ամենից առաջ թուրքական կառավարության ազգային և հարկային քաղաքականությունն էր: Բազմաթիվ հայ արհես-

[104] Ա. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 24:

[105] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., էջ 113:

[106] Մասիս, 1868, մայիսի 13:

տավորնր այդ քաղաքականության հետևանքով ստիպված թողնում էին հայրենի քաղաքներն ու գյուղաքաղաքները և զանգվածաբար արտագաղթում էին: Արտագաղթողների թիվը մեծ էր հատկապես 1828-1829 թթ., 1853-1856 թթ., 1877 և 1878 թթ., 1894-1896 թթ., 1908-1914 թթ.: Արևմտյան Հայաստանի քաղաքները այդ ժամանակաշրջանում պարբերաբար դատարկվում էին արհեստավորներից: Բավական է նշել, որ 1828-1829 թթ. և 1853-1856 թթ. միայն Էրզրումից այնքան շատ արհեստավոր արտագաղթեց դեպի Ռուսաստան՝ մասնավորապես Անդրկովկաս, որ առաջացան երեք նոր քաղաքներ՝ Ալեքսանդրոպոլը, Ախալքալաքը և Ախալցխան:

Բացի թուրքական կառավարության վարած քաղաքականությունից, Արևմտյան Հայաստանի արհեստների քայքայման պատճառը նաև Թուրքիայի ներգրավումն էր համաշխարհային կապիտալիստական ապրանքաշրջանառության մեջ: Եվրոպական պետությունները, հատկապես Ղրիմի պատերազմից հետո, սկսեցին տնտեսապես նվաճել Թուրքիան, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանը և դուրս մղել տեղական ոչ միայն արհեստները, այլ նաև, ինչպես ցույց կտրվի ստորև, մանուֆակտուրային արտադրությունը: Այդ քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում փաստորեն տեղի էին ունենում գրեթե նույնպիսի գործընթացներ, ինչպիսին Արևելյան Հայաստանում ու Կովկասում էին ընթանում՝ ռուսական կապիտալիզմի լայնածավալ զարգացման հետևանքով, որի մասին Վ. Ի. Լենինը գրում էր. հետռեֆորմյան Կովկասում «տեղի էր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկանտների մրցման հետևանքով ընկնում էին: Ընկնում էր զենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից ու Բելգիայից ներմուծվող ապրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը՝ ներմուծվող ռուսական արտադրանքի մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր պղնձի, ոսկու և արծաթի, կաշվի, ճարպի և սոդայի, կաշիների տնայնագործական մշակումը և այլն. այս բոլոր արդյունքներն ավելի էժան էին արտադրվում ռուսական գործարաններում, որոնք իրենց ապրանքները Կովկաս էին ուղարկում: Ընկնում էր եղջյուրներից գավաթներ պատրաստելը՝ Վրաստանի ավատատիրական կարգի և նրա պատմական խնջույքների կործանման հետևանքով. ընկնում էր գլխարկի

արհեստագործությունը՝ ասիական զգեստը եվրոպականով փոխարինելու հետևանքով. ընկնում էր տիկերի ու կարասների արտադրությունը տեղական գինու համար, որն առաջին անգամ էր վաճառքի հանվում (զարգացնելով տակառագործական արտադրությունը) և իր հերթին նվաճում էր ռուսական շուկան: Այսպիսով, ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար «շուկա էր ստեղծում»[107]:

Բայց, ի տարբերություն Կովկասի և Արևելյան Հայաստանի, Արևմտյան Հայաստանում արհեստների արտամղման ու քայքայման պատճառները ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական էին:

Անհրաժեշտ է նշել, որ թուրքական կառավարության վարած ազգայնամոլական քաղաքականության հետևանքով 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և հատկապես 1890-ական թվականների հայկական ջարդերից հետո կրճատվեց նաև հայ առևտրականների թիվը: Նահանգական ու գավառական իշխանությունները խաղաղ տարիներին ահաբեկչության էին ենթարկում հայ առևտրականներին, իսկ պատերազմի ու ջարդի տարիներին զանգվածաբար բնաջնջում էին նրանց: 1872 թ. սեպտեմբերի 10-ին Էրզրումի նահանգապետի ցուցումով մի անհայտ անձնավորություն օրը ցերեկով Էրզրումում սպանում է հայտնի վաճառական Խաչատուր Բասուրմաջուն, որը զանազան ճանապարհներով տեր էր դարձել ընդարձակ հողերի և նույնիսկ Էրզրումի թաղերից մեկին[108]:

Թուրքական պաշտոնյաների ցուցումով 1876 թ. նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը անհայտ մարդիկ հրդեհում են Վանի շուկան, որտեղ կար 1800 կրպակ, որոնք «պատկանում էին համարյա բացառապես քրիստոնյաներին»[109]:

Էրզրումի ռուս գեներալ-հյուպատոսը այդ առթիվ գրում էր Կ.Պոլսի ռուսական դեսպանին. «Վանից ինձ հաղորդեցին, որ

[107] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 770-771:

[108] АВПР, ф. «Главный архив V- A2», 1872, д. N 1083, лл. 44-45, ф. «Посольство в Константинополе», 1881, д. № 1567, л. 8.

[109] АВПР, ф. "Главный архив V- A2", 1876, д. № 1089, л. 54.

Վանի հարուստ վաճառականները, որոնք մինչև նոյեմբերի 30-ը ունեին մի քանի տասնյակ հազար լիրա, այժմ բոլորովին աղքատացած են»[110]:

1894-1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ Վանում փակվեցին 303 արհեստի և առևտրի կրպակներ[111]: Ուշագրավ է, որ հայ առևտրականները, երբ փորձում էին վերականգնել իրենց կրպակները, հանդիպում էին տեղական իշխանությունների արգելքներին:

Հայ առևտրականների փոխարեն հաստատվում են գերազանցապես թուրք առևտրականները: 1906 թ. Ճեմիլը գրում էր, որ թուրքերն իրենց ձեռքն են վերցնում երկրի առևտուրը: Նրանք արդեն մեծ դեր են խաղում անասունների և դրանց մթերքների առևտրի մեջ: «Բեյրութեն, Հալեբեն, Դամասկոսեն բազմաթիվ վաճառականներ, ամբողջն ալ մահմեդական, մրջյուններու պես կը վխտան հայկական բարձրավանդակին վրա, հազարավոր լիրաներ ծախսելով և գրեթե գտնված ամբողջ հոտերը գնելով»[112]:

Նա այնուհետև շարունակում էր. «Բացի այդ գլխավոր ասպարեզներեն, կամաց-կամաց մահմեդականներուն ձեռքը կանցնին նաև առևտրական մյուս հրապարակները. առաջին՝ իրենց վայելած առավելություններուն՝ առևտրական, դատական, ապահովության հայեցակետերով և երկրորդ՝ շնորհիվ իրենց հետզհետե փորձառու դառնալուն... մանուֆակտուրան, մանրավաճառությունը և նմանօրինակ առևտրականներն, ուր չէին երևնար մահմեդականներ, սկսած են այժմ նույնպես անոնք գրավել»[113]:

Նույն բանն էր հաստատում նաև «Արարատի» թղթակիցներից մեկը: 1908 թ. նա գրում էր, որ Թուրքիայում «կենսական խնդիրը հայ վաճառականության նվազումն ու նվազումն է, որ սոսկալի համեմատություններ առավ այս վերջին տարիները»[114]:

Երկրի որոշ շրջաններում թուրք փերեզակները դառնում էին

[110] Տե՛ս նույն տեղում, թ. 55:

[111] Տե՛ս «Բյուզանդիոն», 1897, մարտի 17:

[112] Երկրի Ձայն, 1906, թիվ 9, էջ 13:

[113] Երկրի Ձայն, 1906, թիվ 9, էջ 13:

[114] Արարատ, 1908, էջ 47:

խոշոր վաճառականներ, իսկ հայ խոշոր վաճառականները՝ նրանց փերեզակները[115]:

Թուրքական կառավարության վարած ազգայնամոլական քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում, հատկապես XIX դ. վերջին և XX դ. սկզբներին, առևտրական բուրժուազիայի ազգային կազմը զգալիորեն փոխվեց՝ ի վնաս հայերի, հոգուտ թուրքերի:

* * *

Չնայած այդ ամենին՝ Արևմտյան Հայաստանում՝ ընդհուպ մինչև հայոց ցեղասպանությունը, տակավին պահպանվել էին զգալի թվով հայ առևտրականներ ու արհեստավորներ:

Արձանագրելով այդ փաստը՝ անհրաժեշտ է նշել նաև այն, որ արհեստավորներն իրենց արտադրության բնույթով արդեն տարբերվում էին նախորդ ժամանակների արհեստավորներից: Այդ տարբերությունն արտահայտվում էր նրանով, որ նրանք դառնում էին մանր ապրանք արտադրողներ, այսինքն՝ արտադրում էին ոչ թե պատվիրատուի, այլ շուկայի համար:

Էրզրումում՝ ըստ մի հաղորդման, արհեստավորները 1870-ական թվականների վերջերին պատրաստում էին պղնձյա զանազան առարկաներ և վաճառում «1 հոխան 34 ղուրուշով կամ 3 ֆունդը՝ 2 ռուբլով»[116]:

Ցավոք, մեզ հայտնի չեն, թե այդ առարկաներն ում են վաճառվել՝ պատվիրատուին, թե գնորդին, եթե անգամ պատվիրատուին են վաճառվել, միևնույնն է, դա մի քայլ էր արհեստավորների՝ մանր ապրանք արտադրող դառնալու ճանապարհին, քանի որ արդյունքի վաճառքը կատարվում է փողով, որը առաջ էր բերում ապրանքաշրջանառություն, իսկ դա հանդիսանում է ապրանքային արտադրության կամ ապրանքային տնտեսության ելակետը:

Վանում, ըստ Վ. Փափազյանի վկայության, 1880-ական թվականներին շատ արհեստավորներ «նստում, ամբողջ ծմեռվա ընթացքում կարում են սալթա (բաճկոն), զպուն (արխալուղ) և զա-

[115] 1901 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ Քրդում «1895-ի դեպքերեն ի վեր հայ վաճառականները գրեթե փերեզակ դարձած են, և տաճիկ փերեզակներն առաջին կարգի վաճառական» (Դրոշակ, 1901, թիվ 7, էջ 118):

[116] АВПР, ф. "Главный архив V-A2" , 1880, д. N 1095, л. 142.

նազան այլ հագուստներ, որպեսզի գարնանը տանեն գյուղերը կամ քուրդերի մեջ»[117]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում բացի քաղաքների արհեստավորներից մանր ապրանք արտադրողներ էին դառնում նաև գյուղերում ապրող արհեստավորները, հատկապես քաղաքամերձ գյուղերում ու ավաններում: Էրզրումից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող Կան գյուղի բնակիչները զբաղվում էին երկաթագործությամբ, պայտարությամբ և այլ արհեստներով: Նրանք գնում էին աշխատելու Էրզրումում և վաճառում այնտեղ իրենց շինվածքները: Մ. Միրախորյանը տակավին 1880-ական թթ. սկզբներին գրում էր, որ Կան գյուղի բնակիչները «ավելի արհեստավոր են, քան թե հողագործ»[118]:

Բացի Կանից, արհեստավորներից շատերը դարձել էին մանր ապրանք արտադրողներ նաև Էրզրումի մոտակա մի շարք այլ գյուղերում՝ Օձնիում, Չիթողում, Կրեշքում, Մուտուրկայում, Կեզում, Չիֆթլիկում և այլն[119]:

Վանի վիլայեթի Սխգա, Սխկեր, Հնդստան, Առեզ, Զգրաշեն, Մարմետ, Կուրուբաշ, Արտամետ, Կենդանաց, Բերդակ և այլ գյուղերում որոշակիորեն տեղի էր ունենում արհեստների անցումը մանր ապրանքների արտադրության: Առաջին երկու գյուղերի արհեստավորները մեծ քանակությամբ խսիրներ էին գործում, բավարարում ամբողջ Վասպուրականին: Միայն Վանում նրանք կիրակի օրերին վաճառում էին 10000 մեծ և 4000-5000 փոքր խսիր:

Հայոց ձորի Հնդստան և Առեզ գյուղերի արհեստավորները գործում էին կողովներ, սալաներ (ծղոտից ափսեանման հյուսվածք, որի մեջ հաց են դնում) և մազրկաներ (գործիք, որով տանտիկինները հաց են թխում թոնիրի կողքերին), կշեռք և այլ իրեր և Վանում օրական վաճառում 15-20 եզան բեռ:

Արտամետցիք պատրաստում էին աթոռներ, լուսամուտների պատրաստի փեղկեր, սանդերքներ, կտավագործության գործիքներ և արտահանում էին: Նրանք ամբողջ ձմեռվա ընթացքում

[117] Վ. Փափազյան, հ. 5, էջ 475:

[118] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Գ, էջ 157:

[119] Տե՛ս Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Գ., էջ 158, «Մասիս», 1882, մարտի 31, Ա-Դո, էջ 170-171, տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1898, նոյեմբերի 12:

միայն Վանում վաճառում էին շուրջ 2000 աթոռ՝ հատը 40 փարայով կամ 15 կոպեկով և ավելի քան 700 կտավագործության գործիքներ[120]:

Բիթլիսի վիլայեթի Փափշեն, Մզրեն, Վանիկ, Ղուլթիկ, Խասգյուղ և այլ գյուղերում արհեստավորները դարձել էին մանր ապրանք արտադրողներ: Նրանք Փափշենում և Ղուլթիկում, որը գտնվում էին Բիթլիսից 2-3 ժամ հեռավորության վրա, պատրաստում էին կավե ամաններ և վաճառում երկրի զանազան կողմերում: «Մասիսի» թղթակիցը 1881 թ. գրում էր, որ Փափշենի տղամարդիկ իրենց ամանեղենը «մեկ-երկու գրաստներու վրա բեռցուցած Բուլանխա կողմեր կը տանին կորեկով, ցորենով փոխելու, իրենց ապրուստը այսպես կը հոգան»:

Իսկ «Բյուզանդիոնի» թղթակիցը 1900 թ. հաղորդում էր. «Քաղաքիս (այսինքն՝ Բիթլիսի - Ա. Հ.) և շրջակայքից խեցեղենները գլխավորաբար կուժ, փարչ և տեսակավոր կարասներ մատակարարողը խուլթիկցիներն են»[121]:

Արհեստների անցումը մանր ապրանքային արտադրության ակնհայտորեն կատարվում էր նաև Խարբերդի կազայի Կրազ, Էլամի, Տիլաիզոտ, Վերին և Ներքին Խոխերում, Չնքուշ ավանում և այլ տեղերում: Գ. Սրվանձտյանցը նշում էր, որ Չնքուշ ավանի բնակիչները պատրաստում էին կոշիկներ ու զանազան կաշվեղեն և գրաստներով արտահանում վաճառքի[122]:

Ա. Մ. Կոյյուբակինն արձանագրում էր, որ վերոհիշյալ գյուղերում բնակիչները, որ բոլորովին հողագուրկ էին, իրենց ապրուստը հայթայթում էին զանազան շինվածքներ ու գործվածքներ պատրաստելով և վաճառելով[123]:

Մանր ապրանք արտադրողները և՛ քաղաքներում, և՛ գյուղերում իրենց արդյունքները վաճառում էին կա՛մ անմիջական սպառողներին, կա՛մ գնորդ-առևտրականներին, որոնք իրենց հերթին տանում էին երկրի զանազան շրջանները:

Ապրանքային արտադրության զարգացման հետևանքով արհեստավորների ու մանր ապրանք արտադրողների միջև առա-

[120] Տե՛ս Վ. Փափազյան, հ. 5, էջ 473-474:

[121] Բյուզանդիոն, 1900, հուլիսի 11:

[122] Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար, մ. Բ, էջ 189-190:

[123] Տե՛ս Կոյյուբակին, նշվ. աշխ. էջ 451:

ջանում է տնտեսական անհավասարություն կամ ունեցվածքային շերտավորում. ոմանք հարստանում են, մյուսներն՝ աղքատանում: Վանում, ըստ մի հաղորդման, տակավին 1872 թ. բնակիչներից «հարյուրեն 5-ը խիստ լավ կապրին, 45-ը միջակ, 50-ը վատ»[124]:

Վանի բնակչության այդ շերտավորումը պահպանվում էր նաև հետագա տարիներին: Ծերուկը 1904 թ. նրանց բաժանում էր չորս խմբի. առաջին խմբում նրանք էին, ովքեր ունեին տարեկան 60-100 լիրայի եկամուտ, երկրորդ խմբում՝ նրանք, ովքեր» ինչ որ շահում են, նույնությամբ գործածում են»[125]: Երրորդ խմբում նրանք, ովքեր «իրենց վաստակով շատ անգամ չկարողանալով ապրել՝ պարտք են անում»[126] և, չորրորդ խմբում տեղադրում էր նրանց, ովքեր ապրում էին վարձու աշխատանքով և մուրացկանությամբ: Ծերուկն այնուհետև տալիս էր հետևյալ տվյալները[127].

Առաջին խումբը կազմում էր բնակչության 2 %-ը,
երկրորդ խումբը կազմում էր բնակչության 20 %-ը,
երրորդ խումբը կազմում էր բնակչության 70 %-ը,
չորրորդ խումբը կազմում էր բնակչության 8 %-ը:

Եթե առաջին խումբը համարենք հարուստներ, երկրորդը՝ միջակներ, իսկ երրորդն ու չորրորդը՝ աղքատներ և համեմատենք 1872 թ. տվյալների հետ, ապա կստանանք հետևյալ պատկերը տոկոսային հարաբերությամբ:

Բնակչության խմբերը	1872 թ.	1904թ.
Ունևորներ	5	2
Միջակներ	45	20
Չքավորներ	50	78
Ընդամենը	100	100

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ 32 տարվա ընթացքում ունևորների ու միջակների թիվը կրճատվել է ավելի քան կիսով չափ, մինչդեռ չքավորներինը զգալի չափով աճել է, այլ կերպ ասած՝ բնակչության ունեցվածքային շերտավորումը վերածվել է

[124] Արծվի Վասպուրական, 1872, մարտի 17:

[125] Մուրճ, 1904 թ., թիվ 9, էջ 33:

[126] Նույն տեղում:

[127] Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

նրա աղքատացման (պաուպերիզացիայի), մի բան, որ բնորոշ էր Արևմտյան Հայաստանի ինչպես գյուղական, նույնպես և քաղաքային բնակչությանը՝ գերազանցապես արհեստավորությանը:

Աղքատացած արհեստավորներն ու առևտրականները կա՛մ վարձվում էին տեղում՝ հարուստների մոտ, կա՛մ դիմում պանդխտության՝ Թուրքիայի և եվրոպական երկրների արդյունաբերական կենտրոններ: 1872 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Նեղության, անհաջողության կամ պարտուց մեջ իյնողները ի Կ.Պոլիս կդիմեն, ուր քանի մը տարի աշխատելով և իրենց բավականին չափ ստակ ձեռք բերելով հայրենիք կվերադառնան, և երբ որ հատի՝ դարձյալ կերթան: Շատերը քանի մը անգամ կկրկնեն իրենց այս պանդխտությունը: Սրանց մեջ հազիվ թե տասեն մինը կգտնվի, որ Կ. Պոլիս տեսած չըլլա»[128]:

Ծերուկը գրում էր, որ Վանում «փոքր թիվ չեն կազմում նաև այն արհեստավորները, որոնք պահանջված դրամագլուխ չունենալու համար ուրիշներին ծառայում են իբրև բանվոր»[129]:

Լինչը հիշատակում էր, որ էրզրումում «հարյուրավոր բանվորներ փնտրում են աշխատանք՝ օրական 1,5 ղուրուշ աշխատավարձով»[130]:

Այդպիսով, Արևմտյան Հայաստանի տնտեսության մեջ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արհեստները մեծ դեր էին խաղում: Արհեստներն իրենց տարբեր տեսակներով տարածված էին քաղաքներում, գյուղաքաղաքներում և անգամ գյուղերում: Արհեստավորները երկրի տարբեր վայրերում արհեստի մի շարք ճյուղեր հասցրել էին կատարելության և իրենց շինվածքներով ու գործվածքներով հիացմունք էին պատճառում գնորդներին: Սակայն թուրքական կառավարության վարած ազգային քաղաքականության, ինչպես նաև եվրոպական պետությունների կողմից Թուրքիայի, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի տնտեսական նվաճման հետևանքով արհեստները աստիճանաբար քայքայվում էին: Հայ արհեստավորների զգալի մասը արտագաղթում էր հայրենի քաղաքներից ու գյուղաքաղաքներից, իսկ մահմեդական տարրը լիարժեք չէր լրացնում առաջացած

[128] Արծվի Վասպուրական, 1873, մարտի 17:

[129] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 34:

[130] Խ. Ֆ. Լինչ, նշվ. աշխ., էջ 278:

բացը: Այդ պատճառով որոշ քաղաքներ գրեթե ամայանում էին[131]:

Չնայած դրան՝ Արևմտյան Հայաստանում, այնուամենայնիվ, տեղի էր ունենում անցում արհեստից՝ մանր ապրանքային արտադրության: Արհեստավորները սկսում են արտադրել նաև շուկայի համար. ար-տադրողի և սպառողի միջև հանդես են գալիս գնորդ-առևտրականները, որոնք, շահագործելով անմիջական արտադրողներին, կուտակում են դրամական հարստություն և վաշխառուների հետ նախադրյալներ են ստեղծում արտադրության կապիտալիստական եղանակի համար:

[131] Ա-Դոն գրում էր. «Նայելով Խլաթի գեղեցիկ դիրքին, երկու հնագույն շրջանների բերդերի մնացորդներին և կանգուն մնացած գեղեցկաշեն դամբարաններին՝ անժխտելի է մնում Խլաթի հարուստ անցյալը և ծաղկման փառավոր շրջանը, մինչդեռ նա այսօր անցյալի հուշերով ապրող մի խղճուկ պատկեր է ներկայացնում» (Ա-Դո, նշվ. աշխ., էջ 90):

Գլուխ Հինգերորդ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄ. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՈՒ ՎԱՇԽԱՌՈՒԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

XIX դ. կեսերից Արևմտյան Հայաստանում նկատվում էր ապրանքա-դրամային հարաբերությունների որոշ աշխուժացում: Երկրի տարբեր քաղաքներում ու գյուղաքաղաքներում ամեն շաբաթ կազմակերպվում էր շուկա, որտեղ տեղացիներն ու մերձակա գյուղերի բնակիչները փոխանակում էին իրենց արդյունքներն, իսկ հաճախ էլ վաճառում էին դրամով: Այդ շուկան որոշ տեղերում կազմակերպվում էր կիրակի, իսկ այլ տեղերում՝ ուրբաթ օրերին: Վանում այն կիրակի օրերին էր[1], իսկ Բերդակում՝ ուրբաթ օրերին: Այդ գյուղաքաղաքի շուկայի քիչ թե շատ ընդարձակ նկարագիրը թողել է Անդրանիկը. ավելորդ չենք համարում մեջ բերել մի հատված: 1900 թ. նա գրում էր. «Տերսիմի հեռավոր վայրերեն այստեղ կիավաքվին ամեն ուրբաթ օրեր, ուր կլինի մեծ քանակությամբ իրերու փոխանակություն, որ տեսակ մը տոնավաճառի կերպարանք կստանա: Հինգշաբթի օրվանե սկսյալ խարբերդցի արհեստավորներու և մանրավաճառ չարչիներու ահագին բազմություն մը կսկսի խառնվիլ Բերդակի ավերակներուն մեջ, իրենց հետ բերելով կոշիկ, կտավ, լաչակ, չիթ-չեմպեր, գլխարկ, կոճակ, ասեղ, թել, մանած, պատրաստի հագուստներ քրդական ճաշակով, զանազան տեսակ զենքեր և այլն: Իսկ քրդերն իրենց հետ կբերեն իրենց ունեցածները - ընկույզ, մանանա, (գազպե), պանիր, յուղ, չորթան, բուրդ, կովու և ոչխարի մորթ, վայրենի կենդանիներու մորթ, կարպետ, քիլիմ, գորգ, գուլպա, ոչխար, գառ, ջորի, մատակ ձի և այլն: Առևտուրն ուրբաթ առավոտեն կսկսի: Քաղաքացին ամեն կերպ կաշխատի իր ունեցած իրեղենները սուղ-սուղ ծախել, այսինքն փոխել քրդու ունեցածի հետ, մեկի փոխարեն երեք-չորս և նույնիսկ տասնապատիկ առնելով: Իսկ լեռնական քուրդը, որ երբեք գաղափար չունի ո՛չ առևտրի և ո՛չ ալ դրամի և կամ իր ունեցածներու

[1] 1858 թ. մի թղթակից գրում էր, որ այդ քաղաքի Այգեստան թաղամասում, եկեղեցու «դռանը առաջ լավ վաճառատեղի մը է, ուր ամեն կիրակի շատ տեսակ վաճառքներ ամեն կողմանե կը բերվին վաճառվելու համար և շատ ալ մարդկանց բազմություն կը ժողովին» (Արծվի Վասպուրական, 1858, էջ 241):

արժեքի մասին, և մանավանդ, որ քաղքցու ունեցած փայլուն-փայլուն իրեղենները կշլացնեն ու միանգամայն խիստ կիրապուրեն զինքը... ամեն ջանք ու ճիգ ի գործ կդնե և նույնիսկ կաղաչե ու կպաղատե քաղքցուն, որ նա բարեհաճի իր հետ առևտուր ընել»[2]:

Բացի կիրակնօրյա կամ ուրբաթօրյա շուկայից, Արևմտյան Հայաստանում լինում էր նաև տոնավաճառ: Արհեստավորներն ու գյուղացիները տարին մեկ անգամ, մի քանի օրով կամ շաբաթով հավաքվում էին մոտակա քաղաքում կամ գյուղաքաղաքում՝ իրացնելու գյուղատնտեսական կամ արհեստի արդյունքները: Բաբերդում տոնավաճառը տեղի էր ունենում ամեն տարի մայիս և հունիս ամիսներին[3], Սվազի վիլայեթի Խեբիշ նահիեում՝ օգոստոսի 15-ին, Ամասիայում՝ հոկտեմբերի 15-ին[4]:

Կիրակնօրյա շուկան ու տոնավաճառն ունեին տեղական նշանակություն և ոչ այլ ինչ էին, եթե ոչ ապրանքային տնտեսության առաջացման ու զարգացման ցածր փուլ, երբ անմիջական արտադրողի և սպառողի միջև եղած տարածությունը աննշան էր, իսկ վաճառահանման շուկան ծայր աստիճանի նեղ: Ապրանքային տնտեսության հետագա զարգացումն արտահայտվում էր այս կերպ. «առևտուրն ընդարձակվում է, հայտնվում են այդ գործում մասնագիտացած մեծագնորդ-առևտրականներ. շինվածքների վաճառահանման վայր է դառնում ոչ թե գյուղական փոքր շուկան կամ տոնավաճառը, այլ ամբողջ մարզը, հետո ամբողջ երկիրը, իսկ երբեմն էլ նույնիսկ այլ երկրներ»[5]:

Արևմտյան Հայաստանում մեծագնորդ առևտրականները կամ

[2] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 138-139, տե՛ս նաև Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Բ., էջ 123:

[3] Տե՛ս Ա. Դ. Երիցով, նշվ. աշխ., էջ 90, տե՛ս նաև Մ. Միրախորյան, մ. Ա, էջ 263, Ա-Դո, նշվ. աշխ., էջ 194:

[4] Տե՛ս, Я. И. Гиппус, նշվ. աշխ., էջ 63, 79:

[5] Վ. Ի. Լենին, հ. 3, էջ 419:

[6] Այսպես, Վանը, որ 1850-ական թվականներին հանդիսանում էր առևտրական կենտրոն գերազանցապես իր շրջակայքի համար, 1890-ական թվականներին դառնում է այդպիսի կենտրոն ամբողջ վիլայեթի համար: 1897 թ. մի թղթակից գրում էր, որ Վանի Այգեստան թաղամասը «ընդարձակ և հսկա կիրակնօրյա տոնավաճառ մըն է՝ ամբողջ Վանի նահանգին ազգաբնակությանց համար» (Բյուզանդիոն, 1897, մարտի 17):

վաճառականներն ամենից առաջ միացնում էին նահանգի առանձին շրջանները նրա կենտրոնի հետ[6], այնուհետև՝ երկրի տարբեր նահանգներն ու գավառները, քաղաքներն ու գյուղերը միմյանց հետ և նպաստում էին ներքին շուկայի առաջացմանն ու զարգացմանը: Նրանց արտահանած ապրանքների մասին որոշ պատկերացում տալու համար բերենք հետևյալ վիճակագրական տվյալները, որոնք վերաբերում են 1880-ական թվականների կեսերին.

էրզրումը մի տեղ էր, ուր ժամանակակիցներից մեկի խոսքերով ասած «կշտեմարանվին արտաքուստ բերյալ վաճառք, միակ շուկան, ուր կը գտնվին ամեն տեսակ պիտույք... բոլոր այն գավառները (Վանի, Մուշի, Դերսիմի սանջակները - Ա. Հ.) անխափան կերպով Կարին կը դիմեն եղեր դրամով, երբ վաճառք կուզեն ստանալ, և Կարին կը դիմեն եղեր ապրանքով, երբ ուզեն զանոնք դրամ ընել» (Մասիս, 1885, փետրվարի 2, էջ 647):

Դիարբեքիրը առևտրի խոշոր կենտրոն էր, «ուր գնում էին վիլայեթի վաճառականներն ու բնակիչները ապրանքներ գնելու և վաճառելու (Տոմիլով, նշվ. աշխ., էջ 259):

Խարբերդը առևտրական կապերով կապված էր Բալուի, Չարսանճագի, Չմշկածակի, Արաբկիրի, Այնի, Կապան-Մադենի, Արղան Մադենիասի և այլ շրջանների հետ՝ «իբրև յուր մերձակա գավառները» (Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Բ, էջ 87):

Շնորհիվ աշխատանքի հասարակական բաժանման խորացման՝ Արևմտյան Հայաստանում առևտուրը այժմ ուներ ոչ թե տեղական, այլ համերկրային նշանակություն: 1904 թ. Ծերուկը գրում էր, որ Վանում «մինչև XIX դարի կեսերը վաճառականությունը և առևտուրը շատ սահմանափակ վիճակի մեջ էր: Վանը վաճառականական հարաբերություն ուներ իր դրացի Բիթլիզ քաղաքի և Պարսկաստանի Ատրպատական նահանգի հետ, եվրոպական ապրանքները մուտք չունեին և ոչ էլ Վանի ապրանքները Բիթլիզից այն կողմն անցնում էին, միայն XIX դարի վերջին կիսում է սկսում կամաց-կամաց զարգանալ Վանի արտաքին վաճառականությունը (Մուրճ, 1904, թիվ 8, էջ 20):

Իսկ «Բյուզանդիոնի» թղթակիցը հաղորդում էր. «Հիմք ունենալով ծերոց ավանդությունը՝ կըսենք Մշո առևտուրը քանի մը դար կամ կես դար առաջ պարզ և նախնական վիճակ մը ուներ. քանի մը ճալապ շիլա, քանի մը ջուխտ կտավ, քանի մը ծրար փարալի մոմի խանութը զետեղող անձը մեծ պազիրկանի համբավը կվայելեր... էդ ժամ Մշո մեջ հազիվ 10-15 խանութ կար, որոնք կը հայթայթեին Մշեցիի ու դաշտեցի համայնքի շորեղենները: Խանութպանին անծանոթ էր Սև ծովի եզերք, Տրապիզոնի և Կարնո վաճառաշահությունը: Իր առևտրի հրապարակը քույր Բաշեղ քաղաքն էր...», իսկ առևտրի «պայմանները շատ տարբեր էին այժմէն, տուր և առի գործառությունը փոխադարձ վստահության վրա հիմնված էին, միամիտ և անկեղծ հավատարմությամբ մը և առանց վկայի, մուրհակի և երաշխավորողի» (Բյուզանդիոն 1907, մարտի 17): Բայց այժմ Մուշի վաճառականները հասնում են ոչ միայն Սև ծովի ափերը, այլ նաև Հայաստանի սահմաններից դուրս, անգամ արտասահման, իսկ կրպակների թիվը 10-15-ից Մուշում հասել է 300-400-ի (Բյուզանդիոն, 1907, մարտի 17):

Խարբերդի վիլայեթի Խարբերդ կազան արտահանում էր[7].

Արդյունքները	Արտահանման վայրը	Արդյունքների արժեքը դուրուշներով
Բամբակ	Արաբկիր և Միջերկ. ծով	1.450 հազար դուրուշ
Բամբակյա գործվածքներ	Արաբկիր, Կեբան մաղեն	1.500 "-"
Ցորեն ու գարի	Արաբկիր և հարևան գավ.	2.589 "-"
Հաշիշ	Միջերկրական ծով	1.500 "-"
Շերամի հումք և մետաքսագործվածք	Դիարբեքիր, Դերսիմ, Բալու, Մուշ, Ճապաղջուր և այլն	300 "-"
Կաշի և մորթի	Միջերկրական ծով	470 "-"
Բուսական յուղ	Տարբեր տեղեր	155 "-"
Գինի	.....	65 "-"
Մրգեր, բանջարեղեն	.....	90 "-"
Նուշ	.....	275 "-"
Մոմ	.....	50 "-"
Արհեստների զանազան շինվածքներ և գործվածք		140 "-"
Ընդամենը	.....	9.184 հազար դուրուշ

Նույն վիլայեթի Մալաթիայի սանջակը նույնպես արտահանում էր տարբեր գավառներ[8].

Հաշիշ	60.000 ոսկու արժողությամբ
Բամբակ	10.000 "-"
Ոչխարի մորթի	4.000 "-"
Գդտոր	1.000 "-"
Ծիրանի չիր, թութ, պաստեղ, չամիչ, բրինձ, տանձ, խնձոր, սև սալոր	4.000 "-"
Ընդամենը	79.000 "-"

Դերսիմի սանջակի Չարսանճագ կազան արտահանում էր[9].

Բամբակ	4500 փութ, 80%-ը՝ Խարբերդ, իսկ 20 %-ը Արաբկիր
Վանասնապահական մթերքներ	Խարբերդ և Հալեպ
Ցորեն, գարի, մրգեր և այլն	Դերսիմ
Գինի	Էրզրում և Խարբերդ

Միայն Դիարբեքիրի և Սվազի վիլայեթները արտահանել են Խարբերդ 2.500.000 դուրուշի արժողությամբ մետաքսյա ու բրդյա գործվածքներ և կաշի, իսկ Մուշը, Գենչը, մասամբ Արաբկիրը Խարբերդ են արտահանել 5000-6000 գլուխ կամ 500.000

[7] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 453-457:

[8] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի արխիվ, 47, թ.11:

[9] Տե՛ս Մ. Կոլյուբակին, նշվ.աշխ., էջ 222-223:

դուրուշի արժողությամբ անասուն[10]:

Բալուի կազան արտահանել է[11].

Գարի ու ցորեն	գլխավորապես Ճապաղջուր և Գենջ՝ 1.555 հազար դուրուշ արժողությամբ
Բամբակ	մասամբ Մուշ և Բիթլիս՝ 280 հազար դուրուշ արժողությամբ
Բամբակի գործվածքներ	զանազան ուղղություններով՝ 200 հազար դուրուշ արժողությամբ
գինի	Խարբերդ՝ 140 հազար դուրուշ արժողությամբ
Մրգեր	Ճախաղջուր, Քըղի և Դերսիմ՝ 100 հազար դուրուշ արժողությամբ

Սվազի վիլայեթի Ամասիայի սանջակը արտահանել է (հազ. ֆրանկներով)[12].

Ցորեն՝ 250, Գարի՝ 160, Այլուր՝ 1540, Սիսեռ՝ 105, Հաշիշ՝ 18, Խեժ՝ 43, Պտուղներ՝ 2.300, Կանաչեղեն՝ 70, Խաղող՝ 33, Կարագ՝ 46, Մոմ՝ 3, Բուրդ՝ 100, Ոչխարի մորթի՝ 72, Թիֆթիկ՝ 52, Ռուփ՝ 230, Ոչխար՝ 100, Գառան մորթի՝ 50, Այծի մորթի՝ 65, Կովի կաշի՝ 30, Եզան կաշի՝ 60, Գորգեր՝ 150:

Արևմտյան Հայաստանի ներքոհիշյալ վիլայեթներից յուրաքանչյուրը նշված ժամանակաշրջանում արտահանել է հարևան վիլայեթ և ներմուծել այնտեղից հետևյալ արժողությամբ ապրանք (հազ. ռուբլիներով)[13].

Վիլայեթները	Կենսամթերքներ (հացահատիկ, բրինձ, անասուն, միրգ, խմիչք, թեյ, կոնֆետ և այլն)				
	Արտահանումը	%-ով արտահանումը	Ներմուծումը	%-ով ամբողջ ներմուծումը	Արտահանման և ներմուծման տարբերությունը
Վան	980,4	74,0	144,4	10,5	+73,5
Բիթլիս	154,4	75,4	16,0	1,7	+73,7
Էրզրում	1900,0	69,1	684,0	12,6	+56,5
Խարբերդ	284,0	15,8	67,2	7,9	+7,9

Վիլայեթները	Հումք և գործվածքներն (բամբակեղեն, մետաքս, բուրդ, կտավ, գորգ, երկաթյա շինվածքներ)				
	Արտահանումը	%-ով արտահանումը	Ներմուծումը	%-ով ամբողջ ներմուծումը	Արտահանման և ներմուծման տարբերությունը
Վան	345,6	26,0	1231,0	89,5	-63,5
Բիթլիս	437,6	24,6	927,2	98,3	-73,7
Էրզրում	850,0	30,9	4754,0	87,4	-56,5
Խարբերդ	1510,0	84,2	781,2	92,1	-7,9

[10] Նույն տեղում, էջ 458-459:

[11] Նույն տեղում, էջ 166-168:

[12] Բազմավեպ, 1899, էջ 458:

[13] Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ 174:

Այս տվյալները ցույց են տալիս որ. 1) XIX դ. 80-ական թթ. Արևմտյան Հայաստանում տեղի էր ունենում զգալի ապրանքաշրջանառություն, 2) ապրանքային արտադրությունը երկրի ներսում արդեն ստեղծել էր ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական արտադրության մասնագիտացում: Շնորհիվ այդ մասնագիտացման՝ քաղաքներն արտահանում էին գերազանցապես արդյունաբերական, իսկ գյուղերը՝ գյուղատնտեսական ապրանքներ: Օրինակ՝ Խարբերդի կազան արտահանում էր ցորեն ու գարի, բամբակ և հաշիշ, իսկ Խարբերդ քաղաքը՝ բամբակյա և մետաքսյա գործվածքներ, Մալաթիայի սանջակը արտահանում էր հաշիշ և բամբակ, Չարսանճակը՝ հացահատիկ ու բամբակ, Վանի վիլայեթը արտահանում էր անասուն և անասնապահական արդյունքներ, իսկ Վան քաղաքը՝ բրդյա զանազան գործվածքներ և մետաղյա շինվածքներ, Ամասիայի սանջակը արտահանում էր մրգեր, պտուղներ և հացահատիկ, իսկ Ամասիան՝ մետաքսյա զանազան գործվածքներ և այլն:

Սակայն գյուղատնտեսության մեջ կատարվող մասնագիտացումը էապես տարբերվում էր արդյունաբերության մեջ կատարվող մասնագիտացումից: Այդ տարբերությունն արտահայտվում էր նրանով, որ եթե արդյունաբերությունը տրոհվում է առանձին ճյուղերի և այդ ճյուղերից յուրաքանչյուրն արտադրում է մի արդյունք, ապա գյուղատնտեսությունը չի բաժանվում այդպիսի ճյուղերի, այլ ենթարկվում է միայն շուկային և արտադրում է նրա գլխավոր արդյունքը, իսկ մնացած արդյունքների արտադրությունը ոչ թե անհետանում է, այլ ենթարկվում է գլխավորի արտադրությանը:

Ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացումը շուկայական հարաբերությունների մեջ է ներքաշում ինչպես քաղաքի արհեստավորներին, այնպես էլ նահապետական գյուղացիներին և դարձնում է նրանց մանր արտադրողներ, մանր բուրժուաներ: Բուրժուազիայի այդ շերտերին սկսում են հարել նաև մանր առևտրականներն ու բնակչության այլ շերտերը: Երկիրն աստիճանաբար դառնում է մանրբուրժուական: Այդ բուրժուազիան անկայուն էր իր զարգացման փուլում: Նրա փոքր մասը համալրում է բուրժուազիայի, իսկ մեծ մասը պրոլետարիատի շարքերը: Մանր բուրժուազիան ինչպես ամենուր, այնպես էլ Արևմտյան Հայաստանում ուներ երկակի բնույթ. նրանք՝ որպես աշխատավորներ, ձգտում են դեպի պրոլետարիատը, իսկ որպես

սեփականատերեր՝ դեպի բուրժուազիան[14]: Մանր բուրժուազիայի համագործակցումը պրոլետարիատի հետ մեծ նշանակություն ուներ աշխատավոր զանգվածների քաղաքական և սոցիալական ազատության գործում, քանի որ վերջիններս կազմում էին բնակչության մեծամասնությունը:

Արևմտյան Հայաստանում մանր ապրանքային արտադրությունը և մանր բուժուազիան դեռ թույլ էին զարգացած երկրի որոշ շրջանները տակավին չէին ներգրավված շուկայական հարաբերություններում, որի հետևանքով բնափակ տնտեսությունը դեռ էական դեր էր խաղում երկրի տնտեսական կյանքում:

Ապրանքային արտադրությունը առաջ բերեց Արևմտյան Հայաստանում մի շարք տեղաշարժեր. արդյունաբերական բնակչությունը բաժանվեց գյուղական բնակչությունից և կենտրոնացավ քաղաքներում, և այդ բաժանումը համեմատաբար խորն էր: XIX դ. վերջին երկրի տարբեր քաղաքներում ու գյուղաքաղաքներում բնակչության քանակն արդեն արտահայտվում էր հետևյալ թվերով (երկսեռ անձ)[15]:

Դիարբեքիր - 38.000	Սղերդ - 15.000
Խարբերդ - 33.799	Դիվիրիգ - 10.000
Սվազ- 35.000	Ակն - 8.000
Էրզրում - 32.362	Բալու - 7.000
Վան - 30.000	Չմշկածագ - 6.000
Ամասիա - 30.000	Բայբուրդ - 4.000
Արաբկիր - 25.000	Բիթլիս - 25.000
Մուշ - 24.779	Երզնկա - 21.797
Արզնի -3.000	Բայազետ - 2.000
Խնուս - 2.000	

Այլ կերպ ասած, քաղաքային բնակչությունն հասնում էր շուրջ 350 հազ. հոգու և կազմում երկրի ամբողջ բնակչության մոտ 10 %-ը:

Ապրանքային արտադրության աճը երկրի որոշ շրջաններում ստեղծում է ներքին շուկա ոչ միայն ապրանքների, այլ նաև աշխատուժի վաճառքի համար: Այդ բանը տեղի էր ունենում գերա-

[14] Տե՛ս «Краткий экономический словарь».- М., 1958.- էջ 172:

[15] Տե՛ս Կառլայլ Մակ Կոան, նշվ. աշխ., էջ 254, Էլիզե Ռեկլի, Լազիստան, Հայաստան և Քյուրդիստան, Վաղարշապատ, 1893, էջ 67, Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ. 83, 87, 89, 91, 93-94, 99, Ի. Գոլոբորոդկո, նշվ. աշխ., էջ 4-5:

զանցապես քաղաքներում, որտեղ առևտրա-վաշխառուական բուրժուազիայի կողքին աշխուժանում էր նաև արդյունաբերական բուժուազիան, իսկ արհեստավորների կողքին՝ պրոլետարիատը. այսպիսով, երկրում ձևավորվում և առաջանում էին կապիտալիստական հարաբերություններ: Արևմտյան Հայաստանում ինչպես առևտրա-արդյունաբերական բուրժուազիան, նույնպես և պրոլետարիատը բազմազգ էին: Սակայն նրանց մեջ գերիշխողը հայերն էին: Ինչ վերաբերում է վաշխառուական բուրժուազիային, ապա այն բաղկացած էր առավելապես մահմեդականներից՝ թուրքերից ու քրդերից: Դարերի ընթացքում Օսմանյան Թուրքիայում հազարավոր հայեր, հույներ և ասորիներ քաղաքական, տնտեսական, ազգային և իրավական ճնշումների և խտրության պայմաններում զանգվածաբար դավանափոխ և լեզվափոխ էին լինում: Որպես այդ երևույթի արդյունք առևտրա-վաշխառուական բուրժուազիայի և արհեստավորների ոլորտում հայտնվում են թուրքեր և քրդեր:

Ապրանքային արտադրությունը շուկայական հարաբերությունների մեջ ներգրավեց հասարակության համարյա բոլոր խավերին՝ ինչպես կալվածատերերին, նույնպես և գյուղացիներին ու արհեստավորներին, նստակյաց երկրագործներին և կիսավաչկատուն անասնապահներին: Դրա հետևանքով մի կողմից քայքայվում էին նահապետական հարաբերությունները և առաջանում ավատատիրական հարաբերություններ, իսկ մյուս կողմից ավատատիրական հարաբերություններն անցնում են նոր զարգացած ձևերի:

Բացի քաղաքներից ու գյուղաքաղաքներից, կապիտալիստական որոշ տարրեր առաջացան նաև գյուղերում՝ գլխավորապես կալվածատիրական և մասամբ՝ ունևոր գյուղացիական տնտեսություններում:

Ապրանքային արտադրությանը նպաստում է նաև ճանապարհների բարեկարգումը: Կառուցվում են մի շարք խճուղիներ, որոնք հեշտացնում են երկրի քաղաքների ու գյուղերի միջև եղած տնտեսական կապը: 1856-1871 թթ. ավարտվում են Տրապիզոն-Բայբուրթ-Էրզրում խճուղու կառուցման աշխատանքները՝ 280-300 վերստ երկարությամբ[16]: Այնուհետև սկսվում են Խարբերդ-Դիարբեքիր, Խարբերդ-Մալաթիա, Խարբերդ-Կապան-Մադեն, Խարբերդ-Բերդակ-Չմշկածագ, Էրզրում-Հասան-Կալա, Վան-

[16] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 5, գ.1808, թ. 2: Ա. Դ. Երիցով, նշվ. աշխ., էջ 74: «Մշակ», 1895 նոյեմբերի 9, թիվ 129:

Արճեշ, Վան-Արտամետ, Բիթլիս-Դիարբեքիր, Բիթլիս-Մուշ և այլ սայլուղիների խճուղապատումը, որոնց զգալի մասն ավարտվեց առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին[17]:

Ցամաքային ճանապարհների բարեկարգմանը զուգահեռ փոքր ինչ աշխուժանում են նաև ջրային ճանապարհները: Վանա լճում աճում է առագաստանավերի թիվը և փորձեր են արվում շոգենավեր բանեցնելու ուղղությամբ: 1896 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ 1806 թ. այդ լճի վրա «հազիվ յոթ-ութ առագաստանավեր կը գտնվին Բաղեշ քաղաքի վաճառականության համար: Դարուս սկզբեն մինչև ցայժմ տարվե տարի երթալով բազմացած են առագաստանավք, և ըստ վերջին հաշվողաց կան 87 առագաստանավք, որք ունին 347 նավաստիք և 1040 տակառաչափ բեռ կը փոխադրեն: Մեծ նավեր խիստ քիչ կը գտնվին. 1879 թ. Վանա ամերիկյան քարոզիչք առաջին անգամ ձգեցին շոգենավակ մը, որուն մասունք ուղտերով բերել տված են. ծխախոտի ընկերությունն ևս ունի փոքր շոգենավ մը»[18]:

Ի դեպ՝ այդ տարիներին առանձին պետություններ ու ընկերություններ ծրագրում էին Արևմտյան Հայաստանում երկաթուղի կառուցել: 1873 թ. Ավստրիական կառավարության հանձնարարությամբ ինժեներներ Աբելը և Տիխը ուսումնասիրում են Արևմտյան Հայաստանի աշխարհագրական պայմանները՝ Սվազից դեպի Կեսարիա-Խարբերդ-Թոքատ-Ամասիա-Սամսոն-Երզնկա-Էրզրում երկաթուղի կառուցելու նպատակով[19]:

1891 թ. բելգիական մի խումբ արդյունաբերողներ ուզում էին կառուցել Սամսոն-Սվազ-Կեսարիա երկաթգիծը և Յումուրթալիկի մոտ դուրս գալ Միջերկրական ծով. այլ կերպ ասած՝ երկաթուղով միացնել Սև և Միջերկրական ծովերը:

1910 թ. ֆրանսիացի Ֆուժերոլլ եղբայրները պայմանագրային իրավունք վերցրին կառուցելու Անկարա-Սվազ-Երզնկա-Էրզրում-Վան, Սամսոն-Ամասիա-Սվազ-Դիարբեքիր, Խնուս-Մուշ-Բիթլիս և Էրզրում-Քըղի-Խարբերդ ուղիները[20]:

[17] Տե՛ս Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ 194: Վ. Տ. Մաևսկի, նշվ. աշխ., էջ 77-83: Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 521, ցուց. 2, գ. 315, թթ. 76-79, գ. 314, թթ. 237-238:

[18] Բազմավէպ, 1896, էջ 309:

[19] АВПР, ф. «Главный архив V-A2», 1873, д. № 1085, лл.41-42.

[20] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 62, թթ. 13-15:

Մոտավորապես այդ նույն ժամանակաշրջանում ամերիկյան «American Development GU» ընկերությունը խնդիր ներկայացրեց կառուցելու Խարբերդ-Դիարբեքիր-Վան երկաթուղին լճի շուրջ (երկայնքով), նորագույն տեխնիկայով վերակառուցելու Վանա լճի նավագնացությունը և հաստատելու կանոնավոր երթևեկություն Արևմտյան Հայաստանի հանքային օբյեկտների միջև[21]:

Իրենք՝ թուրքերը, 1908 թ. հեղաշրջումից հետո նախագծել էին կառուցել Սվազ-Էրզրում, Սարիկլի-Դիարբեքիր, Դիարբեքիր-Բիթլիս-Վան, Տրապիզոն-Էրզրում, Էրզրում-Բայազետ, Դիարբեքիր-Ուրֆա և մի շարք այլ գծեր[22]:

Բայց այդ բոլոր ցանկություններն ու նախագծերը մնացին սոսկ թղթի վրա: Դրանց իրագործմանը խանգարեց երկու գործոն. առաջինը թուրքական պետությունն էր, որը կարծում էր, թե արտասահմանյան ընկերություններն ու պետությունները երկաթուղիների կառուցումով հնարավորություն կունենան միջամտելու Թուրքիայի ներքին գործերին և տիրանալու երկրի հարստությանը, իսկ երկրորդը իմպերիալիստական պետությունների միջև եղած հակասությունն էր:

* *
*

Ապրանքա-դրամային հարաբերությունների աշխուժացման պայմաններում զարգանում էր նաև առևտրա-վաշխառուական կապիտալը, 60-70-ական թվականներին ի հայտ եկան մի շարք հարուստ վաճառականներ, որոնք, հաստատվելով քաղաքներում, իրենց շոշափուկներն էին տարածում գավառների վրա և կապում դրանք բուրժուական աշխարհի հետ: Կ. Պոլսի սեղանավորներից շատերը, թողնելով վաշխառությունը, զարկ տվեցին առևտրին և համալրեցին առևտրականների շարքերը: Խոշոր վաճառականներն ունեին իրենց գործակալները, որոնց միջոցով իրացնում էին ներմուծած ապրանքները կամ արտահանում էին տեղական հումքը: Կ. Պոլսում և ծովափնյա այլ

[21] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 62, թթ. 13-15:

[22] Տե՛ս Международные отношения в эпоху империализма... серия II, т. XVIII, ч.1, Москва, 1939, стр. 50-51.

քաղաքներում նրանք կոչվում էին օդաջաներ (թուրքերեն օդաջը բառից, որ նշանակում է ցրիչ):

Արևմտահայ առևտրական բուրժուազիայի զարգացումը շարունակվեց մինչև XIX դ. վերջերը, իսկ այնուհետև հետևողականորեն անկում ապրեց: Նրա տեղն արագորեն գրավեց թուրքական առևտրական բուժուազիան:

Չնայած դրան՝ արևմտահայ վաճառականները դեռ շարունակում էին կարևոր դեր խաղա Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական կյանքում: Իրենց առևտրական գործունեությամբ նրանք հռչակված էին Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Կիլիկիայում և Սև ծովի հարավային շրջաններում: Կահիրեում ու Ալեքսանդրիայում հայերը հայտնի էին ոսկու, Ադանայում, Մարաշում, Տարսոնում, Մերսինում՝ բամբակի, Սամսոնում, Տրապիզոնում և Ամասիայում՝ մանուֆակտուրային ապրանքների առևտրով: Հայ վաճառականները նշանավորվել էին նույնիսկ Ռումինիայի հետ ցորենի առուծախում, իսկ 1875 թ. արտահանելով ասիական զանազան շինվածքներ ու գործվածքներ, հատկապես հայկական գորգեր՝ կապել էին առևտրական պայմանագրեր Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ:

Արևմտահայ վաճառականությունը զգալի դեր էր խաղում նաև Թուրքիայի ցամաքային առևտրի մեջ: Թոքատում, Կեսարիայում, Զիլեում, Մարզվանում, Եղսատում և այլ քաղաքներում հայ առևտրականներն իրենց ձեռքն էին վերցրել եվրոպական մի շարք ապրանքների ներմուծման և տեղական ապրանքների արտահանման գործը: Արևմտահայ մեծահարուստ վաճառականներից ոմանք առևտրական կապեր էին ստեղծել Փարիզի, Մարսելի, Վիեննայի, Մանչեստրի ու եվրոպական այլ քաղաքների հետ և զբաղվում էին ոսկեղենի, արծաթեղենի, ակնեղենի, երկաթեղենի և մանուֆակտուրային ապրանքների առևտրով: Նրանց խորհուրդներով բարելավվում էր եվրոպական որոշ ապրանքների որակը: Արշակ Ալպոյաճյանը գրում էր. «Հայ վաճառականներու թելադրությամբ էր, որ Եվրոպայի մեջ պատրաստվել սկսան նուրբ եազմաներ»[23]:

Հ. Ինճիկյանի բերած տվյալներով՝ 1912 թ. Օսմանյան կայսրության 215 խոշոր քաղաքներում հայ վաճառականները կազմում էին բոլոր վաճառականների 22,9%-ը: Առևտրի մի շարք

[23] Արշակ Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Գահիրե, 1952, էջ 1320:

ձյուղերում նրանց տոկոսն ավելի բարձր էր (ակնավաճառության մեջ այն կազմում էր 50,3, բրդի, բամբակի և մետաքսի առևտրում՝ 43,7, մանուֆակտուրային ապրանքների վաճառքում՝ 31,2, երկաթեղենի առևտրում՝ 37,9, ոգելից խմիչքների վաճառքում՝ 33,5 տոկոս)[24]:

Հայ վաճառականների թվի գերազանցությունը բնավ չի վկայում հայերի քաղաքական և իրավական ազատության մասին: Պարզապես, հայերն առավել օժտված են եղել և նրանց պատմամշակութային դարավոր փորձն ու ավանդույթը օգնել է նրանց: Միևչդեռ թուրքական և քրդական վաչկատուն և կիսավաչկատուն ցեղերը վաճառականությամբ և արհեստներով սկսել են զբաղվել միայն նստակեցությունից հետո. իսկ դա դարեր է տևել...

Իմպերիալիստական խոշոր պետությունների և Թուրքիայի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի միջև եղած ապրանքադրամային հարաբերություններն ավելի ուժեղացան XIX դ. վերջին ու XX դ. սկզբին: Հայ վաճառականներն առևտրական գործարքներով կապված էին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Հոլանդիայի, Բելգիայի, Պարսկաստանի և այլ պետությունների հետ:

Վաճառականները Խարբերդի վիլայեթից արտասահման էին արտահանում. նուշ, մետաքսեղեն, մեղրամոմ, հաշիշ, վայրի կենդանիների մորթի, չորացրած մրգեր, Բիթլիսի վիլայեթից՝ «գխտոր, գազի խեժ, բուրդ, թիֆթիք, անիսոն, կաշի, շիլա և այլն»[25], Վանի վիլայեթից՝ ոչխար, այծ, եզ, կով, բուրդ, այծի մազ, կաշի, շալ, գորգ և ընկուզենու փայտ, Դիարբեքիրի վիլայեթից՝ անասուն, անասնապահական մթերքներ, մասնավորապես կաշի, մետաքսյա գործվածքներ և այլն:

1881 թ. Տրապիզոնում Իտալայի հյուպատոս Կ. Սոլանելին գրում էր. «Քիչ չեն հայոց գավառներեն դուրս գնացող առարկաներն. և գլխավորապես են կենդանիներ կամ բերքեր, օրինակի համար, այծի, ոչխարի և կովու մորթ, բուրդեր, կանեփի հունտ, կաղին, կենդանիներ, բազմաթիվ և լավ ձիեր, տոսախենի և ընկուզենի: Ասոնք ընդհանրապես Գաղիա կը ղրկվին: Իսկ արվեստական ձեռագործքն են գորգեր, շալ, ցփսի և ոսկեղեն և արծաթեղեն բանվածքներ: Տարեկան ելից գինը կարելի է 7.000.000 լիրայի հասցնել»[26]:

Իսկ արտասահմանից նրանք ներմուծում էին բրդյա և բամբակյա գործվածքներ, թել, մետաղյա զանազան շինվածքներ, ապակյա և ճենապակյա ամանեղեն, շաքար, սուրճ, լուցկի և այլն. հիմնականում եվրոպական ժամանակակից առաջավոր գործարանների արտադրանք:

Արևմտյան Հայաստանի առևտուրը Թուրքիայի և արտասահմանյան պետություններից յուրաքանչյուրի հետ 1880-ական թվականների կեսերին արտահայտվում էր հետևյալ չափերով (հազ. ռուբլիներով)[27]:

Պետությունները	արտահանում	ներմուծում	շրջանառության գումարը	% հարաբերությամբ
1. Անգլիա	864	7927,1	8791,2	33,3
2.Ֆրանսիա	678,1	1611,5	2289,6	8,7
3.Գերմանիա	782,3	1375,0	2157,3	8,2
4.Ավստրիա	120,0	756,0	876,0	3,3
5.Ռուսաստան	486,7	906,1	1392,8	5,3
6.Թուրքիա և Եգիպտոս	4.870,2	2446,7	7316,9	27,7
7.Իտալիա	7,8	101,9	109,7	0,4
8.Պարսկաստան	174,7	1.957,5	2132,2	8,1
9.Ռումինիա և Բուլղարիա	154,2	32,3	186,5	0,7
10.Բելգիա	83,3	121,9	205,3	0,8
11.Հունաստան	93,4	33,4	126,8	0,5
12.Դանիա	93,5	-	93,5	0,3
13.Շվեդիա	-	160,0	160,0	0,6
14.Այլ երկրներ	88,0	478,0	566,0	2,2
Ընդամենը	8496,2	17.907,4	2643,6	100,0

Այս տվյալները թեև վերաբերում են միայն Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթներին, բայց բնորոշ են երկրի բոլոր վիլայեթներին: Դրանք ցույց են տալիս, որ Արևմտյան Հայաստանի ներմուծումն ավելի քան երկու անգամ գերազանցում է արտահանմանը, որը վկայում է նրա տնտեսական հետամնացությունը և գաղութային բնույթը:

Այս տվյալները ցույց են տալիս նաև, որ Արևմտյան Հայաստանի արտաքին առևտուրը ամենից շատ կապված էր Անգլիայի, հետո միայն (եթե չհաշվենք Թուրքիան ու Եգիպտոսը) Գերմանիայի, Ֆրանսիայի և Պարսկաստանի հետ: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա պետք է ասել հետևյալը:

[24] Տե՛ս О. Г. Инджикян. Буржуазия Османской империи.- Ереван, 1974.- էջ 212:

[25] Մասիս, 1881, հոկտեմբերի 17:

[26] Բազմավեպ, 1882, էջ 298:

[27] Գրյազնով, նշվ. աշխ., էջ 172:

Ռուսաստանը Թուրքիայի հետ կնքել էր առևտրական պայմանագիր դեռևս 1862 թ. փետրվարի 3-ին: Համաձայն այդ պայմանագրի՝ Թուրքիայում, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում նա կարող էր գնել և վաճառել ցանկացած ապրանք՝ բացի աղից, ծխախոտից, վառոդից և պայթուցիկ այլ նյութերից, տեղափոխման համար վճարելով 8% մաքս: Թուրքական կառավարությունը, ըստ այդ պայմանագրի, պարտավոր էր ապահովել ռուս վաճառականների անձի ու գույքի անվտանգությունը: Պայմանագիրը կնքվել է 14 տարով, պայմանով, որ եթե կողմերից մեկը ցանկություն չէր հայտնում այն փոփոխել կամ լուծարել, ապա այն ուժի մեջ կմնար ևս 7 տարի[28]: Եվ իսկապես, այն ուժի մեջ մնաց ևս 7 տարի:

1883 թ. հատուկ հանձնարարությունների պաշտոնյա Դ. Ա. Տիմիրյազևը գործուղվում է Կ. Պոլիս՝ Բարձրագույն Դռան հետ խորհրդակցելու և վերոհիշյալ առևտրական պայմանագրի մեջ որոշ փոփոխություն մտցնելու նպատակով: Սակայն բանակցությունները որևէ արդյունք չեն տալիս և այն ուժի մեջ է մնում մինչև առաջին համաշխարհային պատերազմը, բայց որոշ խմբագրում, այնուամենայնիվ, կատարվում է պայմանագրում. 1904 թ. Թուրքիան եվրոպական պետությունների և Ռուսաստանի համաձայնությամբ բարձրացնում է ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսը՝ 8%-ից հացնելով 11%-ի[29]:

Ռուսաստանը կարող էր Թուրքիայի հետ առևտուր անել և՛ ծովով, և՛ ցամաքով: Մինչև Կարսի մարզի միացումը՝ Ռուսաստանը իր ապրանքները տեղափոխում էր Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Իգդիրի, Կողբի և Խոզանի վրայով, իսկ Կարսի մարզի միացումից հետո՝ գլխավորապես Կարաուրգանի, Օրգովի, Օլթիի, ինչպես նաև մասամբ Կաղզվանի, Սատաղի, Կարավանի և Օրջոխի վրայով[30]:

Չնայած նպաստավոր պայմաններին և ձեռնտու պայմանագրերին՝ Ռուսաստանը, հատկապես XIX դ. երկրորդ կեսին, եվրոպական խոշոր պետությունների համեմատությամբ, քիչ էր մասնակցում Արևմտյան Հայաստանի հետ կատարվող առևտրին: Դա բացատրվում է ոչ միայն նրա տնտեսական հետամնացությամբ, կամ նրանով, որ զբաղված էր իր ծայրամասերի՝ Սիբիրի, Միջին Ասիայի և Կովկասի տնտեսական յուրացումով, այլ նաև ցարիզմի՝ հայերի նկատմամբ վարած ազգայնամոլական քաղաքականությամբ: Ռուսական կառավարող շրջանները, համարելով, որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը կարող է ազդել կովկասահայության վրա, սկսած հատկապես 1880-ական թվականներից՝ ամեն կերպ խոչընդոտում էին նրանց միջև տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերի ամրապնդմանը, իսկ 1897 թ. գրեթե բոլորովին դադարեցրին ամեն մի շփում հայության երկու հատվածների միջև[31]:

Սակայն XX դ. սկզբին ցարական իշխանությունը ռուսական արդյունաբերության զարգացման և երկրի ծայրամասերի տնտեսական քիչ թե շատ յուրացման նպատակով վճռական քայլեր է անում Արևմտյան Հայաստանի շուկան ձեռք գցելու ուղղությամբ: Այդ քայլերից մեկն այն էր, որ 1903 թ. բացվում է ցամաքային առևտուր Թուրքիայի և Իրանի հետ և նկատելի արագությամբ մեծանում է Արևմտյան Հայաստան արտահանվող ապրանքների քանակը: Եթե 1903 թ. Օրգովի վրայով, այսինքն՝ ռուս-թուրքական ցամաքային առևտրի խոշորագույն կետով, արտահանել է 226.946, ապա 1909 թ.՝ 889.430 ռուբլու ապրանք[32]: Եթե 1910 թ. միայն Վան արտահանվել է 160.500, ապա 1911թ.՝ 254.500 ռուբլու ապրանք[33]: Ռուսական ապրանքների արտահանումը դեպի Արևմտյան Հայաստան համարյա նույն տեմպերով աճում էր նաև Կարաուրգանով և առևտրական մյուս կետերով[34]:

Շնորհիվ այդ տեմպերի՝ ռուսական որոշ ապրանքներ դուրս են մղում Արևմտյան Հայաստանի շուկայից եվրոպական ապրանքները: Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսը 1911 թ. գրում էր, որ երեք-չորս տարի առաջ Վանում համարյա չկար ռուսական շաքար, 1910 թ. եղած շաքարի մոտ 1/3-ն արդեն

[28] Տե՛ս Т. Юзефович. Договоры России с Востоком, политические и торговые.- СПб., 1869.- էջ 162-169:

[29] В. К. Ленский. Ближний Восток, как рынок сбыта русских товаров.- Сиб, 1913.- էջ 176-180:

[30] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, Ֆ. 378, ցուց.1, գ.13534, թթ. 39-48:

[31] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 62-63:

[32] Նույն տեղում, գ. 310, թթ. 259-260, գ. 492, թ. 267:

[33] Նույն տեղում, ֆ. 71, գ. 76, 141:

[34] Նույն տեղում, ֆ. 378, ցուց. 1, գ. 13534, թ. 34:

պատկանում էր Ռուսաստանին, իսկ մնացածը՝ Ավստրիային ու Ֆրանսիային: «Ներկայումս տեղական շուկայում իշխում է բացարձակապես ռուսական շաքարը և լրիվ հիմք կա հուսալու, որ 1912 թ. ընթացքում շաքարի ներմուծումը Ավստրիայից ու Ֆրանսիայից վերջնականապես կդադարի»[35]:

Նա մի այլ առիթով ավելացնում էր. «Պակաս ուշադրության արժանի չէ նաև տարեց տարի մեր երկաթի, գյուղատնտեսական գործիքների, ինչպես նաև ոգելից խմիչքների, նավթի, կարմիր պղնձի և այլ ապրանքների նկատմամբ աճող պահանջարկը[36]:

Ռուսական «Լույս» նավթային ընկերությունը էրզրում, Վան և Բիթլիս քաղաքներում ուներ իր պահեստները, որտեղ լցնում էր Բաքվի նավթը և ցանկացած ժամանակ արտահանում էր վաճառքի երկրի տարբեր վայրերը[37]:

Ցարական իշխանությունը, Արևմտյան Հայաստանի շուկան նվաճելու համար, արևմտահայ վաճառականներին, որոնք կապված էին գերազանցապես արևմտաեվրոպական երկրների հետ, առավել արդյունավետորեն էր ներգրավում առևտրական գործարքների մեջ: Ռուսական զանազան ֆիրմաների ներկայացուցիչներն ուղարկվում էին Վան, էրզրում, Բիթլիս և այլ քաղաքներ, որտեղ նրանք ծանոթացնում էին տեղական վաճառականներին իրենց արտադրանքին և շահագրգռում էին նրանց կապվել Ռուսաստանի հետ: 1910 թ. հունիսին Վան է մեկնում Մոսկվայի «Էմիլ Պինդել» մանուֆակտուրային ընկերության ներկայացուցիչ Օստրոմիսլենսկին և վաճառականներին ցույց տալիս իրենց արտադրած չիթը: Նրանցից շատերը հիանում են այդ չթով և պատրաստակամություն հայտնում վաճառել դա՝ եվրոպականի փոխարեն: Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսն այդ առթիվ գրում էր. «Մոսկվայի խոշոր ֆիրմայի գործակալի առաջին անգամ Վանում երևալն առաջացրեց ուժեղ խառնաշփոթ այն առևտրականների մեջ, որոնք վաղուց ապրանք էին ստանում Արևմտյան Եվրոպայից ու Անգլիայից՝ Կ. Պոլսի վրայով: Ռուսական գործարանի հոյակապ չթի օրինակներն առաջացրին ընդհանուր հիացմունք: Մանուֆակտուրայի ամենախոշոր վաճառական Կափամաջյանը (քաղաքագլուխը),

[35] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 76, թ.140:

[36] Նույն տեղում, ֆ. 378, ցուց.1, գ. 13534, թ. 41:

[37] Տե՛ս «Торгово-промышленный юг», 1912.- № 9.- էջ 41-42:

որը միշտ առևտուր էր անում Մանչեստրի հետ, առաջինն էր, որ պատվիրեց ռուսական գործարանին: Մնացած վաճառականներն այցելեցին Օստրոմիսլենսկուն և նրա հետ բանակցություններ վարեցին»[38]:

Նա այնուհետև շարունակում էր, որ Օստրոմիսլենսկին «մտադիր է ներգրավել միջին և մանր առևտրականներին՝ որպես Վանում իր ապրանքների սպառողներ: Այդ միջոցառումը միանգամայն արդյունավետ կլինի, քանի որ հայ խոշոր առևտրականը, որ կապ ունի Արևմտյան Եվրոպայի հետ, միայն այն ժամանակ գործարքի մեջ կմտնի մեր առևտրական կազմակերպությունների հետ, երբ նա ստիպված կլինի գործարք կնքել, քանի որ մեր ապրանքների առավելությունը կճնշի ներմուծված եվրոպական ապրանքներին մրցակցային դաշտում»[39]:

Արևմտյան Հայաստանի շուկան նվաճելու ուղղությամբ մեծ աշխատանք էր ծավալել ցարական պաշտոնյաներից հատկապես էրզրումի գլխավոր հյուպատոս Ա. Ն. Շտրիտտերը: Նա Պետերբուրգ էր ուղարկում այն ապրանքների նմուշները, որոնք կարող էին հաջողությամբ վաճառվել Արևմտյան Հայաստանում և, կապ հաստատելով տեղացի վաճառականների հետ, ձգտում էր ծառայեցնել նրանց ռուսական գաղութատիրական նպատակներին: Ցարական պաշտոնյաներից մեկը՝ Ն. Գուլը, նրա գործունեությունը Ռուսաստանի և Արևելյան Թուրքիայի տնտեսական հարաբերությունների պատմության մեջ համարում էր նոր շրջան, փաստելով, որ «մինչև այժմ ոչ ոք այդպիսի լուրջ ուշադրություն չի դարձրել էրզրումի շուկայի վրա»[40]:

Շնորհիվ ռուսական կապիտալիստական շրջանների եռանդուն գործունեության՝ Վանի որոշ նշանավոր վաճառականներ, Գևորգ Ջիդաչյանը, Կափանյանցը և ուրիշներ առևտուր են անում բացառապես ռուսական ապրանքներով[41]:

Շուտով Վանի վաճառականների օրինակին են հետևում նաև այլ քաղաքների վաճառականները: 1912 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Մինչև վերջին ժամանակներս էրզրումի վաճառա-

[38] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 230:

[39] Նույն տեղում, թ. 231:

[40] "Торгово-промышленный юг"- 1912, № 9.- էջ 36:

[41] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 71, գ.76, թ.148:

կանությունը, ըստ սովորության, գերադասում էր գործ ունենալ Եվրոպայի հետ՝ բոլորովին անծանոթ լինելով ռուսական արդյունաբերական շուկային... Այժմ նկատվում է նոր երևույթ... վաճառականները սկսում են հետաքրքրվել ռուսական արդյունքներով ու շինվածքներով»[42]:

Արևմտահայ վաճառականների պահանջարկը ռուսական ապրանքների նկատմամբ այնքան արագ էր աճում, որ ռուս արդյունաբերողները հաճախ չէին հասցնում բավարարել այն: «Եռանկյուն» («Треугольник») ֆիրման 1911 թ. չի կարողանում կատարել Վանում իր ներկայացուցչի տված խոստումը տեղացի վաճառականներին՝ 10.000 զույգ երկարաճիտք կոշիկներ (сапоги) ուղարկելու վերաբերյալ[43]:

Ցարական իշխանությունը Արևմտյան Հայաստանի շուկան նվաճելու համար դիմում էր նաև երկաթուղիներ կառուցելու, պայմանագրային իրավունք ձեռք բերելու, բանկի բաժանմունք հիմնելու և այլ միջոցների: 1900 թ. Ռուսաստանն ստանում է Անկարա-Կեսարիա-Սվազ-Խարբերդ և Դիարբեքիր երկաթուղու կառուցման իրավունքը, իսկ 1910 թ. Թուրքիայի հետ կնքած նոր պայմանագրով արգելվում է որևէ ուրիշ պետության կառուցել երկաթուղի այդ գծից դեպի Արևելք ընկած մարզերում: Սակայն ցարական կառավարությունը չօգտագործեց այդ իրավունքը և բավարարվեց միայն Կարս-Սարիղամիշ-Էրզրում երկաթուղու կառուցումով:

1913 թ. ցարական իշխանությունը, համաձայնության գալով Ֆրանսիայի հետ, գրեթե իր ձեռքը վերցրեց Սալոնիկի բանկն աշխատեցնելու հնարավորությունը: Իսկ հայ խոշոր արդյունաբերող, «Թիֆլիսի առևտրական բանկի» տնօրեն Մանթաշյանը, առաջարկել էր ցարական կառավարությանը թույլատրել իրեն հիմնելու Արևմտյան Հայաստանում հատուկ բանկ, պայմանով, որ այդ բանկը լինի Ռուսաստանի հովանավորության տակ և այն ամբողջ Արևմտյան Հայաստանում լինի միակը, մերժում ստացավ: Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսը կարծում էր, որ Մանթաշյանի ցանկությունը խիստ ազգայնամոլական է և, որպես այդպիսին, խանգարում է հիմնավորելու և զարգացնելու Թուրքիայի հայկական վիլայեթներում զուտ ռուսական ուղղվածությանը[44]:

Այդ նույն թվին ռուսահպատակ Մակրոկորդատո եղբայրները վերցնում են իրենց համար շահավետ պայմաններով Դիարբեքիրի վիլայեթում Արղանայի պղնձահանքերի շահագործման իրավունքը: Բայց մոտալուտ առաջին համաշխարհային պատերազմի պատճառով նրանք չեն կարողանում օգտագործել այն:

Ռուսական գաղութարարներն այդ բոլորով հանդերձ Արևմտյան Հայաստանի շուկան նվաճելու համար անհրաժեշտ էին համարում ձեռնարկել նաև մի շարք այլ միջոցառումներ. կառուցել Կարաուրգան-Էրզրում և Բայազետ-Վան խճուղիները, կազմակերպել Էրզրումում ռուսական ապրանքների մշտական ցուցահանդես և այն պարբերաբար ցուցադրել Վանում, Բիթլիսում, Խարբերդում և այլ քաղաքներում, հիմնադրել Էրզրումում ռուսական պետական բանկի բաժանմունք կամ գործակալություն, նշանակել Էրզրումում առևտրական ներկայացուցիչ՝ ռուսական ապրանքների վաճառքը կազմակերպելու համար, կանոնավորել փոստ-հեռագրատան աշխատանքները, բարելավել Վանա լճի նավագնացությունը, հեշտացնել առևտրական փաստաթղթերի ձևակերպումը և այլն[45]:

Պետք է նշել, որ Ռուսաստանի գաղութատիրական ձգտումներն Արևմտյան Հայաստանում բախվում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և եվրոպական այլ երկրների նույնանման ձգտումներին: Դրա հետևանքով Ռուսաստանի և այդ պետությունների միջև, հատկապես XX դ. սկզբին, փաստորեն, պայքար էր գնում Արևմտյան Հայաստանի շուկան նվաճելու ուղղությամբ: Անգլիացիները, ձգտելով պահել նվաճած դիրքերը, պարբերաբար իջեցնում էին իրենց ապրանքների գներն և աշխատում էին ընդօրինակել ռուսական ապրանքների այն լավը, որը դուր էր գալիս տեղացիներին: Մանչեստրի գործարանատերերը երբ իմանում են, որ իրենց մշտական գնորդ Կափամաջյանը որոշել է այլևս չգնել նրանց չիթը, անմիջապես իջեցնում են Վանում վաճառվող իրենց չթի գինը, ապա նրանից պահանջում են Մանչեստր ուղարկել ռուսական չթի նմուշ՝ նմանը արտադրելու

[42] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 378, ցուց. 1, գ.13534, թ. 33:

[43] Տե՛ս նույն տեղում, թ. 37:

[44] Տե՛ս «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств в 1878-1917 гг.».- серия III, т. II.- էջ 94:

[45] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 378, ցուց. 1, գ. 13534, թթ. 36-39:

համար, հետո կանչում են նրան Մանչեստր և «խոստանում զանազան արտոնություններ»[46]:

Երբ ֆրանսիացիները իմանում են, որ ռուսներն ուզում են կառուցել Բայազետից Վան տանող ճանապարհը, պատրաստակամություն են հայտնում օգնել «երիտասարդ թուրքերին» Տրապիզոնից - Էրզրում երկաթուղի և խճուղի կառուցելու գործում: Այդ ուղիներով եվրոպացիները հեշտությամբ կառաքեին մեծ քանակությամբ ապրանք և դուրս կմղեին ռուսներին Արևելքի շուկաներից: Սակայն ռուսները վախենում էին ոչ այնքան ֆրանսիացիներից, որքան գերմանացիներից, ամերիկացիներից և մանավանդ անգլիացիներից, որոնք թեև ուշ հայտնվեցին Արևմտյան Հայաստանում, բայց արագորեն հեղեղեցին նրա շուկաներն իրենց ապրանքներով: 1911 թ. Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսը գրում էր. «Պատահաբար ինձ հաջողվեց տեսնել Վանի ֆրանսիական հյուպատոսների վերջին տարիների գաղտնի զեկուցագրերից մի քանիսը: Նրանցում ասվում էր, որ ռուսական առևտրի հետ հաջողությամբ մրցակցելու համար Ֆրանսիան պետք է օգնի Թուրքիային Փոքր Ասիայում երկաթուղիների և խճուղիների կառուցման գործում, քանի որ դրանց կառուցումով Ռուսաստանը այլևս չի ունենա աշխարհագրական այն առավելությունները, որոնք նա թեև դեռ չի օգտագործել, սակայն դրանք նրա առաջ բացում են առևտրական լայն հեռանկարներ ապագայում: Ֆրանսիացիները մեծ լավատես են: Նրանց մրցակցությունը մեզ համար վտանգավոր չէ: Նրանց առևտուրը Քուրդիստանում (իմա՝ Արևմտյան Հայաստանում - Ա. Հ.) տարեց տարի նվազում է: Ֆրանսիական ապրանքները, որոնք մի ժամանակ գործածվում էին այստեղ, ապշեցուցիչ արագությամբ փոխարինվում են անգլիականով ու գերմանականով: Վերջիններիս էժանությունը ձեռնտու է տեղացիներին, որոնք ուշադրություն չեն դարձնում ապրանքների որակի վրա: Ի հավելումն, անգլիական ու գերմանական գործարանատերերն այնքան բարեխիղճ են պատվերները կատարելու գործում և հանձայնում են այնպիսի զեղչերի, որ ֆրանսիացիներն իրենց թանկ ապրանքներով երազել անգամ չեն կարող որևէ հաջողություն ունենալ ապագայում Թուրքիայի այդ հեռավոր գավառներում»[47]:

[46] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ.71, գ. 76, թ.143:

[47] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 76, թ. 145:

Չնայած ցարական կառավարության եռանդուն ձգտումներին՝ Արևմտյան Հայաստանի շուկայում եվրոպացիները, հատկապես անգլիացիները, գերիշխող դեր էին խաղում ոչ միայն XIX դ. երկրորդ կեսին, այլ նաև XX դ. սկզբին: 1908 թ. ներքոհիշյալ պետություններից յուրաքանչյուրն արտահանել է Վանի վիլայեթ հետևյալ արժողությամբ ապրանք[48].

Անգլիա	239 հազ. ռուբլու
Ռուսաստան	144 հազ. ռուբլու
Գերմանիա	83 հազ. ռուբլու
Ավստրիա	74 հազ. ռուբլու
Ֆրանսիա	53 հազ. ռուբլու
Պարսկաստան	18 հազ. ռուբլու
Ռումինիա	3 հազ. ռուբլու
Հունաստան	1 հազ. ռուբլու

Եթե 1911 թ. Անգլիան, Գերմանիան և Ֆրանսիան (Անգլիայի առավելությամբ) արտահանել են նույն վիլայեթ ավելի քան 500.000, ապա միայն Ռուսաստանն արտահանել է 254.000 ռուբլու ապրանք[49]:

Անգլիան գերիշխող դեր էր խաղում Արևմտյան Հայաստանի նաև մյուս շրջաններ արտահանելու գործում: Այդ մասին կարելի է դատել Ա. Միքայելյանի բերած հետևյալ տվյալներից (տոկոսային հարաբերությամբ)[50]:

Գլխավոր պետությունները	1911 թ.	1912 թ.
Անգլիա	34	37
Ռուսաստան	29	23
Ֆրանսիա	19	20
Գերմանիա	18	19

Ռուսական պաշտոնական զեկուցագրերից մեկում նշվում էր, որ Էրզրումում տարեկան մոտ 20 միլիոն ռուբլու ներմուծվող ապրանքներից Ռուսաստանին պատկանում է միայն 1.500 հազարը[51]:

[48] Տե՛ս «Ванский вилайет».- М., 1910.- էջ 9-10:

[49] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 76, թթ. 138,141:

[50] Տե՛ս «Հորիզոն», 1914, հունիսի 21, թիվ 133:

[51] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 378, ցուց. 1, գ. 13534, թ. 34:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ ճորտատիրական մնացուկները դեռ բոլորովին չթոթափած Ռուսաստանն ի վիճակի չէր շահել կապիտալիստական առաջավոր երկրների հետ տարվող տնտեսական մրցությունը, ինչպես ամբողջ Թուրքիայում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում: Վերը բերված փաստերը հազիվ թե թույլ տան համաձայնել Ե. Ղ. Սարգսյանի այն պնդմանը, թե Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ռուսաստանը Հայաստանի հետ ունեցած առևտրում «գրավում էր առաջին տեղը»[52]:

Համաշխարհային կապիտալիստական շուկայի հետ ունեցած կապը այսպես թե այնպես նպաստում էր Արևմտյան Հայաստանում ապրանքային արտադրության աճին: Եթե վերցնենք Օրգովի վրայով կատարվող առևտուրը, ապա կտեսնենք, որ 1903 թ. Արևմտյան Հայաստանից Ռուսաստան է արտահանվել 21.599, իսկ 1909 թ.՝ 69.219 ռուբլու ապրանք[53]:

Վանի վիլայեթից տարբեր ուղղությամբ արտահանվել է հետևյալ քանակությամբ ապրանք[54].

1909 թ. - 758.850 ռուբլու
1910 թ. - 828.900 ռուբլու
1911 թ. - 875.700 ռուբլու

Այլ կերպ ասած՝ միայն 2-3 տարվա ընթացքում արտահանումն ավելացել է 116.850 ռուբլով:

Ապրանքների արտահանման աճը նկատելի էր նաև Էրզրումի վիլայեթում: Ըստ Ա. Միքայելյանի բերած տվյալների՝ Էրզրումից Ռուսաստան է արտահանվել՝ 1909 թ. 320.146, 1911 թ.՝ 494.545 ռուբլու, մինչդեռ Անգլիա արտահանվել է 1911 թ.՝ 2.707.975 ռուբլու, 1912 թ.՝ 2.770.185 ռուբլու արժողությամբ ապրանք[55]:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ և՛ Վանի, և՛ Էրզրումի վիլայեթներում ապրանքային արտադրության աճը տեղի էր

[52] Е. К. Саркисян. Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны.- Ереван, 1962.- էջ 77:

[53] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 521, ցուց. 2, գ. 310, թթ. 259-260, գ. 492 թ. 267:

[54] Տե՛ս նույն տեղում, գ. 492, թ. 271, գ. 71, գ. 76, թ.140:

[55] Տե՛ս «Հորիզոն», 1914, հունիսի 21, թիվ 133:

ունենում զերազանցապես անասնապահության ապրանքայնության զարգացման հետևանքով:

Արևմտյան Հայաստանի արտաքին ու ներքին առևտրի մեջ մեծ դեր էին խաղում Էրզրում և Խարբերդ քաղաքները, որոնք մի կողմից միացնում էին եվրոպական պետությունների առևտուրը ասիական երկրների հետ, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի առևտուրը Փոքր Ասիայի ու Մերձավոր Արևելքի երկրների հետ: Եվրոպական ապրանքները Կ. Պոլսից ուղարկվում էին Տրապիզոն, իսկ այնտեղից՝ Էրզրում և այնուհետև իրացվում էին կա՛մ Արևմտյան Հայաստանում, կա՛մ ուղարկվում էին Կովկաս, Պարսկաստան և Հնդկաստան, իսկ ռուսական ապրանքները ներմուծվում էին Կարաուրգանի վրայով Էրզրում, այնտեղից՝ Խարբերդ և այնուհետև ուղարկվում Կիլիկիա ու Մերձավոր Արևելքի երկրները: Լ. Սարգսյանը գրում էր, որ Էրզրումը, «լինելով Տաճկահայաստանի գլխավոր կենտրոնը, ուր Հայաստանի զանազան կողմերից (Ալաշկերտ, Բայազետ, Վան, Տիգրանակերտ, Բիթլիս Բաղեշ, Սղերդ, Մուշ, Բալու, Խարբերդ, Արաբկիր, Չմշկածագ, Երզնկա, Խնուս, Մանազկերտ և այլն) հավաքվում էին ամեն տեսակ բերքեր և ապրանքներ... ունի նաև մեծ առևտրական նշանակություն. նա մի տեսակ օղակ է, որ կապում է հեռավոր ասիական Արևելքը եվրոպական Արևմուտքի հետ[56]»:

Ա. Մ. Կոյուբակինը նշում էր. «Խարբերդ քաղաքն ունի առևտրական մեծ նշանակություն Ասիական Թուրքիայի ամբողջ հյուսիս-արևելյան մասի համար: Նա ունի համարյա այնպիսի նշանակություն, ինչպիսին ունի Էրզրումը, և իրենից շատ հետ է թողել Վանը, նույնիսկ Բիթլիսը»[57]:

Օսմանյան կայսրությունում դեռ հնուց անտի գոյություն ունեցող վաշխառուական կապիտալը նոր որակ և զարգացում է ապրում XIX դ. առաջին կեսին: Վաշխառուական կապիտալ ունեցող շատ հայեր Թուրքիայի հայաշատ վայրերից և Արևմտյան Հայաստանից տեղափոխվում են մայրաքաղաք՝ Կ. Պոլիս: Նրանք իրենց գործունեությամբ պաշտպանում էին ավատատիրական Թուրքիայի տնտեսական քաղաքականությունը՝ դրանով իսկ շահելով սուլթանի վստահությունը: Նրանցից շատերը դարձան ամիրաներ ու պատասխանատու պաշտոններ

[56] Լ. Սարգսյան, Այց թուրքաց Հայաստանի, Թիֆլիս, 1890, էջ 130:

[57] Ա. Մ. Կոյուբակին, նշվ. աշխ., էջ 452:

էին զբաղեցնում Կ. Պոլսում, ղեկավարում էին Թուրքիայի տնտեսական, քաղաքական, ռազմական և մշակութային մի շարք բնագավառներ: Ամիրաների զգալի մասը զբաղվում էր վաշխառությամբ (սեղանավորությամբ կամ սառաֆությրությամբ)՝ վարկավորելով փաշաներին, պաշտոնյաներին, վաճառականներին, անգամ սուլթաններին և այդ ճանապարհով դիզել էին մեծ հարստություն: XIX դ. առաջին կեսին սուլթանական կառավարության համաձայնությամբ ու հովանավորությամբ նրանք կազմում էին սեղանավորական մի «հսկա ընկերություն»՝ անատոլիական և ռումելիական մասնաճյուղերով: Առաջինն իր գործակալների միջոցով հավաքում էր Անատոլիայի, իսկ երկրորդը՝ Ռումելիայի պետական հարկերը, «այնպես որ, բովանդակ տերության հարկերը և տուրքերը կը ժողովվեին այդ ընկերության ձեռքով, որ շատ անգամ, ի հաշիվ տերության կանխավճարներ ընելով, այդ հարկերուն փոխարեն կը դյուրացներ անոր պինտճեին առ ձեռն հավասարակշռության, և ինքն ալ կը շահեր լիով՝ զորավ գիտնալով իր հաշիվը...»[58]:

Սակայն Արևելյան կամ Ղրիմի պատերազմից հետո, երբ Թուրքիայում հաստատվում են արտասահմանյան բանկերը և ֆինանսավորում են սուլթանական պետությանն ու առևտրաարդյունագործական ընկերություններին, հայ սեղանավորների տնտեսական նշանակությունն ընկնում է: Բայց արևմտահայ վաշխառուական բուժուազիան պահպանվում է՝ գործելով գերազանցապես ազգային միջավայրում՝ ինքնուրույն կամ թուրքական շահագործող վերնախավի հետ միասին:

XIX դ. վերջին տասնամյակներին վաշխառությունը Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում, մասնավորապես Տարոնում ու Վասպուրականում, հայտնի էր արաբական սելեֆ, սալաֆ կամ սըլըֆ անուններով, որ նշանակում է կանխավճար: Նրա ամենատարածված ձևը դրամը կարիքավոր գյուղացիներին տոկոսով տալն էր: Կառավարությունը թեպետ 1887 թ. պաշտոնապես սահմանել էր տոկոսի չափը՝ տարեկան 100-ին 9 տոկոս, բայց ոչ մի տեղ այդ օրենքը չէր կիրառվում: Դրամատերը սովորաբար վերցնում էր 100-ին 30, 50, 80 և շատ ավելի տոկոս:

Ժամանակի պարբերականները որոշակի տեղեկություններ

[58] «Մասնակի պատմություն հայ մեծատուներու 1400-են 1900, գրեց Յ. Գ. Մ., Կ. Պոլիս, 1909, էջ 130:

էին հաղորդում այդ մասին: Մարզպետը գրում էր, որ կարիքավոր գյուղացին ձմռանը հարուստից պարտք է վերցնում, օրինակ, 20 ղուրուշ, պարտավորվելով, որ 6 ամիս հետո կտա մի գառ, որն արժեր 40 ղուրուշ (այսինքն՝ 400 %): Իսկ եթե հարուստից վերցնում էր ասենք 50 ղուրուշ, աշնանը պարտավոր էր տալ նրան 8 կոտ ցորեն, որն արժեր 80 ղուրուշ (այսինքն՝ 320%)[59]: Նույն հեղինակը նշում էր, որ Վանի ու Բիթլիսի վիլայեթներում գյուղացին վճարում է վաշխառուին «100-ին 200 կամ ավելի բարձր տոկոս»[60]:

Պ. Տ. Պետրոսյանը էդեսիայից գրում էր. «Հարյուրին 30-40 տոկոսը սովորական ըլլալով նույնիսկ հարյուրեն հարյուր ալ հասարակ ըլլալու աստիճանի հասած է»[61]:

Հաճախ դրամատերերը ձմռանը կամ գարնանը իրենց տված փողի դիմաց աշնանը գյուղացիներից վերցնում էին գյուղատնտեսական մթերքներ: Եթե պայմանավորված ժամկետում գյուղացիները չէին կարողանում վերադարձնել պարտքը, վաշխառուները հետաձգում էին հաջորդ տարի, իհարկե, նոր տոկոսներով: Արդյունքում, գյուղացիների պարտքերը հասնում էին ահավոր չափերի: Վասպուրականում 4 տարվա ընթացքում 8 մեջիդը դարձել էր 216 մեջիդ, 480՝ ղուրուշը՝ 12.960 ղուրուշ, իսկ 8 չափ ցորենը 216 չափ[62]:

Հաճախ վաշխառուները պարտք էին տալիս սերմացու՝ պայմանով, որ գյուղացիները ցանեին իրենց արտերը և բերքը հավասարապես կիսեին: Դրամատերերն, իրենց հասանելիք կեսը վերցնելով, հեռանում էին, բայց գյուղացիները իրենց բաժին կեսից վճարում էին ամբողջ բերքի տասանորդը: Եվ քանի որ գյուղացիներն այդ կեսից վճարում էին նաև պետական այլ տուրքեր, ուստի հաճախ տուն էին վերադառնում ձեռնունայն: «Մշակը» գրում էր, որ Ալջավազում «երկու գյուղացի տեսա, որոնցմե մեկը 140 չափ[63] ցորեն հանեց, բայց ոչինչ չտարավ տուն (պարտքերը հազիվ գոցեց), իսկ մեկն ալ իրեն ոչինչ բաժին

[59] Տե՛ս «Ազատամարտ» , 1909, նոյեմբերի 18, կամ թիվ 136:

[60] Նույն տեղում:

[61] «Բյուզանդիոն», 1910, դեկտեմբերի 15:

[62] Տե՛ս Մալխաս, Ներկա սովը և իր պատճառները, Տրապիզոն, 1909 թ., էջ 83:

[63] 1 չափը = 1 փթի.:

չմնալե հետո, 10-12 չափ դեռ պարտքի տակ մնաց»[64]:

Մի այլ դեպքում դրամատերերը գյուղացիներին տալիս էին թե՛ սերմացու, թե՛ եզներ (կամ փող՝ դրանք գնելու համար) և թե՛ գյուղատնտեսական գործիքներ, պայմանով, որ ինքը ստանա բերքի մեծ մասը՝ 2/3-ը, 3/4-ը: Այդ գործարքը համարվում էր կամավոր և կնքվում էր մեկ կամ երկու տարով: Ժամկետը լրանալուց հետո կողմերն իրավունք ունեին հեռանալ միմյանցից: Եթե գործարքը լուծարելուց հետո դրամատերերը սովորաբար որևէ կախում չէին ունենում հակառակ կողմից, ապա գյուղացիները հաճախ ընկնում էին ծանր պարտքերի տակ և երկար տարիներ կախման մեջ էին լինում վաշխառուներից:

Երբեմն վաշխառուները չնչին գումարով դեռ գարնանը գնում էին գյուղացիների ցանքատարածության ողջ բերքը: Եթե բերքատվությունը լինում էր մեկին հինգ, ապա դրամատերերը կստանային իրենց տվածի կրկնապատիկը, եթե լինում էր յոթ՝ ապա քառապատիկն ու ութնապատիկը: Այս դեպքում վաշխառուական տոկոսը միայն հինգ ամսվա ընթացքում կազմում էր 320[65]:

Վաշխառուական գործարքը կատարվում էր նաև անասունների, գերազանցապես ոչխարների ու գառների վրա: Դրամատերերը գարնանը վարկավորում էին գյուղացիներին, որ աշնանն իրենց փողի դիմաց ստանան պայմանավորված քանակով ոչխար կամ գառ, ընդ որում, հաշվի չէր առնվում այն հանգամանքը, որ ամբողջ 5-6 ամիս գյուղացիները պահում ու խնամում էին այդ անասունները: Հաճախ դրամատերերը աշնանը չէին վերցնում գառները,դրանք մնում էին գյուղացիների մոտ և հաջորդ տարի արդեն որպես ոչխար տալիս էին վաշխառուին. սա կրկնակի թանկ էր արժենում գյուղացուն: Պատահում էր, որ գյուղացիները չէին կարողանում վճարել պայմանավորված քանակով գառները, այդ ժամանակ դրանց թիվը բազմապատկվում էր: «Վտակ»-ը գրում էր, որ Խնուսում «մինչև 30-40 գառ պարտք ունեցողներ շատ կան մեկ մեճիդի փոխարեն»[66]:

Վաշխառուական գործարքը կատարվում էր նաև հողի վրա, այսինքն՝ դրամատերերը փող էին տալիս գյուղացիներին՝ չվերադարձնելու դեպքում նրանցից հողամասը ստանալու պայմանով: Այդ ձևով նրանք զավթում էին հողագործների թանկարժեք արտերը: Մի հաղորդման մեջ ասվում էր, որ վաշխառուները «չնչին գումարի փոխարեն արտերը գրավ կառնեն և հետո կը յուրացնեն»[67]:

Շատ դեպքերում, երբ վաշխառուները գյուղացիների ամբողջ ունեցվածքը տոկոսի և պարտքի դիմաց բռնագրավում էին և դեռ գյուղացիներն էլի պարտք էին մնում. ստիպում էին նրանց մնացածը վճարել աշխատանքով: Եվ գյուղացիները հարկադրված աշխատում էին այդպես տարիներով: Այդպես դրամատերերը գյուղացիներին զգում էին համարյա ճորտական կախվածության մեջ: Եվ դա «ոչ թե մասնավոր, այլ զանգվածային երևույթ էր»[68]:

XIX դ. վերջին վաշխառությունը զարգանալով՝ Արևմտյան Հայաստանում հասել էր մեծ չափերի և ընդգրկել էր գյուղական վայրերը: Վաշխառուները տեղական պաշտոնյաները, աղաները, դրամատերերը, քաղաքի ու գյուղի հարուստներն էին: Ինչ վերաբերում է վաշխառուների ազգությանը և դավանանքին, ապա սխալ է տարածված այն կարծիքը, թե «Թուրքիայում մահմեդականները վաշխառությամբ չէին զբաղվում, քանի որ նրանք ըստ ղուրանի այդ իրավունքը չունեին, այդ գործով գրեթե բացառապես քրիստոնյաներն էին զբաղվում»[69]: Ղուրանն, իրոք, արգելում էր մահմեդականներին տոկոս (ֆաիզ) վերցնել: Բայց այդ անառարկելի ուսմունքը նախ ոտնահարվել էր մահմեդական հարստահարողների կողմից, երկրորդը՝ մերժվել էր նաև թուրքական կառավարության կողմից, որը տոկոսը պաշտոնապես փոխարինել էր «հյուրասիրություն» հասկացությամբ՝ իքրամով և նույնիսկ սահմանել էր դրա չափը: Իշխանությունների սահմանումով պարտատերերը տոկոսի փոխարեն կարող էին պահանջել «հյուրասիրություն», որը կարող էր արտահայտվել դրամով կամ բնավճարով: «Բյուզանդիոն»-ը գրում էր. «ըստ Շերիի օրինաց՝ ֆաիզ առնելը հարամ էր, այսինքն՝ արգելվում է, ուստի անոր անունը փոխած է իքրամի, իսկ իքրամը եթե 90 իսկ ըլլա, հարամ չէ»[70]:

[64] «Մշակ», 1907, թիվ 138:

[65] Տե՛ս Մալխաս, նշվ. աշխ., էջ 80:

[66] «Վտակ», 1908, թիվ 44:

[67] «Դրոշակ», 1901, թիվ 1, էջ 25:

[68] ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 2000, գ. 6970, թ.1:

[69] Л. Вакс. Очерки истории национально-буржуазных революций на Востоке (Персия, Турция, Китай) 1905-1914.- М., 1931.- էջ 39:

[70] «Բյուզանդիոն», 1912, թիվ 4871:

Օգտվելով սուլթանական կառավարության հայահալած քաղաքականությունից՝ թուրքական վաշխառուական բուրժուազիան, սկսած 1877-1878 թթ. դուրս էր մղում հայերին ասպարեզից կամ դարձնում էր նրանց իր գործակալները: Դարավերջին երկրի բազմաթիվ շրջաններում նա արդեն հասնում է գերիշխող դիրքերի: 1906 թ. «Երկրի ձայն»-ը գրում էր. «Այսօր Փոքր Ասիայի մեջ չկա մի գյուղ, ուր կարևոր դեր չխաղա... թուրքերուն դրամագլուխը, իսկ բազմաթիվ են այնպիսի գյուղեր, որոնք գրեթե ամբողջովին մաս կը կազմեն հարուստ թուրքերի դրամագլխին»[71]:

Բայց հայ վաշխառուները երկրի մի շարք շրջաններում դեռ պահպանում էին իրենց առաջնակարգ դերը և աշխատավոր բնակչությանը հարստահարելու գործում համարյա չէին զիջում իրենց դասակիցներին. «Վանի, Բալուի և Խարբերդի գավառներում մի քանի հարուստ հայեր ամբողջ գյուղական բնակչությանը պահում են ահավոր կապալում»[72]:

Վաշխառուական կապիտալը ինչպես ամենուր, այնպես էլ Արևմտյան Հայաստանում պայմաններ էր ստեղծում արտադրության կապիտալիստական եղանակի առաջացման ու զարգացման համար: Բայց Արևմտյան Հայաստանում այն գերազանցապես հետադիմական դեր էր կատարում, որովհետև նպաստում էր աղաների տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդմանը և, քայքայելով մանր գյուղացիներին, ստեղծում էր ավելի շուտ ավատատիրական, քան կապիտալիստական հարաբերություններ: Դա պայմանավորված էր և՛ ապրանքային արտադրության թույլ զարգացումով, և՛ սուլթանական կառավարության հայահալած քաղաքականությամբ և թե՛ նրանով, որ մեծահարուստ վաշխառուները համարյա բացառապես ավատատիրական վերնախավը կազմող և այդ վերնախավի պահպանությամբ շահագրգռված աղաներն էին: Գործելով առավելապես շրջանառության ոլորտում՝ վաշխառուական կապիտալն Արևմտյան Հայաստանում դեռ բավականաչափ չէր թափանցել արտադրության ոլորտ և, անփոփոխ թողնելով գոյություն ունեցող միջնադարյան հարաբերությունները, ավելի էր վատ-

[71] «Երկրի ձայն», 1906, թիվ 8, էջ 14:

[72] Ф. Грязнов. Военный обзор передового театра в Азиатской Турции.-СПб, 1897.- Ч. II.- էջ 77:

թարացնում աշխատավորների դրությունը: Կ. Մարքսը նշում էր, որ վաշխառուական կապիտալը երբ յուրացնում է «անմիջական արտադրողի ամբողջ հավելյալ աշխատանքը՝ առանց փոխելու արտադրության եղանակը..., թշվառացնում է արտադրության այս տվյալ եղանակը, ջլատում է արտադրողական ուժերը՝ սրանք զարգացնելու փոխարեն և միաժամանակ հավերժացնում է այս ոլորտների վիճակը[73]»:

Առևտրա-վաշխառուական կապիտալն Արևմտյան Հայաստանում տակավին ուժեղ էր, քան արդյունաբերական կապիտալը: Այն դեռևս խոչընդոտում էր կապիտալիստական հարաբերությունների առաջացմանն ու ծավալմանը:

[73] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, մաս II, Երևան, 1949, էջ 138:

Գլուխ Վեցերորդ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՂԱԿՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

Արտադրության կապիտալիստական եղանակը, հանրահայտ է, որ ձևավորվում է այն ժամանակ, երբ ապրանք է դառնում ոչ միայն մարդու աշխատանքի արդյունքը, այլ նաև նրա աշխատուժը: Դա հետևանք է պատմական երկար գործընթացների:

Հայաստանում ունևորների կողմից վարձու աշխատանքի օգտագործումը եղել է դեռևս հին ու միջին դարերում, սակայն դա եղել է փոքր չափերով և տնտեսության մեջ ունեցել է երկրորդական նշանակություն: Սակայն XIX դ. երկրորդ կեսին ու XX դ. սկզբին այդ աշխատանքն ավելի հաճախ էր կիրառվում և նոր բնույթ էր ստանում: Երկրի տարբեր շրջաններում և տնտեսության տարբեր ճյուղերում հարուստները բանեցնում էին ընչազուրկներին կամ չքավորներին՝ աշխատավարձի տարբեր ձևերով վճարելով նրանց:

Ցավոք, մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն տալիս լուսաբանելու մեզ հետաքրքրող բոլոր հարցերը, բայց որոշ լույս են սփռում դրանց վրա: Ահա այդ նյութերը: Բուլանըխում, ըստ Բենսեի վկայության, մշակը ծմռանը ստանում էր 30-40 դուրուշ (2 ռուբ. 58 կոպ. կամ 3 ռուբ. 44 կոպ.), շապիկ ու վարտիք, որոնք արժեին 1 ռուբ. և 1 ռուբ. 97 կոպ.: Իսկ ամռանը՝ 10-12 բուլանըխի քիլե ցորեն: Տերը մշակի համար ցանում էր նաև 5-6 արքունի կոտ ցորեն, որից ստացվում էր 30 կոտ: Նա տալիս էր մշակին մի զույգ գուլպա, գլխի փաթաթոց ու կապա: Ծառայության ժամկետը տևում էր գարնան սկզբից մինչև նախարբող: Այն մշակը, որի ծառայությունը սկսվում էր քաղոցից և ավարտվում աշնանը կամ կալուկուտին, կոչվում էր բնասարու[1]:

Ընչազուրկ գյուղացիները վարձվում էին կալվածատերերի ու հարուստ գյուղացիների կողմից: 1912 թ. Բ. Քեչյանը գրում էր, որ Թուրքիայի հայաբնակ գավառներում քուրդ աղաների «գլխավոր մշակներն ու մարաբաներն ալ հայերն են»[2]: Իսկ Գ. Սուրմենյանը գրում էր, որ Երզնկայի գավառի Մեզուրդիկ գյուղի հայերը

[1] Բենսե, Բուլանըխ կամ Հարքի գավառ, էջ 66:

[2] Բյուզանդիոն, 1912, թիվ 4917:

«իրենց մոտ առհասարակ քյուրտ ծառաներ ու մշակներ ունեին»[3]:

Ունեզուրկ գյուղացիները սովորաբար վարձվում էին իրենց գյուղի կամ շրջակայքի հարուստների մոտ: Նրանք վաստակելու էին մեկնում նաև հեռավոր վայրեր: 1910 թ. «Ազատամարտի» թղթակիցը գրում էր, որ Մոկսի «գյուղացիներու մեկ մասը կերթա հարավային գավառները - Պղերի, Պոհտան, Դիարբեքիր - ուրկե գարնան դեմ կվերադառնան կրկին»[4]:

Տերերը դաժանորեն շահագործում էին մշակներին: 1913 թ. մի ճանապարհորդ, որին ուղեկցում էր տիրոջ մշակը, հարցնում է, թե ինչո՞ւ այսօր չեն աշխատում, մշակը պատասխանում է, որովհետև, այդ օրը վարդավառ է: Ճանապարհորդի մյուս հարցին, թե միթե նրանք առհասարակ կիրակի օրերին աշխատում են, մշակը պատասխանում է.

-Այո՛, պարոն, միշտ աշխատում ենք:

-Աղա՞ն է ստիպում այդ բանին:

-Ո՛չ, աղան չէ ստիպում, բայց էլի բարին արտը գնալն է, որովհետև եթե տանը մնանք, նա այնքան կբանեցնի մեզ իր տնային գործերում, որ կիրակին հարամ կլինի գլխներիս»[5]:

Մշակների վարձն անկայուն է և բարձրավել կամ իջեցվել է հանգամանքների բերումով: 1912 թ. «Վանա տոսպը» գրում էր. Հնձողներու օրավարձը 10-12,5 դուրուշ է, քանի մը տարի եղած օրավարձերու կրկնակին ու եռապատիկն է[6]:

Մշակների աշխատավարձը բարձրանում էր այն ժամանակ, երբ տերերը բանող ձեռքերի կարիք էին զգում: 1910 թ. հունիսի 7-ին «Մշակը» գրում էր, որ Վասպուրականի գյուղերում «զգացվում է հնձվոր մշակների պակասություն, ուստի օրավարձերը սկզբին անսովոր բարձրության հասան, օրական մինչև 10 դահեկան (80 կոպեկ), բայց քաղաքապետությունը 7 դահեկան սոսկ որոշեց և այժմ այդ գնով բանում են»[7]: Այդ փաստը ցույց է տալիս, որ իշխանությունները պաշտպանում էին տերերի շահերը:

[3] Գ. Սուրմենյան, Երզնկա, Գահիրե, 1947, էջ 84:

[4] Ազատամարտ, 1910, մարտի 6, թիվ 226:

[5] Հորիզոն, 1913, սեպտեմբերի 20, թիվ 210:

[6] Վան տոսպ, 1912, թիվ 17, էջ 309:

[7] Մշակ, 1910, թիվ156:

Մշակների աշխատավարձն իջնում էր այն ժամանակ, եթե հունձքի տերերը կիրառում էին մեքենաներ: 1910 թ. «Հորիզոնը» հաղորդում էր, որ «մեքենաների գալը ազդեց հունձք արող բանվորների օրավարձի վրա, որոնք ամեն ծախսով 15 ղուրուշ օրավարձ կպահանջեին, բայց 12 ղուրուշ իջավ»[8]:

Տիգրանակերտի Հազրո դաշտում տերերը յուրաքանչյուր մշակին տալիս էին տարեկան 5 քիլե ցորեն. 2,5-ը՝ ամռանը, և 2,5-ը՝ ձմռանը: Այստեղ մշակները կոչվում էին ռենչպերներ:

Տարբեր տեղերում մշակները կատարում էին տարբեր բնույթի աշխատանքներ, որոշ տեղերում նրանք կատարում էին միայն մեկ, իսկ այլ տեղերում՝ բազմազան աշխատանքներ: Ա. Քեչյանը գրում էր, որ Խարբերդի վիլայեթի Ակնա գավառի գյուղերում բնակիչներից ոմանք իրենց պարտեզները կարգավորելու համար վարձում էին մշակներ, որոնք փորում էին նրանց այգիները, նորոգում էին փուլ եկած պատերը, հավաքում էին չորացած ցախերը, բացում էին ածուները և այլն: Ա. Քեչյանն ապա շարունակում էր, որ մշակների մեծ մասը հայեր էին; որոնք գալիս էին Խարաչոլի կողմերից: Նրանց մեջ կային նաև փոքրաթիվ քրդեր: Բոլոր բնույթի աշխատանքների համար և՛ հայերին, և՛ քրդերին տրվում էր հավասար աշխատավարձ: Փայտ կտրողները և ածուներ փորողները օրական ստանում էին 4 ղուրուշ, աղբ կրողները 5 ղուրուշ և այլն: Նրանք բոլորը գիշերները պառկում էին ախոռներում, անվճար սնվում էին վարձողների հաշվին[9]: Երբ մշակները հեռանում էին, նրանց կիսատ թողած գործերը շարունակում էին տերերը իրենց ընտանիքների անդամների հետ:

1967 թ. մարտի 29-ին մեկնեցի Լենինականի շրջակայքի գյուղերը, որոնց բնակիչները ներգաղթել են Վասպուրականից, Մուշի դաշտից և Էրզրումի շրջակայքից: Նպատակը մեկն էր՝ նյութեր հավաքել տարեց ու ծեր մարդկանցից XIX դ. վերջի ու XX դ. սկզբի արևմտահայ գյուղացիության սոցիալ-տնտեսական կյանքի մասին: Եղա Ախուրյան գյուղում, զրուցեցի Աբրահամ Զաքարի Այվազյանի հետ: Նա պատմեց, որ ինքը 77 տարեկան է, իր հարազատների միասին Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին բնակվել են Բուլանխի Շեյխյաղուբ գյուղում:

[8] Հորիզոն, 1910, օգոստոսի 3, թիվ 168:

[9] Ա. Քեչյան, Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952, էջ 378:

Իրենց ընտանիքը բաղկացած է եղել 8 հոգուց՝ հայրը, մայրը, երեք եղբայրները, հորեղբայրը, նրա կինը և որդին: Իրենք ունեին շատ հող, ունեին նաև 4 գոմեշ, 4 եզ, 2 կով և 80 ոչխար: Սեփական ուժերով չէին կարողանում տնտեսությունը վարել, ուստի վարձում էին մեկ մշակ գարնանից՝ մարտից և պահում մինչև օգոստոս: Եթե նա ուզեր, կարող էր մնալ նաև օգոստոսից հետո էլ, նույնիսկ ամբողջ տարին: Մարտից մինչև օգոստոս աշխատելու համար մշակին տալիս էին 90 կոտ ցորեն, ուտելիք, հագնելիք և այլն: Այդ ամենը տալիս էին նաև նրա ընտանիքի անդամներին: Մշակը տիրոջ հետ միասին վարում ու ցանում էր նրա արտերը, հնձում էր խոտն ու հացահատիկը, տուն էր բերում բերքը, ջրաղաց էր տանում աղունը, տուն էր բերում ալյուրը և այլն: Հաճախ էր պատահում, որ տերը վարձում էր նաև այլ մշակներ, եթե աշխատանքները շատ էին լինում վեր՝ մեկ մարդու ուժերից: Մշակն ամբողջ ժամանակ մնում էր, տիրոջ տանը: Ցորենն իրենք վաճառում էին Բիթլիսում փողով կամ փոխանակում էին մթերքներով: Մշակին՝ իբրև վարձատրություն, տալիս էին ոչ թե փող, այլ գյուղատնտեսական մթերքներ: Աբրահամն ասաց, որ իրենց գյուղն ազատ է եղել աղայական կախումից: Այս գյուղում չեն եղել ֆեդայիներ: Աղայից կախյալ չլինելը հնարավորություն է տվել շեյխյաղուբցիներին ապրել համեմատաբար բարեկեցիկ կյանքով:

Ապա զրուցեցի նույն գյուղի բնակիչ Շիրազ Մելիքյանի հետ, որը ծնվել էր 1884 թ. Խնուսի գավառի Բուռնազ գյուղում: Իրենց ընտանիքը բաղկացած է եղել 35 հոգուց, որից աշխատողներ են եղել 20-ը: Նրանց ամեն մի անձն ունեցել է 1 շրիտ հող (1 հեկտարից ավելի): Այդ նահապետական գերդաստանն ունեցել է 6 լուծ, 1 գոմեշ, 15 եզ, 10-12 կով, 4 ձի և 200 ոչխար: Գերդաստանը սովորաբար վարձում էր 2 մշակ, որոնցից յուրաքանչյուրին տարեկան վճարում էին է 2-3 սոմար ցորեն, տալիս էին 2 ձեռք հագուստ, կերակրում էին իրենց հավասար: Մշակները պարտավոր էին ձմռանը խնամել անասուններին, գարնանը ցանել արտերը, ամռանը հնձել, աշնանը հավաքել ու տուն բերել բերքը:

Շիրազ Մելիքյանը նշեց, որ իրենց Բուռնազ գյուղն ուներ 77 տնտեսություն: Չքավորներ քիչ են եղել: Գյուղում մինչև 90-ական թվականների ջարդերը աղա չի եղել: Աղքատ գյուղացիները, այսպես կոչված, «հրավիրել էին» աղային՝ նրա մոտ աշխատելու համար: Աղան մնացել է 4-5 տարի: Գյուղի բնակիչները չեն հան-

դուրժել և վռնդել են նրան: Գյուղացիները թույլ չեն տվել, որ աղան հող գնի ու ամրանա իրենց գյուղում: Բուռնազում եղած տարիներին աղան ցանում էր չքավորների հողերը կիսովի: Այդպիսով, բուռնազցիներն իրենց ըմբոստության շնորհիվ կարողացել են պահել իրենց ազատությունն ու անկախությունը, որը համարյա բացառիկ երևույթ էր Թուրքիայի դաժան պայմաններում: Նրանք 1912 թ. Բուռնազից գաղթել են Արևելյան Հայաստան և հաստատվել Ախուրյանում:

Արևմտյան Հայաստանի գյուղերում վարձու աշխատանքի օգտագործման մասին մեր ձեռքի տակ կան նաև այլ նյութեր: Ավելորդ չենք համարում բերել նաև դրանք: Անգլիական դիվանագիտական ծառայող Վ. Բ. Հերդը 1907 թ. նոյեմբերի 23-ին գրում էր, որ Բիթլիսի վիլայեթի Ախլաթ գավառակի 6 գյուղում կա 575 տնտեսություն, որից 36-ը մի կերպ է ապրում անկախ, 226-ը մարաբաներ են, իսկ մյուս 313-ը քարշ է տալիս իր գոյությունը վարձու աշխատանքով քրդերի ու չերքեզների մոտ»[10]: 1890-ական թվականների կոտորածների ժամանակ որոշ քուրդ աղաներ ողջ էին թողնում այնքան հայ, որքան պետք էր իրենց աշխատանքները կատարելու համար: Այդպես էր վարվել, էմին փաշան Աստաֆում, ուր 590 հայ ընտանիքներից նա սրի էր քաշել 239-ին, թողել էր 351-ին, որոնք աշխատում էին նրա մոտ օրավարձով[11]: Ախլաթ կազայի 6 գյուղում 1902 թ. կար 725 ընտանիք, 1907 թ. մնացել էր 575 ընտանիք, որոնցից միայն 35-ն ունեին սեփական տնտեսություն, 226-ը մարաբաներ էին, իսկ մյուս 312-ը ապրում էին օրավարձով[12]:

Հարություն քահանա Սարգսյանը գրում էր, որ Բալույում քաղոցին անգամ նրանք, որ երկրագործ չէին, «վարձով հնձելու կերթային բանվորի պետք ունեցողներուն»[13]:

1904 թ. Տոմիլովը արձանագրում էր, որ Դիարբեքիրի ու Բիթլիսի վիլայեթներից շուրջ 2000 հոգի մշտապես մեկնում են դեպի Դիարբեքիր, որ զբաղվեն «առ ու վաճառքով և օրավարձով»[14]:

[10] Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 412, g.1, գ.1979, թ.13-14:

[11] Տե՛ս Ռ. Ի. Տերմեն, նշվ. աշխ., էջ 58:

[12] Սարգսյան Հարություն, Բալու, Գահիրե, 1932, էջ 89:

[13] Նույն տեղում:

[14] Տոմիլով, նշվ. աշխ., էջ 256:

Տարագրությունն ու պանդխտությունը թափանցել էին նաև Արաբկիրի գյուղերը: Ս. Ա. Բախտիկյանը գրում էր, որ պանդխտությունը վաղուց էր սկիզբ առել Արաբկիրի գյուղերում և դարձել էր բնակչության ապրուստի միակ աղբյուրը: Ղարիբության էին գնում «ընդհանրապես երիտասարդները՝ տունը թողնելով խեղճ հարսներին ու մայրերին, բոկոտն ու մերկ փոքրիկներին»[15]: Կային գյուղեր, որոնք դեռևս հեռու էին մնացել տարագնացությունից: Բայց դրանք էլ վերջին կոտորածներից հետո ներքաշվել էին այդ ընդհանուր ցավի մեջ: Այդ գյուղերից մեկը Ամարկոնն էր. երբ թալանն ու չքավորությունը ցույց տվեցին իրենց դաժան դեմքը, ամարկոնցիները ևս բռնեցին արտագնացության ճամփան:

Տնտեսապես քայքայված գյուղացիները վաստակելու էին գնում նաև Հայաստանի սահմաններից դուրս: Նրանք գնում էին Կիլիկիա, վարձվում Ադանայի բամբակի պլանտացիաներում. աշխատում էին սեզոնով և աշնանը հետ վերադառնում: Գարնանն ու ամռանը նորից էին գնում և ամեն անգամ գնալիս իրենց հետ տանում էին նոր մարդիկ: Դրա հետևանքով տարեցտարի մեծանում էր գյուղատնտեսական արտագնացների թիվը: 80-ական թվականներին Ադանայի կուսակալությունում և նրա հարակից շրջաններում տարեկան աշխատում էր մոտ 100.000 սեզոնային բատրակ[16], որոնց զգալի մասը հայեր էին: Բացի Կիլիկիայից, արևմտահայ տարագիրները մեկնում էին նաև Կ.Պոլիս, Միջագետք, Կենտրոնական Անատոլիայի հարթավայրային շրջանները, սևծովյան ափերը:

Հայ գյուղացիների տարագնացության մասին դեպի Կիլիկիա հաղորդում էր նաև Գ. Երևանյանը: Նա գրում էր, որ Խարբերդի վիլայեթում և այլ շրջաններում այն գյուղացիները, ովքեր գործազուրկ էին, տեղում չէին գտնում աշխատանք, մեկնում էին այլ շրջաններ, առավելապես Կիլիկիա, ուր երկրագործությունը աշխատուժի մեծ կարիք ուներ[17]: Ապա նույն հեղինակը շարունակում էր. «Չարսաճագի շրջանեն բավական մշակներ սիլայի (պանդխտության) կերթային Ադանա», որը նշանավոր էր իր ընդարձակ երկրագործությամբ և որտեղ ամեն տարի «շրջակա

[15] Արաբկիրը և շրջակայքի գյուղերը, պատմաազատագրական համառոտ տեսություն, պատրաստեց Ս. Ա. Բախտիկյան, Պեյրութ, 1934, էջ 117:

[16] Տե՛ս Ս. Г. Инджикян. Буржуазия османской империи.- Ереван, 1977.- էջ 134:

[17] Տե՛ս Գ. Երևանյան, նշվ. աշխ., էջ 187:

նահանգներեն հազարավոր մշակներ հոն կերթային իրենց աշխատանքով դրամ շահելու համար»[18]:

Արևմտյան Հայաստանի աղաները շահագործում էին գերազանցապես իրենց կախյալ ու ճորտ գյուղացիներին: Բայց նրանցից ոմանք օգտագործում էին նաև վարձու աշխատանքը: Հայկական թերթերից մեկի հաղորդմամբ՝ Խիզանի հայտնի շեյխ Զալալեդդինը տարեկան վարձում էր 30 մշակ[19]: Քրդերից ոմանք շահագործում էին հայ ընչազուրկ գյուղացիներին նաև Սասունում: Բիթլիսում Ռուսաստանի հյուպատոս Վ. Շիրկովը 1906 թ. մայիսի 25-ին գրում էր, որ աղքատացած սասունցիների մի մասն աշխատում է բալաքցի քրդերի մոտ՝ «կատարելով ծանր աշխատանքներ մի կտոր հացի համար»[20]: Ցավոք, Շիրկովը չի նշում, թե սոցիալական դրությամբ ովքեր էին այդ քրդերը՝ աղաներ, թե սովորական հարուստներ: Համենայնդեպս, նրանք այնքան հարուստ են եղել, որ կարողանում էին վարձել հայ ընչազուրկներին: Իմ հավաքած նյութերը հնարավորություն տվեցին խոսելու նաև հոտաղների մասին: Նախ նշենք, որ Արևմտյան Հայաստանի գյուղում հոտաղ են եղել նաև տարեց մարդիկ: Ախուրյանում եղած օրերին ես զրուցեցի 70-ամյա Սեդրակ Մարգարի Հեբոյանի հետ: Նա պատմեց, որ իրենց ընտանիքը գաղթել է Մշո Վարդենիս գյուղից 1915 թ.: Վարդենիսում ապրած տարիներին նա հայ ընտանիքներից մեկի մոտ հոտաղ է եղել: Այդ գյուղացին ունեցել է 4 գոմեշ, 4 եզ, 4 մատակ, 2 կով և 80 ոչխար: Աշխատանքները սկսվում էին մարտից և ավարտվում դեկտեմբերին: Այդ ամբողջ ժամանակաշրջանում մշակը պարտավոր էր աշխատել տիրոջ տնտեսությունում՝ ստանալով 3 սոմար ցորեն ու գարի (1 սոմարը հավասար էր 16 փթի), հագուստ և ուտում էր այն, ինչ՝ տիրոջ ընտանիքի անդամները: Մշակը պարտավոր էր նաև փոցխ անել և մասնակցել կալին: Դրա էությունն այն էր, որ կալոցին կովերից մեկին կանգնեցնում էին կալի մեջտեղում՝ օրանի վրա, և բոլոր անասուններին պտտեցնում էին նրա շուրջն այնքան ժամանակ, մինչև որ հարդը բաժանվում էր հատիկներից: Այդ ամբողջ ժամանակամիջոցում

[18] Նույն տեղում, էջ 390:

[19] ՈԱԲԱ, ֆոնդ Քաղարխիվ, գ. 482, գ. 540, թ.118:

[20] Տե՛ս «Մշակ», 1883, օգոստոսի 25:

կապում էին անասունների բերանները, որ նրանք չուտեին օրանը: Այդ տերը գարնանը, ամռանը և աշնանը վարձում էր միայն մեկ հոտաղ, որին տալիս էր 1 ոսկի, ուտելիք ու հագնելիք: Իսկ ձմռանն ու գարնանը վարձում էր մեկ մշակ, որին աշխատեցնում էր 5-6 ամիս և վճարում 1 ոսկի, ուտելիք ու հագնելիք: Ամառվա ամիսներին տերը բացի հոտաղից վարձում էր նաև մշակ կամ ևս մեկ հոտաղ, որին օրական տալիս էր 1 կոտ ցորեն: Նա հարկադրված էր ավելացնել մշակների թիվը, որովհետև ընտանիքը փոքրաթիվ է եղել՝ ինքն էր, կինը և փոքրահասակ երեխաները:

Բայց Արևմտյան Հայաստանում տարեց հոտաղներ քիչ էին լինում: Նրանց ճնշող մեծամասնությունը պատանիներ էին: Հոտաղների կյանքի մասին հետաքրքիր պատմվածքներ է գրել Գեղամ Տեր-Կարապետյանը: Բերենք նրա պատմվածքներից մի քանիսի հակիրճ բովանդակությունը: Իր «Փոքր մշակը» պատմվածքում, որ Տեր-Կարապետյանը գրել է 1902 թ., գրում էր, որ Լ. գյուղի հարուստ Մխոն գարնանացան էր ուզում սկսել, բայց հոտաղ չէր գտնում, որովհետև անցյալում հոտաղներին չէր վարձատրել, և նրանք հրաժարվում էին աշխատել Մխոյի մոտ: «Գեղջուկ պզտիկները, - գրում է Գեղամը, - երդում պատառում ըրեր էին էլ հոտաղ չերթալ թարախ ու գռեխ ուտող Մխոյին, որ ամեն տեղ՝ մատղաշ-մատղաշ հոտաղները կը զրկեր իրենց արուն-քրտինք վաստակեն: Անոնց դատումը հուր ու հարամ կըներ»[21]:

Երկար փնտրելուց հետո Մխոն վերջապես գտնում է մի անտեր ու անփորձ պատանի, որի անունը Ըռքո էր: Մխոն տուն է տանում նրան, կերակրում և ուղարկում է դաշտ՝ առանց պայմանագիր կնքելու: Պատանին այդ մասին գաղափար անգամ չի ունեցել: Մխոն Ըռքոյին չարաչար աշխատեցնում է: Պատանին որոշում է վարձն առնել ու փախչել: Դիմում է Մխոյին, որ վճարի իր վարձը: Իսկ նա պատասխանում է. «Տո նեխուկ քոթոթ... քի պես շներ ես տարին տասը հատ փորմշակ կը պահեմ, անոթի չսատկեցար քիչ չէ, վա՞ղբ էլ կուզես[22]: Ըռքոն շատ լացեց, դես ընկավ, դեն ընկավ, օգնող չեղավ: Վերջը Մխոն ասաց. «Եթե մինչև գարնանամուտին ծառայես, մի բան կտամ»:

[21] Գեղամ Տեր-Կարապետյան, Տարոնի աշխարհ, Փարիզ, 1931, էջ 35:

[22] Նույն տեղում, էջ 39:

Գեղամ Տեր Կարապետյանը գրում էր, որ Մխոն, ընդհանրապես, իր հոտաղներին հալածում էր. որին ոչինչ չէր տվել, որին խոստացածի կեսն էր տվել, որին էլ ամիսներով բանեցնելուց հետո «տփելով՝ քշա» էր արել: Ու՞ր կմնար անտեր Ռոքոն, անլեզու և ամեն իրավունքե զրկված...»[23]: Գեղամ Տեր Կարապետյանը գրում էր, որ մշակներին ու հոտաղներին սովորաբար վերցնում էին չքավոր ընտանիքներից՝ գարնանամուտին, որ կոչվում էր գոլ, և արձակում էին ուշ աշնանը, այսինքն՝ հորթնթողի պահքին»[24]:

Հեղինակը թվարկում էր հոտաղի անելիքները, նշելով, որ նա պարտավոր էր գարնանը օգնել սերմնացաններին ու վարողներին, ամռանը՝ հնձվորներին ու օրանը տեղափոխողներին, աշնանը՝ բերքը հավաքողներին: Հոտաղը պարտավոր էր նստել լծին և քշել եզները այնպես, որ լծից ցած չընկնի, հակառակ դեպքում նրա վնասվելը կխանգարեր տիրոջ գործերին: «Քանի՛, քանի՛ հեղ, անփորձ հոտաղներ, - գրում է հեղինակը, - հորիկի լծան վրայեն գլորել են՝ գահավեժ տեղեր, և իրենց անկենդան, ջախջախված դիակները հանվեր են սելերու գունդերու ներքևեն»[25]: Հոտաղները պարտավոր էին վեր կենալ առավոտյան վաղ և տուն վերադառնալ երեկոյան ուշ:

Իր կատարած աշխատանքների դիմաց հոտաղն ստանում էր 3 շնիկ ցորեն (1 շնիկը հավասար էր 2 կոտի կամ 4 լիտրի), 3 շնիկ գարի, 3 շնիկ կլկիլ, շապիկ ու վարտիք: Այս բոլորը եթե դրամի վերածենք, ինն ամսվա վարձը կլինի 90, առավելագույնը՝ 120 ղուրուշ կամ ամիսը 10-12 ղուրուշ: Ուտելիք տալիս են փշրանքները, իսկ անկողինը՝ մազե մի քուրջ էր կամ քնում էին խոտի վրա: «Թեև տեղ-տեղ ալ կան, որ շատ աղեկ կը նայեն հոտաղին, իրենց զավակներուն հավասար խնամելով: Բարեսիրտները, ինչպես ցավալի է տեսնել, ամեն տեղ մեծամասնություն չեն կազմեր»[26]:

Երբ ժամկետը լրանում է, շարունակում է հեղինակը, Ռոքոն պահանջում է իր վարձը, բայց Մխոն զայրանում է, կատաղում է, վարձը չի տալիս, ասելով՝ «թե քեզ սովից փրկեցի, մահից ազատեցի, իսկ հիմա էլ վա՞ղ ես ուզում, ինձ հոտաղները կխնդրեն մի փոր հացի համար»: Ռոքոն թողնում է Մխոյի տունը, անիծում է իր բախտն ու հեռանում: Ապա որոշում է վերադառնալ գյուղ ու տերտերին ամեն ինչ պատմել: Տերտերը իբրև բարեխոսում է Մխոյի մոտ և Ռոքոյին նորից հանձնում է նրան: Մխոն շարունակում է շահագործել Ռոքոյին: Տարիներ են անցնում: Ռոքոն դառնում է 20-22 տարեկան. փոխվում է միայն այն, որ Ռոքոն հոտաղից դառնում է մշակ, բայց վարձ դարձյալ չի ստանում: Ու՞մ գանգատվեր. գյուղի հարուստներն ու ազդեցիկները Մխոյի բարեկամներն են: Ռոքոն որոշում է գանգատվել Աստծուն, խնդրել նրան, որ պատժի մեղավորին[27]: Բայց դա էլ է ապարդյուն անցնում: Եվ հարուստները քանի քանի հոտաղների էին դառը բանեցնելով, դատարկ վռնդել:

Եղել են դեպքեր, երբ մշակը կամ հոտաղը մշակությամբ վերականգնել է իր քայքայված տնտեսությունը: Գեղամ Տեր-Կարապետյանն իր պատմվածքներից մեկում գրում է, որ Մշո դաշտում ընչազուրկ մի գյուղացի ընտանիքով մշակ է դառնում իր քավորի մոտ և 7 տարի ծառայելուց հետո կարողանում է «շինել իրենց տնակ և ախոռ մը», ձեռք է բերում «քանի մը կով ու հորթ», դառնում է միջակ ապրուստի տեր: Մշակության ութերորդ տարում նախկին մշակը ավելի է բարելավում իր «ապրուստ ու կապուստը, ուներ 15 հատ ախոռի տավար, ապրուստը գոհացուցիչ էր»[28]: Բայց այդպիսի դեպքերը խիստ բացառիկ էին:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Արևմտյան Հայաստանում XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին ինչպես գյուղական բուրժուազիան, այնպես էլ պրոլետարիատը թույլ էին զարգացած: Նրանք նոր էին արմատավորվում և տակավին չունեին դասակարգային լիարժեք դիրք ու դիմագիծ: Մշակները մեկ-մեկ ցրված էին առանձին տնտեսություններում, մեծ թվով բանող մշակներն այդ տնտեսություններում սակավաթիվ էին: Մշակների ճնշող մեծամասնությունը բանում էր սեզոնով և ցրվում էր, հենց որ ավարտվում էին գյուղատնտեսական աշխատանքները: Երկրի տարբեր շրջաններում մշակները տարբեր աշխատավարձ էին ստանում և, բնականաբար, նրանց կենսամակարդակն էլ տարբեր էր: Ընդհանուր առմամբ, նրանց սոցիալական և

[23] Նույն տեղում:

[24] Նույն տեղում, էջ 40:

[25] Նույն տեղում, էջ 40-41:

[26] Նույն տեղում, էջ 41:

[27] Նույն տեղում, էջ 84-85:

[28] Նույն տեղում, էջ 98:

իրավական դրությունն անտանելի էր: Բազմաթիվ տեղերում մշակներն ապրում էին շատ ծանր պայմաններում. մի կտոր հացի համար հարկադրված էին տանել տերերի ամեն տեսակ բռնություններն ու նվաստացումները: Հարուստները վճարում էին մշակներին առավելապես բնավճարով, որը սովորաբար չէր նպաստում ապրանքա-դրամային հարաբերությունների զարգացմանը: Արևմտահայ գյուղում աշխատուժի վաճառքի ներքին շուկան փոքր էր: Լինելով աշխատուժի վաճառքի փոքր շուկայի պայմաններում և տառապելով սոցիալական, իրավական ու ազգային ճնշումներից՝ հայ մշակները հաճախ չէին կարողանում գտնել նոր՝ իրենց կենսական պահանջները քիչ թե շատ բավարարող աշխատանք: Ահա այն հիմնական պատճառները, որոնք հարկադրում էին հայ գյուղացուն բռնել տարագնացության ճամփան և մեկնել արդյունաբերական տարբեր կենտրոններ: Դա մեկն էր այն գործոններից, որ խանգարում էր Արևմտյան Հայաստանում գյուղական պրոլետարիատի՝ որպես դասակարգի կազմավորմանը:

Գլուխ Յոթերորդ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԼԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին կապիտալիստական հարաբերությունները ծլարձակում են նաև Արևմտյան Հայաստանի արդյունաբերության մեջ: Դրանք հանդես են գալիս այն ժամանակ, երբ արդյունաբերությունը թևակոխում է իր զարգացման մանուֆակտուրային շրջանը: Դա մի դեպքում դրսևորվում էր որպես էսնաֆական վարպետի՝ իր արհեստանոցի ընդարձակումով, երբ նա, վարձելով զգալի թվով բանվորներ, նրանց մեջ աշխատանքի բաժանում էր կատարում, մի այլ դեպքում՝ դրամատերերը, (վաճառականները, վաշխառուները) կուտակելով հարստություն, կառուցում են արհեստանոցներ, գնում են արտադրության միջոցներ, վարձում են բանվորներ, կատարում են աշխատանքի բաժանում և այդպիսով իրենց գործունեությունը դրամաշրջանառության ոլորտից տեղափոխում են արտադրության ոլորտ:

Արևմտահայ իրականության մեջ կատարվում էր նաև մի այլ գործընթաց. որոշ համեստ միջոցներ ունեցող դրամատերեր, հաշվի առնելով երկրում տիրող քաղաքական անապահովությունն ու կառավարության հայահալած քաղաքականությունը, խուսափում էին ձեռնարկություններ կառուցելուց և տնայնագործներին հասցնելով վարձու բանվորի մակարդակին, գերադասում էին շահագործել նրանց իրենց տներում: Դրա հետևանքով կապիտալիստական կենտրոնացված մանուֆակտուրայի կողքին առաջանում էր ցրված մանուֆակտուրան: Այդ երևույթը նկատվում էր արդյունաբերության մի շարք ճյուղերում, բայց ավելի հաճախ տեքստիլագործության մեջ: Ինչպես կենտրոնացված, այնպես էլ ցրված մանուֆակտուրաներում ընդգրկված արտադրողները, իհարկե, համալրում էին նոր-նոր կազմավորվող պրոլետարիատի շարքերը:

Արևմտյան Հայաստանում կային զանազան տեսակի ձեռնարկություններ, որոնք կոչվում էին՝ Պետական, Պատրիարքարանական, Կարմիր խաչի ընկերության, Մասնատիրական անուններով:

Պետական ձեռնարկություն կար Երզնկայում՝ կաշեգործության և կոշկակարության ոլորտում: Ըստ Յա. Դ. Մալամայի վկայության՝ տակավին 1860-1870-ական թվականների սկզբներին այստեղի կաշեգործական ու կոշկակարական ձեռնարկություններում տարեկան մշակվում էր 15.000-20.000 եզան կաշի և զորքի համար պատրաստվում 36.000 կիսաճտքավոր և 15.000 ճտքավոր կոշիկներ[1]: Այդ ձեռնարկությունները չի կարելի կապիտալիստական համարել, քանի որ դրանց արտադրանքը զորքին էր ծառայում և ոչ շուկային:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին և Կարմիր խաչի ընկերությանը պատկանող ձեռնարկություններն առաջացան 1890-ական թվականների հայկական ջարդերից հետո՝ համարյա բոլորն էլ բացառապես կտավագործության գծով, իսկ բանվորական ուժը համալրվեց հիմնականում անտուն ու անտեր մնացած կանանցով ու դեռահասներով: 1896 թ. պատրիարքարանը հիմնում է կտավագործական ևս մի արհեստանոց Վարագա վանքում, որը 1900 թ. տեղափոխում է Մուշ և արդեն 1901 թ. հին վարպետները փոխարինվում են նորերով: Շուտով գործավորների թիվը 20-ից հասցնում է 32-ի, որի հետևանքով ընդարձակվում է արտադրությունը: 1904 թ. Գեղամ Տեր-կարապետյանը գրում էր, որ նոր վարպետը «օրն ի բուն արհեստանոցին մեջ է և գիտե արտադրել Արաբկիրի ընտիր մանուսաներ, որք մեծ սպառում ունեին հոս: Արհեստանոցին մեջ կգործեն հիմա 7 թեզկեահներ»[2]: Նա այնուհետև հույս էր հայտնում. «Եթե վարպետին հոգածությունն ու արհեստանոցի կանոնավորությունը հարատև ըլլան, տարակույս չկա, թե հաստատությունը մեծապես օգտակար պիտի ըլլա Մշո անարհեստ ժողովրդին համար»[3]:

Պատրիարքարանը, բացի Մուշից կամ Վարագա վանքից, նույնանման արհեստանոցներ է բացում նաև Դիարբեքիրում, Այնթափում և այլ տեղերում[4]:

Կարմիր խաչի ընկերությունը 90-ական թթ. հայկական ջարդերից հետո միսիոներներին և որոշ անհատներին դրամական միջոցներ է հատկացնում երկրի տարբեր քաղաքներում կտավագործական ձեռնարկություններ հիմնելու համար: 1896 թ. անգլո-ամերիկյան մի քանի միսիոներներ Վանում գնում են հինգ

[1] Տե՛ս Я. Д. Малама. Средства... էջ 50, 53:

[2] Բյուզանդիոն, 1904, փետրվարի 4-ին:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս «Արարատ», 1902, էջ 140, 674-675:

տուն, դարձնում են դրանք արհեստանոց, հավաքում են մի խումբ կտավագործ հայուհիների, ձեռք են բերում բուրդ ու բամբակ և սկսում են կտավ արտադրել: Այլ միսիոներներ այդ նույն միջոցներով գնում են բուրդ ու բամբակ և բաժանում կոտորածներից տուժած ու տառապած հայուհիներին և պատվիրում են նրանց կտավ ու զանազան գործվածքներ պատրաստել: Նրանք հայուհիներին վարձատրում էին փողով, իսկ ապրանքը ուղարկում վաճառքի երկրի տարբեր շրջանները: Տիկին Կ. Ն. Կիմբլը պատմում էր. «Ես գնեցի բավական քանակությամբ բուրդ և բամբակ... կարոտյալների և գաղթականների ընտանիքի գործող թվին նայելով՝ տվեցի նոցա մանելու, գործելու և այլ աշխատությանց վարձք: Այդպիսով, փոխանակ միանվագ ողորմության, երեք ամսե ավելի սկսյալ, կարոտյալներ, ազատվելով փողոցների մուրացկանութենե, քիչ-շատ կը հայթայթեն իրենց հացը: Եվ այս գործը շարունակելի է, այնպես որ, գործված ապրանքներից մաս մը տեղս կը վաճառի, մաս մը ավելի մերկերին կը տրվի, մեծ քանակությամբ ալ ուղարկելով Սասուն, որի մասնաժողովից կը ստանամ գինը, կրկին շահեցնելու նպատակով»[5]:

Կարմիր խաչի ընկերությունը, բացի Վանից, կտավագործական ձեռնարկություն էր հիմնել նաև Արաբկիրում: Նա այստեղ նշանակել էր հատուկ գործակատարներ, որոնք հումքը բաժանում էին բանվորներին, վարձատրում էին նրանց, իսկ արդյունքը արտահանում վաճառքի: 1897 թ. ականատեսներից մեկը գրում էր. «Երկու գործակատարներ մանածը կբաշխեն գործավորներուն, որք որոշյալ վարձքով մը զայն վերածելով մանուսայի կդարձնեն իրենց: Գործված ապրանքներն ի վաճառ կհանվին թե՛ հոս և թե՛ ի Խարբերդ: Ոչ նվազ կիներ ու աղջիկներ ալ կան, որ կօգտվին մանուսայի ճյուղերեն, ոմանք աղբ աղբելով, այլք առեջք լեցնելով և կտրիճ գործավորուհիներ ալ օրական 2-3 թուփ գործելով»[6]:

Ընկերությունը որոշ ժամանակից հետո կտավագործական ձեռնարկությունը Արաբկիրից տեղափոխում է Մալաթիա: Այդ տեղափոխման պատճառը մեզ անհայտ է: Բայց դատելով ներքոհիշյալ հաղորդումից՝ պետք է ենթադրել, որ այն պայմանավորված է եղել շահադիտական նկատառումներով: «Կարմիր խաչի ընկերությունը,- կարդում ենք 1900 թ. մի թղթակցության

[5] Մշակ, 1895, սեպտեմբերի 7, թիվ 102:

[6] Բյուզանդիոն, 1897, ապրիլի 25:

մեջ, - անցյալ տարիներու մեջ մանուսայի համար հոս հաստատած գործն ու գործարան, որու միջոցով շա՜տ ու շա՜տ ընտանիքներ կմխիթարվեր ի փոխարեն իր աշխատության ստացած դրամներով, շատոնց արդեն փոխադրված է Մալաթիա՝ դավանակցի վստահությունը գրավող խարդախ մեկ գործավորին երեսեն»[7]:

1911 թ. «Վասպուրականի հայ կանանց միությունը» Վանում հիմնում է դերձակության մի ձեռնարկություն, որտեղ մեկ վարպետուհու ղեկավարության տակ աշխատում էին 25 աշակերտ-աղջիկներ: Նրանք, ինչպես նշվում էր մի վկայության մեջ, «ձրի կամ դրամով կուսանեին հոն ձևագիտություն և հագուստներ կը կարեն: Ունին բավական հաճախորդներ»[8]:

Սակայն Կարմիր խաչի ընկերությանը կամ այլ հաստատություններին պատկանող մանուֆակտուրային ձեռնարկությունների թիվը քիչ էր: Այդ ձեռնարկությունների մեծ մասը պատկանում էր մասնավոր մարդկանց և ստեղվծել էին տարբեր ժամանակներում՝ արդյունաբերության տարբեր ճյուղերում: Վանում, հավանաբար, 1870-ական թվականների կեսերին Թոխմախյան եղբայրները հիմնում են կտավագործական մի ձեռնարկություն[9]: Հետագայում նրանց օրինակին են հետևում նաև ուրիշները: 1881 թ. մի հաղորդման մեջ նշվում էր. «Վանի մեջ մի քանի գործարաններ բացված են, ուր բավական էժան գներով չուխաներ կկարվին և կրնան ծախվիլ Ռուսահայաստանի մեջ»[10]:

Նույն բանն էր հաստատում նաև Գ. Սրվանձտյանցը, որը 1882 թ. գրում էր, որ Վանում «մոտ տարիներս քանի մը նոր գործարաններ բացված էին տեսակ-տեսակ մանիսայի և Շամի, Հալեպի ու Պուրսայի ապրանքներու տեսակներ կը գործեին, ինչպես նաև տեղական տեսակ մը ասուի, որ ընդհանրացրած է գրեթե տեղացիներու մեջ հագուստ շինելու»[11]:

Ավելի ուշ կտավագործական ձեռնարկություն է հիմնում նաև

[7] Բյուզանդիոն, 1900, ապրիլի 19:

[8] Ազատամարտ, 1912, հունվարի 12, թիվ 794:

[9] Այդ ենթադրության համար հիմք կարող է ծառայել հետևյալ փաստը. 1881 թ. Արսեն Թոխմախյանը գրում էր. «Վերջին տարիներին Թոխմախյան եղբայրները բարակ բամբակեղենների համար մի գործարան բացին, որոնց մանածը Եվրոպայից են ստանում» (տես նրա «Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին», էջ 24, տես նաև Մշակ, 1879, փետրվարի 23 թիվ 26):

[10] Մշակ, 1881, ապրիլի 23, թիվ 71:

[11] Գ. Սրվանձտյանց, Համով հոտով, Կ.Պոլիս, 1884, էջ 78:

վաճառական Կափամաջյանը, որը, ինչպես ասվեց, 1862 թ. ստեղծել էր առևտրական ընկերություն[12]:

Էրզրումում Լավինը 1880-ական թվականներին կատարելագործում է իր ձեռնարկությունը և մեծացնում աբայի արտադրությունը[13], իսկ 1897 թ. ամերիկացի Մր. Չեյմպըրսը հիմնում է մանուսայագործության ձեռնարկություն: Նա այնքան քիչ էր վարձատրում, որ բանվորները հրաժարվում են նրա մոտ աշխատելուց, և նրա ձեռնարկությունը փակվում է: Արսենը 1898 թ. գրում էր այդ առթիվ. «Անցյալ տարի, տեղվյուս ամերիկյան միսիոներ Մր. Չեյմպըրս թեպետ փորձ մը ըրավ այս արհեստն (մանուսայագործությունը - Ա. Հ.) այրի կիներու և աղքատ աղջիկներու սովորեցնելով՝ իգական սեռին մեջ տարածելու, սակայն հաջողություն չկրցավ գտնել: Մանիսայի ծանոթ գործարանը հիմա փակ է, վարպետ ելնող կիներն ու աղջիկները տեսնելով, որ իրենց օրականը 40-60 փարայի մեջ կխաղա, փտած մանած գործվելուն պատճառով, չշարունակեցին նույն արհեստը, բացի մի քանիսներն, որոց հանգամանքներն ավելի շահաբեր են»[14]:

Էրզրումում համեմատաբար զարգացած էր էհրամների արտադրությունը: Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Կ. Սոլանելին 1881 թ. գրում էր. «Էրզրումի հայոց գլխավոր ճարտար արվեստքն են շինություն չարշաֆի, որ վերարկվի տեսակ մը է, որով այն գավառը բնակվող հայ, տաճիկ և հույն կանայք միապես կը ծածկվին գլխեն մինչև ցոտս»[15]:

Իսկ Վ. Փափազյանը 1887 թ. նշում էր, որ էհրամների արտադրությունը «ամբողջ Տաճկաստանում միայն Էրզրումին էր հատուկ»[16]: Բայց Էրզրումում տեքստիլ արդյունաբերությունը ընդհանուր առմամբ թույլ էր զարգացած: Արսենը 1898թ. գրում էր, որ այստեղ «մանուսայագործությունը ուրիշ գավառներու պես... այնքան տարածված արհեստ մը չէ»[17]:

[12] Վ. Փափազյանը 1887 թ. գրում էր, որ Վանում «նշանավոր են Թոխմախյանների, Քափամաճյանների, Չթչոց և այլն գործարանները, որտեղից արտադրում են ոչ միայն այդ (այսինքն՝ աբա), այլև շալ, կտավ, բրդյա նուրբ, ամեն գույներով և զարդերով վերարկուի և շալվարի կտորներ, ամառային հագուստների համար բամբակի գործվածքներ, մանուսա կոչվող ուղղահայաց կարմիր գծերով «զբունի» (արխալուղ, պճղնավոր) համար կտորներ և նույնիսկ վերջին ժամանակներս «էհրամներ» (կանանց ծածկոցներ)» Վ. Փափազյան, հ. 5, էջ 407-408:

[13] Տե՛ս «Բազմավեպ», 1882, էջ 297:

[14] Բյուզանդիոն, 1898, մարտի 16:

[15] Բազմավեպ, 1892, էջ 297:

[16] Վ. Փափազյան, հ. 5, էջ 408:

[17] Բյուզանդիոն, 1896, մարտի 16:

Կտավագործությունը զգալի չափերով տարածված էր Երզնկայում և նրա շրջակայքի գյուղերում. 1870-ական թթ. սկզբներին կար 16.000 դազգահ, որոնցով ջուլհակներն ու ջուլհակուհիները պատրաստում էին բյազ, չիթ, երեսսրբիչներ, սավաններ, ծածկոցներ, վերնազգեստի շորացուներ և այլն[18]: Երզնկայում հիմնվել էին մի շարք ձեռնարկություններ, որոնք իրենց արտադրությամբ դեռևս 1860-1870-ական թթ. գերազանցում էին Ամասիային ու Թոքատին և մրցում էին անգամ Հալեպի ու Շամի հետ: 1896 թ. Հ. Բագրատունին գրում էր, որ Երզնկայի մանուսան «20-25 տարի առաջ... մեծ համբավ ուներ... Ամասիա, Թոքատ և շրջակա քաղաքներ ի զուր մրցիլ կը ճգնեին Երզնկայի այս ճարտարության տեսակետով.- սա կը մրցեր Հալեպու, Շամու դեմ և արդյունքն այն եղավ, որ կրցավ իր ապրանքը Հալեպի չըթարին, Շամի ղումաշին նմանցնել, առանց կարենալ գերազանցելու[19]: Առանձնապես հռչակված էր Վարդանի ձեռնարկությունը, որն արտադրում էր մեծ քանակությամբ ու բարձր որակի կտավ»[20]:

Իսկ գյուղերում թեև առևտրական կապիտալը տնայնագործներին դեռևս վարձու բանվորների չէր վերածել, համենայն դեպս նրանց արդեն ենթարկել էր իրեն: Վաճառականներն արտահանում էին տնայնագործների արդյունքները Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի զանազան քաղաքներ և վաճառում իրենց համար շահավետ գներով: 1896 թ. նույն հեղինակը արձանագրում էր. «ասկից իբր հինգ տարի առաջ Երզնկայի շրջան վաճառական մը ձեր մանուսաները Յալովայի գյուղերը-երեք տարի առաջ ուրիշ մը հետևեցավ անոր՝ ձեր մանուսաներեն Պոլսո հրապարակին վրա ծախեց և դժգոհ չեղավ, մոտեն գիտած եմ»[21]:

Արաբկիրում կտավագործությունը բնակչության հիմնական զբաղմունքն էր: Այստեղ կար 15 մանուսայի, 9 մանածի և 18 սավանի կամ սփռոցի ձեռնարկություն[22]: Դրանցից առանձնապես նշանավոր էր Տեր-Պետերյան Պողոս էֆենդու մանուսայի ձեռ-

[17] Բյուզանդիոն, 1896, մարտի 16:

[18] Տե՛ս Я. Д. Малама. Средства... էջ 52-53:

[19] Բյուզանդիոն, 1896, դեկտեմբերի 3 և 5:

[20] Նույն տեղում, դեկտեմբերի 3:

[21] Նույն տեղում, դեկտեմբերի 5:

[22] Տե՛ս Ս. Եփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հ. 1, գիրք Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1903, էջ 280:

նարկությունը, որի մասին Գ. Սրվանձտյանցը տակավին 1879 թ. գրում էր. «Տերպետերյան Պողոս էֆ. գործարան մը բանած էր, ուր շրջեցա և ուրախությամբ տեսա արտադրած կերպաս տարազները, որք կը մրցեին Հալեպի և Շամի ապրանքներուն հետ»[23]:

Արաբկիրցիները գործում էին բարձր որակի և պես-պես գույներով ու ծաղիկներով զանազան գործվածքներ և իրենց արհեստի մեջ մեծ անուն էին ձեռք բերել: Երկրի տարբեր շրջանների կտավագործները գալիս էին նրանց մոտ սովորելու և նրանց արվեստը ընդօրինակելու: 1897 թ. մի թղթակից գրում էր, թե մանուսան, որ Արաբկիրի «գլխավոր արտածությունն է, իր նախնական ձևին մեջ չէ այլևս: Շնորհիվ հայ բանվորներին հնարիմաց ջանքերուն, տեսակներն ավելի ազնվացած ու բազմապատկած են: Այն փայլուն, խայտաճամուկ, բազմազան գործվածքներն, որ կզարդարեն հիմա մեր շուկայի խանութները, տարիներ առաջ գոյություն ունեի՞ն, և ո՞վ էր, որ արտադրեց զանոնք. ո՞չ ապաքեն մեր չարքաշ էսնաֆը»[24]:

1906 թ. Միհրանը հաղորդում էր, որ Արաբկիրը «քսան տարիներու ընթացքին զգալի առաջադիմություն մը ըրած է մանուսագործության արհեստին մեջ: Առանց չափազանցության պիտի ըսեմ, թե ան անցած է այս արհեստին մեջ դրացի ու հեռավոր գավառներու արհեստակիցները: Ամենուրեք Արաբկիրի մանուսան է փնտռվածը, իր գույներու հարստության ու նյութի տոկունության ու մաքրության տեսակետով, ծաղկով (քառթոնով գործված) մանուսան և ուրիշ տեսակներն այսօր կսպառեն Թուրքիոյ ամենեն հեռավոր գավառներուն մեջ առհասարակ, ինչպես Մուշ, Վան, Կարին, Երզնկա, Սեբաստիա և այլն»[25]:

Բացի Արաբկիրից, կտավագործությունը բնակչության հիմնական զբաղմունքն էր նաև Գյուրին (Սվազի վիլայեթ) և Թաղ (Վանի վիլայեթ) ավաններում: Գյուղերում արտադրում էին բազկաթոռի, բազմոցի, մութաքայի երեսացուներ, կանանց ու տղամարդու հագուստի կտորներ և այլն: 1880-ական թվականների սկզբներին այստեղ կար մոտ 5000 դազգահ, որոնց վրա աշխատողները գերազանցապես կանայք էին[26]:

Գյուրինում նույնպես գործում էր ցրված մանուֆակտուրա:

[23] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Ա, էջ 281-282:

[24] Բյուզանդիոն, 1897, ապրիլի 25:

[25] Բյուզանդիոն, 1906, ապրիլի 7:

[26] А. И. Гиппиус. Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, вилайет Сивас и сеть путей к западу от Эрзерума. Ч. 1.- Тифлис, 1890.- էջ 69:

1881 թ. Նիկողոսյանը գրում էր, որ խեղճ հայ կանայք, հնարավորություն չունենալով ձեռք բերել եվրոպական նուրբ մանվածք կամ տեղում մանել այդպիսին, «ստիպված են հարյուրապատիկ անգամ ստոր գնով պատրաստ բուրդ, բամբակ և մետաքս վաճառել մի քանի հարստահարողներին, որ նոքա այդ ամենը ուղարկեն Մանչեստր ու այնտեղ ման տալով կրկին՝ ծախեն թշվառ կանանց իրենց գործվածքների մրցումը եվրոպական գործվածքների դեմ Հայաստանի բոլոր ժողովրդի մեջ առաջ մղելու համար»[27]:

1907 թ. մի թղթակից հաղորդում էր. «Շալագործությունը Կյուրինի մեջ քառասուն տարվան հնություն մը ունի. հետզհետե զարգացման հետ ընդհանրացած է ամեն տուներե ներս և այսօր քաղաքիս գրեթե ապրուստի միակ միջոցն է եղած: Գործավոր դասակարգը ամենագլխավոր մասը կը կազմե բնակչության, որ շալ գործելով ապահովված ըլլալ կը կարծե իր օրապահիկը: Քսանեն քսանհինգ վաճառականներ եվրոպական լարանը (մանված բուրդ), մանածը և երբեմն տեղականը, գործողներու կը հանձնեն: Այս վերջինները իրենց տուների մեջ հասարակ և ժագար հորերու (տեզկեահ) վրա նմուշներու համաձայն գործելով կը հանձնեն աղաներու, ինչպես իրենք սովոր են կոչել»[28]:

Հատկապես աչքի էր ընկնում վաճառական Գևորգ Թոփալյանը, որը 1880-ական թվականներին գնում է տնայնագործների արդյունքների մեծ մասը և արտահանում վաճառքի Կ. Պոլիս, և եվրոպական քաղաքներ: Նիկողոսյանը նշում էր, որ եթե որևէ մեկը ցանկանում էր ձեռք բերել Գյուրինի կտավը, ապա դիմում էր նրան և «նորա ձեռքով ոչ ավելի ուշ, քան երկու ամսվա ընթացքում կստանա Հայաստանի կենտրոնից... հայկական ապրանքը»[29]:

Շատախի կենտրոն թաղում, որ Վանից մոտ 77 կմ հեռավորության վրա էր, կար կտավագործների 100 տնտեսություն: Նրանք վարելահող չունեին, բայց ունեին խաղողի ու մրգատու ծառերի փոքր այգիներ: Թաղեցիներն իրենց արդյունքը վաճառում էին մի քանի վաճառականների և փաստորեն դարձել էին նրանց բանվորները:

Պետք է նշել, որ Շատախում, բացի թաղեցիներից, վարձու բանվորի կարգավիճակում էին նաև մի քանի այլ գյուղերի

[27] Մշակ, 1881, մայիսի 15, թիվ 87:

[28] Երկրի Ձայնը, 1907, թիվ 30, էջ 4:

[29] Մշակ, 1881, մայիսի 15, թիվ 77:

կտավագործները: Տիգրանը 1910 թ. գրում էր. «Շատախի մեջ, բացի մեկ քանի վաճառականներերե, ամբողջ ազգաբնակչությունը՝ թվով 1000 մարդ, կը զբաղվի շալագործությամբ, բայց ո՛չ միայն տղամարդիկ, այլև կիներն են, որոնք կընեն աշխատանքի մեծ մասը: Իսկ այդ աշխատանքեն շահողը միայն... վաշխառուներն են: Շնորհիվ այն բանի, որ շալագործները կը ստանան իրենց նյութը՝ մազ, բուրդ այդ վաճառականներեն, անոնք ստիպված կըլլան վերջիններուս ծախել իրենց ապրանքը, նախ այն պարզ պատճառով, որ ուրիշ գնող չկա: Եթե անոնք չտան, կը զրկվին «աղայական աջակցութենեն»: Եվ ի՞նչ կը հետևի: Բանվորը, որուն համար ամեն օր նոր կարիք մը կը ծնի, չի կրնար իր արտադրած շալերը պահել՝ հավաքաբար ավելի թանկ ծախելու համար. այլ հենց որ մեկը վերջացնե, աղային մոտ կը տանի իր պարտքը գոցելու համար: Ապրանք գնող աղան շատ լավ գիտե, որ արհեստավորը ստիպված է անպայման ծախել իր շալը և ատոր համար ալ ապրանքին կես գինը կ'ուզե վճարել: Ի՞նչ պիտի ընե խեղճ արհեստավորը. ան ուզե, չուզե պիտի ծախե:

Եվ բոլոր արհեստավորները այս ճանապարհով իրենց բոլոր շալերը մեկ-երկու վաճառականի մոտ կը կենտրոնացնեն, իսկ ասոնք ամենայն հեշտությամբ Վան փոխադրել կուտան իրենց ապրանքը, մինչև իսկ էրզրում և Տրապիզոն, 1-ին 10 շահով ծախելով»[30]:

Ընտանիքում կանայք գզում ու մանում էին բուրդը, իսկ տղամարդիկ՝ հինում, գործում և կոճկում էին շալը: Շատախի կտավը արտահանվում էր վաճառքի գլխավորապես Վան, Բիթլիս, Դիարբեքիր և այլն:

Խարբերդում կար կտավագործության երկու ձեռնարկություն, որոնք արտադրում էին բավականին բարձրորակ մանուսա և այլ գործվածքներ: 1880-ական թ. սկզբներին Պողոս Ծայրագույն վարդապետ Նաթանյանը հիշատակում էր, որ Խարբերդում «Երկու գործարան... կա, ուր ընտիր մանուսա և չիբարի կը գործվին»[31]: 1906 թ. «Բյուզանդիոնի» թղթակիցը նշում էր, որ Խարբերդը տարեկան 10000 կտոր կամ 1000 ոսկու արժողությամբ կարմիր կտավ է արտահանում Կարին, Կարահիսար, Դիարբեքիր, Բալու և Քըղի[32]:

Թոքատում կային կտավագործության մի քանի ձեռնարկութ-

[30] Ազատամարտ, 1910, հուլիսի 31, թիվ 348:

[31] Նաթանյան, նշվ. աշխ., էջ 136:

[32] Տե՛ս «Բյուզանդիոն», 1906, ապրիլի 27:

յուններ, որոնք արտադրում էին տեղական կոպիտ գործվածքներ՝ յազմա: 1897 թ. մի ականատես արձանագրում էր, որ Թոքատում կան «բազմաթիվ յազմաճիի ընդարձակ գործարաններ, ուր հարյուրավոր հայեր կաշխատին»[33]: 1913 թ. մի այլ ականատես նշում էր, որ այնտեղ կա յազմայի 22 ձեռնարկություն[34]: Բացի Թոքատից, կտավագործական ձեռնարկություններ կային նաև Ամասիայում՝ 6 ու Սվազում՝ 7[35]: Թե որքա՞ն էր այդ ձեռնարկություններից յուրաքանչյուրում զբաղված բանվորների թիվը, մեզ հայտնի չէ, սակայն, հիմք ընդունելով այն փաստը, որ Թոքատում ընդհանուր առմամբ կար 3000 բանվոր, որից 2500-ը հայ, իսկ Ամասիայում՝ 2000 բանվոր, որից 1900-ը հայ[36] և ելնելով նրանից, որ այդ քաղաքներում տիրապետողը տեքստիլ արդյունաբերությունն էր, կարելի է ենթադրել, որ բանվորների թիվը կտավագործական ձեռնարկություններում բավականին մեծ է եղել:

Հավանաբար այդ քաղաքներում, ինչպես նաև նրանց շրջակայքում կենտրոնացած մանուֆակտուրայի կողքին կային նաև ցրված մանուֆակտուրաներ: Ս. Եփրիկյանը, հիշատակելով, որ Ամասիայում բնակչության գլխավոր զբաղմունքը ոստայնանկությունն է, գրում էր, որ այնտեղ 2500 հոգի աշխատում են ձեռնարկություններում, իսկ Մարզվանի մեջ 3000 կին ու աղջիկ «իրենց տան մեջ կաշխատին: Գործածներն են 9 կանգուն երկայն պաստառներ, ճերմակ, կարմիր և կապույտ գծերով, զորս կը վաճառեն Անկյուրիո նահանգին մեջ»[37]:

Արևմտյան Հայաստանի կտավագործական մյուս կենտրոնների մասին մենք ունենք հետևյալ տեղեկությունները:

1862 թ. մի թղթակից հաղորդում էր, որ Բիթլիսում կտավագործությունը տեղական արդյունաբերության գլխավոր ճյուղն էր: Այնտեղ «գործված ու կարմիր ներկով ներկված կտավին շիլե կըսվի... ասոր այս ազնիվ հատկությունին Հայաստանին այլևայլ քաղաքաց մեջ հռչակված են, շատ ընդունելուն լինելու համար, վաճառականք միշտ հակերով այն տեղերն կտանին կը վաճառեն»[38]:

[33] Բյուզանդիոն, 1897, օգոստոսի 14:

[34] Տե՛ս «Հորիզոն», 1913, հունիսի 7, թիվ 123:

[35] Նույն տեղում:

[36] Նույն տեղում:

[37] Բազմավեպ, 1899, էջ 457-458:

[38] Արծվի Վասպուրական, 1862-1863, էջ 188:

1881 թ. մի այլ թղթակից նշում էր, որ Բիթլիսում կար 40 գործատուն, որտեղ տարեկան մշակվում էր 70.000-80.000 լիտր բամբակ և պատրաստվում էր շիլա[39]:

1884 թ. Մ. Միրախորյանը գրում էր, որ Բիթլիսի բազմաթիվ արհեստներից «կտավագործությունը մեծ տեղ կը գրավե, վասն զի կտավեն ամենամեծ քանակությամբ կը ներկվին (տուրունով) կարմիր, զոր շիլա կանվանեն, նույնպես և չիթ կը պաըտրաստեն: Սույն երկու տեսակ հաստ կտավեղենք թե՛ ածան և թե՛ խիստ դիմացկուն են: Հայաբնակ գավառաց հարյուրավոր գյուղորեից արք և կանայք այդ տեղական նյութերեն կը հագնին»[40]:

Դիարբեքիրում «ոստայնագործության հետևողները շատ են. 500-էն ավելի անձինք նման սարդի տիվ ու գիշեր կաշխատին տուներու և խանութներու մեջ, հինավուրց դրությամբ, «թեզկեահներ ու գլուխն անցած»[41]:

Սղերդում կային «մոտ հարուրի չափ խանութներ և կաշիի, կտավի ու շալի գործատուններ, տեղվույս շալեղեններ անվանի են, որք կերթան ու կվաճառվին... քաղաքներ»[42]:

1904 թ. Տոմիլովը հիշատակում էր, որ Սղերդում «ծաղկում է կտավագործության արվեստը, ամբողջ քաղաքամասը աշխատում է ոչ մեծ, պարզունակ դազգահներով: Գործում են բրդյա և բամբակյա գործվածքներ՝ կանանց չադրաների ու քուրդ տղամարդկանց անդրավարտիքների համար: Այստեղ ոչխարի բրդից պատրաստում են նաև քրդական «աբա»...»[43]:

Հավանաբար այդ քաղաքներում բազմաթիվ մանր ապրանքային բնույթի գործատների կողքին կային նաև մանուֆակտուրային տիպի խոշոր ձեռնարկություններ:

Կտավագործական ձեռնարկություններում աշխատանքի մանուֆակտուրային բաժանման մասին որոշ պատկերացում տալու համար բերենք Վանի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները: Ըստ ականատեսներից մեկի վկայության՝ «Կարմիր խաչի ընկերության վերոհիշյալ հինգ ձեռնարկություններում 60 հոգի զգում էին բուրդ ու բամբակ, 1000 հոգի ճախարակներով

[39] Տե՛ս «Մասիս», 1881, հոկտեմբերի 17:

[40] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Ա, էջ 57-58:

[41] Բյուզանդիոն, 1907, մարտի 30:

[42] Արծագանք, 1882, թիվ 9, էջ 136:

[43] Томилов. Отчет о поездке по Азиатской Турции в 1904 г.- СПб, 1907.- Ч. 1.- էջ 276 (հետագայում՝ Տոմիլով):

թել էին մանում, 70 հոգի մասրա էին լցնում կամ հինա անում, 200 հոգի դազգահներով կտավ ու շալ էին գործում, 15 վարպետ հագուստ էին ձևում, 100 ընտանիք այն կարում էին, 20 ընտանիք գուլպա էին գործում, 10 հոգի վերմակ էին կարում, իսկ 70 հոգի «կը ծառայեն իբրև գրագիր, հաշվակալ, քննիչ, գործակատար. դռնապան, հիվանդապահ և այլն, և այլն»[44]:

Ըստ տիկին Կ. Ն. Կիմբըլի՝ «ցրված մանուֆակտուրայում 2 հոգի բուրդ էին լվանում, 8 հոգի գզում էին, 284 հոգի մանում էին, 7 հոգի մասրա էին լցնում, 2 հոգի հինած էին հինում, 32 հոգի կտավ էին գործում, 12 հոգի շալվար էին կարում, իսկ 6 հոգի «անդադար հսկողություններ կընեն գործավորների զանազան կիրառությանց վրա»[45]:

Շատ հավանական է, որ աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը համարյա այդպիսին էր նաև մյուս քաղաքների ու գյուղաքաղաքների կտավագործական ձեռնարկություններում: Այդ ենթադրության համար հիմք կարող են ծառայել հետևյալ վկայությունները. Արաբկիրի ձեռնարկություններում, ըստ մի հաղորդման, «զառամած կիներուն, ինչպես նաև երիտասարդներուն հավասարապես գործ կա, առէջք լցնել, հենք տալ, հենք քաղել և ասոր նման դյուրին գործեր»[46]:

Մուշում, ըստ մի այլ հողորդման, պատրիարքարանի արհեստանոցի վարպետը մանիսայագործությունը «մասնաճյուղերու վերածեր է, որք իր խոստովանության համաձայն 8-10 կհասնին, և ասոնցմե միայն երեքը՝ մքուք ձգել, մսրա լեցնել և խաշը կոխել գործածել կուտա որբերուն, ամեն մեկ ճյուղին 6-7 հատկացնելով, պայմանով սակայն, որ մեկը մյուսին մշակած ճյուղը չի կրնար սովրիլ»[47]:

Կտավագործական բոլոր ձեռնարկություններում աշխատանքի գործիքները պարզունակ էին: Ձուլհակներն ու ջուլհակուհիները աշխատում էին սանդերքով, ճախարակով, իլիկով, մասրայով, դազգահով և այլ գործիքներով, որոնք շարժման մեջ էին դնում ձեռքով: Վ. Փափազյանը 1887 թ. գրում էր, որ Վանում ձեռնարկատերերը «մինչև այժմ դեռևս թել պատրաստելու մի մեքենա չունեն, և վանեցի կանայք օրը մինչև երեկոյան գործելով՝

[44] Մշակ, 1896, մարտի 2, թիվ 26:

[45] Մշակ, 1895, սեպտեմբերի 7, թիվ 102:

[46] Բյուզանդիոն, 1897, ապրիլի 25:

[47] Բյուզանդիոն, 1901, հուլիսի 5:

իրենց ճախարակների արտադրած թելերով չեն բավականացնում գործարանատերերին»[48]:

Իսկ Հակոբ Բագրատունին, խոսելով էրզրումի էիրամների արտադրության մասին, նշում էր. «Այս ապրանքեն պարզը, ծաղկունը, շերտավորն այնպիսի ճարտարությամբ կը գործեն էրզրումցի կիներ և աղջիկներ, որ մեքենական ճարտարություններ պիտի նախանձին՝ ձեռքով այնքան մաքուր հանված ապրանքին վրա»[49]:

Սակայն բանվորները տեղ-տեղ սեփական նախաձեռնությամբ կատարելագործում էին պարզունակ գործիքները: Արաբկիրում, ըստ մի վկայության, նրանք հնարել էին մի գործիք, որը արագացնում էր տարբեր գույնի թելերի միացման գործը[50]:

Ձեռնարկատերերը թելը ստանում էին կամ Եվրոպայից, կամ Երզնկայի, Խարբերդի, Դիարբեքիրի և այլ քաղաքների մանարաններից: Նրանք եվրոպական թելից պատրաստում էին նուրբ, իսկ տեղական թելից՝ կոպիտ գործվածքներ[51]: Բացառություն էին կազմում էիրամները, որոնց թելը պատրաստում էին էրզրումցի կանայք՝ «հիանալի նրբությամբ»[52]:

Ինչ վերաբերում է աշխատավարձին, ապա՝ վճարվում էր կամ փողով կամ պարենամթերքով ու հագուստեղենով՝ մի տեղում շատ, իսկ մյուսում՝ քիչ[53]:

Արևմտյան Հայաստանում, բացի կտավագործությունից, կապիտալիստական մանուֆակտուրա էր առաջացել նաև գորգագործության մեջ: Էրզրումում կային քիլիմ գորգերի գորգագործական ձեռնարկություններ[54]: Նույնպիսի ձեռնարկություններ կային նաև Ամասիայում, որտեղ բրդից գործում էին գորգեր և արտահանում վաճառքի[55]:

Խարբերդում, ըստ Մ. Ճիզմեճյանի հուշերի, ոմն Պենեյան, ստանալով 1890-ական թվականների ջարդերից տուժածներին օգնելու նպատակով հատկացված գումարները, յուրացնում է

[48] Վ. Փափազյան, հ. 5, էջ 408:

[49] Տե՛ս «Բյուզանդիոն», 1896, դեկտեմբերի 19:

[50] Տե՛ս «Բյուզանդիոն», 1897, ապրիլի 25:

[51] Տե՛ս Ֆ. Գրյազնով, նշվ. աշխ., էջ 170:

[52] Վ. Փափազյան, հ. 5, էջ 408:

[53] Տե՛ս Երկրի ձայնը, 1907, թիվ 30, էջ 4:

[54] Տե՛ս «Արծագանք», 183, թիվ 11, էջ 161:

[55] А. И. Гипикус, նշվ. աշխ., մ. 1, էջ 79:

դրանք, իսկ այնուհետև գնում է Խարբերդի Վերին թաղում գտնվող Գյուլբեկյանի տունը, դարձնում է արհեստանոց, հրավիրում Ակնից վարպետներ, հավաքում անտեր ու որբ մնացած տղաներին ու աղջիկներին և գորգեր արտադրում: Նա սկզբում բանվորներին տալիս էր միայն ուտելիք և հագնելիք, բայց հետագայում, երբ ընդարձակում է ձեռնարկությունը, հասցնելով դազգահների թիվը մինչև 25-ի, սահմանում է նրանց համար որոշ աշխատավարձ՝ աղջիկներին՝ 1, իսկ տղաներին՝ 2 մեջիդ:

1910-1912 թթ. Պենեյանը բացում է գորգագործական ձեռնարկություններ նաև Խարբերդի Վարի թաղում, Սեզիրեյում և այլ տեղերում և հասցնում է դրանց թիվը 8-ի: Նա գորգերը ուղարկում էր վաճառելու զանազան երկրներ, մինչև անգամ Ամերիկա: 1908 թ. Պենեյանը հիմնում է Նյու-Յորքում մի խանութ, որտեղ վաճառում էր իր ձեռնարկությունների արտադրած հայկական գորգեր[56]: 19-20-րդ դարերում Եվրոպայում և աշխարհում հայտնի «թուրքական» գորգերը, ըստ էության հայկական գորգեր են. դրանք արտադրել են հայ գորգագործ արհեստավորները և՛ տնայնագործական, և՛ մանուֆակտուրային եղանակով: Այդ գորգերի անմիջական ստեղծողը հայ վարպետները, իրենց աշխատանքում գործածել են դարերով մշակված հայ գորգագործության գունային, գեղարվեստական և խորհրդանշանային լավագույն ավանդույթները: Պետականությունը կորցրած Արևմտյան Հայաստանի ապրանքները միջազգային շուկա էին մտնում որպես թուրքական ապրանքներ:

Երկրի մի քանի քաղաքներում հիմնվում են նաև մետաքսափաթաթման ձեռնարկություններ: Այդ քաղաքներից էր Խարբերդը: 1879 թ. Պողոս ծ. վ. Նաթանյանը գրում էր, որ Խարբերդում «Շերամի թել քաշելու համար պատվական ճախարակներու գործարաններ շինած ունին և երկուքը Միսաքյան և Քյուրքճիպաշյաններուն է, որ Հալեպի ու Շամի ապրանաց նման մետաքսեղենի տեսակներ կը գործեն»[57]:

Մետաքսափաթաթման ձեռնարկություն է ստեղծվում նաև Արաբկիրում: 1897 թ. «Բյուզանդիոնի» թղթակիցը գրում էր, որ այստեղ Պողոս Թերզիբաշյանը, որ շերամի սերմ էր վաճառում բնակիչներին և էժան-էժան գնում նրանց հանած բերքը, «հիմնած է գործարան մը ալ, որու մեջ աշխատելով կապրեին 5-10 տուներ»[58]:

[56] Տե՛ս Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ., էջ 376-377:

[57] Պ. Նաթանյան, նշվ. աշխ., էջ 136:

[58] Բյուզանդիոն, 1897, մայիսի 7:

Վանում, ըստ Վ. Փափազյանի վկայության, վաճառականներից մեկը, լինելով Կովկասում, մասնավորապես Շամախում, ուսումնասիրում է մետաքսի գործը և վերադառնալով հայրենիք՝ հիմնում է մետաքսագործական ձեռնարկություն: Նա «ունի մի ընդարձակ այգի, ուր կանոնավոր կերպով մշակում է հազարի չափ թթենիներ, արտադրում է բոժոժը, հանում է թել, ոլորում է իր իսկ ձեռքով շինված գործիքներով և հանում է մետաքսյա գործվածքներ»[59]:

Որոշ տեղերում մետաքսագործությունն անցնում է զարգացման գործարանային փուլի, որի մասին խոսք կլինի ստորև:

Արևմտյան Հայաստանի արդյունաբերության նշված ճյուղերից բացի մանուֆակտուրային ձեռնարկություններ են ստեղծվում նաև այլ ճյուղերում: 1880-ական թվականներին իտալացի կոմս քոնտ դը Բիզանին Երզրումում հիմնում է ծխախոտի մշակման ձեռնարկություն, որտեղ սկզբում աշխատում էր 50, իսկ հետագայում ավելի շատ գործավոր: Նրա ձեռնարկությունն ուներ գործավորների տղամարդկանց և կանանց բաժիններ: Վ. Փափազյանը գրում էր. «Կանանց մասը հետզհետե լցվում է բացառապես հայ գործավորուհիներով: Հետաքրքիր է տեսնել, թե նրանք ինչպես ամեն առավոտ խումբ-խումբ գնում են գործարան, որը գտնվում է Գյուլբաշիի մոտ, ծածկված իրենց խղճուկ ծածկոցներով»[60]:

1888 թ. երբ քոնտ դը Բիզանին մեռնում է, նրա ձեռնարկությունը փակվում է:

1880-ական թ. սկզբներին մի հայ Երզնկայում հիմնում է լուցկու ձեռնարկություն և արտադրում որակավոր լուցկիներ: Բայց հենց որ նա լուցկու տուփերի վրա տպագրում է «Լուցկիք Հայաստանի», թուրքական կառավարությունը փակում է նրա ձեռնարկությունը: 1888 թ. Վ. Փափազյանը գրում էր, թե ձեռնարկատերն «այժմ խեղճ վիճակի մեջ է՝ Երզրումում ընկած շարունակ դատ է վարում կառավարության հետ, կարծելով, թե պիտի հաջողվի վերականգնեցնել»[61]:

1860-1870-ական թ. երկրի մի քանի քաղաքներում ու գյուղերում գործում էին օղեթորողական և գինեգործական ձեռնարկություններ, որոնցից մի քանիսն աչքի էին ընկնում իրենց արտադրությամբ և, հավանաբար, նույնպես հասել էին մանուֆակ-

[59] Վ. Փափազյան, հ. 5, էջ 410:

[60] Նույն տեղում էջ 513:

[61] Վ. Փափազյան, հ. 5, էջ 514:

տուրային զարգացման աստիճանի: Ըստ Յա. Դ. Մալամայի վկայության՝ տակավին 1870-ական թ. սկզբներին էրզրումում և Կարսում կար օղեթորական երկու խոշոր ձեռնարկություն: Սակայն մահմեդական մոլեռանդ բնակչությունը, դրանց գոյությունը համարելով մեղսագործություն, հարձակվում է ձեռնարկությունների վրա ու քարուքանդ անում[62]: Հետագայում էրզրումում օղեթորական ձեռնարկությունը վերականգնվում է, դրա կողքին ստեղծվում են նաև նորերը: 1880-ական թվականներին նրանց թիվն արդեն հասնում էր 7-ի: Առանձնապես նշանավոր էր Շամբանյան եղբայրների օղեթորական ձեռնարկությունը, որը, սակայն, XX դ. սկզբին հումքի և փայտի պակասության պատճառով փակվում է:

Գինու արտադրության բնագավառում հռչակված էր Խարբերդը: 1870-ական թ. Գր. Արծրունին գրում էր. «Մենք պարծենում ենք մեր կովկասյան գինիներով, բայց ոչ մի գինի, իմ կարծիքով, չէ կարող համեմատվել Խարբերդի գինու հետ, որ ստացվում է մի գերազանց խաղողից»[63]:

Գ. Սրվանձտյանցը Խարբերդի գինին անվանում էր «անչափ պատվական»[64], իսկ Ա. Մ. Կոլյուբակինը 1880-ական թվականների կեսերին նշում էր, որ Խարբերդում գինեգործությունը բնակչության «տնտեսական կյանքում ունի հսկայական նշանակություն»[65]:

Խարբերդի գինին այնպիսի հռչակ ուներ Արևմտյան Հայաստանում, ինչպիսին ուներ Կախեթի գինին՝ Արևելյան Վրաստանում:

Գինեգործության բնագավառում հայտնի էին նաև Վանի վիլայեթի մի քանի գյուղերը, հատկապես Շահբազը: Մ. Միրախորյանը նշում էր, որ Շահբազում պատրաստում են «ամենապատվական գինի, որ համբավ ունի ի Վան, Տոսպ, որպես Պորտոյինն՝ ի Ֆրանսիա»[66]:

Իսկ Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ Շահբազի գինին «Շամբանիո գինին է Վանա համար. և ըստ մեզ՝ գերազանց ևս է. նայե ասոր գույնը Քրիստոսի անարատ արյուն, բաժակի մեջ լեցված

[62] Տե՛ս Я. Д. Малама. Средства... էջ 50:

[63] Գր. Արծրունի, նշվ. աշխ., էջ 15:

[64] Գր. Սրվանձտրյանց, Թորոս աղբար, մ. Բ., էջ 82:

[65] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 446:

[66] Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մ. Բ, էջ 249:

ատենը ջինջ փրփուրը, անմահական հոտը, իսկ խմածդ ժամանակ հարկ չկա ձեռնովդ ի բերան տանելու. նա իր հրապուրիչ գույնով, հոտով ու մզմզուն ձայնով կոկորդդ կը դյութե, ինքն կը ձգե»[67]:

Գինեգործությամբ աչքի էր ընկնում նաև Բալուն, հատկապես նրա Մազրաթ ու Կարաչոր նահիեները: Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Մազրաթում կային գյուղեր, որոնց բնակիչներն ապրում էին «գլխավորապես տնտեսության այդ ճյուղով»[68]: Ուշագրավ է, որ Բալուի գինին արտադրվում ու վաճառվում էր նույնպես «Խարբերդի գինի» անունով:

Սակայն ինչպես Խարբերդի, այնպես էլ Շահբազի ու Բալուի գինիները, ճանապարհների ու հաղորդակցության միջոցների անբավարար զարգացման պատճառով, վաճառվում էին գերազանցապես տեղում և քիչ քանակությամբ էին արտահանվում հեռավոր վայրեր: Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ Խարբերդում արտադրվում է մեծ քանակությամբ գինի, բայց արտահանվում է քիչ՝ ընդամենը 30.000-40.000 դույլ, որը վաճառվում է Ասիական Թուրքիայի հյուսիս-արևելյան մասերում: Գինու վաճառքի գործում աչքի են ընկնում քաղաքի մի քանի հայեր, որոնք վարում էին այդ գործը ավելի մեծ ծավալներով[69]:

1860-1870-ական թվականներին էրզրումում կային ապուխտի կամ բաստրմայի մի քանի ձեռնարկություններ, որտեղ արտադրական մեկ տարում մորթվում էին մեծ քանակությամբ խոշոր եղջյուրավոր անասուններ: Այդ ձեռնարկությունները հետագա տարիներին ավելի ընդարձակվեցին: Վ. Փափազյանը 1887 թ. գրում էր, որ ապուխտի պատրաստումը «միայն հատուկ է էրզրումին և այնտեղ կան մեծամեծ գործարաններ, որոնց սխտորը մատակարարում է... Վանը»[70]:

Այդ նույն ժամանակաշրջանում երկրի քաղաքներում ու գյուղաքաղաքներում գործում էին մի շարք կաշեգործական ձեռնարկություններ, որտեղ մշակում էին ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջյուրավոր անասունների մորթիները: Դրանց մեջ կային մի քանիսը, որտեղ կաշվի կամ մորթու մշակումը կատարվում էր կատարելագործված եղանակներով և մեծ ծավալներով: Ա. Թոխմախյանը հիշատակում էր, որ 1870-ական թվականներին

[67] Գ. Սրվանձտյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 101-102:

[68] Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 163:

[69] Տե՛ս Ա. Մ. Կոլյուբակին, նշվ. աշխ., էջ 446-447:

[70] Վ. Փափազյան, հ. 5, էջ 409:

Վանում կար մի ձեռնարկություն, որտեղ կաշվի մշակումը կատարվում էր եվրոպական եղանակով[71]:

Ամենայն հավանականությամբ, այդ ձեռնարկությունը պատկանում էր Պարթևյանին, որը սովորել էր Թիֆլիսում և հիմնել իր ձեռնարկությունը այնտեղի սարքավորանքով: Վ. Փափազյանը 1887 թ. գրում էր, որ Պարթևյանի ձեռնարկությունը մեկն է այն ձեռնարկություններից, որոնք պատիվ են բերում քաղաքին: Նրա ձեռնարկությունում «մի ծայրից մտնում է մորթը, և մյուս ծայրից ելնում են կաշիները, ինչպես այստեղ սովոր են ասել. այս օրերս նրա արտադրած կաշին փորձել տվին, լավ կաշի էր, և մտադրություն կա նոր տեսակներիցը էրզրում և Կ. Պոլիս ուղարկել»[72]: Սակայն թուրքական կառավարության վարած հակահայկական քաղաքականության հետևանքով, Պարթևյանի ձեռնարկությունը, ինչպես կնշվի ստորև, փակվում է: Այնուամենայնիվ, հետագա տարիներին կաշեգործությունը Վանում շարունակում է աճել: Եթե 1897 թ. այստեղ կար կաշեգործական 8, ապա 1910 թ.՝ 10 ձեռնարկություն[73]:

Այդ ձեռնարկությունների մեծ մասը իր սարքավորումներով հետամնաց էր, փոքր մասն էր, որ ուներ ժամանակակից կատարելագործված սարքավորումներ: Վերջիններիս տերերը կաշվի մշակման առաջավոր եղանակները ներմուծել էին Ռուսաստանից, հատկապես՝ Կովկասից: 1897 թ. մի թղթակից գրում էր, որ Վանում «միակ խաղաղորդարան մը կա, որու տերը՝ Հարություն աղա Չարուխչյանը, Ռուսիո մեջ սովորելով խաղաղորդությունն[74], եվրոպական սկզբանաց համաձայն կպատրաստեր մուճակի համար ամենաընտիր ու խիստ դիմացկուն կաշիներ»[75]:

1912 թ. մի այլ թղթակից գրում է. «Կաշիի գործարանները Վանում աճում են. կաշիի պատրաստելու նոր ձևեր բերել են Կովկասից հայերը»[76]:

Բացի Վանից, կաշեգործական պարզունակ ու կատարելագործված ձեռնարկություններ կային նաև երկրի այլ քաղաքներում: Էրզրումում դեռ 1870-ական թ.թ. կար 6 ձեռնարկություն, որտեղ մշակում էին մոտ 10.000 եզան ու գոմեշի կաշի և 20.000 ոչխարի ու այծի մորթի[77]:

Դիարբեքիրում 1907 թ. կար 10 կաշեգործական ձեռնարկություն, որտեղ, ըստ մի վկայության, աշխատում էին «հմուտ աշխատավորներ, որոնք լավ ըմբռնած են արհեստին գաղտնիքը»[78]:

Կաշեգործական մի քանի ձեռնարկություններ կային նաև Չնքուշում, որ գտնվում էր Դիարբեքիրից 36 ժամ հեռավորության վրա:

Խարբերդի վիլայեթի Թլկատին կամ Խույլու գյուղում, որտեղ կաշեգործությունը մուտք էր գործել Չնքուշից, 1870-ական թ., Գ. Սրվանձտյանցի վկայությամբ, «մեծ քանակությամբ գոմեշի և եզան կաշիներ կը տաբաղեն»[79]:

Ուշագրավ է, որ հետագա՝ 80-90-ական թ. կաշեգործությունը այդ գյուղում ընդարձակվում է և տալիս ամբողջ վիլայեթի մշակված կաշվի մոտ 2/3-ը[80]:

Մեր ունեցած տեղեկությունները հնարավորություն չեն տալիս ասելու, թե հիշատակված ձեռնարկություններից որն էր կապիտալիստական, որը՝ նահապետական, բայց ակներև է, որ վերջիններիս կողքին գործում էին նաև նորերը և տալիս ընդհանուր արտադրանքի որոշ մասը:

Աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը կաշեգործական կատարելագործված ձեռնարկություններում, ըստ երևույթին, նման էր Թիֆլիսի, Երևանի կամ Օրդուբադի գործարաններին, քանի որ Արևմտյան Հայաստանում ձեռնարկատերերը կաշվի մշակման առաջավոր եղանակը, ինչպես ասվեց, ներմուծել էին Կովկասից: Ըստ Ս. Գուլիշամբարովի վկայության, Թիֆլիսում բանվորները մի տեղում մաքրում էին կաշին, մյուսում՝ մշակում չաների վրա, երրորդում՝ ներկում, չորրորդում՝ չորացնում և այլն[81]:

---

[71] Տե՛ս Ա. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 24:

[72] Վ. Փափազյան, հ. 5, էջ 409:

[73] Տե՛ս «Բյուզանդիոն», 1897, մարտի 17, «Հորիզոն», 1912, դեկտեմբերի 28-ին, № 288

[74] **Խաղաղորդություն** - կաշվի մշակում:

[75] Հորիզոն, 1912, դեկտեմբերի 28, թիվ 288:

[76] Նույն տեղում:

[77] Я. Д. Малама. Средство... էջ 53:

[78] Բյուզանդիոն, 1907, մարտի 30:

[79] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Բ., էջ 79::

[80] Տես՝ Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 798:

[81] Տես՝ С. Гулишамбаров. Обзор фабрик и заводов тифлисской губерни.- Тифлис, 1883.- էջ 95-98:.

Վահե Հայկը իր հուշերում գրում էր, որ Խարբերդում կաշվի «մաքրելու, քերթելու և այլ նախնական աշխատանքները կը կատարվեին թուրք գործավորներու կողմեն, որոնք շարունակ ջուրերուն մեջ ընկած կաշիները լվանալու, մաքրելու, և ետքն ալ հասըլ ընելու աշխատանքով կը զբաղվեին տապաղխանայի մեջ»[82]:

Կաշին մշակելուց հետո վաճառում էին երկրի ներսում՝ գլխավորապես կոշկակարներին, մասամբ էլ արտահանում էին Կովկաս, Կ. Պոլիս և Թուրքիայի զանազան քաղաքները:

Արևմտյան Հայաստանում զարգացած էր նաև հնագույն արհեստներից մեկը՝ բրուտագործությունը, որը հիմնականում տարածված էր Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Էրզրումի վիլայեթների քաղաքամերձ մի շարք գյուղերում: Բրուտագործության մանուֆակտուրային զարգացման մասին որոշակի պատկերացում կազմելու համար հիշատակենք Վանից 5-8 կմ հեռավորության վրա գտնվող Զրաշեն գյուղը: Այդ գյուղի 20-30 տնտեսություն հիմնականում զբաղվում էր բրուտագործությամբ: Նրանք աշխատում էին գետնահարկային 6-7 արհեստանոցներում, որոնք կոչվում էին բանելատեղեր կամ բանտուններ: Այդ արհեստանոցներին կից կային մի քանի բաժանմունքներ, որոնցից մեկը կոչվում էր հոր, մյուսը՝ փուռ:

Բանվորների մի մասը հողը լցնում էր հորը և վրան ջուր լցնում, որոշ ժամանակ անց ցեխը տեղափոխվում էր բանտուն, որտեղ «պնդասրուն բանվորներ աղեկ մը կը կոխեն»[83]: Մյուսները շաղախում էին ցեխը սալաքարերի վրա և հանձնում վարպետին ու նրա աշակերտներին: Սրանք համապատասխան ճախարակի օգնությամբ շաղախից պատրաստում էին ցանկացած աման, քերոցով հարթում էին այն, թաթախում լպրծուն մալեզի մեջ և նախշում: Բանվորների մյուս մասը պատրաստված ամանը տեղափոխում էր փուռը և թրծում: Բրուտագործներն իրենց շինվածքները վաճառում էին կամ անմիջական սպառողներին, կամ խոշոր ու մանր առևտրականներին, որոնք «իշաբեռներով քաղաքը փոխադրելով՝ կամբարեն գլխավոր պողոտային վրա գտնվող իրենց խանութներուն մեջ և կծախեն հատով թե շատով: Շիջու վաճառորդներ ալ դարձյալ իշաբեռ կողովներու մեջ դրած ամեն տեսակ ամանեղեն, փողոցները կպտտին և ձայնելով խնդրողներուն կծախեն դրամով կամ հնով»[84]:

[82] Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 666:

[83] Բյուզանդիոն, 1906, սեպտեմբերի 26:

[84] Բյուզանդիոն, 1906, սեպտեմբերի 26:

Տիգրան Չթչյանը, ընդգծելով բրուտագործների հմտությունն ու արվեստը, գրում էր. «այնքան արագ, այնքան խաբուսիկ, այնքան ակնթարթային է սափորի մը շինությունն, որ եթե տեսած չըլլաս աչքովդ իսկ, պիտի չհավատաս, խորհելով թե միակտոր նեղաբերան սափոր մը ինչպես կշինվի, քանի որ այդքան նեղ ծակեն ներս՝ ձեռք չի մտնի»[85]:

Մուշի սանջակում բրուտագործությունը զարգացած էր և՛ արտադրության ծավալների, և՛ գեղարվեստական մշակվածության, և՛ կատարելության տեսակետից: Նույն հեղինակը գրում էր. «Մուշի բրուտությունը նկատելի առավելություններ ունի Վանի բրուտության վրա, թե՛ հողին և թե՛ արվեստին կողմանե»[86]:

Մշեցի բրուտագործներն իրենց շինվածքները արտահանում էին վաճառքի Էրզրում, Երզնկա և նույնիսկ Վան: Նրանք, ինչպես և վանեցի բրուտագործները, վաճառում էին հասարակ փարչը 10 փարայով, կուժը՝ 20-40 փարայով, պուտուկը՝ 10-40 փարայով, 1 լիտրանոց կարասը՝ 1 ղուրուշով, 2 լիտրանոցը՝ 2 ղուրուշով և այլն[87]:

Երկրի արդյունաբերության մի շարք այլ ճյուղերում մանուֆակտուրային ձեռնարկություններն առաջանում էին շնորհիվ այն բանի, որ վարպետը ընդարձակում էր իր արհեստանոցը և մեծացնում աշակերտների թիվը: Այդ տեսակետից բնորոշ էին դերձակությունն ու ոսկերչությունը: 1897 թ. մի թղթակից գրում էր, որ Վանում կա դերձակների 26 արհեստանոց, յուրաքանչյուրում միջին հաշվով աշխատում է 3-4 աշակերտ[88]:

Իսկ մի այլ թղթակից հաղորդում էր. «Վանա ոսկերչական համայնքը կկազմեն մոտ 90 վարպետ, ամփոփված 70-ի չափ խանութներու մեջ: Յուրաքանչյուր վարպետ միջին հաշվով ունի 4-5 աշակերտ»[89]:

Ընդհանրապես պետք է նշել, որ Վանում, հավանաբար նաև մյուս քաղաքներում, հատկապես XX դ. սկզբին աշակերտության համակարգը բավականին տարածված է եղել: 1907 թ. Խաչկունին գրում էր, որ Վանում «ամեն մի վարպետ իր կարողության համեմատ ունի 1-8 աշակերտ, բայց միայն առաջնակարգ, մատի

[85] Նույն տեղում:

[86] Բյուզանդիոն, 1906, սեպտեմբերի 26:

[87] Նույն տեղում:

[88] Բյուզանդիոն, 1897, մարտի 15:

[89] Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 227, օպ. 1, մ. 1, գ. 346, թ. 1:

վրա համրվող վարպետներ կարող են պահել 8-9 աշակերտ, միջակ դասու վարպետները 4-5 հատ որ պահեն՝ դեռ շատ է: Աշակերտներից ամենքն ալ գրեթե 10-20 տարու պատանիներ են»[90]:

Արհեստավորական կամ մանր ապրանքային արհեստանոցներում աշակերտների թվի մեծացումը, ըստ էության, նշանակում էր դրանց անցումն ու վերածումը մանուֆակտուրային արտադրության: Վ. Ի. Լենինը գրում է. «աշակերտությունը մանուֆակտուրայի բնական ուղեկիցն է... Աշակերտության չքանալը կապված է մանուֆակտուրայի ավելի բարձր զարգացման ու խոշոր մեքենական ինդուստրիայի առաջ գալու հետ. երբ մեքենաները minimum-ի են հասցնում ուսուցման ժամանակամիջոցը կամ երբ այնքան հասարակ մասնագործ գործառնություններ են զատվում, որ դրանք երեխաներին էլ մատչելի են լինում»[91]:

* * *

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանի արդյունաբերության որոշ ճյուղեր զարգացման մանուֆակտուրային աստիճանից անցնում են գործարանային աստիճանի: Այդպիսի ճյուղերից մեկը մետաքսագործությունն էր, որն աստիճանաբար գործարանային աստիճանին էր անցնում ինչպես Խարբերդում, նույնպես և Դիարբեքիրում, Մեզիրեում և այլ քաղաքներում: Խարբերդում մետաքսագործական գործարանի հիմնումը կապված է Գրիգոր և Սարգիս Քյուրքճյան եղբայրների անվան հետ: Նրանք սկզբում միանում են Հովակիմ Մարուքյանի հետ, որը 1870 թ. Բրուսիից գալիս է Խարբերդ և հիմնում է մետաքսամշակման ձեռնարկություն[92]: Եղբայրները որոշ ժամանակ հետո բաժանվում են Մարուքյանից և 1881 թ. հիմնում են իրենց սեփական ձեռնարկությունը: 1883 թ. Գրիգորը իր որդուն՝ Խոսրովին ուղարկում է Ֆրանսիա՝ Լիոն՝ մետաքսի գործը ուսումնասիրելու նպատակով: Խոսրովը, Վահե Հայկի վկայությամբ, «1884-ին անհրաժեշտ մեքենաներ առնելով կը վերադառնա Խարբերդ, հոն կը վերանորոգե գործարանը և կանցնի գործին գլուխը: Շոգեշարժ մեքենաները ծանր աշխատանքով գործի կը

[90] Մշակ, 1907, նոյեմբերի 3, թիվ148:

[91] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 547-548:

[92] Տե՛ս Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ., էջ 90:

լծե... և հրապարակ կը հանե հազվագյուտ գեղեցկությամբ մետաքսե ապրանքներ»[93]:

1895 թ. հայկական կոտորածների ժամանակ թուրքերը հիմնահատակ ավերում են Քյուրքճյանների գործարանը: Խոսրովն իր պատիվն ու գույքը փրկելու համար ստիպված է լինում ընդունել մահմեդականություն: Նա կոտորածներից հետո վերականգնում է գործարանը և այն ավելի կատարելագործելու նպատակով իր երկու որդիներին ուղարկում Ամերիկա: Մ. Ճիզմեճյանն իր հուշերում գրում է, որ XX դ. սկզբին Քյուրքճյանների գործարանը ավելի ընդարձակվեց ու զարգացավ և մինչև մեծ եղեռնը այն «մետաքսի ճարտարվեստի մեծ համբավ կվայելեր»[94]:

Մեզիրեում, որ Խարբերդից ոչ շատ հեռու էր, մետաքսագործական գործարան է հիմնադրում Գրիգոր Իփեկճյանը: Իփեկճյանը հայտնի էր նաև Իփեկճյան Արաբկիրցի անունով: Նա երիտասարդ հասակում եղել էր Լիբանանում և այնտեղ Հովսեփ Արմենյան անունով մի հայ մասնագետի մոտ սովորել էր մետաքսի գործը: Այնուհետև մեկնել էր Անգլիա, ապրել 7 տարի, այնտեղ նույնպես ուսումնասիրել էր մետաքսի գործը: 1869 թ. վերադառնում է հայրենիք և Մեզիրեում հիմնում մետաքսամշակման ձեռնարկություն, որը 1881 թ. կատարելագործում և վերածում է մետաքսագործական գործարանի: Նիկողոսյանն այդ տարիներին գրում էր, որ Գրիգոր Իփեկճյանի որդիները «հիմնեցին իրենց կատարելագործված մեքենաներով առաջին գործարանները մետաքսից ու բամբակից կերպասներ շինելու համար»[95]:

1889 թ. Իփեկճյան եղբայրները բերում են կատարելագործված գործիքներ ու մեքենաներ Եվրոպայից ու Ամերիկայից, ընդարձակում են իրենց գործարանը և մեծացնում նրա արտադրանքը: 1890-ական թվականների հայկական ջարդերի ժամանակ նրանց գործարանը նույնպես տուժում է, բայց հետագայում այն վերականգնվում է և շարունակում է աշխատել նոր թափով:

Դիարբեքիրում առաջինը մետաքսագործական գործարան կառուցեց Մարտիրոս Ադդարյանը: Հետագայում նույնպիսի գործարաններ կառուցեցին նաև Թեքեճյանը, Աբդալյանը, Բոյաջյանը, Բակալյանը, Մյութևելյանը և ուրիշներ: 1907 թ. մի հաղորդման մեջ կարդում ենք, որ մետաքսագործության «արհեստն ամենեն առաջ հոս մտած է Մարտիրոս էֆ. Ադդարյանի միջոցով,

[93] Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 649:

[94] Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ., էջ 90:

[95] Մշակ, 1881, մայիսի 15, թիվ 87:

որ զանիկա Ամերիկայի մեջ սորված ու անկե հետը բերած է թե՛ բանելու հմտություն, և թե՛ անոր մեքենական կահ ու կազմածքը: Հետզհետե Թերքեճյան, Ապտալյան, Պոյաճյան, Պագալյան ու Մյութևելյան էֆենդիներն ալ հիմնեցին միևնույն դրությամբ գործարաններ, որք այսօր հարյուրավոր մարդերու ապրուստն ապահոված են»[96]:

Բացի այդ քաղաքներից, մետաքսագործական գործարաններ կային նաև Ամասիայում, Թոքատում և այլ քաղաքներում:

Մետաքսագործական գործարանների տեխնիկական կառուցվածքի մասին քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմելու համար բերենք մետաքսի գործի վարպետ Ասլանյանի հետևյալ տեղեկությունը: 1904 թ. նա գրում էր, որ Մեզիրեում Իփեքճյանների «բուն գործարանը 4 հարկաբաժիններէ բաղկացած է, ու տակավին նորի մը շինության ալ ձեռնարկած են... Առաջին հարկաբաժինեն ներս ապշոտ մատ կխածնենք, երբ քսան մեքենաներու շշուկոցով ու շխշխկոցով բանիլ կդիտենք, որք ամենայն կանոնավորությամբ ու նրբությամբ կգործեն ու կգործեն անկուշտ գլանները կշտացնելով, եվրոպականին համահավասար զուտ մետաքսե նրբահյուս ու ոսկերիզ ծաղկեզարդ կերպասներ, որոց ի տես մարդ կհիանա... Ամեն մեկ մեքենայի գլուխը կեցած են երկու գործավորուհիք, մեքենաներու պես անխոս ու անընդհատ գործող. մին կտրված թելը կփակցնե, մյուսն անիվը գործելու կառաջնորդե, ու այսպես շարունակաբար... Զարմացած կը մտնենք երկրորդ հարկաբաժինը և սրված ու լարված ուշադրությամբ կդիտենք հում-հում քաշված մետաքսի թելերն հոս ավելի կմաքրվին, ոլորք կառնեն ու հավասար նրբության մը վերածված ու ներկված՝ գործելու տերին կփոխադրվին. կա նաև մեքենա մը, որ հյուսված թել-խայթան կշինե՝ առանց դուլ ու դադարի ու առանց գործավորի:

Կմտնենք երրորդ հարկաբաժին. հոս կան խոշոր մեքենաներ, որք բամբակի ոլորած քուլաները մանած թելի կվերածեն մինչև 16 թիվ բարակությամբ. կան երեք խոշոր մեքենաներ՝ 600 իլնոց. մեկ մեքենա Քարտինճին, որ գզած բամբակը պարուցք կշինե, մեկ մեքենա Լեպ, որ հում բամբակով կգզե ու կլորակ բամբակի խոշոր պարուցք դուրս կուտա և սաճե գլաններուն մեջ կդրվին. երկու կիներ բամբակը տափարակության մը վրա հարթ կփռեն միշտ, մեքենան զայն առնելով կտանի կթխմե կես գլանաձև ապակեդարանին մեջ և հոն, այդ ապակեդարանին մեջ կսկսի ծյունի մազմզուկ մը՝ հազար տեսակ խաչի ձևերով. ապակիեն

[96] Բյուզանդիոն, 1907, հունվարի 22-ին:

ներս կատարյալ ձմեռի մը երևույթն է. բադիլ-բադիլ վերեն վար կծյունե կարծես. ու ահա քիչ վերջ այդ մազածը կը վերածվի բամբակե կլորակ փաթթվածներու և կդիզվի մասնավոր խողովակներու մեջ: Մեկ մեքենա տրոյին, որ կլոր սաճերուն մեջ փաթթված բամբակներն մանելով ավելի նրբացուցած ու բարակացուցած քուլայի վերադարձնելով թել քաշելու վիճակին կհասցնե: 600 իլնոցներ քուլա բամբակները մանելով կարժաներու վրա կփաթթեն մանածի վերածած: Երկու շոգեշարժ մեքենաներ կան, մին փոքր, որ անգործածելի է, իսկ մյուսը մեծ, որ 12 ձիու ուժ ունի. շարունակ կդարձնե բոլոր մեքենաները: Չորրորդ հարկաբաժինն անշուք ու աղտեղի շենք մ'է. հոս խոզակներն եռացած կաթսաներու մեջ խաչի ելած են՝ վրա տալով միշտ իրենց նուրբ հանդերձանքեն ու մերկացած կնետվին աղբանոց, հոստեղի աշխատավորք կիներ ու աղջիկներ են, որք շոգիին մեջ քրտնաթոր՝ առավոտե ցերեկո անդուլ թել կքաշեն: Այս հարկաբաժինին գործիք ու մեքենայք տեղային շինվածք են»[97]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիների նախօրյակին Իփեկճյանների կամ ֆաբրիկաթորյանների գործարանում աշխատում էր 250-300 բանվոր. որոնք իրենց տերերի համար ստեղծել էին մոտ կես միլիոն օսմանյան ոսկու հարստություն:

Շատ հավանական է, որ մետաքսագործական գործարանները նույնպիսի տեխնիկական կառուցվածք և բանվորական անձնակազմ ունեին նաև Խարբերդի, Դիարբեքիրի, Ամասիայի և այլ քաղաքների գործարանները: Գրեթե բոլոր գործարաններն արտադրում էին նուրբ, բարձրաճաշակ և բարձրորակ գործվածքներ: Նիկողոսյանը դեռ 1881 թ. գրում էր. «Մի քանի բարեկամների հետ... գնացինք Քարբերդից և Արաբկիրից ստացած մետաքսյա ու բամբակյա նոր գործվածներ տեսնելու համար, մեր մեջ կար նույնպես Հայաստանում ծառայող մի հայտնի օտարազգի պաշտոնյա. տեսնելով Հայաստանի նոր արդյունքը և հարցնելով նորա գինը, նա հավատացնում էր, որ ոչ մի եվրոպական ապրանք չի կարող մրցել իր աչքի առաջ դրածների հետ դիմացկունության և էժանության մեջ»[98]:

Արևմտյան Հայաստանի մետաքսյա գործվածքները վաճառվում էին ոչ միայն Թուրքիայում, այլ նաև Ռուսաստանում, մասնավորապես Կովկասում և եվրոպական երկրներում:

Սակայն 1915 թ. հայկական կոտորածների ժամանակ Թուր-

[97] Բյուզանդիոն, 1904, օգոստոսի 13:

[98] Մշակ, 1881, մայիսի 15, թիվ 87:

քիայի կառավարության մշակած հայաջինջ քաղաքականության զոհը դարձան և՛ գործարանատերերը, և՛ բանվորները. իսկ մետաքսագործական գործարանները, ի թիվս Արևմտյան Հայաստանի այլ նյութական և մշակութային արժեքների, գազանաբար ոչնչացվեցին:

Անհրաժեշտ է նշել, որ մետաքսագործական գործարաններին կից կային նաև մանարաններ, որտեղ բամբակից թել էին մանում և օգտագործում ոչ միայն սեփական արտադրական կարիքների համար, այլ նաև վաճառում էին: Այդ մանարաններն, ըստ էության, գործարաններ էին, որտեղ կային կատարելագործված մեքենաներ և աշխատում էին բազմաթիվ բանվորներով: 1904 թ. ականատեսներից մեկը գրում էր. «Խարբերդի մեջ մեկ քանի տարի առաջ մանարան մը հաստատվեցավ մետաքսի գործարանին կից, որ երկար ատեն ի վեր բարգավաճած վիճակ ունի: Մանարանն ունի անգլիական նոր տեսակի մեքենաներ, ինչպես նաև շոգեշարժ մեքենա մը: Դժբախտաբար, վառելիքի գինը բարձրացած ըլլալով հոս, արգելք կըլլա գործարանին կանոնավոր բանելուն»[99]:

Բացի տեքստիլ արդյունաբերությունից, զարգանում էր նաև մեքենաշինությունը: Խարբերդում Բարիկյան եղբայրները, (մեկը զինագործ էր, մյուսը՝ ոսկերիչ), տակավին 1870 թվին, հիմնում են երկաթածուլական մի ձեռնարկություն: 1880 թ. նրանցից մեկը՝ Մանուկը, մեկնում է Ամերիկա՝ մեքենաշինության մեջ կատարելագործվելու նպատակով: Ուստրում նա հանդիպում է Տիգրան Թերզյանին, որը, աշխատելով այդ քաղաքի մեքենաշինական գործարաններից մեկում, ձեռք էր բերել մեծ գիտելիքներ ու հմտություն: Մանուկը նրան առաջարկում է վերադառնալ հայրենիք և աշխատել իր ձեռնարկությունում, և Թերզյանը «կարգ մը գործիքներ առած, ինչպես ճախարակ, ձևավորիչ մեքենա, երկաթ ծակող մեքենա, շոգեմեքենա, հովահար և ուրիշ շատ մը հարակից մասեր, կը մեկնի հայրենիք, որուն կարոտը կը քաշեր շարունակ»[100]:

Բարիկյան եղբայրները և Թերզյանը վերակառուցում են իրենց ձեռնարկությունը, բացում են նոր բաժիններ և համալրում այն նոր բանվորներով: Վահե Հայկը այդ կապակցությամբ գրում է. «Բարիկյան եղբայրներու գործարանը այլևս կարելի կատարելության կը հասնի, նոր հնոցներ կը շինվին, երկաթը, պղինձը, արույրը կսկսին հալիլ և ջուրի պես վազել՝ արտադրելով ցորենի, բամբակի և երկրագործության հատուկ բազմաթիվ գործիքներ»[101]:

Թուրքական կառավարությունը պատճառաբանելով, թե գործարանում զենք է արտադրվում, պահանջում է փակել այն: Սակայն Բարիկյան եղբայրները, կաշառելով պաշտոնյաներին, կարողանում են մի կերպ պահել գործարանը:

Մեքենաշինական երկրորդ ձեռնարկությունը հիմնվում է Վանում՝ հավանաբար 1890-ական թվականներին: Այդ ենթադրությունը հաստատում է այն հանգամանքը, որ Վ. Փափազյանը 1887-1889 թթ. Վանի արդյունաբերական նշանավոր օբյեկտների մասին խոսելիս ոչինչ չէր հիշատակում դրա մասին:

Վանի մեքենաշինական ձեռնարկությունը հիմնադրել է Ալեքսան անունով մի հայ: Նա մեքենաշինական գործը ուսումնասիրել էր Եվրոպայում և վերադառնալով հայրենիք՝ ձեռնամուխ է եղել մետաղյա զանազան շինվածքների, ինչպես նաև հասարակ ու բարդ գործիքների արտադրությանը: 1897 թ. մի հաղորդման մեջ կարդում ենք. «Վարպետ Ալիքսան անունով անձ մը երկար տարիներ ծառայելով եվրոպական մեքենայի գործարաններու մեջ, տեղս (Վանում-Ա. Հ.) բացած է բավական խոշոր արհեստանոց մը, մեծ և կարևոր մեքենաներով ու գործիքներով՝ կառավարութենեն երաշխավորված: Վարպետ Ալիքսանը կը շինե ջրհան մեքենաներ, եվրոպական կառքեր, կը ձուլե գործիքներ, զանգակներ և կպատրաստե երկաթեղեն ամենադժվար առարկաներ»:

Ցավոք մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն տալիս ավելի մանրամասն բնութագրելու մեքենաշինական այդ ձեռնարկությունները, բայց հայտնի է, որ դրանց շինվածքներն ու մեքենաները վաճառվում էին ոչ միայն երկրի ներսում, այլ նաև արտասահմանում, գլխավորապես Պարսկաստանում:

Մի քանի խոսք լեռնային արդյունաբերության մասին.

Արևմտյան Հայաստանը հարուստ էր բազմաթիվ օգտակար հանածոներով՝ երկաթով, պղնձով, նավթով, քարածխով, ոսկով, արծաթով որոնք գտնվում էին երկիր տարբեր շրջաններում: Երկաթի հանքեր կային Սվազի վիլայեթի Կիպիլ-դաղ լեռներում ու Դիվրիգի կազայում, Դիարբեքիրի վիլայեթի Արղան-Մաղեն սանջակում, Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակի Կոնդեմիր ու Ալագյազ սարերում, Սասունի կազայի Տալվորիկ նահիեում և Էրզրումի վիլայեթի Երզնկա սանջակում:

Պղնձի հանքերը տարածված էին Խարբերդի վիլայեթի Մալաթիա, Դիարբեքիրի վիլայեթի Արղան-Մաղեն և Բիթլիսի վիլայեթի Սղերդ սանջակներում, ինչպես նաև Վանի վիլայեթի Կարճ-

[99] Բյուզանդիոն, 1904, մայիսի 21:

[100] Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 645:

[101] Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 645, տե՛ս նաև Մ. Ճիզմեճյան, նշվ. աշխ. էջ 90:

կան, Կարկառ և Կեցան գավառներում:

Ոսկու և արծաթի հանքերը գլխավորապես տարածված էին Դիարբեքիրի վիլայեթի Արղան-Մադեն և Էրզրումի վիլայեթի Երզնկա սանջակներում:

Քարածխի հանքերը տարածված էին Էրզրումի վիլայեթի Բայազետ սանջակում և Վանի վիլայեթի Նորդուզ գավառներում:

Նավթի հանքեր կային Վանի վիլայեթի Բերկրի գավառակում և Երզրումի վիլայեթի Էրզրում սանջակում:

Աղահանքերով հարուստ էին Խարբերդի վիլայեթի Չարսանճագ կազան, Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակը, Էրզրումի վիլայեթի Էրզրում, Երզնկա, Կարս սանջակները և Վանի վիլայեթի լճափնյա մի շարք գյուղերը՝ հատկապես Ճանիկը:

Երկիրը հարուստ էր նաև հանքային ջրերով ու ծծմբահանքերով: Գ. Արծրունին գրում էր. «Ամբողջ Հայաստանը լի է հանքային ջրերով և հանքերով: Շատ տեղ մարդ գուշակել կարող է, որ գետնի տակ պահված են հարուստ հանքեր. որովհետև ամեն քայլափոխում հոսում են առատությամբ հանքային ջրեր»:

Իսկ Ա-Դոն հետևյալ կերպ էր նկարագրում Եփրատի բնական կամուրջի շրջակայքում ընկած ծծմբահանքերը. կամուրջի «չորս կողմից բխում են բազմաթիվ տաք ու գոլ ծծմբային և կրային հատկություն ունեցող հանքային ջրեր. տեղ-տեղ նրանք խփում են իբրև շատրվաններ, տեղ-տեղ նրանք փոքրիկ բլուրներ են գոյացնում և տեղ-տեղ դադարելով, մի այլ տեղից բխում. ամբողջ շրջակայքը ծծմբի հոտով է լցված և ծծմբագույն փոշիով ծածկված: Եվ այդ ջրերի քարացումից առաջացած թմբիկներն իրենց մեջ այնքան ծծումբ են պարունակում, որ նրանց կոշտերը կրակին մոտեցնելով, այրում է տեղի ունենում և ծուխ ու հոտ բարձրացնում... բնական կամուրջից մի փոքր վեր Եփրատի աջ ափին գտնվում է Դիադինի հանքային ջրերի մեծ ակը, ըստ տեղացիների, գլխավոր Գերմավը: Դա իր տաքության աստիճանով և ջրի քանակությամբ մի գանձ է. ամառվա երեք ամիսների ընթացքում գալիս են այդտեղ ոչ միայն մոտիկ շրջաններից, այլ նաև սահմանակից Ռուսաստանից, մնում են օրերով, նույնիսկ շաբաթներով այդտեղ և օգտվում այդ ջրից»:

Արևմտյան Հայաստանի հանքային հարստությունները որոշ տեղերում մշակվում էին: Արղան-Մադենում գործում էր պղնձի երկու հանք, որտեղ աշխատում էր 300 բանվոր և տալիս տարեկան 40.000 ոսկու եկամուտ[102], իսկ Էրզրումի վիլայեթում բանում էին աղահանքերը, որոնք 1870-ական թթ. սկզբներին

[102] Տե՛ս «Բյուզանդիոն», 1906, ապրիլի 18:

տարեկան արտադրում էին 476.472 փութ աղ[103]:

Բոլոր հանքահորերում հումքի հանումը կատարվում էր ամենապարզունակ եղանակով, իսկ տեղափոխումը՝ շալակով կամ գրաստներով: Վահե Հայկը իր հուշերում գրում էր, որ Պախըր Մադենի պղնձահանքերում մեքենա չկար, «ամեն աշխատանք պիտի կատարվեր մարդկային բազուկով ու ձեռքերով, ի բաց առյալ տասը ոտքի բարձրությամբ կաշիի հսկա փքոցները, որոնք կը դառնային մերձակա գետեն բերված ջուրով: Այնպես որ, երբ ջուրը կը սառեր, հանքային աշխատանքները կը դադրէին, մինչև որ ջուրը սկսեր կրկին վազել: Այս փքոցներուն պարտականությունն էր մետաղը հալեցնող փայտե կրակին հով տալ, կրակը վառ պահել և անոր տաքության աստիճանը բարձրացնել: Վառելանյութը փայտ էր... Հանքը կփորեին բահով և բրիչով: Հույն գործավորները՝ մեկ մեկ կողովներ շալկած, փորված հողը կը լեցնեին կողովներուն մեջ և երկրի խորեն կը բարձրանային վեր՝ հարյուրավոր աստիճաններ կտրելով: Վեր բերված նյութեր կը թափեին մասնավոր տեղեր: Այս հողախառն նյութերը վառելով՝ մետաղը կը զատեին հողեն: Այս գործողությունը կը կոչեին Ֆիլիքա... հանված մետաղը հալեցնելու և ձուլելու համար կը փոխադրվեին գետին եզերքը շինված ձուլարաններուն մեջ (խալխանե): Պղինձը կարմիր ջուրի նման կը հոսեր ձուլարաններուն մեջ, հոն կը կաղապարվեր, կը պաղեր, որպեսզի պատրաստ ըլլար հեռավոր տեղեր, Կ.Պոլիս և մինչև Անգլիա ղրկելու»[104]:

Էլ ավելի պարզունակ էր աղի արտադրության եղանակը: Ա-Դո-ն գրում էր, որ Խնուսի Թաթոս-տուզլի գյուղում եղած աղահանքը, որը քարի աղահանք չէր, այլ աղահանքի աղբյուր, «շահագործում է կառավարությունը մի պարզունակ ձևով. ջրով պտտվող անիվը իջեցնում է հորի մեջ և աղաջրով լիքը դուրս բերում թոկի վրա ամրացած կաշյա պարկերը և դատարկում փայտյա նավերի մեջ. այդտեղից աղաջուրը գնում-թափվում է մի մեծ տարածության վրա շինված ածուների մեջ. արեգակի ճառագայթների տակ մի քանի օրվա ընթացքում գոլորշանում է աղաջուրը, ածուների հատակում թողնելով ավազանման աղի բավականին հաստ շերտը... Աղահանքում աշխատում են 10-15 խնուսցի հայեր... որոնք ստանում են ամսական 130 կուռուշ (10 ռ. 40 կոպ.) վարձ: Աղի լիտրը, մոտավորապես կես փութը, գնահատված է 128 փարա կամ 25 1/2 կոպեկ»[105]:

[103] Տե՛ս Я. Д. Малама. Средства... էջ 27:

[104] Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 657-658:

[105] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 182:

Երկրի բոլոր հանքերը իրավաբանորեն համարվում էին պետական սեփականություն, բայց դրանց մշակումը կազմակերպում էր կա՛մ պետությունը, կա՛մ աղաները, կա՛մ կապալառուները: Պետությունն ու աղաները իրենց հանքահորերում սովորաբար կիրառում էին հարկադիր աշխատանք, իսկ կապալառուները՝ վարձու: Պետությունը հաճախ գյուղացիներից հանքահորերում հարկադիր աշխատելու փոխարեն փող էր վերցնում և այդ փողով վարձում էր գործավորներ: Սակայն, ինչպես դժվար չէ եզրակացնել Ա-Դոյի վերոհիշյալ տվյալներից, նա գործավորներին վճարում էր շատ չնչին աշխատավարձ:

Հանքանյութի մեծ մասն առաքվում էր արտասահման, իսկ մյուսն իրացվում էր տեղում. արհեստավորները գնում էին և զանազան շինվածքներ պատրաստում:

Սակայն Արևմտյան Հայաստանի հանքերի մեծ մասը գլխավորապես թուրքական կառավարության վարած տնտեսական և քաղաքական անհեռատես քաղաքականության հետևանքով չէր մշակվում: Կառավարությունն ամենից առաջ մեծ դժվարություններ էր ստեղծում կապալառուների համար. եթե որևէ մեկը ցանկանում էր վարձակալել մի որևէ հանքահոր, պետք է անպայման ստանար սուլթանի թույլտվությունը, իսկ դրա համար նա պետք է դիմեր մի շարք պաշտոնյաների և, որպես կանոն, նրանց բոլորին կաշառք տար: Հաճախ էր պատահում, որ սուլթանը կամ պաշտոնյաները տարիներ շարունակ ձգձգում էին կապալառուի դիմումի պատասխանը, պահելով նրան սպասողական վիճակի մեջ, իսկ այնուհետև մերժում էին: Որպես օրինակ կարելի է նշել այն փաստը, որ անգամ թուրքական մի ընկերություն Վանի սանջակի նավթային հարստությունների շահագործման իրավունքը ստանալու համար սպասել է ավելի քան տասը տարի: Ի. Գոլոբորոդկոն գրում էր. «Կարելի էր ամբողջ կյանքում լարված սպասել և մեռնել՝ չստանալով սուլթանի հրովարտակը»[106]:

Կառավարությունը եթե անգամ տալիս էր հանքահորի արդյունահանման իրավունքը, ապա թույլ չէր տալիս կապալառուներին ներմուծելու եվրոպական մեքենաներ, զգուշանալով այն մտքից, թե դրանց հետ երկիր մուտք կգործեն հեղափոխական գաղափարներ: Եվ կապալառուները ստիպված հանքահորը մշակում էին պապենական եղանակով: Ճեմիլը 1906 թ. գրում էր. «Բաբերդի մոտ մի պղնձահանք կա, զոր կը շահագործեն մի թուրք փաշա և հայ մը: Կառավարությունը չի թողնուր, որ մարդիկը գործիք, մեքենաներ բերել տան և ատոնցմով ստանան

[106] Ի. Ի. Գոլոբորոդկո, նշվ. աշխ., էջ 144:

պղինձ: Իսկ շահագործումը տեղի կունենա կատարյալ նախնական ձևերով»[107]:

Կառավարությունը խուսափում էր նաև հանքերը եվրոպական պետություններին պայմանագրով տալուց, վախենալով, թե նրանք դրանով առիթ կունենան միջամտելու իր ներքին գործերին: Եվ եվրոպական պետությունները, որքան էլ իրենց տնտեսական շահերին հետամուտ լինեն, այսպես թե այնպես կնպաստեին Արևմտյան Հայաստանի լեռնային արդյունաբերության զարգացմանը:

Թուրքական կառավարության վարած քաղաքականությունը խոչընդոտում էր Արևմտյան Հայաստանի ոչ միայն լեռնային, այլ նաև մշակող արդյունաբերության զարգացմանը: Ձեռնարկատերերի անձն ու գույքը պաշտպանված չէին[108]: Ի լրումն ազգային խտրականության, իշխում էր նաև տնտեսական հալածանքը. ստիպում էին գործարանատերերին կա՛մ վճարել կործանարար հարկեր, կա՛մ կատարել ծանր պարհակներ, որոնց հետևանքով գործող ձեռնարկությունները երբեմն վերստին փակվում էին: Վանում նահանգական իշխանությունները 1880-ական թթ. կեսերին պարտադրում են Պարթևյանին զորքի համար կարել 400 զույգ կոշիկ, և նա, ինչպես գրում էր Վ. Փափազյանը 1887 թ., «այժմ զբաղված է զինվորների համար 400 զույգ կոշիկ կարելով, որոնց փողերը ստանալու շատ կասկածում է և տխուր մտածության մեջ է գտնվում: Կկործանվի, եթե չվճարեն, որովհետև այդ անխոնջ երիտասարդը եկել է իր հայրենիքը, պարտք է արել և շինել գործարան, որտեղից պիտի կարողանա գործարանը գրավից ազատել. ուրիշ ճար չկա. աղոթել պետք է այս Պար-

[107] Երկրի Ձայն, 1906, թիվ 11, էջ 10: Կառավարությունը արգելակում էր մեքենաների ներմուծումը ոչ միայն հայթայթող, այլ նաև մշակող արդյունաբերության մեջ գործադրելու համար: Ճեմիլը նշում էր, որ Էրզրումի սանջակում շնորհիվ ճակնդեղի առատության շատ հաճախ խոսք է լինում շաքարի գործարան հիմնելու մասին: «Բայց ամեն անգամ, որ խոսքը մեքենաներուն և գործիքներուն է եկեր, այդտեղ ալ կանգ են առեր, որովհետև Թուրքիայի մեջ մեքենաներու մասին մտածել, եվրոպական աշխարհի մեջ ապրել ըսել է» (տես Երկրի Ձայնը, 1906, № 11, էջ.10):

[108] Թուրքական իշխանությունների թույլտվությամբ շեյխ Ուբեդուլլայի հրոսակախմբերը 1880-ական թվականների սկզբներին այնպես ավերեցին Արավելյանցի նավթային հանքահորերը Բերկրիհում, որ նա անիմաստ համարեց վերսկսել գործը (տես՝ «Մշակ» 1889, նոյեմբերի 14, թիվ 130):

թեյանի համար, ալլահը նրան փրկե վաշխառուների ձեռքից»[109]:

Ալլահը, իհարկե, չփրկեց Պարթեյանին. նրա կաշեգործական ձեռնարկությունը փակվում է:

Կառավարությունը 1890-ական թթ. վերջերին որոշում է. հարկեր դնել անգամ բրուտագործների վրա՝ տարեկան 2,5 լիրա և հավաքել նրանց եկամուտի 5 %-ը: Ժամանակակիցներից մեկը գրում էր, որ եթե որոշումը ի կատար ածվի, ապա Բիթլիսի վիլայեթի Ղուլթիկ գյուղի բրուտագործները ստիպված կլինեն թողնել իրենց զբաղմունքը[110]:

Բացի թուրքական կառավարությունից, Արևմտյան Հայաստանի արդյունաբերության զարգացմանը խոչընդոտում էր նաև եվրոպական պետությունների գաղութային քաղաքականությունը: Նրանք Թուրքիա և Արևմտյան Հայաստան էին արտահանում արդյունաբերական ապրանքներ և ներմուծում գյուղատնտեսական մթերքներ: Նրանք իրենց արդյունաբերական ապրանքներով համարյա ամենուրեք դուրս էին մղում Արևմտյան Հայաստանի տեքստիլ արդյունաբերությունը, որը, ինչպես արդեն վերը ասվեց, դեռևս զարգացման մանուֆակտուրային աստիճանում էր: Ահա այդ բանն ապացուցող մի քանի փաստեր:

Բիթլիսում 1860-ական թվականներին գործում էին 70.000-80.000 լիտր բամբակ, իսկ 1880 թ.՝ «հազիվ 10 հազ. լիտր կգործվի»[111]: Այստեղ «առաջ շատ էին հայ կտավագործներ (ջուլհակներ), բայց հիմա նոցա թիվը հարյուրի հազիվ է հասնում, մյուսները ցրվել են զանազան տեղեր»[112]:

Արաբկիրում մանուսայագործությունը ծաղկում էր, իսկ այժմ այն «մեծապես ընկած է»[113]:

Կամ՝ Արաբկիրում «մանուսայագործությունը երբեմն շատ ծաղկած էր... այնպես որ կըսվի թե 1600 ընտանիք կը շահվեին ադով...», բայց այդ «արհեստը շատ ընկավ այստեղ... այժմ արհեստավորների թիվը 200-ի և գործավորների թիվը 1000-ի կը հասնի»[114]:

Վանում «Շալի գործարանք այժմ ինկած վիճակի են ինչպես և

[109] Վ. Փափազյան, հ. 5, էջ 409:

[110] Բյուզանդիոն, 1900, հուլիսի 11:

[111] Մասիս, 1881, հոկտեմբերի 17:

[112] Արծագանք, 1882, թիվ 35, էջ 544: Տե՛ս նաև «Մշակ», 1887, հուլիսի 28, թիվ 83:

[113] Մասիս, 1885, փետրվարի 2, էջ 656: Տե՛ս նաև «Արևելք», 1884, հունիսի 15:

[114] Մշակ, 1891, մայիսի 16, թիվ 54:

ասուիի, մանուսայի և այլ արտադրությանց... այսօր այլևս տեղական ասուի, ապա, շալ չեն արտահանվիր»[115], կամ՝ «Վանում «կտավագործությունը... այժմ ընկած է և կորցրել է իր նախկին փայլը»[116]:

Դիարբեքիրում «եվրոպական ապրանքները էժան, բայց վատորակ, ավելի ու ավելի են ողողում շուկան, ճնշելով ու դուրս մղելով տեղական արտադրությունը: Այդ առանձնապես վնասակար է անդրադառնում տեղացի ջուլհակների վրա, որոնք, չնայած քրտնաջան աշխատանքի, վաստակում են օրական միայն 3-4 դուրուշ (25-30 կոպ.)»[117]:

Երզնկայում. գրում էր մի թղթակից 1896 թ., մանուսան, «20-25 տարի առաջ մեծ համբավ ուներ», «Կարնո բովանդակ նահանգին մեջ այս պատվական արտադրությունը ծավալած էր համակ»[118], բայց այժմ մանուսայագործությունը «կործանման վիճակի մեջ է»[119]:

Եվրոպական ապրանքների ներմուծման հետևանքով տեքստիլ արդյունաբերությունը և արդյունաբերության այլ ճյուղեր քայքայվում են նաև Ակնում, Քըղում, Սղերդում և մյուս քաղաքներում ու գյուղաքաղաքներում[120]:

Արևմտյան Հայաստանի արդյունաբերության քայքայումը խիստ ծանր անդրադարձավ նրա հատկապես քաղաքային բնակչության վրա: Շատ տնայնագործներ տնտեսապես քայքայվեցին, մի շարք ձեռնարկություններ փակվեցին, որի հետևանքով զգալի թվով բանվորներ դուրս նետվեցին փողոց, իսկ մնացած տնայնագործ բանվորների դրությունը վերին աստիճանի վատթարացավ: Նրանք հարկադրված էին ստանալ չնչին աշխատավարձ և բանել մութ ու խոնավ խրճիթներում: Ծերուկը նշում էր, որ Վանում բանվորների մոտ 70%-ը իբրև աշխատավարձ օրական ստանում է 2-3 դուրուշ, այսինքն՝ 16-24 կոպ. և այդ գումարով պահում «5-7 անդամներից բաղկացած տունը»[121]:

[113] Արևելք, 1884, ապրիլի 27:

[114] Մուրճ, 1904, թիվ 8, էջ 31: Տե՛ս նաև Բյուզանդիոն, 1898, մարտի 19, 1905, օգոստոսի 18:

[115] Տոմիլով, նշվ. աշխ., էջ 260: Տե՛ս նաև Բյուզանդիոն, 1907, մարտի 30:

[116] Բյուզանդիոն, 1896, դեկտեմբերի 3:

[117] Բյուզանդիոն, 1896, դեկտեմբերի 5:

[118] Տե՛ս Բյուզանդիոն, 1897, հունիսի 13, 1902, հունիսի 17:

[119] Մուրճ, 1904, թիվ 9, էջ 27:

Իսկ Տ. Չիթեճյանը գրում էր, որ ոստայնիկները ուղղակի մգլում են խոնավ նկուղներում. «Մարդն ի՞նչպես չմգլի, չբորբոսի խոնավաշունչ գեշ հորի մը մեջ, ուր ոտքերը կախ շնչառու բերանն ու ռունգերն և լուսաքաղ աչքերն իր վրա կրող գլուխը հակ՝ առտունե մինչև իրիկուն իր օրն անցնում է աշխատելով սուր կկոցի մը պես, բայց ժանգոտելով հողամուխ գամի մը նման: Կյանքին արժեքը եթե գիտնային մեր ոստայնականները, շուտով պիտի լեցնեին իրենց հորերն և անոնց տեղ բարձր նստարաններու վրա, նոր ու նորոգ ավյունով պիտի գործեին ժիրաժիր, առույգ, ու պիտի մտածեին քիչ մ'ալ իրենց հետամնաց արհեստին առաջադիմության, զարգացման միջոցներու մասին»[122]:

Հասկանալի է, որ նման պայմաններում բանվորներն ու տնայնագործները պետք է կորցնեին իրենց առողջությունը և դառնային հաշմանդամներ:

Մի ականատես, նկարագրելով Գյուրինի ոստայնիկների ծանր վիճակը, գրում էր. «Այս քանի մը տարվան մեջ երիտասարդությունը տժգույն և դալկացած երևույթ մը կը ներկայացնե. շատեր իրենց ոտներուն և ծնգաց վրա ցավեր ունենալ սկսած են. որովհետև ժագարտ գործող մը մեն մի ոտնակոխին մինչև վեց յոթը օխայի ծանրություն կը բարձրացնե»[123]: Նա այնուհետև նշում էր, որ Գյուրինում շահագործվում են նաև երեխաները, որոնք գրկվելով դպրոցից, «տակավին օդի ու լույսի կարոտ մատաղ մարմիններ... տուներու մութ անկյուններու մեջ կը խամրին վաղաժամ»[124]:

Բայց չնայած աշխատանքային այդ ծանր պայմաններին, ձեռնարկատերերն ու վաճառականները շարունակում էին իջեցնել տնայնագործների ու բանվորների աշխատավարձը և ավելի սաստկացնել նրանց շահագործումը: Արաբկիրում, ըստ մի հաղորդման, ձեռնարկատերերը սկսել են «խեղճ բանվորներու գործգիներն ու ավորչեքները գեղչել ու պակասեցնել»[125]: Մի այլ հաղորդման մեջ նշվում էր, որ այդ քաղաքում ընդհանրապես «աղքատը շատ է»[126]:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում մշակող և հայթայթող արդյունաբերության մի շարք ճյուղեր (տեքստիլ արդյունաբերությունը, կաշեգործությունը, բրուտագործությունը, մետաղամշակությունը, գինեգործությունը, պղնձահումքի արտադրությունը և այլն) իրենց զարգացման մանր ապրանքային փուլից անցնում են մանուֆակտուրային փուլին, որով, ինչպես հայտնի է, սկիզբ է դրվում արտադրության կապիտալիստական եղանակին: «Կապիտալիստական արտադրությունը փաստորեն սկսվում է այն պահից, երբ միևնույն անհատական կապիտալը միաժամանակ ավելի մեծ թվով բանվորներ է աշխատեցնում, հետևապես, աշխատանքի պրոցեսն ընդարձակում է իր ծավալը և ավելի մեծ քանակությամբ արդյունք է մատակարարում:

Մեծ թվով բանվորների միաժամանակ, միևնույն տեղում (կամ, եթե կուզեք, աշխատանքի միևնույն դաշտում), միևնույն տեսակի ապրանքի արտադրության համար, միևնույն կապիտալիստի հրամանատարության տակ գործելը պատմականորեն ու տրամաբանորեն կազմում է կապիտալիստական արտադրության ելակետը: Արտադրության բուն իսկ եղանակի տեսակետից, օրինակ, մանուֆակտուրան իր սաղմնային ձևով տարբերվում է համքարային արհեստային արտադրությունից ոչ այլ կերպ, քան միևնույն կապիտալի կողմից միաժամանակ զբաղեցրած բանվորների ավելի մեծ թվով: Համքարային վարպետի արհեստանոցը միմիայն ընդարձակված է»[127]:

Սակայն, որպես տեղական առանձնահատկություն, պետք է նշել, որ ի տարբերություն մի շարք երկրների, որտեղ կապիտալիզմի տարբեր փուլերն ունեցել են իրենց առանձին ժամանակաշրջանները, Արևմտյան Հայաստանում նրանց գլխավոր փուլերը հանդես են եկել միաժամանակ XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին: Բացի դրանից, Արևմտյան Հայաստանում մանուֆակտուրան տակավին թույլ էր զարգացած. հաճախ այն հանդես էր գալիս իր սաղմնային ձևով, իսկ հաճախ էլ սպորադիկ եղանակներով և չէր ընդգրկում ամբողջ արտադրությունը[128]:

Թուրքական կառավարության վարած տնտեսական ու ազգային քաղաքականության և եվրոպական պետությունների

[122] Բյուզանդիոն, 1905, օգոստոսի 18:

[123] Երկիր Հայնը, 1907, թիվ 30, էջ 4:

[124] Նույն տեղում:

[125] Բյուզանդիոն, 1900, ապրիլի 19:

[126] Բյուզանդիոն, 1906, ապրիլի 7:

[127] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 339:

[128] Այդ հանգամանքը, իհարկե, չի խանգարում մեզ համարելու XIX դ. երկրորդ կեսը կապիտալիստական արտադրության եղանակի սկիզբ: Կ. Մարքսը գրում է. «Մանուֆակտուրան ի վիճակի չէր ոչ ընդգրկելու հասարակական արտադրությունը նրա ամբողջ ծավալով, ոչ էլ այն հեղաշրջելու բուն հիմքից: Որպես մի ճարտարապետական զարդ նա բարձրանում էր այն տնտեսական շենքի վրա, որի լայն հիմքը քաղաքային արհեստն ու գյուղական կողմնակի զբաղմունքներն էին» (Կապիտալ, հ. I, էջ. 389):

գաղութատիրական նկրտումների հետևանքով Արևմտյան Հայաստանում մանուֆակտուրան դանդաղ էր զարգանում, հաճախ նույնիսկ քայքայվում էր: Աղքատացած ու փողոց շպրտված տնայնագործներն ու բանվորները ավելացնում էին երկրում գոյություն ունեցող հողազուրկների ու գործազուրկների՝ առանց այն էլ մեծ բանակը: Մանուֆակտուրան ի վիճակի չէր այդ հոծ զանգվածին աշխատանքով ապահովել, իսկ գործարանները կամ խոշոր մեքենայական արտադրությունը նոր-նոր էին առաջանում: Եվ հայ աշխատավորները, հալածվելով թուրքական բռնապետությունից, կալվածատերերի վայրագ կեղեքումներից ու պատճառած ամենօրյա անարգանքներից, հարկադրված էին թողնել հայրենիքը և արտագաղթել Ռուսաստան, Թուրքիայի ծովափնյա քաղաքները, Եվրոպա և անգամ օվկիանոսից այն կողմ՝ Ամերիկա:

Իբրև տեղական առանձնահատկություն՝ պետք է նշել այն փաստը, որ կապիտալիստական հարաբերությունների ծլարձակումը ավելի ակնհայտ և հետևողական էր Արևմտյան Հայաստանի արդյունաբերության, քան գյուղատնտեսության մեջ: Արդյունաբերության բնագավառում առանձին ճյուղեր թևակոխել էին նույնիսկ գործարանային փուլ, մինչդեռ գյուղատնտեսությունը տակավին հետամնաց, արխայիկ վիճակում էր: Ի տարբերություն եվրոպական մի քանի երկրների, ուր կապիտալիզմի տարբեր աստիճաններն առաջացել ու զարգացել են տարբեր ժամանակաշրջաններում, Արևմտյան Հայաստանում դրանք հիմնականում առաջացել ու անհետացել են միևնույն ժամանակամիջոցում՝ XIX դ. երկրորդ կեսին ու XX դ. սկզբին:

Գլուխ Ութերորդ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Բուրժուազիայի զարգացմանը զուգահեռ արևմտահայ իրականության մեջ ձևավորվում էր նաև պրոլետարիատը: Ցավոք, մենք չունենք համապարփակ տվյալներ Արևմտյան Հայաստանի բնակչության այդ խավի մասին: 1910 թ. Գրիգոր Զոհրապը իր պատգամավորական հաշվետվության մեջ ասում էր. «Անտեղյակները միայն կրնան ըսել, թե գործավորական հարց չկա Թուրքիոյ մեջ: Թեև «մեծ ճարտարվեստը» գոյություն չունի այս երկրին մեջ, բայց այսուհանդերձ գործավոր դասակարգ մը կա, և երկու միլիոնի մոտ կը հաշվեն զայն՝ հողային գործավորները միասին առնելով, երկու միլիոն գործավոր արհամարելի դասակարգ մըն է միթե»[1]:

Գ. Զոհրապը չի նշում, թե որտեղից է վերցրել այդ թիվը (գուցե ասում է ենթադրաբար), ինչպես և չի ասում, թե ինչքան էին հաշվվում գործավորներն Արևմտյան Հայաստանում: Բայց վերևում մեր կողմից բերված տվյալները վկայում են, որ նրանք որոշ ձեռնարկություններում միասին վերցրած զգալի թիվ էին կազմում:

Պրոլետարիատի առաջացումն ինչպես ամենուր, այնպես էլ Արևմտյան Հայաստանում տեղի էր ունենում քաղաքային արհեստավորների, առևտրականների և գյուղական աշխատավոր զանգվածների տնտեսական քայքայման ու աղքատացման հետևանքով:

XIX դ. վերջին տասնամյակներից սկսած արևմտահայ գյուղացիության արտագնացությունը հասնում է մեծ չափերի: Միայն 1878 թ. Վանի գավառից մեկնել է 38.000, Մուշի գավառից՝ 17.000, Սղերդի գավառից՝ 5.000, Քըղիի գավառից՝ 3.000, Բաղեշի գավառից՝ 2.800, Քեմախի գավառակից՝ 2.000, Դերջանի գավառակից՝ 1.000 մարդ[2]:

---

[1] Գ. Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, Կ. Պոլիս, 1910, էջ 25-26:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի արխիվ, գ. 40, թ. 6, գ. 47, թ. 23, գ. 49, թ. 6, գ. 57, թ. 87, գ. 59, թ. 7:

Արդեն 80-ական թ. Արևմտյան Հայաստանում գյուղ չկար, որ պանդուխտ չունենար: 1887 թ. «Արծագանք»-ը գրում էր. «Այժմ պանդխտության վարակումը ծավալված է ամեն գյուղ, ամեն խրճիթ: Յուրաքանչյուր ընտանիք յուր թվին նայելով 1-2 և մինչև 5-6 պանդուխտ ունի այսօր: Օրինակի համար, Մուշի Խասգյուղը, որ ունի 250 տուն, ունի 300-400 պանդուխտ, Նորշենը՝ 200 տուն և ունի 300 պանդուխտ, Բերդակը՝ 120 տուն, ունի 200 պանդուխտ... Այսպես և մյուս գյուղերը, ավաններն ու քաղաքները»[3]:

Տղամարդկանցից բացի արտագնացության էին դիմում նաև կանայք: Կարիքը ստիպում է նրանց թողնել նահապետական սովորույթները և ամուսնու հետ միասին լուծը քաշելով՝ ընտանիքը պահել: 1880-ական թ. Ռաֆֆին գրում էր. «Առաջ գնում էին միայն տղամարդիկ, իսկ այժմ կանայք նույնպես սկսել են օտար երկրներում բախտ որոնել: Վանեցի կինը, որ իր տան ծածկի տակից չէր դուրս գալիս, որ նրա երեսը մի ուրիշ մարդ չտեսներ, այժմ պանդխտության մեջ վատնում է իր ավանդական համեստությունը»[4]:

Արտագնացները վարձվում էին Թուրքիայի գործարաններում ու արդյունաբերական այլ ձեռնարկություններում: Դարավերջին մայրաքաղաքի պողպատաձուլական գործարանում աշխատում էր ավելի քան 3000 բանվոր, Սիրիայի մահուդի ձեռնարկություններում՝ 6000, Կեսարիայի կտավագործական արհեստանոցներում՝ 3000, Այնթապի նույն տիպի ձեռնարկություններում՝ 6000, կայսրության բոլոր գորգագործական գործարաններում ու արհեստանոցներում՝ 40.000 տարբեր ազգության, այդ թվում նաև հայ բանվոր[5]:

Արտագնացները վարձվում էին նաև Արևմտյան Հայաստանի արդյունաբերական կենտրոններում: Միայն Սեբաստիայի կուսակալության գորգագործության մեջ աշխատում էր 3.000-3.500 բանվոր, Խարբերդի մետաքսագործական ֆաբրիկներում՝ 300, Արաբկիրի կտավագործական արհեստանոցներում՝ 1000, Վանի նույնանման ձեռնարկություններում՝ շուրջ 1000, Կարինի ծխախոտի գործարանում՝ ավելի քան 50 բանվոր և այլն[6]:

[3] «Արծագանք», 1887, էջ 269:

[4] Ռաֆֆի, Երկեր, հ. 5, էջ 41:

[5] Տե՛ս Հ. Գ. Ինճիկյան, նշվ. աշխ., էջ 214, 216, 223:

[6] Տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, Փոքր Հայքի հիշատակները, մասն Ա, հատ. Ա, Չիկագո, 1917, էջ 25, Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները..., էջ 185-198:

Արևմտահայ արտագնացները համալրում էին Թուրքիայի նաև գյուղական պրոլետարիատի շարքերը: Նրանք գնում էին դեպի Կիլիկիա, վարձվում Ադանայի բամբակի պլանտացիաներում, աշխատում սեզոնով և աշնանը հետ վերադառնում: Բայց գարնանն ու ամռանը նրանք կրկին մեկնում էին և ամեն անգամ գնալիս իրենց հետ նոր մարդիկ էին տանում: Դրա հետևանքով տարեց-տարի մեծանում էր գյուղատնտեսական արտագնացների թիվը: 80-ական թվականներին Ադանայի կուսակալությունում և նրա հարակից շրջաններում տարեկան աշխատում էին մոտ 100.000 սեզոնային բատրակներ, որոնց մի զգալի մասը հայեր էին[7]: Բացի Կիլիկիայից, արևմտահայ արտագնացները մեկնում էին նաև Միջագետք, Կենտրոնական Անատոլիայի հարթավայրային շրջանները, սևծովյան ափերը և աշխատում գյուղատնտեսության ամենատարբեր բնագավառներում:

Համապատասխան վիճակագրական տվյալների բացակայության պատճառով անհնար է պատասխանել այն հարցին, թե Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի տնտեսության ո՞ր ճյուղերում ինչքա՞ն հայ բանվոր էր աշխատում: Սակայն եղած տեղեկությունների հիման վրա կարելի է մոտավորապես որոշել արևմտահայ քաղաքային ու գյուղական բնակչության սոցիալական շերտավորման պատկերը: 1872 թ. «Արծվի Վասպուրական»-ը գրում էր, որ Վանում բնակիչներից «հարիւրեն 5-ը խիստ լավ կապրին, 45-ը միջակ, իսկ 50-ը վատ»[8]: Հետագայում չքավոր խավերի թիվը այդ քաղաքում գնալով մեծանում էր: 1900-ական թթ. սկզբներին Ծերուկը (Արտակ Դարբինյան) Վանի բնակիչներին բաժանում էր 4 խմբի, նշելով, որ առաջինին պատկանում են նրանք, ովքեր տարեկան ունեն 60-100 լիրայի եկամուտ, երկրորդին՝ նրանք, ովքեր «ինչ որ շահում են, նույնությամբ գործածում են» երրորդին՝ նրանք, ովքեր «իրենց վաստակով շատ անգամ չկարողանալով ապրել, պարտք են անում» և, վերջապես, չորրորդին՝ նրանք, ովքեր ապրում են վարձու աշխատանքով ու մուրացկանությամբ: Այդ դասակարգումից հետո հեղինակը եզրափակում է, որ առաջին խումբը կազմում է քաղաքի բնակչության 2 տոկոսը, երկրորդը՝ 20 տոկոսը, երրորդը՝ 70 տոկոսը, իսկ չորրորդը՝ 8 տոկոսը[9]: Եթե առաջին խումբը համարենք հարուստներ, երկրորդը՝ միջակներ,

[7] Տե՛ս Հ. Գ. Ինճիկյան, նշվ. աշխ., էջ 108:

[8] «Արծվի Վասպուրական», 1872, մարտի 17:

[9] «Մուրճ», 1904, թիվ 9, էջ 33:

իսկ երրորդն ու չորրորդը՝ աղքատներ, ապա կտեսնենք, որ Վանի կիսապրոլետարական ու պրոլետարական բնակչության տոկոսը 20-րդ դ. սկզբին արդեն հասնում էր 78-ի: Հայ քաղաքային բնակչության սոցիալական շերտավորման պատկերը, ըստ երևույթին, այդպիսին էր նաև կայսրության մյուս քաղաքներում: 1875 թ. Պողոս վարդապետ Նաթանյանը գրում էր, որ Թոքատում «հարուստք սակավաթիվ են, կան արհեստավորներ, որ միջակ դիքով կապրին, դարձյալ աղքատը մեծ մաս կը կազմե»[10]:

Ինչ վերաբերում է գյուղական բնակչությանը, ապա այդ մասին աղբյուրներում ու գրականության մեջ կան հետևյալ տվյալները. 1908 և 1912 թթ. Վանի կուսակալության Արճակ ու Թիմար և Կարինի կուսակալության Դերջան ու Քըղի գավառների 43 գյուղերում հաշվվում էր 2075 տնտեսություն, որոնցից 134-ը հարուստներ էին, 556-ը՝ միջակներ, իսկ 1385-ը աղքատներ, կամ հարուստները կազմում էին նշված տնտեսությունների 6,4 %-ը , միջակները՝ 26,9 %-ը, իսկ աղքատները՝ 66,7 %-ը: 342 գյուղացիական տնտեսությունների սոցիալական շերտավորման պատկերը մոտավորապես այդպիսին էր նաև երկրի մյուս շրջաններում[11]:

Այդ տվյալներից բնավ չի կարելի ենթադրել, թե արևմտահայ բոլոր հարուստները բուրժուաներ էին, իսկ աղքատները՝ պրոլետարներ: Իրականում նրանց մի մասն էր միայն բուրժուա և պրոլետար:

Արևմտահայ ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղական բանվորները ենթարկվում էին դաժան շահագործման: Ձեռնարկատերերը նրանց աշխատեցնում էին այնքան, որքան կամենում էին, քանի որ պետության կողմից սահմանված չէր որոշակի աշխատաժամ: Շատ տեղերում բանվորներն աշխատանքն ավարտում էին ֆիզիկապես լիովին սպառված, նրանք անգամ հանգստյան օրեր չունեին: «Վտակը» գրում էր, որ Դիարբեքիրում «բանվորները կաշխատին այնքան, որքան իրենց գործատեր աղան կամ վարպետ արհեստավորը կը հրամայե: Շատ բանվորներ գործի առատության ժամանակ ամբողջ 2 օրվա ընթացքի մեջ հազիվ կը կարողանան 3 ժամվա քուն-հանգիստ վայելել: Կոշկակար ու դերձակ բանվորներու դրությունը տոներու նախորդ շաբաթներուն սոսկալի է, կաշխատին գիշեր ու ցերեկ անընդհատ, և այսպես քանի մը օրեր

[10] Պ. Նաթանյան, նշվ. աշխ., էջ 120-121:

[11] Տես՝ Մալխաս, ներկա սովը և իր պատճառները, Տրապիզոն, 1909, էջ 108-109: Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 57, ց.1, գ. 733: Հաշվումները կատարված են մեր կողմից:

շարունակաբար, առանց հանգստի, առանց դադարի»[12]:

Երզնկայում բանվորներն աշխատանքը սկսում էին վաղ առավոտյան և ավարտում ուշ երեկոյան[13]: Սեբաստիայում նրանք բանում էին 12 ժամ, իսկ ամռանը՝ 14-15 ժամ[14]: Բանվորական օրվա տևողությունը համարյա այդչափ էր նաև Թոքատում, ուր գործավորները անդադար ծեծում էին մետաղը «դժոխանման հնոցի մը դեմ»[15]:

Աշխատանքային օրվա տևողությունն ավելի երկար էր ցրված մանուֆակտուրայում: Գնորդ առևտրականները տնայնագործներին ստիպում էին աշխատել գիշեր ու ցերեկ, և օգտվելով այն բանից, որ նրանք բանում էին իրենց տներում, շահագործում էին նաև նրանց ընտանիքի անդամներին, քանի որ տնայնագործը երբ պառկում էր հանգստանալու, նրա գործը շարունակում էին կինն ու երեխաները[16]:

Թուրքական կառավարությունը բանվորական աշխատավարձի որոշակի չափ չէր սահմանել: Եվ ձեռնարկատերերը, օգտվելով և՛ այդ հանգամանքից, և՛ աշխատուժի առատությունից, դաժան շահագործման դիմաց գործավորներին չնչին գումար էին վճարում:

19-րդ դարի 80-90-ական թվականներին Թուրքիայում ամենաբարձր աշխատավարձը ստանում էին հանքահորերում ու ծուլարաններում աշխատողները՝ օրական 18-20 ղուրուշ (1 ղուրուշը հավասար էր 5.68 կոպ.): Տնտեսության մնացած ճյուղերում նրանք վարձատրվում էին անհամեմատ ցածր: Կարինում

[12] «Վտակ», 1908, № 47:

[13] Տես՝ Սյուրմեյան, Երզնկա, Գահիրե, 1947, էջ 177:

[14] Տե՛ս «Դրոշակ» , 1909, № 6, էջ 74:

[15] Նույն տեղում, էջ 85:

[16] Հատկանշական է, որ ապրանքա-կապիտալիստական արտադրության պայմաններում աշխատօրը երկար ու տևական էր նաև տնտեսապես քայքայված կամ քայքայվող արհեստավորների համար, որոնք մի կերպ գոյատևելու նպատակով աշխատում էին օր ու գիշեր: 1897 թ. «Բյուզանդիոն» -ը գրում էր, որ Վանում «թե՛ խանութպաններ, և թե՛ արհեստավորներ ընդհանրապես արևի ծագելեն ժամ մը, ժամ ու կես հետո կսկսին գործել, իսկ երեկոյան ևս ժամի 10-ին կը դադարին գործելէ» («Բյուզանդիոն», 1897, մարտի 15): Արհեստավորները չէին կարող խուսափել տնտեսական քայքայումից. օր-օրի նրանց ծախսերը գերազանցում էին եկամուտներին: «Մուրճ»-ը գրում էր. թե Վանի արհեստավորը տարեկան 20 լիրայի մուտք է անում, բայց 20-25 և նույնիսկ 30 լիրայի ելք է ունենում» («Մուրճ», 1904, № 8, էջ 27):

ատաղձագործն ստանում էր օրական 8 ղուրուշ, Խարբերդում հյուսնը՝ 8 ղուրուշ, Թոքատում պղնձագործը՝ 5-6 ղուրուշ, Վանում մասնագետ-բանվորների մոտ 70 տոկոսը՝ 2-3 ղուրուշ և այլն[17]: Փաստորեն, տղամարդ բանվորներն օրական ստանում էին միջին հաշվով 6 ղուրուշ:

Կանայք ավելի քիչ էին վարձատրվում. Սեբաստիայի գորգագործական գործարաններում ստանում էին օրական 3-4 ղուրուշ, Թոքատի կտավագործական ձեռնարկություններում՝ 3-4 ղուրուշ, Դիարբեքիրի տեքստիլ գործարաններում՝ 3-4 ղուրուշ, Կարինի ծխախոտի ֆաբրիկայում՝ 3-5 ղուրուշ, Վանի ժանյակագործական արհեստանոցներում՝ 2-3 ղուրուշ, Շատախի շալագործական տներում՝ մոտ 3 ղուրուշ և այլն: Կին-բանվորուհիներն, ըստ էության, օրական ստանում էին մոտ 3,5 ղուրուշ: Ինչ վերաբերում է դեռահասներին, ապա տղաները ստանում էին օրական 2-3, իսկ աղջիկները՝ 1-1,5 ղուրուշ[18]:

19-րդ դարի 80-ական թթ. Խարբերդի գավառում կյանքի պայմաններն համեմատաբար տանելի էին, քան Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններում՝ գյուղատնտեսական ապրանքներն առավել էժան լինելու պատճառով:

Գյուղատնտեսական առաջին անհրաժեշտության մթերքներն ունեին հետևյալ գները[19].

1 հոխա (1 հոխան 1 կգ 230 գ.) ցորենը՝ 0,7 ղուրուշ,
1 հոխա գարին՝ 0,3 ղուրուշ,
1 հոխա կարագը՝ 6 ղուրուշ,
1 հոխա տեղական պանիրը՝ 2,5 ղուրուշ,
1 հոխա կարտոֆիլը՝ 0,3 ղուրուշ,
1 հոխա տավարի միսը՝ 2 ղուրոշ,
1 հոխա ոչխարի միսը՝ 1 ղուրուշ, 30 փարա,
1 հոխա բրինձը՝ 2 ղուրուշ,
1 ձուն՝ 3 փարայ,

Եթե նկատի ունենանք, որ մեկ մարդուն կերակրելու համար

[17] Տե՛ս "Сборник географических, топографических и статистических материалов по Азии", вып. LXYI "Записки о Малой Азии, Генерального штаба полковника Путята".- СПб, 1896.- էջ 106: Линч. Армения. Путевые очерки и этюды. Т. II.- Тифлис, 1910.- էջ 278: «Կայծ», 1895-1896, № 157, «Մուրճ», 1904, № 9, էջ 27: Томилов, Отчет о поездке по Азиатской Турции, т.1, Тифлис,1957, էջ 260, Մշակ, 1890, էջ № 81:

[18] Նույն տեղում

[19] Տե՛ս «Արաքս», 1888, գիրք Բ, էջ 28: Հաշվումները կատարված են մեր կողմից՝ հիմք ընդունելով մթերքների միջին գները:

օրական անհրաժեշտ էր շուրջ 1,5 ղուրուշ և եթե հաշվի առնենք, որ բանվորական ընտանիքը բաղկացած էր առնվազն 6 հոգուց, ապա այդ ընտանիքի միայն սննդի համար օրական անհրաժեշտ էր միջին հաշվով 9 ղուրուշ: Բայց այդքան գումար գրեթե ոչ մի ընտանիք չէր կարողանում հատկացնել սննդին: Շատ բանվորներ մի կերպ քարշ էին տալիս իրենց խղճուկ գոյությունը: Կ. Պոլսում նրանք ճաշելիս «պանիր, հաց կամ մածնաթան (ուտիքի օրեր), սոխ, հաց (պահք օրեր) կամ ջուրի մեջ հաց թաթախելով կուտեն: Երբեմն ալ մի քիչ լոբիա կլցնեն ջուրին մեջ ու խաշելով կուտեն: Մսախառն կերակուրը... ամսին մեջ հազիվ մի կամ երկու անգամ կպատահեր, որ ուտեն, այն ալ... հոտած տեսակեն»[20]:

Սուլթանների ճոխ մայրաքաղաքում բանվորներից շատերն այնպիսի խեղճության էին մատնված, որ ստիպված էին սոմուն ուտել (զինվորներին տրվող ցածրորակ հացի «բորբոսնած ու անգիտանած մասը, որը վաճառում էին «հայ պանդուխտներին»), կամ սնվում էին մեջիդների միաբանության (սովթաների) սեղանի ավելցուկով: Մի աղբյուրում ասվում է, որ «Տաճկաստանում կան այնպիսի մեջիդներ, ուր դրած են թագավորների կամ երևելի անձանց շիրիմները, այսպիսի մեջիդներում մի դաս մոլլաների գործն է աղոթել այնտեղի ննջեցյալների համար, նոքա կոչված են սովթաներ և ստանում են... նույն մեջիդի կայքից առատ կերակուր, որի ավելորդը՝ որպես մի էժան կերակուր, գնում են հայ մշակները»[21]:

Բանվորների բնակարանային պայմանները պարզապես սոսկալի էին: Նրանց մի մասն ապրում էր կիսախարխուլ տնակներում ու հյուղակներում, որոնք զուրկ էին տարրական հարմարություններից, մի մասը, սեփական տուն չունենալով, վարձում էր այդպիսի բնակարաններ, իսկ մի մասն էլ, գերազանցապես գավառներից Կ. Պոլիս մեկնածները, քարշ էր գալիս եկեղեցիների գավիթներում, քարվանսարաներում, այս կամ այն կերպ ձեռք գցած գետնախորշերում: Նրանց կացությունն ուսում-

[20] «Մշակ», 1877, օգոստոսի 25: Հատկանշական է, որ տնտեսական քայքայման հետևանքով վերին աստիճանի ցածր էր նաև կիսապրոլետարացված արհեստավորների կենսամակարդակը: Վանի «հայ բնակչության մեջ հազիվ քսան ընտանիք կար, որոնք ունևոր կը համարվեին և բնականաբար լավ կապրեին. բարեկեցիկ վիճակ ունեին մաս մը խանութպաններ, արհեստանոցներու վարպետներ..., իսկ աղքատները, աշխատավոր ձեռք չունեցողները, ոտքի վրա գործ ընողները, որոնք մեծ թիվ մը կը կազմեին, պարզապես ցամաք հացով կապրեին, քիչիկ մը ժաժիկ, գլուխ մը սոխ կամ աղած բանջար: Եթե այդ ալ ամեն օր ունենային» (Մալխաս, Ճամբուս վրա, էջ 105-106):

[21] Ռաֆֆի, Երկեր, հ. 9, էջ 193:

նասիրող բժիշկներից մեկը գրում էր, որ տարագիրներից շատերն ապրում էին մայրաքաղաքի Գասըմ փաշա կոչված թաղում այնպիսի խարխուլ տնակներում, որտեղ «փլփլկած պատերեն ամեն օր հող և քար վար կթափին, մութ և խոնավ տեղեր՝ որոնց հետ բաղդատելով գազանի որջերն ավելի վայելչություն ունեին»: Այդ տնակներում բազմաթիվ են «լու, մլակ, ոջիլ և այդպիսի կենդանիներ»: Ըղատ բազարի «սրճարանների տակեն գետնափոր տեղերե դեղնած երեսներով մարդեր դուրս կելնեն պատռած և կեղտոտ շորեր հագած: Ահա այդ մարդիկ հայաստանցիներ են, 18-20-25 տարեկան երիտասարդներ... նոցա մեջ կգտնվին 10-12 տարեկան պատանիներ ալ, որպես նաև կատարյալ հասակավորներ և ծերեր... խեղճերն այդ գետնափոր տեղեր խմբովին կը պառկին խիտ առ խիտ, հայր, որդի, եղբայր, դրացի, 10-15 անձ միասին, որպեսզի վարձն ավելի էժան լինի...»[22]:

Անտանելի էին նաև բանվորների աշխատանքային պայմանները: Գործարաններում ու հանքահորերում չէին պահպանվում նրանց կյանքի ապահովման տարրական կանոնները և գործավորները հաճախ վնասվածքներ էին ստանում ու հաշմվում: Մետաքսագործական գործարաններում բանվորուհիները ամբողջ օրն աշխատում էին բարձր ջերմաստիճանային պայմաններում և մի կտոր հաց վաստակելու համար անդառնելիորեն կորցնում էին իրենց առողջությունը:

Գորգագործական ձեռնարկություններում աշխատում էին փոշու, կեղտի և գաղջության մեջ, իսկ երբ բանվորուհիները փորձում էին բացել պատուհանները, տերերը թույլ չէին տալիս, ասելով, թե «գորգերը լավ ըլլալու համար պետք է... տաք տեղ գործվին զանոնք»[23]:

Կաշեգործական ձեռնարկությունների գործավորներն ամբողջ օրը կիսամերկ ու ոտաբոբիկ աշխատում էին կաշիների կեղտաջրերում և հասունացնում պահանջվող պրոցեսները: Մետաղամշակման արհեստանոցների բանվորները խաշվում էին հնոցի առաջ և ուժասպառ ընկնում:

Երկաթուղային ու խճուղային շինարարության բանվորներն ամռանն աշխատում էին արևի կիզիչ ճառագայթների տակ, իսկ ձմռանը՝ խստաշունչ ցրտի պայմաններում՝ չունենալով բնության տարերքից պատսպարվելու գոնե տարրական հանգրվան:

Մի կողմից կյանքի ցածր կենսամակարդակը, մյուս կողմից

[22] «Մշակ», 1877, օգոստոսի 25:

[23] «Դրոշակ», 1909, թիվ 7, էջ 85:

բնակարանային ու աշխատանքային անտանելի պայմանները քայքայում էին բանվորների առողջությունը և կրճատում նրանց կյանքը: Դեռ երիտասարդ հասակում շատերը հյուծվում էին և տառապում զանազան հիվանդություններով և վաղաժամ մահանում:

Թուրքական բռնապետության ընդհանուր միջավայրում և ապրանքա-կապիտալիստական հարաբերությունների ցածր զարգացման պայմաններում դաժան շահագործման ու ճնշման էր ենթարկվում նաև արևմտահայ գյուղական պրոլետարիատը: Աղաներն ու հարուստ գյուղացիները բատրակներին աշխատեցնում էին ըստ իրենց քմահաճույքի՝ հարկադրելով բանել վաղ լուսաբացից մինչև ուշ երեկո՝ 16-18 ժամ, իսկ ամռանն՝ ավելի երկար: Բատրակներին աշխատանքի դիմաց վճարում էին բնամթերքով ու դրամով, սակայն, ընդհանուր առմամբ, նրանց աշխատավարձը եղել է այնքան ցածր, որ հազիվ են հոգացել գոյության կարիքները: Բուլանխում ծմեռվա երեք ամսվա համար մշակին տալիս էին հագուստ ու դրամ կամ բոլորը փողով արտահայտված՝ 4,47-5,41 ռուբլի, այսինքն՝ օրական 5-6 կոպեկ (1 ղուրուշ): Մնացած 9 ամսվա համար վճարում էին 10-12 քիլե (44-54 փութ) ցորեն, մի զույգ գուլպա, շապիկ, գլխի փաթաթոց և աբա[24]:

Դիարբեքիրի կուսակալության Հազոյի դաշտում մեկ տարվա աշխատանքի համար մշակին տալիս էին 5 քիլե կամ 35-40 փութ ցորեն[25], իսկ Մուշի դաշտում ցանում էին «մեկ-երկու լծվար ցորեն»[26]:

Աղաներն ու հարուստ գյուղացիները երեխաներին ավելի ցածր էին վարձատրում : Մշո դաշտում նրանց տալիս էին երեք շնիկ գարի, երեք շնիկ ցորեն, երեք շնիկ գլգիլ (1 շնիկը հավասար է 2 կոտի կամ փթի), շապիկ ու վարտիք և ուտելիք: Գեղամ Տեր-Կարապետյանը նշում էր, որ այդ բոլորը «եթե դրամի վերածենք, միջին հաշվով՝ ինն ամսվա վարձքը կըլլա ինսուն, առ առավել հարյուր քսան ղուրուշ, կամ ամիսը՝ տաս-տասներկու ղուրուշ»[27]:

Ուրեմն, չափահաս մշակը օրական ստանում էր 2-3, անչափահասը՝ 0,4 ղուրուշ կամ առաջինը՝ 12-13, իսկ երկրորդը՝ 1,5 կոպ.: Այդ գումարի մեջ չեն մտնում բատրակներին տրված հա-

[24] Տե՛ս Բենսե, նշվ. աշխ., էջ 96:

[25] Տե՛ս «Ազատամարտ», 1910, թիվ 343:

[26] Գեղամ Տեր-Կարապետյան, Տարոնի աշխարհ: Պատկերներ-պատմվածքներ, Փարիզ, 1931, էջ 71:

[27] Նույն տեղում, էջ 41:

գուստի ու սննդի արժեքները, որոնք սովորաբար կիսամաշ շորեր էին, կամ իրենց սեղանի թերմացքները: Եթե հաշվի առնվի անգամ դրանց դրամական արժեքները և կրկնապատկվեն վերոհիշյալ թվերը, ապա կտեսնենք, որ չափահաս գյուղատնտեսական բանվորն օրական ստանում էր 4-6, իսկ անչափահասը՝ կես դուրուշ: Այդ նշանակում է, որ գյուղատնտեսական պրոլետարիատն ավելի քիչ էր վարձատրվում, քան արդյունաբերականը:

Սակայն աղաներն ու գյուղական հարուստները հաճախ չէին վճարում կամ զանազան պատրվակներով կրճատում էին անգամ այդ քիչը և բատրակներին, դաժանորեն շահագործելով, ձեռնունայն վռնդում էին: Նրանք բատրակներին ենթարկում էին նաև այլ զրկանքների. բնակեցնում էին իրենց անասնագոմերում՝ անասունների կողքին, ուր թշվառները քնում էին խոտերի վրա, իրենց հագած շորերով կամ փալասներով: Նրանցից շատերը ոչ միայն ամիսներ, այլև տարիներ շարունակ անկողնու երես չէին տեսնում: Տերերը մշակների հանդեպ գործադրում էին նաև անձնական իշխանություն, վիրավորում էին նրանց մարդկային արժանապատվությունը, ծեծում էին և անգամ անպատիժ կերպով սպանում: Նրանք առավել դաժան էին վարվում անչափահասների հետ[28]:

Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանի տարածքում աշխատավորների դժոխային կացությունը պայմանավորված էր ոչ միայն տիրապետող բռնապետական ու կիսագաղութային կարգերով, այլև նրանով, որ պրոլետարիատը՝ իբրև դասակարգ, նոր էր ձևավորվում և այդ պատճառով դեռ չէր դարձել այնպիսի ուժ, որը կարողանար դասակարգային պայքարով բարելավել իր դրությունը: Հատկապես թույլ էր զարգացած նրա թուրքական զանգվածը, որը, որպես տիրապետող ազգի աշխատավորության առաջամարտիկ, թվում է, թե կոչված էր բոլորից շուտ ոտքի կանգնելու, կազմակերպելու և ղեկավարելու ճնշված ժողովուրդների սոցիալական ու ազգային ազատագրական պայքարը: Թուրքիայի պրոլետարիատը դեռ չէր ստացել լիակատար արդյունաբերական կերպարանք: Բանվորների զգալի մասը տակավին կապված էր հողագործության և արհեստագործության հետ: Շատերը ժամանակավորապես մեկնում էին փող վաստակելու այլ միջոցներ ձեռք բերելու և իրենց խաթարված տնտեսությունը վերականգնելու համար, այլ ոչ թե քաղաքներում կամ գործարաններում հիմնավորվելու:

Բանվորները կենտրոնացած էին ոչ այնքան խոշոր արդյունաբերական գործարաններում ու ֆաբրիկաներում, որքան՝ ցրված էին միջին ու հատկապես մանր արհեստանոցներում: Նրանք անկազմակերպ էին, չունեին ինտերնացիոնալ համախմբվածություն և դասակարգային ինքնագիտակցություն: Ճիշտ է, շատ տեղերում հայ բանվորներն աշխատում էին այլազգի բանվորների հետ միասին, սակայն տիրապետող թուրքական շովինիզմը և մոլեռանդ մահմեդականությունը մեկուսացնում և նույնիսկ թշնամացնում էին նրանց: Թուրքիայի պրոլետարիատը չուներ իր կուսակցությունը, որ կազմակերպեր բոլոր ճնշվածների պայքարը, կոփեր նրանց պրոլետարական ինտերնացիոնալիզմը և գրոհի տաներ արյունոտ բռնակալության դեմ:

[28] Նույն տեղում, էջ 98:

Գլուխ Ինն երորդ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցան բազմաթիվ ժողովրդական շարժումներ, որոնք ուղղված էին թուրքական իշխանությունների և քուրդ ու թուրք աղաների և բեյերի դեմ: Այդ շարժումներին մասնակցում էին ոչ միայն հայ, այլև քուրդ ու թուրք աշխատավորներ, որոնք պահանջում էին հողային խնդրի լուծում, հարկերի ու տուրքերի թեթևացում, միջնադարյան վաղեմության ու նոր ժամանակներին հատուկ բռնությունների վերացում:

Արևմտյան Հայաստանում ժողովրդական շարժումները ծավալվում էին կամ տարերայնորեն, կամ բուրժուական կուսակցությունների ղեկավարությամբ: Այդ շարժումները բռնկվում էին առանձին գյուղերում, գավառներում, քաղաքամասերում և դադարում էին տարբեր ժամանակ և ունենում էին տարբեր հետևանքներ[1]:

Արևմտյան Հայաստանի գյուղացիական դասակարգային պայքարի պատմության մեջ նշանավոր էին Չարսանճագի գյուղացիների ելույթները՝ իրենց հարստահարող ու կեղեքող քուրդ բեյերի դեմ: Նրանց շարժումն սկսվեց XIX դ. 60-ական թթ. կեսերին և ընդմիջումներով շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, այսինքն՝ շուրջ 50 տարի: Չարսանճագցիները հետ էին պահանջում բեկերի կողմից բռնագրաված իրենց հողերը: Նրանք 1908 թ. պետական հեղաշրջումից հետո կրկին առաջ քաշեցին այդ հարցը, բայց չհասան իրենց նպատակին, ավելին, բեկերը, հովանավորվելով «երիտասարդ թուրքերի» կառավարության կողմից, արտաքսեցին գյուղացիներից շատերին, իսկ ոմանց սպանեցին:

1873-1875 թթ. Քըղում, որտեղ ապրում էր մոտ 15-16 հազար հայ գյուղացի, բռնկվեց նոր շարժում՝ ընդդեմ աղաների ու բեյերի:

[1] Ժողովրդական շարժումների մասին Արևմտյան Հայաստանում այստեղ մենք սահմանափակվում ենք համառոտ շարադրանքով, քանի որ ավելի ընդարձակ շարադրել ենք մեր՝ «Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914 թթ.)», Երևան, 1979 և «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.)», Երևան, 1999 թ. ծավալուն աշխատություններում:

Այդ ժամանակ գյուղացիներին հաջողվեց կոտրել բեյերի դիմադրությունը և որոշ չափով հող ձեռք բերել: 1883 թ. մի հաղորդման մեջ ասվում էր, որ Քըղում սրանից «8-10 տարի առաջ տեղի ունեցած ժողովրդական շարժումը ընդդեմ այդ պեյերու՝ կոտրեց մեծ մասամբ նոցա նախկին դրությունն, և այժմ սեփական կալվածներ (մյուլք) ի զատ, ավատական կալվածքներ դուն ուրեք ունին»[2]:

1877-1878 թթ.՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, բազմաթիվ հայ գյուղացիներ կամավորական ջոկատներ կազմեցին, միացան ռուսական բանակին և կռվեցին դարերով քաղաքական, տնտեսական և բարոյական ծանր լուծ պարտադրած թուրքական բռնապետության ու բեյերի դեմ. նրանք հույս ունեին, թե ռուսների օգնությամբ (ազատագրված բուլղարների օրինակով) կհաջողվի թոթափել թուրքական լուծը և ազատություն ձեռք բերել: Սակայն թուրքական կառավարությունը պատերազմի ավարտից հետո դաժան դատաստան տեսավ նրանց հետ՝ տեղիք տալով հայերի նոր կոտորածների:

1892 թ. Մշո դաշտի Վարդենիս գյուղում Միհրան Տամատյանի ղեկավարությամբ հնչակյանները քննարկում են ստեղծված իրավիճակը և 7 հոգուց բաղկացած մի խումբ են կազմում: Այդ խմբի մի մասը՝ Մ. Տամատյանի գլխավորությամբ, շարունակում է տանել կազմակերպչական աշխատանքներ, իսկ մյուսը՝ Համբարձում Պոյաճյանի ղեկավարությամբ, մեկնում է Թիֆլիս, որ հայ հարուստներից օգնություն հայցի: Թուրքական իշխանությունները, բացահայտելով Մ. Տամատյանի գործունեությունը, 1893 թ. ձերբակալում են նրան, ապա Մշո բանտից տեղափոխում են Բիթլիս: Կուսակալի խորհրդով նա մեղայական է գրում սուլթանին, որը կանչում է նրան Կ. Պոլիս և ներում շնորհում, թերևս ոչ այնքան մեղայականի, որքան նրա կաթոլիկ լինելու համար[3]:

Համբարձում Պոյաճյանը Թիֆլիսում դիմում է հայ հարուստներին՝ օգնության խնդրանքով, բայց մերժում ստանալով՝ վերադառնում Սասուն: Նրա եռանդուն քարոզչության շնորհիվ գյուղացիները շարունակում են հրաժարվել պետական ու աղայական հարկերից: Շուտով նա իմանում է, որ իշխանությունները նորոգում են «Սուղանի» կամ «Մազե կամուրջը»՝ զորք ուղար-

[2] Մասիս, 1883, օգոստոսի 11:

[3] Կաթոլիկ հայերը Հռոմի պապի հովանավորությունն էին վայելում, այդ պատճառով էլ որոշ դեպքերում նրանք համեմատաբար զերծ էին մնում ծանրագույն բռնություններից:

կելու և սասունցիներին պատժելու համար: Մուրատը արագորեն կազմակերպում է լեռնականներին և նրանց միջոցով քարուքանդ է անում կամուրջը: Սուլթանական կառավարությունը պաշարում է Սասունը, սակայն հանդիպելով լավ կազմակերպված դիմադրության՝ Թուրքական կանոնավոր զորքը չի կարողանում հաղթահարել լեռնային Սասունի դժվարամատչելի բարձրունքները և որպես պատասխան՝ ավերում է դաշտի գյուղերն ու ծերբակալում նրանց երևելիներին:

Հնչակյան կուսակցության Տարոնի վարչությունը 1894 թ. փետրվարի 28-ին կոչ է անում համայն հայությանը. «Հայ ժողովուրդ, Սասունը և Տարոնը սաստիկ հալածանքներից հարկադրված, պարզած են հեղափոխական կարմիր դրոշակը: Ուստի, կանգնեցե՛ք ամենուրեք և միևնույն ուժգնությամբ կռվեցե՛ք թշնամու դեմ, քանի որ ամենուրեք միևնույն վիճակն ու հալածանքը կտիրե»[4]: Սակայն այդ կոչը մնաց անպատասխան. հայերը դարերի դառը փորձ ունեին. թուրքական կառավարությունը դաժանորեն ճնշում էր ամեն մի ազատագրական նկրտում, եթե ապստամբներին չէր պաշտպանում եվրոպական որևէ հզոր պետություն, ինչպես դա եղավ հույների, բուլղարների, հետագայում նաև սերբերի հետ:

Սասունը մնում է մենակ: Հուլիսի 28-ին թշնամին անցնում է հարձակման: Կուսակցությունը հայտարարում է, որ Սասունը պատերազմի մեջ է և ամեն մի հայ պարտավոր է օգնության հասնել նրան:

Լեռնականների այս ապստամբությունը պետք է դիտել ոչ թե տեղական նշանակություն ունեցող միջադեպ, այլ ազգային կարևորության իրադարձություն: Անհրաժեշտ է լինում գեթ մի փոքր շեղել թշնամու ուշադրությունը Սասունից, կազմակերպելով, մի կողմից, ասպատակային գործողություններ, իսկ մյուս կողմից՝ գոնե մի երկու տեղ հեղափոխական շարժում կազմակերպել[5]: Սակայն այդ կոչը ևս մնում է անարձագանք:

Այսպիսով, հնչակյանները, կազմակերպելով Սասունի ապըստամբությունը, ըստ երևույթին, ուզում էին համազգային շարժում կազմակերպել, որը, վերջին հաշվով, պիտի հանգեցներ արևմտահայության ազատագրմանը: Բայց նրանց այդ ձեռնարկումը չհասավ իր նպատակին: Սասունցիները չեն կարողանում

[4] Հնչակ, 1894, փետրվարի 29:

[5] Այդ կոչը թեև հրապարակված է նոյեմբերի 20-ին, բայց բովանդակությունից երևում է, որ այն գրված է օգոստոսին:

երկար դիմանալ թշնամու գերազանցող ուժերին: Նրանց ելույթն օգոստոսի 24-ին ավարտվում է պարտությամբ: Սպանվում է շուրջ 5 հազար մարդ: Համբարձում Պոյաճյանը ձերբակալվում է ու փակվում է Մշո բանտում, ապա ուղարկվում է մայրաքաղաք: Սուլթանը պահանջում է կախաղան բարձրացնել նրան, բայց եվրոպական տերությունների միջամտությամբ փոխում է այդ որոշումը. նա աքսորվում է Տրիպոլ՝ ցմահ բանտարկության: Ապստամբության մյուս ղեկավարները կամ զոհվում են, կամ դատապարտվում տարբեր ժամկետների բանտարկության:

Դաշնակցությունը չմասնակցեց Սասունի 1894 թ. ապստամբությանը: 1893 թ.՝ ապստամբության նախօրյակին, Մուրատը Թիֆլիսում խնդրում է իրենց կուսակցության անդամ, անվանի գրող Ղ. Աղայանին՝ կազմակերպել Սասունին նյութական օգնություն: Աղայանը խորհուրդ է տալիս նրան դիմել դաշնակցության ղեկավարներից մեկին՝ Ս. Զավարյանին: Մուրատը դիմում է Զավարյանը, սակայն վերջինս խոստանում է օգնել Սասունին պայմանով, եթե հնչակյաններն ապստամբությունը համարեն դաշնակցության կազմակերպած գործ: Մուրատը, սակայն, մերժում է: Եվ դաշնակցությունը հրաժարվում է կազմակերպել Սասունի նյութական օգնությունը[6]:

Սակայն, ՀՅԴ կուսակցությունն, այնուամենայնիվ, բարոյապես սատար է կանգնում ապստամբներին: 1894 թ. հուլիսին նրա պաշտոնաթերթ «Դրոշակը» գրում էր, որ հայ ժողովուրդը իր ձեռքն է վերցրել իր ազատության գործը և ահեղ կռվի է ելել սուլթանական կառավարության դեմ: Ֆիզիկական ուժը թեև կառավարության կողմն է, բայց բարոյական ուժը ապստամբների կողմն է: Հաղթանակը կտանի նա, ով բարոյապես բարձր է: Այդպիսին է եղել պատմության ընթացքը Անգլիայում, Ֆրանսիայում և աշխարհի առաջավոր այլ երկրներում: Մեր նշանաբանն է «Մահ, կամ ազատություն»: Հարցը կտրուկ է դրված. «Այժմ կամ երբեք»[7]:

1894 թ. օգոստոսին, երբ ահեղ մարտեր էին մղվում Սասունում, «Դրոշակը» գրում էր, որ մարդկության պատմության արշալույսից սկսած պայքար է գնում հարստահարողների ու կեղեքվողների միջև: Այդ պայքարը մի երկրում ընթացել է բարենորոգումներով, մի այլ երկրում՝ հեղափոխություններով: Օսման-

[6] Ա. Չելեպյան, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը, Երևան, 1990, էջ 101: Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցություն, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 141:

[7] Դրոշակ, 1894, թիվ 9, էջ 1-3:

յան կայսրությունում հայը չի կարող ազատագրվել բարենորոգումներով, որովհետև այնտեղ երբեք չեն գործել քաղաքակիրթ օրենքները: Այդ երկրում օրենքների փոխարեն միշտ բռնությունն ու դաժանությունն է իշխել... Նա՝ հայ ժողովուրդը, կարող է փրկվել միայն հեղափոխությամբ: Ուստի, դաշնակցությունը դիմում է այդ ժողովրդին կոչով. «Պետք է թոթափել այդ խայտառակ լուծը, ոչնչացնել ներկա միապետական բռնակալ ռեժիմը, ձեռք բերել ազգերի համերաշխություն, աշխատանքի ապահովություն, խղճի, խոսքի ու համոզմունքների ազատություն»:

1894 թ. նոյեմբերի 15-ին դաշնակցությունը հանդես է գալիս «Հինգ հազար նահատակներ» վերնագրով մի թռուցիկով, որով ազդարարում էր, Սասունի գոյամարտում զոհված 5000 նահատակների մասին: «Նրանց արյունով ներկված սարերն ու քարերը բողոքում են, արդարություն են պահանջում: Բայց չգիտեն, որ «աշխարհիս արդարությունը սուրն է, հրացանն է, թնդանոթն է... Պատմական հանգամանքների անխուսափելի հոսանքը մղում է մեզ դեպի կռիվ, և խաղաղությունը մեր ու տաճիկների միջև այլևս անդառնալի է: Այսօր Սասունը, վաղը Մուշը, Վանը, Էրզրումը, Բաղեշը և այլն ոտքի են կանգնելու, ազատության կռիվը ընդհանուր է. և հրդեհի պես բռնկվելու է շուտով ամբողջ Հայաստանը: Պատրաստվե՛նք, հայե՛ր, այս մեծ ու փառավոր կռվի համար. մտնե՛նք այդ կռվի մեջ, առնենք մեզ վրա նրա բոլոր ծանրությունը, չթուլանա՛նք... «Մենք՝ հայ հեղափոխականներս, տեսնելով մեր եղբայրների նահատակությունը, նախանձում ենք նրանց փառքին, ափսոսում ենք, որ մենք էլ նրանց հետ չմեռանք, ափսոսում ենք, որ մեր արյունը չկարողացանք խառնել Սասունի հերոսների արյան հետ: Եվ այժմ... մենք երդվում ենք ամբողջ ազգության առաջ, չխոտորվել մեր ճանապարհից, երկաթե կամքով ու հաստատակամությամբ առաջ տանել հեղափոխության գործը, մինչև որ ամբողջ ժողովուրդը կմիանա մեզ հետ, մինչև որ նա ընդունակ կլինի ոչ միայն զոհվելու, այլև հաղթելու իր թշնամուն: Սասունի լեռներում ընկած 5000 սուրբ նահատակները թող վկա լինեն մեր այս երդմանը: Վրեժի կրակը երբեք չի մարելու մեր մեջ»[8]:

Դաշնակցության ղեկավարները նշում էին, որ Սասունի ողբերգությունից պիտի ոչ թե հուսահատվել, ընկճվել, այլ ընդհակառակը՝ անհրաժեշտ է «կրկին դիմել դեպի կոտորած, դեպի արյուն, դեպի զոհ»: Դա է փրկության միակ ճանապարհը: Նրանց կարծիքով փրկությունը զոհեր է պահանջում: Որքան գործը մեծ

[8] Դրոշակ, 1894, թիվ 13-14:

է, այնքան մեծ պետք է լինեն զոհերը: Եվ Սասունը եղավ այդպիսի զոհերից առաջինը: «Դեռ քանի՞-քանի՞ այդպիսի զոհեր ենք տալու», քանի՞-քանի՞ կախաղաններ, բանտեր ու տառապանքներ ենք տեսնելու, որ վերջապես հասնենք ազատության»:

Դաշնակցականները հիշեցնում են, որ Հունաստանում՝ մինչև նրա ազատագրվելը, մի անկյուն, մի քար անգամ չէր մնացել որ չներկվեր նրա որդիների արյունով, մի գյուղ անգամ չէր մնացել, ուր չխոշտանգվեին նրանք: Բուլղարիան իր ազատության համար այնքան դիակներ տվեց, այնքան արյուն հոսեցրեց, որ բոլոր ազգերն ասում էին, թե վերջացավ, այլևս աշխարհում չկա բուլղարացի: Բայց նա կրկին ոտքի կանգնեց ու փրկվեց: Հեղափոխությունը, ազատությունը արյուն են պահանջում, չպետք է խուսափել դրանից, ընդհակառակը՝ պետք է գնալ դեպի առաջ, «դեպի կոտորած, դեպի կռիվ: Ձեռք-ձեռքի տանք, կռվենք, ահա մեր գործը»[9]:

Սասունի ապստամբության հանդեպ արմենական կուսակցության հստակ դիրքորոշման մասին մենք փաստեր չունենք մեր ձեռքի տակ: Սակայն կուսակցության պաշտոնաթերթ «Արմենիան» դրականորեն էր արձագանքում սասունցիների ապըստամբությանը և անողոք քննադատում էր օսմանյան կառավարության ու քուրդ ցեղապետերի վայրագությունները նրանց նկատմամբ և իր էջերում արտատպում էր «Մշակի», «Արձագանքի», «Նոր դարի» և այլ պարբերականների նյութերը. նրանք համակիր էին և արդարացնում էին Սասունի ապստամբությունը:

Այսպիսով, Սասունի 1894 թ. ապստամբությունը կազմակերպեցին ու ղեկավարեցին հնչակյանները, իսկ դաշնակցականներն ու հասարակական-քաղաքական մյուս ուժերը միայն բարոյապես պաշտպանեցին նրանց:

Սասունի ապստամբությունը հայ ժողովրդի բազմադարյա պատմության պայծառ էջերից է: Այն օսմանյան բռնապետության դեմ հայ ժողովրդի՝ դարերով կուտակված ցասման ու զայրույթի արտահայտություններից մեկն էր: Չնայած պարտությանը՝ սասունցիները ազատագրական պայքարի մեծ փորձ ձեռք բերեցին: Նրանց փորձն հետագայում կիրառեցին նաև արևմտահայության այլ զանգվածները, հատկապես ազգային կուսակցություններն ու կազմակերպությունները: Սասունի կռիվներում իրենց մարտական մկրտությունն ստացան ազատագրական շարժման այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Մուրատը, Հրայրը, Գևորգ Չաուշը և ուրիշներ: Նրանք իրենց ձեռք բերած փորձը հմտորեն ի գործ

[9] Նույն տեղում, թիվ 14, էջ 22:

դրեցին հետագայում՝ օսմանյան բռնապետության և քուրդ ցեղապետերի ու աղաների դեմ մղվող պայքարում:

Սասունցիների ապստամբությունը բարոյապես ստիպեց եվրոպական մեծ տերություններին զբաղվելու հայկական հարցով և գործնական քայլեր կատարել նրա լուծման ուղղությամբ: Կ. Պոլիսում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները հանգամանորեն ուսումնասիրել էին Սասունի կոտորածների հանգամանքները և ի լուր աշխարհի հայտարարել էին կատարված ողջ ճշմարտությունը, որ սուլթանական կառավարությունը պատժել է ոչ թե հայ ավազակներին, ժողովրդի հանգիստը պղտորող խառնակիչներին, ինչպես դա ցանկանում էին ներկայացնել միջազգային հանրությանը համիդյան պաշտոնյաները, այլ կոտորել է նրա հարստահարությունների ու բռնությունների դեմ ոտքի ելած խաղաղ բնակիչներին: Դեսպանները 1904-1905 թթ. մշակում են բարենորոգումների մի ծրագիր, որը ավարտեցին 1905 թ. մայիսի 11-ին (այդ պատճառով կոչվում է «Մայիսյան ծրագիր») և ներկայացնում են Բ. Դուռ՝ քաղաքական կիրարկման պահանջով: Ծրագիրը թեև քաղաքական, բարոյական, սոցիալական, իրավական և ազգային խնդիրների լիարժեք լուծում չէր տալիս և չէր բավարարում արևմտահայության լայն խավերի պահանջները, թեև մնաց թղթի վրա՝ անիրագործելի, բայց և այնպես այն երևույթ էր Հայկական հարցի բարձրացման ճանապարհին: Այդ փաստաթուղթը հիմք տվեց միջազգային դեմոկրատական ուժերին ավելի լայնորեն և հիմնավորապես բացահայտելու և քննադատելու սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականությունը: Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Գլադստոնը Աբդուլ Համիդին անվանում է «Մեծ մարդասպան»: Այդ բնութագրումը հավանության է արժանանում եվրոպական հրապարակախոսների կողմից և լայնորեն օգտագործվում է նրանց բանավոր ու գրավոր ելույթներում:

Սասունցիների ազատագրական ոգու կրակը չէր մարել ապստամբության ճնշման տարիների ընթացքում. 1904 թ. Սասունում բռնկվեց համաժողովրդական նոր խռովություն, որի մասին մենք հանգամանորեն խոսել ենք մեր «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.)» աշխատության մեջ:

1908 թ. թուրքական բուրժուական հեղափոխությունը խթան հանդիսացավ գյուղացիական նոր ելույթների համար: Գյուղացիները գրեթե ամենուրեք բռնագրավում էին աղաների հողերը, քշում էին նրանց, հրաժարվում էին հարկեր ու տուրքեր տալուց

և այլն: 1908 թ. օգոստոսին Շատախի Ծիծանց գյուղի բնակիչները հրաժարվում են ցեղապետի օգտին աղալքք կոչված տուրքը վճարելուց[10]:

1910 թ. Վանի վիլայեթի Շահբազ գյուղի բնակիչները երկարատև բողոքից հետո, ըստ մի ականատեսի վկայության, «վճռական քայլեր արին՝ Շեյխի գութանը իրենց հողերեն արտաքսելով»[11]: Երբ շեյխը փորձում է ոստիկանների օգնությամբ գյուղացիներին հանել իր հողից, նրանք զինված դիմադրություն են ցուցաբերում: Ականատեսը գրում էր. «ընդհարումը քիչ մնաց սուր հանգամանք ստանար, եթե շեյխը տեղի չտար»[12]:

1911 թ. ըստ մի ռուս գեներալի հաղորդման, Էրզրումի վիլայեթի Օվայի նահիեի Ծիթող գյուղի բնակիչները ծեծում են թուրքական հարկահավաքին, նրա հետ եկող երկու ժանդարմներին և սպառնում. «Եթե նրանք նորից երևան ու հարկ ուզեն, ապա կսպանվեն»[13]:

1913 թ. Վանի վիլայեթի Գավաշ կազայի Պախվան, Հին և Բաշկալե գյուղերում գյուղացիները վռնդում են հարկահավաքներին, որի պատճառով սուր ընդհարում է առաջանում: Գործին միջամտում է կայմակամը, որը «քյուրտերը լավ մը ծեծելե վերջը կը բանտարկե»[14]:

Ուշագրավ է, որ 1908 թ. պետական հեղաշրջումից հետո տարբեր ազգի գյուղացիների համատեղ պայքարը ստանում էր ավելի ու ավելի հաճախակի բնույթ: 1910 թ. «Ազատամարտը» գրում էր, որ Բիթլիսի վիլայեթի մի քանի հայաբնակ և քրդաբնակ գյուղերի բնակիչները, խոսքերը մեկ արած բողոքում են իրենց հարստահարող բեկերի դեմ: Թերթը ապա շարունակում էր. «Բաղեշի Չուգուր նահիեի 33 գյուղերու ժողովուրդը, որուն ստվար մեծամասնությունը քյուրտեր են, կը բողոքեն բաղեշցի և տեղվույն իտարե ժողովին անդամ Հաճի Նեճմետտին էֆենտիի դեմ»:

«Մանազկերտի քյուրդ և հայ (14 քյուրդ և 3 հայ) գյուղերը կը բողոքեն Ֆեթուլլահ, Սուլեյման, Հյուսեին պեյերուն դեմ իրենց հողերուն ըրած ոտնձգությանց նկատմամբ»:

---

[10] Տես՝ «Բյուզանդիոն», 1908, օգոստոսի 23:

[11] Հորիզոն, 1910, օգոստոսի 6, թիվ 171:

[12] Հորիզոն, 1910, օգոստոսի 6, թիվ 171:

[13] АВПР, ф. «Посольство в К-поле», 1914, д. № 2685, р. 36:

[14] Վան-Տոսպ, 1913, մարտի 23, էջ 99:

«Բուլանըխի Ապրի գյուղացիները ըմբոստանում են շեյխ Սուլեյմանի բռնություններուն դեմ»:

Մշո դաշտի Վարդենիսի, Առնեստի և Դրմերդի գյուղացիները ծառանում են իրենց հողերի՝ չերքեզ գաղթականների գրավման դեմ: «Արդխոնք և Տոմ գյուղացիները՝ իրենց գյուղերու աղաների կեղեքումներու և գրավումներու դեմ: Կինճի Փասուր գազայի Կելիկընման և Կելիմսուր գյուղացիները՝ Գուլփը Հյուսեին աղայի ոտնձգություններու դեմ» և այլն[15]:

1911 թ. հունիսի 5-ին Վանում Ռուսաստանի փոխհյուպատոսը հաղորդում էր, որ Մուշի սանջակի հայ և քուրդ գյուղացիների մի մասը պահանջել է Կ. Պոլսի իշխանություններից՝ «հենց հիմա վճռել հողային հարցը... ճշմարտացի պաշտպանել սահմանադրությունը, պատժել հանցագործներին և անհապաղ վերադարձնել անիրավացի կերպով գրաված իրենց հողերը»[16]:

Արևմտյան Հայաստանի հայ գյուղացիների մի մասն էլ դասակարգային ակտիվ պայքարին զուգահեռ վարում էր, այսպես կոչված, օրինական և քաղաքակիրթ պայքար: Նրանք բողոքագրեր և խնդրագրեր էին ուղարկում վերին ատյաններին, հրաժարվում էին հարկեր ու տուրքեր վճարելուց կամ փախչում էին ատելի տերերի մոտից: Սակայն թուրքական իշխանությունները դաժան կերպով ճնշում էին թե՛ հեղափոխական, թե՛ խաղաղ ելույթները:

* *
*

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին իրենց հարստահարողների դեմ ընդվզում էին նաև Արևմտյան Հայաստանի քաղաքային բնակիչները: 1879 թ., երբ ձեռնարկատերերը Արաբկիրում փորձել էին աշխատավարձը վճարել պատերազմի հետևանքով արժեզրկված օսմանյան 100 ղուրուշանոց թղթադրամներով, ջուլհակագործները գործադուլ էին հայտարարել և գործը չէին սկսել այնքան ժամանակ, մինչև որ ձեռնարկատերերը չէին բավարարել նրանց պահանջները: Այդ գործադուլի մասին մենք իմանում ենք Գ. Սրվանձտյանցի և Վ. Փափազյանի հաղորդած տեղեկություններից: Գ. Սրվանձտյանցը 1884 թ. գրում էր, որ ջուլհակագործները «իմ հոն եղածս օրերը բանթող (գործադուլ)

[15] Ազատամարտ, 1910, մարտի 20, թիվ 238:

[16] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 58, թ. 41:

ըրած էին, իրենց օրականը թղթադրամով վճարելու առթիվ. գործատերեր, որ վաճառականներն են, մեծ հուզմունքի մեջ էին. գործողներ երդմամբ կապված էին իրարու մինչև իրենց ուզած գինը տրվեր. անեծք և տուգանք սպառնացած էին իրենց ուխտեն բաժանվողին: Ինքզինքս Լոնդոնի մեջ կը կարծեի»[17]:

Իսկ Վ. Փափազյանը 1888 թ. նշում էր. «Պատմում են, որ Արաբկիրում... 1879 թվականին գործավորները մի այնպիսի գործադուլ արին, որ բոլոր գործարանատերերը հուսահատվել էին. պատճառն այն էր, որ օսմանյան 100 ղուրուշանոց թղթադրամի գինը իջել էր 40 ղուրուշի, և գործավորներին 100 ղուրուշանոց հաշվելով էին վճարում: Մինչև որ չգոհացան, գործ չսկսեցին»[18]:

Խարբերդում, ըստ Վահե Հայկի հուշերի (ցավոք, նա չի նշում տարեթիվը), կաշեգործները առաջարկում են ձեռնարկատերերին ավելացնել աշխատավարձը և մերժում ստանալով՝ գործադուլ են հայտարարում: Ձեռնարկատերերը, տեսնելով, որ իրենց ապրանքը փչանում է, բարձրացնում են աշխատավարձը և «մյուս գործատերերն ալ հետևեցան օրավարձքի կանոնավորության»[19]:

Բանվորների ու քաղաքային բնակչության քաղաքական հուզումները զանգվածային բնույթ ստացան 1905-1908 թթ.՝ ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության արձագանքների ազդեցության հետևանքով: Նրանք գրեթե ամենուրեք ոտքի են կանգնում, պահանջում իջեցնել և անգամ վերացնել որոշ տուրքեր: 1906 թ. օգոստոսի 11-ին Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը հաղորդում էր, որ Էրզրումում, ինչպես և վիլայեթի մի քանի բնակավայրերում (Խնուս, Հասան-կալա, Իդ) նույն թվականի մարտին հարկային դաժան հարստահարման հետևանքով տեղի են ունեցել լուրջ հուզումներ[20]: Բնակիչները, բավարարում չստանալով իրենց պահանջներին, գործադուլ են հայտարարում, հարձակվում են գործատուների վրա, սպանում նրանց, ծերբակալում թուրքական պաշտոնյաներին և արտաքսում: 1906 թ. հոկտեմբերին Էրզրումի բնակչությունը նույնպես ոտքի է կանգնում՝ պահանջելով կառավարությունից վերացնել

[17] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Ա, էջ 281:

[18] Վ. Փափազյան, հ. 5, էջ 513:

[19] Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 616-617:

[20] АВПР, ф. «Политархив», 1906, № 1642, р. 162:

գլխահարկը և չբարձրացնել անասնահարկը: Երբ վալին Կ. Պոլիս է աքսորում շարժման մասնակիցներից ոմանց , քաղաքի բնակիչները ձերբակալում են նրան և սպառնում «սպանել, եթե աքսորվածներին ետ չի դարձնի»[21]: Այնուհետև նրանք հարձակվում են զորանոցի վրա և սպանում ոստիկանապետին, նրա որդուն, ինչպես նաև շարքային մի ոստիկանի: Էրզրումցիները վալիին ազատում են միայն այն ժամանակ, երբ աքսորվածները վերադառնում են Էրզրում: Թուրքական կառավարությունը, զանգվածային հուզումների ճնշման տակ, հարկադրված է լինում փոխել վալիին: 1906 թ. նույն առիթով համարյա նույնպիսի շարժում տեղի ունեցավ նաև Բիթլիսում: Ականատեսներից մեկը գրում էր. «Ժողովրդի համար դժգոհության մեծ առիթ է տուրքերի ծանրությունը, տուրքերի հավաքման ժամանակ կատարված բռնություններն ու այն գեղծումները, որ կատարվում են առհասարակ երկրի ֆինանսական միջոցների գործադրության մեջ»[22]: Բիթլիսի ժողովուրդը պահանջում էր նաև իշխանություններից թերթերում գրել Ռուսաստանի հեղափոխական շարժումների, նաև Պարսկաստանի սահմանադրական խմորումների մասին:

1907 թ. սեպտեմբերի 9-ին Էրզրումում ամբոխը հարձակվում է Գրիգոր Օհանյանի վրա և «փայտի ու քարի հարվածներ տեղալով»՝ սպանում է նրան: Պատճառն այն էր, որ վերջինս ոմն թուրք Ալեանանք-զադե Թեվֆիկ-էֆենդու հետ վաղօրոք գնել, ամբարել էր հացահատիկ և վաճառում էր շուկայի գներից շատ ավելի թանկ գներով: Ձայրացած ամբոխը փնտրում է Թեվֆիկ էֆենդուն և հացահատիկ վաճառող Բալասանյանին՝ նրանց ևս սպանելու համար: Թեվֆիկ էֆենդին թաքնվում է զորանոցում, իսկ Բալասանյանը, որ մոտակա գյուղերում էր, լսելով այդ մասին, թողնում է Էրզրումը և փախչում Կովկաս[23]:

Կառավարությունը Էրզրումցիների շարժումը ճնշում է զորքի օգնությամբ[24], իսկ ցորենի վաճառականները, վախենալով նրանց ելույթից, «ստիպվեցին չափավոր գներով ալյուր բաժանել հացագործներին»[25]:

Նույն թվականի հոկտեմբերին Վանի մի քանի ձեռնարկությունների բանվորներն ու աշակերտները, հատկապես կահույքագործները, գործադուլ են հայտարարում և վարպետներից պահանջում. «Գլխավոր աշակերտին (խալֆա) պետք է վճարվեր ամսական մեկ ոսկի, երկրորդ խալֆային՝ երեք մեջիդ, մնացյալներին՝ երկու մեջիդ, իսկ առաջին անգամ ընդունվողներուն, որք դեռ նոր արհեստ պիտի ուսանեին՝ մի մեջիդ, եթե արկած մը պատահեր և բանվորը ալ աշխատելու անկարող ըլլար՝ գործատերն ընդմիշտ անոր ամսականը տալու էր. աշակերտի մը ճամբա տալու պարագային՝ գործատերը երկու ամսական պետք էր ցնծալ անոր և այլն, և այլն»[26]:

Գործադուլավորները երդվել էին չգնալ աշխատանքի, մինչև վարպետները չկատարեն այդ պահանջները, իսկ ով փորձի գնալ, «նախ կսպառնային, ապա աղեկ մը տփոց կը քաշեին»[27]:

Սակայն այստեղ գործադուլավորները չեն կարողանում արդյունքի հասնել:

1907 թ. Գյուրինում վաճառական-ձեռնարկատերերը իջեցնում են ջուլհակների աշխատավարձը: Դրա պատճառով «երկու հազար գործավորներ... անգործ մնացին (գործադուլ ըրին), որով իրենք ալ աղեկ դաս մը տվին աղաներուն»: Այսինքն՝ վնաս հասցրին նրանց: Ձեռնարկատերերը աշխատում էին համոզել բանվորներին և առանց զիջումի դադարեցնել գործադուլը, բայց՝ ապարդյուն: Գործին միջամտում է քաղաքագլխի տեղակալ Հասան Հյուսեին բեյը և ձգտում՝ համաձայնության բերել կողմերին: Թե ինչպե՞ս է լուծվել խնդիրը, ցավոք անհայտ է մեզ[28]:

Որոշ տեղերում տնայնագործները ևս թոթափում էին վաճառական-ձեռնարկատերերի լուծը և ստեղծում յուրատեսակ կոոպերացիա: Նրանք իրենց ձեռքն էին վերցնում հումքի հայթայթման և գործվածքների իրացման գործը: Շատախում մի խումբ շալագործներ 1908 թ. համախմբվում են Միության մեջ, ստեղծում են իրենց վարչությունը և բաց անում խանութ, որը սպասարկում էր ոչ միայն կոոպերացիայի անդամներին, այլ նաև ուրիշներին: Ականատեսներից մեկը 1910 թ. գրում էր. «Երբեմնի 11 անդամ ունեցող Միությունը՝ այժմ 50 զոհաբերող ընկերներ ունի: Այժմ ամեն առավոտ կը տեսնենք, թե ինչպես Միության վարձած փոքրիկ գործարանին մեջ փոխն ի փոխ կաշխատին բոլոր անդամները: Միությունը ունի իր վարչությունը, որու խելացի

[21] Մշակ, 1906, հոկտեմբերի 20, թիվ 229:

[22] Մշակ, 1907, սեպտեմբերի 13, թիվ 05:

[23] Մշակ, 1907, հոկտեմբերի 19, թիվ 135:

[24] Մշակ, 1908, հունվարի 19, թիվ14:

[25] Մշակ, 1907, հոկտեմբերի 19, թիվ 135:

[26] Մշակ, 1907, նոյեմբերի 3, թիվ 148:

[27] Նույն տեղում:

[28] Տե՛ս «Երկրի Ձայն», 1907, թիվ 30, էջ 4-5:

ջանքերուն շնորհիվ՝ Միությունը վերջերս բացավ «Սպառողական խանութ» մը, ուրկե ո՛չ միայն իր անդամները, այլև Թաղին բոլոր արհեստավորները կօգտվին»[29]:

Իհարկե, Արևմտյան Հայաստանի պայմաններում կոոպերացիան տնայնագործներին չէր ազատում շահագործումից, բայց որոշ չափով թեթևացնում էր նրանց վիճակը:

1911թ. բանվորական գործադուլ տեղի ունեցավ նաև Երզնկայում: Սակայն ձեռնարկատերերը, բարձրացնելով ջուլհակների մի մասի աշխատավարձը, ջլատում են նրանց միասնությունը և կարողանում են վերջ տալ գործադուլին: Երզնկայից ուղարկված մի թղթակցության մեջ այդ առթիվ ասվում էր. «Գործավորական շարժում մը մեր քաղաքին մեջ ալ սկսած է: Կազդուրիչ երևույթ մըն է. երևույթը մանավանդ գործող և մասուրա[30] լեցնող կիներուն գործադուլը, որ հաջող ելք ունեցավ՝ հակառակ աննպաստ պայմաններուն: Անոնք չէին կազմակերպված, չունեին նույնիսկ քանի մը ղուրուշի պահեստ, որ կարողանային պայքարիլ գործատերերուն հավանական ընդդիմության դեմ: Յուրաքանչյուր մասուրայի 1փր. և 1 հրդ. մասուրային ալ 10 փր. հավելում կը պահանջեին: Ու երևակայել, թե շատեր դժկամեցան վճարել այդքան աննշան գումար մը: Բանվորուհիներուն մեջ նկատելի էր տհաստությունը, այնպես, որ երբ քանի մը կիներ գոհացում գտան՝ անմիջապես վազեցին՝ առանց իրենց միևնույն նպատակի համար աշխատող քույրերը նկատի ունենալու»[31]:

Անհրաժեշտ է նշել, որ թուրքական կառավարությունն ու ձեռնարկատերերը բանվորների դեմ մղած պայքարում երբեմն կարողանում էին օգտագործել նրանց ազգային կազմը ու պառակտել շարժումը, բայց հաճախ նրանց դա չէր հաջողվում, քանի որ տարբեր ազգության պատկանող բանվորները միևնույն ձեռնարկությունում աշխատում էին համերաշխ և պայքարում էլ ցուցաբերում էին միասնություն և համախբվածություն: 1883 թ. Շերենցը գրում էր. «1871-1872 թվականներում ինձ հաջողվեց տեսնել Ասիական Տաճկաստանի գլխավոր քաղաքների արհեստանոցներում խառն ազգաբնակությամբ պարապող մարդկանց բազմություն. որպես միամոր և միահոր որդիք այդ բանվոր դասը անկեղծ հավատարմություն ունի դեպի իր բանվոր ընկերները: Տիգրանակերտում, Բերայում, Հալեպում, Դամասկոսում և այլն, ուր բազմաթիվ են մետաքսյա գործված տարազների արհեստանոցներ և այլ գործարաններ-քարխանաներ, մահմեդական բանվորը կամ արհեստավորը այն համակրությունն է ցույց տալիս դեպի ոչ մահմեդական, որից մարդ սպասել կարող է և անձնանվիրություն»[32]: 1907 թ. ականատեսներից մեկը նշում էր. «Մենք ջերմապես գովում ենք Էրզրումի և Բիթլիսի բնակիչներին և այլն թուրքերին, որոնք միաբան ոգով բողոքում են կառավարության դեմ»[33]:

Արևմտյան Հայաստանում բանվորական շարժումների առանձնահատկությունն այն էր, որ դրանք մեծ մասամբ ինքնաբուխ էին և տարերային: Նրանց պայքարը գրեթե հիմնականում տնտեսական բնույթ ուներ. քաղաքական պայքարի գաղափարը նրանց մեջ չհասցրեց հասունանալ: Երիտթուրքական իշխանություններն ամենուրեք ճնշելով ժողովրդական շարժումները՝ դաժան հաշվեհարդար էին տեսնում նրանց մասնակիցների հետ:

[29] «Ազատամարտ», 1910, հուլիսի 31, թիվ 348:

[30] Ստ. Մալխասյանի բացատրությամբ մասուրան ծագում է տաճկերեն masura բառից: Այն բարակ եղեգի փողանման կտոր է, որի վրա փաթաթում են թելը և հագցնում մագոգի մեջ (տե՛ս նրա «Հայերէն բացատրական բառարան», հ. III, Երևան, 1944, էջ 263):

[31] «Ազատամարտ», 1911, հունիսի 8, թիվ 608:

[32] Մշակ, 1883, օգոստոսի 25, թիվ 115:

[33] Մշակ, 1907, դեկտեմբերի 28, թիվ 194:

Հավելվածներ[1]

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՉԱՓԵՐՆ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԸ, ՍՈՑԻԱԼԱԿՆ ԲԱՌԵՁՐԵՐ

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում Թուրքիայի պետական դրամական միավորների, չափերի ու կշիռների հետ գործում էին նաև տեղականները: Որոշ մասնագետներ ռազմական և տնտեսական նկատառումներով ուսումնասիրել են Թուրքիայի տարածքում գործող միավորները, չափերն ու կշիռները և այդ ուսումնասիրությունները հրատարակել են: Պահպանվել են նաև ուսումնասիրություններ ձեռագիր վիճակում: Կարինի ռուսական հյուպատոսության աշխատակից Յա. Դ. Մալամայի[2] և Վանի ռուս փոխհյուպատոսության աշխատակից Ա. Մ. Պրժևալսկու[3] ուսումնասիրությունները հրատարակված են, իսկ Կարինի ռուսական հյուպատոս Ն. Տիմոֆեևի ուսումնասիրությունը մնացել է ձեռագիր վիճակում և մինչև այսօր էլ պահվում է Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ-ում[4]:

Սակայն Յա. Դ. Մալամայի, և Ա. Մ. Պրժևալսկու աշխատությունները դարձել են մատենագիտականն հազվագյուտ օրինակներ և շատերին անմատչելի են: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մենք հարկ համարեցինք մեր աշխատության մեջ առանձին հավելվածով ներկայացնել հրատարակված աշխատությունները, և առաջին անգամ հրապարակել Ն. Տիմոֆեևի անտիպ ուսումնասիրությունը: Եվ քանի որ նշված աշխատությունները չեն ընդգրկում Արևմտյան Հայաստանի բոլոր շրջանները, անհրաժեշտ համարեցինք հրապարակել նաև մեր կողմից զանազան աղբյուրներից հավաքած տեղեկությունները: Կարելի է հուսալ, որ հետազոտողները հետագայում կշարունակեն պրպտումները և կստեղծեն Արևմտյան Հայաստանի դրամական միավորների, չափերի ու կշիռների մասին լիակատար ու ամփոփ աշխատություններ:

---

[1] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965, էջ 289-346:

[2] Տե՛ս «Деньги, весы и меры Эрзерумского вилайета», ген. штаб. полковник Я. Д. Малама.- Тифлис, 1876. Յա. Դ. Մալամայի սույն աշխատության ձեռագիրը Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ-ում է (տե՛ս ֆ. 1087, ցուց. 1, գ. 1025, թթ. 246-253) և հրապարակվածից էապես տարբերվում է:

[3] Տե՛ս «Вилайет Эрзерум», ч. 1, составлен полковником А. М. Пржевальским, ген. штаб. Издание штаба Кавказского военного округа.- Тифлис, 1904.

[4] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 5, գ. 4520, թթ. 4-6:

Сведения, собранные полковником Я. Д. Маламой о денежных единицах, мерах и весах, применяемых в Эрзерумском вилайете в начале 70-х годов XIX столетия

В настоящее время только металлические деньги находятся в обращении в Турецкой империи[5]. После Восточной войны 1853-1856 гг. турецкое правительство хотя и вздумало, по примеру других государств, выпустить в обращение кредитные билеты (каиме), но существование их было непродолжительно.

В 1862 г. оказалось необходимым изъять каиме из обращения, так как вследствие большого их выпуска и вообще недоверия к финансам Турции, - ценность их сильно понизилась. Операция изъятия их была произведена довольно бесцеремонно и с такою поспешностью, что много их осталось необмененными; понятно, что оставшиеся билеты в настоящее время не имеют уже никакой ценности.

Недостаток собственной монеты привлек в Турцию массу серебра и золота иностранного и в особенности русского. Кажется, не будет большой ошибкой, если скажем, что по крайней мере половина всего нашего серебра старого чекана 84-й пробы находится в обращении в Турции. Повсюду можно найти 25 коп., 30 коп., 50 коп. и 75-копеечные монеты, считающиеся в настоящее время у нас большой редкостью. Золота русского также много, преимущественно полуимпериалов; червонцы редки.

Монеты других государств, находящиеся в обращении, преимущественно золотые; серебро же иностранное встречается больше между прибрежным населением.

Вслед за полуимпериалами, по количеству, иностранные монеты встречаются приблизительно в следующем порядке: французские 20-франковые монеты, английские ливры, итальянские и австрийские 20-франковики.

С последнего времени большим доверием пользуются наши кре-

---

[5] Выпущенные в конце 1875 г. бумажные деньги (каиме) в обращении пока не встречаются, да и в будущем, по всей вероятности, не будут по причине известного всем худого состояния финансов Турции.

дитные билеты, и их, вследствие удобства хранения, охотно берут преимущественно купцы, ездящие за товарами в Константинополь, так как перевозка мешков с золотом и серебром является вещью еще далеко не безопасной в азиатских владениях Турции.

Турецкое правительство взимает и выдает деньги по номинальной цене, т.е. считает турецкую лиру, единственную свою золотую монету, обращающуюся в населении, - в 100 пиастров серебряных; в народе же и торговле существует курсовая цена, вечно меняющаяся и, почти в каждом санджаке, различная. Так, например, эта же лира идет в Эрзерум в 126 пиастров медных. Счет в первом случае называется: сах-пара (чистые деньги), во втором чурюк-пара (медные деньги).

Что касается до иностранных монет, то и они тоже имеют соответственный курс чурюк-пара[6].

Во всем рассматриваемом крае счет ведется на чурюк-пара (кроме, как сказано было, расчетов с правительством), в некоторых же местах вне его, как, например, вилайете Диарбекир только на сах-пара, и медных денег там нет, а для мелких расчетов служит сплавная монета из меди и серебра очень низкой пробы.

Прежняя турецкая золотая монета многих наименований ушла почти вся на женские уборы и поделки и потому в обращении встречается очень редко; вследствие этого определенной ценности она не имеет и ценность эта зависит от взаимного соглашения.

Счет ведется преимущественно на пиастры и только при крупных операциях на лиры и вьюки. Во вьюке считают 100 т. пиастров или 1 т. лир. Пиастр на наши деньги равняется 5,5 коп. серебр. Счет на франки ведется только в приморских городах, внутри же страны он не в употреблении. В настоящее время в обращении находятся следующие монеты.

Медные,
в переводе на наши деньги

Бир-пара	1 пара ($^1/_{40}$ пиастра) около 0,14 к.
Беш-пара	5 пара ($^1/_8$ пиастра) около 0,7 к.
Он-пара	10 пара ($^1/_4$ пиастра) около 1,4 к.

[6] В этом отношении некоторые доходят до тонкости. Разменное серебро наше различается по ободкам и каждому ободку соответствует известная ценность.

Игирми-пара	20 пара ($^1/_2$ пиастра) около 2,75 к.
Курклик, кирх-пара	40 пара или 1 пиастр 5,5 к.

Одна пара равняется 3 ахча, 1 ахча - трем пула. Эти две последние монеты существуют, впрочем, только для счета; в обращении же их нет.

Монеты из низкопробного сплава меди с серебром

	Сах-пара	Чурюк-пара
Онлик	10 пар (1,4 коп.[7])	12 пар ($1^1/_2$ коп.)
Игирмилик	20 пар (2,8 коп.)	25 пар (3 коп.)
Кирклик	40 пар или 1 пиастр (5,5 коп.)	$1^1/_4$ пиастр. (6,9 коп.)
Юзлюк	2 пиастр.+ 20 пара (13,8 коп.)	3 пиастр. (16,5 коп.)
Беплик	5 пиастров (27,5 коп.)	6 пиастр. (33 коп.)
Алтмышлык	1 пиастр+20 пара (60 пара) (8,3 коп.)	1 пиастр. 35 пара (10,4 коп.)
Ючлюк	3 пиастра (16,5 коп.)	3 пиастр. 25 пара (20 коп.)
Алтылык	6 пиастров (33 коп.)	7 пиастр. 10 пара (39,9 коп.)

Серебряные монеты

	Сах-пара	Чурюк-пара

В Эрзеруме в конце 1874 г.

[7] Цифры в скобках показывают стоимость на наши деньги в рублях и копейках.

Игирмилик	20 пара (2,8 коп.)	25 пара (3 коп.)
Бирлик	1 пиастр (5,5 коп.)	1 пиастр 10 пара (6,9 коп.)
Икилик	2 пиастра (11 коп.)	2 пиастр. 20 пара (13,8 коп.)
Бешлик	5 пиастров (27,5 коп.)	6 пиастр. 10 пара (34,4 коп.)
Ярым-меджидие	10 пиастров (55 коп.)	12 1/2 пиастров (68,8 коп.)
Беяз-меджидие	20 пиастров (1р. 10 коп.)	25 пиастров (1р. 37,5 коп.)

Золотые монеты

	Сах-пара	Чурюк-пара
Чарек или руб-лира	25 пиастр. (1 р. 37,5 коп.)	34 1/4 пиастр. (1р. 88,4 коп.)
Ярым-лира	50 пиастр. (2р. 75 коп.)	62 1/2 пиастр. (343,8 коп.)
Алтун или лира	100 пиастр. (5р. 50 коп.)	125 пиастр. (6р. 87,5 коп.)
Ики-бучук-лиралык	250 пиастр. (13р. 75 коп.)	312 1/2 пиастр. (17р. 18,8 коп.)
Беш-лиралык	500 пиастр. (27р. 50 коп.)	625 пиастр. (34 р. 37,6 коп.)
Он-лиралык	1000 пиастр. (55 руб.)	1250 пиастр. (68р. 75 коп.)

Старинные золотые турецкие монеты, редко встречающиеся в обращении

	Сах-пара	Чурюк-пара
		В Эрзеруме в конце 1874 г.

Кази	20 пиастров (1р. 10 коп.)	28 пиастров (1р. 54 коп.)
Ярим-кази	10 пиастров (55 коп.)	14 пиастров (77 коп.)
Руб-кази	5 пиастров (27,5 коп.)	7 пиастров (38,5 коп.)
Чичаклы-кази	24 пиастра (1р. 32 коп.)	32 пиастра (1р. 76 коп.)
Чифта-кази	48 пиастров (2р. 64 коп.)	73 пиастра (4р. 1,5 коп.)
Ярим-чичаклы-кази	12 пиастров (66 коп.)	16 пиастров (88 коп.)
Язили-махмудие	68 пиастров (3р. 74 коп.)	120 пиастров (6р. 60 коп.)
Айнали-махмудие	68 пиастра (3р. 74 коп.)	105 пиастра (5р. 72 коп.)
Ярим-махмудие	34 пиастра (1р. 87коп.)	42 пиастра (2р. 31 коп.)
Фндек	40 пиастров (2р. 20 коп.)	50 пиастров (2р. 75 коп.)
Урубиа	10 пиастров (55 коп.)	13 пиастров (71,5 коп.)
Станбол	28 пиастров (1р. 54 коп.)	40 пиастров (2р. 20 коп.)
Ярим-станбол	14 пиастров (77 коп.)	20 пиастров (1р. 10 коп.)
Тарыхлы-кази	19 пиатров (1р. 4,5 коп.)	26 пиастров (1р. 43 коп.)
Тарыхсиз-кази	18 пиастров (99 коп.)	24 пиастра (1р. 32 коп.)
Чикадли-адилиэ	20 пиастров	26 пиастров

	(1р. 10 коп.)	(1р. 43 коп.)
Ялдус	50 пиастров (2р. 75 коп.)	70 пиастров (3р. 85 коп.)

Как уже было упомянуто, почти вся эта золотая монета ушла на женские уборы и изделия и вследствие этого ценность ее (курсовая), как видно из таблицы, не пропорциональная, а зависит от редкости известной монеты.

Наши деньги имели следующую ценность в Эрзеруме в конце 1874 года.

	Сах-пара	Чурюк-пара
Полуимпериал	88 пиастров (по кур. 4р.84 коп.)	112 пиастров (по кур. 6р. 16коп.)
Рубль серебряный	18 пиастров (по кур. 99 коп.)	22 пиастра (по кур. 1р. 21коп.)
Двугривенный стар. чек	-	$3^1/_2$ пиастр. (по кур. 19.3 коп.)
Двугривенный нов. чек.	-	$3^1/_2$ пиастр. (по кур. 17.9 коп.)
Бумажный рубль	-	18 пиастров (по кур. 99 коп.)

Примечание: В Карсе курс вообще бывает ниже эрзерумского на $^1/_2$ -1 пиастр.

Меры емкости сыпучих тел еще разнообразнее монеты и не только каждый санджак, но даже и многие казы имеют свои отдельные меры.

Во всех санджаках, кроме Мушского, следующие меры общие:

	Русский вес:
Драхма	0,75 золотника
Ока = 400 драхмам	3 фунта 12 золотн.

Кода = числу ок в ней разл.	сообразно числу ок.
Сомара = 16 код.	сообразно числу код.

Затем, в отдельных местностях, меры будут следующие:

Санджак Эрзерум

Казы Эрзерум, Хныс, Верхний Пассин и нахии Нижний Пассии и Тортум.

Пшеницы[8]

	Русский вес
Кода = 17 ок	1 пуд 13 ф. 12 золотн.
Сомар = 16 код	21 пудь 10 ф.
Ячменя	
Кода = 15 ок	1 п. 6 фун. 84 золотн.
Сомар = 16 код	18 п. 30 ф.

Каза-Байбурт

Пшеницы

Кода = 14 ок	1 пуд 3 фун. 72 зол.
Сомар = 16 ок	17 пуд. 20 ф.
Ячменя	
Кода = 12 ок	37 фун. 48 зол.
Сомар = 16 код	15 пуд. 7 ф.

Казы Дерджан, Кыги и нахие Гешюк

Пшеницы

Кода = 6 ок	18 фун. 72 зол.
Сомар = 16 код	17 пуд. 20 фун.
Ячменя	
Кода = 4 $^1/_2$ ока	14 фун. 6 зол.
Сомар = 16 код	5 пуд. 25 фун.

(Каза Испир и нах. Киским показаны в Чалдырском санджаке).

Санджак Чалдыр

Казы Олты, Арданич, Испир и нахии Нариман, Пенек, Бардус,

[8] Здесь принят вес наз. белой пшеницы; красная же, разводящаяся в некоторых местностях, как, напр., в Топ-хане, Муше и др., тяжелее приблизительно на 1 $^1/_2$ - 2 пуда на один сомар.

Тавускер, Шавшед и Киским.

Пшеницы

Кода = 14 ок	1 пуд. 3 фун. 72 зол.
Сомар = 16 код	17 пуд. 20 фун.

Ячменя

Кода = 12 ок	37 фун. 12 зол.
Сомар = 16 код	15 пуд. 7 фун.

Нахие Посков, Чалдыр и Геля

Пшеницы

Кода =15 ок	1 пуд. 6 фун. 84 зол.
Сомар = 16 код	18 пуд. 3 фун.

Ячменя

Кода = 13 ок	1 пуд. 60 зол.
Сомар = 16 код	16 пуд. 10 фун.

Каза Ардаган (мера другая)

Пшеницы

Батман = 6 ок	18 фун. 72 зол.
Сомар = 40 батм.	18 пуд. 30 фун.

Ячменя

	Русский вес:
Батман = 6 ок	18 фун. 72 зол.
Сомар = 34 батм.	15 пуд. 37 фун. 48 зол.

Пшеницы

Кода = 13 ок	1 пуд. 60 зол.
Сомар = 16 код	16 пуд. 10 фун.

Ячменя

Кода = 11 ок	34 фун. 36 зол.
Сомар = 16 код	13 пуд. 26 фун.

Санджак Баязет

Пшеницы

Кода = 4 ока + 100 драх.	13 фун. 27 зол.
Сомар = 16 код	5 пуд. 12 фун. 48 зол.

Ячменя

Кода = 2 ока + 200 драх.	7 фун. 78 зол.
Сомар = 16 код	3 пуд. 5 фун.

Санджак Ван

Пшеницы

Кода = 22 ока	1 пуд. 28 фун. 72 зол.
Сомар = 16 код	27 пуд. 20 фун.

Ячменя

Кода = 20 ока	1 пуд. 21 фун.44 зол.
Сомар = 16 код	27 пуд. 23 фун. 32 зол.

В этом санджаке существует еще мера чап, в нем считается: пшеницы 10 пуд. 25 фун., ячменя 9 пуд. 15 фун.

Санджак Эрзинджан

Пшеницы

Кода = 11 ок	34 фун. 36 зол.
Сомар = 16 код	13 пуд. 10 фун.

Ячменя

Кода = 9 ок	28 фун. 12 зол.
Сомар = 16 код	11 пуд. 10 фун.

Санджак Муш

Вместо сомара, здесь существует кило.

Казы Муш и Варто

Пшеницы

Кило = 66 ок	5 пуд. 6 фун. 24 зол.

Ячменя

Кило = 60 ок	4 пуд. 27 фун. 48 зол.

Казы Битлис, Хоют; нахии Моткан и Сасун

Пшеницы

Кило = 62 ок	4 пуд. 33 фун. 72 зол.

Ячменя

Кило = 56 ок	4 пуд. 5 фун.

Казы Буланык, Эхлят-Муш, Эхлят-Ван и нахие Кусур

Пшеницы

Кило = 58 ок	4 пуд. 21 фун. 24 зол.

Ячменя

Кило = 52 ока	4 пуд. 2 фун. 48 зол.

Каза Мелязгерт

Пшеницы

Кило = 72 ок	5 пуд. 25 фун.

Ячменя

Кило = 66 ок	5 пуд. 6 фун. 24 зол.

Взамен всех этих мер правительство желает ввести одну меру емкости - кило, которое будет равняться 21 оку или 1 пуду 23 ф. 36 зол. русского веса.

Меры веса

	Русский вес:
Драхм	0,75 зол.
Юз-драхм = 100 драхм	75 зол.
Ярим-око = 200 др.	1 фун. 54 зол.
Око = 400 др.	3 фун. 12 зол.
Батман = 6 ок	18 фун. 72 зол.
Кантар = 30 батманов	14 пуд. 2 фун. 48 зол.

Меры пути

Саат (час) равен 3 милям и составляет 4,6 версты. Кроме того, на шоссейном пути из Эрзерума в Трапезунд существует еще другая мера - французский километр, равный 468 саж. 2 арш.

Меры длины

Аршын = 0,96 рус. аршина
Бармак = 1/24 аршина
Халаби = 0,99 рус. аршина
Ниппан = 1/8 халаби

Меры поземельные

Денюм = 0,82 рус. десятины

Примечание: Для жидкостей особых мер емкости не существует и они идут на вес.

Донесения русского консула в Трапезунде Н. Тимофеева о денежных единицах, мерах и весах, употребляемых в Трапезунде, его окрестностях и по всему анатолийскому берегу в начале 70-х годов XIX века.

М.И.Д.
Российское императорское
Консульство в гор. Трапезунде
3 ноября 1876 года
№ 436

В канцелярию господина начальника главного управления наместника кавказского.

Вследствие отношения канцелярии от 13 истекшего октября месяца за № 139, императорское консульство имеет честь сообщить следующие данные о монетах и разного рода мерах, употребляемых в Трапезунде, его окрестностях и по всему анатолийскому берегу.

Монеты турецкие

Золотые монеты

Турецкая лира содержит 100 золотых пиастров или курушов и равна, по курсу, 5 русск. рублям 71 коп. серебр.
Ярым-лира (пол-лиры) содержит 50 пиастров.
Чарек-лира (четверть лиры) = 25 пиастрам.

Серебряные монеты

Меджидие содержит 20 серебряных пиастров и равен 1 серебрянному рублю 14 коп. серебр.
Ярым меджидие (полмеджидие) = 10 пиастрам.
Чарек меджидие (четверть меджидие) = 5 пиастров.
Куруш (пиастр) серебряный = $5^2/_3$ копейкам сер.
Алтылык, равный 6 пиастрам.
Ярым алтылык (пол-алтылыка) - 3 пиастрам.
Бешлык, равный 5 пиастрам.
Ярым бешлык (полбешлыка) - $2^1/_2$ пиастрам.

Куруш (пиастр) такой же смеси.

Медные монеты

Куруш (пиастр) содержит 40 пар.
Егирми пара - 20 пар.
Он пара - 10 пар.

Турецкие кредитные билеты (каиме)

Каиме в 100 пиастров
- в 50 -
- в 20 -
- в 10 -
- в 5 -

Примечание 1. В торговле и обыденном обиходе обычай производить счет на медные пиастры предпочитается всякой другой системе счетоводства. Стоимость же в медных пиастрах всех возможных здесь видов денег известна всякому торговцу, во всякое время и обуславливается курсом на больших рынках.

Примечание 2. При переводе русских серебряных рублей на турецкие серебряные пиастры, или турецких серебряных пиастров на русские серебряные рубли следует принимать за основание русский серебряный рубль, считая рубль в $17^1/_2$ турецких серебрянных пиастров, по рыночному курсу.

Иностранная монета

Русские монеты

В торговле приняты все русские золотые и серебряные монеты до гривенника включительно, причем полуимпериал (5 руб. 15 коп.) равен 90 серебряным пиастрам.

Медной русской монеты вовсе нет в обращении.

Русские кредитные билеты

В торговле приняты все кредитные билеты, начиная с билета в 1 рубль до билета в 100 рублей включительно.

Примечание. Высший или низший курс русских ассигнаций

обуславливается кредитом государства на всемирном рынке. Остановиться на одной какой-либо цифре нет возможности, потому что курс беспрерывно изменяется.

Французские золотые монеты

Наполеон (20 франков) равен $87^1/_2$ - 88 пиастрам или 5 рублям серебром.

Полнаполеона (10 франков)

Четверть наполеона (5 франков).

Австрийская золотая монета

Австрийский червонец (дукат) содержит 52 пиастра серебр. И равен 3 рублям серебр.

Меры для сыпучих веществ

Самая обычная мера называется килэ (или кило).

Кило равно 2 деморли (нечто вроде русского четвертака).

Кот. 3 кота составляют 1 кило

Примечание. Мера эта (кот) наиболее употребительна при мелкой продаже, и самая употребительная между простым народом, в деревнях.

Меры для жидких тел

Для жидких тел приняты исключительно, за неимением других, меры веса.

Меры веса

Кара-кантара содержит 30 батманов или 180 ок и равен 540 фунтам (око считают, хотя и не вполне точно, равным 3 фунтам).

Мера эта употребляется при перевозке товаров и больших тяжестей вообще.

Френк-кантар содержит 44 ока и равен 132 фунтам.

Примечание. Мера эта употребительна в крупной торговле.

Батман содержит 6 ок и равен 18 фунтам.
Око равно 3 фунтам.
Диргемы: 400 диргемов (драхм) составляет 1 око.

Примечание. В мелкой торговле употребляются исключительно последние три меры.

Ко всему сказанному не лишним считаю повторить еще раз, что на местах производства всевозможных торговых операций необходимо принять за правило осведомляться предварительно о курсах всех существующих на рынках монет.

Из исследования полковника А. М. Пржевальского о денежных единицах, мерах и весах, употребляемых в близлежащих к Закавказью частях Азиатской Турции в 1904 году

1. ДЕНЬГИ

В Турции находятся в обращении только металлические деньги, причем иностранные монеты в Эрзерумском вилайете и вообще в Курдистане почти не встречаются, но наши полуимпериалы, французские и английские золотые монеты всегда охотно приобретаются местными купцами для своих расчетов с константинопольскими торговыми фирмами. Наши кредитные билеты, попадающие сюда, главным образом как результат заработков местных жителей на Кавказе и в Крыму, пользуются большим доверием, но курс на них в Эрзеруме почти всегда немного ниже, чем в то же время на константинопольской бирже.

Основной денежной единицей турецкой монетной системы надо считать пиастр (куруш) золотом, причем 1 пиастр = 40 пара, а 100 пиастров составляют одну турецкую лиру (алтун).

По сравнению с франком и рублем золотом[9], пиастр = 22,75 сантим. = 5,68 коп.

Турецкая лира = 22 франк. 75 сантим. = 5р. $68^3/_4$ коп. В оптовой, а часто и в розничной торговле товарами заграничного происхождения счет ведется на золото; в обыденном же обиходе, в местной торговле, а также и правительством - всегда на серебро, принимая в одной турецкой лире 5 серебряных меджидие и 8 пиастров и считая меджидие в 19 или 20 пиастров, соответственно лира приравнивается 103 или 108 пиастрам серебром. При расчетах с казною меджидие принимается в 19 пиастров[10]. В Эрзеруме, Эрзингяне и Байбурте лиру считают в 103, в Баязете, в вилайетах Битлисском и Ванском в 108 пиастров серебром. При крупных операциях считают лирами и иногда вьюками (юками), принимая в 1-м вьюке 100.000 пиастров; в остальных же случаях

[9] Принимая полуимпериал = 5 рублям.

[10] Лиру же казначейства принимают в 100 пиастр, почему плательщики предпочитают вносить следуемые казне деньги серебряною монетою.

преимущественно пиастрами.

В нижеследующей таблице указаны находящиеся ныне в обращении турецкие монеты, с переводом их на русские деньги, принимая меджидие в 19 пиастров и считая полуимпериал нового чекана = 7р. 50 коп. кредитн.

Род и название монет	Ценность монет			
	в пиастрах		в рублях	
	Золото	Серебро	Золото	Серебро
	Встречаются редко, почему курс на них всегда выше их номинальной ценности			
Золотые				
Он-лиралык (10 лир)	1000	103	5р.68 1/4 к.	8р. 53 к.
Беш-лиралык (лир)	500	51 1/2	2р.84 1/8 к.	4р.26 1/2к.
Ики-бучук лиралык (2 1/2 лиры)	250	25 3/4	1р.42 1/4к.	2р. 13 1/4к.
Лира (алтун)	100			
Ярым-лира (1/2 лиры)	50			
Чарек-лира, карт-лира (1/4 лиры)	25	19	1р. 48 к.	1р. 57,3к.
Серебряные				
Меджидие (Беяз-меджидие или просто «беяз» [11]		9 1/2	52,4 к.	78,6 к.
Ярым меджидие (1/2 меджидие)		4 3/4	26,2 к.	39,3 к.
Чарек-меджидие, чарек (1/4 меджидие)		2	11 к.	16,6 к.
Икилик (2 пьястра)		1	5,52 к.	8,28 к.
Бирлик (бир-куруш)				
Игирмилик (20 пара, 1/2 пиастра)		1/2	2,76 к.	4,14 к.
Из низкопробного сплава меди с серебром т.н. «металлик»				
Бешлык (5 пьястров)		5	27,6 к.	41,4 к.
Юзлык (100 пара)		2 1/2	13,8 к.	20,7 к.
Элли-паралык (50 пар)		1 1/4	6,9 к.	10,3 к.
Он-пара (10 пар)		1/4	1,38 к.	2,07 к.
Беш-пара (5пар)		1/8	0,69 к.	1,03 к.

[11] «Беяз» - белый.

Относительно турецких монет следует заметить:

1) «Металлик» в 100 и 50 пар (юзлюк и элли-паралык) бывают разной чеканки, отличаясь друг от друга и внешним видом и родом сплава.

2) Серебряные монеты в 20 пар и «металлик» в 5 пар находятся в обращении в крайне ограниченном количестве.

3) Монеты продырявленные или со стертыми сторонами правительственными кассами не принимаются, почему и население берет их весьма неохотно.

4) Фальшивые монеты попадаются редко.

Принимая 1 руб. золот. = 1р. 50 коп. кредитн., ценность наших денег в турецких пиастрах золотом, т.е. считая лиру в 100 пиастр, выразится следующим образом:

Полуимпериал нового чекана = 87 пиастр 30 пар
1 рубль золотом (4 франка) = 17 пиастр 22 пар
1 рубль золотом кредитн. = 11 пиастр 28 пар

ВЕСЫ И МЕРЫ

По указу («хатти-гюмаюн») султана Абдул-Азиза от 14 сентября 1285/1869 г., в Турции с 1 марта 1290/1874 г. должна была быть введена повсеместно десятичная (метрическая) система мер. Последняя, однако, не привилась среди населения, употребляющего до сих пор местные и старые турецкие меры, величина которых по сравнению с метрическими была определена вышеупомянутым султанским указом. Правительственные учреждения в большинстве случаев придерживаются также старой системы мер, поэтому здесь приводятся таблицы всех трех родов мер, т. е. десятичных, старых турецких и местных, с переводом их на русские деньги.

а. Мера длины

Метр («метро», «зираи-ашари»)[12] = 3.2809 фута = 1.4061 аршина.

Дециметр («десиметро», «юшури-зира») = 0.3281 фута = 0.2154 вершка.

[12] В скобках приводятся турецкие названия мер.

Сантиметр («сантиметро», «ашари-зира») = 0.0328 фута = 0.0215 вершка.

Миллиметр («милли-метро», «муашари-зира») = 0.0033 фута = 0.0022 вершка.

Архитектурный аршин («зиран-мимари»)= 24 вершкам («пармак») = 0.758 метра = 2.487 фута = 1.066 аршина

1 вершок («пармак») = 12 линиям («хат»)

1 линия («хат») = 12 точкам (нокта).

***

Базарный аршин («чаршу-аршуни», «аршун», «халеби») = 0.680 метра = 0.96 аршина.

Базарный аршин = 8 «руб» («нишан»).

1 руб («нишан») = 2 «кирах» = 0.12 арш. = 1.92 вершка

1 «кирах» = 0.96 вершка[13].

***

«Эндазе» = 8 «руб.» = 0,650 метра = 0.91 аршина

1 «руб» = 2 «кирах» = 0,114 аршина = 1.82 вершка

1 «кирах» = 0.91 вершка

***

Ярд («ярдо») = 36 англ. дюйм. («инджес»).

Из вышеуказанных мер длины наиболее употребительны: аршун («халеби»), «ярдо», «метро», принимаемый часто в 40 дюймов, «инджес» и «нишан».

б. Меры пути

Километр («километро», «мили-ашари») = 0.937 версты = 468. 7 сажени. Час («саат», «ферсахи-кадым») = 7500 архит. аршин («зираи-мимари») = 5685 метр. = 2664.56 саж. = 5 вер. 164.56 саж. Час («саат»), как мера пути, в обыденной жизни представляет

[13] Базарный аршин равен также 27 англ. дюймам («инджес»), т. е. на один дюйм короче нашего аршина.

собой расстояние, проходимое в часовой промежуток времени. В зависимости от того, принято ли в расчет движение каравана, пешехода или всадника, едущего шагом, линейное значение часа пути колеблется между 4 и 6 верстами. На караванных путях часы соответствуют движению караванов (верблюда), а на остальных дорогах большею частью относятся к всаднику, едущему шагом, и всегда довольно точно выражают во времени расстояния между главнейшими пунктами пути. На турецких дорожных картах расстояния указываются в часах.

в. Меры земли

АР («мюребба-ашари») = 100 кв. метр = 21,97 кв. саж. гектар (новый денюм, «джериб») = 10.000 квадр. метр. = 0.915 десятины[14].

«Денюм» = 1600 кв. архит. аршин («зиран-мимари»)= 919 кв. метр. = около 200 кв. саж. = около $^1/_{12}$ десят.

г. Меры поверхностей

1 квадр. архит. аршин. («зираи-мимари-мюребба») = 0.574564 кв. м. = 1.136 кв. аршин.

1 квадр. «аршун» («аршун-мюребба») = 0.4624 квадр. метра = 0.914 кв. аршин.

1 квадр. «эндазе» («эндазе-мюребба») = 0.4225 кв. метр. = 0.835 кв. аршин.

1 кв. метр. («зиран-ашари-мюребба») = 10.765 кв. фут. = 0.2197 кв. саж.

д. Кубические меры

1 куб. архит. аршин («зираи-мимари-мюкиоб») = 0.43502 куб. метра = 15.36 куб. фута.

1 куб. метр. («зираи-мюкиоб») = 35.3166 куб. фут. = 0.10296 куб. саж.

[14] В последнее время министерство обществ. работ за денюм принимает $^1/_4$ гектара, т.е. 2500 кв. метр.

е. Меры веса

Грамм («дирхем-ашари») = 22.5 дол.

Килограмм («вские-ашари») = 2 фун. 42 зол. 41,7 дол.

Квинталь («кантар-ашари») = 100 килограмм = 6 пуд. 4 фун. 19 зол.

Тонна («тонилата») = 1000 килограмм = 61 пуд. 2 фун.

Десиграмм («юпгури-дирхем») = 2,25 дол.

Сантиграмм («ашари-дирхем») = 0,225 дол.

Миллиграмм («Мюашари-дирхем») = 0,0225 дол.

Око («ок», «кие») = 400 драм («дирхем») = 1,282945 килограмма[15] = 3 фун. 12 золот.

1 драм = 4 денк = $^3/_4$ золот. = 72 дол.

1 денк = 4 чегид[16] = 18 дол.

1 чегид = 4 богда = $4^1/_2$ дол.

1 богда = $1^1/_8$ доли

Мискал = $1^1/_2$ драм = 1 зол. 12 дол.

1 чеки = 4 кантарам = 176 ок = 13 пуд. 30 фун.

1 кантар = 44 окам = 100 «лодра» = 3 пуд $17^1/_2$ фун.

1 батман = 6 ок = $18\,^3/_4$ фун.

1 кантар = 30 батман = 14 пуд. $2^1/_2$ фун.

В торговле и общежитии употребляются почти исключительно око, батман и кантар[17]. В Ванском и Битлисском вилайетах для местных произведений (мясо, хлеб, овощи, масло, сыр и т.п.) око принимают равным 500 драм, на наш вес - 3 фун. 87 зол. В отличие от нормального ока (драм-таш), око назыв. «кара-таш».

з. Меры зерна

Киле («киль», «Стамбул-килеси») представляет меру емкостью в 37 литров[18], заключающую в себе 24 ока пшеницы = 1 пуд. 35 фун. пшен.

[15] 100 килограмм = 78 ок.

[16] Иначе карат («кирот») = $^1/_{16}$ драны.

[17] Вес на кантары употребляется при расчетах по перевозке грузов.

[18] 37 литров = 1,406 четверика.

Ярым-киле = $^1/_2$ киле = 12 ок = $37^1/_2$ фун[19].

Шиник = $^1/_4$ киле = 16 ок = $18^3/_4$ фун.

Кот (коди), эльчек = $^1/_2$ шиника = $^1/_8$ киле = $9^3/_8$ фун.

Сомар = 16 киле = 384 ок = 30 пудов.

Эти меры употребляются при расчетах казны с подрядчиками и покупщиками десятичной подати (ашара), а потому должны считаться нормальными. Наряду с ними существуют местные меры, большею частью сходные по названию с предыдущими, но различные от них по емкости. Из них главнейшие:

В Эрзерумском вилайете:

В Хнысе кот (киль) = 12 ок = $37^1/_2$ фун.

В Баязете сомар = 8 киле = 192 ока = 15 пуд.

В Эринджане кот (киль) = 12 ок = 37 $^1/_2$ фун.

В Байбурте эльчек = 12 ок = $37^1/_2$ фун.

В Битлисском вилайете, кроме каз Ахлят, Буланых и Мелязгерд:

кот (киль) = 12 ок = $37^1/_2$ фун.

киле = 8 кот = 96 ок = 7 $^1/_2$ п.

В Ахляте кот (киль) = 12 ок = $37^1/_2$ фун.

киле = 14 кот = 168 ок = 13 пуд. 5 фун.

В Буланыке и Мелязгерде:

кот (киль) = 12 ок = $37^1/_2$ фун.

киле = 5 кот = 60 ок = 4 п. $27^1/_2$ фун.

В Мушс: киле = 96 ок = $7^1/_2$ пуд.

шиником наз. мерц и в 24 и в 72 ока.

В Ванском вилайете:

кот (киль) = 12 ок = $37^1/_2$ фун.

чап = 4 кот = 48 ок = 3 п. 30 фун.

В Харпутском вилайете:

чарек = 6 ок = 18 $^3/_4$ фун.

мут = 40 чарек = 240 ок = 18 п. 30 ф.

киле = 60 ок = 4 п. $27^1/_2$ фун.

[19] При переводе зерновых мер на весовые, принят вес пшеницы.

В Сивасском вилайете:
таз (рублаги) = 12 ок = $37^1/_2$ фун.
киле = 16 таз = 192 ок = 15 пуд.

В Диарбекирском вилайете:

В Диарбекире:
киле = 180 ок = 14 п. $2^1/_2$ фун.
эльчек = $^1/_{16}$ киле = 11,3 ока.

В Мардине:
киле = 240 ок = 18 п. 30 фун.
эльчек = $^1/_{16}$ киле = 15 ок = 1 п. $6^7/_8$ ф.

При десятичной системе мер:
эльчек («литро») = 1 литру = 0,038 четверика
киль-ашари («гектолитро») = 100 литр = 3,81 четвер.
зарф («десилитро») = 0,1 литра = 0,004 четверика.

ж. Меры жидкостей

Для жидкостей особых мер емкости не существует: они идут на вес (батманы, оки, драмы).

и. Меры для фуража и топлива

Для ячменя употребляются зерновые меры.

Сено и енджа (род клевера) продаются вязанками (багами); 30 баг (вязанок) составляют 1 парту. Вес бага енджи около 8 - 10 ок (24 - 30 фун), сена - около 20 ок ($1^1/_2$ пуда).

Саман - на вес или мешками (1-$1^1/_2$ пуда) или корзинами (сепет» = $1^1/_2$ - 2 пуда).

Дрова - арбами (возами) или на вес (кантар, батман).
Уголь - на вес.
Кизяк - счетом (сотнями, тысячами).

ՄԵՐ ՀԱՎԱՔԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՆՈ, ՎԱՆԻ, ԲԱՂԵՇԻ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ, ԽԱՐԲԵՐԴԻ, ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԵՎ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ, ՉԱՓԵՐԻ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX Դ. ՍԿԶԲԻՆ

Կարնո վիլայեթ

Կարին	(1880 թ.)	1 օկկան	400 դրամ
		1 բաթմանը	6 օկկա
		1 կոտը	15 օկկա
		1 սոմարը	250 օկկա[20]
		1 օկկան	3 ֆունտ[21]
		1 ղուրուշը	50 փարա
		1 մեջիդիեն	106 ղուրուշ[22]
	(1883 թ.)		
		1 բաթմանը	18 ֆունտ
		1 օկկան	3 ֆունտ
		100 դրամը	3/4 ֆունտ[23]
	(1890 թ.)		
		1 մեջիդիեն	5 ռուբ. 72 կոպ.
		10 փարան	2 կոպ.
		1 լիրան կամ	
		1 մեջիդիեն	103 ղուրուշ[24]
	(1902 թ.)		
		1 լիրան	102 ղուրուշ[25]
	(1902-1903 թթ.)		
		1 լիրան	104 ղուրուշ[26]

[20] Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Գլխավոր արխիվ V - Ա2», 1880, գ. 1095, թ. 151:
[21] Նույն տեղում, թ. 129:
[22] Նույն տեղում, թ. 151:
[23] Նույն տեղում, ֆ. «Քաղարխիվ», 1889-1894, գ. 1630, թթ. 212, 214, 223:
[24] Տե՛ս Լևոն Սարգսյան, Այց Թուրքաց Հայաստանին, էջ 82, 112:
[25] Տե՛ս ՌԱՔ, ֆ. «Դեսպանությունը Կ.Պոլսում», 1902, գ. 2670, թ. 105:
[26] Նույն տեղում:

Երզնկայի սանջակի Ագարակ գյուղում 1890-ական թթ.

1 սոմար ցորենը	16 կոտ կամ 15 փութ,
1 լիտր գինին	$2^{2}/_{5}$ գրվանքա,
1 դարա հոխա գինին	400 գրամ կամ $3^{2}/_{4}$ ֆունտ[27]:

Ալաշկերտի կազայում (Մազրա, Մանկասար, Ղազի, Ձիրո և այլ գյուղերում 1911թ.)

1 սոմարը	8 կոտի կամ 4 քիլե:

Բասենի կազայում (1897թ.)

1 շինիկը	19 ֆունտ:
1 ժամ ճանապարհը	6 վերստ[28]:

Վանի վիլայեթ

Վան	(1881 թ.)	1 քիլե ցորենը	25 փութ[29]
	(1884 թ.)	1 չափ ցորենը	45-50 օկկա[30]
		1 դանթար ցորենը	180 օկկա[31]
	(1893 թ.)	1 դանթարը	15 փութ[32]
	(1894 թ.)	1 քիլե ցորենը	60 օկկա[33]
	(1904 թ.)	1 դուրուշը	8 կոպ.[34]
		1 լիտրը	0,5 փութ[35]

[27] Տե՛ս «Մուրճ», 1899, № 6, էջ 629-630:

[28] Ս. Հայկունի, Բազրևանդ, էջ ԺԶ:

[29] Տե՛ս ՈԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1882, գ. 1566, թ.1:

[30] Տե՛ս «Արևելք», 1884, հունիսի 4:

[31] Նույն տեղում:

[32] Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 521, օպ. 2, դ. 492, թ. 271:

[33] Տե՛ս «Արծագանք», 1894, հունվարի 26:

[34] Տե՛ս «Մուրճ», 1904, № 8, էջ 32:

[35] Նույն տեղում, էջ 27:

Շատախ	1872 թ.)	1 չափ ցորենը	30 օկկա
		1 լիտր յուղը	6 օկկա[36]
Զուլամերկ	(1872 թ.)	1 դանթարը	15 փութ[37]
Խոռխոռունյաց գավառում		(1885 թ.)	
		1 քիլեն	360-380 օկկա
		1 օկկան	400 գրամ,

«Այս կողմն, որպես և շատ տեղեր, տեսակ մը օխա ալ ակ, որ 520 տրամ է և կանվանվի քուրատաշ»[38]:

Վանա լճի ավազանի տարբեր տեղերում չափի միավորները տարբեր էին՝ «ցորենի համար չափի կշիռը տատանվում էր 10 փթի 10 ֆունտի և 10 փթի 35 ֆունտի միջև, իսկ գարու համար՝ 8 փթի 30 ֆունտի և 9 փթի 15 ֆունտի միջև»[39]:

Աղթամար վանքում

	1 չափը	50 դուրուշ:
Վանի վիլայեթ	1 ոսկին	103-110 դուրուշ[40]:
	10 փարան	2 կոպ.[41]:

Բաղեշի վիլայեթում

Մուշի սանջակի Չխուբի Ծղակ գյուղում 1890-ական թթ.

$^{1}/_{2}$ պլիկ հողը	66 կոտ տեղ
1 կոտը	1 փութ
1 քիլան	8 կոտ
1 բարդ խոտը	30 խոշոր խուրձ[42]:

[36] «Դիվան հայոց պատմության», հ. 13, էջ 264-266:

[37] Известия кавказского отдела русского императорского географического общества. Т. 11.- էջ 160:

[38] Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառ Արևելյան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1884 մ. Գ, էջ 39:

[39] А. М. Колюбакин. Материалы для военно-статистического обозрения в Азиатской Турции. Т. 1.- Тифлис, 1891.- ч. 1.- էջ 198:

[40] «Արևելք», 1884, ապրիլի 27:

[41] «Մուրճ», 1890, էջ 4, 543:

[42] Նույն տեղում, 1899, № 6, էջ 626-627:

Ալվառինջ գյուղ

1/2 պլիկ հողը	6 քիլե ցորենատեղ
1 քիլե ցորենը	7 փութ 8 ֆունտ
1 մեջիդիեն	160 կոպ.[43]:

Բուլանըխ 1890-ական թթ.

1 կոտը 12 օկկա կամ 36 ֆունտ (3 գրվանքա 1 օկկա):
1 քիլեն 2 կոտ 24 օկկա կամ 1 փութ և 32 ֆունտ:
1 շնիկը 2 քիլե 48 օկկա կամ 3 փութ և 24 ֆունտ[44]:

Ա-Դոն, շրջագայելով վերոհիշյալ երեք վիլայեթներում, 1909 թ. արձանագրում է հետևյալ միավորները և վերածում դրանք ռուսականի[45]:

1 ոսկին կամ լիրան	8 ռուբ. 50 կոպ.
1 դուրուշը	8 կոպեկ
5 փարան	1 կոպեկ
1 դուրուշը կամ դահեկանը	40 փարա
1 չափը	4 փթի
1 լիտրը	0,5 փութ կամ 6 օկկա
1 օկկան	3 1/4 գրվանքա
1 քիլեն	7,5 փութ՝ 8 փութ (Մշո դաշտում)
1 քիլեն	8 փթից ավելի (Աղբակում)
1 դյոնումը	5 լիտր կամ 2 փութ
1 թոփ շալը	1,5 օկկա կամ 20 կանգուն:

Տիգրանակերտի վիլայեթում

Տիգրանակերտ (1909թ.)

1 օլչեկ ցորենը	12-14 օկկա

[43] Նույն տեղում, էջ 630-631:

[44] Տե՛ս «Բուլանըխ կամ Հարքի գավառ», էջ 55:

[45] Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայոթները, Երևան, 1912, էջ 24, 26, 66, 67, 115, 261, 323, 337, 388-389:

Բալու (1878թ.)	1 քոռ ցորենը	1 քիլե
	1 չարեք	1 օլչեկ[46]
(1885 թ.)	1 սոմար ցորենը	16 փութ
	1 սոմար գարին	14 փութ
	1 բաթման գինին	6 օկկա կամ 18 ֆունտ[47]:

Հարություն քահանա Սարգսյանը 1932 թ. իր հուշերում բերում էր Բալուում գործող հետևյալ չափերն ու կշիռները[48]:

1 տալիան	5 չարեք
1 չարեքը	16 օլչեկ գրիվ
1 օլչեկը	24 օկկա
1 չափը	6 օկկա կամ 4 դույլ
1 դույլը	4 կից
1 կիցը	2 ափ, այսինքն այն, ինչ

«երկու ձեռքերը ճկույթներու կողմեն իրարու միացնելով կը կազմվի, գոգավորվելով զանոնք»[49]:

3 տալիան	15 չարեք կամ 6.000 օկկա[50]
1 լիր չամիչը	7,5 կիլոգրամ[51]:

Խարբերդի վիլայեթում

Խարբերդի դաշտ

(1878 թ.)	1 գրիվ ցորենը	1 քիլե
(1911 թ.)	1 դանթարը	500 կիլո[52]

[46] Պողոս Նաթանյան, Արտոսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուա, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի և Երզնկայի Կ. Պոլիս, 1883, էջ 17, 28:

[47] Տե՛ս Л. М. Колюбакин, Материалы для военно-статистического обозрения в Азиатской Турции, Тифлис, 1891, т. III, ч.I, отд. 2-й, էջ 162, 454:

[48] Հարություն քահանա Սարգսյան, Բալու, իր սովորությունները, կրթական ու ուսումնական վիճակը և բարբառը, Գահիրե, 1932, էջ 108:

[49] Նույն տեղում, էջ 108:

[50] Նույն տեղում:

[51] Նույն տեղում, էջ 151:

[52] Պողոս Նաթանյան, նշվ. աշխ., էջ 142:

Բերրի (XX դ. սկզբին)

1 բեռ խաղողը 150 կիլո[53]

Սորսորի վանք (1878 թ.)

1 քիլեն 56 օկկա[54]

Հալվորիկի ս. Կարապետ վանք (1878 թ.)

1 քիլեն 100 օկկա[55]

ս. Հավավո վանք (1878 թ. Բալու)

1 քիլեն 400 օկկա[56]

Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ սոմարը տարածված է Կարնո վիլայեթում, «Խարբերդի դաշտում բոլորովին անհայտ էր»[57]:

Սեբաստիայի վիլայեթում

Նախկին 1 դյոնում հողը 1.600 քառ. արշին կամ $^{2}/_{27}$ դեսյատին
Նոր 1 դյոնում հողը 0.9 դեսյատին

Շապին Կարահիսար (1909 թ.)

1 կոտը 12-14 օկկա

Տրապիզոնի սանջակ (1899թ.)

1 դանթարը	44 օկկա
1 բեռը	20 լիտր
1 լիտրը	6 օկկա
1 օկկան	400 գրամ
1 դյոնումը	1 կոտի տեղ
4 քիլեն	8 դեսյատին
1 լիրան	108 դուրուշ կամ 8,5 ռուբլի

[53] Գ. Երևանյան, Պատմություն Չարսանճագի հայոց, Պեյրութ, 1956, էջ 165:

[54] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մ. Բ, էջ 88:

[55] Նույն տեղում, էջ 152:

[56] Նույն տեղում, էջ 168:

[57] А. М. Колюбакин. Материалы... Т. III, Ч. 1, отд. 2-й.- էջ 399:

1 մեջիդիեն	20 դուրուշ կամ 1 ռ. 70 կոպեկ
1 արթիլերը	5 դուրուշ
1 դուրուշը	40 փարա կամ 8,5 կոպեկ

Յումարա նահիեի Գալովկա գյուղում (1890-ական թթ.)

1 ուռուպը	$^{1}/_{4}$ կոտ[58]
1 օկկան	3 1/4 ֆունտ[59]
1 գրան	0,5 մետր[60]
1 բեռ կաղինը	88 օկկա

Մենք ավելորդ չենք համարում բերել նաև հետևյալ տեղեկությունները, որոնց հեղինակները, ցավոք, չեն նշում, թե դրանք Արևմտյան Հայաստանի որ շրջաններին են վերաբերում.

1 դյոնումը	200 քառ. արշին[61]
1 դյոնումը	0,25 դեսյատին
1 քիլեն	1 չետվերտ
1 քիլեն	7 փութ և 8 ֆունտ
1 լիտրը	16 ֆունտ
1 դուրուշը	8 կոպ.
1 միջիդիեն	1 ռուբ. 60 կոպ.
5 լիրան	42 ռուբ. 50 կոպ.
4 լիտր յուղը	1 փութ և 24 ֆունտ
3 լիտր պանիրը	1 փութ և 8 ֆունտ
1 կոտը	1 փութ[62]
1 նուկին	320 - 1282 գրամ[63]:
1 ունկին	6 դահեկան կամ 27,2 գրամ

[58] «Մուրճ», 1899, № 10, էջ 1213, 1210:

[59] Նույն տեղում, № 6, էջ 632:

[60] Նույն տեղում, № 10, էջ 1208:

[61] «Всеподданнейший отчет о состязании Карской области за 1888 г.».- Карс, 1890.- էջ 50:

[62] Полк. Як. Д. Лазарев. Причины бедствий армян в Турции.- Тифлис, 1895.- С.9-14, 30.

[63] Ստ. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, հ. III, էջ 484 և 603:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՌԵԶՐԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[1] (XIX դ. - XX դ. սկիզբ)

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

XIX դ. և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում գործածված սոցիալական բառեզրերը մենք հավաքել ենք երկար տարիների ընթացքում՝ ամենատարբեր աղբյուրներից: Մեզ չի հաջողվել, բնականաբար, գտնել բոլորը: Սակայն պատմաբանների, լեզվաբանների և այլ մասնագետների հետագա հետազոտություններն, անկասկած, կլրացնեն և կամբողջացնեն սոցիալական բառարանը: Օգտվել ենք մի քանի մասնագետների ուսումնասիրություններից[2] (երբեմն հղում տալով, երբեմն նաև տեղի սղության պատճառով՝ ոչ, իսկ սոցիալական եզրաբառերի լեզվական պատկանելությունը որոշել ենք հիմնականում թուրքերեն-ռուսերեն բառարանի օգնությամբ[3]: Այն բառերը, որ չկան այդ և այլ բառարաններում, բաց ենք թողել:

Աղա - պարսկ. - տեր, մեծ, պետ, ղեկավար: Այդ տիտղոսը Արևելքի մի շարք երկրներում գործածվում էր պալատական, զինվորական և այլ պաշտոնյաների ու զանազան ունևորների նկատմամբ:

Աղնամ ռեսմի - արաբ. - հարկ ոչխարի ու այծի համար:

Աղութին - հավանական է աղայություն բառից, որը «Մշակի» թղթակցի վկայությամբ «մի տեսակ գլխահարկ էր»: Այն «սասունցի գյուղացին պարտավոր էր վճարել իր գլխի տիրոջը. «Դու

[1] Հրատարկված է «Պատմաբանասիրական հանդես»-ի 1993թ. № 1-2, էջ 127-138:

[2] Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա.Խ. Սաֆրաստյան. հ. Ա, Երևան, 1961, հ. Բ, Երևան, 1964: Թուրքական աղբյուրներ, թարգմանություն բնագրից Ա.Խ. Սաֆրաստյանի և Գ.Հ. Սանթուրջյանի, հ. Դ, Երևան, 1972: Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում /XVI- XVII դդ. կանոնամեներ/, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի. Երևան, 1964: Аграрный строй Османской империи XVI-XVII вв., документы и материалы. Составление, перевод и комментарии А.С. Тверитиновой.- М., 1963; М. Т. Боджолян. Реформы 20-30 -х гг. XIX в. в Османской империи.- Ереван, 1984; Ф. Ш. Шабанов. Государственный строй и правовая система Турции в период Танзимата.- Баку, 1967.

[3] Տե՛ս Турецко-русский словарь. Составил Д.А.Магазаник.- М., 1945.

իմ հայս ես» - ասում է քուրդը և պահանջում հարկը»: Ապա նա շարունակում է. «Քյուրդ բեկերը այն աստիճան ապահով տեր են համարում իրանց իրավունքներին, որ իրանց այդ իրավունքները՝ թե բեշ լինի և թե աղութին, ծախում են միմյանց վրա»[4]:

Այան - արաբ. - բառացի «աչքեր», նոր թուրքերենում՝ «ծերակուտական»: Այանները ժառանգական հողատերեր, պաշտոնյաներ, հարկերի խոշոր կապալառուներ. մեծահարուստ առևտրականներ ու վաշխառուներ էին: Նրանք բնակվում էին քաղաքներում, և գյուղերում՝ սեփական կալվածքներում: Այանները դառնում էին սուլթանական դիվանի անդամ և արքունիքում ձեռք բերում «այան» տիտղոս, երբ ընտրվում էին հասարակության կողմից, իսկ երբեմն էլ նշանակվում բեյլերբեյերի կողմից: Նրանք վերահսկում էին բեյլերբեյերին, սանջակբեյերին և այլ պաշտոնյաներին՝ հարկերի բաշխման, ծախսման և այլ գործերում: Այանները կարող էին բողոքել օսմանյան պաշտոնյաների չարաշահումների դեմ կենտրոնական կառավարությանը, որը հաշվի էր առնում նրանց բողոքները: Օգտագործելով իրենց հարստությունն ու ազդեցությունը՝ այանները ժամանակի ընթացքում դառնում են օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների գործակալներ: «Այան» տիտղոսը և այանությունը կյանք են մտել XVI դարում և վերացել XIX դարում՝ թանզիմաթի ժամանակաշրջանում[5]:

Անգարյա կամ անգարյե - հուն. - կոռ, աշխատավճար: Օսմանյան կառավարությունը իրավաբանորեն այն վերացրեց թանզիմաթի տարիներին, սակայն Արևմտյան Հայաստանում աղաների ու բեյերի կողմից հետագա ժամանակաշրջանում շարունակվում էր գործադրվել գյուղացիների նկատմամբ:

Աշար - արաբ. - (հոգնակի) կամ ուշար (եզակի) - տասանորդ՝ գանձվում էր և՛ պետական, և՛ կալվածատիրական հողերի վրա բնակվող գյուղացիներից՝ նրանց ստացած բերքի 1/10-ի չափով: Ժամանակի ընթացքում՝ հատկապես XIX դ. երկրորդ կեսին և XX դ.-ի սկզբին, այդ չափը պետության և աղաների կողմից մեծացվում է: Կառավարությունը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սկսում է մի կողմից մեծացնել աշարը՝ հավաքելով գյուղացիների բերքի 1/4-ը (Ալջավազում), 1/7

[4] «Մշակ», 24 հունվարի 1895:

[5] Տե՛ս М. Т. Боджолян. Указ. соч.- էջ 28-32:

(Սասունում), 1/8 -ը և այլն[6], իսկ մյուս կողմից՝ դրա մի մասը (խոտի, բանջարաբոստանային մթերքների, մրգերի ու հատապտուղների դիմաց) գանձել դրամով, Ա-Դոն գրում էր, որ «տասանորդի տուրքը վերցվում է միմիայն հացահատիկներից: Իսկ մնացյալ բերքերից, ինչպես են խոտը, առվույտը, ծառապտուղները, խաղողը, ծխախոտը և այլն, տասանորդը վերցվում է դրամով»[7]: Իհարկե, գյուղացու համար, եթե նա դրամ ունենար, ավելի հեշտ էր տասանորդը փողով վճարել, քան բնամթերքներով, բայց քանի որ նա փող չուներ, ստիպված էր մթերքներն էժան վաճառել և վճարել հարկը:

Աշիրեթ - արաբ. - վաչկատուն ցեղ կամ տոհմ: Արևմտյան Հայաստանում XIX դ. և XX դ.-ի սկզբին կային մի շարք քրդական ու ասորական (գերազանցապես քրդական) ցեղեր ու տոհմեր, որոնք ապրում էին կիսավաչկատուն-կիսանստակյաց կյանքով և զբաղվում էին հիմնականում անասնապահությամբ: Նրանց մոտ ձևավորված դասակարգային հարաբերությունները ավատատիրական էին, որոնք պահպանել էին նահապետական կյանքի բազմաթիվ մնացուկներ: Ցեղապետերն այդ ավանդույթներն օգտագործում էին ի շահ իրենց սոցիալ-տնտեսական ու քաղաքական նպատակների: Նրանք ունեին իրենց ռազմական ուժը՝ դուլամները, որոնք օգտագործում էին հակառակորդներից պաշտպանվելու, նորանոր հողեր ու գյուղեր նվաճելու, սուլթանական կառավարությանը ծառայելու կամ դիմագրավելու նպատակով[8]:

Աշրաֆ կամ էշրաֆ - արաբ. - պատվավոր, փառավոր, անվանի մարդ:

Ասքյարե ռաշ հաթ - սև զորք[9]: Կ. Սասունին նշում է, որ թուրքական բանակը մինչև 1908 թ. հագնում էր սև համազգեստ և այդ պատճառով հայերի ու քրդերի կողմից անվանվում էր ասքյարե ռաշ հաթ: Սակայն այն կարող էր գործածվել նաև փոխաբերական իմաստով:

[6] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914). Երևան, 1965, էջ 108:

[7] Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Երևան, 1912, էջ 283:

[8] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 57-64:

[9] Կարո Սասունի, Քրդական ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները. Պեյրութ, 1969, էջ 124:

Ավառիզ կամ ավարիզ-ի դիվանիե - արաբ. - արտակարգ հարկ, որ օսմանյան կառավարությունը հավաքում էր գյուղացիներից հօգուտ պետական գանձարանի՝ պատերազմի կամ որևէ աղետի դեպքում: Այն հավաքվում էր սուլթանի հատուկ կարգադրությամբ: Դրա գանձումը սկսվել է XV դ., պատերազմի առիթով, XVI դ. վերջին կանոնավոր բնույթ է ստանում՝ տարեցտարի մեծանալով, վերացվել է XIX դ.՝ թանզիմաթից հետո[10], բայց շուտով վերականգնվեց իանե անվանումով (արաբ. օգնություն, նվեր): Կառավարությունը այն ժամանակավոր է հայտարարում, բայց նշանակելուց հետո այլևս այդ հարկը չէր վերացվում, մինչև չէին հնարում հարկահանության մի նոր պատճառ: 1867 թ., երբ սուլթանը նախապատրաստվում էր արտասահմանյան ուղևորության, իանեն նշանակում է մեկ տարով, բայց չվերացվեց, մինչև 1877-1878 թթ. նոր իանե սահմանվելը՝ ռուս-թուրքական պատերազմի առիթով, այս վերջինն էլ չվերացվեց, մինչև 1896 թ. մի նոր իանե սահմանվելը՝ հայկական ընդվզումները զսպելու պատրվակով[11]:

Արազ-ի մեթրուքե - արաբ. - ըստ 1858 թ. հունիսի 6-ի օրենսգրքի՝ այս կարգի հողերի մեջ մտնում էին արոտավայրերը, անտառները, շուկաները, փողոցները, քարհանքերը, սրբավայրերը և այլն: Դրանցից կարող էին օգտվել բոլորը, բայց ոչ ոք իրավունք չուներ դրանք սեփականացնել[12]:

Արազ-ի մեմլեքեթ - արաբ. - պետական այն հողերն էին, որոնցից պարգև էր տրվում լեհենիկներին՝ զինվորական ծառայության համար[13]:

Արազ-ի մեվաթ - արաբ. - այս հողերի մեջ հաշվում էին գյուղից ոչ հեռու գտնվող լեռները, մացառուտներն ու ճահիճները: Ի տարբերություն արազ-ի մեթրուքեի, դրանք կարող էին անցնել անհատական օգտագործման: Եթե մեկը մաքրում էր քարերը կամ չորացնում ճահիճները և այդպիսով մեռյալ հողը դարձնում պիտանի, իրավունք կունենար մեկ, իսկ եթե շատ աշխատանք էր թափել, նաև երկու տարի օգտվելու այդ տարածությունից՝

[10] Տե՛ս А. С. Твертинова. Указ. соч.- էջ 192:

[11] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 111-112:

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 50:

[13] Ф. Ш. Шабанов. Указ. соч.- էջ 197:

առանց պետությանը որևէ տուրք վճարելու: Այնուհետև այն անցնում էր արազ-ի միրիե հողերի շարքը[14]:

Արազ-ի միրիե - արաբ. - պետական հողեր, որոնք բաղկացած էին գերազանցապես վարելահողերից ու մարգագետիններից և տրվում էին բնակչության բոլոր խավերին հետևյալ կերպ. ցանկացողը դիմում էր կայմակամին, մութասարիֆին կամ վալիին, որոնք իրենց ենթակա պաշտոնյաներին հանձնարարում էին հողամաս հատկացնել՝ որոշելով դրա սահմանները և պահանջվող գումարը գրանցել համապատասխան մատյանում: Այնուհետև առաջարկվում էր դիմողին պետական դրամարկղ մուծել որոշված գումարը, որից հետո նրան տրվում էր կոչան, այսինքն՝ տիրելու իրավունքի փաստաթուղթ[15]:

Արզուհալչի - արաբ. - արզուհալ բառից, որ նշանակում է խնդրագիր, դիմում[16]: Կային հատուկ մարդիկ, որոնք 5 դուրուշով գյուղացիների կամ քաղաքացիների անունից գրում էին արզուհալներ, այսինքն՝ դիմումներ ու խնդրագրեր օսմանյան իշխանություններին կամ դատարաններին[17]:

Արփալըք - արաբ. - բարձրաստիճան պաշտոնյաներին մթերքով կամ դրամով տրված ռոճիկ, հատկացում, թոշակ[18]:

Բերաթ - արաբ. - այդպես էին կոչվում այն փաղիշահական ֆերմանները, որոնց տրվում էին աստիճաններ, նշաններ կամ որոշ արտոնություններ, ինչպես նաև թիմարներ ու զեամեթներ շնորհելու մասին[19]:

Բադ-ի հավա - արաբ. - տես՝ նիյաբետ:

Բախշիշ - արաբ. - ընծա, նվեր, ավատապետի մուծումը գանձարկղ՝ արշավանքներին մասնակցելու փոխարեն:

Բակա կամ բակաիե - արաբ. - մնացորդ, հարկերի ապառք, թերառք:

Բահրա- պարսկ. - կալվածատիրական ռենտա, որ վճարում

[14] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 51:

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 51:

[16] Турецко-русский словарь.- էջ 40:

[17] Տե՛ս «Մշակ», 18 փետրվարի 1901:

[18] Տե՛ս Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 352:

[19] Նույն տեղում, հ. Բ, էջ 297:

էր գյուղացին պետությանը կամ կալվածատիրոջը՝ իր ստացած բերքի 1/10 -ից մինչև 1/3 -ի չափով:

Բայգուշ կամ բայդուշ - թուրք. - բառացի բու, փոխաբերական իմաստով՝ աղքատ, առանց տոհմի ու ցեղի:

Բայրամլըք - արաբ. - թուրք. - տոնական նվիրատվություն՝ կալվածատիրոջը կամ պաշտոնյային:

Բաշլըք - թուրք. - գլխարկ, գլխի ծածկոց, կնգուղ, սաղավարտ, իշխանություն, ղեկավարություն, վարչություն, վերնագիր, խոյակ, սյունագլուխ[20], նաև գլխագին: Գոյություն ունենալով մահմեդականների մեջ՝ այն թափանցել էր նաև հայոց շրջաններում: 1860-ական թթ. կեսերին Ամենայն Հայոց կաթողիկոսը դիմում է իր հայ հավատացյալներին, որ նրանք հրաժարվեն բաշլըքից, նշելով, որ այն օտարամուտ է և անհարիր հայոց վարքին ու բարքերին (փեսան. հարսնացուի ծնողների պահանջով, որոշակի գումար էր տալիս նրանց՝ որպես հարսի գլխագին): Բայց և այնպես հայերը մի շարք շրջաններում շարունակում էին տալ ու առնել գլխագին: Բոգդանովկայի շրջանի Սաթխա գյուղում պատմում էին, որ նորապսակ աղջիկը բողոքում էր դրա դեմ, ասելով՝ «հավասեցին հարըրնոցին, ինձի տվին գրկանոցին»: Բաշլըղը կամ բաշլըքը կովկասահայոց կյանքից վերացվեց խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Բաջ - հին պարսկերեն բաժ, որ աղավաղվելով դարձել է բաջ: Նշանակում է հարկ, տուրք, մաքս[21]: Այն ստանում էին սովորաբար աղաներն ու բեյերը գյուղացիներից, ինչպես նաև նրանց տարածություններով անցնողներից: Ս. Բդեյանը գրում էր, որ 1880-1890-ական թթ. «Մուշեն Ս. Կարապետ երթալը անկարելի էր, հարկ էր, որ մեհմեդ Ալիին կաշառք, փաճ տրվեր, որպեսզի ան թույլ տար ուխտավորներուն կամ այցելուներուն այդ կողմերը երթալ»[22]:

Բեդել-ի ասկերի - արաբ. - հարկ, որ վճարում էին ոչ մահմեդականները՝ զինվորական ծառայության փոխարեն: Բեդել-ի ասկերին (1856 թ.) փոխարինեց խարաջին և այդ տարվանից հարկը հավաքում էին 14-60 տարեկան հասակ ունեցող տղամարդկանցից: 1860-ական թթ. սկսեցին հավաքել նաև նորածիններից ու

[20] Турецко-русский словарь.- էջ 64:

[21] Տե՛ս Օսմանյան օրենքները..., էջ 129:

[22] Ս. Բդեյան, Հարազատ պատմություն Տարոն. Կահիրե, 1962, էջ 25:

զառամյալ ծերերից, իսկ 80-ական թթ.՝ յուրաքանչյուր տղամարդուց ոչ թե 20, այլ 37¼ ղուրուշ: 1885 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքը Երուսաղեմի պարտքերը մարելու նպատակով (60000 ոսկի), խնդրում է սուլթանին ավելացնել հայերից գանձվող զինվորական տուրքը 3 ղուրուշով մինչև 1887 թ.: Չնայած ժողովրդի բազմաթիվ բողոքներին, այդ վերադիրը ժամկետը լրանալուց հետո չվերացվեց[23]:

1909 թ. երիտթուրքերը պաշտոնապես վերացրին բեդել-ի ասկերին կամ զինվորական հարկը և քրիստոնյաներին մահմեդականների հետ հավասար զորակոչեցին, բայց շուտով սահմանեցին, որ քրիստոնյաները կարող են ազատվել զինվորական ծառայությունից, եթե 0,5 ոսկու փոխարեն վճարեն 30 ոսկի[24]:

Բելիֆիաթ - արաբ. - դա աշարի հավաքման ժամանակ կատարվող այն չարաշահումն էր, որը գանձվում էր գյուղացիներից, պատճառաբանելով, թե իբր աշարից կերել են մկները, ծտերը, միջատները, կենդանիները և իբր տեղափոխման ժամանակ թափվել է ճանապարհին[25]: Այդ չարաշահումների չափերը տարբեր տեղերում և տարբեր կապալառուների կողմից տարբեր էին լինում:

Բեկչի - թուրք. - գյուղի գիշերային պահապան[26]:

Բեյ - թուրք. - տեր, հողատեր, կալվածատեր, պետական պաշտոնյա:

Բեյլիք - թուրք. - իշխանություն, մի բեյի իշխանության տակ գտնվող երկիր[27]:

Բեշ - քրդերեն. - մաս, բաժին[28]: կալվածատիրական արդյունավճար ռենտան էր, որ գյուղացիներն իրենց բերքից հարկադրաբար տալիս էին աղային: «Մշակի» թղթակիցը գրում էր.

[23] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 109-110:

[24] Տե՛ս «Մշակ», 2 օգոստոսի 1914:

[25] Տե՛ս «Վտակ», 1908, № 44:

[26] Տե՛ս Ռուբեն. Հայ հեղափոխականի մը հիշատակները. հ. 4, Լոս-Անջելես, 1952, էջ 366 (այսուհետև՝ ՀՀՀ):

[27] Տե՛ս Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 354:

[28] Տե՛ս Курдско-русский словарь / Сост. К. К. Курдоев.- М., 1960.- էջ 87:

«Բեշը՝ հանուն բեկի հողատիրական իրավունքների պահանջված, ամենածանր տուրքն է»[29]: Աղաները, ռենտայի այդ տեսակը դեռ չհավաքած, կարող էին նախապես վաճառել միմյանց: Նույն հեղինակը շարունակում է. «Վերջերս Սասունի Աղբիկ գյուղի բեշը, որ պողիկցի աշիրեթին էր պատկանում, ծախեցին խանավթալի տան վրա 3000 ղրուշի փոխարեն»: Նա հարկ էր համարում նշել, որ Սասունում «երբեմն պատահում էր, որ բեշը մեկին էր պատկանում և աղութինը՝ մի ուրիշի, որը մեծ դժբախտություն է համարվում հարկատու ժողովրդի համար, որովհետև հողի և գլխի տերերը առանձին-առանձին պահանջում են գրեթե նույն հարկը, ինչ որ պահանջելու էր այդ երկու իրավունքների տերը, եթե մի անձ կամ մի ուրիշ աշիրեթ լիներ»: Թղթակիցը ավելորդ չէր համարում թվարկել աղայի կողմից միևնույն գյուղացու ընտանիքից հավաքած բեշի ու աղութինի առարկաները. գարնանը նա հավաքում է գառ կամ ուլ, մածուն և թան, իսկ աշնանը՝ ցորեն, յուղ, ոչխար, չորթան, գուլպա, տրեխ, շալե շալվար և «ամենից հետո՝ փող»: Այդ ամենի քանակը «կախված է տվողի կարողության և պահանջողի անխղճության չափից»[30]: Նա միաժամանակ նշում էր, որ երբ աղան գնում էր գյուղ իր բեշը հավաքելու, բնակիչները պարտավոր էին մեկ-երկու օր լավ հյուրասիրել նրան:

Բեսլեմե - արաբ. - բեսլեմեկ բայից, որ նշանակում է կերակրել, սնել, աճեցնել, մեծացնել, դաստիարակել, գուրգուրել, փայփայել[31]: Այն ծառայություններն էին, որոնք կատարում էր գյուղացին հօգուտ աղայի կամ բեյի: «Բյուզանդիոնի» թղթակից Ալթունյանը գրում էր, որ Սեբաստիայի վիլայեթում գյուղացին «հարուստին համար կբանի, կդատի, հետզհետե իր հողերն ալ անոր փոխանցելով, մինչև որ զամոք, զավակոք անոր մշակն ու պեսլեմեն ըլլան»[32]:

Բնասարա - գյուղատնտեսական սեզոնային մշակ: Բենսեն (Սահակ Մովսիսյան) գրում էր. «Այն մշակները, որոնց ծառայության սկիզբը կսկսի քաղոցից (հունձ) և կվերջանա կալ ու կուտի հետ՝ կկոչվին բնասարա»[33]:

[29] «Մշակ», 24 հունվարի 1895:

[30] Նույն տեղում:

[31] Турецко-русский словарь.- էջ 73:

[32] «Բյուզանդիոն», 29 հունիսի 1910:

[33] Բենսե, Բուլանըխ կամ Հարք գավառ. Թիֆլիս, 1901, էջ 66:

Բերդելի նյուզուլ- արաբ. - իջևանի կամ օթևանի տուրք: Թուրք պատմագիր Ահմեդ Ռասիմը գրում էր, որ «բանակը կամ զորամասը մի օթևանում իջևանելիս, ձիերի կերը և բանակի կարիքները ապահովող և իջևանի էմին («նյուզուլ» կամ «նեզլե-էմին») անունը կրող պաշտոնյան տեղական ժողովրդից «ավարիզ» անունով հարկ էր առնում»[34]:

Բընջոլ - քրդ. - տես՝ ճյուղ:

Բոջ - տես՝ կառ:

Բուդ - կալվածատիրական ռենտայի տարատեսակներից մեկն էր: «Մշակի» թղթակիցը բուդ է անվանում այն, երբ գյուղացին պահում էր աղայի ոչխարները»[35]:

Բույրուլթու-թուրք.-վերադասի գրավոր հրամանը, կարգադրությունը, վճիռը (պաշտոնական թղթի վրա)[36]: Ռաֆֆին նշում էր, որ բույրուլթուն թույլտվության փաստաթուղթ էր, որ կապալառուն ստանում էր պետությունից՝ իր տրամադրության տակ ունենալու համար ոչ թե երկու, այլ այնքան զապթիեներ, որքան ուզենա[37]:

Գայե աղա - քրդ. - աղայի եզը: Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում աղաներն ու բեյերը օգտվում էին իրենց իշխանության տակ ընկած գյուղերում առաջին գիշերվա իրավունքից: Նրանցից ոմանք դրա փոխարեն բնակիչներից ստանում էին եզ, կով, ոչխար, կամ այլ ունեցվածք: 1909 թ. «Բյուզանդիոնի» թղթակիցը հաղորդում էր, որ Արճեշի Կտրածքար գյուղում Ալի աղան ստիպում է իր իշխանության տակ ընկած հայ և քուրդ գյուղացիներին աղջիկ ամուսնացնելիս վճարել իրեն սահմանված գայե աղա տուրքը, «հակառակ պարագային խոսեցյալ կույսը տունեն դուրս ելլելու, կամ ուրիշ գեղե մը նույն գյուղը բերելու կարգելե»[38]:

Գյուլիանեի հաթթը շերիֆ - Գյուլիանեի սրբազան հրովարտակ - կազմվել է Օսմանյան կայսրության արտաքին գործերի մինիստր Մուստաֆա Ռեշիդ փաշայի կողմից և հանդիսավորությամբ հռչակվել 1839 թ. նոյեմբերի 3-ին Կ. Պոլսում, Գյուլիանեի այգում: Այն երաշխավորում էր կայսրության բոլոր քաղաքացիների (անկախ ազգությունից ու դավանանքից) անձի ու գույքի անձեռնմխելիություն, հարկերի ու տուրքերի արդար բաշխում և հավաքում, վարձակալական համակարգի (իլթիզամ) վերացում, զինվորական ծառայության ժամկետի կրճատում, ֆինանսական, ռազմական, վարչական ու դատական բարեկարգումների կիրառում և այլն: Սակայն այդ ամենը մնաց թղթի վրա:

Գոլ և հորթընթողք - հայ. - սեզոնով վարձվող հոտաղների ժամկետներն էին: Գեղամ Տեր-Կարապետյանը գրում է, որ Մշո դաշտում հարուստները գարնանը հոտատներ էին վարձում: Այդ երևույթը տեղացիներն անվանում էին գոլ: «Պահում էին դրանց մինչև ուշ աշուն՝ հիսնակաց պահքին, որուն կըսեն նաև հորթընթողի պահք»[40]: Աճառյանը նշում է, որ գոլը նշանակում է թեթև տաքություն: Նա ապա շարունակում է, որ «գոլը մի շարք այլ բովանդակությունների հետ միասին Մշո դաշտում նշանակում էր նաև «գարնանամուտ մարտի 20-ը, երբ տաքությունը կսկսի, և մշակները կվարձվեն գյուղական զանազան աշխատանքների համար»[41]: Իսկ հիսնակաց պահքը կամ հորթընթողն ընդգրկում էր նոյեմբերի 16-ից մինչև հունվարի 5-ը»:

Գոմ - տես՝ ճյուղ:

Դադաշ - պարսկ. - եղբայր, Թուրքիայի արևելյան նահանգներում կամ Արևմտյան Հայաստանում՝ դիմելու կամ կանչելու ձև, նշանակում է նաև կտրիճ երիտասարդ: Հայկական պարբերականներում դադաշը մեկնաբանվում է տարբեր կերպ: «Մշակը» գրում է, որ «Էրզրումում լոթի, սրիկա անձերին անվանում էին «դադաշ»[42]: Իսկ «Երկրի ձայնը» ծանոթագրում էր Էրզրումում «տատաշները՝ թուրք հասարակ ժողովրդին՝ հեղափոխականներ են, որոնք երբ կտեսնեն որևէ ոստիկան մը, կսկսեն հեգնությամբ, արհամարանքով՝ «հոփ, հոփ» բացականչել»[43]:

---

[35] Թուրքական աղբյուրները..., հ. Բ, էջ 295:

[36] Տե՛ս «Մշակ», 2 փետրվարի 1908:

[36] Турецкий-русский словарь.- էջ 91:

[37] Ռաֆֆի, Երկերի ժողովածու. հ. 3, Երևան, 1962, էջ 211:

[38] «Բուզանդիոն», 28 փետրվարի 1909:

[40] Գեղամ Տեր-Կարապետյան, Տարոնի աշխարհ, պատկերներ, պատմվածքներ. Փարիզ, 1931, էջ 40:

[41] Հր. Աճառյան, Գավառական բառարան. - Էմինյան ազգագրական ժողովածու, գիրք Թ, Թիֆլիս, 1913, էջ 247:

[42] «Մշակ», 25 սեպտեմբերի 1890:

[43] «Երկիր ձայնը», 1907, № 1, էջ 14:

Դերեբեյ - թուրք.. - հովտատեր, կալվածատեր: Դժվար է ասել, թե երբ է առաջացել միջնադարյան-ավատատիրական այդ կառույցը: Մասնագետների կարծիքով XVII-XVIII դդ. այն արդեն առկա էր թե՛ ասիական, թե՛ եվրոպական և թե՛ աֆրիկյան Թուրքական կայսրությունում: Ազգությամբ դերեբեյները թուրքեր, քրդեր և արաբներ էին: Նրանց հողերն ընդարձակ էին, իսկ իշխանությունը՝ հզոր: Ունեին զորագնդեր, բազմաթիվ գյուղեր ու բյուրավոր գյուղացիներ: Նրանք իրենք էին կառավարում այդ հպատակներին՝ իրենց գործակալների միջոցով, իրենք էլ նրանց դատ ու դատաստանի էին ենթարկում: Դերեբեյները որքան հեռու էին կենտրոնից, այնքան ուժեղ ու ինքնուրույն էին: Նրանց տիրույթներն անցնում էին ժառանգաբար, թույլերը մտնում էին ուժեղների հովանավորության տակ և պահում իրենց գոյությունը: Անատոլիայում նշանավոր դերեբեյներն էին՝ Կայա-Օսման-օղլուները (Այդընի, Սարուխանի շրջաններում), Չաբան-օղլուները (Յոզգատում, Կեսարիայում, Ամասիայում և Անկարայում), Հաջի Ալի փաշա-օղլուները (Տրապիզոնում), Կուշադալի Իլյաս-օղլուները (Մենթեշում) և այլն[44]:

1826 թ. սուլթան Մահմուդ II-ը, հենվելով նորաստեղծ կանոնավոր բանակի վրա, ոչնչացնում է նաև դերեբեյներին: Սակայն Օսմանյան կայսրության արևելյան մասում նրանց ուժն ու ոգին դեռևս պահպանվում էր: Ռաֆֆին գրում էր. «Տիգրանակերտի նահանգում մի քանի բռնակալ դերեբեկիներ սոսկալի հարստահարություններ են գործում: Բարձր կառավարությունը ժողովրդի և պատրիարքարանի բողոքների համեմատ առանձին քննիչներ է ուղարկում: Բռնակալ դերեբեկիրների հանցանքները ստուգելով, նրանք Տիգրանակերտ են բերվում և նույն քաղաքում մշտապես մնալու որոշում է լինում, բայց կառավարության քննիչը հեռացածին պես, բռնակալներն իրանց տեղն են դառնում և ավելի կատաղությամբ սկսում են առաջվա չարագործությունները շարունակել»[45]: Այնտեղ, որտեղ ոչնչացվում են դերեբեյները, առաջանում են աղաներ, որոնք շարունակելով իրենց նախորդների վարքագիծը, աշխատավոր գյուղացիությանը պահում են միջնադարյան կալվածատիրական-ճորտատիրական զնդանում:

Եզան աշխատանք կամ դատք - տես՝ սելեֆ:

[44] Տե՛ս В. А. Гордлевский. Избранные сочинения. Т. III, 1962.- էջ 21-24: Թուրքական աղբյուրները..., հ. Դ, էջ 233:

[45] Ռաֆֆի, Երկերի ժողովածու. հ. 9, Երևան, 1964, էջ 229:

Ենիչերի - թուրք. - նոր զորք: Այն ստեղծվել էր XIV դ. Մուրադ I սուլթանի կառավարման տարիներին: Սկզբում այդ զորքը հավաքագրվում էր գերի պատանիներից, իսկ հետագայում քրիստոնյա բնակիչներից խլված երեխաներից, որ պատմության մեջ հայտնի է դեվշիրմե (մանկահավաք) անունով: Այդ երեխաներին թուրք կառավարիչները դարձնում էին մահմեդականներ, դաստիարակում էին մահմեդական մոլեռանդության ոգով և ուղղում քրիստոնյաների դեմ: Նրանք համարվում էին սուլթանի ստրուկները, ապրում էին ընդհանուր զորանոցներում, զրկված էին ամուսնանալու կամ տնտեսություն վարելու իրավունքից: Սակայն XVI-XVII դդ. ենիչերիներն իրավունք են ստանում ընտանիք կազմել և զբաղվել արհեստներով ու առևտրով: Նրանք գործիք են դառնում հետադիմական ավատատերերի ձեռքին, դիմագրավում են կենտրոնական իշխանությանը, մասնակցում պալատական հեղաշրջումներին և դաժանորեն թալանում բնակչությանը (դրա համար էլ ենիչերի փոխաբերական իմաստով նշանակում է վայրագ մարդ): 1826 թ. մայիսի 28-ին Մահմուդ II-ը հրաման է արձակում կանոնավոր բանակ ստեղծելու մասին: Ենիչերիներն ընդդիմանում են և նույն թվականի հունիսի 14-ի լույս 15-ի գիշերը, հավաքվելով մայրաքաղաքի հրապարակներից մեկում, սուլթանից պահանջում են չեղյալ հայտարարել հրամանագիրը: Բայց Մահմուդ II-ը արդեն ստեղծված կանոնավոր զորամասերի միջոցով ճնշում է նրանց ընդվզումը, մեկ օրվա ընթացքում սրի քաշելով 7 հազար, իսկ ըստ այլ վկայությունների՝ 16 հազար մարդու[46]:

Զաիմ - արաբ. - զեամեթ կոչվող լեհենային տիրույթի տեր[47]:

Զապթիե - արաբ. - ժանդարմ, ոստիկան:

Զեամեթ - արաբ. - լեհենային տիրույթ՝ 20.000-99.999 ակչա տարեկան եկամուտով[48]:

Զերդուլի կամ Զըրդուլի զար - պարսկ. - ոսկի, ղուլ - թուրք. - ստրուկ, գերի, զինվոր[49]: Քուրդ աղաները իրենց իշխանության տակ եղած հայերին անվանում էին «զիրխուլի» այսինքն՝ ոսկով

[46] Տե՛ս Советская историческая энциклопедия. Т. 16.- М., 1976.- էջ 901-902:

[47] А. С. Тверитинова. Указ соч.- էջ 201:

[48] Տես՝ Օսմանյան օրենքները..., էջ 128:

[49] Турецко-русский словарь.- էջ 366, 689:

գնված: Նրանք այդ հայերին վաճառում ու գնում էին նրանց հողերի հետ միասին[50]:

Զեքյաթ- արաբ. - մզկիթի օգտին գանձվող հարկ, որ կազմում է եկամտի 1/40-ը[51]:

Զիմմի - արաբ. - մահմեդական պետության հպատակ ոչ-մահմեդականները՝ հայերը, հրեաները, հույները և այլն:

Զոմա - քրդ. - ամառանոց, յայլա, այսինքն՝ նույնն է ինչ զոգան, որ տարածված էր քրդերի մեջ: Սակայն այն կար նաև որոշ շրջանների հայերի մեջ: Մ. Միրախորյանը գրում էր, որ Վասպուրականի մի շարք վայրերում «գյուղացիներեն շատ ոչխար ունեցողներն գյուղեն 4-5 ժամ հեռավորությամբ մի խոտավետ, լեռնաշատ կամ հարմար ձորամեջ մը կընտրեն յուրյանց համար և հոն կպատրաստեն վրաններ, մի քանի տուն այսպես ի միասին կբնակին և անդ կկթեն զոչխարս, անդ կպատրաստեն սեր և կարագ, յուղ և պանիր, ժաժիկ և չորթան, գյուղացոց այս սովորությանը «զոմա» անուն կտան, որ 2-3 ամիս կտևե և քրդաց մեջ ավելի ընդհանուր է»[52]:

Զուբարա կամ զբարա - ըստ Վ. Բդոյանի՝ անվարձ օգնություն: Հավանական է, որ սկզբնական շրջանում դա եղել է նահապետական կոոպերացիայի տարատեսակներից մեկը[53]: Բայց ժամանակի ընթացքում, դասակարգային հարաբերությունների զարգացման հետևանքով երևի ձևափոխվել է, ընդունել հարկադիր բնույթ և դարձել աշխատավճար ռենտա:

Զուլում - արաբ. - կեղեքում, անիրավություն, աղետ, չարիք: Այդպես էր բնութագրվում XIX դ. վերջի ու XX դ. սկզբի Օսմանյան կայսրության պատմության շրջանը, որը հայտնի է աշխատավորների, հատկապես արևմտահայերի բռնություններով ու հարըստահարումներով, սուլթան Աբդուլ Համիդի կառավարության անասելի չափերի հասնող սոցիալ-տնտեսական և ազգային հալածանքներով:

[50] М. Т. Боджолян. Указ. Соч.- էջ 69:

[51] Ф. Ш. Шабанов. Указ. Соч.- էջ 199:

[52] Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, Կոստանդնուպոլիս, 1884, էջ 193-194:

[53] Տե՛ս Վ. Հ. Բդոյան, Երկրագործության կուլտուրան Հայաստանում, հ. 2, Երևան, 1966, էջ 437 և 347:

Էմանեթ - արաբ. - պահ տալ, իրը որևէ մեկի մոտ պահ տալ, գրավ դնել, հավատարմագիր[54]: Բայց էմանեթը տարածվում էր նաև մարդկային ու ազգային հարաբերությունների վրա: Ս. Բդեյանն ասում էր, որ Հակոբ Սարկավագը Լճեում հայերին թողել էր քրդերի մոտ իբրև էմանեթուլլա (գրավ)[55]:

Էմիր- արաբ. - ցեղի առաջնորդ, ցեղապետ կամ երկրամասի կառավարիչ:

Էմլյաք - արաբ. - տես՝ մալիքյանե:

Էնջումաաթ -արաբ. -պարսկ. - անգլիական դիվանագիտական ծառայող Վ. Բ. Հերդի բացատրությամբ էնջումաաթը զինվորական հարկի ընդհանուր հավաքումն էր. հարկը գանձվում էր բոլոր նրանցից, ովքեր մնացել էին գյուղում: Այն հավաքվում էր Բիթլիսից Էրզրում ընկած տարածքում[56]:

Ըրղադիե, ըրղադ - հունար.- ուսումնասիրողներից ոմանք ասում են, թե նույնն է, ինչ որ ղուլլուղ, անգարիա, խըզմըթ[57], այսինքն հարկադիր աշխատանք: Այդ բացատրության հետ չի կարելի համաձայնել, քանի որ ըրղադը պիտի մեկնաբանել որպես ոչ միայն հարկադիր, այլև վարձու աշխատանք: Մինչև այսօր էլ Ախալքալաքի գյուղերի բնակիչները, որոնց նախնիները արտագաղթել են Էրզրումի էյալեթից[58], 1829-1830 թթ., վարձու աշխատողի կարիք զգալիս, ասում են պետք է «ըրղադ բռնել», «ըրղադ պահել»:

Թանզիմաթ-արաբ.-բարենորոգում, կարգավորում: Թանզիմաթ-խայրիյե՝ 1839 թ. սուլթան Աբդուլ-Մեջիդի իշխանության օրոք Ռեշիդ փաշայի նախաձեռնությամբ հրատարակված բարենորոգումների հրովարտակն էր, որ հայտնի է «Գյուլխանեի հաթթը շերիֆ» անունով[59]: Թանզիմաթի երկրորդ փուլը սկսվում է Արևելյան պատերազմից հետո, երբ 1856 թ. փետրվարի 18-ին հրապարակվեց «Խաթ-ի հումայունը» («Բարձրագույն հրովար-

[54] Турецко-русский словарь.- էջ 170:

[55] Տե՛ս Մ. Բդեյան, նշվ. աշխ., էջ 75:

[56] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ.412, g.1, գ. 1979, թ.13:

[57] А. Твертинова. Указ. Соч.- էջ 220: Օսմանյան օրենքները..., էջ 131:

[58] էյալեթ -վիլայեթ

[59] Տե՛ս Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 359:

տակ») և ավարտվում 1870-ական թթ. առաջին կեսին, որից հետո սկսվում է զուլումի շրջանը: Սակայն սուլթանների հրատարակած օրենքներն ինչպես թամզիմաթի առաջին, այնպես էլ երկրորդ փուլերում հիմնականում չիրականացվեցին:

Թասքեսիմ - արաբ. - անձնագրի տուրք:

Թարխան - Ստ. Մալխասյանցը գրում էր, որ պարսկերեն կամ մոնղոլերեն է և նշանակում է «ազնվականություն, տիտղոս հոների մեջ: Հարկերից ազատ անձ: Ազնվական»[60]: Իսկ Ս. Էսաձեն նշում է, որ այն ունի թուրքական ծագում և նշանակում է «ազատագրված»[61]:

Թափու - արաբ. - 1. Կանխավճարման գիր[62]: 2. Հողատիրոջից (պետությունից կամ կալվածատիրոջից) ստացած հողի համար վճարում: 3. Հողատիրոջից ստացած հողին տիրելու և դրանից օգտվելու իրավունք: 4. Փաստաթուղթ, որով գյուղացին ամրակցվում է հողին[63]:

Թաքրիր - արաբ. - դիմում, խնդրագիր: Թաքրիր էին կոչվում բոլոր այն գրությունները, որոնք գյուղացիների, քաղաքացիների, պատրիարքարանի զանազան պաշտոնյաների կողմից ներկայացվում էին սուլթանին կամ Բարձր Դուռ:

Թեզքերե - արաբ. - հուշատետր, նամակ, գրավոր թույլտվություն, վկայական: Այդ փաստաթուղթը բեյլերբեյները ներկայացնում էին սուլթանին, որի մեջ նշում էին տվյալ անձնավորության իրավունքը՝ իրենց իշխանության տակ եղող թիմարի նկատմամբ: Այդ փաստաթղթի հիման վրա սուլթանն արձակում էր հրովարտակ՝ բերաթ:

Թեմեթյու - արաբ. - եկամուտ, վաստակ, օգուտ: Թեմեթյու վերգիսի - եկամտահարկ[64]:

Թև - հայ. տես՝ ճյուղ:

Թևատակ - հայ. տես՝ ճյուղ:

Թերեքե - արաբ. - ժառանգություն:

[60] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան. հ. 2, էջ 87:

[61] С. Эсадзе. Историческая записка об управлении Кавказом. Т. I.- Тифлис, 1907.- էջ 616:

[62] Турецко-русский словарь.- էջ 586:

[63] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 215, Ф. Ш. Шабанов. Указ. Соч.- էջ 201:

[64] Турецко-русский словарь.- էջ 605:

Թեքալիֆ - արաբ. - պետական օրենքներով կամ Շարիաթի սկզբունքներով նշանակված հարկեր[65]:

Թիմար - արաբ. - կալվածատիրական լեհենային հողային տիրույթ, որի տարեկան եկամուտը կազմում է 99.999 ակչա: Այն պետության կողմից տրվում էր սիփահիներին, որոնք, պահանջի դեպքում, տալիս էին որոշակի թվով զինվորներ: Թիմարը պայմանական տրված ավատական հողատիրություն էր, որը, պայմանները չկատարելու դեպքում, կարող էր վերցվել սիփահիներից: Թիմարի տերերը կոչվում էին թիմարլիներ:

Թոռուն - քրդ. - ազնվական: Թոռուն էին կոչվում գերազանցապես աշիրեթական քրդերի վերնախավերը:

Իանե - տես՝ ավառիզ կամ ավարիզի դիվանիե:

Իբրա - արաբ. - պարտքից, պարտականությունից ազատում, ստորագիր անդորագիր, տուգանքի հորինում[66]:

Իլամ - արաբ. - դատական որոշում, ազդ, ծանուցում, տեղեկացում:

Իլթիմազ - արաբ. - տես՝ մյուլթեզիմ:

Իջարե - արաբ. - վարձակալում, վարձակալման վճար: «Աշխատանքը» գրում էր. Մոկսում քրդական Միրհասան սրբատեղին իր հողերը տալիս էր հայոց Ամենափրկիչ վանքին իջարայով կամ վարձակալությամբ, «ստանալով տարեկան ութ չափ հացահատիկ»[67]:

Իկռամ կամ իքրամ - արաբ. - լավ ընդունելություն, հյուրասիրություն, զեղչում, զիջում: Թուրքիայում, ելնելով իսլամիզմի դավանաբանական դրույթներից, վաշխառուական տոկոս չէին վերցնում, բայց դրա փոխարեն գործածում էին իքրամը: «Բյուզանդիոնը» գրում էր. «Ըստ շերիի օրինաց, ֆայիզ (տոկոս- Ա.Հ.) առնելը հարամ է, ուստի անոր անունը փոխած է իքրամի, իսկ իքրամը եթե հարյուրին 90 իսկ ըլլա, հարամ չէ»[68]:

Իսթիլա - արաբ. - ներխուժում, զավթում, նվաճում, գրավում: Վասպուրականում իսթիլա նշանակում էր պայման կնքել, «որով պարտատերը գրավում է պարտապանի կայքը, եթե վերջինս

[65] Թուրքական աղբյուրները..., հ. Ա., էջ 360:

[66] Турецко-русский словарь, էջ 257:

[67] «Աշխատանք», 1913, № 14-110, էջ 3:

[68] «Բյուզանդիոն», 1912, № 4881:

փողը չտա ժամանակին, համաձայնությունից է կախված իսթիլա անելը»[69]:

Իվշուր - արաբ. - այդպես էր կոչվում մյուլթեզիմը կամ կապալառուն Երզրումի գավառում XIX դ. առաջին քառորդում[70]:

Լաքեջ - այդպես էին կոչվում Մշո դաշտում բեկի մոտ բանող տղա մշակները[71]:

Խաթթը- հումայուն - տես՝ թանզիմաթ:

Խանեդան - արաբ. - մեծ գերդաստան, ցեղ, արքայատոհմ[72]: «Աշխատանքի» թղթակիցը երբեմն հիշատակում էր Վասպուրականի խանեդանների կեղեքումների ու չարաշահումների մասին:

Խաս - արաբ. բառացի՝ սեփական, հատուկ, առանձին, ոչ հասարակ, ընտրյալ դասին պատկանող: Խաս էին կոչվում այն հողերը, որոնք պատկանում էին սուլթանին, նրա ընտանիքի անդամներին, վեզիրներին, բեյլերբեյներին, սանջակբեյներին և նման անձանց: Նրանք պարտավոր էին պետության առաջ կատարել որոշակի զինվորական ու քաղաքացիական ծառայություն, հակառակ դեպքում կզրկվեին իրենց խասեչից: Բեյլերբեյների խասերը տալիս էին մինչև 1,5 միլիոն, իսկ սանջակբեյներինը՝ մինչև 500 հազար ակչայի եկամուտ[73]:

Խասսա - արաբ. - թիմարի հողային տիրույթի այն մասը, որ կալվածատիրոջ անձնական տնօրինության տակ էր և համարվում էր նրա հայրենական կալվածքը:

Խարաջ - արաբ. - ոչ իսլամ հպատակներից գանձվող գլխահարկ՝ զինվորական ծառայության փոխարեն:

Խաֆիր - ոմանք կարծում են, թե առաջացել է արաբական քյաֆիր բառից[74]: Մյուսները կապում են վաշխառության հետ: Գյուտ քահանա Աղայանցը գրում է. «Խաֆիրություն - նշանակում է գրավատեր լինել, կալվածը վերցնում են գրավ և փոխ են

[69] Վ. Փափազյան, Երկեր, հ. 2, էջ 234:

[70] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 3, էջ 88:

[71] Տե՛ս «Վտակ», 1908, № 3:

[72] Տե՛ս Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 362:

[73] Տե՛ս А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 218:

[74] Տե՛ս «Մշակ», 1913, № 97:

տալիս, այդպիսով դառնում են խաֆիր-գրավատեր»[75]: Ապա տալիս է երկրորդ բացատրությունը, նշելով, թե խաֆիրություն նշանակում է «ավատապետերի դրած տուրքը ժողովրդի վրա»[76]:

Մենք չենք կարող համաձայնել այդ մեկնաբանություններին, քանի որ խաֆիրության շահագործման ենթակա էին ոչ միայն քրիստոնյաները՝ տվյալ դեպքում հայերը, այլև մահմեդականները, գերազանցապես՝ քրդերը, որովհետև խաֆիրությունը վաշխառության հետևանք չէր, և ժողովրդի վրա ավատատերերի դրած ամեն տուրք չի կարելի անվանել խաֆիրություն:

Մեր կարծիքով խաֆիրը կամ խաֆիրությունն առաջացել է արաբերեն խաֆիր կամ ղաֆիր բառից, որ նշանակում է պահապան: Դրա էությունն այն էր, որ մի դեպքում գյուղացիներն էին դիմում աղաներին կամ ցեղապետերին՝ խնդրելով պաշտպանություն կողմնակի հարձակումներից՝ պարտավորվելով, որ կվճարեն դրա համար, մի այլ դեպքում՝ աղաներն իրենք էին իրենց հայտարարում գյուղացիներին կողմնակի հարձակումներից պաշտպանող և այդ պաշտպանության համար ստիպում էին նրանց վճարել զանազան տուրքեր: Դա հիշեցնում է Արևմտյան Եվրոպայում IX դարի ճորտատիրական իրավունքի հաստատման ժամանակաշրջանի կոմենդացիան: Խաֆիրությունն անցնում էր երկու փուլ. առաջինում աղաները բավարարվում էին գյուղացիներից միայն հարկեր վերցնելով, իսկ երկրորդում՝ տիրում էին գյուղացիների անձին ու գույքին, և սաստկացնելով իրենց բռնությունները, դարձնում էին նրանց իրենց ճորտերը: Խաֆիրությունը տարածված էր կենտրոնական Սասունում, Խութում, Խուլփում, Խիզանում, Շատախում, Բռնաշենում, Մամռատանքում և այլուր[77]:

Խըզմըթ, ավելի ճիշտ հիզմեթ - արաբ. - ծառայություն (պետական, զինվորական, բարեկամական, ընկերական), իսկ մի շարք տեղերում՝ կոռ կամ աշխատավճար, ռենտա:

Խումս - արաբ. - ոչ մահմեդական բնակչությունից գանձվող

[75] Դիվան հայոց պատմության, գ. ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 550:

[76] Նույն տեղում, էջ 555:

[77] Այդ մասին հանգամանորեն տես Ա. Ս. Համբարյան, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն (XIX դարի II կես - XX դարի սկիզբ). Երևան, 1983, էջ 45-47:

եկամտահարկ, որ կոչվում էր «հնգամաս» (հինգերորդ մաս) և հավաքվում էր աշարի հետ միասին[78]:

Խուրձ բռնել - այս արտահայտությունը տարածված է Մոկսում և այլ տեղերում, իսկ էությունը կապալառուներին ծառայելն էր տասանորդի հավաքման ժամանակ: «Աշխատանքի» թղթակիցը այդ առիթով գրում էր, որ «մյուլթեզիմի մարդիկ կկանգնեն քաղված արտերու մեջ ու իրենց աղայի իրավունքը եղող 8-են մեկը անմիջապես կհավաքեն, որպեսզի գյուղացիք չգողանան»[79]:

Կանուն - օրենք, կարգ:

Կանուննամե - օրենսգիրք, օրենքների ժողովածու:

Կապու ռեսմի - արաբ. - մաքս, որ գանձվում է դարպասների մոտ՝ վաճառքի համար քաղաք բերվող մթերքներից[80]:

Կառ - պարսկ. - եկամուտ, շահույթ, օգուտ, կալվածատիրական բնամթերային ռենտա: 1912 թ. թղթակից Ձալալը գրում էր, որ Վասպուրականում «վերջերս բեկերը ուշար կվերցնեն նաև լեռներու խոտերեն, որոնք կառ, բոջ, քրսին կկոչվին»[81]

Կեֆալետ կամ քեֆալետ - արաբ. - երաշխավորություն, ապահովություն, հանձնարարական:

Կըշլակ - տես ղշլաղ:

Կըռռ կամ կուռռ - քրդ. - խեղճ պատանի, գյուղացի:

Կոն - քրդ. - վրան[82]:

Կոնաք - կառավարական շենք, պետական հիմնարկություն, իջևան:

Կոչան - արաբ. - Թուրքիայում գոյություն ունեցող կարգի համածայն, եթե մեկը ցանկանում էր հող ձեռք բերել, դիմում էր իշխանություններին, որոնք իրենց ստորադրյալներին հանձնարարում էին հատկացնել հողը՝ որոշելով տարածքն ու մուծվելիք գումարը: Այդ գումարը պետական դրամարկղ մուծելուց հետո նրան տալիս էին կոչան, որը պայմանագրի նախնական ձևն էր: Այն կազմվում էր երեք օրինակից, որոնցից մեկը տրվում էր դիմողին, երկրորդը մնում էր սանջակի մեջլիսում, իսկ երրորդը ու-

[78] С. А. Твертинова. Указ. Соч.- էջ 219:

[79] «Աշխատանք», 1912, էջ 8:

[80] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 203:

[81] «Աշխատանք», 1912, № 12-59, էջ 8:

[82] Տե՛ս Գեղամ Տեր-Կարապետյան, նշվ. աշխ., էջ 322:

ղարկվում էր Կ. Պոլիս և հաստատվում կամ մերժվում բարձրագույն իշխանությունների կողմից: Հաստատման դեպքում դիմողին տրվում էր թափու, որը պայմանագրի ավարտված ձևն էր[83]:

Հաթթը հումայուն, Հաթթը-շերիֆ - տես թանզիմաթ:

Հալա - քրդ. - հիմա, առայժմ: Տուրքի մի տեսակ էր, որը գյուղացին վճարում էր քուրդ աղային իր ամուսնացող աղջկա գլխագնից՝ սովորաբար կեսը[84]:

Հակկը կարար - արաբ. - հակկը նշանակում է իրավունք, ճշմարտություն, արդարություն, պարգևատրում, բաժին, մաս, իսկ կարար՝ որոշում, կայունություն, հանգիստ[85]: Որոշ վայրերում այդպես էր կոչվում այն փաստաթուղթը, որով հոր անունով ձևակերպված թափուն վերածևակերպվում էր որդու անունով:

Հակկը շահադերնամե - արաբ., պարսկ. - իրավունքի վկայագիր:

Հակկը յուլ հաքիմե - արաբ. - ըստ Ատրպետի, քրդական այն աշիրեթները, որոնք ենթարկվում էին Քյոռ Հուսեինին, վճարում էին նրան հակկը յուլ հաքիմե տուրք, որ նշանակում է կառավարողի կամ տիրոջ իրավունք[86]:

Համփա չարեք - համփա- պարսկ. բաժին, մաս, համատեր, տիրակից կամ պարզապես համայնքի անդամ, իսկ չարեք՝ քառորդ[87]: Հայաստանում համայնական հողերի վերաբաժանումների ժամանակ վարելահողերը բաժանվում էին համփա, չարեք, կիսան և պճեղ մասերի: Ամենաբազմանդամ ընտանիքը, որ բաղկացած էր 16 հոգուց, ստանում էր համփա, այսինքն՝ ամենամեծ հողաբաժինը, 8 հոգուց բաղկացած ընտանիքը ստանում էր կիսան, 4 հոգուց բաղկացած ընտանիքը՝ չարեք, իսկ 2 հոգուց բաղկացած ընտանիքը՝ պճեղ հողամասեր: Վարելահողերի վերաբաժանման համփա-չարեք սկզբունքը գործածվում էր ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում, բայց ավելի շատ Արևելյան Հայաստանում:

[83] Տե՛ս Ա. Ս. Համբարյան,. Ագրարային հարաբերությունները..., էջ 51:

[84] Տե՛ս Հ. Մ. Պողոսյան, Սասունի պատմություն. Երևան, 1985, էջ 205:

[85] Տե՛ս Турецко-русский словарь.- էջ 226-317:

[86] Տե՛ս Ատրպետ, Ճիվաղը, Քյոռ Հուսեին փաշա-քուրդը, 1911, Թիֆլիս, էջ 4-5, 14:

[87] С. А. Егиазаров. Исследование по истории учреждений в Закавказье. Сельская община.Ч. 1.- Казань, 1889.- էջ 51:

Հասարաթ կամ հասաթ - արաբ. - վնաս, կորուստ: Տալվորիկի, Բուլանըխի և Խնուսի գյուղացիները, գանգատվելով Քյոռ Ալոյից, գրում էին, որ ամեն մի գյուղ «պարտավոր է 500-1000 ղուրուշ խասարաթ ըսված տուրքը վճարել»[88]: Թերթը, ցավոք, ավելին չի հաղորդում այդ տուրքի մասին:

Հավալե - արաբ. - հանձնարարություն, վստահություն, հանձնում, վճարման փոխադրություն (պարտապանի կողմից այլ մարդու), պարտքի փոխադրություն[89]: Թուրք պաշտոնյաներն իրենց ռոճիկի փոխարեն վերցնում էին հավալե կոչված փաստաթուղթը, ապացուցելու համար, որ պետությունից ռոճիկ չեն ստացել և գյուղացիներից հավաքում էին իրենց ռոճիկի կրկնակին ու եռակին[90]: Դա մշտապես կիրառվում էր Արևմտյան Հայաստանում:

Հյուքյումեթ կամ հյուքյումեթություն - արաբ. - քրդական ու արաբական ցեղապետերի կամ բեյերի տիրույթներ: Դրանց տիրակալներն օգտվում էին լիակատար ինքնուրույնությունից թե՛ զինվորական, թե՛ քաղաքացիական-վարչական գործերում, սուլթանի առաջ կատարում էին ռազմալեհենային ծառայություն, պահանջի դեպքում՝ ներկայանում էին արշավանքի և ղեկավարում իրենց զորքերը[91]: XIV-XVII դդ. հյուքյումեթություններ եղել են Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի և այլ էյալեթներում: XVII դարի թուրք ուղեգիր Էվլիա Չելեբին նշում է, որ հյուքյումեթություններում թիմարներ և զեամեթներ չկային: «Դրանց իշխողները այդ կալվածները կառավարում էին որպես իրենց սեփականություն: Տներն ու բերքը պատկանում էին իշխողներին»[92]: Մասնագետների կարծիքով հյուքյումեթությունները Օսմանյան կայսրության մեջ եղել են կիսաանկախ[93]: Արևմտյան Հայաստանում հյուքյումեթությունները վերացվեցին XIX դ. առաջին կեսին:

Հուրիեթ-անգարյա - արաբ. - նշանակում է ազատություն և հարկադիր աշխատանք: 1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքական իշխանությունները Արևմտյան Հայաստանում սկսեցին հավաքել նոր հարկեր, որոնցից մեկն էլ հուրիեթ-անգարյան էր: 1910 թ. սեպտեմբերին Չարսանճագից յոթ քահանա Կ. Պոլսի հայոց պատրիարքին գրում են, որ սահմանադրության հռչակումից հետո արևմտահայության դրությունն ավելի է վատթարացել. «Ավելի սուր հանգամանքով մը սկսած են իրագործվիլ՝ ի հեճուկս սահմանադրության, և մինչև իսկ (ինչ որ չէր տեսնված հին ռեժիմի ժամանակ) մեր երեցները կբռնադատվին ձրի աշխատության, զոր հուրիեթ-անգարյանը կանվանվեն այս անգութ բռնավորները, բացահայտորեն ընդոտելու համար սահմանադրությունը, որ փորի ցավ կպատճառե իրենց»[94]:

Ղեբրա - «Բյուզանդիոնը» գրում էր, թե դա ձրի աշխատանք էր, որ կատարում էին Ալջավազի գյուղացիները Քեռռ Հուսեինի օգտին[95]: Ցավոք, չի տալիս այլ տեղեկություններ:

Ղշլաղ - թուրք. - ծմեռանոց: Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում հայ գյուղացիները քուրդ աղաների կամ ցեղապետերի իշխանության տակ էին: Սրանց ցեղակիցները, վարելով կիսավաչկատուն կյանք, գարնանը բարձրանում էին սարերը, իսկ ծմեռնամուտին գալիս-հաստատվում էին հայկական գյուղերում: Ցեղապետերը կամ աղաներն իրենց ցեղակիցներին բնակեցնում էին իրենց տիրապետության տակ եղած հայ գյուղացիների տներում, սովորաբար նույն քուրդ ընտանիքին՝ միշտ նույն հայի տանը, պարտադրելով, որ հայը պահի ու խնամի իր հյուրին ու նրա անասուններին մինչև գարուն: Ղշլաղի մասին որոշ տեղեկություններ են հաղորդում Գ. Արվանձտյանցը, Ռաֆֆին, Գեղամ Տեր-Կարապետյանը և ուրիշներ:

Ղոլ - թուրք. ձեռք, թև, ճյուղ, շարասյուն, ջոկ, խումբ և այլն[96]: Ախալքալաքի գավառի մի շարք գյուղերում վարձակալած խոտհարքները հնձելիս բնակիչները բաժանվում էին ղոլերի, այսինքն՝ խմբերի, ապա հնձած խոտը բաժանում էին խմբերի անդամների միջև: Հավանաբար այդ սովորությունը եղել է դեռ թուրքական տիրապետության ժամանակաշրջանում և շարունակվել նաև ռուսական տիրապետության պայմաններում:

---

[88] «Բյուզանդիոն», 1911, № 4436:

[89] Турецко-русский словарь.- էջ 238:

[90] Տե՛ս Ս. Բդեյան, նշվ. աշխ., էջ 238:

[91] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 219:

[92] Թուրքական աղբյուրները..., հ. Բ, էջ 265:

[93] Նույն տեղում, էջ 265-266:

[94] «Մշակ», 1910, № 216: «ժամանակ», 9 սեպտեմբերի 1910: «Բյուզանդիոն», 1910, № 4229:

[95] Տե՛ս «Բյուզանդիոն», 17 հոկտեմբերի, 1908:

[96] Турецко-русский словарь.- էջ 353:

Ղոլջի - թուրք. - կոլջու բառից, որ նշանակում է պահնորդ, վերակացու, հսկիչ: Դրանք ապրում էին հայ գյուղացիների հաշվին և ծառայում իշխանություններին ու կապալառուներին: Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է, որ կառավարության հրահանգով «յուրաքանչյուր հայ գյուղ պարտավոր էր իր հաշվին պահել 3 թուրք կամ քյուրտ «ղոլջի» և երաշխավորել անոնց կյանքը»[97]: Իշխանությունները նրանց նշանակում էին իբր թե գյուղերը պաշտպանելու համար, բայց գործնականում՝ հայկական շարժումներին, կասկածելի անձանց հետևելու և իշխանություններին հայտնելու նպատակով: Բենսեն գրում է, որ կապալառուն գյուղ էր մտնում տասնյակ օգնականներով, որոնք կոչվում էին խոլջի[98]: Իսկ Ս. Բդեյանը նշում էր, որ գոլճիները աշարի հավաքման ժամանակ չափում են հացահատիկը[99]:

Ղուլ կամ կուլ - թուրք. - գերի, ծառա, ստրուկ, ցեղապետերի կամ աղաների զորախմբերի զինվոր, բեկի մշակներ[100]:

Ղուրբաթ - արաբ. - օտարության կամ տարագնացության գնալ[101]:

Ճղգլուխ - հայ. - Բուլանըխում յուրաքանչյուր գյուղ արոտավայրերից օգտվելու համար բաժանվում էր 1-6 խմբերի, որոնք կոչվում էին ճյուղեր: Յուրաքանչյուր ճյուղի ունեցած ոչխարների գլխաքանակը չպետք է անցներ 500-ից կամ 1000-ից: Ճյուղը սովորաբար կոչվում էր այն տնտեսության անունով, որը բոլորից շատ ոչխար ուներ և կոչվում էր ճղգլուխ կամ քրդերեն սարջոլ: Նրանից քիչ ոչխար ունեցող տնտեսությունները կոչվում էին թև, սրանից քիչ ունեցողները՝ թևատակ կամ քրդերեն՝ բընջոլ, ավելի քիչ ունեցողները՝ ջոլ, իսկ ամենաքիչ ունեցողները՝ պոչիկ: Յուրաքանչյուր ճյուղ հանդում խփում էր իր վրանը, որը կոչվում էր գոմ: Զոմայի կամ օբայի նման այնտեղ ևս ապրում էին գարնանից մինչև ուշ աշուն[102]:

[97] Ռուբեն, ՀՀՀ, հ. 4, էջ 189:

[98] Տե՛ս Բենսե, նշվ. աշխ., էջ 144:

[99] Տե՛ս Ս. Բդեյան, նշվ. աշխ., էջ 141:

[100] Տե՛ս Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 3, էջ 188: «Վտակ», 1908, № 3:

[101] Տե՛ս Գեղամ Տեր-Կարապետյան, նշվ. աշխ., էջ 88-89:

[102] Տե՛ս Բենսե, նշվ. աշխ., էջ 83-84:

Մազբաթա - արաբ. - արձանագրություն: XIX դ. վերջին և XX դ. սկզբին, երբ համաշխարհային առաջադեմ հասարակայնությունը դատապարտում էր հայերի հանդեպ կիրառվող վայրագությունները Օսմանյան կայսրությունում, թուրքական իշխանությունները պատրաստում էին կեղծ փաստաթղթեր՝ մազբաթաներ առ այն, որ հայ բնակչությունն իր վիճակից շատ գոհ է: Նրանք, բռնություններ գործադրելով, այդ փաստաթղթերի տակ ստորագրել էին տալիս հայերին և հրապարակում մամուլում կամ ուղարկում պաշտոնական շրջաններին: 1907 թ. հունիսի 6-ին Բիթլիսի ռուս հյուպատոս Վ. Շիրկովը գրում էր Կ. Պոլսի՝ իրենց դեսպանին. «Համարյա ամեն օր հայկական գյուղերի ավագները բերվում են Բիթլիսի կառավարչատուն, և ծեծելով ու բանտարկելով, ստիպում են նրանց մազբաթներ ստորագրել այն մասին, թե ժողովուրդը գոհ է իշխանություններից: Կուսակալի զապթիեները այդպիսի բովանդակությամբ փաստաթղթերով շրջում են քաղաքի շուկաներում և ստիպում են հայերին, որ ստորագրեն դրանք»[103]:

Մալիքյանե կամ մուլք - արաբ. - սուլթանի կողմից առանձին անձանց նվիրված հողային տարածություն՝ որպես լիակատար սեփականություն: Նա կարող էր այդ տարածությունը ժառանգել, վաճառել, նվիրել և վարվել այնպես, ինչպես վարվում էին այլ սեփականատերեր: Այդպիսի սեփականատեր էր նաև մալիքյանե էշկինջին, այն տարբերությամբ, սակայն, որ սա պարտավոր էր արշավանքների ժամանակ տրամադրել որոշակի քանակությամբ զորք, բայց ինքը կարող էր չմասնակցել արշավանքներին[104]: Մալիքյանեն վերացվեց թանզիմաթի շրջանում:

Մահլուլ - արաբ. - ունեցվածք կամ տիրույթ, որի տերը մահացած է: Ռաֆֆին գրում էր, որ «տաճկաց կառավարությունը վանքային կամ եկեղեցական կալվածք չէ ճանաչում, որովհետև կալվածատեր կարող են լինել միայն անձնավորություն ունեցող անհատներ, իսկ վանքը և եկեղեցին նրա կարծիքով իրավաբանական անձնավորություն չէ, ուրեմն և կալվածատեր լինել կարող չէ... Այս պատճառով վանքային կալվածները համարվում են որպես մահլուլ, այսինքն՝ որոշ տեր չունեցող: Այդպիսի կալվածների տերն ինքը պետությունն է լինում»[105]: Նա ապա զարմանք էր

[103] Архив внешней политики России, ф. «Политархив», 1907, д. 541, р. 104-105:

[104] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 205:

[105] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 233:

հայտնում. «Բայց չենք կարողանում հասկանալ, թե ինչու մահմեդականի մզկիթը և մադրասան կարող են կալվածք (վագֆ) ունենալ, բայց հայոց եկեղեցին, վանքը և դպրոցը չեն կարող ունենալ»[106]:

Մահր - ասոր. - գլխագին, փեսացուի տված գլխագինը հարսնացուին:

Մարաբա - (աղբյուրներում և գրականության մեջ հանդիպում ենք նաև մարապա, միրիպա, միրբա, մըրբա, մըրբպա, մերաբա, մերապա և այլ տառադարձությամբ): Մարաբան ծագում է արաբերեն մյուրաբա բառից, որ նշանակում է քառորդ: Տարբեր հեղինակներ տարբեր կերպ են բացատրում մարաբան: Ոմանց կարծիքով այն նշանակում է «գարնան օրերուն համար պայմանագրություն կնքելով գործառություն ընել»[107], մյուսները նշում են, որ «դրամ տվող և առնողը միանգամայն միրիպա կկոչվին»[108]: Երրորդները, թե մարաբան «գյուղի պրոլետարիատն է»[109] և այլն: Ցավոք, մեզ անհայտ է, թե երբ է առաջացել մարաբա հասկացությունը և ինչ զարգացում է ապրել, բայց գիտենք, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում մարաբաների ճնշող մեծամասնությունը հողազուրկ գյուղացիներ էին. շատ քչերը ունեին հողակտորներ[110]: Նրանց մի մասն ուներ քարշող անասուններ ու գյուղատնտեսական գործիքներ, իսկ մյուս մասը ոչինչ չուներ, ապրում էր աղայի կամ հողատիրոջ հատկացրած տանը և տված անասուններով ու գործիքներով մշակում էր նրա հողը: Աղան որքան շատ միջոցներ էր տրամադրում մարաբաներին, այնքան մեծ բաժին էր ստանում հավաքած բերքից՝ հաճախ մինչև 70-80 տոկոսը: Հողատիրոջ և մարաբաների միջև համաձայնությունը կայացվում էր սովորաբար բանավոր՝ մեկ, երկու և ավելի տարով: Սակայն հողատերը մեծ մասամբ պահում էր նրանց այնքան, որքան հարկ էր համարում՝ աշխատեցնելով նաև իր

[106] Նույն տեղում:

[107] Կարապետ Զեքի, Մեծ բառարան օսմաներեն հայերեն, Կ. Պոլիս, 1912, էջ 776:

[108] Գեղամ Տեր-Կարապետյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներուն մեջ. Կ. Պոլիս, 1911, էջ 29:

[109] «Երկրի ձայնը», 1908, № 20, էջ 5:

[110] Տե՛ս Բենսե, նշվ. աշխ., էջ 40:

տանը: Աղայի ու մարաբաների միջև ձևավորված հարաբերությունները մի շարք տեղերում վերածվում էին ճորտատիրական հարաբերությունների: Բայց մարաբաների մեջ կային նաև բատրակներ կամ գյուղատնտեսական ազատավարձու բանվորներ: Դրանց թիվը քիչ էր[111]:

Մարհունա - կալվածատիրական տուրք կամ պարհակ, որ գոյություն ուներ Ներքին Հայոց ծորում[112]:

Մեզաթ - արաբ. -աճուրդ, աճուրդով վաճառք:

Մեվկուֆ կամ մեվկուֆատ - արաբ. - հողային ունեցվածք, որը վերցվում է տիրոջից՝ նրա վրա դրված պարտականությունը չկատարելու համար:

Միմիլի - արաբ. - նշված, նկատված, կասկածելի, կրկնահանցագործ (ռեցիդիվիստ), օգտագործվում էր դատաքննչական և հետախուզական գործերում: Ս. Բդեյանը հուշագրում էր, որ իշխանությունները, երբ տեղեկություն էին ստանում որևէ մեկի հեղափոխական լինելու մասին, անմիջապես չէին բանտարկում նրան՝ մի վկա լինելու պատճառով. անհրաժեշտ էր երկու կամ ավելի վկա: Ուստի, միառժամանակ նրան միմլի էին հայտարարում, այսինքն՝ կասկածելի[113]:

Միր - արաբ. - տեր, իշխան:

Մյութեղալիբե-արաբ.-բռնությամբ իշխանության և հարստության տիրացած, զոռբա[114]:

Մյութեսելլիմ - արաբ. հարկահավաք:

Մյութեվելլի - արաբ. վագֆի կառավարիչ, նաև հայոց եկեղեցական գույքի կառավարիչ[115]:

Մյուլթեզիմ կամ իլթիմազ - արաբ - Վ. Ա. Գորդլևսկին նշում է, որ այդ բառը թուրքական փաստաթղթերում հանդիպում է XVI դարից և նշանակել է իր վրա որևէ պարտականություն (կապալ, վերանորոգում) վերցնող մարդ: Հետագայում նա, հարստություն

[111] Մարաբաների մասին հանգամանորեն տես Ա-Դո, նշվ. աշխ., էջ 276: Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները..., էջ 70-72:

[112] Տե՛ս «Աշխատանք», 1911, № 22, էջ 10:

[113] Տե՛ս Ս. Բդեյան, նշվ. աշխ., էջ 53:

[114] Տե՛ս Թուրքական աղբյուրները..., հ. Դ, էջ 231:

[115] Տե՛ս Մասնական պատմություն հայ մեծատուներու 1400-են-1900, գրեց Հ.Գ.Մ., Կ. Պոլիս, 1909, էջ 155:

կուտակելով, դառնում է հարկերի կապալառու[116] և դաժանորեն հարստահարում է բնակիչներին՝ վերցնելով նրանցից պետության սահմանածի կրկնակին ու եռակին: 1840 թ. մյութեզիմը կամ իլթիմազը պաշտոնապես վերացվում է: Սակայն 1852 թ. այն նորից է վերականգնվում: XIX դ. վերջին և XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում այդ կապալառուները բնակչության, հատկապես գյուղական բնակչության կեղեքումն ավելի սաստկացրին՝ որոշ տեղերում վերցնելով գյուղացիների բերքի 4-ից, 5-ից մեկը:

Մյուլք - Տե՛ս մալիքյանե:

Մյուստեբիթ - արաբ. - բռնակալ, ինքնակալ: Ռուբեն Տեր-Մինասյանը հուշագրում էր, որ 1907 թ. կառավարության որոշմամբ Արևմտյան Հայաստանում «Հողային ազատ առևտուրին հակառակողը պիտի նկատվի և հետապնդվի իբրև մյուսթեբիթ»[117]: Խնդիրն այն է, որ սուլթանական իշխանությունները, հայերին դնելով ծանր վիճակում, ձգտում էին հասնել այն բանին, որ նրանք էժան վաճառեին կամ ուղղակի լքեին իրենց հողերը և հեռանային հայրենիքից: Ովքեր ընդդիմանում էին դրան, համարվում էին մյուստեբիթներ:

Մուաջելե - արաբ. - այն վարձն է, որ մուծում է կապալառուն պետական գանձարան՝ աշարի վարձակալման համար:

Մուկաթաա - արաբ. - ունեցել է բազմաթիվ նշանակություններ: Հողային օրենսգրքում դրա տակ հասկացել են. 1. պետության կողմից հողից, աղահանքերից, մաքսագանձումներից և այլ օբյեկտներից ստացված եկամուտները վարձակալության տալը, 2. նշված օբյեկտներից ստացած եկամուտները կամ հարկերը, 3. առանձին շրջաններից և մարզերից հավաքված հարկերը, 4. ընդհանրապես հարկեր ու տուրքեր[118]:

Յաֆթա - պարսկ. - պիտակ, գրավոր կարգադրություն: 1910 թ. «Բյուզանդիոնը» գրում էր, որ Բիթլիսի բնակիչները կուսակալի դռանը յաֆթա են փակցնում և պահանջում նրանից չպաշտոնազրկել արքունի բարեխիղճ պաշտոնյաներին և չնշանակել անարժաններին, այլապես նա կծեծվի ու կվռնդվի քաղաքից[119]:

[116] Տե՛ս В. А. Гордлевский. Указ. Соч.- էջ 245:

[117] Ռուբեն, ՀՀՀ, հ. 4, էջ 190:

[118] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 206-207:

[119] Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4033:

Յուրդլուք - արաբ. - տես՝ օջակըլըք:

Նախլըխանտ - թուրքական կառավարությունը նախլըխանտ էր համարում այն գյուղերը, որտեղից հայերին դուրս էր քշել[120]:

Նայարնա - հավանաբար քրդ. նեյառ բառից, որ նշանակում է թշնամի, հակառակորդ[121]: «Վտակի» թղթակիցը գրում էր, որ Մշո դաշտում, երբ աղան փող է պարտք տալիս և հետո դրա դիմաց հող է ուզում, իսկ գյուղացին չէր տալիս, աղան դառնում է նրա նայարնան, այսինքն՝ դուշմանը, թշնամին[122]:

Նոբադար - քրդ. - հերթապահ, ժամապահ, պահակ, պահապան: «Դրոշակի» թղթակիցը նշում է, որ նոբադարները Վանի շրջակայքի հայկական գյուղերի քուրդ պահապաններն էին[123]:

Անդրանիկը հուշագրում էր, որ կառավարությունը հայկական գյուղերում քուրդ պահապաններ էր նշանակում, որոնք կոչվում էին նոբադարներ: Նրանց պարտականությունն է իշխանություններին հաղորդել հայդուկների գալու մասին: Նոբադարները ապրում էին գյուղացիների հաշվին[124]:

Շախսի-վերգիսի - արաբ. - թուրք. - գլխահարկ, անձնահարկ:

Շահնա - պարսկ. - 1. թագավորի կողմից նշանակված վերակացու՝ քաղաքում կարգ ու կանոն պահպանելու համար, ոստիկան, 2. հարկային պաշտոնյա, 3. Թուրքիայում գյուղերի հարկերը բնատուրքով գանձող կապալառու[125]: Շահնան հատկապես հայկական գյուղերում դաժան հարստահարման էր ենթարկում բնակիչներին: 1862 թ. Գ. Սրվանձտյանցը գրում էր. «Արքունի տասանորդը ստացողը (շահնա) մի նոր կերպ տեր է գեղի մը մեջ, եկած օրեն մինչև գնացած ամեն օր եղ ու ծվածեղ, փոխինդ ու գաթա, սեր ու կարագ, խորով ու խորոված իր սեղանի վրա, իր սենեկին մեջ լիք ու պատրաստ պիտի գտնա: Ապա թե ոչ, փայտը ձեռքը, զենքը վրան, այսպես հանկարծ ու համարձակ կհանդիպի, հայհոյանք, սպառնալիք, հարված կթափե, մինչև ինկնիս, փա-

[120] Տե՛ս «Վտակ», 1908, № 3:

[121] Курдско-русский словарь.- էջ 568:

[122] Տե՛ս «Վտակ», 1908, № 3:

[123] Տե՛ս «Դրոշակ», 1897, № 1, էջ 4:

[124] Տե՛ս Անդրանիկ, Մարտական հրահանգներ, ժնև, 1906, էջ 66-67:

[125] Տե՛ս Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 3, էջ 494:

թաթվիս ոտները, ծառա դառնաս, հող դառնաս, շուն դառնաս, հազիվ տասն միջնորդով և մեկ ոչխարով կամ ուրիշ բանով քեզ հետ հաշտվի»[126]:

Շահնալըգ - պարսկ., թուրք. - Շահնային տրվող տուրքն էր, որ թանգիմաթի տարիներին թեև արգելված էր հավաքել, սակայն շարունակում էին հավաքել: «Ատենագրությունում» նշվում էր. «Շահնալըխ կամ եոլչեկ հագկը ըսված արգելյալ տուրք մ՝ ալ կա, որ բերքին 1/6 -ն է, երբեմն ալ ավելի զոր հողագործը եթե չտա, շահնան շատ վնասներ կհասցնե անոր»[127]:

Շրիք - արաբ. - Արևմտյան Հայաստանում հայերը շրիք էին անվանում այն կիսավաչկատուն քրդերին, որոնք ծմեռում էին նրանց գյուղերում՝ պատճառելով բազմաթիվ տհաճություններ և տալով անտանելի նեղություններ:

Ըխվով - Ռուբեն Տեր-Մինասյանի բացատրությամբ՝ կտակ եկեղեցուն կամ վանքին[128]:

Չավուշ - թուրք. - սերժանտ, ենթասպա, տասնապետ, բանվորների ավագ, գգիր:

Չարեք - պարսկ. - չորսից մեկը, քառորդ: «Հնում գյուղի երրորդ դասակարգը, որ համփայի մի քառորդի չափ հող ունի»[129]:

Չիֆթ - պարսկ. - զույգ: Այն հողակտորը, որը հնարավոր է մշակել մի զույգ եզների միջոցով: «Չիֆթը կամ չիֆթլիքը մի հողային տարածություն էր, որը լավագույն տեղում համարժեք էր 80 դեռնումի, միջակ տեղում՝ 100 դեռնումի, իսկ վատ տեղում՝ 120,130 դեռնում հողի»[130]:

Չիֆթլիկ -կալվածք:

Չիֆթչի- հողագործ, չիֆթի տեր, տիրապետող:

Չոբան-բեգի - թուրք. - վաչկատուների մոտ ոչխարի հարկ, որը համընկնում էր աղնամ ռեսմիին:

Չոբաչի - 1. Հարգված, բարեգործ, սպիտակամորուք մարդ, 2. քրիստոնյա հպատակների մեջ առևտրական և պատվավոր

[126] «Արծվի Վասպուրական», 1862, № 3, էջ 78:

[127] Ատենագրությունք ազգային ժողովոյ, բացում 1860-1870-ամսաց, Կ. Պոլիս, 1890, էջ 471:

[128] Ռուբեն, ՀՀՀ, հ. 4, էջ 28:

[129] Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 4, էջ 15:

[130] Տե՛ս Օսմանյան օրենքները..., էջ 136:

դասին պատկանող մարդ, 3. ենիչերական բանակում միևնույն կաթսայից ապուր (չորբա) ստացող զորքի խմբի պետ, 4. հարյուրապետի աստիճան ունեցող սպա[131]:

Պաշլըկ - տես՝ Բաշլըք:

Պեսլեմե - տես՝ Բեսլեմե:

Զանբեզար - պարսկ. - «կյանքից ծանծրացած, կյանքից ձեռք քաշած, կյանքը մի բանի վրա դրած (մակդիր, որ կրում էին թուրք խմբերը, որոնք կռվում էին ջանֆիդայինների դեմ)»[132]:

Զելեպ - արաբ. - անասնավաճառ, սպանդանոցներին անասուն մատակարարող: Այդ առևտրականները մեծաթիվ անասուններ էին հայթայթում էրզրումի, Երզնկայի և այլ քաղաքների բաստուրմայի գործարանների համար:

Զերիմե - արաբ. - տուգանք, տույժ:

Զիզե կամ ջիզիե - արաբ. - գլխահարկ, շարիաթական հարկերից ամենածանրը, որը գանձվում էր ոչ մահմեդականներից և նվաստացուցիչ բնույթ ուներ: Այն հավաքվում էր ըստ հարկատուների նյութական դրության՝ չքավորները պետք է վճարեին 10, միջակները՝ 20, իսկ հարուստները՝ 30 ակչե: Հետագայում այդ չափերը համապատասխանաբար մեծացան, հասնելով 15, 30 և 45 ակչեի[133]: 1856 թ. ջիզեն փոխարինվեց զինվորական հարկով՝ բեդել-ի- ասկերիով:

Զոլ - տես՝ ճյուղ:

Ռայա կամ ռեայա - արաբ. - (հոգնակի), ռայաթ կամ ռաիյեթ (եզակի) - կենդանիների հոտ: Օսմանյան կայսրության մեջ այդպես էին կոչվում այն գյուղացիները, որոնք ամրացված էին կալվածատիրոջ հողին և պարտավոր էին նրան վճարել հարկեր և պետական գանձարանին՝ զինվորական տուրքեր: Մինչև XVII դարի կեսերը ռայաթներ էին կոչվում թե՛ մահմեդական և թե՛ ոչ մահմեդական գյուղացիները: XVII դ. կեսերից այդպես էին կոչվում գերազանցապես ոչ մահմեդականները[134]: Արևմտյան Հայաստանում XIX դ. և XX դ. սկզբին ռայաթ էին կոչվում սովորաբար հայ գյուղացիները և քրդերի նստակյաց մասը:

[131] Տե՛ս Թուրքական աղբյուրներ..., հ. Բ, էջ 275:

[132] Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 3, էջ 135: Օսմանյան օրենքները..., էջ 136:

[133] Տե՛ս Օսմանյան օրենքները..., էջ 136-137:

[134] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 210-211:

Ռաջո - Ա-Դո-ի մեկնաբանությամբ՝ բարերարություն: Նա գրում էր, որ Արձեշում Դարվիշ աղան հայերի վրա դրել էր նաև ռաջո անունով տուրք, այսինքն՝ «անբերրիության տարիներում բերում էր Սոսկուն իր բարեկամ քրդերին և հայերի տներում տեղավորելուց հետո, հայերից հավաքում էր եզ, կով, ոչխար, ցորեն, գարի և այլն և տալիս այդ քրդերին՝ իբրև ապրուստի միջոց: Այսպիսով Դարվիշ աղան առնում էր քաղցած հայի ծեռքից նրա հացը և տալիս քրդին, անվանելով այդ ռաջո, այսինքն՝ բարերարություն»[135]:

Ռենչբեր կամ ռանչբար - արաբ. - հողագործ: Այլ բացատրությամբ «օրավարձով աշխատող երկրագործական բանվոր»[136], որը ճիշտ չէ:

Ռեսմ-ի աղնամ - արաբ. - հարկ ոչխարի և այծի համար:

Ռեսմ-ի արուսիյե - արաբ. - հարկ հարսնացուի համար, որը ամուսնության դեպքում ամեն մի գյուղացի վճարում էր թիմարի տիրոջը:

Ռեսմ-ի ասիյաբ- արաբ. - հարկ ջրաղացի համար:

Ռեսմ-ի բեգիրխանե - արաբ., պարսկ. - հարկ ձիթհանի համար:

Ռեսմ-ի բեննակ - արաբ. - այն հարկն էր, որ գանձվում էր կալվածատիրոջ կողմից նրա թիմարին ամրակցված գյուղացիներից, որոնք ունեին կես չիֆթ հողամաս կամ բոլորովին հողազուրկ էին:

Ռեսմ-ի բոստան - արաբ. - հարկ բոստանի համար:

Ռեսմ-ի գիյախ - արաբ. - հարկ խոտի համար:

Ռեսմ-ի դուդ - արաբ. - հարկ ծխի համար:

Ռեսմ-ի կիսմետ-ի մեվվաթիս - արաբ. - հարկ ժառանգությունը բաժանելու համար:

Ռեսմ-ի կըշլակ - արաբ. - հարկ ձմեռային արոտավայրերից օգտվելու համար:

Ռեսմ-ի կովան - արաբ. - հարկ փեթակների համար:

Ռեսմ-ի մյուջերրեդ - արաբ. - հարկ հոր հետ բնակվող աշխատունակ որդիներից:

Ռեսմ-ի նիկյախ - արաբ. - հարկ հարսանիքի համար:

Ռեսմ-ի սաման - արաբ. - հարկ ծղոտի համար:

[135] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 367:

[136] Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 376:

Ռեսմ-ի թափու - արաբ. - հարկ՝ ստացած հողաբաժնի համար, որ վճարում էր գյուղացին կառավարությանը կամ կալվածատիրոջը: Այդ հարկի չափը կախված էր ստացած հողի որակից: Երբ գյուղացին հողը ժառանգություն էր թողնում իր հարազատներին, այդ հարկը չէր տալիս:

Ռեսմ-ի թեքնե - արաբ. - հարկ տակառի համար, որ գանձվում էր խաղողաքաղի և գինու արտադրության ժամանակ:

Ռեսմ-ի չիֆթ - արաբ. - հողահարկ, որ վճարում էր լրիվ հողաբաժին ունեցող մահմեդական գյուղացին հողատիրոջը: Նրա չափը տարբեր շրջաններում տարբեր է եղել:

Ռեսմ-ի չիֆթ բոզան - արաբ. - հարկ՝ գյուղացուց իր հողաբաժինը անմշակ թողելու համար:

Ռեսմ-ի շախնեգի - արաբ. - հարկ, որ հավաքվում էր գյուղացիներից պաշտոնյայի կամ կալվածատիրոջ ձիերը կերակրելու համար, երբ նրանք իջևանում էին նրանց գյուղերում:

Ռեսմ-ի ըրղադ - արաբ. - հարկ կոռի փոխարեն:

Ռեսմ-ի յայլա - արաբ. - հարկ ամառային արոտավայրերի համար[137]:

Ռջու- Ա. Թոխմախյանը նշում է, որ «Ռջու նշանակում է կամավոր տուրք»: Բայց, ցավոք, չի բացահայտում, թե երբ և ինչ էր հավաքվում: Բավարարվում է սոսկ արձանագրելով, որ «ռջուն և կողոպուտը[138] միայն սուրբ Կարապետի և Մշո վանքերումը հավաքելու սովորություն կա»[139]: Դա ճիշտ չէ, կողոպուտը կար նաև այլ վայրերում:

Սալյանե - արաբ. - Օսմանյան կայսրության որոշ գավառներից հավաքած հարկը, որն անմիջականորեն մտնում էր պետական գանձարան: Դրա միայն մի մասն էր հատկացվում տեղական կառավարչությանը:

Սարակ - ըստ Ա-Դո-ի՝ բանվոր, բայց նրա բերած տվյալներից երևում է, որ նա ազատավարձու բանվոր կամ բատրակ չէր, այլ կոռ կատարող կալվածատիրոջից կախյալ գյուղացի[140]:

[137] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 211-212:

[138] **Կողոպուտ** - վանական, եկեղեցական տուրք

[139] Ա. Թոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորատները, մաս Բ, Թիֆլիս, 1882, էջ 18:

[140] Տե՛ս Ա-Դո, նշվ. աշխ., էջ 301-302:

Սարջոլ - տես՝ ձյուղ:

Սելյամլըկ - արաբ., թուրք. - աշխատանք, որ գյուղացիները կատարում էին պաշտոնյաների կամ հողատերերի օգտին, երբ դրանք երթևեկում էին նրանց գյուղերով:

Սելեֆ, սըլըֆ, սալաֆ - արաբ. - կանխավճար: Դա վաշխառություն էր, որ տարածված էր Արևմտյան Հայաստանի բազմաթիվ շրջաններում՝ դրսևորվելով զանազան ձևերով: Մի դեպքում դրամը տրվում էր տոկոսով՝ տարեկան 100 ռուբլուց մինչև 80 ռուբլի ստանալու պայմանով, մյուս դեպքում դրամատերը ձմռանն ու գարնանը պարտք էր տալիս գյուղացուն, որ աշնանը ստանար գյուղատնտեսական մթերքներ, մի այլ դեպքում վաշխառուն կարիքավոր գյուղացուն տալիս էր ոչ թե փող, այլ սերմացու՝ բերքն իր համար շահավետ կիսելու պայմանով: Լինում էր, որ նա գյուղացուն տալիս էր թե՛ սերմացու, թե՛ եզներ (հաճախ փող՝ դրանք գնելու համար), թե՛ գյուղատնտեսական գործիքներ, պայմանով, որ ստանար բերքի մինչև 2/3-ը: Վաշխառուն նաև գարնանը նախօրոք գնում էր գյուղացու ցանած արտերից մեկի երեսը, այսինքն՝ ստանալիք բերքը, իսկ աշնանը հավաքում էր ամբողջ բերքը: Իրազեկներից մեկը նշում էր, որ եթե բերքատվությունը լիներ մեկին հինգ, վաշխառուն կստանար իր տվածի կրկնապատիկը, իսկ եթե լիներ մեկին յոթ՝ քառապատիկը և ութնապատիկը:

Վաշխառության մի այլ ձևի ժամանակ գործարքը կատարվում էր անասունների, գերազանցապես ոչխարների ու գառների վրա: Գարնանը դրամատերերը պարտք էին տալիս գյուղացիներին, իսկ աշնանը դրա դիմաց ստանում պայմանավորված քանակությամբ ոչխարներ կամ գառներ: Ամբողջ 5-6 ամսվա ընթացքում գյուղացիները պարտավոր էին ձրի պահել ու խնամել վաշխառուների անասունները և ողջ ու առողջ հանձնել նրան: Թե ինչքան էր շահում դրամատերը, կարելի է գաղափար կազմել հետևյալ փաստից. 1901 թ. Բաբկեն վարդապետը նշում էր, որ Տարոնում վաշխառուն գարնանը գյուղացուն տալիս էր 10 ղուրուշ, իսկ աշնանը վերցնում էր 1 գառ, որը արժեր 25-30 ղուրուշ[141]: Պատահում էր, որ դրամատերը աշնանը չէր վերցնում գառը, առաջարկում էր գյուղացուն պահել ևս 8-9 ամիս: Այդ ժամանակամիջոցում գառը դառնում էր ոչխար և արդեն արժեր

[141] Տե՛ս «Դրոշակ», 1901, № 1, էջ 35:

ոչ թե 25-30, այլ՝ 50 ղուրուշ[142]: Լինում էր, որ գյուղացին չէր կարողանում դրամի փոխարեն գառ տալ, և պարտքը ձգձգվում էր տարիներ շարունակ:

Վաշխառության տարածված ձևերից մեկն էլ կապալառությունը կամ մյութեզիմությունն էր: Վերցնելով հարկերի հավաքման իրավունքը աճուրդով՝ դրամատերերը գյուղացիներից հավաքում էին շատ ավելի, քան իրենք տվել էին կառավարությանը:

XX դ. սկզբին վաշխառուական կապիտալն արդեն իր ցանցի մեջ էր վերցրել Արևմտյան Հայաստանի գյուղացիության մեծ մասին: 1904 թ. Ծերուկը (Արտակ Դարբինյան) գրում էր, որ Վանի վիլայեթում «հայ գյուղացիների մեծագույն մասը՝ մոտ 65 %-ը, ներկա պայմաններում պարտքով է ապրում»[143]:

Սենետ - արաբ. - մուրհակ, ստորագրություն, ապացույց:

Սեյյար - արաբ. - թափառաշրջիկ, տեղաշարժվող, շարժական, շարժվող, անկայուն, արագաշարժ, շրջիկ, արշավային, դաշտային: Սեյյար էին կոչվում այն զինվորները, որոնք հավաքագրվում էին համիդյան իշխանությունների կողմից հայդուկների դեմ պայքարելու համար:

Սիլա - պանդխտություն, տարագնացություն: Բ. Քեչյանը գրում էր, որ «գյուղերում բերքը և քաղաքային առևտուրը բավական չէին... ապրեցնելու Ակնա բնակիչները...: Այս պատճառով այրերը սիլա կերթային, այսինքն՝ կպանդխտեին Անատոլուի մեծ քաղաքները և մանավանդ Կ. Պոլիս»[144]: Նույն բանն էր հաստատում նաև Գ. Երևանյանը, նշելով, թե Չարսանճագի հայ գյուղացիները սիլա էին գնում Ադանա[145]:

Սիպահի - պարսկ., թուրք. - ձիավոր, ավատատիրական հեծյալ աշխարհազորի զինվոր, որ տիրում է լեհենի (թիմար, զեամեր և այլն):

Սյուվարի - արաբ. - տես՝ սիպահի:

Սովորութային հարկեր,- տես՝ (թեքըլիֆի օյոքիյե) - արաբ. - Օսմանյան կայսրության մեջ բոլոր հարկերը բաժանվում էին

[142] Տե՛ս Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., էջ 83:

[143] «Մուրճ», 1904, № 4, էջ 30:

[144] Բ. Քեչյան, Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952, էջ 381:

[145] Տե՛ս Գ. Երևանյան. Պատմություն Չարսանճագի հայոց, Պեյրութ, 1956, էջ 390:

երկու հիմնական կարգի՝ շարիաթական և սովորութային: Առաջինի մեջ մտնում են աշարը (տասանորդ), խարաջը, ջիզիեն և զեքատը (եկեղեցու կամ մզկիթի օգտին գանձվող հարկերը, որոնք կազմում են եկամտի 1/40 -ը: Երբեմն այն հավաքվում էր աշարի հետ): Երկրորդի մեջ մտնում էին այն հարկերը, որոնք նշանակվում էին սուլթանի հատուկ հրամանով՝ պետության բացառիկ կարիքների համար (պատերազմի և այլ դեպքերում): Այդ հարկերը, ըստ պաշտոնական հայտարարության, թեև նշանակվում էին ժամանակավորապես, բայց դառնում էին մշտական: Դրանցից ծանր էին հատկապես ավարիզը, իմդադիսեֆերիեն, պաքսիմեթ բահան և այլն[146]:

Վաթանփերվեր - արաբ. - հայրենասեր: Դրանք համիդյան իշխանությունների կողմից հավաքագրված մարդիկ էին, որոնք, որոշակի վարձ ստանալով, հետապնդում էին հայդուկներին, հաշվեհարդար տեսնում նրանց հետ: Վաթանփերվերները օգտագործում էին առիթը և թալանում խաղաղ բնաիչներին:

Վալատ կամ վելեդ - առաջնորդ, ուղեցույց: Սրանք ուղեկցում էին հայ զինատար խմբերին կամ շալակավորներին: Հայերը, և գերազանցապես հայդուկները ընտրում էին տեղանքը լավ իմացող մահմեդականների, գերազանցապես քրդերի և բավականին բարձր էին վարձատրում: Հայդուկները, սակայն, խստագույնս պատժում էին նրանց, եթե իրենց դավաճանում էին: Վալատների մեջ լինում էին այնպիսիք, որոնք հայդուկներին կամ նրանց գրագրությունների պատճենները հանձնում էին սուլթանական պաշտոնյաներին:

Վակֆ կամ վակուֆ - արաբ. - շարժական և անշարժ գույք, որի եկամուտները հատկացվում էին կրոնական կամ բարեգործական նպատակների: Վակուֆի ունեցվածքը առաջանում էր նվիրատվություններից և զոհաբերություններից: Եկամուտների մեծ մասը ծառայում էր մահմեդական հոգևորականության օգտին, որը գնալով դառնում էր ավելի ու ավելի խոշոր հողատեր և ձեռք էր բերում մեծամեծ շարժական ունեցվածքներ: Վակուֆը ազատ էր պետական հարկերից ու տուրքերից և պաշտպանված էր աշխարհիկ զանազան իշխանությունների ոտնձգություններից[147]: Նա լուրջ դեր էր խաղում երկրի սոցիալ-տնտեսական և

[146] Տե՛ս Օսմանյան օրենքները..., էջ 137-138:

[147] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 197:

հասարակական-քաղաքական կյանքում:

Վար - քրդ. - վաչկատուն կամ կիսավաչկատուն բնակատեղ, վրան:

Վերգի - թուրք. - հարկ, տուրք:

Վըռըշիկ - Գեղամ Տեր-Կարապետյանի բացատրությամբ՝ «անտաշ, գյուղացի»[148]: Ստ. Մալխասյանցը տալիս է մի շարք մեկնաբանություններ՝ «Ոշտունիից աղավաղված: 1: Ոշտունյաց և Մոկաց գավառների բնակիչ: Ոշտունցիների ժողովրդական անունն էր Վռշիկ: 2. Մի տեսակ տրեխ՝ կանեփից ու մազից շինված: Որոշ գավառներում ռըշիկ: 3. ընդհանրապես՝ գյուղացի, ռամիկ, շինական, տրեխավոր»[149]:

Վիլայեթ - արաբ. - վալիյա՝ կառավարել բառից, Թուրքիայում վարչատարածքային միավոր: Մինչև 1860-ական թվականները այդ միավորը կոչվում էր էյալեթ: 1864 թ. հրատարակվում է վիլայեթների մասին օրենք, որը կիրարկվում է 1866 թ.: Արևմտյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը կրում է մի շարք փոփոխություններ: XIX դ. վերջին և XX դ. սկզբին այն բաժանված էր 6 վիլայեթների՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի և Սվազի:

Տամղա - թուրք. - շուկայի մաքսատեսակներից մեկը:

Ուշար - տես՝ աշար:

Ուշուրջու - արաբ., թուրք. - աշար հավաքող:

Փերեզակ - պարսկ. - մանրավաճառ:

Փոլոս - XIX դ. առաջին կեսին Կ. Պոլիս աշխատելու մեկնող հայ գյուղացիները ճանապարհածախսի համար վաշխառուից պարտք էին վերցնում 25-1000 ղուրուշ՝ վճարելով 20 տոկոս: «Սա կոչվում էր փոլոս և մաս-մաս ուղարկում էին Կ. Պոլսից»[150]:

Քալֆա - արաբ. - փոխանորդ, օգնական, ենթավարպետ, քարտուղար:

Քեթխուդա - արաբ. - քեհյան բառից, որ նշանակում է տանուտեր, հիմնարկի կամ վարչության գործավար[151], այլ մեկնաբանությամբ՝ զինվորական և քաղաքացիական կոչում[152]:

[148] Գեղամ Տեր-Կարապետյան, Տարոնի աշխարհ, էջ 338:

[149] Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 4, էջ 353:

[150] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 3, էջ 90:

[151] Տե՛ս Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 38:

[152] А. С. Твертинова. Указ. Соч.- էջ 203:

Քյաթիբ - արաբ. - գրագիր, քարտուղար, գրիչ, գիր անող, գործավար:

Քյաֆիր - արաբ. - անհավատ, ոչ մահմեդական, գործածվում է արհամարական իմաստով: Աղավաղված ձևն է՝ գյավուր: Վասպուրականում հայերը դրա տակ հասկանում էին սրիկա, խաբեբա, խարդախ և գործածում էին իրար հանդեպ: Իսկ երբ ուզում էին անվանարկել թուրքերին, ասում էին՝ քյաֆիր ռում, այսինքն՝ անիծյալ թուրք[153]:

Քոնթաքթ - լատ. - կոնտակտ, շփում, սերտ հարաբերություն, կապ, շփման կետ, փոխադարձ համաձայնություն, մեկի հետ հարաբերության մեջ մտնել, սերտ շփում, առնչություն ունենալ: Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում, հատկապես Տարոնում, տարածված էր այդ տերմինը: Միսաք Բդեյանը հուշագրում էր, որ Մշո դաշտում կար հատուկ պաշտոնյա, որ կոչվում էր քոնթաքթ: Նա զինվորների համար ուտելիք, հագուստ և վառելիք էր հավաքում: Հաճախ քուրդ ցեղապետերը իրենք էին տալիս նրան այդ ամենը, վերցնում համապատասխան փաստաթուղթ, իսկ հետո գանձում գյուղացիներից կրկնակին ու եռակին[154]:

Քոչար - քրդ. - վաչկատուն:

Քրսին - տես՝ կառ:

Օբա - թուրք., քրդ. - մեծ վրան, ժամանակավոր բնակություն մի տեղում, ուր ապրում են վրանների տակ, գյուղական վաչկատուն համայնք, որն ընդգրկում է 10-20 ընտանիք[155]:

Օբաբաշի- թուրք. - վաչկատուն համայնքի պետ, մեծ վրանի տեր:

Օթլակ - թուրք. - ամառային արոտավայր:

Օթլակ-ռեսմի- թուրք., արաբ. - ամառային արոտավայրերից օգտվելու հարկ, որ գանձվում է հողատիրոջ օգտին:

Օլամ - արաբ., թուրք. - կոռ, աշխատավճար, պարհակ: Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում աղաները ստիպում էին իրենց իշխանության տակ ընկած գյուղացիներին օլամ անել, այսինքն՝ ծրի վարել ու ցանել աղայի արտերը, տեղափոխել բերքը, կալսել ու ամբարել և այլն: Աղայի մարդիկ՝ թվով 10-12 ձիավոր, գցում էին գյուղացիներին ձիերի առաջ, քշում աշխատելու, հարկադրում էին նրանց բանել վաղ առավոտից մինչև ուշ երեկո՝ հաճախ թույլ չտալով անգամ ճաշել[156]:

Օլչեք - հագգ - չափելու վարձ, որը ստանում էին գյուղացիներից կապալառուների մարդիկ, երբ չափում էին տասանորդի տուրքը: XIX դ. կեսերին դա պաշտոնապես արգելված էր, բայց կապալառուները շարունակում էին գանձել[157]:

Օջակլըք - թուրք. - կալվածատիրական ժառանգական հողատիրություն, որ տարածված էր վաչկատուն ցեղերի մոտ՝ իբրև զինվորական պետերի ժառանգական կալվածք, որ տրվում էր նրանց իշխանության կողմից՝ սուլթանին ծառայելու և ենթարկվելու համար: Օջակլըքներն ունեին սանջակի կարգավիճակ, օգտվում էին վարչական անկախությունից, իսկ արշավանքների ժամանակ նրանց տերերը պարտավոր էին մասնակցել իրենց զորքերով և ենթարկվել բեյլերբեյին: Օջակլըքները չէին կարող խլվել կամ վերցվել նրանց տերերից. դրանք անցնում էին ժառանգաբար՝ սերունդից սերունդ: Թուրք պատմաբան Ի. Հ. Ուզունչարղըլը նշում է, որ «Արևելյան Անատոլիայում կային մի քանի սանջակներ, որոնք չունեին թիմարներ և զիամեթներ. կառավարությունն այդ սանջակները հանձնել էր իրենց նախկին տերերին՝ իբրև սեփականություն: Դրանք ստացողները ճանաչում էին օսմանյան պետության գերիշխանությունը և հարկ եղած դեպքում կատարում էին զինվորական ծառայություն: Այդ սանջակները ժառանգական կարգով անցնում էին բեյի որդուն, եղբորը կամ մոտիկ ազգականներին[158]:

Օրթակ կամ օրթակչի - թուրք. - ընկերակից, ընկեր, մասնակից, փայատեր: Սրանք սակավահող կամ հողազուրկ գյուղացիներ էին, որոնք մշակում էին կալվածատիրոջ հողը կիսարարությամբ: Ա-Դո-ն գրում էր, որ Էրզրումի գավառում գյուղացիների մեծ մասը մարաբաներ են: «Նրանք աղայի սերմով աղայի հողը մշակում են և բերքի կեսը աղային տալիս, այս այն դեպքում, երբ լծկանն ու գործիքը գյուղացունն են. հողային

[153] Տե՛ս Վ. Փափազյան, Իմ հուշերը. հ. Ա, Բոստոն, 1950, էջ 208:

[154] Տե՛ս Ս. և Մ. Բդեյան, նշվ. աշխ., էջ 238:

[155] Курдско-русский словарь.- էջ 518:

[156] Տե՛ս Դիվան հայոց պատմության, հ. ԺԳ, էջ 91:

[157] Տե՛ս Ռաֆֆի, Երկերի ժողովածու. հ. 9, էջ 223:

[158] Թուրքական աղբյուրները..., հ. Բ, էջ 289:

հարաբերության այս ձևը կոչվում է «օրթակչություն»[159]:

Օրման-ռեսմի - թուրք., արաբ. - անտառի տուրք:

Ֆեստա - հավանաբար արաբերեն ֆեսատ բառից, որ նշանակում է փչացածություն, անարգություն, խռովություն, սադրանք: Վ. Փափազյանը հուշագրում է, որ Վանում և Վասպուրականում դաշնակցականներին ու հայդուկներին անվանում էին ֆեստա կոմիտաճի, այսինքն՝ խռովարար կոմիտաճի[160]:

Ֆեթվա - արաբ. - շարիաթի հիման վրա մահմեդական հոգևորականի (մուֆթիի կամ կադիի) արձակած որոշումը:

Ֆերաղ - արաբ. - 1. աշխատանքի դադարեցում, բանթող, գործից հրաժարվել, 2. հանգիստ, 3. օտարում, վաճառում[161]:

Ֆերման - պարսկ. - սուլթանական հրամանագիր:

Ֆիրար - արաբ. - փախստական, տարագիր, դասալիք: Դրանք օսմանյան իշխանությունների ու աղաների հալածանքներից փախած մարդիկ էին, որոնց մի մասը, ամրանալով հարազատ սարերում ու լեռներում, դառնում էր հայդուկ և վրեժխնդիր լինում թշնամիներից: Այդ փախստականների թիվը Արևմտյան Հայաստանում մեծացավ հատկապես 1890-ական թթ. կոտորածներից հետո[162]: 1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքական իշխանությունները հեգնաբար ֆիրար էին անվանում քրդական այն աղաներին, որոնք, վախենալով այդ հեղաշրջումից, անցել էին Պարսկաստան[163]:

Ֆլլահ - արաբ. - ֆելահ բառից, որ նշանակում է երկրագործ, գյուղացի: Քուրդ ցեղապետերն ու աղաները իրենց հպատակ հայ գյուղացիներին անվանում էին ֆլլահ:

Ֆուղարա - արաբ. - ֆրկարա բառից, որ նշանակում է չքավոր, կարիքավոր: Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է, որ Ղարսա Մոսոն հայդուկ Կորյունին ասում էր. «Դու հարուստի ժառանգ, մենք ֆուղարա ենք»[164]:

Սոցիալական բառեզրերը, առաջանալով պատմական տար-

[159] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 169:

[160] Տե՛ս Վ. Փափազյան, նշվ. աշխ., էջ 166, 308:

[161] Турецко-русский словарь, էջ 188:

[162] Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 412, g.1, գ.1979, թ. 5-6: Մ. և Ս. Բդեյան. նշվ. աշխ., էջ 221:

[163] Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 521, g. 2, գ. 492, թ. 196:

բեր ժամանակներում և արտահայտելով հասարակական որոշակի հարաբերություններ, վկայում են, որ Արևմտյան Հայաստանում գերիշխում էր արտադրության ավատատիրական եղանակը, նահապետական հարաբերությունները դրսևորվում էին որպես անցյալի մնացուկներ, իսկ կապիտալիզմի ձևերը նոր էին հայտնվում:

Այդ բառեզրերի մեկնաբանումը ցույց է տալիս, որ անմիջական արտադրողները, հատկապես հայ գյուղացիները, տնտեսական, սոցիալական և քաղաքական անասելի ծանր վիճակում էին: Աշխարհում քիչ կգտնվի այնպիսի երկիր, ուր տիրակալներն այնպես դաժան վարվեին իրենց հպատակների հետ և այնպես վայրագաբար ոտնահարեին նրանց մարդկային ու ազգային իրավունքները և արժանապատվությունը, ինչպես դա եղել է Արևմտյան Հայաստանում՝ Օսմանյան Թուրքիայի իշխանությունների և հետագայում երիտթուրքերի կառավարության կողմից:

[164] Ռուբեն, ՀՀՀ, հ. 5, էջ 55:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

Գլուխ առաջին. Ավատատիրական հարաբերություններն Արևմտյան Հայաստանում 5

Գլուխ երկրորդ. Գյուղատնտեսությունը 55

Գլուխ երրորդ. Գյուղատնտեսության ապրանքային բընույթը 92

Գլուխ չորրորդ. Տնային արդյունագործությունը, արհեստներն ու մանր ապրանքային արտադրությունը 127

Գլուխ հինգերորդ. Տնտեսական աշխուժացում. Առևտրական ու վաշխառուական կապիտալ..... 163

Գլուխ վեցերորդ. Կապիտալիստական հարաբերությունների ծլարձակումը Արևմտյան Հայաստանի գյուղերում..... 192

Գլուխ յոթերորդ. Կապիտալիստական հարաբերությունների ծլարձակումը և կազմավորումը Արևմտյան Հայաստանի արդյունաբերության մեջ 203

Գլուխ ութերորդ. Արևմտահայ քաղաքային աշխատավորների դրությունը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին 239

Գլուխ իններորդ. Ժողովրդական շարժումները 250

Հավելվածներ. Դրամական միավորները, չափերն ու կշիռները, սոցիալական բառեզրեր 264

Ա. Ս. Համբարյան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1856-1914 թթ.

Խմբագիր՝ Մ. Բարսեղյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ոսկանյան
Վերստուգիչ սրբագրիչ՝ Ս. Ոսկանյան
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Վանյանի

Հանձնված է շարվածքի 20.11.2002: Ստորագրված է տպագրության 20.02.2003: Չափը 60x84 1/16: Թուղթ օֆսեթ: Տպագրությունը օֆսեթ: Տպագրական 21 մամուլ: Պատվեր 5: Տպաքանակ 300:
Տառատեսակ Arial LatArm

«Պարգև Ոսկանյան» հրատարակչություն:

«Պարգև Ոսկանյան» ՍՊԸ տպարան: 377765, ՀՀ Արմավիրի մարզ, ավան Մյասնիկյան, Գայի փ., 16: